ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ա

ԵՐԵՎԱՆ 1964

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРМЯНСКАЯ КНИГА КАНОНОВ

I

Предисловие, научно-критический текст и примечания
ВАЗГЕНА АКОПЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Ա

Աշխատասիրությամբ՝
ՎԱԶԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1964

«Կանոնագիրք Հայոց» պատմա-իրավաբանական նյութերի ժողովածուն, իրավամբ, հանդիսանում է հայ միջնադարյան բազմաբովանդակ մատենագրության խոշոր հուշարձաններից մեկը։ Այն կազմվել է VIII դարի առաջին քառորդում և բովանդակում է IV—VIII դարերի կանոնական որոշումները։ Վաղ ավատական Հայաստանի հասարակական ներքին կյանքը ուսումնասիրելու համար բացառիկ կարևոր նշանակություն ունի այս աշխատությունը։

Կանոնագիրքը հանդիսանում է խիստ կարևոր և ուշագրավ սկզբնաղբյուր պատմաբանների, իրավունքի, փիլիսոփայության և տնտեսագիտության պատմության զբաղվողների, բանասերների, ազգագրագետների, լեզվաբանների համար։ Այն մեծ չափով կնպաստի վաղ միջնադարյան Հայաստանի սոցիալական, քաղաքական և իրավական հարցերի լուսաբանմանը։

Մի քանի տասնյակ ձեռագրերի բաղդատությամբ կազմված «Կանոնագիրք Հայոց»-ի գիտական-քննական բնագիրը լույս է տեսնում առաջին անգամ։

Խմբագրությամբ՝

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆԻ, ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆԻ

Ուսուցչիս՝

ակադեմիկոս

ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆԻ

հիշատակին

ՆԱԽԱԲԱՆ

Ա. Հայ ժողովրդի բազմադարյան պատմության տարբեր ժամանակաշրջաններից մեզ հասել է մշակութային անգնահատելի ժառանգություն՝ պատմագրության, գրականության, փիլիսոփայության, գիտության տարբեր ճյուղերին վերաբերող թարգմանական ու ինքնուրույն երկեր, ճարտարապետության, արվեստի և այլ բնագավառների հոյակապ հուշարձաններ։

Միջնադարյան հայ մատենագրության մեջ պահպանվել են նաև ժամանակի հասարակական տարբեր շերտերի սոցիալական և իրավական հարաբերություններն արտացոլող խոշոր հուշարձաններ։ Այս հուշարձանները հանդիսանում են յուրատեսակ հայելիներ, ուր առմիշտ բյուրեղացվել են անցյալ կյանքի իրավանորմերը, որոնք միջոց էին կարգավորելու հասարակության համակեցությունը՝ հօգուտ տնտեսական ու քաղաքական իշխանություն ունեցող դասակարգի՝ «ազատ»-ների շահերի։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև միջնադարում իրավունքը խարսխվում էր հողի ավատական սեփականության (հողային ռենտա) և դասային արտոնությունների սկզբունքի վրա։ Դա մի սկզբունք էր, որը մեկընդմիշտ առկա էր դարձնում որոշակի մի պատմաշրջանում քարոզված արդարության բեկված նժարները։ Իսկ այդ սկզբունքի գաղափարական սրբագործումը պատկանում էր քրիստոնեական վարդապետությանը։ Այս առթիվ տեղին է հիշել Ֆ. Էնգելսի հայտնի ցուցումը, թե միջնադարում «Քաղաքականությունն ու իրավագիտությունը, ինչպես և մնացած բոլոր գիտությունները... աստվածաբանության հասարակ ճյուղեր դարձան և միևնույն սկզբունքներով ղեկավարվեցին, որոնք տիրում էին աստվածաբանության մեջ։ Եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ Աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին»[1]։

Միջնադարում հայ ժողովրդի գաղափարախոսության այս, ինչպես և մյուս բնագավառներում, առավելապես իշխում էին հայ եկեղեցու սկզբունքներն ու դոգմաները։

Համայնապարփակ այս գերիշխանությունը «հետևանք էր այն դիրքի, որ եկեղեցին գրավում էր՝ իբրև գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի

---

[1] Ֆ. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, Երևան, 1934, էջ 47։ Հմմա. նաև Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, Երևան, 1933, էջ 19, Լյուդվիգ Ֆոյերբախ, Երևան, 1933, էջ 114, К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. I, Москва, 1937, стр. 295.

ընդհանուր ամփոփում և հավաստում»[1]։ Եվ ապա, եկեղեցին «իր սեփական նվիրապետությունը հաստատեց ֆեոդալական օրինակի համաձայն, և վերջ ի վերջո նա ամենախոշոր ֆեոդալական սեփականատերն էր»[2]։ Իսկ եկեղեցու այդ վիճակը բխում էր քրիստոնեության այն պաշտոնական կերպարանքից, որը տվել էր նրան «Նիկիայի վեհաժողովը, այն հարմարեցնելով պետական կրոնի կոչմանը»[3]։ Այսպիսով, հայ եկեղեցին ես, որը թեև եղել է ավատական նվիրապետության ծնունդ, մի հայտնի չափով ավելի կենտրոնաձիգ բնույթ ուներ, քան հայ Արշակունի կամ Բագրատունի թագավորությունները։

Այս դիտողությունները, արդեն, խոսում են եկեղեցու, իբրև ավատական ուրույն կազմակերպության տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական և իրավական բացառիկ ուժի և դերի մասին, մասնավորապես հայ պետականության բացակայության երկար ու ձիգ պատմաշրջաններում։

Հայ եկեղեցին հենց սկզբից իրագործում էր «գործակալութեանն մեծի դատաւորութեանն»[4] պաշտոնը, այսինքն իր ձեռքում էր պահում օրենսդրական և դատավարական գործունեությունը[5]։ Եվ երբ հայ ժողովուրդը թագավորական կենտրոնական պետականությունը կորցրեց, եկեղեցու այս դերն ավելի ուժեղացավ, որովհետև հայ եկեղեցին կարողացավ պահել իր կենտրոնական սրբազան կազմակերպությունը, որը խարսխվում էր մի ժողովրդի դավանանքի սկզբունքի վրա։ Այդ երևույթը հնարավորություն տվեց եկեղեցուն, համեմատորեն, ավելի լայնորեն ըմբռնելու ժողովրդի համընդհանուր քաղաքական շահերը, քան ավատական առանձին տները։ Դա մի երևույթ էր, որ նկատում ենք մեր իրականության մեջ ողջ միջնադարում։

Բ. Մեզ հասած միջնադարյան հայ մատենագրական ժառանգության մեջ կան իրավաբանական այնպիսի խոշոր գործեր, ինչպես Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերը[6], իսկ դրանցից առաջ և դրանց հանդես գալուց հետո՝ կանոնական բազմաթիվ որոշումներ և գրություններ, ինչպես

---

[1] Ֆ. Էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմը, էջ 47։

[2] Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից գիտության, էջ 78, Լյուդվիկ Ֆոյերբախ, էջ 114։

[3] Ֆ. Էնգելս, Լյուդվիգ Ֆոյերբախ, էջ 114։

[4] Փ. Բուզանդ, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1889, էջ 36։

[5] Տես Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 447, Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 76, Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հա. 1, Երևան, 1939, էջ 44. С. Т. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма, „Вопросы истории", 1951, № 7, стр. 54.

[6] Այս շարքում չնշեցինք Դավիթ Ալավկա որդու աշխատությունը (որ 1953 թ. «Էջմիածին» ամսագրում հրատարակեց պրոֆ. Աշ. Աբրահամյանը՝ «Դավիթ Ալավկա որդու կանոնները» խորագրով, իսկ անգլերեն թարգմանությունը տես C, J. F. Dowsett, „The Penitential of David of Ganjak". Louvain, 1961, Vol. 3 and 4), որովհետև այն ոչ դատաստանագիրք է և ոչ էլ կանոնագիրք, այլ հանդիսանում է կանոնագրքից դատաստանագրքին անցնելու միջանկյալ օղակ, թեև պատկանում է հայ իրավունքի պատմության միջնադարյան հուշարձանների թվին։

Թյուրիմացաբար դատաստանագրքի հեղինակ է համարվել նաև Հովհաննես Սարկավագը։ Մատենադարանի գիտաշխատակից ընկ. Աս. Մնացականյանի միջոցով մեզ վաղուց էին հայտնի մեր Մատենադարանի №№ 228 (էջ 152ա), 814 (էջ 217բ), 849 (էջ 171ա) ձեռագրերում գտնվող հետևյալ վկայությունները. ա) «Որպէս եւ մեծ վարդապետն հայոց Սարկօագ ի դատաստանաց գիրսն յիշէ և ասէ. «Բազում ժամանակք զի ծնօղքն հարկանեն զզօակքն՝ և ինքեանք մաղկատին, զնոսա ապտակեն՝ և ինքեանք մորմոքին, մանօանդ յորժամ տեսանեն յարտասուս հարեալ առաջի ծնօղացն, յայնժամ գալարին աղիքն»

օրինակ՝ Շահապիվանի (V դ.), Դվինի (VI, VII դդ.), Պարտավի (VIII դ.), ավելի ուշ շրջանում՝ Սսի (1243 թ.), Ջագավանի (1268 թ.), Երուսաղեմի (1651 թ.) ժողովների որոշումները, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Հովհան Մանդակունու, Դավիթ Ալավկա որդու և այլոց կանոնական գրությունները։

հմլին երիկամունքն և արտևանունքն արտասուս թորացուցանեն։ Այսպէս և մարգարէրն Աստուած» (№ 228, էջ 152ա)։ № 228 ձեռագրի վկայությունը միակն է, ուր նշված է հեղինակի՝ Սարկավագի անունը, իսկ մնացած ձեռագրերում եղած վկայությունը համառոտ է և հիշատակություն չկա հեղինակի մասին. ահա այդ վկայությունը. բ) «Է և բաղում անգամ զի ծնօղն հարկանէ զզաւակն և ինքն մորմոքի, յորժամ տեսանէ յարաասուս հարեալ զաղայն գալարի[ն] աղիքն և արտասուս ծորացուցանեն։ Այսպէս և մարգարէրն Աստուած...» (№ 814, էջ 217բ. տես նաև №№ 849, էջ 171ա, 2144, էջ 251ա, 6933, էջ 11բ և այլն)։

Այս վկայությունը գտնվում է Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի (Ձմրան հատոր) «Նորին հինգերորդ կիրակէին քարոզ՝ վասն մահու և կատարած աշխարհի» քարոզում։ Պրոֆ. Աշ. Աբրահամյանի օգտագործած № 6933 (էջ 11բ) ձեռագրի վկայությունը Գրիգոր Տաթևացու այդ քարոզի աղճատված և անհաջող տարբերակն է, ընդօրինակված 1812 թ.. Այս երկու վկայություններից, աղբյուրագիտական իմաստով, թե՞ որն է որին նախորդել՝ այստեղ մեզ չի հետաքրքրում։ Մեզ հետաքրքրում է միայն այն, թե Սարկավագը դատաստանագիրք կամ կանոնագիրք ունեցե՞լ է արդյոք։

Հենվելով վերոբերյալ վկայությունների վրա, պրոֆ. Աշ. Աբրահամյանը կարծում է թե «Հովհաննեսի անունով հայտնի եկեղեցական պատմությունը կարող է նրա կանոնագիրքը լինել։ Պարզվում է մի ցավալի փաստ, որ Հովհաննեսն իրոք ունեցել է կանոնագիրք, բայց այն մեզ չի հասել» (ընդգծումը մերն է—Վ. Հ., տես Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 40)։ Հաջորդ տողերում պրոֆ. Աշ. Աբրահամյանը դարձյալ գրում է. «Ցավալի է, որ Հովհաննեսի դատաստանագիրքը... կորած է» (ընդգծումը մերն է— Վ. Հ., նույն տեղում, էջ 40)։ Նախ՝ պրոֆ. Աշ. Աբրահամյանի համար պարզ չէ, թե Սարկավագն ինչ է ունեցել, կանոնագիրք, թե՞ դատաստանագիրք, որովհետև նա մի դեպքում գրում է կանոնագիրք մյուս դեպքում՝ դատաստանագիրք։ Ճիշտ է դրանք երկուսն էլ պատկանում են իրավագիտությանը, բայց տարբեր բաներ են։ Երկրորդ՝ վերևի ընդարձակ մեջբերումից նման եզրահանգումն առնվազն բշտապոզականության արդյունք է։ Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե դատաստանագրքի («ի դատաստանաց գիրսն»), այլ դատաստանի (այս բառը Գ. Նոյմանը գործածում է Gerichtsbarkeit իրավասություն (դատարարություն) իմաստով) մասին գրված մի ուսումնասիրության, և կամ, որն ավելի հավանական է, նամակի, ճառի կամ քարոզի։ Տակավին տասնամյակներ առաջ հայագիտության և հայ իրավաբանական դրականության մեջ եղել է նման կարծիք. օրինակ, Գ. Նոյմանը, թվելով Սարկավագի գործերը, նշում է նաև «մի գիրք կամ ուսումնասիրություն իրավասության (դատարարության) վերաբերյալ, որից այժմ ոչինչ չի մնացել, բացի վերնագրից» („ein Buch oder Traktat über die Gerichtsbarkeit, wovon jetzt nichts weiter übrig ist, als der blosse Titel", G. F. Neumann, Versuch einer Geschichte der armenischen Literatur, Leipzig, 1836, s. 162). Իսկ Զոլեբը Սարկավագի ունեցածը համարում է «ճառ յաղագս իրաւաբանութեան» (տես Զոլեբ, Իրաւունք Հայոց, թարգմ. Գ. Գալեմքարյան, Վիեննա, 1890, էջ 3)։ Եվ իսկապես, վերևի մեջբերումը ունի ոչ թե դատաստանագրքի կամ կանոնագրքի հոդվածի, այլ ճառի կամ խրատական գրության ոճ և բովանդակություն։ Երրորդ՝ եթե նման վկայություններից հանգենք պրոֆ. Աշ. Աբրահամյանի վերոհիշյալ եզրակացության, ապա պետք է ասենք, որ Վանական վարդապետն էլ իր հերթին կազմել է մի կանոնագիրք, որովհետև Գրիգոր Տաթևացին Եսայիի մարգարեության մեկնության մեջ գրում է. «...Տարականք և երգք վասն ժողովրդեան է, իսկ յորժամ ոչ մնան իբերաց՝ խառնափնդոր է և ոչ լսէ ժողովուրդն և ոչ օգտի։ Եւ այլ եւս, զի Վանական վարդապետն ասէ ի կանոնական գիրս, թէ «Ոք յեկեղեցի զերգսն մինն բարձր ասէ և միւսն խոնարհ և ցած, եւ մինն յետ եւ մինն յառաջ՝ ընդ սատանայի եւ ընդ հերձուածողացն անէծս ընկալցի» (ընդգծումը մերն է—Վ. Հ., № 1237, էջ 22բ, տես նաև № 1128, էջ 16բ)։ Այստեղ խոսքը կանոնական—խրատական մի գրության կամ նամակի և կամ ճառի մասին է և ոչ կանոնագրքի։ Նույնը և վերաբերում է Սարկավագի կարծեցյալ կանոնագրքի

Հայ մատենագրության մեջ կանոն[1] բառով արտահայտված են այն որոշումները կամ գրությունները (շրջաբերականներ, նամակներ), որոնք շոշափել են տվյալ դեպքում ավատական հասարակության համակեցության ձևերը, հասարակության անդամների փոխհարաբերությունները, ապրելակերպը՝ երբեմն ընդհուպ խիստ անձնական վարվեցողության ձևերը, ժառանգության, քաղաքացիական, քրեական իրավունքի և իրավաբանական այլևայլ հարցեր։

Սկսած V դարից՝ հայ մատենագրության մեջ հանդես են գալիս ինչպես օտար՝ թարգմանական, այնպես էլ ազգային՝ ինքնուրույն կանոնական որոշումներ և այլ փաստաթղթեր (տիեզերական, տեղական և հայկական եկեղեցական ժողովների որոշումներ կամ հույն և հայ եկեղեցական նշանավոր գործիչների գրություններ), որոնք երկար ժամանակ գոյություն են ունեցել առանձին-առանձին, ցաքուցրիվ։

Գ. Հայ իրավաբանական մտքի պատմության մեջ,— այդ կարելի է հաստատ պնդել,—դարագլուխ է կազմում VIII դարի սկզբին Հովհաննես Օձնեցու՝ ժամանակի կրթված, եկեղեցական և քաղաքական խոշոր գործիչներից մեկի՝ կանոնական ցաքուցրիվ նյութերից ընտրությամբ հավաքած և կազմած ժողովածուն, որը հայտնի է Կանոնագիրք կամ Կանոնգիրք անունով։ Կանոնագիրքը կազմելու մասին ահա թե ինչ է գրում Հովհաննես Օձնեցին իր հիշատակարանում, որը, ինչպես կարելի է ենթադրել, եղել է Կանոնագրքին կից. «Լուսաշաւիղ ճանապարհ առ Աստուած՝ հնազանդութիւն ընդհանուր հաւատա-

մասին մեջբերված հատվածում ասվածին։ «Կանոնական գիրք», «կանոնական դիր» ասելով միջնադարում հասկացել են մի կողմից Կանոնագրքի մեջ մտած որևէ կանոնախումբ, մյուս կողմից ընդհանրապես կանոնական (խրատական) գրություն, նամակ, բայց ոչ կանոնագիրք մեր հասկացությամբ. օրինակ՝ Եպիփան Կիպրացու կանոնական մի գրությունը № 10137 կանոնագիրք ձեռագրի բովանդակության ցանկում մտել է «Կանոնական գիրք Եպիփանու ասացեալ գլուխ [Ե]» (էջ 1ա) խորագրով (նույն կանոնախումբը բուն ձեռագրում ունի «Կանոնական գիր տեառն Եպիփանու ասացեալ» (էջ 127բ) վերտառությունը)։ Նույնն է գրում նաև Հակոբ Շամախեցին Կանոնագրքի համար կազմած առարկայական ցանկի ներածականում. «Նմին իրի միևնոյն ցանդ ոչ լինէր պիտանացու ամենից Կանոնականաց գրոց, այլ հարկ էր զի իւրաքանչիւր կանոնական գիրք զցանգ իւրն ունիցէր ըստ շաւղի և ըստ որքանութեան իւրում» (№№ 3·81, էջ 103ա, 8444, էջ 399ա)։

[1] Հունարենի κανών բառին համապատասխան, հայերենում գտնում ենք երկու բառ՝ կանոն և քանոն: Կանոնը ունի մի քանի նշանակություն՝ ժամանակագրական աղյուսակ, կարգ, եղանակ, օրենք, սահմանադրություն, կարգապահություն (կարգ ու կանոն՝ կյանքի վարվեցողություն, ապրելակերպ. տես Աստվածաշնչում, Գաղ., Զ. 16, Փիլ., Գ. 16), եկեղեցական ժողովների որոշումներ, Սաղմոսի ութ բաժանումներից յուրաքանչյուրը, սահմանված շարականների կարգն այս կամ այն տոնի համար (տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հա. Ա, Վենետիկ, 1836, էջ 1051, Ստ. Մալխասյանց, «Հայերէն բացատրական բառարան», հա. Բ, Երևան, 1944, էջ 385). իսկ քանոնը՝ տափակ և ուղիղ տախտակ փայտից կամ այլ նյութից, օրինակ ուղղության (տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 980, Ստ. Մալխասյանց, նույն տեղում, հա. Գ, Երևան, 1945, էջ 547)։

Միջնադարում այս երկու բառերը նույն իմաստով էլ գործածել են, օրինակ, № 2152 ձեռագրում (ժողովածու, 1402—1406 թթ. ընդօրինակություն) մի հարց ու պատասխանի մեջ կարդում ենք.

«Հ[արցումն]. Զի՞նչ է աւրէնք։

Պ[ատասխանի]. Սահման։

Հ[արցումն]. Զի՞նչ է սահման։

Պ[ատասխանի]. Կանոնք։

Հ[արցումն]. Զի՞նչ է կանոնք։

Պ[ատասխանի]. Որպէս արուեստաւորի լար և քանոն» (էջ 214ա)։

ցելոց Քրիստոսի։ Կազմեցին սուրբ Հարքն զկանոնական բանից դիտաւորութիւն... Եւ վասն զի ոմանք առ ոմանս եւ ոչ ամենեքին առ ամենեսեան սոքա սերմանեալք, կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ ,արմատացուցանել»[1] *(ընդգծումը մերն է— Վ. Հ.)*։

Դժբախտաբար Հովհաննես Օձնեցու Կանոնագիրքը մեզ չի հասել անփոփոխ՝ իր սկզբնական վիճակով, և այժմ դժվար է վերականգնել նրա նախնական տեսքը, որովհետև Հովհաննես Օձնեցուց հետո, զանազան ժամանակներում և տարբեր անձնավորությունների կողմից, մեծ մասամբ անհայտ, Կանոնագիրք են մուծվել նրա մեջ սկզբում տեղ չգտած հնագույն՝ IV—VII *դարերի կանոնախմբեր, կամ էլ նոր կանոնախմբեր, որոնք հանգես են եկել Կանոնագրքի կազմվելուց հետո։ Եվ այսպես, դարերի ընթացքում նորանոր կանոնական բնագրեր ընդունելով իր մեջ, երբեմն էլ կառուցվածքի փոփոխություն կրելով, Կանոնագիրքը մի քանի խմբագրությամբ մեզ է հասել 200-ից ավելի ձեռագիր ընդօրինակություններով։ Այսպիսով՝ Կանոնագրքի մեզ հասած ամբողջական և լրիվ ձեռագրերը բաղկացած են երկու շերտերից՝ որոնցից առաջինը Հովհաննես Օձնեցու կազմած ժողովածուն է, երկրորդը՝ նրանից հետո կատարված ավելացումները։*

Կանոնագիրքը իրավաբանական փաստաթղթերի առաջին մեծ ժողովածուն է, հայկական „Corpus juris canonici“*-ն։*

Սակայն հայագիտական գրականության մեջ սխալ է բնորոշվել ու գնահատվել Հովհաննես Օձնեցու կազմած ժողովածուն՝ Կանոնագիրքը։ Վերջինս համարվել է կոդիֆիկացիա։ Պրոֆ. Խ. Սամուելյանը այդպես էլ գրում է. «Կանոնագիրքը... առաջին կոդիֆիկացիան է Հայաստանում»[2]*, կամ «Այդ կոդիֆիկացիան կատարվեց... Օհան Իմաստասեր Օձնեցու... ձեռքով»*[3]*։ Մինչդեռ, եթե հետևելու լինենք Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագրքի վրա թափված աշխատանքի բնույթին, ապա անվարան կարող ենք ասել, որ նրա Կանոնագիրքը ոչ թե կոդիֆիկացիա է, այլ ինկորպորացիա։*

Դ. Թեև կանոնական որոշումները, գրությունները (սրանցից համադրված կանոնագիրքը) և դատաստանագիրքը պատկանում են պատմա-իրավագիտական հուշարձանների թվին, սակայն դրանք իրենց բնույթով տարբերվում են միմյանցից մի հայտնի չափով։

Կանոնագրքի հոդվածները զգալի չափով վերաբերում են դավանանքի և պաշտամունքի ծիսական խնդիրներին, ամուսնության, ընտանիքի և այլ հարցերի վերաբերմամբ հասարակության անդամների, մասնավորապես եկեղեցական պաշտոնյաների, վարքագծին։ Այստեղ բնութագրվում են գործված մեղքը և կատարված հանցանքը կամ զանցանքը, արգելվում՝ զանազան գործողություններ։ Բացի Շահապիվանի ժողովի կանոնախմբից՝ մյուս կանոնախմբերը, որպես կանոն, արարքների համար մարմնական և նյութական պատիժներ չեն նախատեսում։ Եվ պատահական չէ, որ Ասողիկը Շահապիվանի ժողովի մասին խոսելիս ասում է, թե «ըստ տուգանօք կանոնսն կարգեցին»[4]*։*

---

[1] *Տես ներքևում, էջ 535—536։*

[2] *Պրոֆ. Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հտ. 1, էջ 49։*

[3] *Նույն տեղում, էջ 48։*

[4] *Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 78։*

Կանոնագրքում պատիժը գերազանցապես կապվում է ապաշխարության կրոնական գաղափարի հետ։ Խրատի, բարոյական դատապարտման և կամ ապաշխարության միջոցով կանխել մարդկանց համակեցության կանոնների հնարավոր խախտումները։ Դրան հակառակ, դատաստանագրքում ապաշխարության մոմենտը նվազ նշանակություն ունի։ Այստեղ հանդես է գալիս քրեական պատասխանատվության և պատժի հարցը՝ այս բառերի արդի հասկացությամբ։

Կանոնագրքի տարբեր կանոնախմբերը հայ միջնադարյան ներքին կյանքի բազմապիսի կամ բոլոր կողմերի, օրինակ, տնտեսության, արտադրության կազմակերպման, հասարակական կառուցվածքի, տարբեր դասակարգերի իրավական գոյավիճակի, քաղաքացիական, քրեական իրավունքի, դատավարության և այլ հարցերի մասին ամբողջական և լրիվ տեղեկություններ չեն տալիս։ Դա կարելի է բացատրել նրանով, որ հայ եկեղեցական ժողովների և եկեղեցական գործիչների կանոնախմբերը կազմվել են յուրահատուկ իրադրության մեջ և որոշակի նպատակներով, նայած թե տվյալ ժամանակամիջոցում հասարակությանը ինչ հարցեր էին մտահոգում։ Այդ կանոնախմբերում արտահայտված են ոչ թե հայ հասարակության ներքին կյանքի բոլոր կողմերը, այլ միայն այն, թե ինչն է հուզել տվյալ պատմաշրջանում հայ հասարակության իշխող սոցիալական ուժերին։

Մեզ հետաքրքրող հարցերի մասին տեղեկություններ մենք քաղում ենք ոչ թե հասարակության տարբեր շերտերի համար սահմանված իրավական ամբողջական նորմերից, այլ նրանից, թե այդ շերտերը ինչ չպետք է կատարեն, մի բան, որն ավելի է նեղացնում այն ժամանակվա հայ հասարակության ներքին կյանքի ամբողջական մեր պատկերացման հնարավորությունները։ Այդ պատճառով էլ Կանոնագիրքը (այդ թվում նաև այն կանոնախմբերը, որոնք չեն մտել Կանոնագրքում) միջնադարյան հայ հասարակության ներսում «ազատ»-ների ձեռքին հանդիսացել է տվյալ ժամանակաշրջանում իրենց հուզող հարցերի լուծման ղեկավար լծակ, և ոչ թե հասարակության ներքին կյանքի բոլոր կողմերն արտահայտող մի ամբողջական օրենսդրական հուշարձան։ Կանոնագիրքն ամբողջական առումով չի արտացոլում քաղաքացիական, քրեական կամ դատավարական իրավունքը։ Ուստի հասկանալի է, թե ինչո՛ւ հայ միջնադարյան իրականության մի շարք կողմեր, ինչպես նշեցինք վերևում, մնացել են հետին պլանում։

Չնայած դրան, համենայն դեպս, հայ ավատատիրական հասարակության ներքին կյանքին վերաբերող բազմաթիվ հարցերի մասին շատ կարևոր և ուշագրավ տեղեկություններ մենք քաղում ենք Կանոնագրքի տված անուղղակի երբեմն էլ ուղղակի վկայություններից, մասամբ ապաշխարության, իսկ առանձին դեպքերում պատժի ձևերից և չափերից, սրանց նկատմամբ ունեցած դասակարգային անձուկ մոտեցումից և այլ կարգի վկայություններից։

Ե. Թե պատմական ինչպիսի պայմաններում և ինչ նպատակով Հովհաննես Օձնեցին կազմեց Կանոնագիրքը, արժանի է հատուկ ուշադրության, որովհետև Կանոնագրքի հանդես գալը VIII դարի 10-ական թվականներին պատահական երևույթ չէր, այլ ժամանակի հասարակական ու քաղաքական խաչաձևումների և բախումների արդյունք՝ պատմական անհրաժեշտություն։ Այս

համգամանքով է պայմանավորված Կանոնագրքի այն ժամանակվա քաղաքական նշանակությունը և պատմական արժեքը։

Բանն այն է, որ VII դարում Հայաստանի տերիտորիայում արաբների և բյուզանդացիների միջև պարբերաբար կրկնվող պատերազմներն ավերում էին երկիրը և քայքայում տնտեսությունը։ Հայ ժողովուրդը դեռ շունչ չառած, սպառնալիք եղավ մի այլ արհավիրքի՝ արաբները VIII դարի սկզբներին, ոչնչացնելով հայ ազնվականության զգալի մասը, ձգտեցին թուլացնել հայ նախարարների զինված ուժը։ Եվ երբ արդեն այդ բանը ժամանակավորապես նրանց հաջողված էր, խալիֆաթը Հովհաննես Օձնեցու միջնորդությամբ նոր միայն ազատեց աքսորված նախարարների մի մասին, որը վերադարձավ հայրենիք և օտար իշխողների «ողորմածության» շնորհիվ ստացավ իր կորցրած վաղեմի հողերը և արտոնությունները։ Մինչդեռ աշխատավոր ժողովրդի վրա ընկած էին պատերազմական ավերածությունների հետևանքները և հարկային ծանր լուծը։

Հայաստանում ժամանակի քաղաքական վիճակը միայն դրանով չէր դիմագծվում։ Մինչև VIII դարի սկիզբը Հայաստանում աղմկոտ վեճեր գնացին բյուզանդական պաշտոնական դավանանքի՝ քաղկեդոնականության շուրջը, որը, ի դեպ ասենք, որոշ հաջողություն ունեցավ Հայաստանում։ Բյուզանդական կայսրությունն այլ ժողովուրդների դավանանքի նկատմամբ չուներ խալիֆաթի հանդուրժողականությունը։ Արաբական խալիֆաթի գերիշխանության տակ գտնվող ժողովուրդներն ազատ էին դավանանքի հպատակությունից։ Դրա փոխարեն նրանք պարտավորվում էին վճարել մի նոր հարկ՝ գլխահարկ։ Ըստ երևույթին, խալիֆաթն այդ քաղաքականությանը հետևում էր, որպեսզի իր մշտական արշավանքների համար ունենար դրամական տևական աղբյուր։ Երկրորդ, նվաճված և նվաճվող ժողովուրդների՝ հայերի և արաբների դավանանքները գաղափարական տարբեր ելակետներ ու աղբյուրներ ունեին։ Խալիֆաթը, կարծես, զգաստ էր նայում այդ խնդրին և չէր փորձում բռնությամբ պարտադրել իր դավանանքը ոչ-իսլամ ժողովուրդներին։ Մինչդեռ բյուզանդական կայսրությունը, ելնելով հայ և բյուզանդական պաշտոնական դավանանքների ընդհանրության իրողությունից, և հենվելով դրա վրա, ձըգտում էր Հայաստանում թուլացնել արաբական գերիշխանությունը, հայերին քաղաքանապես միացնել իրեն, ապա միաձուլել և Հայաստանն ամբողջապես գրավել ու դարձնել կայսրության մի նահանգ։

Բյուզանդական կայսրության նվաճողական այդ քաղաքականությունը սկզբում իր հետ բերում էր վաղ-միջնադարյան Հայաստանի հասարակական ուժերի պառակտում և ապա՝ կլանում, որը թևաթափ անելով հայերին օտար իշխողների՝ թե՛ արաբների, և թե՛ բյուզանդացիների դեմ մղվող պայքարում, վերջ ի վերջո կհանգեցներ հայ ժողովրդի գոյության վերացմանը։

Ահա թե ինչու քաղկեդոնականության վեճերի քողի տակ ընթացող դավանաբանական պայքարի էությունը հանգում էր բյուզանդիայի քաղաքական ազդեցության ուժեղացմանը Հայաստանում։ Այդ է պատճառը, որ հայերի քաղաքական և նյութական զրկանքներ կրելու պայմաններում, Հովհաննես Օձնեցին ջանում էր նրանց անհողդողդ պահել հայ եկեղեցու հավատի մեջ և առժամանակ համակերպվել արաբական խալիֆաթի քաղաքականությանը։

Ավատական Հայաստանի հասարակական ուժերի պառակտման մասին արժեքավոր տեղեկություններ քաղում ենք 719 թվականին Դվինի ժողովում

Հովհաննես Օձնեցու արտասանած ճառից, ուր ասված է. «Քանզի տեսանեմ ի յոլովագոյն և ի ծանր իրս անկարգութիւն բազմացեալ, ոչ միայն ի ժողովրդականս, այլ առաւել յուխտի մանկունս և յառաջնորդս եկեղեցեաց: Որք մին լեզու՝ ի ձեռն միոյ քարոզի ի մի ելաք ճշմարտութեան ճանապարհ, և արդ բազմահետք և բազմաշաւիղք եղաք, յանչափաբար և զանազան և այլաձևսն առնելոյ՝ թէ զվարս եւ եթէ զփառաբանութիւնսն որ *առ Աստուած։ Մինչ գրեթէ զնոյն կրել զվնասս ըստ հնոյ պատմութեանն՝ պատերազմել* մեզ այր ընդ եղբօր, և այր ընդ ընկերի, քաղաք ընդ քաղաքի և օրէնք ընդ օրէնս։ *Երկրական զբօսանօքն և վաճառացն տուրևառութեամբք խօսակիցք և հաշուակիցք իրերաց լինելով, և առ խաղաղութեանն Աստուած ժողովեալք՝ ղիւաղացութիւնն խնդրել խուճապիմք և խռովիմք։ Եւ իբրև այլազգիք և այլալեզուք՝ տանիմք և բերեմք զմիմեանս, լինելով սա նմա խուժ, և այլք այլոց դուժ»*[1] *(ընդգծումը մերն է—Վ. Հ.)։*

Այստեղ Հովհաննես Օձնեցուն հարկավ վշտացնում էին ոչ միայն հայ քաղկեդոնականների պառակտողական վարվելակերպը, այլև հայ եկեղեցու ներսում հանդես եկած աղանդները։ Մինչև Հովհաննես Օձնեցին հայ եկեղեցում եւ հանդես են եկել մեկից ավելի աղանդներ, որոնք չէին ընդունում այդ եկեղեցու պաշտոնական դոգմաները։ Այս աղանդները ոչ թե արիոսականների, նեստորականների և ուրիշ հերձվածողների նման հանդես էին գալիս Քրիստոսի բնույթի վերաբերյալ վեճերով, այլ փաստորեն ժխտում էին պաշտոնական եկեղեցու ամբողջ գոյության անհրաժեշտությունը։ Ֆ. Էնգելսի արտահայտությամբ՝ եթե վաղ շրջանի քրիստոնեությունը հարող ստորին խավերի՝ ստրուկների, ռազմագերիների, մանր գյուղացիների և աշխատավորական մյուս շերտերի համար «նրանց կորցրած ամբողջ դրախտն ընկած էր հետևում»[2]*, ապա վաղ և զարգացած ավատատիրության ժամանակ աշխատավոր ժողովուրդը, ի դեմս աղանդների, պայքարում էր այդ դրախտը տեղափոխելու երկրի վրա, առօրյա ապրելակերպում ի հաշիվ ավատական նյութական տիրապետության։ Եվ որովհետև ինքը եկեղեցին ևս ավատական մի կազմակերպություն էր, որին պատկանում էր «յուրաքանչյուր երկրի ամբողջ հողային տարածությունների մոտավորապես մեկ երրորդը»*[3]*, այդ պատճառով էլ «ֆեոդալիզմի դեմ մղվող ամեն մի պայքար այն ժամանակ պետք է կրոնական զգեստավորում ընդուներ, ամենից առաջ եկեղեցու դեմ ուղղվեր»*[4]*։ Այստեղից, արդեն, հասկանալի են դառնում հայ եկեղեցու ամենադաժան միջոցառումներն ընդդեմ մծղնեականների, պավլիկյանների, իսկ ավելի ուշ՝ թոնդրակյանների։*

Այս պայմաններում Հովհաննես Օձնեցու նպատակը և միջոցառումները գնում էին հայ ժողովրդի տարբեր շերտերի քաղաքական միության վերականգնման ուղղությամբ, պահպանելու և ամրացնելու հայ ժողովրդի ներքին կյանքի ինքնավարությունը՝ պայքարելով նախ բյուզանդական ոտնձգություն-

---

[1] *Յովհաննու Իմաստասէրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 4—5։*

[2] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, էջ 422.

[3] *Նույն տեղում, հտ. XVI, մ. I, էջ 295. համտ. նաև Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, էջ 18։*

[4] *Ֆ. Էնգելս, Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, էջ 19. համտ. նաև Գերմանական գյուղացիական պատերազմը, էջ 46։*

ների, աղանդավորական շարժումների դեմ և ապա, ուժեր կուտակելով, նախապատրաստել արաբների դեմ բարձրանալիք պայքարի նոր ալիքը։

Հենց այդ պայքարի շրջապտույտում է, որ Հովհաննես Օձնեցին մշակում է իր կանոնախումբը և կազմում Կանոնագիրքը, որպեսզի կարողանա միևնույն դավանանքի ներքո հավաքագրել հայերին, պահպանել նրանց և հայ եկեղեցու ինքնուրույնությունը և անկախությունը։ Վերջինս, անշուշտ, պետք է խարսխված լիներ ազգային ավանդությունների, սովորությունների վրա։ Ըստ երևույթին այդ նույն նպատակով և գրեթե միևնույն ժամանակ հանդես եկան «Գիրք թղթոց», որի կազմման աշխատանքները դարձյալ վերագրվում է Հովհաննես Օձնեցուն, և ճոխացված «Կնիք հավատոյ» ժողովածուները։

Ազգային ավանդական կարգ ու կանոնով, սովորություններով իրականացնել հասարակական քաղաքական որոշակի նպատակներ, այս է Կանոնագրքի այն ժամանակվա քաղաքական և գործնական նշանակությունը, որը մի ցույց էր ընդդեմ քաղկեդոնականության մասնավորապես, և բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության՝ ընդհանրապես։ Այս միտքը կարմիր թելի նման անցնում է Օձնեցու կանոնախմբի Ը հոդվածում. «Արժան է զհացն անխմոր և զգինին անապակ հանել ի սուրբ սեղանն ըստ աւանդելոյ մեզ սրբոյն Գրիգորի և չխոնարհել յայլ ազգաց քրիստոնէից յաւանդութիւնս. զի սուրբ Լուսաւորիչն յաւրինականէն բերեալ զայս առաքելաբար հրաման ետ կատարել իւրոց վիճակելոցն, որպէս եւ զաղն աւրհնութեան յագապացն զենմունս խառնել եւ ըստ կարգի Ղեւտացւոցն ազգաւ սեպհականել զեկեղեցւոյ շնորհ. եւ մեզ ի նմին պարտ է յարամնալ եւ չթողուլ ի բաց, եւ չառնել նորաձեւս ինչ»[1]։ *(Ընդգծումը մերն է— Վ. Հ.)*։

Չ. Ի տարբերություն պատմագիտական սկզբնաղբյուրների, Կանոնագիրքը, թեև բովանդակում է եկեղեցական ժողովների որոշումներ և եկեղեցական ականավոր գործիչների կանոնական գրություններ. որոնք զգալի չափով, «վերաբերվում են կամ եկեղեցական դասին և կամ դավանանքի ու պաշտամունքի ծիսական խնդիրներին»[2], այնուհանդերձ խիստ ուշագրավ տեղեկություններ են տալիս մեզ լուսաբանելու «նախարարական Հայաստանի կամ սոցիալական իրավական հարաբերությունները և կամ ուրիշ կարևոր պրոբլեմներ»[3]։

Ճիշտ է, Կանոնագրքում զգալի չափով տեղ են գտել հայ եկեղեցու դավանանքի և պաշտամունքի ծիսական հարցերը, սակայն դրանք այն ժամանակ՝ միջնադարում ունեին իրենց բովանդակությունը և քաղաքական նշանակությունը, այն է՝ դավանանքի և պաշտամունքի ծիսական հարցերի մշակմամբ պահպանել հայ եկեղեցու ինքնուրույն՝ ազգային դեմքը, հեռու՝ ուրիշ եկեղեցիների, թեև քրիստոնյա, բայց օտար ազդեցություններից և գաղափարական միությունից, դրանով իսկ դիմակայել հայ ժողովրդի նկատմամբ համաձուլաբար քաղաքականություն վարող օտար ուժերի դեմ՝ հայ պետականության չգոյության պայմաններում։

---

[1] Տես ներքևում, էջ 519։

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 13, հմմտ. նույնի Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Բ, մասն Ա, էջ 428։

[3] Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 13, Քննական տեսություն... հտ. Բ, մասն Ա, էջ 428։

Է. Հայկական ծագում ունեցող կանոնական որոշումների մի մասը, որը տեղ է գտել Կանոնագրքում, եկեղեցական ժողովների սահմանումներ են։ Մեր իրականության մեջ այդ ժողովներին հոգևորականության հետ միասին, ինչպես վկայում են պատմական սկզբնաղբյուրները, մասնակցել են նաև հասարակության աշխարհիկ շերտերի ներկայացուցիչները՝ իշխանները։ «Ազատ»-ներն այդ ժողովներին տալիս էին օրենսդրական բարձրագույն իշխանության բնույթ՝ սահմանելով անհրաժեշտ որոշումներ իրենց դասակարգի տնտեսական և քաղաքական շահերից ելնելով. մինչդեռ հայագիտության մեջ հայ եկեղեցական ժողովներին իշխանների վաղուց ի վեր մասնակցությունը[1] բացատրվել է հայ եկեղեցու դեմոկրատիկ բնույթով։ Նման ժողովների հրավիրման նախաձեռնությունը պատկանում էր հայ եկեղեցուն, որովհետև եկեղեցին դեռ հնից, ինչպես նշեցինք վերևում, իր ձեռքում էր պահում օրենսդրական և դատավարական իրավունքը մի կողմից, և կենտրոնական պետական իշխանության բացակայության պայմաններում ինքն էր հանդես գալիս որպես կենտրոնական ու համազգային մի կազմակերպություն՝ մյուս կողմից։ Մասնավորապես վերջին հանգամանքի առկայության դեպքում եկեղեցական ժողովներում քննվում էին նաև հասարակության առաջ ծառացած այնպիսի հարցեր, որոնք վերաբերում էին ժողովրդի ներքին կյանքին, հասարակության տարբեր շերտերի սոցիալական և իրավական գոյավիճակին, առօրյա համակեցությանը։ Դրանով պետք է բացատրել նախ ավատական ազնեցիկ տների ներկայացուցիչների մասնակցությունն այդ ժողովներին և երկրորդ, թե ինչու Կանոնագիրքն իր ընդգրկումներով և կիրառության շառավիղներով դուրս եկավ դավանանքի ու հոգևորական դասի նեղ շրջանակից և մտավ հայ ժողովրդի ներքին կյանքի ամենախուլ անկյունները, շոշափեց նրա բոլոր դասակարգերի և շերտերի սոցիալական դրության շատ ու շատ կողմեր՝ արտահայտելով իշխող դասակարգի՝ «ազատ»-ների շահախնդրությունն ու տեսանկյունը։

Ը. Միջնադարում հայ ժողովրդի ստեղծած իրավագիտական հուշարձաններից միայն Կանոնագիրքն է, որ հանդես է գալիս, որոշ իմաստով, որպես դարերի ընթացքում ընդհանուր ճանաչում գտած իրավաբանական ակտերի պաշտոնական ժողովածու։ Ոչ Մխիթար Գոշի, ոչ Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերը իրավաբանական պաշտոնական ակտեր չեն։ Դրանք իրենց ժամանակի մեծ մտածողների ստեղծագործություններ են, հարկավ ոչ մտացածին, ուր հեղինակների ընկալմամբ արտահայտված են ժամանակի սոցիալական և իրավական հարաբերությունների նորմաները։ Հակառակ դրան՝ Կանոնագիրքը ձևավորվեց հայոց հոգևոր պետի՝ կաթողիկոսի կողմից, կաթողիկոսարանում պաշտոնական միջավայրում և պաշտոնական անձի նախաձեռնությամբ։ Ինքը Հովհաննես Օձնեցին իր հիշատակարանում գրում է. «Կամեցայ զբովանդակ

---

[1] Այստեղ մենք նկատի ունենք եկեղեցական այն ժողովները, որոնք երկրի ներքին կյանքի վերաբերյալ ընդունել են կանոնական որոշումներ։ Իսկ այն ժողովները, որոնք հրավիրվել են երկրի քաղաքական կյանքի ճգնաժամային րոպեներին, ինչպես վկայում են պատմական սկզբնաղբյուրները, բացի «ազատ»-ներից մասնակցել են նույնիսկ «անազատ»-ների ներկայացուցիչները, տենք, 449 թ. Արտաշատի ժողովը և այլն, այդ քայլին դիմել են այն դեպքերում, երբ սպառնացող վտանգը համարվել է համընդհանուր երևույթ՝ թե «ազատ»-ների և թե «անազատ»-ների համար։ Ողջ ժողովրդին ոտքի հանելու համար շատ հաճախ էլ այդ պայքարին տրվել է կրոնական երանգավորում։

գառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մասնիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել»[1]:

Հեղինակն այս քայլին չդիմեց, հարկավ, հետաքրքրությունից դրդված և կամ ինքնաբավ նպատակով, այլ՝ գործնական նկատառումներով: Որպես կաթողիկոս՝ նա ի մի բերելով ամբողջականացրեց իրենից առաջ սահմանված կանոնները, իր կողմից պաշտոնական ձև և վավերացում տվեց մինչև այդ էլ արդեն, ընդհանուր ճանաչում գտած կանոնական սահմանումներին:

Թ. Թե ինչ չափով են օգտագործվել միջնադարյան հայ հասարակական կյանքում Կանոնագրքում եղած այն կանոնախմբերը, որոնք ժամանակին հունարենից թարգմանվել են հայերենի և հետագայում մտել Կանոնագրքի մեջ (փոխառման հարցը), կարող է ուսումնասիրության հատուկ հարց դառնալ, որից հետո միայն հնարավոր կլինի այդ մասին որոշակի և հաստատուն բան ասել: Այստեղ այդ խնդրով չենք զբաղվի: Հայկական միջավայրում առաջ եկած մի քանի կանոնախմբերում արտահայտված որոշ հարցերի մասին կցանկանայինք առանձին դիտողություններ անել: Կանոնագրքում ամենից ուշագրավ և հետաքրքիր կանոնախումբն է Շահապիվանի ժողովի որոշումները: Կարելի է ասել՝ այս կանոնախումբը միակն է, որ հանցագործության համար սահմանում է պատիժներ և դրանով իսկ արդեն դուրս է գալիս կանոնական բնույթից և ստանում դատաստանագրքի նշանակություն: Շահապիվանի ժողովն ընդունել 20 հոդվածներ, որոնցից մեկը՝ ԺԵ, խրատական բնույթ ունի և պատիժ չի նախատեսում: Հոդվածներից 6-ը ամբողջությամբ՝ Ա, Բ, ԺԴ, ԺԶ, ԺԷ և ԺԸ, ինչպես և Թ, ԺԳ, ԺԹ, Ի հոդվածները մասամբ, վերաբերում են հոգևորականներին, որոնց գործած կանոնական խախտումների և հանցանքների համար նախատեսված են կանոնական և քրեական պատիժներ՝ համապատասխան պատժաչափերով: Մնացած 9 հոդվածները՝ Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Ժ, ԺԱ, ԺԲ, ինչպես և Թ, ԺԳ, ԺԹ, Ի հոդվածները մասամբ, «ազատ»-ների՝ իշխանների և «շինական»-ների մասին են՝ զանազան պատժաչափերի նախատեսումով: Այս վերջին խմբի Ը և ԺԱ հոդվածները, ինչպես նաև ԺԲ, ԺԳ, ԺԹ հոդվածների համապատասխան մասերը «ազատ»-ների և «շինական»-ների պատիժը նույնն են նախատեսում, թե՛ ըստ ձևի, թե՛ ըստ էության: Է հոդվածում և Ե-ի մի մասում «ազատ»-ների և «շինական»-ների պատիժը թեև նույնն է, բայց պատժաչափը տարբեր է: Գ, Դ, Զ, Ժ հոդվածները և Ե, Թ, ԺԲ հոդվածների մի մասը «ազատ»-ներին և «շինական»-ներին տարբեր ձևի և չափի պատիժներ են նախատեսում[2]:

Այս հոդվածների առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ «ազատ»-ների և «շինական»-ների համար նախատեսվում է երկու տեսակի պատիժ. «ազատ»-ների համար մի դեպքում ապաշխարություն և տուգանք, «շինական»-ների համար նույնը, ավելացրած նաև մարմնական պատիժ՝ ծեծ (հոդ. Գ, Դ, Թ և այլն), մի այլ դեպքում՝ երկուսի համար էլ գողենոց գնալ և տուգանք (հոդ. Դ, Ե և այլն), երրորդ դեպքում՝ «ազատ»-ներին խրատ և տուգանք, իսկ «շինական»-ներին ծեծ և խրատ (հոդ. Զ.), ընդորում «շինական»-ի տուգանքը բոլոր դեպքերում որպես կանոն կազմում է «ազատ»-ի տուգանքի կեսը կամ

[1] Տես ներքևում, էջ 536:

[2] Զ և Ժ հոդվածներում «ազատ»-ներին նախատեսում է պատիժ, իսկ «շինական»-ների անունը թեև չի տալիս, բայց ընագրից հասկացվում է, որ վերջիններիս համար ես նախատեսված է պատիժ:

կեսից մի քիչ պակաս։ Բերում ենք այդ 5 հոդվածներից մեզ հետաքրքրող հատվածները.

1. Հոդ. Գ. «Եթէ ազատ է եւ զան չէ մարթ ճարկանել, ի տուգանն եւ յապաշխարութիւնն յաւելցեն Մ դրամ կարաւտելոց, Բ տարիս յապաշխարութիւն...։ Ապա եթէ շինական է, գան յոլով արրցէ, Ճ դրամ տուղան տացէ լեկեղեցի եւ յաղքատս բաշխեսեն եւ տարի մի ի պղծութենէն հեռացեալ՝ մտցէ լեկեղեցի... եթէ այր եւ եթէ կին կանոն այդ կացցէ»։
2. Հոդ. Դ. Եթե ամուսինը թողնում է կնոջը, ունեցվածքը հավասար բաժանում են, իսկ ամուսինը «Է ամ ապաշխարեսցէ եւ լեկեղեցի տուգան տացէ, թէ ազատ է՝ Ց դրամ, թէ շինական՝ գտանալի լիցի եւ Ճ դրամ լեկեղեցի տուգանեսցի...»։ Եթե պարզվի որ ամուսնալուծությունը եղել է մի այլ կնոջ պատճառով՝ «կալցին զկինն եւ յաւրկանոց տարի մի աղասցէ գողեացն։ Եթէ ազատ է (կինը— Վ. Հ.) եւ յաւրկանոց չերթայ՝ Ճ դրամ տացէ ի գողիսն»։
3. Հոդ. Ե. Ամլության դեպքում կնոջից բաժանվելիս, կնոջը անարգելու համար «թէ ազատ է՝ ՌՄ դրամ, եւ եթէ շինական՝ Ո». մի տարվա ընթացքում, եթէ ամուսինը ամուսնանում է մի այլ կնոջ հետ, վերջինս որպես ամուսնալուծության պատճառ «տարի մի աղասցէ գողեացն եւ յաղախնութեան կացցէ եւ լեկեղեցին Ճ դրամ տուգան կալցին... Ապա եթէ ազատ է եւ ի գողենոց չերթայ՝ Ճ դրամ տուգան տացէ գողեացն»։
4. Հոդ. Ժ. «Ապա եթէ ազատ է եւ ի գողենոց չերթայ՝ Շ դրամ տացէ գողեացն եւ Բ ամ լիւրում եկեղեցւոջն յապաշխարութեան կացցէ»։
5. Հոդ. ԺԲ. Աղգապղծությունը եթե կնոջ կամքով է՝ «ղպատուհասն եւ զտուգանս եւ ղնղովս ղնոյն կրեսցէ... ապաշխարեսցէ Ի ամ ընդ ունկնդիրս, Գ ամս ընդ ծեռամբ, Ո դրամ աղքատաց, Ծ՝ լեկեղեցի». այնուհետև «կալցին զկինն եւ յաւրկանոց տացեն, Ժ տարի աղասցէ գողեացն. ապա եթէ ազատ է եւ ի գողիսն չերթայ՝ Ց դրամ տացէ նոցա»։

Մեջբերման առաջին հատվածում արդեն շեշտվում է, որ «ազատ»-ին չի կարելի ծեծի ենթարկել, այդ պատճառով էլ մի կողմից նրան հասանելիք տուգանքը և ապաշխարությունը «յաւելցեն», մյուս կողմից՝ մնացած հոդվածներում «ազատ»-ների համար չեն նախատեսվում մարմնական պատիժներ. դրա փոխարեն նա տուգանքը վճարելով հանդերձ պետք է գնա նաև գողենոց։ Հոդվածներում կրկնվող «ապա եթէ ազատ է եւ ի գողենոց չերթայ» արտահայտությունը մեր կարծիքով ակնարկում է «ազատ»-ի սոցիալական այն արտոնությունը, թե նա իրավունք ունի գողենոց գնալը իր ընտրությամբ փոխարինելու տուգանք վճարելով, ինչքան սահմանված է օրենքով։ Օրինակ, 3-րդ հատվածում (հոդ. Ե, նույնը և Դ հոդվածում) նախատեսված է «տարի մի աղասցէ գողեացն եւ յաղախնութեան կացցէ եւ լեկեղեցին Ճ դրամ տուգան կալցին...»։ Այս որոշումը վերաբերում է և՛ «ազատ», և՛ «շինական» կնոջը հավասարապես։ Շարունակության մեջ բացատրում է՝ «Ապա եթէ ազատ է եւ ի գողենոց չերթայ՝ Ճ դրամ տուգան տացէ գողեացն». այսինքն, եկեղեցուն 100 դրամ տուգանք տալուց բացի, «ազատ»-ը իր գողենոց գնալը, նախընտրելու դեպքում, փոխարինում է 100 դրամ գողենոցին տուգանք վճարելու

պարտավորությամբ։ Ուրեմն միևնույն հանցանքի համար «շինական»-ը մեկ տարի մնում է գողենոցում և 100 դրամ տուգանք վճարում եկեղեցուն, իսկ «ազատ»-ը միայն 100-ական դրամ տուգանք է վճարում եկեղեցուն և գողենոցին (100 + 100 = 200)։ Այսպիսով, «ազատ»-ի և «շինական»-ի սոցիալիրավական վիճակի տարբերությունը կայանում է նրանում, որ «շինական»-ը կրելու է նախատեսված երկու պատիժը՝ գողենոց դնալ և տուգանք, իսկ «ազատ»-ին թեև նախատեսված է դարձյալ երկու պատիժ՝ գողենոց դնալ և տուգանք, բայց նա որպես արտոնյալ դասակարգի ներկայացուցիչ, առաջին պատիժը՝ գողենոց գնալը, նախօրոք սահմանված չափի տուգանքով փոխարինելու իրավունք ունի, եթե ինքը ցանկանում է, մի բան, որը «շինական»-ին արգելված է։ Այլ խոսքով «ազատ»-ի համար նախատեսված առաջին պատիժը ընտրովի (ալտերնատիվ) է, այսինքն՝ կախված է «ազատ»-ի կամքից։ «Ազատ»-ի իրավական այս վիճակը արտահայտված ենք գտնում տակավին IV դարի հեղինակ Եփրեմ Խուրի Ասորու կանոնական մի գրության մեջ, որը հայերեն թարգմանվել է V դարում, իսկ հետագայում՝ Հովհաննես Օձնեցուց հետո, մուծվել Կանոնագրքում։ Բերում ենք այդ կանոնախմբի Բ հոդվածն ամբողջությամբ. «Որք ճաշակեցին ի մռացութենէ ի մսոյ ի չորեքշաբաթու կամ յուրբաթու՝ որոշեսցին յեկեղեցւոյ՝ Դ շաբաթ պահելով սրբութեամբ եւ տրաւք տնանկաց եւ պատարագաւք, Ժ կրկին գան արբցէ և ապա հաղորդեսցի. իսկ եթէ ամբարտաւանութեամբ կամ արհամարհելով ղառաքելական հրամանն՝ Գ ամ ապաշխարեսցեն, Խ կրկին գան արբցեն եւ Լ դրամ տուգանս տացեն յեկեղեցին. եւ յաւուրն յորում պղծեցաւ՝ զնա սրբութեամբ պահեսցէ մինչեւ ցմահ իւր եւ ապա հաղորդեսցի աւրինաց։ Ապա եթէ ազատ ոք է եւ ոչ առնու յանձն զապաշխարութիւնն եւ զկարգն՝ Մ դրամ տուգանս տացէ յեկեղեցին եւ Լ դրամ՝ յաղքատս եւ ապա հաղորդեսցի աւրինաց»։ (Ընդգծումը մերն է— Վ. Հ.)։ Այստեղ կարևոր է նշել երկու հանգամանք. նախ՝ կանոնական այս որոշումը կամ այն ժամանակ հայերի միջավայրում եղած նման մի այլ որոշում հավանաբար օրինակ է հանդիսացել Շահապիվանի ժողովի որոշումների իրավաբանական ձևակերպումների համար, իսկ այդ անցումը ասորերենի թե հայերենի միջոցով է եղել, միևնույնն է և էական նշանակություն չունի։ Չմոռանանք նշել, որ մինչև V դարը և դրանից հետո էլ որոշ ժամանակ հայերի շփումը ասորական մշակույթի հետ սերտ էր։ Երկրորդ՝ ընդգծված վերջին հատվածից շատ պարզ երևում է, որ «ազատ»-ի ցանկությամբ միայն պատիժը դառնում է ընտրովի։ Շահապիվանի ժողովի որոշումներում մի քանի անգամ հանդիպող «Ապա եթէ ազատ է եւ ի գողենոց չերթայ» արտահայտությունը, մեր կարծիքով, Եփրեմ Ասորու վերևում նշված վերջին հատվածի կամ նման մի այլ որոշման համառոտ շարադրումն է և դրա տակ ես պետք է հասկանալ «ազատ»-ներին պատժի ձևերի ընտրությունը թույլատրելու մի միջոց։

Ժ. Համենայն դեպս Շահապիվանի ժողովի որոշումներում պարզ երևում է դասակարգային մոտեցումը «ազատ»-ների և «շինական»-ների նկատմամբ։ «Շինական»-ը դասվելով «անազատ»-ների շարքը, տակավին չէր կորցրել անձնական ազատության իրավունքները, ինչպես ճիշտ նկատել է ակադ. Հ. Մանանդյանը. «անազատ» արտահայտությունը լոկ նշան էր հարկատվության, որից ազատված էին ազնվականությունը, եկեղեցին։ Եվ «ազատ»-ների դասին «շինականներին» չպատկանելը՝ դեռևս ապացույց չէ նրանց ճորտական վիճա-

կի»[1]։ «Շինական»-ները «անազատ»-ներ են անվանվել, իբրև «ազատ»-ներից տարբեր ու «ազատ»-ներին հակադիր դաս»[2]։ «Շինական»-ներն ունեցել են ոչ միայն սեփականություն՝ հող, անշարժ և շարժական գույք, այլև այդ գույքը տնօրինելու իրավունք։ Ավելին, «շինական»-ը թեև եղել է ոչ «ազատ», հարկատու և ավատական հասարակության նվիրապետության ստորին աստիճանի ամենաբազմաքանակ դասակարգը. այնուամենայնիվ նա իր անձնական իրավունքի տերն էր և օրենքի առաջ ներկայանում էր որպես ինքնուրույն քաղաքացի՝ իր անունից։ Շահապիվանի ժողովի առանձին հոդվածներում միևնույն հանցանքի համար և՛ «ազատ»-ին և՛ «շինական»-ին նախատեսվում է միևնույն պատիժը. տես Ե, Է, Ը, ԺԲ, ԺԴ հոդվածները. օրինակ՝ «Եթէ ազատ եւ եթէ շինական՝ կանոն այդ կացցէ» (հոդ. Է), «Եթէ յազատաց կամ ի շինականաց առաքելական կանոնին ընդդիմանան եւ կոծ դնեն՝ նզովեալ լիցին...» (հոդ. ԺԱ), «Թէ ազատ է, թէ շինական, տուգանք եւ կանոնք այդ կացցեն» (հոդ. ԺԴ)։ Մի քանի այլ հոդվածներում թեև այդպես պարզ չի նշվում, բայց բնագրից նույնն է երևում (հոդ. Ը, ԺԹ և այլն)։ Պատժաչափը լինում է ըստ հանցանքի։ Տուգանքի չափի տարբերությունը բխում է սոցիալական այդ երկու դասակարգերի տնտեսական վիճակից, թերևս բարոյական ինչ որ նորմաներից։ Այս բոլորը խոսում են այն մասին, որ «շինական»-ը իրավազուրկ անձ չի եղել[3], ինչպես ավելի ուշ շրջանում ճորտերը, թեև ունեցել է տնտեսական կախում «ազատ»-ներից և ենթակա է եղել նրանց տնտեսական ճնշմանը։ Եվ երբ այս տեսանկյունով նայում ենք 645 թ. Դվինի ժողովի Թ հոդվածի ակայ. Հ. Մանանդյանի բացատրությանը, որի համաձայն իբր թե երդումարդը եղել է «բաժանման առարկա, ուստի և հավանական է ենթադրել, որ նույն այդ գույքը կարելի է եղել նաև գնել, վաճառել, ընծայել, կտակել և այլն»[4], ապա նկատում ենք, որ դա հավաստի չէ։ Այդ մասին Ս. Հակոբյանի բացատրությունը ավելի ճիշտ է, այսինքն՝ երդումարդի բաժանում ասելով «մենք պետք է հասկանանք ոչ թե ազատներին պատկանող գյուղացի-շինականները կամ իրավապես ճորտ գյուղացիները, այլ նրանց հարկատուները»[5]։

ԺԱ. Հետաքրքիր է մի այլ երևույթ։ Շահապիվանի ժողովի որոշումներում բոլոր տեսակի տուգանքները գնում են ոչ թե անհատներին՝ իշխաններին, այլ հիմնարկներին՝ եկեղեցուն կամ գոդենոցներին, որպես նրանց եկամտի մասնակի աղբյուր, իսկ առանձին դեպքերում էլ տուգանքի որոշ մասը նախատեսվում է բաշխել աղքատներին, թեև այլ հարց է, թե վերջինս ինչ չափով է իրականացվել։ Այս երևույթը նույնպես խոսում է այն մասին, որ «շինական»-ները անձնապես կախված չեն եղել իշխաններից, այլապես տուգանքը կվճարեին նրանց և ոչ թե հիմնարկներին։ Սակայն, տուգանքների դրամական ձևը միշտ չի նշանակել, թե վճարումները եղել են դրամով. շատ

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 129. 161. տես նաև Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հտ. 1, Երևան, 1957, էջ 281։

[2] Հ. Մանանդյան, նույն տեղում. էջ 189։

[3] Հմմտ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 182։

[4] Նույն տեղում, էջ 162։

[5] Ս. Հակոբյան. Հայ գյուղացիության պատմություն, հտ. 1, էջ 281։

հնարավոր է, որ դա եղել է դրամական արտահայտության ձևով[1]։ Մենք նշեցինք, որ Կանոնագրքում երևում է «ազատ»-ների և «անազատ»-ների իրավական գոլավիճակի տարբերությունը, սակայն, անհրաժեշտ է նշել նաև այն, որ եկեղեցին օրինականացնում էր գոյություն ունեցող գույքային անհավասարությունը։ Տակավին Սահակ Պարթևի կանոնախմբի ԾԲ հոդվածում նշվում է, թե եկեղեցուն ինչ կարելի է նվիրել. «Իշխանք զգեւզս եւ զդաստակերտս եւ զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ, այլք յանդաստանաց եւ ի պաճարաց եւ ի հանդերձից պատուականաց...»։ Այլ հոդվածներում՝ Խ, ԽԱ, ԽԳ՝ Սահակ Պարթևը հանձնարարում է, թե մյուս նվերներն ինչպես պիտի բաժանել։ Այս (և ոչ միայն այս) ձևով եկեղեցին կուտակել էր հողային և այլ կարգի հսկայական սեփականություն և դրա հետ մեկտեղ եկեղեցին ազատ էր հարկատվությունից։ Այդ մասին Դվինի 645 թ. ժողովի Ն հոդվածում կարդում ենք. «Վասն շնորհի և ժառանգաւորութեան սահմանեցաք թէ ի սկզբանէ, որպէս ի հրամանէ սրբոյն Գրիգորի լեալ, նոյնպէս եղիցի. որոյ շատ է ժառանգութիւնն՝ դշատն կերիցէ, որոյ սակաւ՝ զսակաւն կալցի, եւ մի ըստ ծխոց բաժանեսցեն զշնորհն, զի ժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրեւ զազատութիւն է, զոր երանելւոյն սրբոյն Գրիգորի եւ թագաւորին Տրդատայ զատացեալ են՝ Արդ՝ դիւրաքանչիւր հարանց զժառանգութիւն կալցին եւ սրբոյ եկեղեցւոյ պաշտամանն հպատակ կացցեն»։ Այս հոդվածի անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ եկեղեցու իրավունքների դեմ տևական պայքար էին մղում ոչ միայն աշխատավորները, երբեմն զանազան աղանդների անվան տակ, այլև տվյալ պահին նաև իշխանները, որոնք հոգևորականներին «չանան ի ծառայութիւն եւ ի ստրկութիւն արկանել... զի երանելւոյն Գրիգորի եւ սրբոյն Տրդատայ դսուրբ եկեղեցւոյ մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, եւ ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող եւ ջուր, նաեւ ի Պարսից իսկ տէրութեանն յայտ արարեալ եւ չէ խառնեալ ի շինական իշխանութեամբ» (Դվին, հոդ. Թ)։

ԺԲ. Սահակ Պարթևի կանոնախումբը ուշագրավ է և հետաքրքիր V դարի առաջին կեսում երկրի ընդհանուր վիճակը հասկանալու համար։ Դպրոցների կազմակերպման նրա ջանքերը մեկ նպատակ ունեին՝ կադրեր պատրաստել եկեղեցու համար (հոդ. Ժ)։ Սակայն, խիստ ուշագրավ է ամուսնության ազատ ընտրության կամ ազատ սիրո գաղափարը տակավին այն ժամանակ՝ V դարում։ Հայաստանը թեև գտնվում էր Արևելքի ժողովուրդների միջավայրում, սակայն, հայերի մոտ կինն այն ժամանակ, հակառակ Արևելքի սովորության դարձած արհամարհանքին, համեմատաբար բարձր արժանապատվություն ուներ, քան հետագայում և ուշ միջնադարում։ Հենց այն հանգամանքը, որ Շահապիվանի ժողովի որոշումներում կինն օրենքի առաջ հավասար էր տղամարդուն, ցույց է տալիս կնոջ այդ արժանապատվությունը. «Եթէ այր եւ եթէ կին՝ կանոն այդ կացցէ» (հոդ. Գ), «առն եւ կնոջ պատուհաս, տուգան եւ ապաշխարութիւն՝ կանոն եւ սահման այդ կացցէ» (հոդ. Ն), «Եթէ այր եւ եթէ կին երթեալ իցեն ի հարցուկս՝ կանոն այդ լիցի» (հոդ. Թ) և այլն։ Իսկ Սահակ Պարթևը իր ԻԷ հոդվածում արգելում է ամուսնությունը, եթե ամուսնացողները միմյանց չեն տեսել և հավանել. «Պատուէր արարէք նոցա... մի

[1] Տե՛ս. Թ. Ավդալբեկյանի հոդվածը «Հայ շինականի ու դեղջկուհու աշխատավարձը հինգերորդ դարում» (Տեղեկագիր Հ.Ս.Խ.Հ. Գիտության և Արվեստի ինստիտուտի, № 3, Երևան, 1928, էջ 51—81)։

կատարելոցն՝ առանց զիրեարս տեսանելոյ միմեանց հաճութեամբ. եւ դուք քահանայք... կատարելոցն որոց զմիմեանս ոչ իցէ տեսեալ ի հաճոյս ինքեան. պսակ մի իշխէք դնել առանց քննութեան եւ ցնոսին ինքեանս հարցանելոյ»։ Ավելին՝ եթե ծնողներն ինչ-ինչ պատճառներով այս հարցում խաբում են քահանաներին և անտեսում իրենց զավակների ցանկությունը և վերջիններս ակամա են համաձայնություն տվել ամուսնության, այդպիսիների ծնողները ենթակա են կանոնական պատժի։ Իհարկե՝ այլ հարց է, թե այդ գաղափարը կյանքում ինչ չափով է իրականացվել, սակայն նման գաղափարն ինքնին ուշագրավ է։ Հայերի մոտ կնոջ այս վիճակը թերևս կարելի է բացատրել նրանց տնտական և անընդմիջական շփումով հույների և անտիկ մշակույթի հետ, որ կինը չէր գտնվում ստորացման այն աստիճանում, ինչ տեսնում ենք հայերին շրջապատող Արևելքի մի շարք ժողովուրդների մոտ։

Համառոտակի նշեցինք հայ հին կյանքում տեղի ունեցած և Կանոնագրքում արտահայտված մի քանի հարցերը միայն։ Մոտից հետևելով Կանոնագրքում եղած կանոնական պատիժներին, պարզվում է, որ դրանք հիմնականում վերաբերում են հինգ հարցերի.

1. Անձնական իրավունքին, 2. Ընչական (սեփականության) իրավունքին, 3. Մասնավորապես եկեղեցական պաշտոններին, 4. Ծիսական հարցերին, 5. Լայն ըմբռնմամբ հավատուրացությանը։ Վերջին կետի կապակցությամբ նշելի է, որ, հայ ժողովրդի պետականության բացակայության պայմաններում, պետական դավաճանության մասին Կանոնագրքում չէր կարող խոսք լինել։ Դրան հակառակ, մեծ տեղ է բռնում հավատուրացության հարցը, կապված ինչպես հայ եկեղեցու գաղափարական խորթ ուսմունքների՝ աղանդների դեմ տարվող պայքարի, այնպես էլ օտար նվաճողների հոգևոր ճնշման հետ։

ԺԳ. Սակայն, Կանոնագիրքը մեզ հետաքրքրում է ոչ միայն վերևում մասնակիորեն նշված և ընդհանրապես չնշված իրավական այլ հարցերի տեսակետից, այլև լեզվական առումով։ Կանոնագրքում կան բառեր, որոնք հին են, բայց երբեմն գործածված են մեզ համար նոր իմաստով, օրինակ, Անկյուրիայի ժողովի Ա հոդվածում կարդում ենք. «այլ ի թարգմանութեան նստել»[1]։ Ընդգծված բառը հանդիպում ենք նաև Լավոդիկեի ժողովի ԺԹ հոդվածում. «Արժան է ուրոյն յետ թարգմանութեանն առնելոյ եպիսկոպոսացն նախ...»[2]։ Հունարենում համապատասխանաբար կարդում ենք. «προσφέρειν δὲ αὐτοὺς ἢ ὁμιλεῖν» և «περὶ τοῦ δεῖν ἰδίᾳ πρῶτον μετὰ τὰς ὁμιλίας τῶν ἐπισκόπων...»։ «Թարգմանություն» բառը սովորական իմաստով այս հոդվածների միտքը չի բացահայտում։ Հին, մասնավորապես բյուզանդական շրջանում հունարեն ἡ ὁμιλία բառն այլ իմաստների հետ ունի նաև զրույցի, քարոզի՝ բեմասացության նշանակություն[3], մինչդեռ հայերենում՝ «թարգմանություն» բառը երկար ժամանակ այդ իմաստով չի հասկացվել։ Բերված հատվածներում «թարգմանութիւն» բառը նշանակում է զրույց, քարոզ, երբ սուրբ գրքի

---

[1] Տես Ներքևում, էջ 131։

[2] Տես Ներքևում, էջ 233։

[3] Տես Древнегреческо-русский словарь, составил И. Х. Дворецкий, т. II, М. 1958, էջ 1170, E. A. Sophocles, Greek Lexicon of the Roman and Byzantine Periods from B. C. 146 to A. D. 1100, հտ. II, New York, էջ 804, Δ. Δημητράκου, Μέγα λεξικὸν τῆς ἑλληνικῆς γλώσσης, τ. 6 Ἀθῆναι, 1951, էջ 5118—5119։ Հեֆելեն ὁμιλεῖν բառը Անկյուրիայի ժողովի Ա

հնգամատյանից վերցնում էին մեկ տուն, իսկ մնացածներից՝ մարգարեներից, ավետարանիչներից, առաքյալներից և այլն, մինչև երեք տուն,. բացատրում այն և դրա շուրջը զրուցում։ Ուրեմն, հնում, «թարգմանութիւն» ասելով հասկացել են նաև զրոյց, քարոզ: Եվ այս փոքրիկ ճշտումը հնարավորություն է տալիս ուշագրավ և անսպասելի եզրահանգումների[1]։

Ժ'Դ. «Rheinischer Beobachter թերթի կոմունիզմը» հոդվածում Մարքսը, խոսելով քրիստոնեության սկզբունքների մասին, գրում է. «Քրիստոնեության սոցիալական սկզբունքներն արդարացնում էին անտիկ ստրկությունը»[2]։ Քրիստոնեության պատմական զարգացումը ցույց տվեց, որ նրա սոցիալական սկզբունքները նույնքան հաջողությամբ արդարացնում էին միջնադարյան ճորտությունը և առհասարակ դասակարգային հասարակությունը։ Եվ քանի որ Կանոնագրքի գաղափարական սկզբունքները խարսխվում են քրիստոնեության, մասնավորապես հայ եկեղեցու դավանական դրույթների վրա, ապա ուրեմն և Կանոնագիրքը կոչված էր արդարացնելու ավատական հասարակության սոցիալական անհավասարությունը, իշխող դասակարգի՝ «ազատ»-ների տիրական, և շահագործվող դասակարգի՝ «անազատ»-ների ենթարկյալ տնտեսական ու իրավական դրությունը, պահպանելու և ամրացնելու հայ եկեղեցու դավանաբանական և ծիսական դրույթները։ Այդ դրույթների պահպանման և ամրապնդման համար Կանոնագիրքը պայքար էր մղում ավատական հասարակության և հայ եկեղեցու սկզբունքներին խորթ երևույթների դեմ, որոնք հանդես էին գալիս այն ժամանակվա հայ հասարակության մեջ և պայմանավորված էին այդ հասարակության զարգացման ներքին օրինաչափությամբ։

Կանոնագիրքը պարունակում է հայ ժողովրդի (և ոչ միայն հայ ժողովրդի) կենցաղում, հավատալիքներում որպես մնացորդներ տակավին պահված նախաքրիստոնեական՝ հեթանոսական շրջանի ապրելակերպի, պատկերացումների, ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ բազմաթիվ նյութեր։ Հայ եկեղեցին ժողովրդի ընդերքում պահված հեթանոսական շրջանի մնացուկները դիտում էր որպես պարարտ հող զանազան աղանդների գաղափարական սնուցման համար։ Այդ մնացորդների դեմ էլ ուղղված էին Կանոնագրքում տեղ գտած համապատասխան սահմանումները։ Ավատական հասարակության գաղափարախոսներին անհրաժեշտ էր համապատասխան սահմանումներ տալ հասարակության անդամների վարվելակերպի, ընտանեկան հարաբերությունների և այլ հարցերի մասին։ Տարբեր մարզերում հեթանոսական շրջանի ապրելակերպի նստվածք տված մնացորդները հայ եկեղեցին

հոդվածի գերմաներեն բնագրում թարգմանել է predigen (քարոզել). տես Conciliengeschichte, Erster Band, Freiburg im Breisgau, 1855, S. 191, համտ. նաև էջ 738։ Սարդիկեի ժողովի ԺԱ հոդվածում հենց բնմասացութիւն իմաստով էլ գործածվում է. «եւ յաճախագոյն ի բեմէ խաւսեսցի» (էջ 264). համտ. հուն.-ը καὶ συνεχέστερον ὁμιλῇ։ Մեզ թվում է, որ հայ եկեղեցում ընդունված Թարգմանչաց տոնը, որը նշվում է ամեն տարի հուլիսի առաջին շաբաթվա հինգշաբթի և հոկտեմբերի երկրորդ շաբաթվա շաբաթ օրը, պետք է հասկանալ ոչ թե Թարգմանիչների պատվին նվիրված տոն, այլ քարոզիչների, այսինքն հայ եկեղեցու պաշտամունքը՝ բեմասացությունը հայեր են դարձնողների։

[1] Տես Լմ. Ա. Գրիգորյանի «Մովսես Խորենացու պատմության մի կարևոր հատվածի թարգմանության մասին» հոդվածը (Պատմա-բանասիրական հանդես, 1963, № 2, էջ 266—268)։

К. Маркс и Ф. Энгельс. Сочинение, т. IV, Москва, 1955, стр. 204.

համարում էր անբարոյական և մշակում էր բարոյական նոր սկզբունքներ, ելնելով իր դավանական հայացքներից։

Կանոնագրքի մի այլ ծայրը ուղղված էր Հայաստանում հանդես եկած աղանդների՝ մծղնեականների և պավլիկյանների դեմ։ Այս հարցի մասին Կանոնագրքում պահված են Շահապիվանի ժողովի ԺԹ, Ի և Հովհաննես Օձնեցու կանոնախմբի ԼԲ հոդվածները։ Վերջիններս գաղափար են տալիս հասարակական տարբեր շերտերի աղանդավոր ներկայացուցիչների համար նախատեսվող դաժան խոշտանգումների և պատժի ձևերի մասին։ Հայ եկեղեցին, օրինակ, մծղնեության հարող ընտանիքի չափահաս անդամների համար խիստ պատիժներ սահմանելուց հետո, հասարակությունից նրանց մեկուսացնելու նպատակով արգելափակում էր դղեննոցներում, իսկ անչափահաս երեխաներին խլում ծնողներից և նրանց հոգևոր դաստիարակության գործը հանձնում եկեղեցու հայրերին, որպեսզի «սնուցեն եւ ուսուցեն զնոսա ի հաւատս ճշմարիտս եւ յերկիւղ Տեառն»[1]։

Ֆ. Էնգելսը նշում է, որ «վանքերը աննորմալ հասարակական մարմիններ էին, որոնք հիմնված էին ամուրիության վրա»[2] և գտնվում էին բացառիկ վիճակում։ Այդ վիճակի՝ եկամուտների, ապահարկության մասին ուշագրավ նյութեր գտնում ենք Սահակ Պարթևի և Դվինի ժողովի կանոնախմբերում։ Այս, ինչպես նաև Ներսես Բ Բագրևանդացի կաթողիկոսի և Ներշապուհ եպիսկոպոսի կանոնախմբերում հետաքրքիր և շեշտված հաղորդումներ կան հոգևորականության ապահարկության, «ազատ»-ների երկու շերտերի՝ ազնվականների և եկեղեցականների միջդասային պայքարի մասին, մի պայքար, որի նպատակն էր տնտեսապես թուլացնել եկեղեցին, սահմանափակել հոգևորականության եկամուտի աղբյուրները և նրան դարձնել հարկատու։

Կանոնագիրքը անգնահատելի հնարավորություններ է ընձեռնում իմանալու Հայաստանի վաղ միջնադարում գոյություն ունեցող տնային ստրկության և սրա աղբյուրների, եկեղեցական պաշտոնների ժառանգության և այդ պաշտոնների դիմաց տրված հողի պայմանական օգտագործման իրավունքի (խոստակի)[3], հոգևորականության շվայտ կյանքի և կենցաղի մասին։ Վերևում նշված բազմաթիվ հարցերը կարող են պատմաբանների և տնտեսագիտության պատմությամբ զբաղվողների հետաքրքրության առարկան դառնալ Կանոնագրքի միջոցով։ Կանոնագրքի մատակարարած նյութերի շնորհիվ պատմաբանները և իրավունքի պատմությամբ զբաղվողները պետք է ուսումնասիրեն հայ միջնադարյան սոցիալական կամ իրավական առանձին հասկացությունները՝ խոստակ(դար), բեգար և կոռ, իրական բովանդակությունը, ինչպես նաև իրավունքի պատմության կարևոր պրոբլեմները՝ ընտանեկան հարաբերու-

[1] Տես ներքևում, էջ 462։

[2] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1932, էջ 187։

[3] Ակադ. Հ. Մանանդյանը «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ քննելով այս երևույթը (էջ 104—114) օգտագործել է Վաչագան Աղվանից արքայի կանոնախմբի և Ստ. Օրբելյանի տվյալները։ Այստեղ կնշենք մի նոր վկայություն ևս, որի ժամանակը դժբախտաբար հայտնի չէ։ Երևանի Պետ. Մատենադարանի № 4779 ձեռագրի վերջին պահպանակում (XIV—XV դդ.) գտնվում է հետևյալ հատվածը. «Այլ և ամենայն ուրհնութեան աղբիւրն ուրհնեսցէ զձեզ յա [մենայն] աշխարհիս՝ տամբ և տեղոք, զարմաւք և զաւակօք, դաշտաւք և խոստակօք և ամենայն գոյուք. ամէն» (վերջին պահպանակ, էջ 2ա)։

թյանների, ժառանգության, քրեական և քաղաքացիական իրավունքի հարցերը և այլն։

ԺԶ. Կանոնագիրքը հանդիսանալով իրավաբանական փաստաթղթերի առաջին խոշոր և փաստալից ժողովածու, դարերի ընթացքում անսպառ աղբյուր է հանդիսացել հետագա հայ իրավունքի այնպիսի խոշոր երկերի համար, ինչպիսին են Մխիթար Գոշի, Սմբատ Գունդստապլի աշխատությունները։ Բանասիրությունը մեծ անելիքներ ունի այս բնագավառում։ Նրա խնդիրն է ցույց տալ ինչպես Կանոնագրքի ձևավորման սկզբունքները և աղբյուրները, այնպես էլ վերոհիշյալ հեղինակների Կանոնագրքից օգտվելու սահմաններն ու չափերը և ապա իրավաբանական ձևակերպումները կյանքի առաջ քաշած այն հարցերի լուծման, որոնց մասին հասկանալի պատճառով Կանոնագրքում ոչինչ չենք գտնում և որոնց հանդիպում ենք Մխիթար Գոշի, Սմբատ Գունդստապլի դատաստանագրքերում։

Կանոնագիրքը զգալի չափով նյութ է տալիս լեզվաբաններին ոչ միայն հայոց լեզվի բառային պաշարի՝ մասնավորապես հունարենից կատարված թարգմանությունների ժամանակ ստեղծված նոր բառերի, այլև լեզվի շարահյուսության վերաբերյալ։ Կանոնագիրքը նյութեր է պարունակում նաև բժշկության՝ մասնավորապես առողջաբանության, և առանձին դեպքերում բարդ վիրահատությունների մասին, կապված դատական բժշկության հարցերի հետ։ Վերջապես Կանոնագիրքը հետաքրքրության առարկա կարող է դառնալ հայ փիլիսոփայական մտքի պատմությամբ զբաղվողների համար, կապված հայ միջնադարյան փիլիսոփայության և մտածողության խնդիրների հետ։

Սակայն, Կանոնագրքի ուսումնասիրության գիտական նշանակությունը սրանով չի սպառվում։ Բանը նրանումն է, որ առանձին կանոնախմբերի հայերեն թարգմանության համար հիմք դարձած հունարեն բնագրերն ավելի հին են, քան նույն կանոնախմբերի մեզ հասած հունարեն բնագրերը (օրինակ՝ Նիկիայի, Կ. Պոլսի, Եփեսոսի ժողովների և Բարսեղ Կեսարացու կանոնախմբերը և այլն)։ Այդ պատճառով հունարենից հայերեն թարգմանված առանձին կանոնախմբերի բնագրերը ուսումնասիրելուց հետո թերևս սրբագրություններ մտցվեն մեզ հասած հունարեն համապատասխան կանոնախմբերի բնագրերում։

Այսպիսով, հասարակական գիտությունների տարբեր բնագավառներ Կանոնագրքի ուսումնասիրությանը պետք է մոտենան իրենց հետաքրքրող կոնկրետ հարցերի տեսանկյունից։ Հայագիտությունը անցնելով այդ հարցերի, որպես ճանաչողության առանձին արահետների, քննության ու լուսաբանության ոլորտով, դուրս կգա գիտական իմացության ավելի լայն և ուղիղ ճանապարհ։

ԺԷ. Վերևի շարադրանքից արդեն իսկ պարզ է դառնում Կանոնագրքի պատմագիտական նշանակությունը, առանց որի բազմաթիվ հարցերի լուսաբանումը կլիներ խիստ թերի ու միակողմանի։ Կանոնագրքի պատմագիտական մեծարժեք նշանակության պատճառով է, որ հետաքրքրության առարկա էր դարձել այն՝ շուրջ երկու հարյուր տարի, սկսած Մ. Չամչյանից։ Սակայն նախասովետական հայագիտությունը Կանոնագրքին անդրադառնում էր ավելի նեղ հարցերի՝ դավանաբանական, ծիսական, երբեմն էլ բանասիրական և իրավաբանական որոշ խնդիրների լուսաբանման համար։ Ավելին՝ առանձին դեպքերում ձեռնարկելով Կանոնագրքի հրատարակությանը՝ որոշ հրատարա-

կողներ փորձում էին այն օգտագործել ոչ միայն «Քրիստոնեա Հայաստանի ընկերական կեանքի.... Նրա քաղաքական բարքի և վարքի...»[1] լուսաբանության համար, այլ նաև գործնական նկատառումներով՝ թե «այսօր էլ մեր ազգային ընկերական կեանքի համար ի՞նչ օգուտ կարող ենք քաղել մեր սուրբ Հայրերի հաստատած օրէնքներից»[2]։

Այսպիսով, Կանոնագիրքը չէր դիտվում որպես ավատական հասարակության հարաբերությունները և իրավական նորմաններն արտացոլող մի կարևոր սկզբնաղբյուր։ Հետևապես, Կանոնագիրքը քննության չէր ենթարկվում ըստ էության պատմա-բանասիրական լայն խնդիրների՝ հայկական վաղ ավատատիրության տնտեսական, քաղաքական և իրաբանական հարաբերությունների ամբողջական հարցերի ուսումնասիրության ոլորտում։ Սովետական կարգերի հաստատումից հետո միայն, անցած տարիներում, մեզ մոտ եղան ուսումնասիրության լուրջ փորձեր՝ Կանոնագիրքը դիտելու որպես հայ ժողովրդի ավատական հասարակության վաղ շրջանի ներքին կյանքին վերաբերող խիստ ուշագրավ և կարևոր սկզբնաղբյուր[3]։

Ձեռնամուխ լինելով Կանոնագրքի ամբողջական և գիտական հրատարակության աշխատանքներին, հետապնդել ենք մեկ նպատակ՝ այս հրատարակությամբ վեր հանել Կանոնագրքի ճանաչողական նշանակությունը, Կանոնագիրքը դարձնել գիտական հասարակայնության սեփականություն, դրանով իսկ ընդլայնել մեր գիտելիքները հայ ժողովրդի միջնադարյան ներքին կյանքի պատմության մի շարք կարևոր պրոբլեմների ուսումնասիրության վերաբերյալ։

ԺԸ. Կանոնագիրքը ձեռագիր այն վիճակով, ինչպես մեզ է հասել, հրապարակված չէ, սակայն տարբեր ժամանակներում ու վայրերում և տարբեր առիթներով Կանոնագրքից որևէ շարք կամ առանձին կանոնախմբեր բավականաչափ հրապարակվել են։ Այստեղ ժամանակագրական կարգով նշում ենք համեմատաբար ընդարձակ հրատարակությունները.

ա. Angelo Mai, Scriptorum veterum nova collectio e Vaticanis codicibus edita, tomus X, Romae, MDCCCXXXVIII։ Այս հրատարակության մեջ մտել են հայկական կանոնախմբերը Վատիկանի մատենադարանի հայերեն մի ձեռագիր կանոնագրքից՝ Արս. Անճարակյանի լատիներեն թարգմանությամբ[4]։

բ. Մ. Աղաբեկյանը նպատակ էր ունեցել մեկ ձեռագրի հիման վրա հրա-

---

[1] Ծիլն Աւարայրի, 1867, № 3, էջ 126։

[2] Նոյն տեղում, էջ 127։

[3] Տես ակադ. Հ. Մանանդյան, Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին, մարզպանության շրջանում, Երևան, 1925. Նույնի, Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, I, Երևան, 1927, II, Երևան, 1928. Նույնի, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Նույնի, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հտ. Բ, մաս Ա, Երևան, 1957. Թ. Ավդալբեկյան, Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձը հինգերորդ դարում. Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հա. Ա։

[4] Գրիգոր Լուսավորիչի (էջ 269—270), Ներսեսի և Նեշշապուհի (էջ 272—276), Սահակ Պարթևի (էջ 276—289), Շահապիվանի (էջ 290—296), Հովհան Մանդակունու (էջ 296—299, 314), Աբրահամ Մամիկոնեից (էջ 299—300), Սահակ Ձորոփորեցու (էջ 300—302), Հովհաննես Օձնեցու (էջ 302—307), Սիոնի (էջ 307—310), Դվինի (էջ 310—312), Կարինի (էջ 312-314), Վաչագանի (էջ 314—316) կանոնախմբերը։

տարտկել ամբողջ Կանոնագիրքը, սակայն նա «Ծիլն Աւարայրի»-ի 1867 թ. մի քանի համարներում[1] հրատարակեց միայն չորս կանոնախումբ՝ Առաքելական (Ա), Կղեմեսի, Հարանց հետևողաց և Նիկիայի ժողովի (ներառյալ նաև Կոստանդիանոս թագավորի ուղերձը և Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկը). այնուհետև հրատարակումը ընդհատվեց։

գ. Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք ի պէտս ժառանգաւորաց, Վաղարշապատ, 1874։ Այստեղ Կանոնագրքից մտել են միայն հայկական եկեղեցական ժողովների և նշանավոր գործիչների կանոնախմբեր, երբեմն բովանդակության վերաշարադրմամբ և կրճատումներով։

դ. Աղ. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878։ Հավելվածում հրատարակվել է Կանոնագրքի մեջ մտած Սահակ Պարթևի կանոնախմբի մի ենթաբաժինը (էջ 191—194) և Հովհաննես Օձնեցու կանոնախումբը (էջ 195—201)։ Մնացած կանոնախմբերը, որոնք հրատարակված են այստեղ՝ Շիրակվանի (862 թ.), Սսի (1243 թ., 1307 թ.), Ադանայի ժողովների և այլ նյութեր, չեն մտնում Կանոնագրքի մեջ։

ե. Ն. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա գիրք, Շուշի, 1903։ Այս հրատարակությունը համեմատաբար ավելի շատ կանոնախմբեր է պարունակում, սակայն Կանոնագիրքը դարձյալ լրիվ ընդգրկված չէ։ Հրատարակության մեջ Կանոնագրքի կառուցվածքից ոչինչ չի մնացել, հրատարակիչը իր խմբավորմամբ տալիս է հունարեն առանձին կանոնախմբերի թարգմանությունները (հունարենից թե ռուսերենից) կրճատումներով, համառոտ վերաշարադրմամբ, ամբողջ կանոններ դեն նետելով, թարգմանությանը կցելով քննադատական իր դիտողությունները, որոնք հաճախ անտեղի են, և այնուհետև հայ հին թարգմանության բնագրերը։

զ. Ա. Ղլտճյան, Կանոնգիրք Հայոց, Թիֆլիս, 1914։

է. H. Ghedighian, Collectio Canonum Ecclesiae Armenae, I, Canones Apostolici, Venezia, 1941[2]։

Վերևում նշված հրատարակություններից և ոչ մեկը նույնիսկ մոտավոր պատկերացում չի տալիս Կանոնագրքի, նրա կառուցվածքի և բովանդակած նյութերի մասին։ Երևս դա է պատճառը, որ Մ. Օրմանյանը իր «Ազգապատում» աշխատության մեջ հրաժարվել է օգտագործել վերոհիշյալ հրատարակությունները և գերադասել է օգտվել Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցում գտնվող 1831 թ. ընդօրինակած Կանոնագրքից։ Իսկ հետագա ուսումնասիրողները պատմա-բանասիրական իրենց աշխատություններում մեծ մասամբ օգտագործել են Ա. Ղլտճյանի վերոհիշյալ հրատարակությունը[3]։

---

[1] Մարտ, էջ 129 -135, ապրիլ, էջ 153—167, մայիս, էջ 193—206, հունիս, էջ 249—263։

[2] Այստեղ հրատարակված են Կանոնագրքի մեջ մտած հինգ կանոնախումբեր՝ Առաքելական (Ա) (էջ 1—41), Կղեմայ (էջ 42—72), Հարանց ճեմևողաց (էջ 73—84), Թադէոսի (էջ 85—110) և Փիլիպպոսի (էջ 111—116), գրաբարյան բնագրերը և իտալերեն թարգմանությունը։ Հրատարակության համար օգտագործված է 13 ձեռագիր և 3 հրատարակություն (Ա. Ղլտճյանի, Ն. Մելիք-Թանգյանի և Հ. Տաշյանի)։ Ունի իտալերեն (էջ V—VIII) և հայերեն (էջ IX—XIII) լեզուներով առաջաբան և հեղինակի կողմից կազմված առարկայական ցանկեր, դարձյալ երկու լեզուներով՝ հայերեն (էջ 117—119) և իտալերեն (էջ 120—122)։

[3] Ով թեկուզ մի թեթև ծանոթ է Կանոնագրքի ձեռագրերին և Ա. Ղլտճյանի հրատարակությանը, ապա նա չի կարող չհիասթափվել այդ հրատարակությունից. պրոֆ. Լ. Մե-

Կանոնագիրքը ուրույն ձևով վերակազմեց և հրատարակեց Արիստակես Դավթյանը՝ հոդվածների բովանդակության համաձայն կատարելով զանազան խմբավորումներ[1]*։*

լիքսեթ-Բեկը, տակավին 1917 թ. գրում էր. «... „Книга канонов" (*Կանոնագիրք* Kanonagirq) в ее целом, до сих пор еще не опубликована. Имеющееся же в наличности издание Арсена Кintчяна *Կանոնգիրք Հայոց* (*«Ղուկասեան Մատենադարան»*, кн. XII, Тфл. 1914), не только не является воспроизведением этого замечательного памятника древне-армянской письменности, но и в значительной степени лишено научного значения, ибо оно представляет собою не что иное, как собрание различных категорий канонических правил, составленное хотя и на основании 25 рукописен, однако, без обозначения разночтений, и, притом, в произвольной группировке самого издателя. То же самое приходится сказать и относительно изданий — архим. (ныне еписк.) Нерсеса Мелик-Тангяна *«Հայոց եկեղեցական իրաւունքը. ա. գիրք. Ներածութիւն և աղբիւրներ* (Шуша, 1903)...» („Об источниках древнеармянского права", ст. 143, *տես* Известия Кавказского Историко-Археологического Института, том II, Л. 1927)։ *Ա. Ղլտճյանը, կանոնագրքից վերցնելով առանձին կանոնախմբեր, խմբավորել է և լրացրել այնպիսի ժողովների կանոններով, ինչպես Աշտիշատի, Մանազկերտի, Սսի, Զաղավանի, Երուսաղեմի, որոնք երբեք չեն մտել Կանոնագրքում։ Երբեմն էլ թերի են բերված առանձին կանոնախմբեր, օրինակ, Առաքելական (Ա) և այլն։ Ահա և պրոֆ. Խ. Սամուելյանի կարծիքը. «Այս հրատարակությունը զուրկ է գիտական արժեքից։ Նախ՝ այստեղ չեն նշված այն ձեռագրերը, որոնցից օգտվել է հրատարակիչը.... դա (Ա. Ղլտճյանի հրատարակությունը— Վ. Հ.) ոչ թե պատմական, որոշ չափով կոդիֆիկացիա տեսած, իսկական կանոնագիրքն է, այլ անհատորեն, Ա. Ղլտճյանի «Նոր խմբած», մի հավաքածու, այլ խոսքով՝ իր «հորինած» կանոնագիրքը» (Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, էջ 53—54)։ Եվ իսկապես, վերջինիս հրատարակության տիտղոսաթերթում այդպես էլ նշված է. «Խմբեց Արսեն Ղլտճյան»։ Իսկ եթե սրան ավելացնենք այդ հրատարակության անփույթ և սխալաշատ լինելը, թերևս վերջացնենք մեր ասելիքը։ Միայն մեկ օրինակ. Հով. Մանդակունու կանոնախմբի Դ հոդվածի մի հատվածը ըստ Ա. Ղլտճյանի հրատարակության այսպես է. «Ջի գինի և հաց, օղի և մեղր մի են» (էջ 85), ըստ Կանոնագրքի՝ «զի գինի եւ հացաւղի եւ մեղրաւղի եւ ամբրաւաւղի մի են» (տես ներքևում էջ 496)։ Պարզաբանումներն ավելորդ են, մանավանդ որ նման փաստերը եզակի չեն։*

[1] *«Կանոնք ս. ժողովոց և հարց եկեղեցւոյ» վերնագրով նախապես լույս տեսավ «Լումայ» երկամսյա հանդեսի 1900—1904 թթ. առանձին համարների հավելված բաժնում (տես 1900 թ. № 1, էջ 1—16, № 2, էջ 17—32, 1901 թ. № 1, էջ 33—48, 1902 թ. № 2, էջ 49—64, № 4, էջ 65—80, № 6, էջ 81—96, 1903 թ., № 2, էջ 97—112, № 4, էջ 113—128, 1904 թ., № 1, էջ 129—140), իսկ այնուհետև առանձին արտատպվեց 1904 թ., որպես Ա պրակ։ Հրատարակիչը, ինչպես Կանոնագիրքը, այնպես էլ Կանոնագրքում չմտած եկեղեցական ժողովների որոշումներ, ասենք՝ Սսի երկու ժողովները (1204 թ. և 1243 թ.) վերածել է առարկայական (թեմատիկ) խմբավորման, օրինակ՝ «Ա. Յաղագս աղօթելոյ և ընդ արևելս աղօթելոյ» (էջ 1—4), «Բ. Յաղագս սուրբ պատարագի, և պատարագի» (էջ 4—10) և այլն։ Այս վերնագրերի տակ նա դրել է տարբեր կանոնախմբերից քաղված համապատասխան հոդվածներ, հրատարակության էջերի ձախ կողմում նշելով կանոնախմբերի պատկանելությունը և տվյալ հոդվածների մասնավոր և ընդհանուր համարները։ Այս ձևով նա Կանոնագիրքը (և ոչ միայն Կանոնագիրքը) վերածել է մի քանի տասնյակ առարկայական խմբավորման և դրանցից հրատարակել 35-ը։ Համենայն դեպս մեզ հայտնի է 35 առարկայական վերնագրերի հրատարակությունը՝ համապատասխան կանոններով հանդերձ։ Իսկ թե այս աշխատությունն արդյո՞ք ունեցել է շարունակություն՝ հաջորդ պրակները և ինչո՞ւ դրանք չեն հրատարակվել, մեզ մնաց անհայտ։ Հմմտ. պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի կարծիքը այս հրատարակության մասին (տես նախորդ էջում նշված ռուսերեն աշխատությունը)։*

Երևանի Մատենադարանի Արխիվային բաժնի մի վավերագրում (ֆոնդ Ջանազան, թղթ. № 43, վավ. № 5), որի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Մատենադարանի գիտաշխատակից ընկ. Ս. Ավագյանը, պահվում է Արիստակես Դավթյանի սկզբունքով կազմը-

Այսպիսով, մինչև այժմ հայագիտության մեջ չունենք ոչ միայն Կանոնագրքի գիտական, այլ նույնիսկ սովորական, բայց ամբողջական հրատարակություն։

Ճշմարտության դեմ չմեղանչելու համար, պետք է, սակայն, նշել, որ գիտական պատշաճ բարեխղճությամբ հրատարակվել են Կանոնագրքի միայն առանձին կանոնախմբեր, օրինակ, Առաքյալների[1], Շահապիվանի ժողովի[2], Սեսնտոսի[3], Գանգրայի ժողովի[4] և ապա Պարտավի[5], Դվինի[6] ժողովների։ Բայց դրանք էլ կտրված լինելով Կանոնագրքի համաբնագրից (կոնտեքստ), ոչ մի պատկերացում չեն տալիս Կանոնագրքի մասին։

ԺԹ. Այսպիսին էր իրերի վիճակը, երբ տակավին 1954 թվականից ձեռնամուխ եղանք Կանոնագրքի ուսումնասիրության, նրա բնագրի գիտական հրատարակության պատրաստման աշխատանքներին։ Այդ նպատակով առաջին հերթին ծանոթացանք Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր

ված‌ Կանոնագրքի մի այլ խմբագրության սեագրություն (էջ 8ա—95ա)։ Այն կազմել է Էջմիածնի միաբան Հովհաննես Շահխաթունյանցը, անցյալ դարի առաջին տասնամյակներում։ Աշխատության 1ա էջում, հավանաբար ոչ Շահխաթունյանցի ձեռագրով, նշված է. «Կանոնք առաքելոց և հայրապետաց սրբոց հաւաքեալք ի Յովհաննէս վարդապետէն Շահխաթունեանց վաթսուն երկու տետրակք, յորս պակասին ԻԹ, ԽԴ և ԾԶ տետրակքն և մնացեալքն ամենայն են թերի»։ Աշխատությունը ներկա վիճակով ունի 61 թեմատիկ վերնագիր, ուր պակասում են ոչ միայն վերևում նշված ԻԹ, ԽԴ և ԾԶ տետրակները, այլև ուրիշ թեմատիկ վերնագրեր (իմա՝ տետրակներ), թվով 10՝ ԺԱ, ԺԳ, ԺԶ, ԺԷ, ԻԱ-ԻԴ, Լ, ԼԱ։ Այսպիսով, պակասում են ընդամենը 13-ը (3+10)։ Ենթադրում ենք, որ այս աշխատությունը չի ավարտվում 61-րդ թեմատիկ վերնագրով։ Վերևում նշված մեջբերումից իմանում ենք, որ ողջ աշխատությունը ունեցել է 62 տետր, սակայն պակասում են 29-րդ, 44-րդ և 56-րդ տետրերը։ Թեմատիկ վերնագրերի հաջորդականությունն սաուգելիս, չկային նաև 29-րդ, 44-րդ և 56-րդ թեմատիկ վերնագրերը։ Այստեղից ենթադրում ենք, որ տետրակ հասկացությունը համընկնում է մի թեմատիկ վերնագրի հասկացությանը. թեև այժմ թեմատիկ վերնագրերը ամբողջական տետրից չեն, այլ տետրերից պոկված մեկ-երկու գրված էջեր, իսկ մյուս չգրված էջերը պոկված են և հեռացված բնագրից։ Նշանակում է վերջին՝ 62-րդ տետրակը հենց նույն համարի թեմատիկ վերնագիրն է, ուրեմն, վերջից պակասում է մի թեմատիկ վերնագիր։

Այս և Առիստակես Դավթյանի հրատարակության բնագրերի համեմատությունը մեզ բերեց այն համոզման, որ դրանք ամենայն հավանականությամբ միմյանց հետ չաղերսվող և առանձին կազմված աշխատություններ են, թեև թեմատիկ վերնագրերի հաջորդականությունը համապատասխանում են միմյանց։ Վերջին հանգամանքը բացատրում ենք նրանով, որ երկու հեղինակներն էլ ելակետ են ունեցել Կանոնագրքի առաջին՝ Առաքյալների անունով հայտնի կանոնախմբի հոդվածների հաջորդականությունը։ Ընդհանուր առմամբ Արիստակես Դավթյանի հրատարակության մեջ թեմատիկ վերնագրերի տակ բերված հոդվածներն ավելի բազմազան են, քան Հովհաննես Շահխաթունյանցի աշխատության։ Հարկ է նշել նաև, որ երկու հեղինակներն էլ օգտագործել են Կանոնագրքի Բ խմբի որևէ ձեռագիր։

[1] Հ. Տաշյան, Վարդապետութիւն առաքելոց, Վիեննա, 1896, էջ 289—385։

[2] Ն. Ակինյան. Շահապիվանի ժողովին կանոնները, Հանդէս Ամսօրեայ, 1949, №№ 4—12, էջ 79—170։

[3] Ն. Ակինյան, Դիոնեսիոս Աղեքսանդրացի Թուղթ վասն ապաշխարութեան առ Մեբուժան եպիսկոպոս Հայոց, Հանդէս Ամսօրեայ, 1949, №№ 4—12, էջ 59—78։

[4] Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար), Երևան, 1951, էջ 90—112։

[5] Ա. Ղլտճյան, Կանոնք Պարտաւի տղղային ժողովի (Սիոն կաթողիկոսի), Վաղարշապատ, 1903։

[6] Մխիթար վրդ. և Սիրական Տիգրանյան, Կանոնք Դունայ սբ. ժողովոյն, Վաղարշապատ, 1905։ Ա. Ղլտճյան, Կանոնք Ներսէսի Բ կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի, Վաղարշապատ, 1905։

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի («Մատենադարանի») կանոնագիրք-ձեռագրերին, օգտագործելով Մատենադարանի աշխատակիցների կողմից կազմված մատենագիտական ցուցակը (անտիպ)։ Սկզբում ծանոթացանք շուրջ 200 ձեռագրերի հետ։ Այնուհետև յուրաքանչյուր ձեռագիր մանրամասն ուսումնասիրելուց հետո, մեզ համար պարզ դարձան ոչ միայն այն ձեռագրերը, որոնք պետք է օգտագործեինք Կանոնագրքի գիտական բնագիրը կազմելիս, այլև կանոնագիրք-ձեռագրերի այն խմբերը, որոնց զգալի մասի վերաբերյալ մանրամասն խոսել է Ս. Տիգրանյանը[1]։

Առայժմ մեր նպատակից հեռու է կանոնագիրք-ձեռագրերի խմբերի մասին խոսելը[2]։ Այստեղ դրանցից կառանձնացնենք 47 ձեռագրեր, որոնք օգտագործել ենք Կանոնագրքի համահավաք բնագիրը կազմելու համար։ Սրանք այն ձեռագրերն են, որոնց մեջ Կանոնագիրքը պահվել է լրիվ, առանց կրճատումների, այն ձևով, ինչ ձևով այն կարող էր լինել Հովհաննես Օձնեցու և նրանից հետո կատարված լրացումների ժամանակ, մինչև XI դարը։ Այդ ձեռագրերին անհրաժեշտ է ավելացնել նաև Նոր-Ջուղայի (Իրան) Ամենափրկիչ վանքի Մատենադարանի № 131 ձեռագիր-կանոնագիրքը (1098 թ. ընդօրինակություն), որն օգտագործել ենք լուսանկարչական պատճենի միջոցով[3]։ Այսպիսով, Կանոնագրքի համահավաք բնագիրը կազմելիս օգտագործել ենք 48 ձեռագիր։ Այս ձեռագրերում կանոնախմբերը տարբեր հաջորդականություն և դասակարգում ունեն։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, նշված ձեռագրերը բաժանում ենք երկու խմբի[4]. Ա խումբ, որին պատկանում են մեր օգտագործած ձեռագրերից 29-ը. Բ խումբ, որին պատկանում են 18 ձեռագրեր. իսկ մնացած մեկ ձեռագիրը չի պատկանում նշված խմբերից ոչ մեկին[5]։ Այստեղ կարևորը Ա և Բ խմբերն են, որովհետև միմիայն դրանց միջոցով կարելի է մոտավոր կերպով պարզել, թե Կանոնագիրքը Հովհաննես Օձնեցու ժամանակ ինչպիսի՞ կառուցվածք կարող էր ունենալ։

Ի. Թե ինչպե՞ս է կառուցված Կանոնագիրքը Ա խմբի ձեռագրերում, կարելի է տեսնել այս խմբի հնագույն օրինակում (Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 131 ձեռագիրը, այսուհետև կնշենք A), որի մեջ «Շարադրութիւն կանոնաց եղեալ եւ այս կարգ եւ չափ գլխոցն» վերնագրի տակ տրված է կանոնախմբերի հաջորդական ցանկը[6]։

---

[1] Сиракан Тигранян, Древне-армянская книга канонов. Очерки описания и исследования памятника, I, описательная часть, Петроград, 1918.

[2] Կանոնագրքի ձեռագրերի խմբերի, առանձին կանոնախմբերի թարգմանության, կանոնական նոր շերտերի ավելացման և պատմա-բանասիրական այլևայլ հարցերի մասին կանդրադառնանք Կանոնագրքին նվիրված մեր ուսումնասիրության մեջ։

[3] Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի խընդրանոք նշված ձեռագրի լուսանկարչական պատճենը ձեռք է բերել և ինստիտուտին հանձնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն։

[4] Ա և Բ խմբերի մասին տես նաև Ս. Տիգրանյանի վերևում նշված աշխատության 45—124 էջերը։

[5] Այս ձեռագիրը կրում է 778 համարը (Պ), որն իր ընթերցվածներով ավելի մոտ է Ա խմբին, բայց կառուցվածքով տարբերվում է և՛ Ա և՛ Բ խմբերից, թեև այն բովանդակում է A-ի բոլոր 57 կանոնախմբերը։

[6] Այդ հաջորդականությունը չկրկնելու համար տես ներկա հրատարակության 3—4 էջերը։

Այսպիսով՝ A ձեռագիրը պարունակում է Առաքելական (Ա) կանոնախմբից մինչև Հովհան Մանդակունու «Ի կոչումն ապաշխարութեանն» աշխատությունը, թվով 57 կանոնախումբ[1]։ Միևնույն նյութերն ու կառուցվածքն ունեն նաև №№ 9298 (P) և 3148 (U) ձեռագրերը։ Միայն U-ն 57-րդ կանոնախմբի վերջում, ինչպես ներքևում նշված BCDEFGH ձեռագրերում է, ավելացված ունի մի նոր՝ 58-րդ կանոնախումբ, բայց ոչ Սիմոն Աղվանից կաթողիկոսի կանոնախումբը, այլ Հովհան Ոսկեբերանի «Յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք գան ի խոստովանութիւն» կանոնախումբը։

Յոթ ձեռագիր՝ №№ 6409 (B), 8926 (C), 795 (D), 2635 (E), 6496 (F), 2655 (G), 2596 (H), ունեն նույն կանոնախմբերը և դասավորությունը, ինչ որ նշեցինք վերևում, միայն սրանց վերջում ավելացված է Սիմոն Աղվանից կաթողիկոսի կանոնախումբը՝ որով ստացվում է 58։

Տասնհինգ ձեռագիր՝ №№ 8158 (I), 3706 (J), 4403 (K), 4631 (L), 5782 (M), 5894 (Q), 2883 (R), 3097 (S), 9488 (T), 3099 (V), 449 (X), 3297 (Y), 7317 (Z), 3059 (W), 3065 (Ô), թեև ունեն միևնույն կանոնախմբերը և դասակարգությունը, ինչ APU և սրանց հաջորդ վերևի յոթ ձեռագրերը, բայց բուն ձեռագրերի (ոչ կանոնախմբերի ցանկում) վերջում՝ Հովհան Մանդակունու «Ի կոչումն ապաշխարութեանն» կանոնախմբից հետո ավելի ունեն երեք կանոնախումբ, որ բերում ենք I ձեռագրի ընթերցմամբ. «Նորին կանոնք երրորդ Բարսեղի Կեսարու հայրապետին արարեալ, գլուխք ՀԴ (պէտք է լինի ՀԼ: — Վ. Հ.)։ Յոհաննու Ոսկեբերանի Յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք գան ի խոստովանութիւն։ Յաղագս պսակի ամուսնացելոց»[2]։ Ահա թե ինչ է գրված ձեռագրում՝ վերևում նշված այս երեք կանոնախմբի մասին. «Մանիշիք ով իմաստուն ընթերցողք, որ այս Դ կանոնքս՝ Բարսղի ՀԷ գլուխն եւ Յոհան Ոսկէբերանին ԾԴ գլուխն եւ Յակոբ Ղրիմեցոյ կանոնքն, ոչ կայր ի բուն օրինակն. մեր յայլմէ ծեր օրինակէ գտաք եւ եդաք ասա ի կարգի, անմեղադիր լերուք»[3] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Այս հիշատակարանն

---

[1] Λ ձեռագրի կանոնախմբերի ցանկում թյուրիմացաբար պակասում է երկու կանոնախմբի վերնագիր, դրանք են, նախ՝ «Կանոնական գիր տեառն Եպիփանու ասացեալ գլուխք Ն» կանոնախումբը, որը գտնվում է «Կանոնք հիրդի Աղեքսանդրացւոյ գլուխ Ն» և «Եղիշէի գլուխ Ա», կանոնախմբերի միջև. երկրորդ՝ «Սորոյն Աթանասի մեծի Ա բան» փոքրիկ կանոնախումբը, որը գտնվում է «Մելիտոնի եպիսկոպոսի թուղթ առ... գլուխ Ա» և «Սերբիանոսի ի Ղուկա աւետարանին մեկնութենէ» կանոնախմբերի միջև. իսկ ցանկում առաջինը պետք է զանվեր Լ և ԼԱ, իսկ երկրորդը՝ ԽԸ և ԽԹ վերնագրերի միջև։ Այսպես է վիճակը նաև Ս ձեռագրում։ Հմմտ. նաև Π ձեռագրի ցանկը։ Համառոտակության բնագրում ուղղանկյուն փակագծերի՝ [ ] միջոցով ավելացրինք այդ բացթողումները։ Քանի որ այդ լրացման հետևանքով փոխվում էին կանոնախմբերի վերնագրերի հաջորդական համարները, այդ պատճառով սկսած ԼԱ վերնագրից բնագրի ունեցած համարները վերցրինք կլոր փակագծերում՝ ( ) և յուրաքանչյուրի մոտ նշեցինք հերթական ճիշտ համարը։

[2] Տես ձեռագրի 342բ—367բ էջերում։ Q ձեռագրում այդ երեք կանոնախումբը դարձյալ ավելացված է կանոնագրքի վերջում և ցանկում ոչ մի նշում չկա այդ մասին, սակայն մեկ ուրիշը, հավանաբար 19-րդ դարում, ցանկի վերջում գրանցել է այդ երեք կանոնախմբերի վերնագրերը. «Կանոնք երրորդ Բարսեղի Կեսարու հայրապետին արարեալ, գլուխս ՀԻ։ Տեառն Յովհաննու Ոսկեբերանի Յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք գան ի խոստովանութեան գլ. ԾԴ։ Յաղագս պսակի ամուսնացելոց հանդերձ ճիւղագրութեամբք և ազգահամարաւ» (էջ 15ա)։ Ճիշտ այդպես է վարվել մեկ ուրիշը X ձեռագրի այդ կանոնախմբերի հետ, ցանկում նշելով վերևում նշված միայն առաջին երկու կանոնախմբերի վերնագրերը (էջ 13բ)։

[3] էջ 369բ, հմմտ. նաև J, էջ 229ա։

ավելի համառոտ գտնում ենք նաև T և սրան հարող մի քանի ձեռագրերի վերևում նշված երեք կանոնախմբերից առաջինի վերնագրում. «Նորին կանոնք երրորդ Բարսեղի Կեսարու հայրապետին արարեալ, գլուխք ՀԴ, զոր ու կայր ի բուն օրինակն, յետոյ գտեալ յայլում յօրինակի և աստ եդաք»[1] (ընդգծումը մերն է— Վ. Հ.)։

Եթե T ձեռագրի վերոնշյալ հիշատակարանը չի ընդօրինակված մի ավելի հին ձեռագրից, նշանակում է այդ երեք կանոնախումբը Կանոնագրքում մուծել է հիշատակարանի հեղինակ Գրիգոր քահանան 1621 թ., որից և հիշյալ տեղեկությունները անցել են նշված ձեռագրերին։ Բոլոր դեպքերում այդ մուծումը չէր կարող կատարվել XV դարի երկրորդ կեսից վաղ։

Վերևում նշված երեք կանոնախմբերը, որոնք 15 ձեռագրերի ցանկերում չեն մտել, բայց նույն ձեռագրերի վերջում ավելացված են, №№ 7580 (N) և 3291 (Ս) ձեռագրերում արդեն մտել են նաև ցանկում, այդ պատճառով ցանկում նշված է ոչ թե 57 կանոնախմբի վերնագիր, ինչպես A ձեռագրում է, այլ 60։

Մնացած երկու ձեռագրերը՝ №№ 1779 (ê) և 3141 (ս) սկզբից և վերջից թերի են (կան ընկած թերթեր) և այդ պատճառով հնարավոր չեղավ պարզել, թե դրանք վերևում նշված ենթախմբերից որին են պատկանում։

Այսպիսով, եթե նկատի չունենանք վերջին երկու ձեռագրերը, ապա Ա խմբի մնացած ձեռագրերը բաժանվում են չորս ենթախմբի, որոնք առաջացման առումով ունեն հետևյալ պատկերը.



ԻԱ. Կանոնագրքի Բ խմբի ձեռագրերը թեև ունեն միևնույն կանոնախմբերը, բայց վերջիններիս հաջորդականությունը տարբեր է։ Այս՝ Բ խմբի ձեռագրերն իրենց հերթին բաժանվում են մի քանի ենթախմբերի, որոնց կանոնախմբերի քանակը և նրանց դասավորության տարբերությունը ավելին է, քան Ա խմբի ձեռագրերինը։

Առանձին ենթախումբ են կազմում №№ 656 (l) և 646 (t) ձեռագրերը, որոնցից կբերենք l-ի բովանդակությունը, ցույց տալու, թե Բ խմբի ձեռագրերում Կանոնագրքի կառուցվածքը ինչպիսին է և հետագայում կատարված ավելացումները այս խմբի մյուս ենթախմբերի ձեռագրերում ինչ հաջորդա-

[1] T, էջ 342բ, հմմտ. նաև J, էջ 209ա, K, էջ 239ա, M, էջ 280ա, S, էջ 331բ, V, էջ 234ա, o, էջ 190ա։

կանութեամբ են ընթանում։ Ահա այն «[Շ]արադրութիւն կանոնաց եղեալ այսչափ և այսչափ գլխոցն» վերնագրի տակ.

Ա. Կանոնք Առաքելականք գլուխք երեսուն և չորս։

Բ. Երկրորդ Առաքելականք գլուխք Ղ և Ե։

Գ. Կանոնք Թադէոսի առաքելոյ գլուխս ԼԳ։

Դ. Կանոնք Փիլիպոսի առաքելոյ գլուխս Ը։

Ե. Կանոնք Հարանցն հետևողաց գլուխս ԻԴ։

Զ. Կանոնք Անկիւրեայ գլուխս քսան։

Է. Կանոնք Նիկիայ սուրբ ժողովոյն գլուխս քսան։

Ը. Կանոնք երկրորդ Նիկիականք գլուխս ՃԺԴ։

Թ. Կանոնք սրբոյն Գրիգորի առաքելոյ Հայոց գլուխս երեսուն։

Ժ. Կանոնք սրբոյն Աթանասի գլուխս Ջ և Ը։

ԺԱ. Կանոնք երանելոյն Մակարայ Երուսաղէմի գլուխ Թ։

ԺԲ. Կանոնք Կոստանդինուպօլսի ժողովոյն գլուխս Գ։

ԺԳ. Կանոնք երանելոյն Աստուածաբանի գլուխս Լ։

ԺԴ. Կանոնք սրբոյն Բարսղի առ Աքելիքոս գլուխս ԾԱ։

ԺԵ. Կանոնք Բ Բարսղի առ Թէոդորոս գլուխս Ա։

ԺԶ. Կանոնք Գ սրբոյն Բարսղի վասն պէսպէս և բիւրապատիկ ախտից, գլուխս ՄՀԲ։

ԺԷ. Կանոնք տեառն Եփրեմի գլուխս Ը։

ԺԸ. Կանոնք Ներսէսի կաթողիկոսի և Ներշապհոյ եպիսկոպոսի գլուխ Լ և Ը։

ԺԹ. Կանոնք Կեսարեայ գլուխք Ժ։

Ի. Կանոնք Նէոյկեսարեայ գլուխ Ի։

ԻԱ. Կանոնք Կանգրեայ գլուխք ԻԴ։

ԻԲ. Կանոնք Անտիոքայ գլուխք ԻԵ։

ԻԳ. Խոստովանութիւն Անտիոքայ գլուխ Ա։

ԻԴ. Կանոնք Լաւոդիկեայ գլուխք ՃԷ։

ԻԵ. Կանոնք Սարդիկեայ գլուխ ԻԱ։

ԻԶ. Կանոնք Եպիփանու գլուխ Ե։

ԻԷ. Կանոնք Եփեսոսի ժողովոյն գլուխք Զ։

ԻԸ. Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ գլուխ Ե։

ԻԹ. Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի գլուխք [Ծ]Ե։

Լ. Կանոնք միաբան Հայոց գլուխ Ի։

ԼԱ. Թուղթ Սեւանդեայ գլուխ ԺԳ։

ԼԲ. Կանոնք երկրորդ Անտիոքայ գլուխս Թ։

ԼԳ. Կանոնք Յոհաննու Մանդակունւոյ գլուխ Թ։

ԼԴ. Թուղթ Աբրահամու առ Վաչագան գլուխք Գ։

ԼԵ. Կանոնք վերջնոյ Սահակայ գլուխք ԺԵ։

ԼԶ. Կանոնք տեառն Յովհաննու Իմաստասիրի գլուխք ԼԲ։

ԼԷ. Կանոնք Սիոնի կաթողիկոսի գլուխք ԻԳ։

ԼԸ. Կանոնք Վաչագանայ Աղուանից արքայի գլուխ ԻԱ։

ԼԹ. Կանոնք Դըւնայ սուրբ ժողովոյն գլուխք ԺԲ։

Խ. Սրբոյն Եղիշէի կանոնաց գրոց գլուխք Ա։

Այս ցանկին համապատասխան էլ կանոնախմբերը դասավորված են բուն ձեռագրում։ Սակայն ցանկի ԻԸ վերնագրի՝ Կյուրեղ Աղեքսանդրացու կանո-

նախմբի ընդօրինակումով ձեռագիրն այնուհետև մնում է թերի, չընդօրինակ-վելու պատճառով: Անշուշտ, եթե ընդօրինակությունը շարունակվեր, ապա մնացած կանոնախմբերը նույն հաջորդականությամբ կլինեին մինչև վերջ՝ Եղիշեի «Կանոնաց գիրք» (Վասն դիւահարաց) կանոնախումբը: Ճիշտ նույն ձևով են նաև № 646 (t) ձեռագրի պարունակած կանոնախմբերը:

Բ ենթախմբից ունենք երեք ձեռագիր՝ №№ 8938 (l), 660 (o) և 3368 (h): Վերջին երկու ձեռագրերում սկզբից թերթեր ընկնելու պատճառով չի պահվել կանոնախմբերի բովանդակության ցանկը: l ձեռագրի բովանդակության ցանկում նշված են Ա ենթախմբի it ձեռագրերի պարունակած Ա—Խ կանո-նախմբերը: Նույն հաջորդականությամբ էլ վերջիններս դասավորված են բուն ձեռագրում, սակայն դրանից հետո ավելացված են նոր կանոնախմբեր, որոնց վերնագրերը չեն նշված բովանդակության ցանկում: Ահա այդ նորամույծ մասը ըստ l ձեռագրի[1].

[ԽԱ.] Նորին (իմա Եղիշէի— Վ. Հ.) վասն ուրացողաց[2]:

[ԽԲ.] Նորին վասն երեխայից:

[ԽԳ.] Յոհաննու Կոստանդինուպաւլսոյ հայրապետի:

[ԽԴ.] Նորին. սկս. «Զոր ինչ խնդրիցէք յանուն իմ ի հօրէ իմմէ»:

ԽԸ. Մեծի Ագաթանկեղոսի ի բանէն որ զԿայենէ:

ԽԹ. Երանելոյն Մեսրոպայ Հայոց վարդապետի:

Ծ. Սահմանք և կանոնք կարգի եկեղեցոյ սրբոյն Ներսէսի հայրապետի Հայոց[3]:

ԾԱ. Կանոնք Յովանու Մանդակունոյ Հայոց կաթողիկոսի գլուխ Ի:

ԾԲ. Նորին Յովանու Մանդակունոյ կոչումն ապաշխարութեան:

ԾԳ. [Նորին] խոստովանութիւն քահանայի:

ԾԴ. Կանոնք երանելոյն Եպիփանու Կիպրացոյ եպիսկոպոսի մեծի և սուագինոյ (sic) մարգարէի և նշանայգործի գլուխ Գ:

ԾԵ. Ի հարանց կանոնացն է:

ԾԶ. Կղեմայ Հռոմայ եպիսկոպոսին:

ԾԷ. Սրբոյն Դէոնէսիոսի Աթենացւոց եպիսկոպոսի բան Ա:

ԾԸ. Սրբոյն Դէոնէսիոսի Արիսպագացոյն յաղագս աստուածայնին բան երկրորդ:

---

[1] ho ձեռագրերում թեև կանոնախմբերի բովանդակության ցանկը ընկած է, բայց ձեռագրերում կանոնախմբերի հաջորդականությունը, ներառյալ այս նորամույծ մասը, համապատասխանում է l ձեռագրին:

[2] Ձեռագրում Դվինի ժողովի կանոնախումբը գրված է ԼԹ համարի տակ (էջ 197բ), սրան հաջորդող՝ (Եղիշէի) «Վասն դիւահարաց» կանոնախմբի համարը, որ պետք է լիներ Խ, չի նշված (էջ 201ա), այնպես համարներ չեն նշված շարունակություն կազմող առաջին չորս կանոնախմբերի: Ագաթանգեղոսի կանոնախումբը համարակալված է ԽԸ: Որտե՞ղից կարող էր առաջ գալ ԽԸ և սրան հաջորդող 17 կանոնախմբերի համարակալումը մինչև ԿԵ: Բանն այն է, որ Սահակ Պարթևի կանոնախումբը բաժանված է առանձին չորս ենթախմբերի, իսկ մի շարք ձեռագրերի ցանկում, օրինակ km, այդ ենթախմբերը նշված են որպես առանձին կանոնախմբեր, սրան ավելացրած Կանոնագրքում չմտած նույն հեղինակի «Կիր աւանդութեանն» գրությունը: Այսպիսով, Սահակ Պարթևի կանոնախումբը, որ ձեռագրերի մեծ մասի ցանկում մտել է մեկ վերնագրով, km ձեռագրերում՝ հինգ, այստեղից էլ այդ ձեռագրերի ցանկը չորս վերնագրով ավել է ստացվում: Բանն այդպես է ընթացել նաև l ձեռագրում: Ձեռագրում նշված համարակալումը նույնությամբ պահեցինք մինչև վերջ՝ ԿԵ համարը:

[3] h ձեռագրում նախ գրված է Ծ կանոնախումբը, ապա նախորդ՝ ԽԹ-ն էջ 199բ, 201ա:

ԾԹ. Կանոնք սուրբ ժողովոյն որ ի Թէոդուպոլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք։

Կ. Հիպողիտայ սրբոյ բան ի ծնունդն և ի մկրտութիւն Տեառն գլուխ Ա։

ԿԱ. Մելիտոսի եպիսկոպոսի թուխտ առ տոյ (sic) եպիսկոպոսիս գլուխ Ա։

ԿԲ. Մանուէլի գլուխ Ա։

ԿԳ. Ի Սոկրատայ գլուխ Ա։

ԿԴ. Նորին նմա։

ԿԵ. Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի (վերջից թերի)։

Այսպիսով, Ա ենթախմբի համեմատությամբ Բ-ում ավելացված են 22 մեծ ու փոքր կանոնախմբեր։

Գ ենթախմբի ձեռագրերն են՝ №№ 7615 (a), 8964 (c), 2676 (d), 654 (k), 2677 (m), 3544 (p), 3098 (s), 9513 (r)։ Այստեղ կանոնախմբերի հաջորդականությունը համընկնում է նախորդ երկու ենթախմբերի ունեցածին՝ Ա ենթախմբի Ա—Խ կանոնախմբերը և Բ ենթախմբի ԽԱ—ԿԵ կանոնախմբերը նույնությամբ գտնում ենք այս ենթախմբի ձեռագրերում[1], բացի դրանից այս ենթախմբի ձեռագրերում կանոնախմբերը թե բովանդակության ցանկում և թե ձեռագրերում, երբեմն էլ առանձին-առանձին, շարունակվում են։ Այդ ցույց կտանք m ձեռագրի օրինակով.

ԿԶ. Նեքտառեայ Հռոմայ եպիսկոպոսի վասն յիսնակաց գլուխ Ա։

ԿԷ. Հարցումն Թէոդորոսի քահանայի առ երանելին Եպիփան, վասն քառասնորդաց և այլոց պահոցն գլուխ Ա։

ԿԸ. Յոհաննու Երուսաղէմայ եպիսկոպոսի վասն յիսնակաց պահոց գլուխ Ա։

ԿԹ. Վասն ութ աւուր պահոց, որ յառաջ քան զյայտնութիւն՞ գլուխ Ա։

Հ. Կանոնք Ներսէսի Կլաեցոյն վասն ազգապղծութեան գլուխ Ա։

ՀԱ. Կանոնք զգուշաւոր ի խրատ քահանայից գլուխ ԺԲ։

---

[1] Կան ձեռագրեր, ուր պահվել են կանոնախմբերի բովանդակության ցանկը և կանոնախմբերը բուն ձեռագրում, օրինակ՝ m, սակայն կան ձեռագրեր, ուր չի պահվել կանոնախմբերի բովանդակության ցանկը, օրինակ՝ akps. կամ ցանկում կա, բայց ձեռագրում չեն ընդօրինակվել ցանկի երկրորդ մասում գտնվող վերնագրերի համապատասխան կանոնախմբերը, օրինակ՝ cd։ Ոչ մի ձեռագրի բովանդակության ցանկում չեն արտահայտվել պատմական բնույթի ունեցող այն մի քանի նյութերը, որոնք գտնվում են բուն ձեռագրում՝ մեծ մասամբ Մեսրոպի և Ներսեսի կանոնախմբերի միջև։ Այս ենթախմբի որոշ ձեռագրեր՝ cd, այդ նյութերը չունեն, կանոնախմբերը լրիվ չընդօրինակվելու պատճառով։ Այդ նյութերը գտնում ենք abefgkmpsq ձեռագրերում։ Այն կբերենք ըստ m ձեռագրի.

1. Եպիսկոպոսք Երուսաղէմի, որք յետոյ պատարագք (իմա պատրիարք— Վ. Հ., էջ 220բ—221ա)։

2. Կոստանդնուպօլսի եպիսկոպոսք, որք ապա և հայրապետք (էջ 221ա)։

3. Նիկիա ժողովոյն անուանք (էջ 221ա 226ա)։

4. Քահանապետք Հայոց Մեծաց (էջ 226ա—228բ)։

5. Եպիսկոպոսք Կամսարական տանն (էջ 228բ—229ա)։

Ի տարբերություն վերևում շարադրվածի՝ r ձեռագրում չեն պահվել առաջին երկու նյութերը, իսկ վերջին երեք նյութերը գտնվում են ոչ թե վերոնշյալ կանոնախմբերի շարքում, այլ Կանոնագրքի վերջում՝ «Վասն քահանայագործութեան կարգաց» կանոնախմբից (էջ 276ա—278բ) հետո, 278բ—284բ էջերում։

[2] Բուն ձեռագրում այս կանոնախումբը վերնագրված է. «Սեբ[եր]իանոս յՂուկայ աւետարանին մեկնութենէ» (էջ 253բ)։

ՀԲ. Կանոնք երկրորդ վասն զգուշութեամբ սպասաւորելոյ քահանայից սուրբ խորհրդոյն գլուխ ԾԼԲ։

ՀԳ. Եզնկայ Կողբացոյ Հայոց վարդապետի վասն պատրաստութեան հաղորդողոյ, գլուխ Ա։

ՀԴ. Նորին Եզնկայ բան երկրորդ գլուխ Զ։

ՀԵ. Բանք Անանիաի Հայոց վարդապետի վասն ոչ հաղորդելոյ զժողովրդականոն աւուր մեծի հինգշաբաթոջ, գլուխ Ա։

ՀԶ. Վասն որք ասեն անգոսնելի կիրք ի մարդեղութիւնն Քրիստոսի գլուխ Ա[1]։

ՀԷ. Ցաղագս նկարեալ պատկերաց գլուխ Ա։

ՀԸ. Վասն քահանայագործութեան կարգաց խրատ ի պատրաստութիւն գլուխ ԻԹ[2]։

Այսպիսով, այն 13 կանոնախմբերը, որոնք դուրս են մնացել նախապես կազմված բովանդակության ցանկից, բայց հետագայում մտել են Ի ենթախմբի բուն ձեռագրերում, Գ ենթախմբի ձեռագրերում մտել են և՛ բովանդակության ցանկում և՛ նույն հաջորդականությամբ էլ բուն ձեռագրերում։

№№ 8380 (b), 783 (e), 8006 (f), 5148 (g), 8236 (q) ձեռագրերը կազմում են մի այլ ենթախումբ՝ Դ։ Առաջին ենթախմբի ամբողջ կանոնախմբերը՝ Ա—Խ, նույն հերթականությամբ գտնում ենք այս ենթախմբում[3]. բացի դրանից, վերջինիս մեջ, 40-րդ կանոնախմբից հետո, կանոնախմբերը շարունակվում են, բայց ոչ Բ կամ Գ ենթախմբերի նման, այլ տարբեր։ Բերում ենք e ձեռագրի ունեցածը.

[Ա.] Նիկիոյ սուրբ ժողովոյն անուանքն են այսոքիկ[4]։
[Բ.] Եւ որք ի Կեսարիա ժողովեցան։
[Գ.] Ցետ մատենի ժամանակագրութեան թագաւոր տէրանց աշխարհիս

---

[1] Բուն ձեռագրում այս կանոնախումբը վերնագրված է. «Այլուստ ժողոված. իմաստախոհ արանց» (էջ 278բ)։

[2] Թեև ցանկում չկա, բայց ձեռագրում ուրիշներ ավելացրել են նոր կանոնախմբեր. 1. Մեծի Ներսէսի Հայոց պատրիարքի և երկրորդ լուսաւորչի արարեալ ընթեռնլով մեր խրատ ատենանաց ազգականութեան. 2. Ցաղագս պսակի ամուսնացելոց Յակոբ վարդապետի Ղ[ր]իմեցւոյ արարեալ. 3. Վասն որ ասեն թէ հեշտ ցանկութեամբ լինին մի մարմին այր և կին (էջ 284բ—305ա)։

Թեև r ձեռագիրը այս ենթախմբի մեջ նշեցինք, բայց ունի մի փոքր առանձնահատկություն՝ կանոնախմբերի բովանդակության ցանկում նշված են միայն Ա—Խ վերնագրերը՝ որ գտնում ենք Ա ենթախմբի ձեռագրերում, սակայն բուն ձեռագրում Ա—Խ կանոնախմբերից բացի գտնում ենք այն բոլոր կանոնախմբերը, որ վերևում բերեցինք ըստ ш ձեռագրի։ r ձեռագրում Կանոնագիրքը վերջանում է պսակի մասին Ներսես Կլայեցու, Հակոբ Ղրիմեցու և այլոց գործերով (էջ 285ա—297բ), որ չենք գտնում այս ենթախմբի մյուս ձեռագրերում։ Իսկ a ձեռագրում այս՝ ՀԸ կանոնախմբից հետո գալիս են «Ամենիմաստ Թագաւորացն Հռովմայեցւոց Աւրինագրութիւն» և նման այլ նյութեր (էջ 262ա—286բ, վերջից թերի)։

[3] Այն, ինչ նշված է բովանդակության ցանկում, նույն հաջորդականությամբ էլ գտնում է բուն ձեռագրում, միայն երկու շեղումով՝ 1. բովանդակության ցանկում Փիլիպպոս, Թադեոս և 2. Մակար, Աթանաս, իսկ բուն ձեռագրում՝ 1. Թադեոս, Փիլիպոս 2. Աթանաս, Մակար հաջորդականությամբ։

[4] Իմա՝ Նիկիայի ժողովի մասնակիցների ցուցակը։ Սկսած վերջինից, ձեռագրում բերված նյութերը չեն համարակալված, դրանք նշել ենք մենք։

արանց Արշակունեաց (սկ. «Կամիմ յիշատակել զսահման Հայաստանեաց քահանայապետաց սրբոցն արանցն Աստուծոյ»)։

[Դ.] Ի սրբոյն Գրիգորէ Բագրեան և Արշակունիք մինտ (sic) եպիսկոպոսք միհակ կարգեալ էին։

[Ե.] Եպիսկոպոս Երուսաղէմի որոյ եասյ (sic) պատրիա[ր]գք եղեն։
[Զ.] Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսի (sic), որք հայրապետք[1]։

ԽԱ. Թուխտ Յակոբայ տեառնեղբօրն առ Կոստանդիանոս։

ԽԲ. Կանոնք երկրորդ Եպիփանու գլուխ Գ։

ԽԳ. Կանոնք Աքաղտնգեղա (sic) գլուխ Ա։

ԽԴ. Կանոնք Մեսրովպայ վարդապետի Ա։

ԽԵ. Յիշատակարան Յոհաննիսի Իմաստասիրի։

ԽԶ. Աւանդութիւն Հրէից վասն ողորմութեան[2]։

Այս ենթախմբի ձեռագրերից միայն Ե-ն է, որ չունի «Աւանդութիւն Հրէից վասն ողորմութեան» կանոնախումբը և դրա փոխարեն նշված է «Յաղագս ազգայկանութեան և թուով շարադրեալ այսպէս» (Հակոբ Ղրիմեցի)[3]։

Սակայն հետաքրքիրն այն է, որ մեր ուսումնասիրած և ոչ մի ձեռագրում չենք գտնում Կանոնագրքի կազմվելու մասին Հովհաննես Օձնեցու գրած հիշատակարանը, բացի այս ենթախմբի հինգ ձեռագրերից[4]։

Այս չորս ենթախմբերի բովանդակության ցանկերի և բուն ձեռագրերում դասակարգված կանոնախմբերի ուշադիր և մանրամասն քննությունը հնարավորություն տվեց պարզելու այդ ենթախմբերի առաջացման հետևյալ սխեման.

---

[1] Պատմական այս մի քանի նյութերը (Ա—Զ) չեն արձանագրված ձեռագրերի կանոնախմբերի բովանդակության ցանկում, մինչդեռ վերջինում նշված ԽԱ—ԽԶ կանոնախմբերը և Հովհ. Օձնեցու հիշատակարանը բուն ձեռագրում գրված են վերևում նշված նյութերից հետո, դարձյալ առանց համարակալման։

[2] Այս մեջբերումը կատարված է ըստ կանոնախմբերի բովանդակության ցանկի, այստեղ կնշենք, թե այդ վերնագրերից յուրաքանչյուրը բուն ձեռագրում ինչ վերնագրով է պահվել.

Ա. Թուխտ զոր առաքեաց Յակոբոս եպիսկոպոս Երուսաղէմի առ Կոդրատոս։

Բ. Գիր կանոնական սրբոյն Եպիփանու։

Գ. Մեծին Ադաղանգեղոսի ի բանէն որ ղԿայեն է։

Դ. Երանելոյն Մեսրոպայ Հայոց վարդապետի ասացեալ։

Ե. Յոհաննիսի Իմաստնասիրի Հայոց կաթողիկոսի յիշատակարան։

Զ. Աւանդութիւն Հրէիցն վասն ողորմութեան։

Է. Յոհաննու Մանդակունեցուն է ասացեալ (Կանոնագրքում եղածը, վերջից թերի) ցանկում չի պահվել (տես ձեռագրի էջ 190ա—198ա)։ Համա. bfgq ձեռագրերը։

[3] Ի դեպ, այս ենթախմբի b ձեռագիրը ունի կանոնախմբերի երկու ցանկ. առաջինը՝ 1բ—2բ էջերում, երկրորդը՝ 3ա—4ա էջերում։ Սրանց մեջ եղած տարբերությունը աննշան է և վերաբերում է մի երկու վերնագրերի ետ ու առաջ գրված լինելուն, օրինակ՝ Մակար, Աթանաս, թե Աթանաս, Մակար։ Միակ կարևորն այն է, որ առաջին ցանկում տեղ են գտել նաև բուն ձեռագրում եղած այն նյութերը, որոնք նշեցինք վերևում՝ Նիկիայի ժողովի մասնակիցների ցուցակը և հաջորդ հինգ նյութերը։

[4] q ձեռագրի վերջից թերթեր ընկնելու պատճառով նշված հիշատակարանը կորել է, բայց որ այն եղել է ձեռագրում, երևում է բովանդակության ցանկում եղած նշումից (էջ 2բ)։



Այն հանգամանքը, որ այս չորս ենթախմբերի ձեռագրերում Ա—Խ կանոնախմբերը և՛ բովանդակության ցանկերում և՛ բուն ձեռագրերում նույն հաջորդականությամբ կրկնվում են, մեզ ենթադրել է տալիս, որ դրանք բոլորն էլ սկիզբ են առել միևնույն հնագույն ձեռագրի որևէ մի տարբերակից, սակայն, ժամանակի ընթացքում ընդօրինակվելով և Կանոնագրքին նոր կանոնախմբեր ավելացվելով՝ դրանք միայն շարունակության մեջ շեղվել են միմյանցից։

ԻԲ. Այժմ այն մասին, թե ինչ աղերս կարող է լինել Կանոնագրքի Ա և Բ խմբերի միջև։ Ա խմբի բոլոր ձեռագրերի[1] թե՛ բովանդակության ցանկերի և թե՛ բուն ձեռագրերի Ա—Խ կանոնախմբերը գտնում ենք Բ խմբի բոլոր չորս ենթախմբերում, թեև տարբեր դասակարգմամբ, իսկ դա նշանակում է, որ Հովհաննես Օձնեցու Կանոնագիրքը ժամանակի ընթացքում, այլ կանոնախմբերի ավելացմամբ, դարձել է 40 կանոնախումբ ունեցող ժողովածու. և դրանից հետո միայն X դարի 90-ական թվականներին է վերափոխվել նրա կառուցվածքը և ստեղծվել՝ կանոնագիրք-ձեռագրերի Բ խումբը[2]։

Այսպիսով, վերջինիս առաջին ենթախումբը կարելի է համարել Կանոնագրքի վերակազմված բնագրի հնագույն որևէ տարբերակի ընդօրինակություն, որը կանոնախմբերի դասավորության առանձնահատկությամբ ավելի հին է, քան 1098 թ. ընդօրինակված A ձեռագիրը։ Այդ երևում է նրանից, որ նշված ենթախմբի կանոնախմբերի ցանկում չենք գտնում A ձեռագրի

---

[1] Նկատի չունենք թերի ձեռագրերը։

[2] Կանոնագիրք-ձեռագրերի Բ խմբում սկզբնապես պետք է լիներ 40 կանոնախումբ, իսկ դրանից հետո եղածները ավելացվել են հետագայում։ Ա և Բ խմբի ձեռագրերի աղերսի առնչությամբ հետաքրքրությունից զուրկ չեն նաև հետևյալ փաստերը. Նախ՝ Ա խմբի A ձեռագրի կանոնախմբերի ցանկի վերնագիրը՝ «Շարագրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոցն» ձևով գտնում ենք Բ խմբի ilrt ձեռագրերում, երկրորդ՝ առարկայական ցանկը ilrt ձեռագրերում լինելով անխորագիր, ինչպես A-ում, զարմանալի կերպով համապատասխանում է A-ին, երկուսի մոտ էլ նույն 288 վերնագրերը (աննշան մի քանի շեղումներով նաև beighoq ձեռագրերում)։ it ձեռագրերի առարկայական ցանկը ավելի համապատասխանում է A-ին քան իր՝ Բ խմբի befghloqr ձեռագրերի ունեցածին, քանի որ այն վերնագրերը, որ չենք գտնում b և սրան հարող ձեռագրերում, հանդիպում ենք it և A ձեռագրերի առարկայական ցանկերում։ A և it ձեռագրերի առարկայական ցանկերի վերնագրերի դիմաց նշված հոդվածների ընդհանուր կարգահամարները, հասկանալի պատճառով, տարբեր են, որովհետև դրանք պատկանում են տարբեր խմբերի։ A և it ձեռագրերի շոշափելի կողմերի վրա հարկ համարեցինք կանգ առնել, որովհետև it ձեռագրերը, ինչպես նշեցինք վերևում, հանդիսանում են Բ խմբի ձեռագրերի հնագույն որևէ օրինակի մի տարբերակից վերցված բնագրեր։

40-րդ (բնագ. ԼԸ) կանոնախմբից հետո ավելացված կանոնախմբերից և ոչ մեկը։

ԻԳ. Այժմ տեսնենք, թե վերևում նշված երկու՝ Ա և Բ խումբ ձեռագրերը, միևնույն ընթերցվածների տեսակետից, ինչպիսի աղերս ունեն միմյանց նկատմամբ։ Եթե նկատի ունենանք միանման ընթերցումները և չիքերը, ապա Ա խմբի ձեռագրերը հիմնականում կարելի է բաժանել երկու ենթախմբի՝ ABCDEFGH Jê և IJKLMNOPQRSTVXYZWû։ Օրինակ՝ այս երկու ենթախմբերում Կղեմեսի կանոնախմբի Ի-Լ հոդվածների տարբեր լինելը կարող է հանդիսանալ մեր ասածի ապացույցը։ Սակայն այդ երկու ենթախմբերն էլ, իրենց հերթին, բաժանվում են միմյանց ավելի մոտ ձեռագրերի, օրինակ՝ ABUê որպես կանոն տալիս են նույն ընթերցումները և չիքերը, CDGH-ը՝ նույնը. երկրորդ ենթախմբից՝ IJNOPVW՝ նույնը, KLMQRSTXYZ՝ նույնը։ Սակայն, պատահում է, որ միևնույն ենթախմբի առանձին ձեռագրեր, երբեմն շեղվում են։ Այդտեղ նկատում ենք տվյալ ձեռագրի կամ ձեռագրերի առանձնահատկությունները, երբ յուրաքանչյուր ընդօրինակության ժամանակ թույլ են տրվել սխալներ, որոնք անցել են հետագայում կատարված ընդօրինակություններին։ Այս տեսանկյունից նայելիս, վերջին ձեռագրերը բաժանվում են ավելի մանր ենթախմբերի, օրինակ՝ KLMQST, NOW, IJ, RXY, իսկ û ձեռագրում չիքերը անչափ շատ են. դա կարող է բացատրվել ոչ միայն գրչի անուշադրությամբ, այլև նրանով, որ ընդօրինակությունը անհաջող և սխալաշատ ձեռագրից է կատարվել։

Ձեռագրերի Բ խումբը միևնույն սկզբունքով բաժանվում է հետևյալ ենթախմբերի՝ acd, belgq. ավելի մոտ են՝ bq և eg ձեռագրերը. hilort ենթախմբում ավելի մոտ են hlo և irt ձեռագրերը. kmps-ում ավելի մոտ են km և ps ձեռագրերը։ Եթե նկատի ունենանք, որ միմյանց մոտ գտնվող kmps և hlo ենթախմբերի մեջ ամենահին ձեռագրերն են k-ն՝ 1671 թ. և h-ն՝ 1639 թ., թերևս ենթադրելի է, որ mps ձեռագրերը ընդօրինակվել են k-ից, իսկ lo-ն՝ h-ից։

Անշուշտ ուշագրավ է այն հանգամանքը, որ երկու՝ Ա և Բ տարբեր խմբերի առանձին ձեռագրեր, տալիս են միևնույն ընթերցվածները, օրինակ՝ Iehlor ձեռագրերը ունեն «միամտեալ» ընթերցումը, փոխանակ «մի ամ մտեալ» (էջ 126, տող 7) կամ NOWbefgq ձեռագրերը՝ «մեռանին կանայք արանց մինչև» փոխանակ «մեռանին մինչև» (էջ 107, տող 11) և կամ OWbq ձեռագրերը՝ «ամօթով» փոխանակ «անուէթով» (էջ 93, տող 3)։ Ըստ երևույթին, երբեմն Ա խմբի որևէ ձեռագիր ընդօրինակելիս, ընթերցումները ստուգելու, թե ճշտելու նպատակով, օգտագործել են Բ խմբի որևէ ձեռագիր և կամ ընդհակառակը։ Սակայն, հնարավոր է, որ ընդօրինակության համար միաժամանակ օգտագործել են նշված երկու տարբեր խմբերի ձեռագրերից։ Այդ տեսակետից չափազանց հետաքրքիր է F ձեռագրի հիշատակարանը, որը գրիչը թողել է կանոնագիրք-ձեռագիրը ընդօրինակելուց հետո. «Ո՜վ ընթերցողք եւ լսողք, յորժամ ընթեռնուք՝ միտ դիք իմոյ բանիս, վասն օրինակի գրչիս. նախ և առաջին պատճառն՝ օրինակն Բ էր. երկրորդ՝ Ա հին, Ա նոր. երրորդ՝ նորին բնաւ չիք ստուգութիւն. չորրորդ՝ հինն բնաւ չիք սղալութիւն... Ես այնպէս վարանէի, կսկծայի արտասուէի, բայց մարդոյ ոչ յայտնէի։ Ես իմում անձին գլորէի (sic) և յԱստուած ապաւին[էի]. Նոր աւրինակն ձախ կողմս դնէի ի դիրն հայէի, շատ սխալ ի միջի տեսան|է|ի, յերեսս դար-

ձուցանէի՝ դէպ յԱստուած ակնարկէի, հին օրինակն աջակողմս դնէի ստուգութիւն ի միջի տեսանէի սրտակաթ լինէի, բայց...[1] տեսանէի ուրինակին յետս դառնալի սիր[տս] խոցուով լցուէի, բայց հոգին սուրբ աղաչէի...»[2]: Դժբախտաբար չգիտենք, թե գրչի ձեռքի տակ ինչ ձեռագրեր են եղել, գուցե երկուսն էլ պատկանել են միևնույն խմբին և սակայն նույնքան հնարավոր է՝ տարբեր խմբերի: Համենայն դեպս, ուշագրավն այն է, որ երբեմն ձեռագրերից ընդօրինակություն կատարելիս միայն մեկ ձեռագիր չեն վերցրել, այլ երկուսը, որպեսզի առանձին դժվարընթեռնելի կամ անհասկանալի բառեր ստուգեն մեկը մյուսով և այդ երկու ձեռագրերից վերցված առանձին բառեր անցկացնեն ընդօրինակվող ձեռագրերում: Նման բան, ըստ երևույթին, պատահել է վերևում, որպես օրինակ նշված երկու տարբեր խմբերի միևնույն ընթերցանությունը ունեցող ձեռագրերի հետ:

ԻԴ. Այն հարցը, թե Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագիրքը, կանոնախմբերի կազմության տեսակետից, այս երկու խմբերից ո՞րի մեջ է համեմատաբար անաղարտ պահվել, նոր չէ, որ առաջ է քաշվում:

Հայագիտության մեջ այդ հարցին նվիրված ամբողջական աշխատություն չկա: Որոշ բանասերներ, նայած թե ձեռքի տակ ինչպիսի ձեռագիր են ունեցել (Ա թե Բ խմբին պատկանող), ըստ այնմ էլ, կարծիք են հայտնել. օրինակ՝ Հ. Տաշյանը Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 256 ձեռագրի (Բ խմբին պատկանող) մասին գրում է. «Մատեանս է Կանոնագիրք լիակատար, աւելի հաւատարիմ Օձնեցւոյ խմբագրութեանն»[3]: Մ. Օրմանյանը ավելի հեռուն է գնում, նույնիսկ որոշելով Հովհաննես Օձնեցու Կանոնագրքի մեջ մտած կանոնախմբերի քանակը: Նա օգտվելով Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցում պահվող մի կանոնագիրք-ձեռագրից, որը նույնպես պատկանում է Բ խմբին, գրում է. «Օձնեցիին հարազատ գործը պէտք է փակենք ԼԷ գլուխին (իմա կանոնախումբ— Վ. Հ.) և 1207-րդ կանոնին, որ կը մակագրուի՝ Կանոնք Տեառն Յովհաննիսի Իմաստասիրի Հայոց կաթողիկոսի»[4]:

Եվ այս 37 կանոնախմբերը[5] նա բաժանում է հետևյալ կերպ.

1. Ընդհանուր եկեղեցական ավանդական կանոններ՝ չորս կանոնախումբ:
2. Ազգային-եկեղեցական ավանդական կանոններ՝ երկու կանոնախումբ:
3. Տիեզերական ժողովների կանոններ՝ հինգ կանոնախումբ:
4. Մասնավոր (տեղական) ժողովների կանոններ՝ ինը կանոնախումբ:
5. Սուրբ հայրերի կանոններ՝ ինը կանոնախումբ:
6. Ազգային ժողովների և հայրապետների կանոններ՝ ինը կանոնախումբ:

Ընդամենը՝ 38:

Այսպիսով՝ վերոհիշյալ բանասերները ձեռքի տակ ունենալով մեր կող-

---

[1] Այստեղ մի բառ եղծված է:

[2] էջ 222բ, 224բ: f ձեռագիրը նույնպես ընդօրինակված է երկու ձեռագրից, ասա գրչի վկայությունը. «...ըսկիզբն արարի յերկուց ընտիր օրինակաց» (էջ 299ր): Մի այլ օրինակ «գրեցի... բազմերանգ գիրքս աղօթից, բաղում աշխատութեամբ Բ և Գ գաղափարէ օրինակելով...» (տես Հ. Թոփճյան, Ցուցակ ժողովածուաց Գագեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 29):

[3] Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 649:

[4] Ազգապատում, հտ. Ա, էջ 832:

[5] Սակայն, ինչպես հաջորդ տողերից երևում է, կանոնախմբերի թիվը ոչ թե 37 է, այլ 38:

մից նշված Բ խմբի որևէ ձեռագիր, վերջինիս սկզբի մասը՝ 1—37-րդ կանոնախմբերը, համարել են Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագիրքը։ Սակայն, երկարատև որոնումները և մեր ձեռքի տակ եղած մի քանի տասնյակ ձեռագրերի բովանդակության ուշադիր և մանրազնին ուսումնասիրությունը մեզ բերեցին այն հաստատ եզրակացության, որ Հովհաննես Օձնեցու Կանոնագիրքը պահվել է Ա խմբի ձեռագրերում և նրա կազմած ժողովածուն պետք է ունեցած լինի 24 կանոնախումբ՝ Առաքելական (Ա) կանոնախմբից մինչև իր՝ Հովհաննես Օձնեցու կանոնախումբը (ԻԴ)։ Այդ նույն տեսակետը ավելի վաղ, ինչպես պարզեցինք հետագայում, ունեցել են նաև Ս. Տիգրանյանը[1] և Ն. Ակինյանը[2]։ Այդ պատճառով էլ Կանոնագրքի սույն հրատարակության հիմքում դրեցինք Ա խմբի ամենահնագույն A ձեռագիրը, նպատակ ունենալով ներկա հատորում Կանոնագիրքը հրատարակել այնպիսի բովանդակությամբ, ինչպիսին եղած պետք է լիներ Հովհաննես Օձնեցու ժամանակ։

ԻԸ. Նյութերի ընտրության տեսակետից Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագիրքը բովանդակում է ոչ-հայկական՝ թարգմանական, և հայկական՝ ինքնուրույն իրավաբանական նյութեր։ Ոչ-հայկական՝ թարգմանական նյութերից Կանոնագրքում գտնվում են առաքյալներին վերագրված երեք կանոնախմբեր՝ Առաքելական, Կղեմեսի և «Հարանց հետևողաց»։ Վերջինիս թարգմանությունը լինելն առայժմ երկբայելի է։ Այն թերևս ստեղծված լինի հայ եկեղեցու ոլորտում, Օձնեցուց շատ առաջ։ Թարգմանական մյուս նյութերից պետք է նշել տիեզերական երեք ժողովների՝ Նիկիայի, Կ. Պոլսի (Ա) և Եփեսոսի որոշումները, տեղական վեց ժողովների՝ Անկյուրիայի, Նեոկեսարիայի, Անտիոքի, Գանգրայի, Լավոդիկեի և Սարդիկեի ժողովների կանոնախմբերը։ Սրան պետք է ավելացնել նաև Կեսարիայի ժողովի կանոնախումբը, որի՝ Կանոնագրքում գտնվող բնագրի ինքնությունը վիճելի է. վերջապես եկեղեցական հայրերից երեքի՝ Աթանաս Աղեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու և Նեոկեսարիայի Գրիգոր կանոնախմբերը, ընդամենը 16 կանոնախումբ։ Հայկական՝ ինքնուրույն նյութերից պետք է նշել Շահապիվանի, Դվինի երկու ժողովների որոշումները և հայ եկեղեցու նշանավոր գործիչների՝ Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Հովհան Մանդակունու, Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի և Սահակ Ձորոփորեցու կանոնախմբերը, ընդամենը՝ 8 կանոնախումբ։ Այսպիսով, Կանոնագրքի Հովհաննես Օձնեցու կազմած ժողովածուում գտնվում են 24 կանոնախմբեր։ Այս նյութերը աննշան բացառությամբ դասավորված են ժամանակագրական կարգով՝ նախ ոչ-հայկական՝ թարգմանական նյութերը, ապա հայկական՝ ինքնուրույն։

ԻԶ. Մեզ հասած կանոնագիրք-ձեռագրերում վերնագիր չի պահվել, թեև հայագիտության մեջ, ինչպես նշեցինք վերևում, այն հայտնի է Կանոնագիրք կամ Կանոնդիրք անունով։ Գրիչները, որոնք ընդօրինակել են կանոնագիրք-ձեռագիրը, իրենց թողած հիշատակարաններում կոչում են հենց այդպես՝

---

[1] Ս. Տիգրանյան, Հայոց իրավունքի պատմություն, Երևան, 1923, (մեքենագրված, ձեռագրի իրավունքով), էջ 139—143, 146—147։

[2] Ն. Ակինյան, Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի Հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց Ցաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1939, էջ 108։ Տես նաև Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հտ. 1, էջ 48։

Կանոնգիրք կամ այլ անուններով, օրինակ՝ «...լիշատակ է Կանոնգիրքս...»[1], «... մեղապարտ գրող կանոնացս...»[2], «... յաւարտ հասանել այս սուրբ գրոց, որ կոչի կանոնք...»[3], «գրեցաւ կանոնական գիրքս»[4]։

Կանոնագրքի սկզբում դրված է նրա բովանդակությունը, ուր նշված են կանոնախմբերի վերնագրերը։ Այնուհետև հաջորդում է առարկայական ցանկը[5], որը ցույց է տալիս, թե Կանոնագրքում ինչպիսի հարցերի մասին կարող ենք տեղեկություններ գտնել, ասենք՝ ամուսնալուծության, կամա թե ակամա սպանությունների մասին և այլն։

Յուրաքանչյուր կանոնախումբ բաժանված է առանձին հոդվածների՝ կանոնների, համապատասխան համարակալմամբ. ասենք՝ Առաքելական (Ա) կանոնախումբը ունի 34 հոդված, ապա հոդվածների համարակալումը տրված է 1—ից մինչև 34 (Ա—ԼԴ)։ Գղեմեսինը՝ 85 հոդված, ապա հոդվածների համարակալումը տրված է 1—ից մինչև 85 (Ա—ՁԵ), և այլն։ Բացի յուրաքանչյուր կանոնախմբի վերևում նշված մասնավոր համարակալումից, եթե կարելի է այդպես ասել, առաջին կանոնախմբի հոդվածներից մինչև վերջին կանոնախմբի հոդվածները, մասնավոր համարակալման զուգահեռ գրված է յուրաքանչյուր հոդվածի ընդհանուր հերթական համարակալումը։

Կանոնագրքի յուրաքանչյուր կանոնախմբի սկզբում գտնվում են տվյալ կանոնախմբերի հոդվածների բովանդակությունն արտահայտող վերնագրերի ցանկեր, որոնց վերնագրերի հերթական համարակալումը համապատասխանում է տվյալ կանոնախմբի հոդվածների մասնավոր համարակալմանը։

Կանոնագիրք-ձեռագրերում առարկայական ցանկը մեծ մասամբ հաջորդում է կանոնախմբերի ցանկին՝ «Ցանկ է միահամուռ կանոնիս» վերնագրով։ Կան նաև այնպիսի ձեռագրեր, որոնք չունեն այդ վերնագիրը, օրինակ՝ A. կամ ունեն որևէ տարբերություն, օրինակ՝ «Ցանկ է կանոնիս» (ր, էջ 1ա), «Ցանկ է միահամուռ կանոնքիս» (L, էջ 2ա), և այլն։ Ավելի հետաքրքիր է m ձեռագրում պահված վերնագիրը. «Յրուացանկ է սրբոց կանոնացս»[6]։ Առարկայական ցանկը արված է գործնական նկատառումներով, որպեսզի հետաքրքրություն առարկա հանդիսացող որևէ հոդված կարողանան դյուրությամբ գտնել. դիցուք՝ եթե մեկին անհրաժեշտ է իմանալ, թե գողության մասին Կանոնագրքում ինչ հոդվածներ կան, նա կդիմի այդ ցանկին և կհետևի խնդրո առարկա հանդիսացող վերնագրի դիմաց դրված հոդվածների ընդհանուր համարներին և կարիք չի ունենա ամեն անգամ Կանոնագիրքը ծայրից ծայր կարդալու։

Մեր օգտագործած և՛ Ա խմբի և՛ Բ խմբի ձեռագրերում առարկայական ցանկերը միանման չեն. Ժամանակի ընթացքում, Կանոնագրքի օգտագործման գործնական անհրաժեշտությունից ելնելով, այն ենթարկել են փոփոխության՝ մերթ ընդարձակել առարկայական ցանկը՝ շերտավորելով առանձին

---

[1] № 3097, էջ 335ա, հմմտ. №№ 3291, էջ 471ա, 8938, էջ 495բ, 5148, էջ 170ա, 2677, էջ 305բ, 8006, I պահպանակ, էջ 1ա, 646, էջ 101ա, 9298, էջ 310ա։

[2] № 783, էջ 68ա. հմմտ. №№ 2677, էջ 305ա, 778, էջ 291ա։

[3] № 4403, էջ 283ա, 4631, էջ 291ա, 5894, էջ 299ա, 8380, էջ 264բ։

[4] № 783, էջ 200բ։

[5] Այս տերմինը գործածում ենք ժամանակակից իմաստով։

[6] Էջ 3բ։

հոդվածների բովանդակությունը, մերթ այդ ցանկերը կազմել այբբենական կարգով՝ փնտրածը ավելի շուտ գտնելու համար[1]:

Ա խմբի ինը ձեռագրերում՝ DGHNRUWeû չի պահվել առարկայական ցանկը, ձեռագրից թերթեր ընկնելու պատճառով: Մնացած ձեռագրերը ըստ առարկայական ցանկի բաժանվում են հետևյալ ենթախմբերի. ա. A. բ. BCEF. գ. ð. դ. IJKLMOPQSTVXYZ: Բ խմբից առարկայական ցանկ չունեն kops ձեռագրերը[2], ձեռագրերից թերթեր ընկնելու պատճառով. մնացածները

[1] ո ձեռագրի առարկայական ցանկի վերնագրում կազմողը այսպես էլ գրում է. «Ցանկ կանոնիս ստուգաբանեալ ճշգրտապէս վասն դիւրագոյն գտանելոյ հոգևոր դատաւորաց» (էջ 1ա, հմմտ. էջ 291բ): Տես նաև h ձեռագրում, էջ 235ա: Նույնիսկ երկու ձեռագրերում (№№ 3281, 8444), առանց կանոնագրքի, պահվել է միայն առարկայական ցանկը, որ կազմել է Հակոբ Շամախեցին 1731 թ.: Այս ցանկն ունի ներածական (№№ 3281, էջ 103աբ, 8444, էջ 399ա—400ա) հետևյալ վերնագրով. «Նախագիտութիւն եգիցի սիրովնական ուսումնասիրացդ մանկանց՝ վասն բոլոր ցանկիս կանոնականաց մատենից» (3281, էջ 103ա): Ներածականում հեղինակը գրում է. «Քանզի թէպէտ գոյր սա յօրինեցեալ յառաւածոնաճոյից սորանց ի վաղնջոց ժամանակաց, սակայն ոչ էր կարգաւորեալ և պարզեալ այբուբենիւք, այլ էր խառն ի խուռն, նաև համարն միևնոյն էր ամենայն տանց կանոնաց, դի ի սկզբանէ գրքին մինչ ցվախճան նորին հասարակապէս ամենայն կանոնք վարէին (ըն. վայէին) այնու համարով, որպէս տեսեալ իսկ էք. նմին իրի միևնոյն ցանգ ոչ լինէր պիտանացու ամենից կանոնականաց գրոց, այլ հարկ էր դի իւրաքանչիւր կանոնական գիրք զցանգ իւրն ունիցէր ըստ շաւղի և ըստ որքանութեան իւրում» (№ 3281, էջ 103ա): Այստեղ Հակոբ Շամախեցին նկատի ունի յուրաքանչյուր կանոնախմբի սկզբում դրված Հովհաննես Օձնեցու կազմած ցանկերը: Այնուհետև. «բայց սակայն և այնու ոչ ևս լինէր օգնական, վասն դի թէպէտ լինէր զի մոռացմամբ, ի տեղի մետասան համարին գրիւր երկոտասան, յայնժամ երկոտասանն լինէր երեքտասան: Եւ այսպէս ամենայն հետեւեալքն թիւքէին մինչև ի վախճան գրքին, որոց պատճառն էր հասարակութիւն համարին, ուստի կարի զզուելութիւնս և զաշխատ[ա]նս կրէին ըստ ինձ շամբիչք և խապակիրթք ոմանք, ի գիւտս բանից իւրեանց: Այսր աղագաւ և ես հարկաւորեցեալ յիմոցս տկար մտաց, հաւաքեցի զսա ի չորս այբուբենից, և մանաւանդ զհասարակութիւն համարին յատկացուցի, զի իւրաքանչիւր կանօնն իւրով առանձնակեաւ համարովն վարեսցի: Այլ և ամենայն կանոնական գրոց անսխալ պիտոյասցի, դի ի ձեռն այսմ այբուբենի, շարագրութեանս և յատկութեան համարիս դիւրութեամբ և ըշտապով գտցեն զհայցելիսն իւրեանց՝ խնդրողքն բանից» (№ 3281, էջ 103ա): Ահա թե ինչու Հակոբ Շամախեցին կազմել է այս ցանկը: Ներածությունից հետո տրվում է բուն ցանկը (№№ 3281, էջ 104ա—111ա, 8444, էջ 401ա—418բ)՝ «Ցանկ բոլոր կանոնաց գրոց ի չորս այբուբենից հաւաքեցեալ և ոչ թուոց աշխատանաց ի Ցակոբայ դիտնական և առատիմաստ վարդապետէ Շամախեցւոյ» (էջ 104ա) վերտառությամբ (№ 8444 ձեռագրում «ի Ցակոբայ դիտնական և առատիմաստ վարդապետէ Շամախեցւոյ» հատվածը չի պահվել, էջ 401ա): Ցանկն այբբենական է Ա-ից մինչև Օ, օրինակ, «Ագապացն որ մասնականաւ է՝ Ա. Սահ. խա: Ագապս հանգուցելոց որք անգոսնեն՝ Գանգ. ժա. Լ. Նիկ. ծբ. Ի. Բարսղի ճղգ, ճղէ, ճղը, ճղթ». (էջ 104ա) և այլն: Հակոբ Շամախեցին այբբենական ցանկի յուրաքանչյուր վերնագրի դիմաց տալիս է կանոնագրքի հոդվածների մասնավոր համարները և ոչ թե ընդհանուրը, ինչպես հանդիպում ենք նաև այլ ձեռագրերում:

Ցանկից հետո տրված է այն կանոնագիրք ձեռագրի բովանդակությունը՝ (կանոնախմբերի վերնագրերը) №№ 3281, էջ 111բ, 8144, էջ 419ա—420ա), որից օգտվել է Հակոբ Շամախեցին՝ առարկայական ցանկը կազմելիս: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրա օգտագործած ձեռագիրը պատկանում է վերևում նշված ձեռագրերի Ա խմբին: Եթե բացառենք սույն հրատարակության 3—4 էջերում լույս տեսած ցանկի վերջին՝ 37-րդ «Տեառն Ցովհաննու Մանդակունւոյ ի կոչումն ապաշխարութեան՝ տուեալ ՃԽ» կանոնախումբը, ապա մնացած կանոնները միևնույն հաջորդականությամբ դտնում ենք Հակոբ Շամախեցու օգտագործած ձեռագրերում:

[2] o ձեռագրում առարկայական ցանկից ընկել է սկզբի մասը:

բաժանվում են հետևյալ ենթախմբերի. ա. befghilqrt. բ. m. գ. acd։ Այստեղ ամենից հետաքրքիրն այն է, որ Ա խմբի A ձեռագրի առարկայական ցանկի բովանդակությունը համապատասխանում է Բ խմբի ilt ձեռագրի ունեցած առարկայական ցանկի բովանդակությանը, իսկ սրանց դիմաց դրված համապատասխան հոդվածների ընդհանուր համարները տարբեր են, քանի որ երկու խմբում կանոնախմբերը տարբեր դասակարգում ունեն։ Այս երևույթը չափազանց ուշագրավ է, ըստ երևույթին, այդ նմանության և տարբերության մեջ արտահայտվում է Ա խմբի A կամ որևէ այլ հնագույն ձեռագրից Բ խմբի հնագույն (Ա) ենթախմբի անցման երևույթը։

Թեև Կանոնագրքի առարկայական ցանկի բովանդակության դիմաց դրված ընդհանուր համարները պետք է համապատասխանեին Կանոնագրքում գանվող զանազան կանոնախմբերի տվյալ հոդվածի ընդհանուր համարներին, բայց, ինչպես նշեցինք վերևում, շատ դեպքերում այդ համարները հաճախակի ընդօրինակությունների հետևանքով աղճատվելով շեղվում են։ Այդ բանը ժամանակին նկատել են առանձին ձեռագրերի գրիչներ և թողել իրենց տարակուսանքը. օրինակ՝ C ձեռագրի գրիչը գրում է. «Ցայսքան տեղիս ոչ ուղիղ գնան համարագիր մեծ ցանկին ԼԴ ԼԴ, ԾՂԲ ԾՂԲ, ԾԿԵ ԾԿԵ, ՄՂԸ, Շ Շ, ՋԿ, ՊԲ ՊԲ»[1]։ Նույն գրիչը մի այլ տեղ դարձյալ գրում է. «Մի զայրասցիս վասն թիւրութեան համարածս գծողիս, բազում աշխատեցայ և ոչ եղև հնար ուղղելոյ, քանզի մեծ ցանկն ի վերայ այսմ աւելի և պակաս համարացս է շինեալ»[2]։ Մի այլ՝ g ձեռագրի գրիչը գրում է. «Արդ՝ աղաչեմ զձեզ, ով սուրբ հայրք և եղբարք, անմեղադիր լերուք անյարմարութեան գրիս, քանզի շտապ գրեցի, այլև ցանկ ի սորա զաղայանքն ի յօրինակէն էր և վասն շտապով գրելոյս չի կարացի տեղն բերուլ...»[3]։

Իէ. Կանոնագրքի ներկա հրատարակության համեմատությունների համար օգտագործված 48 ձեռագրերից՝

1 ձեռագիր XI դարի է, 1 ձեռագիր XIII դարի, 3 ձեռագիր XIV—XV դարի, 36 ձեռագիր XVII դարի, 5 ձեռագիր XVIII դարի, 2 ձեռագիր XIX դարի։

Ինչպես տեսնում ենք, 36 ձեռագիր, կամ ավելի քան 80 տոկոսը ընդօրինակվել են XVII դարում, այն դարում, երբ 300 տարվա քաղաքական վայրիվերումների, հազար ու մի աղետների, հրի ու սրի միջով անցնելով, հայ ժողովուրդը, տարագաղթի պայմաններում, դեռ չբուժած իր վերքերը, նորից ձեռնամուխ է լինում մշակութային-լուսավորական աշխատանքներին, որոնք XVII դարում նկատելի աշխուժացում են ապրում։ Այդ ժամանակաշրջանում ընդօրինակվում են բազմաթիվ ձեռագրեր, այն համոզմամբ, որ, ինչպես ասում է Վարդան Բաղիշեցին, «...Լ, ՝Ա գրոցս նորոգելն և ի հնութենէ յառաջածելն և ի փթածութենէ ի կենդանութիւն ածելն մեծ է, քան զեկեղեցիս շինելն...»[4]։

---

[1] էջ 71բ, ներքևի լուսանցքում։

[2] էջ 72ա։

[3] էջ 170ա։ T ձեռագրի երկու էջերի ներքևի լուսանցքներում, ըստ երևույթին մեկ ուրիշը այդ մասին նույնպես գրել է. «Ով եղբայր սեգիր համարն (իմա՝ հոդվածների ընդհանուր համարները— Վ. Հ.) ծուռ է գրած», էջ 247բ. տե՛ս նաև 260ա էջում։

[4] Մանր ժամանակագրություններ, հա. II, Երևան, 1956, էջ 386։

Նույնքան հետաքրքիր է ձեռագրերի ընդօրինակման վայրերի պատկերը: Դժբախտաբար վերոհիշյալ 48 ձեռագրերից 24-ի ընդօրինակման վայրերը հայտնի չեն, իսկ 24-ից միայն երեքն է ընդօրինակվել բուն Հայաստանում, իսկ մնացած 21 ձեռագրերը՝ այլ վայրերում:

ԻԸ. Օգտագործված ձեռագրերի նկարագրության բաժնում՝ բացի 48 ձեռագրերից, նկարագրել ենք նաև №№ 3788, 4088 ձեռագրերը, որոնք, թեև ուսումնասիրել ենք, բայց չենք օգտագործել համեմատությունների համար: Մեր օգտագործած ձեռագրերը չեն սահմանափակվում Կանոնագրքի քննական բնագրի համար օգտագործվածներով: Ընդհակառակը, մեկ տասնյակից ավելի ձեռագրերում թեև պահվել է Կանոնագրքում եղած կանոնախմբերի մեծ մասը բայց որովհետև այդ ձեռագրերում բազմաթիվ հոդվածներ շատ հաճախ համառոտվել են, հաճախ էլ ընդարձակվել և կամ բոլորովին դուրս նետվել, ուստի և Կանոնագրքի համահավաք բնագիրը կազմելու համար ոչ մի կերպ հնարավոր չէր օգտագործել, ուստի նման ձեռագրերի նյութերը օգտագործեցինք Ծանոթագրություններ բաժնում[2]:

Մատենադարանում կան ուրիշ բազմաթիվ ձեռագրեր, մի քանի տասնյակի հասնող, որոնց մեջ գտնվում են առանձին կանոնախմբեր, բայց շատ հաճախ կանոնախմբերի հոդվածները բերված են կրճատումներով կամ համառոտված, օրինակ՝ №№ 44, 80, 487, 601, 837, 839, 1495, 2576, 2713, 3276, 3433, 6036, 6907, 7060, 8172, 8704, և այլ ձեռագրերում: № 3276 ձեռագրում ոչ միայն կրճատ են բերված առանձին կանոնախմբերի հոդվածները, ասենք՝ Անկյուրիայի ժողովից բերված է երկու հոդված, Նիկիայից՝ 5, Կեսարիայից՝ 3, Նեոկեսարիայից՝ 4, Աթանասից՝ 57, Գրիգոր Լուսավորչից՝ 22, այլև առանձին կանոնախմբերից ոչ մի հոդված չի բերվում, բավարարվելով հետևյալ հիշատակությամբ. «Կանոն Անտիոքայն ոչ գրեցաւ» (էջ 175ա), «Կանոնք Սարդիկեայ ոչ գրեցաւ» (էջ 175բ), «Կանոնք Եփեսոսի ժողովոյն աստ ոչ գրեցաւ» (էջ 175բ) և այլն և այլն: Բնական է՝ նման ձեռագրերը ոչ միայն չէին կարող մեր գործին օգնել, այլև դրանց հետևից ընկնելով, նույնիսկ, չէինք կարողանա, թերևս մեր կյանքի ամբողջ ընթացքում, տեսնել սույն աշխատության ավարտման մոտավոր եզրերը: Այդ պատճառով էլ ձգտել ենք օգտագործել Կանոնագրքի համեմատաբար լրիվ կամ լավ պահպանված ձեռագրերը: Իսկ եթե պատահի մեկ կամ երկու նման ձեռագիր, որ չենք օգտագործել, փույթ չէ, քանի որ եղածից բացի, այդ օրինակներից հազիվ թե նոր բան սպասվեր[3]: Հնարավորություն չենք ունեցել, արտասահմանյան բազմաթիվ մատենադարաններում գտնվող հայերեն կանոնագիրք-ձեռագրերը օգտագործել Կանոնագրքի ներկա հրատարակության համեմատական բնագիրը կազմելիս[4]:

---

[2] Դրանց մասին տես Օգտագործված ձեռագրերի նկարագրության բաժնում:

[3] №№ 9769 (սկզբից թերի) և 10137 ձեռագրերը թեև լրիվ կանոնագիրք են, որոնք պատկանում են մեր կողմից օգտագործված ձեռագրերի Բ խմբին, սակայն, համեմատությունների ժամանակ դրանք չենք օգտագործել, որովհետև համահավաք բնագրի աշխատանքներն ավարտելուց և տպագրության հանձնելուց հետո միայն Մատենադարանը ձեռք բերեց դրանք:

[4] Էջմիածնում պահվում է երկու կանոնագիրք ձեռագիր: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ ձեռագրերը Հակոբ Ամասացու հեղինակությունն են և պիտանի չեն այս և հաջորդ հատորների համար:

Օգտագործել ենք մինչև արտասահմանում գտնվող ձեռագրերի հիման վրա կատարված առանձին կանոնախմբերի հրատարակությունները։ Այդպիսիների տարընթերցվածները տվել ենք բնագրի տողատակ, օրինակ՝ Առաքելական (Ա) կանոնախմբի Հ. Տաշյանի «Վարդապետութիւն առաքելոց» (Վիեննա 1896)-ին առընթեր հրատարակությունը նշված է V տառով[1], Սարդիկեի ժողովի կանոնախմբի Ոսկյանի հրատարակությունը («Հանդէս Ամսօրեայ», 1942—1943 թթ.)՝ W տառով, Սահակ Պարթևի կանոնախմբի Վենետիկի հրատարակությունը («Սոփերք Հայկականք», հտ. Բ, 1853)՝ X տառով, Շահապիվանի ժողովի և Սևանտոս եպիսկոպոսի կանոնախմբերի՝ Ն. Ակինյանի հրատարակությունը («Հանդէս Ամսօրեայ», 1949)՝ Z տառով, Հովհաննես Օձնեցու կանոնախմբի Վենետիկի հրատարակությունը[2] Y տառով։

Սակայն՝ այդպես չենք վարվել այն կանոնախմբերի հրատարակությունների հետ, որոնք կատարվել են Երևանի Մատենադարանի ձեռագրերից, օրինակ՝ «Կանոնք Պարտաւի ազգային ժողովի (Սիոն կաթողիկոսի)» (Ա. Ղլտճյանի հրատարակություն), «Կանոնք Ներսէսի Բ կաթուղիկոսի և Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» (Ա. Ղլտճյանի հրատարակություն), «Կանոնք Դունայ սուրբ ժողովոյն» (Մխիթար վարդապետի և Ս. Տիգրանյանի հրատարակություն), Գանգրայի ժողովի[3] (Լ. Խաչիկյանի հրատարակություն) կանոնախմբերը, ինչպես նաև Աբել Մխիթարյանցի «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ», Ն. Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրաւունքը» (Ա գիրք), Ա. Ղլտճյանի «Կանոնգիրք Հայոց»-ը։ Սրանք չենք օգտագործել, որովհետև մեր ձեռքի տակ կային վերջիններիս հրատարակության հիմք հանդիսացող ձեռագրերը[4]։

Մատենադարանի երկու՝ №1490, 1905 ձեռագրերում, XVII դարի թարգմանությամբ գտնվում են Նիկիայի, Կ. Պոլսի, Եփեսոսի և Սարդիկեի ժողովների կանոնախմբերը, սրանց նախորդող և հաջորդող գրությունները, ժողովներում արտասանած ճառերը. քանի որ այդ թարգմանությունը կարող էր կատարված լինել հունարեն հրատարակված մի որևէ բնագրից և եղածն էլ ունի զգալի շեղումներ Կանոնագրքի համապատասխան կանոնախմբերից, ապա այդ թարգմանությունը չօգտագործեցինք, բավականանալով դրանց մասին այս հիշատակությամբ։ Այդպես վարվեցինք նաև №4036 ձեռագրի նըկատմամբ, որի 2ա-161բ էջերում գտնվում է Դիոսկորոս Աղեքսանդրացու Եփեսոսի ժողովի պատմությունը և կանոնախումբը՝ Գեորգ Դպիր Պալատցու թարգմանությամբ (XVIII դար)։

ԻԹ. Վերևում նշված Բ խմբի չորս ձեռագրերում պահվել է Հովհաննես Օձնեցու հիշատակարանը, որը, ժամանակին պետք է կից եղած լիներ նրա

---

[1] Այս հրատարակության ընթերցումները բավական մոտ են մեր օգտագործած kmp» ձեռագրերի ընթերցումներին։

[2] «Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833։

[3] Տես Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար) աշխատության 100—110 էջերում։

[4] Չենք օգտագործել Հ. Հետիկյանի Collectio Canonum Ecclesiae Armenae (Վենետիկ, 1940) հրատարակությունը, որովհետև վերջինս ստացվեց Կանոնագրքի Առաքելական երկու կանոնախմբերի գիտական բնագիրը կազմելուց հետո։ Համենայն դեպս, թեթևակի համեմատությունը ցույց տվեց, որ առանձին տարբերություններ չկան, որովհետև սրա հրատարակության հիմքում ևս դրված է Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 131 ձեռագիրը։

կազմած Կանոնագրքին։ Քանի որ նա այդ հիշատակարանում նշում է, թե ինչու և ինչպես է կազմել Կանոնագիրքը, նպատակահարմար գտանք հիշատակարանը զետեղել Կանոնագրքի վերջում, իր՝ Հովհաննես Օձնեցու կանոնախմբից անմիջապես հետո, որպես Կանոնագիրքը եզրափակող գրություն[1]։

Այս հատորի վերջում դրել ենք «Հավելված» բաժինը, որտեղ զետեղել ենք մի քանի կանոնախմբերի մեզ հասած հնագույն պատառիկները։ Եվ որովհետև վերջիններս բավականին ընդարձակ են, դրանք չենք մուծել համապատասխան կանոնախմբերի հոդվածների ծանոթագրություններում, այլ դրել ենք առանձին և ամբողջական, քանի որ Հովհաննես Օձնեցու կազմած Կանոնագրքի կառուցվածքը և կազմման սկզբունքները պարզելու խնդրում կարող են ուշադրության արժանի նյութեր տալ։ Այդ պատառիկները գտնվում են Մատենադարանի Պատառիկների ֆոնդում հետևյալ համարներով և բովանդակությամբ.

№ 347. Կղեմէսի կանոնախումբ։

№ 608. Շահապիվանի ժողովի, Ներսեսի և Ներշապուհի կանոնախմբեր։

№ 1216. Սահակ Պարթևի կանոնախումբ։

№ 1735. Հովհաննես Օձնեցու կանոնախումբ[2]։

Հավելվածում դրել ենք նաև №№ 4201, 2151 ձեռագրերի պահպանակները, որոնցից առաջինը բովանդակում է Առաքելական (Ա) կանոնախմբի վերջաբանը[3], իսկ երկրորդը՝ Բարսեղ Կեսարացու կանոնախմբի հոդվածների ցանկը և սկզբի մի քանի հոդվածները[4]։

Հավելվածում այս նյութերը հրատարակում ենք Կանոնագրքի կանոնախմբերի հաջորդականությամբ։

Լ. Այժմ մեր կատարած աշխատանքի մասին։ Համեմատության համար ընտրած ձեռագրերը ուսումնասիրելուց հետո արտագրեցինք B ձեռագրի բնագիրը՝ Առաքելական-ից մինչև Հովհաննես Օձնեցու կանոնախումբը։ Մնացած 46 ձեռագրերը համեմատել սկսեցինք վերջինիս հետ։ Համեմատության աշխատանքը կատարում էինք միայնակ, և այն տևեց 1955 թ. մինչև 1957 թ հունիսը։

Համեմատությունները կատարելիս աշխատել ենք նվազագույնի հասցնել մեր կողմից թույլ տրված հնարավոր վրիպումները։ Այդ նպատակով արել ենք այն, ինչ թույլ կտար մեր ուժերի լարումը։ Ձեռագրերի համեմատության ժամանակ յուրաքանչյուր ձեռագրի մասին հավաքել ենք անհրաժեշտ տեղեկություններ Նախաբանում և Ծանոթագրություններ բաժնում օգտագործելու

---

[1] Հիշատակարանի հրատարակության հիմք վերցրինք C ձեռագիրը, իսկ մյուսների տարընթերցումները դրեցինք տողատակ, պահելով այդ ձեռագրերի և մի հրատարակության յուրաքանչյուրի համար նշված լատինական տառերը։ B տառով նշեցինք Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց» (հտ. Բ, Վենետիկ, 1785)-ում հրատարակված (էջ 395—396) Հովհաննես Օձնեցու հիշատակարանի տարընթերցվածները։

[2] Այս պատառիկներից նախապես միայն № 608-ն էր մեզ ծանոթ, իսկ մնացած երեքի մասին տեղեկացանք Մատենադարանի պատառիկների նկարագրության մատյանից, որը կազմել էր Մատենադարանի գիտաշխատակից Ս. Է. Քոլանջյանը։

[3] Այս ձեռագրի պահպանակի վրա մեր ուշադրությունը հրավիրեց Մատենադարանի գիտաշխատակից Ս. Գ. Լալաֆարյանը, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը։

[4] Հավելվածում հրապարակում ենք այս հատորում տեղ գտած կանոնախմբերի հնագույն բեկորները, իսկ մնացածները, որոնց համապատասխան կանոնախմբերը կհրապարակենք առանձին հատորով, կդնենք վերջինիս Հավելվածում։

նպատակով։ Կանոնագրքի քննական բնագիրը պատրաստվում էինք կազմել, երբ 1957 թվականի օգոստոսի 22-ին Նոր Ջուղայից (Իրան) ստացանք A ձեռագրի լուսանկարչական պատճենը։ Դրանից մեր աշխատանքի ընթացքը մի փոքր փոխվեց, որովհետև որոշեցինք A-ն դնել այս հրատարակության հիմքում։ Այդ պատճառով, նախ՝ մեր ձեռքի տակ եղած B տարբերակի մեքենագրված օրինակը համեմատեցինք A-ի հետ և առաջինը դարձրինք վերջինիս ուղղագրությամբ և ընթերցումներով,, իսկ այնուհետև մյուս ձեռագրերի համեմատության թերթի՛կները բառ առ բառ համեմատելով A-ի, ապա անմիջապես նաև B-ի հետ, հավաքում էինք բնագրական տարբերությունները տողատակին նշելու համար, հենց այդ ժամանակ էլ համեմատում էինք արտասահմանում լույս տեսած առանձին կանոնախմբերի հրատարակությունները և նշում տարբերությունները։ Այս աշխատանքները տևեցին շուրջ մեկ տարի։

Ձեռագրերի համեմատության ժամանակ նշեցինք բոլոր տարբերությունները, հետագայում, երբ կազմում էինք Գանոնագրքի համահավաք բնագիրը, կատարեցինք, ճիշտ է քիչ, բայց որոշ ընտրություն[1]։ Եթե մյուս ձեռագրերը տալիս էին ճիշտ ընթերցում, դրանք մուծեցինք բնագրում, իսկ A-ի ունեցածը նշեցինք տողատակին։ Նույնիսկ այն դեպքում, երբ հունարենից թարգմանված կանոնախմբերում մի երկու ձեռագիր ճիշտ ընթերցում էին տալիս, համապատասխան հունարենին, իսկ մեծ մասը՝ ոչ, դարձյալ վարվեցինք վերևում նշվածի նման, օրինակ՝ Լավոդիկեի կանոնախմբի ԺԷ հոդվածում (էջ 232) միոյ միոյ բառը 31 ձեռագրերում գրված է միոյ, հունարենն ուներ առաջինին համապատասխան՝ ἕκαστον, վերևում նշեցինք միոյ միոյ, տողատակ միոյ։ Բայց եթե այդ տարբերությունը վերաբերում է մի աննշան բառի, ապա փոփոխություն չենք կատարել։

Մի քանի դեպքերում, երբ բառն աղճատվել է կամ ընկել և միտքը չի հասկացվում կամ անհարթ է, իսկ մեր օգտագործած բոլոր ձեռագրերը տալիս են միայն աղճատված ընթերցում, մինչդեռ հայերեն բնագիրն ինքը մասամբ հուշում է սխալի ուղղումը, իսկ հունարեն կամ մի այլ սկզբնաղբյուր ունի ուղիղ ընթերցում, ապա համաձայն վերջիններիս՝ վերականգնել ենք բառի ուղիղ ձևը, բնագրում անկյունավոր փակագծերում նշելով բառի լրացված մասը կամ ավելացված բառը. օրինակ՝ 259-րդ էջի 13-րդ տողում բոլոր ձեռագրերն ունեն «որ». հետևելով հունարենին՝ ուղղեցինք «որ[բ]». կամ՝ 280-րդ էջի 13-րդ տողում բացակայում է «կամ հրապարակաւ», որն ունի միայն հունարենը, ավելացրինք՝ «[կամ հրապարակաւ]». 502-րդ էջի 3-րդ տողում կարդում ենք. «թեթևացուցանէ ոգւոցն մեռելոց». միտքը պարզ չէ. Մովսես Կաղանկատվացու Պատմության բնագրից ավելացրինք՝ «զբեռինս» բառը, այսպես՝ «թեթևացուցանէ [զբեռինս] ոգւոցն մեռելոց». տես նաև 268-րդ էջի 13-րդ տողի «[ի] լիշումն», 328-րդ էջի 1-ին տողի «[Պատասխանի]» բառերը և այլն։

---

[1] Մի քանի տեղ՝ 19, 133, 168—169, 180—190, 240—241, 247, 273—275, 277—278, 289—290, 301—302, 327, 330, 334, 352—353, 358—359, 433, 445, 458, 475, 491—492, 496—497, 501—502, 524—526, 530 էջերում, երբ այլ ընթերցումների քանակը շատ է եղել և տեխնիկապես հնարավոր չէր դասավորել նույն էջում, կատարել ենք որոշ կրճատում՝ հանել ենք G որոշիչ հոդի, բառավերջի յ-ի դրությունը, յ նախդրին վերաբերող այլընթերցումները, ինչպես նաև մի շարք այնպիսի բառերի այլընթերցվածները, որոնք ուրիշ էջերում բազմիցս հանդիպում են և էական նշանակություն չունեն։

ԼԱ. A ձեռագրում հաճախ թիւճ վերջավորություն ունեցող բառերը, առանց նշանի, հապավված են թիճ. Նման դեպքերում նշել ենք թիւճ ձևը։ Այդպես ենք վարվել նույն ձեռագրում որոշակիությամբ չգործածվող ե և է տառերի նկատմամբ, գրելով միայն ուղիղ ձևը, բացառությամբ հիշատակարանի, ուր պահեցինք գրչության ձևը։ Նման տառերը դնելով շեղատառ։ Միօրինակությունը պահպանելու նպատակով. անհրաժեշտության դեպքում դ-ն նշել ենք լ, իսկ տարբերությունները դնել տողատակ։ Ուշադրություն չենք դարձրել բառասկզբի և բառամիջի ը տառին, բնագրում պահելով ճիշտ ուղղագրությունը, օրինակ՝ պաճըս, գրել ենք պաճս, ըզմտաւ՝ զմտաւ և այլն։ Այդպես նաև, Դ շաբթի թե չորեքշաբթի և այլն։

Համարյա բոլոր ձեռագրերում էլ, ինչպես արդեն նշել ենք, երբեմն գրիչների, երբեմն հետագայում ուրիշների կողմից կատարվել են առանձին տառերի, բառերի և նույնիսկ նախադասությունների ուղղումներ, ճշտումներ և գրանցվել՝ աջ և ձախ կամ ստորին լուսանցքներում, երբեմն էլ տողամիջին։ Այն ուղղումները, որ կատարել են տվյալ ձեռագրի գրիչները, համեմատության ժամանակ նկատի ենք ունեցել և տվյալ տառը, բառն ու նախադասությունը ընթերցել ուղղված ձևով, իսկ եթե դրանք կատարվել են հետագայում, ուրիշների կողմից, նման ուղղումները նկատի չենք ունեցել։ Կանոնագիրքը հրատարակում ենք մեսրոպյան 36 տառերով. տարբերություններում չենք նշել աւ և օ տառերի զանազանությունը, բայց եթե մի բառի տարբերությունը անհրաժեշտ է եղել նշել մի այլ առիթով, ապա այդ ժամանակ աւ և օ տառերի տարբերությունը նշել ենք տողատակ. օրինակ՝ բնագրի «սպասու կալ» ձևը (էջ 129, տող 8) ach·klmoprst ձեռագրերում գրված է «սպասաւորել», իսկ d-ում՝ «սպասօրել» տողատակ նշել ենք այսպես. «achi klmoprst սպասաւորել (d սպասօրել) ւիխ. սպասու կալ»։ Այդպես է նշված նաև ուրիշ դեպքերում։ Եթե առանձին ձեռագրերում որևէ բառ սխալմամբ կրկնված է, տողատակին նշվում է տվյալ բառը, ապա կողքը շեղատառ ավելացվում՝ կրկնված է։ Հաճախ միևնույն տողում միևնույն բառը երկու, նույնիսկ երեք անգամ նշված է լինում. որպեսզի տողատակին նշված տարբերությունը կամ չիքը կոնկրետ վերաբերվի դրանցից մեկին, տվյալ բառի նախորդ կամ հաջորդ բառը, ըստ հարմարության, դրել ենք կլոր փակագծերում. օրինակ՝ 33-րդ էջի 3-րդ տողում «տէր» բառը գործածված է երկու անգամ. իսկ երկու ձեռագրեր չունեն «տէր» բառերից մեկը. իմանալու համար, թե տողատակի նշումը որին է վերաբերում, վարվել ենք այսպես. «Yû չիք տէր (տանից)», նույնպես և չիքերը՝ «Y չիք ի (հայր)», այսինքն Y ձեռագրում չի պահվել «հայր» բառին նախորդող ի-ն (էջ 96, տող 16)։ Այս դեպքում, կլոր փակագծերում վերցված բառը հաճախ կրճատ ենք դրել, տեղ չգրավելու համար, օրինակ, «չիք եւ (դմխ.)» էջ 66, 7-րդ տողի տողատակին, այսինքն նշված ձեռագրերը չունեն «դմխիթարիչն» բառին նախորդող «եւ»-ը։ Պատահում է, որ մի քանի ձեռագրերում տարբեր է ոչ թե մի բառ, այլ մի նախադասություն, իսկ այդ ձեռագրերը տալիս են բառերի մի շարք այլընթերցումներ. Նման դեպքում նախ տողատակին նշում ենք այդ տարբերությունը ունեցող ձեռագրերի լատիներեն տառերը, որոնք փոխարինում են ձեռագրերի համարներին, ապա արտագրում տվյալ նախադասությունը, և եթե որևէ բառի ուղղագրությունը տարբեր է, տվյալ բառի մոտ կլոր փակագծերում նշում ենք ձեռագրի տառը և տվյալ բառի ուղղագրությունը, ապա անցնում նախադա-

սութեան հաջորդ բառին և այսպես մինչև տվյալ նախադասության ավարտը. օրինակ՝ Կղեմեսի ԻԱ հոդվածը (էջ 80) բնագրում նշված է այսպես. «Եթէ ոք ժառանգաւոր զինքն կրճատեաց՝ լուծցի, քանզի սպանող ինքեան է» տողատակ տարբերությունը գրել ենք այսպես «A_1 IJKLMNOPQRSTVXYZW ûn եթէ ոք ի վիճակելոցն (K ի վիճակելոյն n ի վիճակելոց) զինքն կրճատեաց ի բաց լուծցի (IJû լուծցի ի բաց V ի բաց որոշեսցի լուծցի) քանզի սպանող (A,n սպաննող Y սպանօղ) եղեւ անձին (n անձինն) իւրում (NOP QRû իւրոյ W չիք իւրում)»։

Հաճախ տողատակին նշված է, օրինակ, «û չիք ղի... թէ» (էջ 53, տող 12). դա նշանակում է, որ û ձեռագրում չի պահվել «ղի» բառից մինչև «թէ» բառը։ Եթե տողատակ նշված է ձեռագրի լատիներեն տառը և գրված որևէ բառի տարբերություն, ապա դրված է ստորակետ և գրանցված մի այլ բառի տարբերություն, դա նշանակում է, որ նշված տարբերությունները վերաբերում են միևնույն ձեռագրին, օրինակ՝ բնագրի 252 էջի 3-րդ տողի տողատակ գրված է «q նա դառն փխ. դառնալ, չիք և լուծումն գտանել». դա նշանակում է q ձեռագիրը «դառնալ» բառի փոխարեն անի «նա դառն», իսկ բնագրի «և լուծումն գտանել» հատվածը չունի։ Բնագրում տողատակերին կան, օրինակ, այսպիսի նշումներ՝ 289-րդ էջի 1-ին տողատակին՝ «A—Wegh ilmort հարցումն փխ. վասն» կամ 290-րդ էջի 7-րդ տողատակին AK—VZW ծeûabcdf—s զհայհոյութիւն» և այլն։ Առաջին դեպքում այդ նշանակում է A-ից մինչև W(A—W)[1] տառերի միջև ընկած BCDEFGH և այդպես մինչև W ձեռագրերը վասն-ի փոխարեն ունեն հարցումն. փոխանակ կրկնելու A-ից մինչև W բոլոր տառերը, կրճատ նշել ենք A—W։ Նույնը երկրորդ դեպքում՝ A, K-ից մինչև V (K—V) և abcd, f-ից մինչև s (f—s) ձեռագրերն արտահայտող լատիներեն տառերի հաջորդականությունը գրել ենք կրճատ՝ K—V և f—s։

Տողատակ նշված շեղատառ գրությունները պետք է դիտել որպես փոքրիկ ծանուցումներ։ Բացահայտ սխալները, որոնց հանդիպում ենք միայն մեկ ձեռագրում, օրինակ, «N ուստ փխ. սուտ» (էջ 236, տող 10), «L աշխարհանակաց փխ. աշխարհականաց» (էջ 253, տող 7), «R յանդուղն փխ. յանդուգն» (էջ 253, տող 11), «b շթոթէր փխ. շփոթէր» (էջ 289, տող 12), «Q փոխր փխ. փոքր» (էջ 252, տող 12), «C առանչ փխ. առանց» (էջ 252, տող 7), «e պխտոյ էր փխ. պիտոյ էր» (էջ 278, տող 11) և այլն և այլն, ուշադրության չենք առել, իսկ եթե կրկնվել են մի քանի ձեռագրերում, այդպիսիները դրել ենք տողատակին։

211-րդ էջի տողատակ (6-րդ տող) կա այսպիսի մի նշում «Qd վարձք (W կամք) փխ. վարք»։ Դա նշանակում է, որ բնագրի վարք բառը d ձեռագրերում հանդիպում ենք վարձք, իսկ W ձեռագրում՝ կամք ձևով։ Այդպես նախընտրեցինք նշել, որպեսզի վարք բառը չկրկնենք։

Մի այլ առիթով՝ տողատակ, բնագրի 163-րդ էջի 10-րդ տողի մի բառի համար արձանագրեցինք այսպիսի նշում. «բացի AMNXalmn-ից մնացած ձեռ.-երը (կոչէ) քորեպիսկոպոս»։ Այդ նշանակում է, որ բնագրի քորեպիսկոպոս բառը ունեն նշված ութ ձեռագրերը, իսկ մյուսները՝ քորեպիսկոպոս։ Նույն ձևով վարվեցինք մնացած դեպքերում։

[1] Համահավաք բնագրի կազմման ժամանակ ձեռագրերի №-ները լատինական տառերով փոխարինելիս լատինական այբբենի վերջին տառերը վրիպմամբ դնացել են VXYZW հաջորդականությամբ, փոխանակ VWXYZ-ի։ Ուստի A—W նշման մեջ պետք է ներառված համարել նաև X, Y և Z տառերը։

[ ] նշանով տողատակին նշված են այն բառերը կամ վանկերը, որոնք ձեռագրերում բաց են թողնված գրիչների անուշադրության կամ բնագրի եղծված լինելու պատճառով. իսկ < > նշանը՝ կրկնված վանկը կամ տառը։ Մեկ-երկու տեղ բնագրում բառը ակներև կերպով աղավաղված է և կամ անծանոթ, իսկ տարբերակներ կամ չունի և կամ թե դրանք փոքրաթիվ են և թե կասկածելի, նման դեպքերում այդ բառը բնագրում պահել ենք նույնությամբ, իսկ տողատակին նշել եղած տարընթերցումները. օրինակ՝ կորտացի, նուրաացի (էջ 90, տող 10) և այլն։

Այնպես է լինում, որ սույն հրատարակության բնագրում բառը կիսվում է տողադարձի անհրաժեշտության բերումով, այդպիսի դեպքում տողատակին համապատասխան բառի տարընթերցումը նշում ենք բառի առաջին մասի տողի համարով. օրինակ՝ 124-րդ էջի 9-րդ տողում «հաւասարեսցենս» բառի «սարեսցենս» մասը դրված է 10-րդ տողում, մինչդեռ տողատակին մի քանի ձեռագրերի այլընթերցումը նշված է 9-րդ տողում։ Պատահում է և այնպես, որ չիք-ի իրար հաջորդող բառերը, որոնք տարբեր տողում են, նշել ենք առաջին բառի տողի համարով. օրինակ՝ 124-րդ էջի 4-րդ տողի վերջում դրված է «եւ», իսկ 5-րդ տողի սկզբում «առանց». տողատակին 4-րդ տողում նշել ենք «acdhiklmoprst չիք և առանց», թեև «առանց» բառը 5-րդ տողում է։ Նույնը տես նաև 166-րդ էջի 5-րդ տողի տողատակին «begq չրք զայնպիսին... լեկեղեցւոյ», թեև վերջին բառը 6-րդ տողում է և այլն։ 166-րդ էջի 1-ին տողի վերջում դրված է «ընդունելի», իսկ 2-րդ տողի սկզբում «եղեն». t ձեռագրում այդ հատվածն այսպես է՝ «եղեն ընդունելի», տողատակին այս տարբերությունը նշված է առաջին տողի համար։

Այնուհետև, 170-րդ էջի 6-րդ տողի վերջին «եղեւ» և 7-րդ տողի 1-ին «ժողովոյն» բառերի միջև մի քանի ձեռագրերում հանդիպում ենք «մեծ» կամ «մեծի» բառին. այս տարբերությունը նշված է 6-րդ տողի համար, այսպես՝ «bdefniklmopqrst եղեւ մեծ (t մեծի) ժողովոյն (f ժողովոյս)»։ Իսկ եթե տարբերությունը մի քանի տող է և կամ այն անցնում է հաջորդ էջերին, ապա աարբերության վերջին բառի մոտ, տողատակին, նշված է ստղի համարը կամ էջի և տողի համարները. օրինակ՝ 254-րդ էջի 10-րդ տողի տողատակին նշված է «MRXY չիք եպիսկոպոսք... լայլ գաւառէ՝ տող 12 րդ» կամ 216-րդ էջի 17-րդ տողի տողատակին նշված է «begq չիք այլ անսալ... ժողով ժողովեցի՝ էջ 217, տող 1-ին»։

Ներկա հրատարակության էջերի տողերը համարակալել ենք՝ 5, 10, 15 ձևով, բայց տեխնիկական պատճառով պատահում է, որ այդ նշումները բաց են թողնված, օրինակ, 216-րդ, 218-րդ և այլ էջերում չի նշված «5»-ը, որովհետև այդ թվանշանը դնելու տեղ չկար։

ԼԲ. Կանոնագրքի համահավաք բնագրի համար օգտագործած մի քանի ձեռագրերից բացի՝ մնացած ձեռագրերում պահվել են Նիկիայի ժողովի առթիվ Կոստանդիանոս կայսեր դրած ուղերձը, Նիկիայի ժողովի Հավատամքը և մասնակիցների ցանկը։ Այս բնագրերը հնագույն և լավագույն ձեռագրերում, բացառությամբ 9 ձեռագրերի, գտնվում են Նիկիայի ժողովի կանոնախմբին կից, Այդ հանգամանքը մեզ ենթադրել է տալիս, որ այս բնագրերը հենց սկզբից մտել են Կանոնագիրք, Նիկիայի ժողովի կանոնախմբին կից։ Այդ իսկ պատճառով էլ դրանք հրատարակում ենք այստեղ։

Վերջին բնագրում նշված են ժողովի մասնակիցների անունները և նրանց ներկայացրած վայրերի անունները, որոնց մի մասի սկզբնական ձևերը

ձեռագրերի հաճախակի ընդօրինակությունների պատճառով տուժել են և այժմ մեզ ներկայանում են աղավաղված կերպարանքով։ Այդ անունների ստույգ ձևերի վերականգնումը առավել դժվարանում էր, որովհետև մեր ձեռքի տակ չունեինք այդ բնագրերի հունարեն կամ լատիներեն սկզբնօրինակները[1]։ Սակայն դժվարությունը մասամբ հարթվեց, երբ ուշադրություն դարձրինք մեր Մատենադարանում պահվող երեք ձեռագրերում՝ № 1905 (էջ 31ա-36ա), 1490 (էջ 25բ-28ա), 2620 (էջ 22ա-26ա), գտնվող Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկի XVII դարում հունարենից կատարված մի այլ թարգմանության վրա։ Կանոնագրքում և նշված երկու ձեռագրերում եղած մեզ հետաքրքրող բնագրի ուշադիր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք մեծ մասամբ համապատասխանում են միմյանց։ Այդ պատճառով էլ Կանոնագրքում Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկի համահավաք բնագիրը կազմելիս №№ 1905, և 2620 ձեռագրերի համապատասխան բնագրերը օգտագործեցինք որպես ուղեցույց։ Ի՞նչ է նշանակում այդ։ Մեր օգտագործած ձեռագրերի մի մասը տալիս է № 1905 ձեռագրին նման կամ մոտ ընթերցում, իսկ մյուս մասը տարբեր է և՛ Կանոնագրքի մնացած մասից և՛ № 1905 ձեռագրում եղածից. օրինակ՝ Կանոնագրքի ձեռագրերի մի մասը ունի «Փիղիպպոս ի Պամփիալէ» (էջ 135), «Նունեքիոս ի Լաւոդիկեայ» (էջ 143) ձևը, իսկ մյուս մասը՝ «Փիղիպպոս ի Մամփիսէ», «Նաւնէքիոս ի Ղաւոդիկեայ» ուղղագրական իրենց տարընթերցումներով. մինչդեռ № 1905 ձեռագիրն ունի «Փիլիպպոս եպիսկոպոս Պանեփիւսիոյ ստորագրեցի» (էջ 31բ), «Նունեքիոս Լաւոդիկիայ» (էջ 34ա)։ Հետևելով № 1905 ձեռագրի ունեցածին, համահավաքի համար օգտագործած ձեռագրերում ընտրեցինք ոչ թե «Ի Մամփիսէ» կամ «Նաւնէքիոս» ձևերը, այլ «ի Պամփիալէ», «Նունեքիոս» ձևերը, իսկ մնացած տարընթերցումները նշեցինք տողատակ։ Պատահում է և այնպես, որ մեր օգտագործած ձեռագրերում անունները բոլորովին տարբեր են № 1905 ձեռագրի ունեցածից, օրինակ՝ Կանոնագրքում կարդում ենք. «Անտիոքոս ի Սեմփոյէ», «Տիբերիոս ի Տոթոսէ» (էջ 135) իրենց տարընթերցումներով, իսկ № 1905 ձեռագրում այս մեջբերումն այսպես է. «Անտիոքոս եպիսկոպոս Մեմփիտիոյ ստորագրեցի» (էջ 31ա), «Տիբերիոս եպիսկոպոս Տէնտիւրիտիոյ ստորագրեցի» (էջ 31բ)։ Նման դեպքերում համահավաք բնագրում դրել ենք մեր օգտագործած ձեռագրերի մեծ մասի ունեցածը, զանց առնելով № 1905 ձեռագրի ընթերցումը։ Լինում են դեպքեր, ճիշտ է քիչ, որ որոշ անուններ կան Կանոնագրքի ունեցած ցանկում, իսկ 1905-ում չենք գտնում և կամ ընդհակառակը։ Այդպիսի դեպքում հետևել ենք Կանոնագրքի ձեռագրերի մեծ մասի ունեցածին։ Մի երկու դեպքում միայն, երբ Կանոնագրքի ձեռագրերի մի մասը ունի օրինակ. «ի Դանիոսէ», մյուս մասը՝ «ի Գակիոսէ» իրենց այլ և այլ ընթերցումներով, իսկ № 1905 ձեռագիրը՝ «ի գաւառէն Դաքիոյ» (էջ 35բ), վստահ կերպով ուղղեցինք «ի Դաքիոսէ», նկատի ունենալով Դ և Գ, Կ և Ն հայերեն երկաթագիր տառերի շփոթման հնարավորությունը։

Նիկիայի ժողովի մասնակիցների անձնանուններում և տեղանուններում շատ հաճախ լ-ն գրված է հնագույն ուղղագրությամբ ղ-ը։ Հնարավոր թյու-

[1] Մեր օգտագործած հունարեն բնագրերում՝ Պիտրայի, Հեֆելեի հրատարակություններում, ինչպես նաև Συνταγμα-ում (Γ. Α. ‹Ράλλη καὶ Μ. Ποτλη, Σύνταγμα των θειων καὶ ἱερῶν κανονων, τομος δεύτερος, 'Αθηνησιν, 1852, այսուհետև կնշենք Σύνταγμ.) և Ֆրիդրիխ Լաուխերտի գրքում («Die kanones der wichtigsten altkirchlichen Concilien», Freiburg i[m] B[reisgau] und Leipzig, 1896) Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկը չի պահվել։

րիմացությունից խուսափելու նպատակով այս մասում դ-երը նույնությամբ պահեցինք։

ԼԴ. Ընդհանուր մի այլ երևույթ էլ կա. այս ձեռագրերում էջերի ներքևի լուսանցքներում միշտ նշվում է այն կանոնախմբի անունը, որը տեղադրված է տվյալ էջում։ Շատ հաճախ էլ կանոնախմբի անվան հետ դրանցվում է նաև վերջինիս կարգահամարը։

Կանոնագիրք-ձեռագրերում կանոնախմբերի առաջին կամ երկրորդ վերնագրերի մոտ դրված են լինում հերթական համարներ։ Սակայն մի շարք ձեռագրերում դրանք նշված են անկանոն կամ չեն նշված։ Ներկա հրատարակության մեջ հետևել ենք A ձեռագրի համարակալմանը, իսկ մյուս ձեռագրերի տարբերությունները տողատակին չենք դրել։

Կանոնագիրք-ձեռագրերում հարց ու պատասխանի բնույթ ունեցող կանոնախմբերում, օրինակ՝ Աթանաս Ալեքսանդրացու, Սահակ Ձորոփորեցու, հարց ու պատասխանը սովորաբար դրված է կրճատ՝ հարց., հց., պատ. և այլն։ Հրատարակության բնագրում դրել ենք լրիվ՝ հարցումն, պատասխանի, առանց տողատակի նշումների։

Կանոնագիրք-ձեռագրերում հոդվածների ցանկի և հոդվածների միջև ձեռագրերը ունեն երկրորդ վերնագիր, բայց մեր օգտագործած ձեռագրերում մի երկու կանոնախմբեր չունեն այն. օրինակ՝ Ներսեսի և Ներշապուհի կանոնախումբը. միօրինակությունը պահպանելու նպատակով հրատարակության բնագրում դրեցինք երկրորդ վերնագիր, տողատակ նշելով «բոլոր ձեռագրերը չունեն երկրորդ վերնագիրը»։ Հնարավորին չափ աշխատել ենք թե առաջին և թե երկրորդ վերնագրերին տալ միօրինակություն, օրինակ՝ Ներսեսի և Ներշապուհի կանոնախմբի առաջին վերնագրում ձեռագրերի մի մասը չունի «գլուխք ԼԷ», իսկ մյուս մասը՝ ունի «գլուխ ԼԷ». նույնն է Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի կանոնախմբի առաջին վերնագիրը. քանի որ կանոնախմբերի առաջին վերնագրերում պահեցինք «գլուխք» ձևը, այդ պատճառով էլ այստեղ նշեցինք «գլուխք ԼԷ» ձևով։ Հնարավոր է, որ առանձին կանոնախմբերի առաջին վերնագրերը Հովհաննես Օձնեցու մոտ լինեին տարբեր։ Համենայն դեպս ամենահնագույն կանոնագիրք-ձեռագրում՝ A, այդ բանը նկատում ենք. օրինակ՝ «Կեսարեայ կանոնիս գլուխք Ժ» կամ «Կանովնք Գանգրեայ գլուխք ԻԳ» և այլն։ Սույն հրատարակության մեջ աշխատել ենք առաջին վերնագրերում մտցնել միօրինակություն, գրելով «Կանոնք Կեսարեայ գլուխք Ժ» կամ «Կանոնք Գանգրայ գլուխք ԻԳ» և այլն, իհարկե, սրանց ձեռագրական տարընթերցվածները դնելով տողատակին։

ԼԴ. Որպես կանոն, որ ընդհանուր է 48 ձեռագրերի համար էլ, հոդվածների կարգահամարները, որոնք. ինչպես նշեցինք վերևում, երկուսն են մասնավոր և ընդհանուր, կանոնավոր վիճակում չեն մնացել. հաճախակի կատարված ընդօրինակությունների հետևանքով ձեռագրերի մի մասում կան կարգահամարների բացթողումներ կամ կրկնություններ, մյուս մասում՝ որոշ կանոնախմբեր բոլորովին չունեն համարակալումներ, ընդորում այս անկանոնությունից գերազանցապես տուժել են ընդհանուր կարգահամարները։ Նվ քանի որ սրանց տարբերությունները չափազանց շատ են, ավելորդ համարեցինք այդ հարցի մասին որևէ դիտողություն, տողատակի տարընթերցվածները չծանրաբեռնելու համար, այլ բավականացանք այս ընդհանուր նշումով։

Սակայն ելնելով այս վիճակից, նպատակահարմար գտանք բուն Կանոնագրքի հոդվածների և առարկայական ցանկի վերնագրերի դիմաց նշված համապատասխան հոդվածների համարները սխալի դեպքում սրբագրել և ուղղել, որպեսզի ցանկի համապատասխան համարով կարողանանք գտնել Կանոնագրքի տվյալ հոդվածը։ Այդ նպատակով՝ եղած սխալները ուղղեցինք։ Նախ՝ Կանոնագրքի հաջորդական կանոնախմբերի հոդվածների ընդհանուր համարները, եթե կրկնվել են կամ բաց թողնվել, այդպես էլ պահեցինք, վերցնելով կլոր փակագծերում, իսկ մոտը նշեցինք հերթական ճիշտ համարը։ Այդպես շարունակեցինք մինչև վերջ։ Երկրորդ՝ այդ ուղղումները կատարելուց հետո համեմատեցինք առարկայական ցանկի բովանդակության վերնագրերի դիմաց գրված ընդհանուր համարները Կանոնագրքի հոդվածների սրբագրված ընդհանուր համարների հետ և եթե առարկայական ցանկում էլ նկատվեցին ինչ-ինչ պատճառներով տեղ գտած անճշտություններ, դրանք ևս վերցրինք կլոր փակագծերում, մոտը նշելով Կանոնագրքի հոդվածների մեր կողմից ուղղված ընդհանուր համարները, որպեսզի վերջիններս համապատասխանեն Կանոնագրքի հոդվածների համարներին։

Այսպիսով, առարկայական ցանկում և բուն Կանոնագրքում նշված կլոր փակագծերից դուրս եղած համարներով պետք է գտնենք մեզ հետաքրքրող հոդվածները, ուշադրություն չդարձնելով կլոր փակագծերում վերցված առարկայական ցանկի և բուն Կանոնագրքի հոդվածների ընդհանուր համարներին, որոնք շատ հաճախ տարբեր են։ Սակայն առարկայական ցանկում պատահում են այլ և այլ կարգի նշումներ ևս, օրինակ՝ երբեմն նկատվում են միայն կլոր փակագծերում նշված համարներ. դա նշանակում է, որ այդ համարով համապատասխան հոդված Կանոնագրքում չենք գտել. տես ԼԴ վերնագրի ՄԺ, ՅԽԷ, ՅԽԸ, ՅԽԹ համարները (էջ 7)։ Մի այլ դեպքում համարը դրված է միայն առանց կլոր փակագծերի. դա ցույց է տալիս, որ այն համապատասխանում է Կանոնագրքի հոդվածի մեր ուղղած համարին. տես ՀԴ վերնագրի ՃՂԹ համարը (էջ 9)։ Երրորդ դեպքում նշված որևէ համար Կանոնագրքի բնագրում հանդիպում ենք մի երկու, երբեմն մի քանի համար նշվածից ետ կամ առաջ. նման դեպքերում առարկայական ցանկում եղածը վերցրել ենք կլոր փակագծերում, իսկ Կանոնագրքի ուղղված համարը դրել առարկայական ցանկում՝ կլոր փակագծերից դուրս. տես Զ վերնագրի ՈԽԸ համարը (էջ 5). որը Կանոնագրքում համապատասխանում է ՈԾԴ (ՈԽԹ) համարին (էջ 499), մինչդեռ առարկայական ցանկում նշված է ՈԾԴ (ՈԽԸ) (էջ 5)։ Կան մի շարք հոդվածներ, որոնք չեն տրատհայտվել առարկայական ցանկում, դրանք այդպես էլ թողել ենք։ Երբեմն միևնույն հոդվածի համարը կրկնված է առարկայական ցանկի տարբեր վերնագրերի ներքո. դա ցույց է տալիս, որ տվյալ հոդվածի բովանդակությունը շերտավորված է՝ այն ունի մեկից ավելի իմաստ, թեև հաճախ նման կրկնությունները նշված են սխալմամբ։ Մի քանի դեպքերում առարկայական ցանկի որևէ վերնագրում հոդվածների համարները հաջորդաբար չեն գնում. օրինակ՝ ՃԺԱ վերնագրում նախ նշված է ՄԾԹ, ապա ՃՀԸ (էջ 11)։ Դրանք նույն ձևով պահել ենք կլոր փակագծերում, մոտը նշելով ստույգ համարները։ Որոշ համարներ էլ նշված են առարկայական ցանկի էջերի լուսանցքներում, դրանք ևս պահված են հրատարակության բնագրում։

Քանի որ Կանոնագրքի քննական բնագրի հիմքում դրեցինք Ա խմբի A ձեռագիրը, որը լավագույններից մեկն է և հնագույնը՝ այդ ձեռագիր-

ընդօրինակության սկզբում գտնվող կանոնախմբերի և առարկայական ցանկերն ամբողջությամբ, առանց համեմատությունների, հրատարակեցինք Կանոնագրքում, որպես նրա բաղկացուցիչ մասը։ Այստեղ կատարել ենք ուղղագրական հայժ անհրաժեշտ սրբագրությունները, իսկ ձեռագրի ունեցածը դրել տողատակ[1], չնշելով այս ձեռագրի համար կանոն դարձած Ե և Է տառերի շփոթման տարբերությունները։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ տվյալ դեպքում կանոնախմբերի և առարկայական ցանկերի վերնագրերը վերաբերում են ոչ միայն ներկա հրատարակության 24 կանոնախմբերի բովանդակած նյութերին, այլև մյուս կանոնախմբերին, թվով 57. ուստի առարկայական ցանկում նշված բազմաթիվ հոդվածների ընդհանուր համարները վերաբերում են նաև Կանոնագրքի շարունակությանը, որը լույս կտեսնի առանձին, որպես Կանոնագրքի հաջորդ հատոր։

ԼԵ. Մեզ հասած կանոնագիրք-ձեռագրերում լինում է և այսպես. կանոնախմբի հոդվածների ցանկում նշված վերնագիրը չունի համապատասխան հոդված. օրինակ՝ Սահակ Պարթևի կանոնախմբի ցանկում՝ ԽԹ վերնագրում նշված է «Վասն եպիսկոպոսաց և վարդապետաց», բայց կանոնախմբում ԽԹ հոդվածն այլ բան է։ Խնդիրն այն է, որ ցանկի ԽԹ վերնագրին համապատասխան հոդվածը ժամանակին եղել է, բայց ինչ-ինչ պատճառով հետագայում հոդվածի համարը դուրս է ընկել և ԽԹ հոդվածը միացվել է ԽԸ հոդվածին։ Նման դեպքերում համապատասխան հատվածը անջատեցինք և դրեցինք որպես առանձին հոդված՝ համապատասխան կարգահամարով։ Այսպես վարվեցինք նաև Հովհան Մանդակունու կանոնախմբի ցանկի Թ վերնագրի և Ժ հոդվածի հետ։ Ի դեպ, այս կանոնախմբի հոդվածների ցանկի վերնագրերը խառնիխուռն են և չեն համապատասխանում հոդվածների հերթականությանը, սակայն նորից չխանգարելու համար, այդ սխալներին ձեռք չտվեցինք։

Մի այլ հարց։ Հաճախ մի խնդրի մասին եղած հոդվածները տարբեր կանոնախմբերում կրկնվում են, օրինակ՝ ազգականների ամուսնությունը, ամուսնալուծությունը և այլն։ Նման դեպքերի մասին նպատակահարմար չգտանք յուրաքանչյուր հոդվածին աղբյուրագիտական նշում կատարել լուսանցքում կամ համապատասխան ծանոթագրության մեջ, թե այդ հոդվածն ուրիշ որ կանոնախմբում կարող ենք գտնել, քանի որ աշխատության սկզբում, ինչպես կանոնագիրք-ձեռագրերում է, գտնվում է առարկայական ցանկ, որի միջոցով կարելի է գտնել նույնանման, բայց տարբեր տեղերում կրկնվող հարցերին վերաբերող կանոնները։

Կանոնագրքում Աստվածաշնչից կատարված մեջբերումները վերցրել ենք չակերտներում և ցույց տվել տեղը՝ նշելով յուրաքանչյուր էջի բնագրի տակ։ Իսկ այն մեջբերումները, որոնք վերցվել են այլ գրքերից և չկարողացանք նրանց աղբյուրները նշել, դալձյալ դրեցինք չակերտներում։

ԼԶ. Վերջում գրված Ծանոթագրություններ բաժնում խուսափել ենք տալ կանոնախմբերի կամ առանձին հոդվածների մասին պատմական տեղե-

---

[1] A ձեռագրի առարկայական ցանկի մի քանի վերնագրերի դիմաց, աջ և ձախ լուսանցքներում նշված են նաև կանոնախմբերի անուններ. օրինակ՝ ՃԺԱ վերնագրի դիմաց նշված է «Ղաւոդիկեա», ՄԽԱ-ի՝ «Սիմոնի», ՄԾԴ-ի՝ «Փիլիպպոսի» և այլն։ Սույն հրատարակության մեջ նման նշումները նկատի չեն առնված։

կությունններ և ակնարկներ, որովհետև ներկա հատորը կարող էր կրկնապատկվել և դժվար օգտագործելի դառնալ։ Մեր նպատակը եղել է այս բաժնում, որպես լրացում, տալ քննական բնագրի կազմման համար չօգտագործված ձեռագրերի նյութերը և նշել բանասիրական որոշ դիտողություններ կապված այլ լեզուներից՝ ասորերենից և հունարենից թարգմանված կանոնախմբերի հետ։ Այն կանոնախմբերը, որոնք թարգմանված են ասորերենից և հունարենից, համեմատել ենք վերջիններիս հետ։ Առաքելական (Ա) կանոնախմբի համեմատության համար օգտագործել ենք ասորերեն բնագրի՝ բազմավաստակ բանասեր Հ. Տաշյանի հայերեն նոր թարգմանությունը[1], համապատասխան ծանոթագրություններում բերելով այդ թարգմանությունը, տարբերությունների նկատումը թողնելով հետաքրքրվողներին։ Հունարեն բնագրերը հայերենի հետ համեմատել և շեղումները նշել ենք, օգտագործելով հունարեն բնագրի Ի. Բ. Պիտրայի[2], Գ. Ռալլիի և Մ. Պոտլիի[3] ինչպես և Ֆ. Լաուխերտի[4] հրատարա-

---

[1] Հ. Տաշյան, Վարդապետութիւն առաքելոց, Վիեննա, 1896։

[2] Iuris ecclesiastici Graegorum historia et monumenta, tomus I, Romae, MDCCCLXIV.

[3] Σύνταγμα τῶν θείων καὶ ἱερῶν κανόνων, τόμος δεύτερος. Ἀθήνησιν, 1852, նույնի, հտ. III, Աթենք, 1853։

[4] „Die Kanones der wichtigsten altkirchlichen Concilien nebst den apostolischen Kanones", herausgegeben von Lic. Dr. Friedrich Lauchert, Freiburg i[m] B[reisgau] und Leipzig, 1896, աշխատությունը։ Այստեղ այլ ժողովների կանոնների թվում տեղ են գտել նաև մեզ հետաքրքրող՝ Նիկեայի, Կ. Պոլսի, Եփեսոսի, Անկյուրիայի, Նեոկեսարիայի, Անտիոքի, Սարդիկեի, Լավոդիկեի, Գանգրայի ժողովների և Կղեմեսի կանոնների հունարեն բնագրերը։ Ինչպես հեղինակն է նշում աշխատության Ներածականում (էՙ XVI–XXV), Անկյուրիայի ժողովի կանոնները վերցրել է Ռակկհամի, [ա]՛յլ մնացածները Մանսիի և Բրունսի հրատարակություններից։ Այսպիսով, Ֆ. Լաուխերտը նշված կանոնախմբերը վերահրատարակել է տպագրվածներից, իսկ վերջում (էջ 189—206) բերում է նաև մի քանի այլ հրատարակությունների համառոտ տարընթերցումները։ Ֆ. Լաուխերտի հրատարակությունը Պիտրայի հրատարակության (1864 թ.) համեմատությամբ լինելով նոր (1896 թ.), նա իր առաջաբանում խիստ է արտահայտվում Պիտրայի հրատարակության մասին, Ուլցենի հրատարակության հետ միասին այն համարելով «անբավարար փորձ», որովհետև նրա «տրամադրության տակ եղած ձեռագրական հարուստ նյութը համապատասխան մշակման ենթարկված չէ» (էջ IV)։ Մենք համեմատեցինք Պիտրայի և Լաուխերտի հրատարակությունները, եղած տարբերությունները նշելով ծանոթագրություններում։ Սակայն, այդ աշխատանքների ժամանակ նկատեցինք, որ եղած տարընթերցումները հիմք չեն տալիս համաձայնվելու Լաուխերտի տված վերոհիշյալ գնահատականին։ Եվ ահա թե ինչու։ Կան մի շարք տեղեր, ուր Կանոնագրքի ունեցածը համապատասխանում է Պիտրայի ու ոչ թե Լաուխերտի հրատարակությանը, օրինակ, Անտիոքի ժողովի Դ հոդվածում կարդում ենք. «կամ եպիսկոպոս ըստ կանխելոյ և յառաջ սովորութեանց կամ երէց կամ սարկաւագ» (էջ 208)։ Պիտրայի մոտ հունարենը նույնությամբ գնում է. «εἴτε ὁ ἐπίσκοπος κατὰ τὴν προάγουσαν συνήθειαν, εἴτε ὁ πρεσβύτερος εἴτε ὁ διάκονος»։ Լաուխերտի մոտ բացակայում է εἴτε ὁ πρεσβύτερος (էջ 44) բառերը։ Անտիոքի ԺԳ հոդվածում կարդում ենք. «և ձեռնադրութիւն առնել յեկեղեցիս» (էջ 214)։ Պիտրայի բերած հունարենը համապատասխանում է հայերենին. «καὶ χειροτονεῖν ἐν ἐκκλησίᾳ»։ Վերջին ἐν ἐκκλησίᾳ բառը Լաուխերտը չունի (էջ 46)։ Նման տարբերություն կա Կանոնագրքի Անտիոքի 22-րդ և Պիտրայի ու Լաուխերտի հրապարակած նույն ժողովի 23-րդ հոդվածների միջև և այլն։ Սակայն, առանձին մի երկու դեպքում միայն Կանոնագրքի ունեցածը համապատասխանում է Լաուխերտի տվածին՝ օրինակ, Սարդիկեի 14-րդ հոդվածը Լաուխերտի մոտ այսպես է. «καὶ ταχέως ἀντικρὺ πρεσβυτέρου ἢ διακόνου» (էջ 67), ταχέως նշանակում է շտապ, շուտ, արագ։ Այս բառի փոխարեն Պիտրայի մոտ բերված է τραχέως, որը նշանակում է դաժան, խիստ, կոպիտ, կատաղած, մոլեգին։ Մինչդեռ Կանոնագրքում գրված է Լաուխերտի ընթերցմամբ. «և վաղվաղակի

կությունները, առանձին դեպքերում Հ. Հեֆելեի աշխատությունը[1], որ բացի հունարենից, երբեմն տրված են նաև լատիներեն կամ գերմաներեն թարգմանությունները։ Նպատակահարմար գտանք Ծանոթագրություններ բաժնում հունարեն բնագրերը ամբողջությամբ և կամ մասնակիորեն մեջ բերել ըստ պարագայի։ Այսպես, եթե հայերենը հանդիսանում է հունարենի բառացի թարգմանությունը, ապա հունարեն բնագիրը չենք բերում և այդ մասին որևէ նշում չենք կատարում։ Նմանապես եթե հայերենը բառացի համապատասխանում է հունարենին, բայց հունարենի առանձին բառեր կամ նախադասություն և կամ մի ամբողջական հատված դուրս է ընկել հայերենից, կամ հայերենում առանձին բառեր և նախադասություններ կան, որ չենք գտնում հունարենում, այդ դեպքում ևս հունարեն բնագիրը չենք բերում, և բավարարվում ենք միայն համապատասխան ծանոթագրություններում եղած տարբերությունները նշելով։ Իսկ այն դեպքերում, երբ հայերենը հանդիսանում է հունարենի ոչ թե թարգմանությունը, այլ վերջինիս բովանդակության վերաշարադրումը՝ երբեմն ընդարձակ, երբեմն համառոտ և խմբագրված ձևով, ապա հունարեն հոդվածը բերում ենք ամբողջությամբ, նշելով ընդհանուր դիտողություններ երկու բնագրերի առնչությունների մասին։ Միայն մի քանի դեպքերում բացառություն ենք արել և հունարենը չենք բերել, ինչպես՝ Գանգրայի կանոնախմբի առաջաբանը, Բարսեղ Կեսարացու կանոնախմբի 1, 8, 9, 18, 22-րդ հոդվածները, որովհետև դրանք բավականին ընդարձակ են ւստի և անխնիկապես հնարավոր չէր ներկայացնել։ Ծանոթագրություններ բաժնում հունարենը բերել ենք համաձայն Պիտրայի հրատարակության. սակայն, Ռալլիի և Պոտլիի, ինչպես և Ֆ. Լաուխերտի հունարեն հրատարակությունները համեմատել ենք Պիտրայի հրատարակության հետ և կլոր փակագծերում նշել եղած տարընթերցումները՝ Σύν., II, Σύν., III, կամ L., ձևով, այսինքն Σύνταγμα-ի II կամ III հատորները[2] և Ֆ. Լաուխերտի հրատարակությունը։ Երկու բնագրերի համեմատությունների ժամանակ օգտագործել ենք նաև Նիկոդիմի աշխատության ռուսերեն թարգմանության համապատասխան[3] կանոնախմբերը։

Հունարենում գոյություն ունեն կանոնախմբերի միայն առաջին վերնագրերը, որ դրել են հրատարակիչները, իսկ երկրորդ վերնագրերը հունարենում ընդհանրապես չենք գտնում։ Այդ պատճառով կանոնախմբերի առաջին և երկրորդ վերնագրերի մասին հունարենի վերաբերյալ նշումներ չենք կատարել։

յանդիման երիցու կամ սարկաւագի» (էջ 266—267)։ Բոլոր դեպքերում երկու հրատարակություններում զգալի տարբերություն ունի կետադրությունը։ Հունարեն նշված երկու հրատարակությունների տարբերությունները արդյունք են բնագրերի տարբեր խմբագրությունների։ Նվ մեզ թվում է, որ չպետք է այդ տարբերությունից ելնելով որևէ մեկը «անրավարար» համարել։ Ըստ երևույթին հայերեն թարգմանված առանձին կանոնախմբեր ժամանակին թարգմանվել են հունարեն տարբեր խմբագրություններից. այդ պատճառով էլ Կանոնագրքում եղածը ավելի հաճախ համապատասխանում է Պիտրայի, սակավ դեպքում Լաուխերտի հրատարակությանը։

[1] Conciliengeschichte, Erster Band. Freiburg im Breisgau, 1855.

[2] Մեզ չհաջողվեց ձեռքի տակ ունենալ Σύνταγμα-ի համապատասխան հատորը, որպեսզի նշեինք Աթանաս Աղեքսանդրացու և Բարսեղ Կեսարացու կանոնախմբերի Պիտրայի հրատարակության տարբերությունները։

[3] Правила (κανόνες) православной церкви с толкованиями, т. I, СПБ, 1911, т. II, СПБ, 1912.

Իսկ եթե վերնագիրը բնագրինն է, կատարել ենք համապատասխան նշում։ Եթե չհաշվենք Պիտրայի հրատարակության Կղեմեսի կանոնախումբը, հունարեն բնագրերում չկան առանձին կանոնախմբերի հոդվածների ցանկեր, այդ պատճառով էլ Ծանոթագրություններ բաժնում, բացի Կղեմեսի կանոնախմբի ցանկից այլ ցանկերի մասին նշում չենք կատարել։ Հունարեն բնագրի տարբեր կանոնախմբեր հաճախ չունեն առաջաբաններ, կամ եթե վերջիններս ունեն՝ Կանոնագիրքը չունի. այդպիսի դեպքերում կամ որևէ նշում չենք կատարում ծանոթագրությունների մեջ և կամ չենք բերում հունարեն բնագիրը։

Աշխատության վերջում դրել ենք Կանոնագրքի բոլոր հոդվածների բովանդակությունը և մեր կազմած առարկայական, անձնանունների և տեղանունների ցանկերը։

Ներկա աշխատության հետ կապված առանձին հարցեր քննության են ենթարկվել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի Սկզբնաղբյուրների հրատարակման սեկտորում, իսկ 1958 թվականից՝ Հին և միջին դարերի պատմության սեկտորում։ Սկզբնաղբյուրների հրատարակման սեկտորի ընդլայնված նիստերից մեկում (1957 թ. սեպտեմբեր) քննվեց Կանոնագրքի գիտական բնագրի մեր կատարած աշխատանքի փորձնական նմուշը։ Նիստի մասնակիցների կողմից եղան շատ արժեքավոր դիտողություններ, որոնք հաշվի առանք սույն աշխատությունը պատրաստելու ընթացքում։ Մեր շնորհակալությունն ենք հայտնում այն ընկերներին, որոնք իրենց խորհուրդներով այս կամ այն կերպ օգտակար են եղել մեզ այս դժվարին գործի ավարտման համար։

Կանոնագիրքը՝ Հայաստանի ավատական հասարակության դարաշրջանի պատմության այս հոյակապ հուշարձանը, հայ ժողովրդի արժեքավոր ավանդն է համաշխարհային մշակույթի գանձարանում։ Տեղն է հիշելու Լենինի խոսքերը, թե «...Միայն մարդկային ամբողջ զարգացմամբ ստեղծված կուլտուրան ճշգրիտ գիտենալով, միայն նրա վերամշակմամբ՝ կարելի է կառուցել պրոլետարական կուլտուրա»[1]։

Եթե սույն աշխատությունը օգնի քննադատական մշակմամբ վերհանելու այստեղ եղած բազմահարուստ նյութը և պարզելու մեր ժողովրդի պատմության ու մեծ մշակույթի առանձին հարցեր, մենք լիովին բավարարված և վարձատրված կլինենք։

Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկեր, հտ. 31, Երևան, 1952, էջ 348։*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրերին վերաբերող տեղեկություններից վերցրել ենք ամենակարևորները և այստեղ արված նկարագրությունը կարելի է համարել համառոտ: Բացի ընդհանուր տեղեկություններից՝ նկարագրություններում աշխատել ենք նշել յուրաքանչյուր ձեռագրի գրչագրական առանձնահատկությունը: Ձեռագրերից բերված են միայն հիշատակարանների առանձին հատվածները, որոնք վերաբերում են կանոնագիրք-ձեռագրերի ընդօրինակման բանասիրական հանգամանքներին:

Սկսենք Ա. խմբի ձեռագրերից.

1. A. Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարան. № 131. Կանոնագիրք. թերթեր՝ 322. մեծություն՝ 23,6×16,5. նյութ՝ թուղթ. գիր՝ միջին մեսրոպյան երկաթագիր. միասյուն. վիճակ՝ ունի ընկած թերթեր[1], վերանորոգված. գրիչ՝ Հովհաննես. տեղ՝ սկսվել է «ի մեծ եկեղեցւոջն Պալահուտ» (Կիլիկիայում, Սև լեռան վրա), վերջացվել է «Յովհաննու անապատ»-ում (Կիլիկիայում, Արմեն լեռան գագաթին)[2]. ժամանակ՝ 1098 թ.:

Հիշատակարան, էջ 318ա—322ա. *«Փառք.... իսկ բարերար եւ մարդասէր Տէրն մեր եւ Փրկիչն, ի ձեռն աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորաց, եւ հոգէազումար մխարանելոց հարց եւ հայրապետաց յիւրաքանչիւր ժամանակս, ըստ պատահման չարին, ի ձեռն սուրբ սինհոդոսաց կտրէ ի բաց զչարին չարութեամբն հանդերձ եւ ըստ պատահման յարինեն կանոնս զգուշութեան ի լրումն առաքելականին, զայս աւանդ առեալ հարքն մեր, հաւաքեցին ի մի աստուածապարգեւ աւանդս, զկարգս եւ զկրաւնս եկեղեցւոյ, հասուցին առ մեզ, յորում ժամանակի հանդիպի թիւ թուականիս Հայոց ՇԽԷ. ի հայրապետութեան աստուածապատիւ տեառն Գրիգորիսի ի զարմէ սրբոյն Գրի[գորի՝] ամենայնիւ հարցն նմանեալ բարեկարգութեամբ, եւ զի յոյժ խռովութեան եւ բազմավրդով էր ժամանակս ի բռնակալութենէ այլասեռից, զայս ամանս յիւրոց հարազատաց ձեռնադրէ փոխանակ իւր եւ ինքն զանխլաբար պանդխտանայ աղաւթից եւ վերծանութեան պարապելով: Նին սորա ուսումնակից եւ վարժակիցք վարդապետք սուրբք եւ առաքինազարդք Գեորգ Մեղրն կոչեցեալ եւ Կիրակոս, որք վարժք լաստուածայինսն ուշ ունելով մարգարէական երանութեանցն.... Ի սոցա վարժարանէ այր ոմն հե-*

---

[1] Բանի որ ձեռագրերից թերթեր ընկնելու մասին մանրամասն նշել ենք համեմատության էջերի տողատակին, այսուհետև նկարագրության մեջ կնշենք ընդհանուր ձևով:

[2] Այս փակագծերում եղած տեղեկությունները վերցրել ենք Ն. Ակինյանից. տես Հանդէս Ամսօրեայ, 1930, էջ 362, ծանոթ. 25—26:

ղամիտ եւ բառեշնորհ, ներհուն եղեալ մակացութեան արհեստի՝ Գրիգոր անուն, յոյժ ըղձափափագ տենչանաւք հրամայէ ինձ Յովհաննիսի գրել ղաստուածայալար կտակս ի յիշատակ բարեաց իւր եւ ծնաւղաց իւրոց ի լուսաւորութիւն մտաց եւ ի մաքրութիւն հոգւոց, եւ իմ նայեցեալ ի սէր սիրեցելոյն Աստուծոյ, անյապաղ փութով սկսայ ի մեծ եկեղեցւոջն Պաղահու, եւ անդ նեղեալ յեղեռնաթոյն ոմանց առաջնորդաց՝ ոչ ժամանեցի ի կէտ կատարման. դիմեցի յապահով եւ ի քրիստոսակարգ եկեղեցւոջս Յովհանայ անապատիս. ի գլուխ լերինս, գունակ այնմ երեւելի քաղաքին, զոր Տէրն յաւետարանին ներբողելով ճառէ։ Ուր են բնակեալ բազմութիւն եղբարց խարազանազգեստից եւ երկաջան գործաւորաց եւ մշտահառաչ աղաւթականաց երկուս աչս ունելով սրատեսք հոգւոյն ճառագայթիւքն աստուածակոչք յառաջնորդական պաշտաւնն, որոյ երիցագունին Մեղիտէ անուն ճանաչի, եւ փոխանորդին Գրիգորիս, արք առաքինասէրք եւ բարեսէրք. գիտացեալ զթերութիւն գործոյս եւ գիտակ եղեալ, թէ որ կամակից լինին գործելեացն՝ հաւասար են գործողացն, հրամայեն լնուլ զպակասութիւն թերութեան գործոյս բարեաց եւ առնուլ ի Տեառնէ վարձս յանանց բարեացն...։

Արդ՝ ով դասք մաքրագունից եւ ժառանգորդք գերաշխարհիկ հայէնիցն, որք վայելէք ի հոգեկեցոյց բժշկարանէս, աւրհնութեամբ յիշատակաւ յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս զստացող գրոցս զԳրիգոր եւ զընկեր նորին զՅովհաննէս, որ ի չքաւոր աղքատութենէ բաւական արար մեզ գնիւթ եւ ղծախս, եւ զհայր Մեղիտէ եւ զԳրիգորիս, որոց հրամանաւ եւ խնամաւք աւարտումն եղեւ ոգէշահ եւ բարեբեղուն եւ հոգիաւանդ կանոնացս, եւ զտէր Խաչիկ, որ յերկար ժամանակ անարատ սիրով եւ յաւժար կամաւք զաւրինակս ընձեռեաց։ Եւ զիս զՅովհաննէս զվերջինս ի գրչաց եւ զառաջինս ի պարտաւորաց, որ նշդեհութեամբ աշխատեցայ եւ յարմարեցի խոշորագունիւքս, սակաւ յիշման արժանացուցէք...»[1]։

Ձեռագրում սովորաբար հապավված են գրված աստուած, Քրիստոս Յիսուս բառերը, այլ բառեր էլ կան, բայց շատ քիչ։ Երբեմն թիւն վերջավորություն ունեցող բառերը առանց նշանի հապավված են թւն. օրինակ՝ շարադրութիւն։ Շատ հաճախ է-ի փոխարեն գործածում է ե, կամ ընդհակառակը. օրինակ՝ եկեղեցւոյ, թե, եթե, փոխանակ եկեղեցւոյ, թէ, եթէ: Այստեղ գրիչը անհետևողական է։ Ձեռագրում չեն օգտագործված օ և ֆ տառերը։ Գրիչը անհետևողականություն է հանդես բերել ղ և լ տառերի գործածության մեջ, հաճախ գրում է, օրինակ, փայղակ, այղ, այղում, իսկ ավելի հաճախ այլ, այլում: Մի երկու բառ՝ աստիճան, ուրկուն գործածված են հնագույն արտասանությամբ. օրինակ՝ աշտիճան, աւրկուն: Ձեռագրում մեծ մասամբ չի պահվել բառավերջի յ տառը. օրինակ՝ գրում է ի վերա։ Բնագրում, բառամիջում երբեմն գործածում է ը տառը. օրինակ՝ պահըս։ Ձեռագրում գործածված է ստորակետ, կետ, վերջակետ. հատկապես առաջինը մեծ մասամբ դրված է բառի վերևում, տողամեջ։ Ձեռագիրը բառանջատում չունի։ Մի շարք էջերում կան բաց թողնված բառեր կամ առանձին բառերի ուղղումներ, կո-

---

[1] Այս հիշատակարանն ամբողջությամբ նախապես հրատարակվել է երկու անգամ (տես Ն. Ակինյան, Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1930, էջ 96—103. և Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, Անթիլիաս, 1951, էջ 259—264)։

տարված աջ կամ ձախ լուսանցքներում։ Դրանցից մի մասը կատարել է գրիչը (էջ 46ա). ըստ երևույթին ընդօրինակելուց հետո ձեռագիրը սրբագրել են, իսկ որոշ ուղղումներ, թեև տեղին, կատարել են ուրիշները, հետագայում (էջ 32ա—38ա, 48ա և այլն)։ Ձեռագրում ավելորդ կամ ուղղվելիք տառը գրիչը հանում է ՛ նշանով, իսկ բառերը՝ վերևից և ներքևից կետեր նշելով։ Ձեռագրի կազմի քայքայված լինելու պատճառով որոշ թերթեր պոկվել են և հետագա կազմողները առանց հոգ տանելու թերթերի հերթականության մասին, դրանք կարել են ոչ իրենց, այլ պատահական տեղում. օրինակ՝ ձեռագրում նման թերթերը գտնում են այս հերթականությամբ՝ 51, 52, 53 կամ 59, 60, 61, մինչդեռ բնագրի իմաստի շարադրությունը պահանջում է 52, 53, 51 կամ 60, 61, 59 հերթականությամբ։ Կանոնախմբի ցանկը «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոցն» վերնագրով գտնվում է ձեռագրի 6ա—7ա էջերում, առարկայական ցանկը (անխորագիր)՝ 7ա—18ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 18բ—318բ էջերում։

2. B. № 6409, Կանոնագիրք. թերթեր՝ 139. մեծություն՝ 25×16,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ սկզբից և վերջից կան ընկած թերթեր, էջերի վերջավորությունները մաշված, վերանորոգված. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XIII դար։ Ձեռագրում կանոնախմբերի ցանկը ընկած է։ Առարկայական ցանկի սկիզբը նույնպես ընկած է, իսկ մնացածը գտնվում է 1ա—9բ էջերում, Կանոնագիրքը՝ 12ա—137բ էջերում։

Ունի լավ ընթերցումներ, եղած սխալ ընթերցումները նախագաղափար օրինակից են գալիս, գուցե և հնից։ Ձեռագրի տարբեր էջերի լուսանցքներում կամ տողամեջ (էջ 21բ, 22բ, 23ա, 24աբ, և այլն) կան առանձին բառերի և տառերի ուղղումներ, կատարված գրչի կողմից. թերևս դրանք սրբագրություններ են։ Այս ձեռագիրը ևս չունի օ և ֆ տառերը։ Ե տառի փոխարեն մեծ մասամբ գործածում է Ե, օրինակ՝ եթե, թե, զաւշաքաղութենե և այլն։ Անհետևողական են գործածված ղ և լ տառերը։ Բառավերջի յ տառը ևս հազվադեպ է գրվում, իսկ աստիճանը՝ աշտիճան։

3. C № 8926, Կանոնագիրք, Դատաստանագիրք և կանոնական այլ նյութեր. թերթեր՝ 370. մեծություն՝ 25,7×19,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ կան պատառոտված էջերի նորոգումներ, կեղտոտ էջեր՝ 51բ, 52ա և այլն, դատարկ էջեր՝ 1աբ, 13ա—15բ, 369բ, 370աբ. տեղ, ժամանակ՝ անհայտ. գրիչ Եղիազար դպիր. ժամանակ՝ XV—XVI դդ.։

Հիշատակագրություն 1) էջ 71բ. «Ցայսքան տեղիս (իմա Անտիոքի ժողովի կանոնախումբ—Վ. Հ.) ոչ ուղիղ գնան համարագիր մեծ ցանկին՝ ԼԴ ԼԴ, ՃԾԲ ՃԾԲ, ՃԿԵ ՃԿԵ, ՄԾԸ, Շ Շ, ՉԿ, ՊԲ ՊԲ»։ 2) էջ 72ա. «Մի զալրասցիս վասն թիւրութեան համարացս գծողիս, բազում աշխատեցայ և ոչ եղև հնար ուղղելոյ, քանզի մեծ ցանկն ի վերայ այսմ աւելի և պակաս համարացս է շինեալ»։

2աբ էջերում. «Այս ինչ կայ ի գիրս կանոնացս» վերնագրի տակ, այբուբենական կարգով, նշված է կանոնախմբերի ցանկը, առարկայական ցանկը՝ «Կարգադրութիւն գլխոց կանոնացս համալձալութենէ (sic) վասն պէսպէս խնդրոցն» վերնագրով՝ 2բ—12բ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 30ա—210ա էջերում։ Ձեռագրում նկատվում են սրբագրության հետքեր, որ կատարել են գրիչը և ուրիշները (էջ 47բ, 55բ, 65բ, 66ա, 71ա, 83ա, 114ա, 123աբ և այլն)։

4. D. № 795, Կանոնագիրք, Դատաստանագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 371. մեծությունը՝ 26,4×19,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն, երկսյուն. վիճակ՝ կան կեղտոտված (129բ), վերանորոգված (127բ, 130աբ և այլն) էջեր, վերջին մի քանի թերթերը ցեցակեր, դատարկ էջեր 1աբ, 370ա—371բ, որոշ լուսանցքներում կան առանձին նշումներ՝ 185բ, 217բ էջերում և այլն. տեղ՝ անհայտ. գրիչ՝ Եղիազար (Կանոնագրքի), Գասպար (Դատաստանագրքի). ժամանակ՝ 1618 թ.։ Կանոնագիրքը առանց ցանկերի գտնվում է 17ա—191ա էջերում։ Գործածում է ա, գրիչը անհետևողական է ղ և լ տառերի գործածության մեջ։ Պատահում են սրբագրության դեպքեր՝ գրչի և ուրիշների կողմից կատարված։

5. E № 2635. Կանոնագիրք, Դատաստանագիրք և կանոնական այլ նյութեր. թերթեր՝ 261. մեծությունը՝ 25,5×19,4. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ բավարար, կազմը պոկված, դատարկ էջեր 14բ—15բ, 260բ. գրիչ՝ Սարգիս. տեղ՝ Խոտանան գյուղ («ի յերկիրս Եճանանա»՝ Սյունիք). ժամանակ՝ 1635 թ.։ Կանոնախմբերի ցանկը՝ «Այս ինչ կայ ի գիրս կանոնացս» վերնագրով (այբբենական կարգով) գտնվում է 1աբ էջերում. առարկայական ցանկը՝ «Կարգադրութիւն գլխոց կանոնացս համաձայնութեան վասն պէսպէս խնդրոց» վերնագրով, 1բ—10բ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 16ա—135բ էջերում։ Կանոնախմբերը վերնագրերի մոտ հերթական համարներ չունեն։ Կանոնախմբերի առաջաբանները երբեմն համարակալված են որպես կանոնական հոդվածներ։ Ձեռագիրը գրված է գեղեցիկ և մաքուր, կան հատ ու կենտ սխալներ, սակայն սրբագրված (էջ 7բ, 53ա)։ Գրիչը գրում է օ, բայց գերակշռում է աւ-ը։

6. F. № 6496. Կանոնագիրք, Դատաստանագիրք և կանոնական այլ նյութեր. թերթեր՝ 424. մեծությունը՝ 25×19. նյութ. թուղթ. գիր՝ բոլորագիր. երկսյուն. վիճակ՝ վերջից ընկած թերթեր, վերջին երկու թերթեր պոկված են և եզրերը մաշված, կան ցեցակեր էջեր։ Բնագրում տեղ տեղ բաց են թողնված առանձին հատվածներ, գրիչը այդ արել է հետևելով նախագաղափար օրինակին. «Թողութիւն արարէք եղբայրք ա. օրինակն բնաւին չկայր, ա. տեղ տեղ թողած էր, ես այլ թողի, ողջ լերուք» (էջ 423բ), 18բ էջը դատարկ. տեղ՝ Ագուլիս («ի թաղս Խոզաձորոյ»). գրիչ՝ Գրիգոր. ժամանակ՝ 1637 թ.։

Հիշատակարան 1) էջ 37բ—38ա, ներքևի լուսանցքում. «Անմեղադիր լերուք եղբարք գրոյս սղալանացն, որ օրինակն երկու էր՝ ա. նոր էր, ա. հին, նորն ողալ էր, հինն եղծած էր»։

2) էջ 110բ—111ա, ներքևի լուսանցքում. «Անմեղադիր լերուք խոշորութեան և սղալանաց գրոյս եղբարք, որ օրինակն երկու էր՝ ա. նոր էր, ա. հին, նորն խիստ սղալ էր, հինն խիստ խառնաբրթոշ էր. ինչպէս որ մածունն, թանն, չորաթանն խառն լինի, ինչպէս ջոկուի, սոյնպէս այս օրինակս, հազիւ կարացայ ջոկել, իմ ստուգութիւնն մոռացայ, դու ներեայ իմ սղալանացս, աղիղ տէրտէրս»։

3) էջ 222բ—223ա. «Ո՞վ ընթերցօղք և լսողք յորժամ ընթեռնուք միտ դիք իմոյ բանիս, վասն օրինակի գրչիս, նախ եւ առաջին պատճառն՝ օրինակն Բ էր. երկրորդ՝ ա. հին, ա. նոր, երրորդ՝ նորն բնաւ չիք ստուգութիւն. չորրորդ՝ հինն բնաւ չիք սղալութիւն, հինգերորդ՝ հինն ամենևին եղծած. վեցերորդ՝ թղթերն խառն. եւթներորդ՝ կանոնքն խառնաբրթոշ էր, ութներորդ՝ դատաստանագիրն առաւել խառն, քան կանոնի գիրն. իններորդ՝ հազիւ կա-

բացայ աւարտել կանոնիս շարադրութիւնս եւ ստուգութիւնս մոռացայ. տասներորդ՝ խոշորութիւն ի թղթէն է, սղալութիւն օրինակէն է. մետասաներորդ՝ բամբասեն զիս, թէ երկարեաց գիրքն. երկոտասաներորդ՝ ոչ իմանան զիրս բանին եւ զպատճառսն լերկարելոյն. երեքտասաներորդ՝ առաւօտեան մինչեւ ցերրորդ ժամն հազիւ կարէի այնչափ իրարս արկանել մինչեւ ցԱԺ-ն ժամն գրէի.... Որպէս սկիզբն արասցուք դատաստանի գրիս զխառնաբրթոշն որպէս իրարս արկից ոչ գիտեմ, այլ դայն գիտեմ, որ հոգին սուրբ Աստուած առաջնորդէ եւ աւգնէ ինձ եւ ես գրեցից անվլապաղ եւ անտրտունջ ի փառս եւ ի պատիւ ամենասուրբ երրորդութեանն եղիցի. ամէն»։

4) էջ 423ր «Թողութիւն արարէք եղբայրք ա. օրինակն ընաւին չկայր, ա. տեղ-տեղ թողած էր, ես այլ թողի. ողջ լերուք»։

5) էջ 423ր—424բ»... Ես այնպէս վարանէի, կսկծալի արտասուէի, բայց մարդոյ ոչ յայտնէի, ես իմում անձին գլորէի եւ յԱստուած ապաւինէի, նոր աւրինակն ձախ կողմս դնէի ի գիրն հայէի շատ սխալ ի միջի տեսան[է]ի, յերեսս դարձուցանէի դէպի Աստուած ակնարկէի, հին օրինակն աջակողմս դնէի ստուգութիւն ի միջի տեսանէի սրտակաթ լինէի, բայց...[1] տեսանէի աւրինակին յետս դառնայի սիր[տս] խոցուով լցուէի, բայց հոգին սուրբ աղաչէի որ...[2] ամենայնիւ»։

Կանոնախմբերի ցանկը «Այս ինչ կայ ի գիրս կանոնացս» վերնագրով (այբբենական կարգով) գտնվում է 1աբ էջերում, առարկայական ցանկը՝ «Կարգադրութիւն գլխոց կանոնացս համաձայնութեան վասն պէսպէս խնդրոց» վերնագրով՝ 1ր—13ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 19ա—222բ էջերում։ Ձեռագրում տեղ-տեղ կան չընդօրինակված աեղեր, որոնց մասին նշված է 4-րդ հիշատակարանում. դա արդյունք է այն ձեռագրի, որից կատարել են F ձեռագրի ընդօրինակությունը։ Ձեռագրի մի շարք էջերի լուսանցքներում կան ավելացումներ գրչի կողմից կատարված։ Կանոնախմբերը չունեն համարակալում։

7. G № 2655. Կանոնագիրք, Դատաստանագիրք և կանոնական այլ նյութեր. Թերթեր՝ 303. մեծություն՝ 24×18,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ սկզբից և վերջից կան ընկած թերթեր, թուղթը խունացած է և կեղտոտ, կան ջնջումներ և վնասված էջեր, մի քանի անգամ վերանորոգված, տեղ-տեղ մելանը թափված. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դ.։ Կանոնախմբերի վերնագրերը և առարկայական ցանկերը, ինչպես նաև Առաքելական (Ա) կանոնախմբի մեծ մասը ընկած են։ Կանոնագիրքը գտնվում է 1ա—159բ էջերում։ Լուսանցքներում երբեմն հանդիպում ենք սրբագրություններ։ Ավելի շատ գործածում է օ տառը։ Անկանոն են և շատ հաճախ բացակայում են կանոնախմբերի և սրանց հոդվածների հերթական համարները։

8. H. № 2596. Կանոնագիրք. թերթեր՝ 238. մեծություն՝ 22,5×17,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. երկսյուն. ձեռագիրը վերանորոգված է, կան դատարկ էջեր՝ 1ա—3բ, 164աբ, 168աբ, 176ա, 238բ, իսկ 165ա—167բ և 169ա—177ա էջերը եղել են դատարկ, բայց հետագայում, ուրիշներ, նոտրագրով ավելացրել են պսակի վերաբերյալ մի բնագիր՝ «Կանոնք յաղագս պսակի արարեալ սրբոյն Բարսղի և Ոսկեբերանի» վերնագրով. գրիչ, տեղ՝

[1] Մեկ բառ եղծված։
[2] Մեկ բառ եղծված։

անհայտ. ժամանակ՝ XVII դար։ Կանոնախմբերի վերնագրեր և առարկայական ցանկեր չունի։ Առանձին էջերում հանդիպում ենք բնագրի սրբագրման դեպքերի։ Այս ձեռագիրն ընդօրինակված է G-ից։

9. I. № 8158, Կանոնագիրք. թերթեր՝ 338. մեծություն՝ 18,5×15,2. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ կազմը քայքայված, կան պոկված, ընկած, (սկզբից և միջից), պատառոտված, ցեցակեր թերթեր, մասնակիորեն վերանորոգված, առաջին ութ և վերջին ինը էջերը, որոնք համարակալված չեն, դատարկ են. գրիչ՝ Նիկոլ դպիր. տեղ՝ Կամենից. ժամանակ՝ 1635 թ.։ Ձեռագրում նախ դրված է առարկայական ցանկը, սկզբից թերի, 1ա—11ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եդեալ և այս կարգ և չափ գլխոցն» վերնագրով՝ 11բ—13ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 15բ—338ա։

10. J. № 3706, Կանոնագիրք. թերթեր՝ 232. մեծություն՝ 25,7×20. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. դատարկ էջեր՝ 1աբ, 231բ—232բ. հետագայում Կանոնագրքի առանձին հատվածների ընդգծում՝ կապույտ մատիտով, ձեռագրի 229բ—231ա էջերում XVIII—XIX դդ. կատարված նշում թե որ կանոնախումբը որ էջում է գտնվում։ Գրիչ՝ Խաչատուր դպիր. տեղ՝ Կամենից. ժամանակ՝ 1636 թ.։ Այս և նախորդ՝ I ձեռագրի գլխավոր հիշատակարանը նույնն է, միայն գրիչների, սրանց ծնողների, ուսուցիչների անունները և ժամանակն է փոփոխված։ Միևնույն ստաղձի վրա գրել են երկու գրիչներն էլ։ Այն օրինակը, որից ընդօրինակել են IJ ձեռագրերը, նույնն է. այդ երևում է երկու գրիչների հիշատակարանից՝ «Այլ և յիշեցէք զտէր Ներսէս քահանայն, որ զօրինակս միով բանիւ շնորհեաց, վասն որոյ զվարձս ի Քրիստոսէ առցէ» (J, էջ 228բ, I, էջ 237բ)։ Տեր Ներսեսի օրինակը գուցե եղել է T ձեռագիրը, ընդօրինակված 1621 թ. դարձյալ Կամենիցում։ Ձեռագրի սկզբում գրված է առարկայական ցանկը՝ «Ցանկն է միահամուռ կանոնիս» վերնագրով 2ա—13բ էջերում, իսկ կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եդեալ ե այս կարգ և չափ գլխոցն» վերնագրով՝ 13բ—14բ էջերում, այնուհետև հաջորդում է Կանոնագիրքը 15ա—229ա էջերում։

11. K. № 4403. Կանոնագիրք. թերթեր՝ 284. մեծություն՝ 19,5×14,3. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ կան պատառոտված էջեր, տեղ-տեղ մելանը թափված, դատարկ էջեր՝ 15բ, 282բ, 284աբ. գրիչ՝ Հովհաննես դպիր. տեղ՝ Ղարասու (այժ. Օքսենտ). ժամանակ՝ 1647 թ.։ Նախ դըրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է [միահա]մուռ կանոնիս» վերնագրով 1ա—15ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւնք կանոնաց եդեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 16ա—17ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 17ա—281բ էջերում։

12. L. № 4631. Կանոնագիրք. թերթեր՝ 292. մեծություն՝ 14,2×10,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. երկսյուն. վիճակ՝ լավ է պահպանված, դատարկ էջեր՝ 1աբ. գրիչ՝ Հովհաննես աբեղա. տեղ՝ Ղարասու (այժ. Օքսենտ). ժամանակ՝ 1649թ.։ Նախ դրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնքիս» վերնագրով՝ 2ա—15ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը «Շարադրութիւն կանոնաց եդեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 15ա—16ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 16բ—290ա էջերում։

13. M. № 5782. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 319. մեծություն՝ 20,7×14,7. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. վիճակ՝ տեղ-տեղ

կեղտոտված էջեր, լուսանցքներում երբեմն որոշ ուղղումներ, 319բ էջը դատարկ. գրիչ՝ Միքայել քահանա. տեղ՝ Ղարասու (սր. Օքսենտ). ժամանակ՝ XVII դար[1]։ Նախ գրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնիս» վերնագրով՝ 1ա—15ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը, անխորագիր, 15բ—16բ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 16բ—303 էջերում։ Այս և նախորդ երկու ձեռագրերում գլխավոր և չափածո հիշատակարանները նույնն են, միայն տարբեր է սրանց պատմական մասը։ Եվ քանի որ երեքն էլ ընդօրինակվել են Ղարասուում (սր. Օքսենա եկեղեցում), նշանակում է դրանք ընդօրինակվել են միևնույն ձեռագրից։

14. N. № 7580. Դատաստանագիրք և Կանոնագիրք. թերթեր՝ 147. մեծություն՝ 27×20. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ սկզբից, միջից և վերջից կան ընկած թերթեր, պատառոտված, կեղտոտված և վերանորոգված էջեր, տեղ-տեղ գիրը ջնջված. գրիչ՝ Ազարիա. տեղ՝ անհայտ. ժամանակ՝ 1651 թ.։ Կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եդեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով գտնվում է 59աբ էջերում. առարկայական ցանկը չի պահվել, ընկել է, հավանաբար վերջում լինելու պատճառով, իսկ Կանոնագիրքը՝ Շահապիվանի ժողովի կանոնախմբի ԺԵ հոդվածի վերջին մասից մինչև վերջ ընկած է, մնացածը գտնվում է 60ա—147ա էջերում։

15. O. № 3291. Դատաստանագիրք և Կանոնագիրք. թերթեր՝ 476. մեծություն՝ 20×15,5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր, երկսյուն. վիճակ՝ կան մաշված էջեր, դատարկ էջեր՝ 1աբ, 166բ, 476բ. գրիչ՝ Ազարիա դպիր և Հովհան քահանա, «որ բազում աշխատեցաւ ի վերայ կանոնգրքիս, Ե և Զ տետր տէր Յովհաննն գրեաց»[2] (էջ 471ա). տեղ՝ Ջուղա. ժամանակ՝ 1654թ.։ Կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եդեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով գտնվում է 167ա-168ա էջերում, առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնացս» վերնագրով ի տարբերություն մյուս ձեռագրերի, գտնվում է Կանոնագրքի վերջում՝ 441ա-457ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 168ա-469բ էջերում։ Առանձին էջերի լուսանցքներում, գրչի կողմից կատարված են ուղղումներ, այդպիսի մի բաց թողնված հատվածը (Նիկիայի ժողովի կանոնախմբի ԺԵ հոդված) ուղղելիս գրիչը 198ա էջի ներքևի լուսանցքում գրում է. «Թողութիւն արարէք հարք և եղբարք մոնթի դաս կուտալի Բ տող սխալեցայ»։

16. P. № 9298. Կանոնագիրք և կանոնական այլ նյութեր. թերթեր՝ 310. մեծություն՝ 20,3×16,2. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. վիճակ՝ կան քերված բառեր, տողեր 116ա, 126ա, 127բ, 133ա 159ա և այլն, պատառոտված էջեր, ջնջումներ, դատարկ՝ 1աբ, 286բ, 301բ. գրիչ, տեղ, ժամանակ՝ անհայտ. 310բ էջում 1662 թվականի հիշատակություն, նշանակում է ձեռագիրն ընդօրինակվել է մինչև 1662 թիվը, այլ խոսքով XVII դարում։ Կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եդեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով գտնվում է 2ա—3ա էջերում, առարկայական ցանկը՝ «Ցանկն է

[1] Ձեռագրի հիշատակարանում ժամանակի մասին կա հետևյալ տեղեկությունը. «Եղև գրաւ սուրբ գանձարանիս ի թվաբերութեանն հայոց ՌԺ (հաջորդ տառը՝ տասնավոր կամ միավոր և կամ երկուսն էլ չի գրված, բայց տեղը բաց է թողնված—Վ. Հ.)... ի հայրապետութեան տեառն տէր Յակոբ կաթուղիկոսին» (էջ 304աբ)։ Նշանակում է ձեռագիրն ընդօրինակվել է 1655—1680 թթ. շրջանում, Հակոբ Ջուղայեցու կաթողիկոսության օրով։

[2] Այսինքն ձեռագրի 215ա—239ա էջերը։

միահամուռ կանոնիս» վերնագրով, O ձեռագրի նման, գտնվում է Կանոնագրքի վերջում՝ 287ա—301ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 3ա—286ա էջերում։

17. Q. № 5894. Կանոնագիրք. թերթեր՝ 300. մեծություն՝ 18×14,5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր, միասյուն, վիճակ՝ կան խունացած էջեր. դատարկ՝ 15բ էջը. գրիչ՝ Միքայել քահանա. տեղ՝ «ի յաշխարհս Ղրիմաց ի քաղաքն»[1]. ժամանակ՝ 1664 թ.։ Նախ դրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնիս» վերնագրով՝ 1ա—14ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 14ա—15ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 16ա—299ա էջերում։ Ձեռագրում տեղ-տեղ բաց են թողնված առանձին բառեր, ըստ երևույթին նախագաղափար ձեռագրից այդ բառերը չեն կարողացել կարդալ։

18. R. № 2883. Կանոնագիրք. թերթեր՝ 208. մեծություն՝ 31,2×20,2. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ ձեռագրի թուղթը արդեն դեղնել է, կան դատարկ էջեր՝ 1ա—6բ, 199ա, 205ա—208բ. գրիչ՝ Հովհաննես աբեղա. տեղ՝ անհայտ. ժամանակ՝ 1665 թ.։ Կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով գտնվում է 7աբ էջերում, առարկայական ցանկ չունի, իսկ Կանոնագիրքը՝ 7բ—204բ էջերում։ Ձեռագրում հաճախ հապավման նշանը՝ պատիվը մոռացված է։ Շատ հաճախ շփոթված են ա և ւ, ե և ն տառերը, ըստ երևույթին այս ձեռագիրը ընդօրինակվել է մի նոտրագիր ձեռագրից։ Բառերի աղճատումները այստեղ շատ են, նույն սխալ ընթերցումն են տալիս QR ձեռագրերը։ Կանոնախմբերի հոդվածները համարակալված չեն։

19. S. № 3097. Կանոնագիրք. թերթեր՝ 362. մեծություն՝ 20×14,8. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ կան դատարկ էջեր՝ 1աբ, 17բ—18բ 356բ—362բ. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ մինչև 1681 թ.։ Նախ դրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնիս» վերնագրով՝ 2ա—15 էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 15բ—17ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 19ա—355բ էջերում։ Հաճախ բառերի հապավման նշանը՝ պատիվը չի նշված, ընթերցումներով ավելի մոտ է KLMQT ձեռագրերին։

20. T. № 9488. Կանոնագիրք. թերթեր՝ 369. մեծություն՝ 19,5×16. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ կան կազմահան, դատարկ էջեր՝ 18բ—22բ, պատառոտված և ապա վերանորոգված, ջնջակեր էջեր, մի շարք էջերում կան առանձին հատվածների մատիտով ընդգծումներ, նշումներ. գրիչ՝ Գրիգոր. տեղ՝ Կամենից. ժամանակ՝ 1621 թ.։ Նախ դրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնիս» վերնագրով՝ 1ա—18ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 23ա—24բ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 25ա—367բ էջերում։ Գլխավոր և չափածո այն հիշատակարանները, որ գտնում ենք KLM ձեռագրերում, հանդիպում ենք նաև այստեղ, միայն փո-

---

[1] Բնագրում հաջորդ բառը՝ քաղաքի անունը բաց է թողնված։ Բնագրում գրված է «Ընդ հովանեաւ սուրբ Աւգսէնտին» (էջ 299բ), որը պետք է հասկանալ Ղարասուն։ Նշանակում է M և Q ձեռագրերը ընդօրինակել է նույն Միքայել քահանան։ Քանի որ և չափածո և գլխավոր հիշատակարանը նույնն են, ինչ KLM ձեռագրերինը, բացառությամբ ժամանակի և գրչի մասին հիշատակության, կարող ենք եզրակացնել, որ KLMQ ձեռագրերը հավանաբար միևնույն օրինակից են ընդօրինակվել։

փոխված է գլխավոր հիշատակարանի պատմական մասը։ T ձեռագրից հավանաբար ընդօրինակվել են $<^{\text{II}}_{\text{KLMSQ}}$ ձեռագրերը։ Ձեռագրում նկատվում են սրբագրության հետքեր, կատարել են ջնջումներ և ավելացումներ։ Դրանք արել են գրիչը և ուրիշներ (61բ, 73ա, 85ա, 90բ, 93բ էջերը և այլն)։ Կատարված այդ ուղղումները անցել են այլ ձեռագրերի՝ IJKLMSQ։

21. U. № 3148. Կանոնագիրք. թերթեր՝ 188. մեծություն՝ 20,2×15. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ վերջից կան ընկած թերթեր, հետագայում կազմելու ժամանակ ձեռագիր թերթերը կտրելիս, վերևի և ներքևի լուսանցքները խորն են կտրվել. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար ?։ Կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոցն» վերնագրով գտնվում է 1աբ էջերում, առարկայական ցանկը, անխորագիր՝ 1բ—8ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 8բ—188բ էջերում։ Գրիչը Լ-ի փոխարեն հաճախ գործածում է ղ։

Այս ձեռագիրը ընդօրինակված է A ձեռագրից։ Դա երևում է նրանից, որ A ձեռագրի 312ա էջի փոքրիկ հիշատակարանը, որն անմիջապես հաջորդում է Մելիտոն եպիսկոպոսի մի նամակին, նույնությամբ և միևնույն տեղում գտնվում է № 3148 ձեռագրում։

22. V. № 3099. Կանոնագիրք. թերթեր՝ 282. մեծություն՝ 19×14,5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ սկզբից ունի ընկած թերթեր, վերանորոգված էջեր։ 99-րդ թերթը դարձյալ նոտրագիր, բայց գրել է հավանաբար մեկ ուրիշը։ Այդպես է նաև 12-րդ թերթը։ Դատարկ էջեր՝ 1ա—7բ, 13աբ, 274բ—282բ. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ մինչև 1667 թ.։ Նախ դրված է առարկայական ցանկը, սկզբից ընկած՝ 8ա—20բ էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյս» վերնագրով՝ 20բ—22ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 22ա—274ա էջերում։ Գրիչը Լ-ի փոխարեն հաճախ գործածում է ղ-ն։ V ձեռագրի գրչությունը շատ նման է S-ի գրչության, գուցե ընդօրինակել է միևնույն գրիչը։

23. X. № 449. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 254. մեծություն՝ 31,2×19,5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. դատարկ էջեր՝ 1ա—5բ, 180բ, 210ա—254բ. այդ էջերից 210ա—217ա-ի վրա 1884 թ. մայիսի 30-ի թվով Մ. Սմբատյանցը թողել է մի հիշատակարան։ Վիճակ՝ կան վնասված էջեր, մելանը տեղ-տեղ ծակել է թուղթը. գրիչ՝ Գալուստ դպիր Ջուղայեցի. տեղ՝ Աստրախան. ժամանակ՝ 1757 թ.։ Նախ դրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնքիս» վերնագրով՝ 6ա—13ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 13աբ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 13բ—178ա էջերում։

24. Y. № 3297. Կանոնագիրք և Դավիթ-բեկի պատմություն. թերթեր՝ 171. մեծություն՝ 21×17.3. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. դատարկ էջեր՝ 1աբ, 133ա, 136ա—137բ, 166ա—171բ։ Կանոնագրքի գրիչ՝ Վարդան վարդապետ. տեղ՝ Պետրոպոլիս. ժամանակ՝ 1780 թ.։ Նախ դրված է առարկայական ցանկը՝ «Ցանկ է միահամուռ կանոնքիս» վերնագրով՝ 2ա—9ա էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 9աբ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 9բ—136բ էջերում։

Այս ձեռագիրը ամենայն հավանականությամբ ընդօրինակված է նախորդ՝ X ձեռագրից։

25. Z. № 7317. Կանոնագիրք. թերթեր՝ 334. մեծություն՝ 19,7×15. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. վիճակ՝ լավ է պահպանված, կան մի քանի կեղտոտված էջեր։ Կան ուղղումներ և ավելի ուշ շրջանում մատիտով կատարված բաց թողնված առանձին բառերի ավելացումներ։ Գրիչ՝ Հովհաննես սարկավագ. տեղ՝ անհայտ. ժամանակ՝ 1652 թ.։ Ձեռագիրը կազմելիս սկզբի էջերը սխալմամբ տեղադրել են վերջում, այդ պատճառով տարրկայական ցանկը՝ «Ծանկ է միահամուռ կանոնքիս» վերնագրով դրված է 315ա—329բ էջերում, կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ և այս կարգ և չափ գլխոյն» վերնագրով՝ 329բ—331ա էջերում, Առաքելական (Ա) կանոնախմբի առաջաբանը և ցանկը՝ 331ա—334ա էջերում։ Կանոնագիրքը՝ 1ա—314բ էջերում։

26. W. № 3059. Դատաստանագիրք, «Գիրք Նոմոսի» և Կանոնագիրք. թերթեր՝ 465. մեծություն՝ 21,3×17. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր (XIX դար). միասյուն. գրիչ՝ Հովսեփ Տեր Հովսեփյան. տեղ՝ Թավրիզ. ժամանակ՝ 1843 թ.։ «Գիրք Նոմոսի»-ի վերջում (էջ 147բ) նշված է. «Հին գաղափար գրոյս գրեցեալ ի թուին ՌՃԲ (1653)»։ Այս տեղեկությունը արդյո՞ք վերաբերում է միայն Դատաստանագրքին, «Գիրք Նոմոսի»-ին, թե նաև Կանոնագրքին։[1]

Կանոնագիրքը գտնվում է ձեռագրի 148ա—428բ էջերում։ Ձեռագրի վերջում՝ 429ա—463ա էջերում՝ «Ծանկ համօրեն կանոնացս» վերնագրով, տրված է Դատաստանագրքի և Կանոնագրքի հոդվածների ցանկը, թե որ հոդվածը ձեռագրի որ էջում է գտնվում։ Դատաստանագրքի հոդվածների ցանկը (Ներածություն՝ Ա—Է + Դատաստանագիրք Ա—ՄԾԴ) 261 վերնագրերի տակ տրված է 429ա—434բ էջերում, «Գիրք Նոմոսի»-ն՝ 144 վերնագրերի տակ՝ 434բ—438բ էջերում. իսկ Կանոնագրքի յուրաքանչյուր կանոնախմբի հոդվածների ցանկը, որը, սովորաբար մյուս ձեռագրերում, գտնվում է յուրաքանչյուրն իր կանոնախմբից անմիջապես առաջ, տրված է վերջում, իրար հետևից, բայց առանձին-առանձին, 438բ—463ա էջերում։

Մինչև Հովհ. Օձնեցու կանոնախմբի հոդվածների ցանկը ներառյալ, կազմված է մյուս ձեռագրերի ցանկերին համապատասխան, իսկ դրանից հետո եղածը հետագայում կազմել են ուրիշներ, գուցե և W ձեռագրի գրիչը։ Ձեռագրում չի պահվել կանոնախմբերի ցանկ։

Հատված հիշատակարանից, էջ 464ա. «...զոր և սկսեալ ի 1843 յամի մարդեղութեան տեառն մերոյ վեցն փետրվարի[2] և աւարտեալ ի նոյն 1843 ամի և յուլիսի ամսոյ 21-ին, ի Դաւրէժ, առանց յաւելման կամ պակասեցուցման, զի ի յընդօրինակելն մեր տեսաք ինչ-ինչ վրիպակս և սխալանս, և ուրեք-ուրեք գեղջկական և աշխարհաբառբառս ի գործ եդեալ, անպատեհ վարկուցեալ ոչ կամեցաք զնոսին ուղղագրել և ըստ կարգի յօրինել յանիծից և ի նզովից հարցն սրբոց երկնչելով։..»։

27. Ô. № 3065. Կանոնագիրք. թերթեր՝ 228. մեծություն՝ 20,8×16,2.

---

[1] Ձեռագրի 109բ էջում, Դատաստանագրքից հետո, գրված է նախագաղափար ձեռագրի մի այլ հիշատակարանը. «Ի թուին ՌՃԲ (1653) գրեցեալ ի մարտի ամսոյ 10-ին»։

[2] «Վեցն փետրվարի» բնագրի տեղ լուսանցքում, ավելացրել է գրիչը։

նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ Կանոնագրքի սկզբի ընդարձակ մասը, ներառյալ մինչև Սարդիկեի ժողովի կանոնախումբը, ընկած է, դատարկ էջեր՝ 211բ—214բ։ Գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVIII դար ?։ Կանոնախմբերի ցանկ չունի. առարկայական ցանկը՝ «Ցանգ կիրքոյս միահամուռ աստ եդաք, զի որոնեալ գտանիցիք համարօվք, որ են այս» (այբբենական կարգով) վերնագրով գտնվում է ձեռագրի վերջում՝ 215ա—228ա էջերում։ Ցուցաքանչյար վերնագրի դիմաց հոդվածի համարները նշված են բուն արաբական թվանշաններով, թեև ձեռագրում հոդվածների համարները դրված են հայկական տառերով, օրինակ՝ «Ընդ արենյս պարտ է աղօթել \, VՐV» (էջ 215ա), այսինքն տես Ա, ՋԼԻ հոդվածները։ Կանոնագիրքը գտնվում է ձեռագրի 1ա—211ա էջերում։ Ուղղագրությունը այստեղ սովորականի նման չէ՝ կ-ի փոխարեն գրում է գ, օրինակ՝ կարգ-ի փխ. գարգ, բ-ն՝ պ-ը, բաշխեսցին-ի փխ. պաշխեսցին, դ-ն՝ տ, դրամ-ի փխ. տրամ և այլն։

28. ը № 1770. Զանազան նյութեր և Կանոնագիրք. թերթեր՝ 278. մեծություն՝ 18,4×14. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր և նոտրագիր. միասյուն. վիճակ՝ կան պատառոտված, կեղտոտված էջեր, վերանորոգված է, ընկած թերթերը նորից արտագրված 1731 թ. Հակոբ Ջուղայեցու կողմից (էջ 192բ)։ Կազմելու ժամանակ վերևի և ներքևի լուսանցքները սկզբի թերթերում կտրվել են, ունի պոկված թերթեր։ Դատարկ էջեր՝ 1ա—3բ, 12ա—16բ, 115աբ, 133բ—135բ, 193աբ, 124բ, 273բ—278բ. գրիչ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար։ Ձեռագրի 10բ—11աբ էջերում տրված է ձեռագրի բովանդակությունը՝ «Ցանկ գլխոց երկու հատորի գրոյս, որոյ առաջի մասն են քարոզք և երկրորդն են հարցմունք, կանոնք այլև քարոզք և խրատք»։ Ձեռագրի 35ա—110բ էջերում գտնվում են Կանոնագրքի Ա—ԺԵ կանոնախմբերը միայն։ Առարկայական և կանոնախմբերի ցանկերը չեն պահվել։

29. ս № 3141. Կանոնագիրք. թերթեր՝ 168. մեծություն՝ 21,3×17,3. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն, դատարկ էջեր՝ 155բ—168բ. գրիչ տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XIX դար։ Կանոնախմբերի և առարկայական ցանկեր չունի։ Հոդվածների ընդհանուր համարները նշված են արաբական թվանշաններով, իսկ մասնավոր համարակալում չի դրված։ Սխալ ընթերցումներ և չիքեր անչափ շատ են։

Բ խմբի ձեռագրեր.

30. a. № 7615. Կանոնագիրք և կանոնական այլ նյութեր. թերթեր՝ 286. մեծություն՝ 18,5×13,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ սկզբից, միջից և վերջից կան ընկած թերթեր, կազմը քայքայված, կան եղծված տողեր, վերանորոգված է. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XIV—XV դարեր?։ Հավանաբար ունեցել է կանոնախմբերի ցանկ, որը, սակայն, ընկած է. առարկայական ցանկի սկիզբը ընկած է, մնացածը գտնվում է 2ա—14բ էջերում։ Այս ցանկի վերջում գտնում ենք ցանկին վերաբերող հիշատակարան. «Գումարեցան ճառքս և կանոնքս և բովանդակեցան համարով ՄՂ և վկայութիւնք, որ աստի կան ՌՇԻԷ... ՔԱ թվին» (էջ 14բ)։ Կանոնագիրքը գտնվում է ձեռագրի 15ա—262ա էջերում։

31. b. № 8380. Կանոնագիրք. թերթեր՝ 266. մեծություն՝ 18,3×13,7. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. 1ա, 265բ, 266բ էջերում հետագայի զանազան նշումներ, դատարկ՝ 266ա. գրիչ՝ Գրիգոր երեց. տեղ՝ Կոլոնիա («որ այժմ ասի Ղարահիսար»). ժամանակ՝ 1632 թ.։ Ունի կանոնախմբերի

երկու ցանկ՝ ա. «Ցանկ սուրբ գրոցս» վերնագրով՝ 1բ—2բ էջերում գրել է մեկ ուրիշը, նոտրագրով. բ. անխորագիր 3ա—4ա էջերում, գրել է գրիչը: Ձեռագրերում եղած կանոնախմբերի հաջորդական դասավորությունը ավելի համապատասխանում է առաջին ցանկին: Ըստ երևույթին ձեռագիրն ընդօրինակելուց հետո մեկ ուրիշը կանոնախմբերի հաջորդականությունը նույնությամբ նորից գրանցել է առաջին դատարկ էջերում. Կանոնագիրքը գտնվում է 14ա—262բ էջերում. առարկայական ցանկը, անխորագիր՝ 4ա—14ա էջերում: Այս ձեռագրում թեև երբեմն հանդիպում ենք ընտիր ընթերցումների, բայց ընդհանուր առմամբ աղավաղումները շատ են: Բառամեջ հաճախ գործածում է յ տառը, օրինակ՝ մայրայքաղաք: Բարբառային արտասանությամբ միշտ գրում է ծաճառ, փոխանակ ծաճր: Կան անուշադիր ընդօրինակության դեպքեր, օրինակ՝ վըռիւ փխ. վճիռ (էջ 255, տող 12), խռճել, փխ. առճել (էջ 214, տող 6) և այլն:

32. c. № 8964. Կանոնագիրք, Դատաստանագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 250. մեծություն՝ 18×13,5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ ունի եղծված տողեր, որոնք նորոգված են, դատարկ էջեր՝ 14բ, 191ա—192ա, 203բ, 207բ. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XIV—XV դարեր?: Կանոնախմբերի ցանկը (անխորագիր) գտնվում է 1ա—2բ էջերում: Ցանկի վերջում կա այսպիսի հիշատակություն. «Միաբան գումարեցաւ գլուխ կանոնացս համարով ՀԸ[1]: Եւ բովանդակ վկայութիւնքն որ աստ կան միաբան ՌՇԻԷ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ» (էջ 2բ): Առարկայական ցանկը (անխորագիր) գտնվում է 2բ—14ա էջերում: Ցանկի վերջում կարդում ենք այսպիսի մի հիշատակություն ևս. «Գումարեցան ճառքս և կանոնքս և բովանդակեցան համարով ԲԾԴ. և վկայութիւնք որ աստ կան ՌՇԻԷ» (էջ 15ա): Կանոնագիրքը գտնվում է 15ա—191ա էջերում: Ընթերցումներով մոտենում է Bd ձեռագրերին: Աթանասի կանոնախմբի ցանկում թեև մի քանի վերնագրերի հաջորդականությունը տարբեր է Կանոնագրքի ունեցած համապատասխան ցանկից, բայց բուն ձեռագրում այդ հոդվածների հերթականությունը համընկնում է Կանոնագրքի ունեցածին:

33. d. № 2676. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 221. մեծություն՝ 27,5×18,7. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ վերջից կան ընկած թերթեր, կեղտոտված և դանակահար էջեր, նորոգված 1750 թ. գրիչ՝ Աստվածատուր. տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար: Կանոնախմբերի ցանկը՝ «Աւգնեա Յիսուս կարգ և սահմանադրութիւն կանոնաց կարգեալ ի սրբոց առաքելոց և հայրապետացն. լաւ և ընտիր և հաց անմահական, ով ոք կարող է ճաշակել» վերնագրով գտնվում է 1ա—2ա էջերում, ուր նշված են 76 կանոնախմբերի վերնագրեր, բայց բուն ձեռագրում ընդօրինակված են 38 կանոնախումբ՝ ներառյալ «Կանոնք Յոհաննու Մանդակունոյ Հայոց կաթուղիկոսի գլուխս Ը» կանոնախումբը: Այս ցանկի վերջում սրան և առարկայական ցանկին վերաբերող մի հիշատակություն կա՝ «Միաբան գում[արեցաւ] գլուխ կանոնացս համարով ՀԸ և բովանդ[ակ] վկայութիւնք, որ աստ կան միաբան ՌՇԻԷ ի փառս Աստուծոյ մեր[ոյ]»[2]: Վերջինիս

[1] Այս ցանկում թեև նշված է 78 կանոնախմբի վերնագիր, բայց բուն ձեռագրում ընդօրինակված է մինչև «ԽՋ. Սրբոյն Եղիշէի ի կանոնաց գրոց, վասն դիւահարաց» կանոնախումբը ներառյալ:

[2] Էջ 1ա: Այստեղ թեև նշում է ՀԸ, բայց ցանկում նշված է ՀԶ վերնագիր:

հաջորդում է դարձյալ առարկայական ցանկի վերաբերյալ մի ծանուցում՝ «Նախադրութիւն կարգեալ կանոնացս կարմիր և Ֆուխ գրով է, կարմիրն ճառին համարքն է[1] և թուխն քանիաւնութիւնք վկայութեան[2] կանոնացս է» (էջ Հբ)։ Այս հիշատակությունը կա նաև նախորդ C ձեռագրում, էջ 2բ։ Այնուհետև գտնվում է առարկայական ցանկը. «Արդ այս ինչ կարգեալ և եղեալ է աստ» վերնագրով՝ 2բ—10ա էջերում, այդ ցանկը ավարտվում է հետևյալ հիշատակությամբ. «Գումարեցան ճառքս և կանոնքս և բովանդ[ակ]եցան համարով ՄՂ և վկայութիւն որ աստ կան ՌՇԻԷ» (էջ 10ա)։ Իսկ Կանոնգիրքը տեղավորված է ձեռագրի 10ա—147ա էջերում։

34. e. № 783. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 344. մեծություն՝ 21,6×14,8. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր (Կանոնագիրքը), բոլորագիր, մինչև 253ա էջը. երկսյուն, 255ա—289բ էջերը միասյուն, մնացածը դարձյալ երկսյուն. վիճակ՝ կան պատռված թերթեր, դատարկ էջեր՝ 1ա—4բ, 198բ—199բ. 201ա—204բ, 208բ—312բ, 333բ—334բ, 341ա—344բ. գրիչ՝ Աբրահամ երեց, տեղ՝ որ. Գարսամի վանք. ժամանակ՝ 1605 թ.։ Կանոնախմբերի ցանկը (անխորագիր) գտնվում է 5աբ էջերում, ունի 46 կանոնախմբերի վերնագրեր, այդքան էլ կանոնախումբ բուն ձեռագրում։ Առարկայական ցանկը (անխորագիր) գտնվում է 6ա—13բ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 13բ—198ա էջերում։

35. ſ. № 8006. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 317. մեծություն 21,6×14,5. նյութ՝ թուղթ՝ առաջին երկու և 294—300, 312—315 թերթերը՝ կապտավուն. գիր՝ նոտրագիր. միասյուն. վիճակ՝ ձեռագրում կան պակաս տեռեր, դա արդյունք է ընդօրինակած ձեռագրի պակասավոր լինելուն. գրիչը նման տեղերը նկատելով ձեռագրի տարբեր էջերի լուսանցքներում նշում է՝ «Բ թուղթ անկեր է» (էջ 229ա), «Բ թուղթ այլ ի հոս ընկեր է» (էջ 235ա) «Բիչ մի պակաս կայ» (էջ 239բ), «Պակաս է» (էջ 258ա) և այլն, նորոգված է, կան դատարկ էջեր՝ 19բ—20բ, 300բ, 303աբ. գրիչ՝ Սարգիս. տեղ՝ Ղրիմ. ժամանակ՝ 1611 թ.։

Հիշատակարան 1) էջ 299բ. «Արդ՝ այս գեղեցկալարմար տառիցըս ցանկացող եղեալ ես թըշուառականս և ամենամեղըս և եղկելի Սարգիս, սակայն անմըտաւարժ վարդապետական արհեստից կամեցայ ըստանալ զսալ ինձ մըխիթարութիւնն մարմընոյ և լիշատակ հոգոյ. սակըս ախքատութեանն դգըրչութեանն արուեստաւորոք ոչ կոչեցի, ի պէտըս հարկիս այսորիկ ես ինձէն իմովըս անյօժարութեամբ և մեծաջան աշխատութեամբ ըսկիզըն արարի լերկուց ընտիր օրինակաց ոչ ածեալ ըզմտաւ ղտըխմարութիւնն գրչութեանն, զի սէր և յամենայնի յաղթէ...»։

2) էջ 2բ. «Այս կանոնգիրքըս գըրվիլ է Ղրիմ թվին Հայոց ՌԿ (1611)-ին, մէկ կանոն ալ տեսի գրվիլ է ՌՃԻԹ (1680) թվին Ղրիմ, Յակոբ վարդապետ Ղըըմեցի աշակերտ Գրիգոր վարդապետի և քաջ դիտապետի Եզընկացոյ»։

3) էջ 105ա, ձախ լուսանցքում կարմիր թանաքով. «Այս Գ գլուխս[3] ոչ ցանկն կայ և ոչ Ղարասուի կանոնքն»։

4) I ա. պահպանակ «Այս կանոնագիրք|ս| գուչէի ի գուչ կու թալլէին անարգ ||| և ես առի սիրով կու |||»։

[1] Իմա առարկայական ցանկի վերնագրերի համարները։

[2] Իմա կանոնախմբերի հոդվածների ընդհանուր համարները։

[3] Խոսքը վերաբերում է Աթանասի կանոնախմբի վերջում մի քանի ձեռագրերում ավելացված երկու հոդվածներին (տես համապատասխան ծանոթագրությունը)։

5) I ք. պահպանակ. «Թվին ՊԴ (1355) գրեցաւ զայս կանոն Մարըդվանի ||| գեղի Աստուծածնայ վանքըն, Ղրիմ բերի չինքսէցի առաջնորդ Ըստէբան? վարդապետին ըլվի վասըն յիշատակ»[1]։

Ձեռագիրը թեև գեղեցիկ գրչություն չունի, սակայն հաճախ տալիս է լավ ընթերցումներ։ Ունի կանոնախմբերի երկու ցանկ՝ առաջինը, որը գտնվում է 1ա—1դ էջերի վրա, և անխորագիր է, կազմվել է հետագայում և ձեռագիրը կազմելիս, թերթերը ետ և առաջ են դրված. երկրորդը՝ «Այս կանոնքըրքիս համայն ցանկն է» վերնագրով գտնվում է 1ե—2ա էջերում, առարկայական ցանկը (անխորագիր)՝ 3ա—19ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 21ա—299բ էջերում։ Կանոնախմբերի ցանկում, չհաշված Հովհ. Օձնեցու հիշատակարանը, նշված է 45 կանոնախմբերի վերնագրեր, իսկ ձեռագրում պահվել է 44, չի ընդօրինակվել «Աւանդութիւնն Հրէից վասն ողորմութեանն» կանոնախումբը՞։ Ձեռագրում ծաճր բառը միշտ գրված է ծաճրր։

36. g, № 5148. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 275. մեծություն՝ 21,3×15,2. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր (զանազան). երկսյուն. վիճակ՝ կան ընկած, պոկված թերթեր, դատարկ էջեր՝ 170բ, 276բ. ձեռագրում կան պակաս տեղեր, որ արդյունք է նախագաղափար օրինակի պակասավոր լինելուն. գրիչը 159ա էջի լուսանցքում գրում է. «Թուի թէ այս տեղս պակաս է և յօրինակէն է որ չմեղադրես»։ Գրիչ՝ Կարապետ Եվդոկիացի, Ստեփաննոս. տեղ՝ Եվդոկիա. ժամանակ՝ 1618 թ.։ Կանոնախմբերի ցանկը՝ «Ցանկ գրոցս Աւգնեա Յիսուս» վերնագրով գտնվում է 1աբ էջերում, առարկայական ցանկը (անխորագիր)՝ 2ա—9բ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 9բ—169բ էջերում։ Ունի այն սխալ ընթերցումները, որ տալիս է e ձեռագիրը։

37. h. № 3368. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 279. մեծություն՝ 19,5×14,5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ կան պոկված, պատառոտված, ընկած թերթեր, դատարկ էջեր՝ 216բ—220ա. գրիչ՝ Կիրակոս. տեղ՝ Թեքիրդաղ. ժամանակ՝ 1639։ Կանոնախմբերի ցանկը ընկել է, առարկայական ցանկը (սկզբից ընկած) գտնվում է 1ա—5բ էջերում, իսկ Կանոնագիրքը (սկզբից ընկած)՝ 6ա—216ա էջերում[3]։

38. i. № 656. Կանոնագիրք. թերթեր՝ 122, մեծություն՝ 19,5×14,4. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. դատարկ էջեր՝ 1ա—5բ, 110ա, 111ա—122բ. գրիչ՝ Հովհաննես. տեղ՝ անհայտ. ժամանակ՝ 1661 թ.։ Կանոնախմբերի ցանկը՝ «[Ս]արագրութիւն կանոնաց եղեալ այս չափ և այս չափ գլխոցն» վերնագրով գտնվում է 6աբ էջերում, առարկայական ցանկը (անխորագիր)՝ 6բ—12բ էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 12բ—109բ էջերում։ Կանոնախմբերի ցանկում նշված է 40 կանոնախմբի վերնագիր, իսկ ձեռագրում պահվել է մինչև 28-րդ՝ «Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ, գլուխ Ե» կանոնախումբը, մնացածը ինչ-ինչ պատճառներով չի ընդօրինակվել։ Նույն բանը տես նաև t ձեռագրում։

39. k. № 654. Կանոնագիրք. թերթեր՝ 292. մեծություն՝ 20×14,4. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. վիճակ՝ դատարկ էջեր՝ 1ա—5բ, 287ա—292բ.

[1] Վերջին երկու հիշատակարանները հավանաբար չեն վերաբերում I ձեռագրին։

[2] Դրա փոխարեն ձեռագրի 304ա—312ա էջերում գտնվում է Հակոբ Ղրիմեցու «Ցագադըս պըսակի ամուսնացելոց» բնագիրը, իսկ 294ա—297բ էջերում Շահապիվանի ժողովի կանոնախմբի առաջաբանը (սկզբից թերի) և Ա հոդվածը (վերջից թերի)։

[3] Այս ձեռագիրը նկարագրված է Ֆ. Ն. Ֆինկի կողմից (տես «Ցուցակ Տփխիսեցի Արդար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի», Լայպցիգ, 1903, № 1, էջ 1—39։

գրիչ՝ Աստվածատուր քահանա. տեղ՝ Բերիա. ժամանակ՝ 1671 թ.։ Կանոնախմբերի և տարեկալական ցանկերը չեն ընդօրինակված։ Այս ձեռագրում ընդհանուր առմամբ շարահյուսությունը պարզեցված է։ Կանոնախմբերին նախորդող հոդվածների ցանկերը էականորեն տարբերվում են Հովհաննես Օձնեցու կազմածից։ Ճիշտ նույն ձևով են նաև մրս ձեռագրերը։ օ-ի փոխարեն սովորաբար գրված է ու։ Այդ բանը հանդիպում ենք նաև մս ձեռագրերում։

40. Լ. № 8938. Կանոնագիրք, Դատաստանագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 498. մեծություն՝ 21,1×15. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. դատարկ էջեր՝ 12բ, 219ա—220բ, 245բ, 295բ, 309բ—310բ, 489աբ, 498աբ. գրիչ՝ Ներսես. տեղ՝ անհայտ. ժամանակ՝ մինչև 1685 թ.։ Կանոնախմբերի ցանկը «Շարայրութիւն կանոնաց և եդեալ այս չափ և այս չափ և կարգեալ գլխոցն» վերնագրով գտնվում է 1աբ էջերում, տարեկալական ցանկը (անխորագիր)՝ 1բ—10ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 10ա—218բ էջերում։ Կանոնախմբերի ցանկում նշված է 40 վերնագիր, իսկ բուն ձեռագրում գտնում ենք 63 կանոնախումբ։ Ձեռագրում շատ հաճախ գործածված է բառամեջ յ տառը, օրինակ՝ մայրայքաղաք, մայբերեն, հաճախ հանդիպում ենք սխալ ընթերցումների։ Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ցանկը նոր է կազմվել և պարզեցված է. այդպես է նաև հօ ձեռագրերում։

41. Մ. № 2677. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 306. մեծություն՝ 28,5×20,5. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր, 223ա էջից նոտրագիր. միասյուն. վիճակ՝ 68—70 թերթերը ներքևի լուսանցքից խորը կերպով կտրված. գրիչ՝ Ավետիք քահանա. տեղ՝ Բերիա. ժամանակ՝ 1697 թ.։ Նախ գրված է տարեկալական ցանկի բովանդակությունը 26 վերնագրով՝ 1աբ էջերում, ապա կանոնախմբերի ցանկը՝ «Ցանկ գլխավոր կանոնացս» վերնագրով՝ 2ա—3բ էջերում, իսկ տնտեսև տարեկալական ցանկը «Ցրուացանկ է սրբոց կանոնացս» վերնագրով՝ 3բ—19ա էջերում, համապատասխան 1աբ էջերում նշված բովանդակության վերնագրերին։ Այդ ցանկը տարբերվում է մյուսներից։ Կանոնագիրքը գտնվում է 19բ—283բ էջերում։

42. Ո. № 778. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 410. մեծություն՝ 25,8×19,4. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. միասյուն. վիճակ՝ կան պոկված թերթեր՝ 34, 35. դատարկ էջեր՝ 34ա, 404ա—410բ, առանձին հատվածներ ընդգծված են մատիտով. գրիչ՝ Մկրտիչ. տեղ՝ Լով. ժամանակ՝ 1635թ.։

Հիշատակարան, էջ 291բ, «...Զի որք կարդալով օգտիք և կամ աւրինակէք ի սմանէ՝ մի մոռանալք յիշել ի Քրիստոս զկառաչ անուանեալ տէր Զաքարիայն, որ բազում աշխատութեամբ և ջատագովութեամբ պարզեաց և սրբագրեաց զկանոնս, և յաւելեալ ի նոյն ցանկ գեղեցիկ նորայարմար ի վերայ այբուբենի, վասն դիւրաւ գտանելոյ կամեցողին զխնդրելին իւր...»։

Նախ դրված է տարեկալական ցանկը՝ «Ցանկ է կանոնի» վերնագրով 1ա—34բ էջերում։ Այն կազմված է այբբենական կարգով և տարբերվում է մյուսներից։ Ապա հաջորդում է կանոնախմբերի ցանկը «Շարադրութիւն կանոնաց եդեալ և այս կարգ և չափ գլխոցն» վերնագրով՝ 35բ—36բ էջերում։ Կանոնագիրքը գտնվում է 37ա—289բ էջերում։ Առանձին կանոնախմբերի հոդվածների ցանկերը, որոնք անմիջապես նախորդում են կանոնախմբերին, երբեմն կազմված են նոր և ընդարձակ ձևով (Աթանասի կանոնախումբ)։ Այս ձեռագիրը միանման ընթերցումներով ավելի մոտ է Ս ձեռագրին։ Ձե-

ռագրում խտրություն չի դրվում աւ-ի և օ-ի միջև, գործածված են երկուսն էլ։ Աստիճան-ը միշտ գրվում է հնագույն ձևով՝ աշտիճան։

43. օ. № 660. Կանոնագիրք. թերթեր՝ 270. մեծություն՝ 17×11,8. նյութ՝ մագաղաթ. գիր՝ բոլորագիր. երկսյուն. վիճակ՝ կազմը պոկված, սկզբի մեկ պրակը՝ 14 թերթ ընկած, մագաղաթը տեղ-տեղ դեղնած, «Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի» կանոնախումբը վերջից թերի. չի ընդօրինակվել. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար։ Կանոնախմբերի ցանկը չի պահվել։ Առարկայական ցանկը (անխորագիր) գտնվում է 1ա—4ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 4բ—270բ էջերում։ Կանոնագրքի տված ընթերցումներից այս ձեռագիրը զգալի շեղումներ ունի Աթանասի և Բարսեղի կանոնախմբերում։ Ձեռագիրն ընդհանուր առմամբ մոտ է hl ձեռագրերին։

44. բ. № 3544. Կանոնագիրք. թերթեր՝ 299. մեծություն՝ 19,3×14. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր. երկսյուն. վիճակ՝ կան պոկված թերթեր, դատարկ էջեր՝ 4բ—5բ, 291բ—299բ. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար։ Կանոնախմբերի և առարկայական ցանկերը չեն ընդօրինակված։ Ունի այն բոլոր կանոնախմբերը, ինչ որ m ձեռագիրը։ Աւ և օ տառերը գործածում է խառն։

45. գ. № 8236. Կանոնագիրք. թերթեր՝ 156. մեծություն՝ 20,8×15,2. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ վերջից կան ընկած թերթեր, դատարկ էջեր՝ 1աբ, 10բ, մի շարք էջերում կան գրչի կողմից կատարված ուղղումներ՝ 13ա, 38բ, 57ա, 70ա։ Շահապիվանի կանոնախմբում բացակայում են առանձին ընդարձակ հատվածներ, հավանաբար նախագաղափար օրինակը պակասավոր է եղել։ Ընդօրինակված է սխալաշատ։ Կանոնախմբերի ցանկը (անխորագիր) գտնվում է 2աբ էջերում, առարկայական ցանկը, դարձյալ անխորագիր՝ 2բ—8ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 8բ—156բ էջերում։ Կանոնախմբերի ցանկում նշված է 46 վերնագիր, իսկ ձեռագրում պահվել է 34-ը, 44-րդի՝ «Երանելոյն Մեսրոպայ Հայոց վարդապետի ասացեալ» կանոնախմբի վերջին ընդարձակ մասը և 45, 46-րդ կանոնախմբերը ընկած են։ Գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար։

46. ր. № 9513. Կանոնագիրք, Դատաստանագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 500. մեծություն՝ 22×18.5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար։ Կանոնախմբերի ցանկը՝ «Շարադրութիւն կանոնաց եղեալ այսչափ և այս՞չափ գլխոցըն» վերնագրով գտնվում է 3ա—4ա էջերում, առարկայական ցանկը (անխորագիր)՝ 4ա—14ա էջերում, իսկ Կանոնագիրքը՝ 14բ—297բ էջերում։ Կանոնախմբերի ցանկում թեև նշված է 40 վերնագիր, ինչպես itl ձեռագրերում, սակայն այստեղ գտնում ենք 76 կանոնախմբեր, ինչպես m ձեռագրում։ Այստեղ թեև հանդիպում ենք բացահայտ սխալների, բայց և գտնում ենք ընտիր ընթերցումներ, որոնցից զգուշությամբ օգտվել ենք հաճախ։ Աթանասի, Սահակի կանոնախմբերի ընթերցումը շատ մոտ է hlo ձեռագրերին, բայց ընդհանուր առմամբ այս ձեռագիրը մոտ է it ձեռագրերին։

47. ս. № 3098. Կանոնագիրք. թերթեր՝ 346. մեծություն՝ 20,4×13,8. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. դատարկ էջեր՝ 1աբ, 345ա—346բ. գրիչ, տեղ՝ անհայտ. ժամանակ՝ XVII դար։ Կանոնախմբերի և առարկայական ցանկերը չեն ընդօրինակված։ Ձեռագիրը պարունակում է այն կանոնախմբերը՝ թվով 78, որ նշեցինք m ձեռագրի համար։ Այստեղ երբեմն նկատվում են անուշադիր ընդօրինակման դեպքեր, օրինակ՝ լմպեն ժխ. ըմպեն (էջ

245, տող 10), Ւի փխ. Ւ իր (էջ 255, տող 3) և այլն։ Գրիչը անհետևողական է ղ և լ տառերի գործածման մեջ։

48. t. № 646. Կանոնագիրք. թերթեր՝ 134. մեծություն՝ 21,1×15,3. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. դատարկ էջեր՝ 1ա—3բ. 123ա—133բ. գրիչ՝ Խաչկո. տեղ՝ Գալիպոլ. ժամանակ՝ 1731 թ.։ Կանոնախմբերի ցանկը «Շարադրութիւնք կանոնաց եղեալ այս չափ և այս չափ կարգ գլխոցն» վերնագրով գտնվում է 4աբ էջերում, առարկայական ցանկը (անխորագիր)՝ 4բ—12ա էջերում։ Կանոնախմբերի ցանկում նշված է 40 վերնագիր, իսկ բուն ձեռագրում ընդօրինակված է մինչև 28-րդ կանոնախումբը՝ «Կանոնք Կիւրղի Աղէքսանդրացւոյ. գլուխս Ձ» խորագրով, իսկ Սահակ Պարթևի կանոնախմբից ընդօրինակված է ցանկի մի փոքր մասը՝ Ա-ԺԹ հոդվածների վերնագրերը։ Այնուհետև ընդհատված է ընդօրինակումը։ Այս ձեռագիրն ընթերցումներով մոտ է hilor ձեռագրերին։ Ձեռագրում հոդվածները չեն համարակալված։

49. № 3788. Կանոնագիրք, Դատաստանագիրք և այլ նյութեր. էջեր՝ 420. մեծություն՝ 42,5×26,5. նյութ՝ թուղթ. գիր՝ ժամանակակից. միասյուն. վիճակ՝ անցյալում ընկել է ջուրը, խոնավությունը ներծծվել է էջերում և թողել մեծ-մեծ հետքեր, որոնք շատ տեղերում խունացրել են թուղթը և անընթեռնելի դարձրել բազմաթիվ բառեր. դատարկ էջեր՝ 366—420. գրիչ՝ Պետրոս Ավետ-Սեթ. տեղ՝ Մադրաս. ժամանակ՝ 1825։ Կանոնախմբերի և առարկայական ցանկեր ձեռագիրը չունի, Կանոնագիրքը գտնվում է 1—187 էջերում։ Կանոնախմբերը չունեն նաև Հովհաննես Օձնեցու կազմած՝ հոդվածների ցանկերը։ Ձեռագրի 356—365 էջերում «Ցանկ Կանոնգրքոյս» վերնագրի ներքո տրված է ձեռագրի պարունակած նյութերի մի ընդհանուր ցանկ, որը կապ չունի սովորական կանոնագիրք-ձեռագրերի ունեցածի հետ։ Այս ձեռագիրը որոշ չափով համեմատեցինք rt ձեռագրերի հետ, նկատելով, որ սույն ձեռագիրը պարունակում է Կանոնագրքից շեղվող վերջիններիս ընթերցումները, այլև հանդիպում ենք բառերի նոր աղճատումների, որոշեցինք չշարունակել համեմատությունները և այն չօգտագործել համահավաք բնագրի կազմման համար։

50. № 4088. Կանոնագիրք. թերթեր՝ 145. մեծություն՝ 21,3×17. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր (վատ). միասյուն. դատարկ էջեր՝ 1ա—2բ, 3բ, 16ա—17բ, 140—145. գրիչ՝ Հարություն Խաչատրյան—Մարջանյանց. տեղ՝ Սևան. ժամանակ՝ 1854 թ.։ Կանոնախմբերի և առարկայական ցանկեր չունի։ Համեմատությունը ցույց տվեց, որ այս ձեռագիրը նոր բան չի ավելացնում եղածին, ուստի ընդհատեցինք համեմատությունը և չօգտագործեցինք համահավաք բնագրի կազմման համար։

51. № 659. Կանոնագիրք. թերթեր՝ 320. մեծություն 16,5×12,5. նյութ թուղթ. գիր՝ բոլորագիր. երկսյուն. վիճակ՝ երկու թերթ ընկած (տես Ս. Տիգրանյանի նշումը ձեռ.-ի 5բ էջում). գրիչ՝ Մաղաքիա դպիր[1]. վայր՝ Կաֆա.

---

[1] Սրա հայրը, Անտոն քահանան (Լ. Խաչիկյանի մոտ սխալմամբ տպված է Անուսնի. տես, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 488), 1359 թ. Կաֆայում ընդօրինակել է մի կանոնագիրք (սրա վերարտադրած հիշատակարանը տես e ձեռագրի 325ա էջում)։ Արդյո՞ք հոր ընդօրինակած ձեռագրից կամ վերջինիս նախագաղափար հանդիսացող գրչագրից № 659 ձեռագրի գրիչ Մաղաքիան ևս օգտվել է։

ժամանակ՝ 1368 թ.։ Այս ձեռագիրը հենց սկզբից գրավեց մեր ուշադրությունը. նրա պարունակած կանոնական որոշ նյութեր, հնության առումով, կարող են խորհրդածությունների առիթ տալ։ Սահակ Պարթևի կանոնախմբի առիթով միայն Ն. Ակինյանը սոսկ նշում է ձեռագրի մասին[1], առանց ընդհանրապես նրա մասին խոսելու։ Այստեղ պահվել է Բարսեղ Կեսարացու մի նամակի հայերեն հնագույն թարգմանության ամբողջական բնագիրը, որը ցարդ հայտնի չէր և այդ նամակի միայն մի փոքր մասն էր մտել Կանոնագրքում, որպես Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ԾԱ հոդված։ Բազմաթիվ են Կանոնագրքի ներկա հրատարակության և № 659 ձեռագրի առանձին կանոնախմբերի տարբերությունները, վերջինս երբեմն տալիս է հունարենին ավելի մոտ ընթերցումներ, քան Կանոնագիրքը, հաճախ էլ գրիչը վերաշարադրել է առանձին հոդվածներ։ Այս հանգամանքները ենթադրել են տալիս, որ գրիչը իր ձեռքի տակ ունեցել է մի շատ հին ձեռագիր, որից նա ոչ թե ընդօրինակել է, բառի պարզ հասկացությամբ, այլև խմբագրական զգալի աշխատանք կատարել, ոչ միայն նյութի ընտրության, այլև նրա դասակարգման և մատուցման ձևի մեջ։ Գործնական նկատառումներով, օրինակ, որոշ կանոնախմբերի հոդվածների ցանկերը, հակառակ Հովհ. Օձնեցու կազմածի, նա նոր է կազմել և երբեմն էլ վերածել այբբենական կարգի։ № 659 ձեռագրում չեն պահվել Անտիոքի ժողովի, Ներսեսի և Ներշապուհի, Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի և Սահակ Ձորոփորեցու կանոնախմբերը, իսկ այլ կանոնախմբերից էլ պահվել են որոշ հոդվածներ, օրինակ՝ Նիկիայի ժողովի կանոններից 12, Անկյուրիայի ժողովից՝ 12. Նեոկեսարիայի ժողովից՝ 13։ Այս հարցերի մասին մանրամասն կարելի է տեսնել համապատասխան կանոնախմբերի ծանոթագրություններում։

52. № 657. Դատաստանագիրք, կանոնական և այլ նյութեր. թերթեր՝ 253. մեծություն՝ 20×14,3. նյութ՝ թուղթ. գիր՝ բոլորագիր, նոտրագիր՝ 88ա—129բ էջերը. միասյուն. դատարկ էջեր՝ 130ա—134բ. գրիչ՝ Ստեփանոս (բոլորագրի մի մասի). տեղ, ժամանակ՝ անհայտ։ Կանոնական նյութերը գտնվում են ձեռագրի 88ա—146ա էջերում, մեծ մասամբ գրված նոտրագիր։ Այստեղ գտնում ենք մեզ հետաքրքրող մի քանի կանոնախմբեր՝ Կղեմեսի, Աթանասի, Բարսեղի, Գրիգոր Լուսավորչի, Գանգրայի և Նիկիայի ժողովների կանոնախմբերը։ Վերջինիս ներքո դրված են նաև Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի ժողովների որոշ հոդվածներ, ինչպես № 659 ձեռագրում, բայց նրանից տարբեր։ Որոշ կանոնախմբեր, օրինակ՝ Նիկիայի, Գանգրայի ժողովների, Աթանասի, նկատելի նմանություն ունեն № 659 ձեռագրի համապատասխան կանոնախմբերի հետ, ոչ միայն կառուցվածքով, այլև ընթերցումով։ Այդ հանգամանքը մեզ ենթադրել է տալիս, որ № 657 ձեռագրի գրիչը ընդօրինակության ժամանակ որևէ կերպ օգտագործել է № 659 ձեռագիրը կամ սրա մի տարբերակը։

Ներքոհիշյալ վեց ձեռագրերը պատկանում են միևնույն (համառոտ) խմբին, թեև ունեն առանձին տարբերություններ միմյանցից։ Այս վեց ձեռագրերի համար ընդհանուրն այն է, որ բազմաթիվ հոդվածներ երբեմն դուրս են նետված, երբեմն՝ համառոտված, իսկ երբեմն էլ՝ ընդարձակված։

53. № 648. Կանոնագիրք. թերթեր՝ 195. մեծություն՝ 21,4×15,2. նյութ, թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. վիճակ՝ կան ցեցակեր էջեր, առաջին թեր-

[1] *Տես Հանդէս Ամսօրեայ, 1946, № 1—12, էջ 48—70, 1947, № 1, էջ 1—25։*

թերը կիսով չափ պատռված, ընկած. դատարկ էջեր՝ 195բ. գրիչ, տեղ, ժամանակ՝ անհայտ։ Ձեռագրում Շահապիվանի ժողովի կանոնախումբը ընդօրինակված է երկու անգամ (էջ 28ա—31ա, 182ա—193ա)։

54. № 649. Կանոնագիրք և այլ նյութեր. թերթեր՝ 187. մեծություն՝ 21×15,5. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. միասյուն. վիճակ՝ տեղ-տեղ կեղտոտված էջեր, դատարկ էջեր՝ 1ա—2բ, 185ա—187բ. գրիչ, տեղ, ժամանակ՝ անհայտ։ Կանոնագիրքը գտնվում է 3ա—117բ էջերում։

55. № 650. Կանոնագիրք. թերթեր՝ 134. մեծություն՝ 21,2×14. նյութ՝ թուղթ. գիր՝ նոտրագիր. երկսյուն. դատարկ էջեր՝ 1ա—3բ, 124ա—134բ. գրիչ, տեղ, ժամանակ՝ անհայտ։

8 Qfks եւ որպէս եւ abcgmpq եւ որպէս ի He չիք եւ (ի գալ.) abcef ghklmopqrsy ի գալստեանն IJ յաւուրն acfkmpqsy աւուր BCDEF GHefgm ոստս Qp ոստն hlor ոստամ bq նոսա փխ. ոստսն

9 A ճոճանակս n ճոճանակն DGHacef ghloqr ճաճանակս kp ճաճանչ m ճաճա s ճաճանճ U չիք եւ ճաւճանակս շարժել o զնմանութիւնս CDGbefghloqry մանկանցն ackmps զմանկանցն CDGHYôh եբրայեցոց OVWams եբրայեցւոցն cefgk եբրայեցոցն r եփրայեցոցն bq եւ եբրայեցոցն

10 IJKLMOPQRSTVXZWoûbegq ծափելոցն Y ծափելով h ոստո Uln ոստս or ոստն B ոտսն (c ոստն նմա aefgkmpqs ոստ նմա b ոտ նմայ) փխ. ոստսն Uabcfgk mnpqs մատուցանելոյն begq չիք զի E աշխարհիւ kps աշխարհս I մերւոյ

11 J յամենայն b ամենայն ազգ քրիստոնէից s քրիստովնէից Y աւանդութիւն b աւանդութեան Y կալեալ ի նոյն ôb կալ զնոյն (o է զնոյն) y զսոյն

12 r որ փխ. ոք Y զխաչ g չիք եթէ ոք խաչ... մարտիւրոսս համարեալ՝ է էջ 533 տող 10-րդ oabcefhklmo pqrs չիք եւ (կամ) o կամ այլ ինչ եւ որ իցէ LM եւ կամ եւ ինչ եւ (L չիք եւ) իցէ IJKQRSTXYZ ûe ինչ U նութոյ hlo չիք նիւթոյ՝

13 OW տայցէ X չտացէ q տացցէ l առցէ փխ. տացէ k նիւթոյ եւ ոչ տացէ կրկնված է ô քահանային ոչ տացէ CDGIUVYabckmnpqs մեռոնովն ûehlo մեռոնով r միռօնովն o մեռոնաւն

14 o սուրս hlor սրբել W չիք պարտ o ընդունիլ abcefhklmopqrsy եւ փխ. կամ JVWn յերկրպագութիւն

մատուցանել, զի դատարկ եւ ունայն է յաստուածային զաւրութենէն եւ արտաքոյ աւանդութեան առաքելական եկեղեցւոյ։

ՁԲ (ՈԴՁ) ԻԸ. Իսկ զայնոսիկ, կորս աւրհնութեամբ եւ աւծմամբ կատարեալ է, որք միանգամ եւ իցեն աստուածային խորհրդոցն գործարանք, պարտ է զնոսա պատուել եւ պաշտել, երկրպագել եւ համբուրել, զի ի նոսա բնակէ Հոգին սուրբ, եւ նոքաւք մատակարարէ ի մարդիկ զպահպանութիւնս եւ զշնորհս բժշկութեան ախտից հոգւոց եւ մարմնոց։ Այլ եթէ մեռանել հասցէ ի վերայ այնոցիկ ի ձեռն հեթանոսաց՝ մի հրաժարեսցէ, զի մեծագոյն այնպիսւոյն առաջի կայ յոյս եւ ընդ մարտիրոսս համարեալ է։

ՁԴ (ՈՂԷ) ԻԹ. Ու՛ է պարտ ամենեւին անխտիր լինել եւ հաղորդութիւնս առնել ընդ հերձուածողաց, այլ խորշել ի նոցանէ, եւ ոչ հաւասարէ ընդ նոսա ի հոգեկան եւ ի մարմնական սեղանս, զի պատկառեսցին եւ փափառեսցին միաբանել ընդ ուղղափառութեան աւանդիչս։

1 ô ույնայն eq յունայն ù զաւրու- թենէ IJQYôûcer աստուածային

2 BCDEFGH առաքելական եկեղեցւոյ աւանդութեան Y աւանդութեանն h յաւանդութեան o չիք առաքե- լական IJKLMQRSTUXZn յեկե- ղեցւոյ Yôbcefhlo եկեղեցոյ

3 Y զայսոսիկ e որ n զոր befq աւծ- մամբ (b աւծման) եւ աւրհնու- թեամբ M եւ աւրհնութեամբ Q աւրհնութեան

4 K չիք է hlor չիք եւ ù իցէ beq ե- ղիցին փխ. իցեն Ûn յաստուա- ծային b խորհրդին n խորհրդւոյն Uchlory խորհրդոյն

5 Y զնա փխ. զնոսա H չիք պատո- ւել... ի նոսա G չիք եւ (պաշ- տել) MOW եւ երկրպագել b եր- կիր պագանել el երկիրպագել

6 KLMORSXYZ չիք ի (նոսա) DH բնակեալ է û բնակի b մար- գայրնակ է (q մարգարնակ է) փխ. ի նոսա բնակէ o բնական է Yô չիք ի (մարդիկ)

7 E մարդ Obq մարդիք Y զմարդիկ Wh մարդիկք Ubefnq զպահպա- նութիւն Ybq շնորհս r բժըշկու- թեանս q չիք ախտից CDEHOR XYZôcemor հոգոց Unq հոգւոյ bfhl հոգոյ

8 Ubhlnq մարմնոյ BC այդ befq թէ n եւ մեռանել Yr մեռանիլ hfq հա- սանէ c չիք հասցէ BCDEGH չիք այնոցիկ hfq այնորիկ BCDEFG Hy ի ձեռաց D չիք ի (ձեռն)

9 Y հրաժարեսցի, չիք զի Y զմեծա- գոյն կայ այնպիսոյն յառաջի bq մեծագոյն է CDGHIJabc efq այնպիսոյն ô այնպիսին hl or չիք այնպիսւոյն h թանջի փխ. առաջի

10 I ըստ փխ. ընդ ACDGIJLMOPQR STVXûcefnpy մարտիրոսս YWb hlq մարտիրոս o մարտիրոսու- թիւն U չիք մարտիրոսս bq չիք է

11 Yô լինիլ befgq հաղորդութիւն o հանապազորդութիւնս փխ. հա- ղորդութիւնս

12 I ըստ փխ. ընդ g հերձուածողացն ô չիք այլ begq եւ որոշել փխ. այլ խորշել û խորշիլ BF այդ բա- ցի BCDEFGHJKORbegkmpqs-ից մնացած Ձեռ-երը չհաւասարել

13 g չիք ընդ, նոցա befgq չիք ի (հոգ.) CDGH ի հոգեկանս BCDE FGHKLbefgq չիք ի (մար.) g մարմնան befgq սեղանոյն BCD EFGHSôacefgkmnpqsy պատկա- ռեսցեն

14 X փափակեսցեն afkmps փափա- գեսցեն bcegnqry փափաքեսցեն CDGHn միաբանիլ abkmpqs միա- բան Y ուղղափառս beign ուղղա- փառութեամբ CHy ուղղափառու- թեանն IJ յաւանդիչս R աւանդիչ û զաւանիչս փխ. աւանդիչս Y չիք աւանդիչս

ՁԴ (ՈՂԸ) Լ. Արժան է Յայանութեան աւուր ի Մաաթէոսի գլխոյն զմկրտութեան կարգին ընթեռնուլ զԱւետարան։ Այլ յամենայն իսկ աւթաւրեայսն խառնել պատշաճ վարկանիմ ընդ ծննդեան Աւետարանսն ղմկրտութեան Աւետարանսն, զի որպէս տաւնն հասարակաց երկոցուն, հասարակաբար պարտին լինել կարդացմունքն եւ պաշտաւնն։

ՁԵ (ՈՂԹ) ԼԱ. Սովորեցին ոմանք զկիւրակէն աւր մինչեւ ցճաշն պատուել, եւ անտի յառաջ լուծանել զաւուրն զխորհուրդ։ Յաղագս նորին հրամայեցաք մինչեւ ցերեկոյն նովին պատուով պատուել զաւուրն՝ արգելուլ զինքեանս ի գործոյ եւ ի ճանապարհորդութենէ, եւ երեկունն ծունր չկրկնել եւ յարութեան պաշտել։

ՁԶ (Ձ) ԼԲ. Ոչ է պարտ ի չարաղանդ մծղնէիցն տեղիս, որ կոչին պոլի-

1 BCDEFGHy յայանութեանն mp ի յայտնութեան JL յաւուր beg qr աւուրն q յայտնութեան աւուրն կրկնված է MYbefgq չիք ի Tg մաթէոսի Y ղմատթէոսի û մատթէոս ackmps ղմկրտութեանն

2 hlor կարգն CDGHIJKLMOQRSTXY Zeghklmoqr ղաւետարանն b ղաւետարանն քրիստոսի AF այղ BF այղ եւ CDEGHV այլ եւ IJM OSYWûegbklnq ամենայն a զամենայն OVW յուրօրեայսն bcf gq ը–աւրեան

3 bq խառնիլ ô պատշեած bq վարկանեմ COQbegr ծնընդեանն Wh lo ծննդեանն b աւետարան hlr աւետարանն բացի UYacefgkmp sy-ից մնացած Ձեռ-երը աւետարանս

4 bq ըստ մկրտութեան Vkor ղմկրտութեանն Y մկրտութեանն m ղ-մկրտութեան աւետարանսն u աւետարանս bq աւետարանն ô որպէս զի û տօն bq տաւն DG H տանն (hmps տունն) փխ. տաւնն Y հասարակ y հասարակաց է

5 IJKLMQRSTXYôbghloq երկոցունց r հասարակարար DGH պարտ է բացի KLMQRSTXYZô-ից մնացած Ձեռ երը պարտի or լինիլ XY bq կարդացմունք BCDEFGHK RW ընթերցմունքն (û ընթերցմունք) փխ՝ կարդացմունքն U եւ ի պաշտօնն Y պաշտամունքն ob պաշտօնք ûpqs պաշտաւն

7 Yb սովորեցան eg ովմանք CDGHIL MRSTXZ զկիրակին U զկեւրակին YW զկիրակի ô զկիրագին û զկիւրակէ bq զկիրակէ բացի Aafhn ory-ից մնացած Ձեռ–երը զկիրակէն KLMRSTXZô աւուր Y աւուրն beg օրն eg ցճաշ

8 Uq առաջ oq ղաւուր b ղաւուրս bq խորհուրդն Wûacefgbklmopr sy խորհուրդ

9 DH հրամայեց E հրամայեցաւ. G հրամայեաց u ցերեկոյ b ցերեկոյին hl յերեկոյն o յերեկոյն Wun պատուով o պատվօվն be gq պատուելով Mbcegkmpqs պահել փխ. պատուել KLRSTXY Zô չիք պատուել

10 DGHbcgq արգելով kmps եւ արգելուլ DGH զինքեանն GIJûbegq ի գործոց m ի գործով b չիք եւ (ի (ճան.), ի ճանապարհորդութենէն r ի ճանապարհորդութեան W ի ճանապարհ հաղորդութենէ CDG երեկոյն H էրեկոյն IJRegbklop rs երեկունն Un երեկուն Y երեկուն V երեկոյնն û երեկոյ bq երեկոյին

11 q ծունրն M ոչ կրկնել ô ·ի կրկնիլ b չի կրկնել JKLMRTYeg յարութեանն bq յարութեան (b յարութիւն) որպէս պաշտել W պաշտելս

12 JKLMPQRSTUVXYûbefgnq չիք ի bkmq չարաղանդն M մծղնէիցս û մծղնէից L տեղի OWûa տեղիսն ô տեղիք q կոչի hn պաւլիկեանք bq մոլիկեանք փխ. պոլիկեանք

կեանք, աւթել ումեք եւ կամ լարել եւ խաւսակից լինել եւ երթեւեկութիւն առնել, այլ ամենեւին հեռանալ ի նոցանէ, գարշել եւ ատել զնոսա. զի որդիք սատանայի են եւ լուցկիք յաւիտենական հրոյն, եւ աւտարացեալ են ի սիրոյ կամաց Արարչին։ Եթէ ոք իցէ, որ լարեսցի ի նոսա, եւ ի սիրելութիւն եւ ի բարեկամութիւն եկեսցէ, պարտ է զայնպիսին խոշտանգել եւ ծանր պատուհաս ի վերայ դնել, մինչեւ զգաստասցին եւ առողջասցին ի հաւատս։ Ապա եթէ դարձեալ ի նմին գացին վերստին, զայնպիսին հրամայեմք ամենեւին հատանել եւ արտաքս ընկենուլ իբրեւ զժանդ ախտս լանդամոց եկեղեցւոյ Քրիստոսի, զի «Մի՛ արմատ դառնութեան ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովաւ բազումք պղծիցին»։*

* * *

Լուսաշաւիղ ճանապարհ առ Աստուած՝ հնազանդութիւն ընդհանուր հաւատացելոց Քրիստոսի։ Կազմեցին սուրբ հարքն զկանոնական բանից դիտաւորութիւն, զի որք լերկնայլին հրաւիրեալ են

* Եբր. ԺԲ, 15

1 b աթել (o աւել թէ) փխ. աւթել u չիք եւ (կամ) U յար եղեւ փխ. յարել եւ u յարդել փխ. յարել, կամ փխ. եւ (խաւս.) o լինիլ bq խաւսից P եւ խաւսակից... այլ Ներքևի լուսանցքում hlo չիք եւ խաւսակից... առնել u կամ փխ. եւ (երթեւ.) YWbq չիք եւ (երթեւ.) b երթեւեկութեանն g երթեւեկ y երթեւեկութիւնս

2 ACF այդ bq այլ եւ eg եւ գարշել եւ

3 ô ա[տել] U զոր փխ. զի o սատանային H լուցեկք RY լուցկեցք n լուցկիկք

4 KLMRSTXYZ յօտարացեալ bq չիք են Ob չիք ի ps ի սիրոյն efgq ի կամաց սիրոյ H եւ կամաց b չիք կամաց, արարիչն g չիք եթէ

5 g չիք ոք իցէ.... բազումք պղծիցին՝ տող 11-րդ e յարիցէ Y չիք եւ (ի սիրել.) obeq չիք ի (սիրել.) ô սիրելի, չիք եւ ի bq չիք ի (բարեկ.)

6 X արասցէ փխ. եկեսցէ BCDEFGHILMYQ զայնպիսին RX խոշանդել Z խոշտանդանել f ծանրր BCDEFGH չիք եւ ծանր.... դնել

7 abcefhklmopqrsy ածել փխ. դնել

8 BCDEFGHbefnopq թէ DGH դոցեն bq գացի q ի վերրստին u չիք վերստին p զայնպիսիսն հրամայեմք վերստին RXû զայնպիսին b զայսպիսիսն Y չիք զայնպիսիսն e զայնպիսին ամէնեւին հրամայեմք

9 bq հաւանել փխ. հրամայեմք Y չիք ամենեւին bq իբր u ժանգ hy զժանտ

10 hly ախտ OWôbefq անդամոց n յանդամւոց hl յանդիման փխ. յանդամոց CDHUYôbcefnoqs եկեղեցոյ KMQ յեկեղեցւոյ Xû եկեղեցւոյն hl եկեղեցիս bq չիք մի h յարմար MY դառնութեանն

11 a չիք ի b ի վերն r ի վերայ փխ. ի վեր q երեւեալն û չիք նեղիցէ F նովաւք û բազում, պղծեսցին abfkmpqs պղծին l պղծեցին

* * *

Հիշատակարանի ունեցած վերնագիրը ուրիշներն են ավելացրել հետագայում, այդ պատճառով այն կնշենք տողատակ՝ eg յոհաննիսի (b յոհաննու f յոհաննիսի) իմաստասիրի (e իմաստնասիրի) հայոց կաթողիկոսի (b կաթողիկոսին) յիշատակարան (b յիշատակարանն). y տեառն յովհաննու իմաստասիրէ յիշատակարան

12 ef լուսայշաւիղ f հնազանդութիւնն beg ընթհանուր

13 b հաւատացելոցն

14 b բանիցդ դիտաւորութեան f դիտաւորութիւնն B յերկնայինն bf իցեն փխ. են

ի բնակութիւն մարդկան տարակարծ խոհականութեամբ, Նովաւ ընթացեալք ի նպատակն հասցեն բարեգործութեան. եւ յանդիմանեալ խոշտանկեսցեն ինքնակամութեամբ գնացեալն կամեցողքն: Եւ վասն զի ոմանք առ ոմանս եւ ոչ ամենեքին առ ամենեսեան ողքա սերմանեալք, կամեցայ զբովանդակ զառ ի Նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել: Ուրանաւր եւ զիս աստուածային հոգին վերակարգեաց յաթոռ սրբոյն Գրիգորի ի կաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց, Յովհաննէս Նուաստագոյն յիմաստասիրականաց խմբից, եւ ի բոլորից մեկին մնացեալ ըստ մարմնոյ յազգակոնաց:

Եւ ընկալեալ դալս չան՝ Նախկին, վասն հոգեկանաց իմոց զարմին, զի ըստ հրամայողական անուանն առընթեր կացցեն եւ հրամանացն գումարութիւնք. եւ թէ պարտ է սպասաւորաց բանին աստուածախոսունակ հարցն բանիւք կնքեալ բանիւ: Երկրորդ զի դուսումնասիրաց անձանց իմով աշխատութեամբ սիրով կամեցայ հանդուցանել զբազմախոյզ խնդիրս: Քանզի գրեցաք ի սմա ոչ միայն զկանոնական սահմանեալն Նոցա շարակարգութիւնս, այլ եւ զժամանակն եւ զպատճառն ի սոյն այս ի Ներքս ածեալ յաւելաք, ընդ Նմին եւ զգլուխս անցնիւրոց համառաւտեալ բանիւք ի սկզբան անդ Նախակարգեցաք, զի անաշխատաբար անդուստ զբանն յիւրում տեղւոջն գտցէ խնդրողն: Յաղագս որոյ անմոռա-

1 f ի բնակութիւնն, մարդիկան befg տարակած b խոհականութեամբն
2 b կացեն փխ. հասցեն, բարէգործութեանց f բարեգործութեամբ
3 b ինքնականութեան y զինքնակամութեամբ b գնալ f գնացեալ
4 Bbfg (ոչ) ամենեքեան
5 b ի Նոցանէ
6 b սահմանեալս բանիւ efg բանի b իմում փխ. ի միում beg տեղոջ f տեղոջ միով գեղեցկագիծ b գեղեցկայգիծ մատենիս
7 b աստանաւր մատուցանել (y արձանացուցանել) փխ. արմատացուցանել f ոտանաւոր փխ. ուրանաւր bf զի փխ. զիս
8 be վերագարդեաց f վերտկարգեց b ի կաթողոկոսութեան
9 befg յովաննէս b Նուաստադուն ի իմաստայսիրականաց
10 b խնպից e խմպից f չիք մեկին... յազգականաց՝ տող 11-րդ
11 b յազգայկանաց
13 ı զարմից b զմարմին փխ. զարմին, հրայողական g հրամառզական b կանոնացն փխ. անուանն befg կացցէ f ի փխ. և
14 b գումարութիւն f թէպէտ փխ. թէ պարտ է
15 b աստուածայխաւսաց f աստուածախոսնակ b բանին (կնքեալ) f կընքիլ By կնքել b բանիւք (երկրորդ) f չիք բանիս, զի վասն
16 b ուսումասիրեաց b անձաց g անձանցն bf սիրութեամբ
17 cg հանկուցանել b զբազմայխոյ cg զբազխոյզ b խնդիր
18 bf սահմանեալ
19 b չիք և (զժամանակն) Bfy յայս
20 b զգլուխ անձանց իւրոց համառաւտեալ է
21 f անդնանախոռ կարգեցաք փխ. անդ Նախակարգեցաք b Նախայկարգեցաք, անաշխատայբար
22 g իւրում f յետում փխ. յիւրում bg տեղոջ cf տեղոջն b խնդալ փխ. խնդրողն

ցաբար հայցեմ ընդունել ի ձէնջ զյիշողութեանն փոխարէնս. քանզի է այս գանձ եւ ոչ զոր ցեց եւ ուտիճ ապականէ, այլ որ ընդ ինքեան յերկնայինն ի վեր տանի գանձ տնանկ ստացողին զսիրտ. յորմէ ապա ոչ է պարտ թափուր թողուլ որում եւ հաւատաց զսա զորբարանս, զի մի զրկեալք ի սմանէ՝ զրկեսցին յԱստուծոյ կամ յանարգ լինել ի Քրիստոսէ՝ յանարգաց ուրուք ձեռս արկանել զսա։

Եւ այն որ պարգեւեաց ինձ ի վերայ երկրի տէրութիւն ընդ ամենազաւր իւրոյ տէրութեամբն, որոյ բարեգթութեամբն եւ ի հանդերձեալսն ի նոյն վստահանամ վայելել ի փառս, նա տացէ ձեզ միշտ ծարաւաբար մերձենալով ճաշակել ի հոգեկանս այս աղբիւրէ, զյարաբացուն ունելով զբերան մտաց առ ի լնուլ սովալ զլորովայն ներքին մարդոյն որբոյ աճել զաճումն Աստուծոյ եւ հաւասարել չափոյ հասակի կատարմանն Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն։

1 b *ընդունելի ի մէնջ դյիշողութիւնն* f *դիշողութեանն*
2 b *այս է դանձն* B *գանձարան* Bfy չիք *և (ոչ)* bc չիք *ոչ* cfg *ուտիչ*
3 b *ի վերնատունն* փխ. *ի վեր տանի*, *ի գանձ* f *դանձանակ* փխ. *գանձ անանկ* cg *տնանգ* By *գտնանկ* b *զսիրտն* f սկսած *զսիրտ* բառից շարունակությունը մինչև վերջ չի պահվել
4 cfg *յորում*
5 b *զորբարարսն* b *զրկեսցեն աստուծոյ*
6 Bbv *(կամ) անարդ* b *յանարգեցաւոյ* փխ. *յանարգաց ուրուք* bc ig *զձեռս* b *արկելով* B *արկանելով ի սա*
8 b չիք *ինձ. ի տէրութիւն*
9 b *ամենայզաւր* g *տէրութեանն* b չիք *որոյ* y *բարեգթութեամբ* b չիք *բարեգթութեամբն*
10 b *ի հանդերձեալքն*
11 B *յայս*
12 b *յարբեցուցանելով* փխ. *զյարաբացուն ունելով* By *յարարաց* b *զբերանս*
13 *զորովայնն* g *զյորովայ* B *զորովայն*
14 bq *չափու* B չիք *որում... փառք*
15 B չիք *յաւիտեանս ամէն*

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 18: *Մի քանի ձեռագրերում այս վերնագիրը ունի տարբերակներ, ինչպես. «Յառաջաբանութիւնք առաքելական կանոնաց» (№№ 649, էջ 3ա, 3369, էջ 3ա). № 651 ձեռագրում՝ «Սկիզբն կանոնիս» (էջ 1ա), № 659 ձեռագրում՝ «Սահմանք և կանոնք զոր եդին աշակերտքն Քրիստոսի եկեղեցւոյ սրբոյ յետ վերանալոյ տեառն ժողովեալ ի վերնատ[ա]ննս» (էջ 3ա), ասորականը՝ «Վարդապետութիւն առաքելոց»։ №№ 650, 651, 3369 ձեռագրերում այս վերնագրերով էլ սկսվում է առաջաբանը. «Սահմանք և կանոնք զոր եդին աշակերտք Քրիստոսի յետ վերանայլոյ փրկչին մերոյ առ հայր ի յերկինս» և այլն։ №№ 648, 2964, 3562 ձեռագրերում այս վերնագիրը չի պահվել։*

Առաջաբան, էջ 18—24: *Ասորական բնագրում ենթավերնագիրը և առաջաբանը համառոտ են. ահա այն. «Եթէ յորժամ վերացաւ Քրիստոս առ Հայր իւր և զխարզ ընկալան առաքեալքն զպարգև Հոգւոյն սրբոյ և զկարգս և զկանոնս եկեղեցւոյ և թէ յո՛ր կողմն չողան մի մի յառաքելոցն, և ուստի ընկալան աշխարհք տանն Հռոմայ զաջ քահանայութեան։*

Յամին 339 իշխանութեան Յունաց, յամսեան խէզիրան, որ աւր չորք էր ամսոյն որ էր միաշաբաթի և կատարումն Պենտակոստէին. ի նմին աւուր եկին աշակերտքն ի Նազարէթէ Գալիլէացւոց՝ ուր աւետարանեցաւ յղութիւն Տեառն մերոյ, ի լեառն՝ որ կոչի Ձիթենեաց. իբրև էր Տէրն մեր ընդ նոսա և ոչ երևէր նոցա. և ի ժամուն մեծի առաւօտուն՝ ամբարձ զձեռս իւր Տէրն մեր և եդ ի վերայ գլխոյ մետասան աշակերտացն, և շնորհեաց (բուն՝ «ետ») նոցա զպարգև երիցութեան։ Եւ յանկարծակի ամպ լուսաւոր ընկալաւ զնա. և տեսին զնա իբրև վերանայր յերկինս, և նստաւ ընդ աջմէ Հօր իւրոյ. և փառաւորէին զԱստուած զի տեսին զվերանալ նորա՝ որպէս եւ ասէր ցնոսա. և ցնծային զի ընկալան զաջ քահանայութեանն տանն Մովսիսի և զԱհարոնի։ Եւ անտի (ի լեռնէն Ձիթենեաց) ելին եկին ի վերնատունն, ուր եկեր Տէրն մեր զզատիկն (պասեք) ընդ նոսա. եւ ի տեղւոջն՝ ուր եղեն հարցմունք թէ ո՞վ իցէ որ մատնելոց իցէ զՏէրն մեր խաչահանուաց, ի նմին տեղւոջ եղեն և հարցմունք եթէ որպէս քարոզեսցեն զաւետարանն յաշխարհի. և զոր աւրինակ ի վերնատանն սկսաւ խորհուրդ մարմնոյ և արեան Տեառն մերոյ թագաւորել յաշխարհի, նոյնպէս և անտի սկսաւ վարդապետութիւն քարոզութեան նորա տիրել յաշխարհի։

Եւ մինչդեռ յայսմ զժուարութեան էին անկեալ աշակերտքն, թէ որպէս քարոզեսցեն զաւետարանն լեզուաց օտարաց՝ զոր ոչ գիտէին. և այսպէս ասէին առ միմեանս եթէ՝ Չզօրութիւնս և զսքանչելիս՝ յուսացեալ ենք՝ զի առնէ Քրիստոս առաջի ազգաց աւտարաց. (այլ) զի ոչ գիտեմք զլեզուս նոցա, և ոչ նոքա հմուտ են լեզուի մերում, ո՞վ ուսուցանէ նոցա և ցուցանէ, եթէ անուամբն Քրիստոսի՝ որ խաչեցաւ, լինին այս զօրութիւնք և սքանչելիք։

Եւ մինչդեռ յայսմ խորհրդի էին առաքեալքն, յոտն եկաց Սիմոն Պետրոս (Կեփա) և ասէ ցնոսա. Եղբարք, ոչ է մեզ (գիտել) եթէ որպէս քարոզեսցուք զաւետարան նորա, այլ Տեառն մերում, որ գիտէ թէ որպէս կարասցուք քարոզել զաւետարան իւր յաշխարհի. այլ յուսամք ի հոգաբարձութիւն նորա վասն մեր որ խոստացաւ մեզ և ասէ թէ՝ Յորժամ ելանեմ ես առ Հայր իմ՝ առաքեմ առ զձեզ զՀոգին մխիթարիչ, և նա ուսուսցէ ձեզ զամենայն որ ինչ արժան է ձեզ իմանալ և ուսուցանել։ Եւ մինչդեռ Սիմոն Պետրոս ասէր զայս առաքելոց ընկերաց իւրոց և յիշեցուցանէր նոցա, հնչիւն ծածուկ լսելի լինէր նոցա, և հոտ անոյշ՝ որ անընդելական (օտար) էր աշխարհի, բուրէր նոցա և ի մէջ բարբառոյն և հոտոյն՝ լեզուք հրեղէ[ն]ք իջին առ նոսա յերկնից, և հանգեան ի վերայ միոյ միոյ ի նոցանէ

և նոսան. և ըստ լեզուին՝ զոր ընկալաւ մի մի ի նոցանէ, այնպէս պատրաստեաց զանձն իւր զի երթիցէ յաշխարհն այն, ուր խօսիցին և լուիցեն այնու լեզուաւ։

Եւ նովին պարգեւաւ հոգւոյն՝ որ առաւ նոցա ի նմին աւուր, եդին կարգս և օրէնս. որ միաբանին աւետարանին քարոզութեան նոցա և ճշմարիտ և հաւատարիմ ուսման վարդապետութեան նոցա» (Հ. Տաշյան, Վարդապետութիւն առաքելոց, Վիեննա, 1896. էջ 359—363)։

№ 3562 ձեռագիրը չունի Առաջաբանը։

Երկրորդ վերնագիր և ցանկ, էջ 24—27։ №№ 649, 650, 651, 3369, 3362 ձեռագրերը, ինչպես նաև ասորական բնագիրը չունեն երկրորդ վերնագիրը և ցանկը։ № 659 ձեռագրում երկու թերթ ընկնելու պատճառով, որի մասին ձեռագրի ծր էջում նշել է Ս. Տիգրանյանը, չեն պահվել երկրորդ վերնագիրը, ցանկը և երրորդ վերնագիրը։ Սակայն մինչև հոդվածների ոկսվելը այս ձեռագրում պահվել է սկզբից թերի մի բնագիր, որը չունեն մյուս ձեռագրերը. ահա այդ բնագիրը. «...եւ յորժամ ստեղծ ի սկզբանէ եւ զուգեաց Աստուած զմարդն ի ստեղծմանն ժամանակի. եւ աւդնական արար միմեանց եւ աւրհնեաց զնոսա։ Երեք ժամաւ յառաջ ստեղծ զԱդամ քան զԵւա, որ եւ աւագագոյն երեւեցի այրն. զի մի՛ կարծեսցէ զինքն կինն հաւասար առն։ Նոյնպէս հնգէտասան երեք հինգ է. կարգեցին առաքեալքն ըստ այնմ խորհրդոյ երեք ամաւ աւագ լինել փեսային քան զհարսն՝ հնգէտասան ամեայ փեսային և ԺԲ ամեա հարսինն լինել եւ ըստ բնութեանս շարժման. զի հընգէտասանամենիցն եւ ի վեր խորհրդոցն յուզմունք եւ ալէկոծումն բնութեանս եւ խռովութեան սրտին եւ աղտեղութիւն մարմնոյն յայնժամ լինի։ Վասն այն պատճառի աւրէնս կարգեցին առաքեալքն եւ որ աւրինաւք զուգեսցին այս է կարգ և սահմանք եւ որք ոչ հնազանդին աւրինացն՝ նզովեսցին, այսինքն որոշեսցին յեկեղեցւոյ Աստուծոյ» (էջ 6ար)։ Այս հատվածի սկիզբը համեմատել Առաքելական ԼԳ հոդվածի սկզբի հետ։

№ 2964 ձեռագրում նախ դրված է ցանկը (էջ 1ա—2ա), ապա առաջաբանը (էջ 3ա—6ա)։ Կանոնագրքի ունեցած ցանկից այս ձեռագրի ունեցածը տարբեր է և նոր է կազմվել. ահա այն.

«ա. Վասն աղօթից հրամանք թէ յարեւելս պարտ է կեալ եւ երկիր պագանել աստուածութեան։

բ. Վասն պատուականութեան աւուր կիւրակէի։

գ. Պատուէր պահոց աւուր չորեքշաբաթի։

դ. Նոյն հրաման եւ վասն աւուր ուրբաթուն։

ե. Վասն կարգի քահանայից եւ սարկաւագաց։

զ. Վասն յայտնութեան եւ ծնընդեան տեառն մերոյ։

է. Վասն քառասնաւրեայ պահոց պնտութեան։

ը. Վասն կարդացման աւետարանին սրբոյ։

թ. Վասն վերանալոյն Քրիստոսի առ Հայր ի յերկինս։

ժ. Վասն նորահաւատից տգիտաց մի՛ վաղվաղակի առաջնորդ կացուցանել։

ժա. Վասն քառասուն աւուր Պենտակոստէից։

ժբ. Վասն հրա[մա]նի սուրբ մկրտութեան։

ժգ. Վասն ծոյլ քահանայիցն։

ժդ. Վասն որ սուտ երդնուն եւ հաւատան բախտից։

ժե. Վասն չհաղորդելոյ ընդ Հրէայսն։

ժզ. Վասն նորակնքաց որ յանդրէն յետս կացցեն։

ժէ. Վասն որ առնու վաշխ եւ տոկոսիս։

ժը. Վասն առաջնորդաց եկեղեցոյ թէ մի՛ արասցէ իրս ինչ առանց իւրոց պաշտօնէից։

ժթ. Վասն քահանայից եթէ ընտրեալքն եւ գիտունքն եղիցին յառաջնորդութիւն։

ի. Նոցին հրաման վասն անարատ վարուց։

իա. Վասն արբեցողաց և այլազդ վաթարութեան մի՛ մերձեցուցանել ի քահանայութիւն։

իբ. Հրաման պատուի մեծութեան քահանայից։

իգ. Վասն զինուորաց զի մի՛ արասցեն ինչ իբրև զքահանայ։

իդ. Վասն քահանայից զի մի՛ ոք արհամարհիցէ։

իե. Վասն դատաւորաց եւ դատաստանաց։

իզ. Վասն սուրբ ոսկերաց վկայիցն որ ի Քրիստոս։

ԻԷ. Վասն ուսուցանելոյ թաղաւորաց։

ԻԸ. Հրաման վասն կորգի պաշտօնէից։

ԻԹ. Կարգաւոր հրաման վասն կարգացման։

Լ. Վասն հացի սուրբ պատարագին զի առ ուրէն իցէ։

ԼԱ. Վասն սուրբ կուսանաց եւ նոցին կարգաց։

ԼԲ. Հրաման վասն ամուսնացելոց եւ հեռի լինել յազգականութեանց յուրեանց»։

Նաև *հետ* ձեռագրերում նախ գրված է ցանկը, ապա՝ առաջաբանը։

Երրորդ վերնագիր, էջ 27։ №№ *659, 3369, 3562* ձեռագրերը չունեն այս վերնագիրը։ Իսկ №№ *649, 650, 651, 2964* ձեռագրերը ունեն *«Կանոնք* (№ *650*՝ *կանոն) առաքելականք»*։

Հոդ. Ա. էջ 27—28։ Հմմտ. *ասորի բնագրի հետ. «Ա. Արդ կարգեցին (եդին) առաքեալքն եթէ ընդ արեւելս կացցեն յաղօթս, քանզի որպէս փայլակն զի փայլատակէ յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, նոյնպէս եղիցի եւ գալուստ որդւոյ մարդոյ, եւ այսու գիտասցուք եւ ծանիցի մեզ եթէ յարեւելից երեւեսցի ի վախճանին»* (էջ 364)։ Հոդվածի վերջին տողը մի քանի ձեռագրերում ընդարձակ է. *«յաղօթս կալ սպասել եւ ակն ունել գալըստեան նորա եւ երկիր պագանել արքային անմահի յաւիտենից»* (№ *651*, էջ *2 բ*, տես նաև №№ *2964*, էջ *6ա*, *3369*, էջ *4բ*)։ Այս հոդվածի բովանդակությունը հիշում է Ան. Շիրակացին Ցայտնութեան ճառի մեջ. *«Ընդէ՞ր ապա եւ ընդ արեւելս ուսուցին մեզ երկրպագել»* (պրոֆ. Աշ. Աբրահամյան, Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 286)։

Հոդ. Բ. էջ 28—29։ Հայերենը շատ է շեղվում ասորերենից և հոխացված է. հմմտ. *ասորի բնագիրը. «Բ. Դարձեալ կարգեցին առաքեալքն եթէ յաւուր միաշաբաթւոյ եղիցի պաշտօն եւ ընթերցումն գրոց սրբոց եւ պատարագ. զի յաւուր միաշաբաթւոյ յարեաւ Տէրն մեր ի մեռելոց եւ յաւուր միաշաբաթւոյ ծագեցաւ աշխարհի, եւ յաւուր միաշաբաթւոյ վերացաւ յերկինս եւ յաւուր միաշաբաթւոյ երեւի ի վախճանի՝ հրեշտակօք երկնից»* (էջ 364)։ Ան. Շիրակացին այս հոդվածի մասին հիշում է այսպես. *«Հի՞մ եւ զկիւրակէ տաւնախմբել»* (նույն տեղում, էջ 286)։

Հոդ. Գ. էջ 30։ Հայերենը բավական ընդարձակ է. հմմտ. *ասորի բնագրի հետ. «Գ. Դարձեալ կարգեցին առաքեալքն եթէ յաւուր չորեքշաբաթւոյ եղիցի պաշտաւն. զի ի նմա յայտնեաց Տէրն մեր նոցա վասն զատաստանին իւրոյ եւ չարչարանաց եւ խաչելութեան եւ մահուան եւ յարութեան, եւ էին առաքեալքն յայսմ տրտմութեան»* (էջ 364—365)։ Այս և հաջորդ հոդվածի մասին Ան. Շիրակացին նույնպես հիշում է. *«Պատուել եւ զատարկանալ, եւ զչորեքշաբաթի եւ զուրբաթ պահել»* (անդ, էջ 286)։

Հոդ. Դ. էջ 30։ Հմմտ. *ասորի բնագրի հետ. «Դ. Դարձեալ կարգեցին առաքեալքն՝ եթէ յաւուր ուրբաթու յիններորդ ժամու եղիցի պաշտօն. քանզի որ ինչ ասացաւ յաւուր չորեքշաբաթւոյ վասն չարչարանաց փրկչին մերոյ՝ յուրբաթու կատարեցաւ, յորժամ շարժեցան աշխարհք եւ արարածք եւ խաւարեցան լուսաւորք յերկինս»* (էջ 365)։

Հոդ. Ե. էջ 30—31։ Ինչպես *ասորի բնագրում, այնպես էլ մի քանի ձեռագրերում*՝ №№ *649, 650, 651, 659, 2964, 3369* այս հոդվածը չի պահվել։ Այս մասին մանրամասն *տես Հ. Տաշյանի դիտողությունները («Վարդապետութիւն առաքելոց», էջ 56—59)*։

Հոդ. Զ. էջ 31—32։ Հմմտ. *ասորի բնագրի հետ. «Ե. Դարձեալ կարգեցին առաքեալքն՝ եթէ եղիցին երիցունք եւ սարկաւագունք որպէս զՂեւտացիս, եւ կիսասարկաւագունք որպէս զայնոսիկ որ կրէին զսպասս սրբոյ խորանին Տեառն. եւ դէտ որ լինիցի առաջնորդ ամենայն ժողովրդեան՝ իբրեւ զԱհարոն գլուխ եւ աւագ ամենայն քահանայից եւ Ղեւտացւոց ամենայն քաղաքին»* (էջ 365)։

Հոդ. Է, էջ 32։ Հմմտ. *ասորի բնագրի հետ. «Զ. Դարձեալ կարգեցին առաքեալքն՝ եթէ տօնեսցեն տօն ծննդեան փրկչին մերոյ, որ է գլուխ տօնից եկեղեցւոյ, ի Զ յունուարի (քանուն Բ) ըստ երկար թուոյ Յունաց»* (էջ 366)։ Ան. Շիրակացին Ցայտնութեան ճառում մեջ է բերում այս հոդվածի բովանդակությունը. ահա այն. *«Քանզի գրեալ է ի վեցերորդ գլուխ կանոնացն այսպէս. եթէ՝ կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, թէ եղիցի տաւն Ծննդեանն եւ Ցայտնութեանն Տեառն եւ Փրկչին մերոյ գլուխ եւ առաջնորդ տաւնից եկեղեցւոյ, որ աւր ԺԱ է տիբեթ ամսոյ, որ է Զ յունուարի ըստ հռովմայեցւոց»* (նույն տեղում, էջ 283)։ Շիրակացին օգտվել է մի բնագրից, որի մի տարբերակը հետագայում մտել է կանոնագրքի մեջ։ Շիրակացին նշում է. *«ի վեցերորդ գլուխ»*. սա համապատասխանում է ասորական բնագրի համարակալմանը, քանի որ, ինչպես վերևում

նչեցինք, վերջինիս մեջ չի պահվել Կանոնագրքում եղած Ծ հոդվածը. այստեղից կարող ենք անել երեք ենթադրություն. ա. Ան. Շիրակացու ձեռքի տակ եղած առաքելական կանոնախմբի համապատասխան բնագրում պատահմամբ դուրս է ընկել Ծ հոդվածը. բ. Շիրակացին է սխալմամբ հիշում «ի վեցերորդ գլուխ» փոխանակ նշելու «յեւթներորդ գլուխ». գ. Ան. Շիրակացու ձեռքի տակ եղած հայ բնագրում, ասորերենի հաջորդականությամբ, բացակայել է Ծ հոդվածը, որը մտել է այս կանոնախմբի մեջ մինչև վերջինիս մուծվելը Կանոնագրքում՝ Ա. Շիրակացու և Հ. Օձնեցու միջև ընկած ժամանակաշրջանում։ Մեզ հավանական թվում է վերջինը։

Հոդ. Ը, էջ 32—33։ Համա. ասորի բնագրի հետ. «Է. Կարգեցին դարձեալ առաքեալքն՝ եթէ գքառասուն աւր պահեսցեն յառաջ քան զօր չարչարանաց փրկչին մերոյ, եւ ապա արասցեն (տօնել) զաւր չարչարանացն եւ զօր յարութեան. քանզի եւ ինքն իսկ Տէրն մեր՝ տէր տօնիս զքառասուն օր պահեաց. եւ Մովսէս եւ Եղիա՝ որ զգեցեալ էին զայս խորհուրդ, զքառասուն քառասուն օր պահեցին եւ նոքա, եւ ապա փառաւորեցան» (էջ 366)։ № 3369 ձեռագրում «ի ձեռն պահոցն»-ի միջև կա մեկ բառ «ի ձեռն քառասունօրեայ պահոցն» (էջ 5բ)։

Հոդ. Թ, էջ 33—34։ Հայերենը որոշ բառացի համապատասխանում է ասորի բնագրի Ը հոդվածին։

Հոդ. Ժ, էջ 34. Համա. ասորի բնագրի հետ. «Թ. Դարձեալ կարգեցին առաքեալքն եթէ ի կատարման Ծ աւուրց յետ յարութեան՝ արասցեն զյիշատակ վերացմանն նորա առ Հայր իւր փառաւորեալ» (էջ 367)։

№№ 648, 3562 ձեռագրերում չի պահվել այս հոդվածը։

Հոդ. ԺԱ, էջ 34։ Ասորի բնագիրը չունի այս հոդվածը։ Այս մասին տես Հ. Տաշյանի նշված աշխատության 227—230 էջերը։ № 659 ձեռագրում հոդվածի վերջին մասը այսպես է. «Եւ դարձեալ ի յիսներորդսն տաւն կատարեսցի իբրև զառաջին զտակին եւ վարդավառին զատս զենցի» (էջ 10բ)։

Հոդ. ԺԲ, էջ 34—35։ Համա. ասորի բնագրի հետ. «ԺԱ. Դարձեալ կարգեցին առաքեալքն՝ եթէ որ ոչ գիտէ զհաւատս եկեղեցւոյ եւ զկարգս եւ զօրէնս՝ որ կարգեալ են ի նմա, մի՛ լիցի առաջնորդ եւ հրամանատար, եւ որ գիտէ զայնոսիկ՝ բայց անցանէ զնոքօք ոչ պաշտեսցէ. զի չէ ճշմարիտ ի պաշտամանն իւրում, ասէ» (էջ 367—368)։

Հոդ. ԺԳ, էջ 35—37։ Այս հոդվածը ասորի բնագիրը չունի։ Հ. Տաշյանը կարծում է, որ ասորերենի մեջ պետք է եղած լինի այս ձևով. «Կարգեցին առաքեալք և եդին հաստատութեամբ (...) եթէ ի ձեռն քահանայութեան կարգի՝ մանուկ ութօրեայ մկրտեսցի եւ եղիցի քրիստոսազգեաց, եւ վկայք՝ որ ոչ ունին զմկրտութիւն ջրոյն, արեամբն իւրեանց փրկեսցին» (էջ 226)։ Այս հոդվածի մասին տես Տաշյան, անդ, էջ 226—227։ Բնագրի «Զանարատ զտէր» բառերի միջև № 3369 ձեռագրում կարդում ենք երկու բառ ևս «զանարատ զառն Աստուծոյ զտէրն» (էջ 6բ)։

Հոդ. ԺԴ, էջ 37։ Հայերենում ավելացումները քիչ են. համեմատի՛ր ասորի բնագրի հետ. «ԺԳ. Դարձեալ կարգեցին առաքեալքն, եթէ իցէ որ երկմիտ ի պաշտաման եւ չիցէ ճշմարիտ ի նմա, այնպիսին դարձեալ մի՛ պաշտեսցէ, զի չէ նմա ճշմարիտ տէրն պաշտաման, նա զմարգիկ խաբէ եւ ոչ զԱստուած՝ այն որ ոչ հաստատին կամակորութիւնք առաջի նորա» (էջ 368)։

Կանոնագրքի «չիցէ ճշմարիտ ի պաշտաման Տեառն մի՛ ձեռնադրեսցի» հատվածի փոխարեն № 650 ձեռագրում կարդում ենք. «Զիցէ ճշմարիտ ի հաւատս տեառն մի՛ կարգեսցի նա յառաջնորդութիւն եկեղեցոյ» (էջ 10ա)։

Հոդ. ԺԵ, էջ 37—38։ Համա. ասորի բնագրի հետ. «ԺԻ. Դարձեալ կարգեցին առաքեալքն եթէ որ երդնու կամ ստէ, կամ վկայէ զվկայութիւն անօրէնութեան, կամ երթայ առ կախարդս և հարցուկս և քաւթեայս եւ վհուկս եւ հաւատայ բախտից եւ ծննդոց՝ զոր ընդունին այնոքիկ որ ոչ ճանաչեն զԱստուած, ե՛ւ ինքն որպէս այդ՝ որ ոչ ճանաչէ զԱստուած, մերժեսցի ի պաշտամանէ եւ մի՛ պաշտեսցէ» (էջ 368)։ № 659 ձեռագրում պահվել է ասորերենի նման. «եւ հաւատայ բախտից եւ ծննդոց» (էջ 12բ)։

Հոդ. ԺԶ, էջ 38։ Համա. ասորի բնագրի հետ. «ԺԵ. Դարձեալ կարգեցին առաքեալքն՝ եթէ որ սիրէ զՀրեայս՝ որպէս զՍկարիովտացին՝ որ սիրեաց զնոսա կամ զհեթանոսս որ երկիր պագանեն արարածոց փոխանակ արարչին, մի՛ մտցէ ի մէջ նոցա (յեկեղեցի) եւ պաշտեսցէ, այլ եթէ իցէ ի միջի նոցա՝ մի՛ թողցեն եւ մի՛ պաշտեսցէ դարձեալ ընդ նոսա» (էջ 368—369)։

Հոդ. ԺԷ. էջ 38—39։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԺԶ. Դարձեալ կարգեցին առաքեալքն եթէ որ ի հրէից կամ հեթանոսաց եկեսցէ եւ խառնեսցի ի նոսա (յեկեղեցի), եւ եթէ՝ իբրեւ խառնեալ էր ի նոսա, դարձցի և երթիցէ ի կողմն՝ ուր էրն. եւ եթէ դարձեալ կրկնեսցի եւ եկեսցէ առ նոսա, մի ընդունիցին զնա, այլ իբրեւ ի կողմն՝ ուր էր զառաջինն, այնպէս հայիցին ի նա՝ . որ ճանաչենն զնա» (էջ 369)։

Հոդ. ԺԸ. էջ 39։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԺԴ. Դարձեալ կարգեցին առաքեալքն թէ որ փոխ տայ եւ առնու տոկոսիս եւ փոյթ յանձին ունի զվաճառականութենէ եւ զագահութենէ այնպիսին մի՝ եւս պաշտեսցէ եւ մի՝ կացցէ ի պաշտաման» (էջ 369)։ Մի քանի ձեռագիր բնագրեր «ամին թողութեանս»-ի փոխարեն ունեն «տոնին թողութեան» (№№ 648, էջ 145ա, 659, էջ 13բ, 3562, էջ 245բ)։ Համտ. վերևում, էջ 39, տողատակ։

Հոդ. ԺԹ. էջ 39—40։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԺԷ. Դարձեալ կարգեցին առաքեալքն թէ չէ իշխանութիւն առաջնորդին առանց իւրոց պաշտօնակցացն առնել զիրս ինչ եկեղեցւոյ, այլ խորհրդով ամենեցուն հրաման տացէ, եւ արասցէ՝ ընդ որում ամենեքին միաբան են եւ ոչ ընդդէմ զանոնան» (էջ 369)։

Հոդ։ Ի. էջ 40։ Հ. Տաշյանը այս մասին գրում է. «Ասորին (կան. ԻԴ) բոլորովին ուրիշ բան է. այսինքն՝ պէրեառաՃերու վրայ կը խօսի, մինչ խմբագրեալ հայն կերպարանափոխ եղած է։ Բարեբախտութեամբ ճիշտ այս կանոնին նախնական հայ թարգմանութիւն հասած է մեզի «Կղեմայ» առաքելական կանոնաց մէջ մտնելով շփոթմամբ իբրեւ Կան. ԶԴ» (էջ 370 ընդգծումը Հ. Տաշյանինն է—Վ. Հ.)։

Հոդ. ԻԱ, էջ 41։ Համտ. ասորի բնագրի հետ. «Ի. Դարձեալ եդին առաքեալքն եթէ որ լոկ են ի մամոնայէ եւ չերթան զկնի արծաթոյ շահից, նոքա ընտրեսցին եւ մերձեցուսցին ի պաշտօն սեղանոյ» (էջ 370)։

Հոդ., ԻԲ. էջ 41—42. Համտ. ասորի բնագրի հետ «ԻԳ. Դարձեալ կարգեցին առաքեալքն թէ որ ամբարտաւանքն են եւ հպարտութեամբ սնապարծութեան ուռուցեալ՝ մի՝ մերձեցուսցին ի պաշտօն, վասն այնր՝ թէ որ բարձրացեալ է առ մարդրկան՝ խոնարհեալ (խոտան) է առաջի Աստուծոյ, եւ ի վերայ նոցա ասացեալ է թէ՝ Ես հատուցից նոցա որ ամբարհաւաճեն» (էջ 371)։

Հոդ. ԻԳ. էջ 42—43։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԻԱ. Դարձեալ կարգեցին առաքեալքն թէ որ կապիցէ տարապարտուց (բուն՝ ըստ պատահման) յանարժանս, պատիժս պատուհասի ընկալցի ըստ արժանի, բայց որ կապեցաւն՝ ընկալցի զկապանսն որպէս թէ ըստ արժանւոյն կապեցաւ» (էջ 371)։

Հոդ. ԻԴ. էջ 43։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԻԶ. Կարգեցին դարձեալ առաքեալքն թէ մի ոք հանդգնեսցի եւ առնիցէ ինչ մի իշխանութեամբ քահանայութեան առանց օրինաց (ըստ արժանւոյն) եւ իրաւանց, այլ արդարութեամբ եւ առանց դսրովանաց ակնառութեան» (էջ 371)։

Հոդ. ԻԵ, էջ 43—44։ Ասորերենը այս հոդվածը չունի։ Հ. Տաշյանը այս մասին գրում է. «Ահա կանոն մ' որ կարծես ամէն հաւանականութիւն ունի խմբագրէն ըլլալու, որմէ է՝ ինչպէս դիտենք արդէն՝ «թէեւ կարի յանարգաց իցէ» նախադասութիւնը։ Արդէն ալ կանոնս նորագոյն է ծագմամբ՝ համեմատութեամբ միւսներուն, եւ՝ կամ խմբագրէն մուծուած եւ կամ հնագոյնն՝ եթէ կար ասոր տեղ՝ անհետ կորսուելու չափ փոխուած։ Վերջին դէպքն հաւանական կ՚երեւայ» (էջ 225)։ Հ. Տաշյանը ենթադրում է, որ այս հոդվածի հիմքը հանդիսացած կլինի Կղեմեսի կանոնախմբի Ծ հոդվածը (էջ 226)։

Հոդ. ԻԶ, էջ 44։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԻԲ. Դարձեալ կարգեցին առաքեալքն թէ որք սովոր են լսել դատաստանս՝ եթէ աչառիցեն եւ պարտաւորիցեն զարդարն եւ արդարացուսցեն զպարտաւորն, մի եւս լուիցեն դատաստան այլ, եւ դարձեալ ընկալցին կշտամբանս վասն ակնառութեան ըստ արժանիս» (էջ 372)։

Հոդ. ԻԷ, էջ 44—45։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԺԸ. Դարձեալ կարգեցին առաքեալքն եթէ վասն այնոցիկ որ ելանիցեն յաշխարհէ բարի վկայութեամբ հաւատոցն Քրիստոսի եւ ի նեղութեան՝ որ վասն անուան նորա, արասցեն զյիշատակ նոցա յաւուր մահուան նոցա» (էջ 372)։

Հոդ. ԻԸ. էջ 45։ Համտ. ասորի բնագրի հետ. «ԻԵ. Կարգեցին դարձեալ առաքեալքն, եթէ թագաւորք հանդերձեալ են հաւատալ ի Քրիստոս, իշխանութիւն լիցի նոցա, զի ելցեն և կացցեն առաջի սեղանոյն ընդ առաջնորդս եկեղեցւոյ. զի եւ Դաւիթ եւ որք իբրև զնայն էին՝ ելանէին եւ կային առաջի սեղանոյ» (էջ 372)։

Հոդ. ԻԹ. էջ 45—46 Համտ. ասորի բնագրի հետ. «ԺԹ. Դարձեալ կարգեցին առաքեալքն եթէ ի պաշտաման եկեղեցւոյ ասասցեն զօրհնութիւնս Դաւթի օր ըստ օրէ, վասն այնր թէ՝ Օրհնեցից

զՏէր յամենայն ժամանակի, յամենայն ժամանակի օրհնութիւնք նորա ի բերանի իմում. եւ դարձեալ՝ ի տուէ եւ ի գիշերի խորհեցայ եւ ասացի եւ լսելի եղեւ ձայն իմ առաջի քո» (էջ 373)։

Հոդ. Լ. էջ 46: Համտ. ասորի բնագրի հետ. «Ժ. Կարգեցին դարձեալ առաքեալքն թէ մի ընթերցցի յեկեղեցւոջ ի վերայ բեմի (այլ գիրք), բայց միայն Հին Կտակարանք եւ Մարգարէք եւ Աւետարան եւ Գործք Առաքինութեանց նոցա» (էջ 373)։

Հոդ. ԼԱ, էջ 46։ Ասորական բնագրին բավական մոտ է և մասամբ փոփոխված. «ԻԷ. Դարձեալ եղին առաքեալքն, թէ հաց պատարագին յիւրում աւուր եփեսցի՝ եկիցէ ի սեղանն, և ոչ զկնի աւուրց՝ որ չէ օրէն» (էջ 373)։ Վերջին հատվածը № 650 ձեռագրում այսպես է. «հաց ջերմ ի սեղանոյն երեսաց տեառն» (էջ 14բ)։

Հոդ. ԼԲ, էջ 46—47։ Ասորի բնագիրը այս հոդվածը չունի։ Հ. Տաշյանը կարծում է, որ այս հոդվածը էական մասով «առուգիւ ասորի բնագիր մը մատնանիշ կ'ընէ» (էջ 223). այդ բանի համար ենթադրաբար մատնացույց անելով Լարուբնան (էջ 225)։ Մի քանի ձեռագրերում «վանս շինելոյ» փոխված է «վասն շինելոյ» (№№ 648, էջ 147ա, 650, էջ 14բ, 651, էջ 6բ, 659, էջ 17բ, 3562, էջ 247բ)։

Հոդ. ԼԳ, էջ 47—49: Այս հոդվածը ասորի բնագիրը չունի։ Հ. Տաշյանը կարծում է, որ այս ավելացվել է հետագայում, հիմք ընդունելով Շահապիվանի ԺԳ հոդվածը, Աստվածաշունչը և ասորի մի բնագիր (էջ 203—204)։ Նա այդ գրում է նկատի ունենալով հոդվածի «նոյնպէս և սահմանեալ առաքելական կանոնաց» հատվածը։ Այս նշումով, ինչպես ենթադրում է Հ. Տաշյանը «խմբագրողը յայտնապէս կ'ըսէ թէ «առաքելական կանոն» մ' ունեցեր է իր առջև եւ զոր իւր յօրինած երկայն կանոնին նիւթոյն վկայ կը կոչէ» (էջ 204)։

Հոդ. ԼԴ, 49—66։ Վերջաբանը թեև ըստ Հ Տաշյանի «ընդհանրապէս քիչ փոխած է հայ խմբագիրը նախնական հայ թարգմանութիւնը» (էջ 374), համենայն դեպս այստեղ կբերենք ասորական բնագիրը ցույց տալու հայերեն բնագրի որոշ շեղումները, երբեմն Աստվածաշնչից բերված մեջբերումների ճոխությունը, կամ վերջին մասի փոփոխությունը, որոնք, ինչպես նշում է Հ. Տաշյանը, արված են «ազգային աւանդութեան չհակառակելու համար» (էջ 97—98, 382)։

«Արդ զայս ամենայն ոչ եթէ անձանց իւրեանց կարգեցին առաքեալքն, այլ այնոցիկ, որ զկնի իւրեանց գալոց իցեն. քանզի կասկածէին թէ պատրաստեալ (հանդերձեալ) էին գայլք զգենուլ զգեստ գառանց. քանզի բաւական էր ինքեանց Հոգին Մխիթարիչ՝ որ ի նոսա, զի՝ զոր աւրինակ եւ կարգել ի ձեռն նոցա զօրէնսս ղայսոսիկ, առաջնորդեսցէ նոցա ըստ օրինաց. զի որք ընկալան ի տեառնէ զօրութիւն և զիշխանութիւն, չէր ինչ նոցա պէտք եթէ յայլոց դնիցին նոցա օրէնք։ Նա եւ Պաւղոս եւ Տիմոթէոս որ շրջէին ի կողմանս (յաշխարհին) Ասորւոց եւ Կիլիկեցւոց՝ զսոյն իսկ զայս օրէնս առաքելոցն եւ զերիցանց աւանդէին ամենեցուն՝ որ ընդ ձեռամբ առաքելոցն էին, յեկեղեցիս աշխարհացն՝ ուր քարոզէին եւ աւետարանէին.

Այլ աշակերտքն յետ դնելոյ զկարգս եւ զօրէնս, ոչ դադարէին ի քարոզելոյ զաւետարանն եւ ի նշանաց սքանչելեաց՝ զոր առնէր Տէրն մեր ի ձեռս նոցա. քանզի ժողովուրդ բազում ժողովէր հանապազ առ նոսա եւ հաւատայր ի Քրիստոս։

Եւ յայլոց քաղաքաց դային առ նոսա եւ՝ լսէին զբանս նոցա եւ ընդունէին. նաեւ Նիկոդեմոսի եւ Գամաղիէլ գլխաւորք ժողովրդեան Հրէից դային առ առաքեալսն ի ծածուկ եւ հաւանէին վարդապետութեան նոցա, այլ Յուդա եւ Ղեւի եւ Փեռի եւ Յուստոս որդիք Աննայի, եւ Կայիափա եւ Աղեքսանդրոս քահանայք դային եւ նոքա առ առաքեալս ի գիշերի եւ խոստովան լինէին ի Քրիստոս թէ որդի Աստուծոյ է. եւ երկնչէին յորդւոց ժողովրդեան իւրեանց յայտնել զխորհուրդս իւրեանց որ առ աշակերտսն։

Եւ ընկալեալ զնոսա առաքելոց սիրով՝ ասէին ցնոսա. Մի վասն պատկառանաց եւ երկիւղի մարդկան կորուսանէք զկեանսն ձեր՝ որ առաջի Աստուծոյ է. եւ պահանջիցիք ընդ հարսն ձեր զվրէժ արեանն Քրիստոսի զոր ընկալան ի վերայ իւրեանց. զի չէ ընդունելի առաջի Աստուծոյ, զի յորժամ իցէ ընդ երկրպագուս նորա՝ դարձեալ երթայցէք եւ խառնիցիք ընդ սպանողս որդւոյ նորա երկրպագելոյ. զիա՞րդ ակն ունիցիք ընդունելի լինել հաւատոց ձերոց ընդ ճշմարիտս, մինչդեռ իցէք ընդ սուտս.. այլ արժան է ձեզ որպէս արս որ հաւատան ի Քրիստոս, խոստովանել յայտնապէս զհաւատս զայս՝ զոր քարոզեմք մեք։

Իսկ իբրեւ լուան նոքա զայս յառաքելոցն՝ աղաղակեցին ամենեքին միաբան որդիքն քահանայից առաջի ամենայն ժողովրդեան առաքելոց թէ զխաչեալն Քրիստոս խոստովանիմք եւ հաւատամք թէ նա ի սկզբանէ է որդի Աստուծոյ եւ ուրանամք յայնցանէ՝ որ յանդգնեցան եւ խաչեցին զնա։ Քանզի եւ քահանայք ժողովրդեան խոստովանէին ի ծածուկ զՔրիստոս. եւ վասն գլխաւորութեան ժողովրդեանն՝ զոր սիրէին, ոչ կամէին յայտնապէս խոստովանել, եւ մոռացան

նորա զգրեալն թէ Տէր է գիտութեան (Տէր սրտագէտ է) եւ ոչ հաստատին կամակորութիւնք (արուեստք) առաջի նորա։

Եւ իբրեւ լուան հարք նոցա զայս յորդւոց նոցա՝ սպառնացան նոցա յոյժ, ոչ զի հաւատացին ի Քրիստոս. այլ զի յայտնեցին եւ առակեցին զխորհուրդս հարց իւրեանց առաջի որդւոց ժողովրդեան իւրեանց։ Բայց որք հաւատացինն յարեցան յաշակերտս եւ ոչ հեռանային ի նոցանէ. զի տեսանէին թէ զոր ինչ ուսուցանէին բազմութեան՝ զնոյն և արդեամբք առնէին առաջի ամենայն ուրուք։ Եւ յորժամ նեղութիւն եւ հալածանք զային ի վերայ աշակերտացն՝ ուրախ լինէին ընդ կցորդ լինել նեղութեանց նոցա, եւ խնդութեամբ ընդունէին զտանջանսն եւ զբանտսն վասն հաւատոցն ի Քրիստոս. եւ զամենայն աւուրս կենաց իւրեանց քարոզէին զՔրիստոս առաջի Հրէից եւ Սամարացւոց. եւ յետ վախճանելոյ առաքելոցն եղեն առաջնորդք եւ հրամանատարք յեկեղեցիս. եւ զոր ինչ աւանդեցին նոցա առաքեալքն եւ ընկալան նոքա ի նոցանէ՝ զամենայն աւուրս կենաց իւրեանց ուսուցանէին բազմութեան։

Նոյնպէս աւանդեցին եւ ետուն եւ նոքա ի վախճանի իւրեանց աշակերտաց իւրեանց զկնի իւրեանց զամենայն ինչ, զոր ընկալան յառաքելոց, եւ զոր ինչ գրեաց Յակոբոս յԵրուսաղէմայ, եւ Շմաւոն ի Հռոմ քաղաքէ եւ Յովհաննէս յԵփեսոսէ, եւ Մարկոս յԱղեքսանդրիայ մեծէ, եւ Անդրէաս ի Փռիւգիայ, եւ Ղուկաս ի Մակեդոնիայ, եւ Յուդա Թովմաս ի Հնդկաց. եւ թուղթքն Առաքելոյն ընթերցեալ լինին եւ ընկալեալ յամենայն եկեղեցիս ընդ ամենայն տեղիս, որպէս ընթեռնուն Գործք Առաքինութեանց նոցա, զոր գրեաց նոցա Ղուկաս, զի յայսմ ծանիցին Առաքեալք եւ Մարգարէք եւ Հին Կտակարանք եւ Նորքս, թէ մի ճշմարտութիւն քարոզեցաւ յամենեսին, մի Հոգի խօսեցաւ յամենեսեան ի միոջէ Աստուածոյ, որում երկիր պագին ամենեքեան եւ զոր աւետարանեցին ամենեքին. եւ ընկալան տիեզերք (աշխարհք) զվարդապետութիւն նոցա։ Եւ արդ ամենայն ինչ որ խօսեցաւ ի Տեառնէ ի ձեռն առաքելոց եւ առաքեալքն աւանդեցին աշակերտաց իւրեանց, հաւատացաւ եւ ընդունելի եղեւ յամենայն կողմանս՝ յակնարկել Տեառն որ ասէ զնոսա թէ Ես ընդ ձեզ եմ մինչեւ կատարի աշխարհ։

Եւ վիճէին ընդ Հրեայս առաջնորդքն ի գրոց մարգարէից, եւ մարտնչէին նաեւ ընդ հեթանոսս մոլորեալս զօրութեամբք նշանացն՝ զոր առնէին անուամբն Քրիստոսի։

Եւ ազգք ամենայն, նաեւ որ բնակեալ էին յաշխարհս հեռաւորս դադարեցին եւ լռեցին աւետարանաւն Քրիստոսի. եւ որ խոստովանէին՝ աղաղակէին ի հալածանս թէ Հալածանքս այսր աւուր եղիցին խաւսնակ փոխանակ մեր՝ զի էաք յառաջ հալածիչք. զի էին ոմանք ի նոցանէ որ մահ սրոյ հրամայէր վասն նոցա, եւ էին ոմանք ի նոցանէ, զորոց զինչս՝ բառնային ի նոցանէ եւ թողուին (զնոսա մերկս) եւ որչափ նեղութիւն կայր ի վերայ՝ այնչափ առաւելուին եւ աճէին ժողովք նոցա. եւ խնդութեամբ սրտից իւրեանց զամենայն ազգ մահու ընդունէին։

Եւ ձեռամբ քահանայութեանն՝ զոր ընկալան առաքեալքն ի Տեառնէ, թռեաւ վաղվաղակի աւետարան նոցա ընդ ամենայն կողմանս աշխարհի. եւ յորժամ այց առնէին միմեանց՝ պաշտէին զմիմեանս։

ա. Ընկալաւ զձեռն քահանայութեան Երուսաղէմ եւ ամենայն աշխարհ Պաղեստինացւոց եւ Սամարացւոց եւ տան Փղշտացւոց, եւ աշխարհ Արաբացւոց եւ Փիւնիկեցւոց եւ որդւոց Կեսարու՝ ի Յակոբայ առաքելոյ, որ եղեւ առաջնորդ եւ հրամանատար յեկեղեցւոջ առաքելոցն՝ որ շինեցաւ ի Սիոն։

բ. Ընկալաւ զձեռն քահանայութեան յառաքելոց մեծն Աղեքսանդրիա եւ Թեբայիս եւ Եգիպտոս ներքին եւ ամենայն աշխարհն Պեղուսիոնի եւ մինչեւ ցսահմանս Հնդկաց՝ ի Մարկոսէ աւետարանչէ, որ եղեւ անդ հրամանատար եւ առաջնորդ յեկեղեցւոջն, զոր շինեաց անդ և պաշտեաց։

գ. Ընկալան զձեռն քահանայութեան առաքելոց Հնդիկք եւ ամենայն աշխարհք ի նմա եւ որ շուրջ զնովաւ են, մինչեւ ի ծովն վերջին ի Յուդայ Թովմայէ, որ եղև առաջնորդ եւ հրամանատար յեկեղեցւոջն, զոր շինեաց անդ եւ պաշտեաց անդ։

դ. Ընկալաւ զձեռն քահանայութեան առաքելոց Անտիոք եւ Ասորիք եւ Կիլիկիա եւ Գաղատիա մինչեւ ցՊոնտոս՝ ի Սիմոնէ վիմէ, զի նա եդ զհիմունս եկեղեցւոյ անդ, եւ քահանայացաւ եւ պաշտեաց անդ մինչեւ ցժամանակն՝ յորում ել նա ի Հռովմ վասն Սիմոնի կախարդի, որ պատրէր զՀռովմայեցիս կարդութեամբք իւրովք։

ե. Ընկալաւ զձեռն քահանայութեան առաքելոց մեծն Հռովմ և Իտալիա և Սպանիա եւ Բրիտանիա եւ Գաղղիա հանդերձ այլովք աշխարհօք որ շուրջ զնոքօք ի Սիմեոնէ վիմէ, որ ել յԱնտիոքէ ի Հռովմ եւ եղեւ հրամանատար եւ առաջնորդ յեկեղեցւոջ, զոր շինեաց անդ եւ շուրջ զնովաւ։

զ. Ընկալաւ զձեռն քահանայութեան առաքելոցն Եփեսոս եւ Թեսաղոնիկէ եւ ամենայն Ասիա եւ ամենայն աշխարհն Կորնթացւոց եւ Աքայեցւոյ եւ որ շուրջ զնովաւ, ի Յովհաննէ աւետարանչէ՝ որ անկաւ զլանջօք Տեառն, եւ շինեաց անդ եկեղեցի եւ պաշտեաց անդ յառաջնորդութեան իւրում որ անդ։

է. Ընկալաւ զձեռն քահանայութեան առաքելոցն Նիկիա եւ Նիկոմեդիա եւ աշխարհն Բիւթանացւոց եւ Գաղատիա ներքին եւ կողմանք որ շուրջ զնովաւ՝ յԱնդրէէ եղբօրէ Սիմոնի վիմի, որ եղեւ առաջնորդ եւ հրամանատար յեկեղեցւոջ, զոր շինեաց անդ եւ քահանայացաւ եւ պաշտեաց անդ։

ը. Ընկալաւ զձեռն քահանայութեան առաքելոցն Բիւզանդիա եւ ամենայն աշխարհն Թրակացւոց եւ որ շուրջ զնովաւ մինչեւ ցգետն մեծ որ որոշէ ընդ սահմանս Բարբարոսին ի Ղուկասայ առաքելոյ՝ որ շինեաց անդ եկեղեցի, պաշտեաց անդ ի հրամանատարութեան և յառաջնորդութեան իւրում, որ անդ։

թ. Ընկալաւ զձեռն քահանայութեան առաքելոց Ուռհա և աշխարհ որ շուրջ զնովաւ յամենայն կողմանց, եւ Սորա եւ Արաբ եւ ամենայն Հիւսիս եւ կողմանք որ զնովաւ եւ Հարաւ եւ ամենայն սահմանք աշխարհին Միջագետաց՝ յԱդդէէ առաքելոյ, որ էր յեւթանասուն եւ երկուց աշակերտաց, որ աշակերտեաց անդ եւ շինեաց անդ եկեղեցի եւ քահանայացաւ անդ եւ պաշտեաց անդ յառաջնորդութեան իւրում, որ անդ։

ժ. Ընկալան զաջ քահանայութեան առաքելոց ամենայն Պարսք եւ աշխարհք Հայոց եւ Մարաց եւ աշխարհք որ շուրջ զԲաբելոնիւ եւ Խուժաստան եւ Գէղք մինչեւ ցսահմանս Հնդկաց, ցԳող եւ Մագող, եւ դարձեալ ամենայն աշխարհք որ շուրջ զամենայն կողմամբքն, յԱգգէէ կերպասագործէ յաշակերտէ Ադդէի առաքելոյ։

ժա. Իսկ այլ ընկերք առաքելոցն չոգան ի հեռաւոր աշխարհս բարբարոսաց, եւ պաշտեցին անդ յառաջնորդութեան իւրեանց, եւ անդ եղեւ ելանել նոցա յաշխարհէս, իբրեւ յաջորդէին աշակերտք նոցա յետ նոցա մինչեւ ցայսօր, եւ փոփոխումն կամ յաւելուած ոչինչ եղեւ ի քարոզութիւն նոցա։

Իսկ Ղուկաս աւետարանիչ կալաւ զայս հոգաբարձութիւն եւ գրեաց զամենայն Առաքինութիւնս Գործոց Առաքելոց եւ զԿարգս եւ զԿանոնս պաշտաման քահանայութեան նոցա եւ թէ յո խոքաւ մի մի ի նոցանէ. արդ հոգաբարձութեամբ Ղուկաս զայս ամենայն եւ բազում ինչ առաւել քան զայս գրեաց եւ եւ ի ձեռս Պրիսկեայ եւ Ակիւղեայ աշակերտաց իւրոց. եւ սոքա յարեալ էին ի նա մինչեւ յաւր մահուան իւրոյ, որպէս յարեալ էին ի Պաւղոս՝ Տիմոթէոս եւ Երաստոս ի Լիստրայ, եւ Մնէոս աշակերտ առաջին առաքելոց, մինչեւ ել նա (Պօղոս) ի Հռովմ քաղաք, եւ եկաց ընդդէմ Տերտիղոսի հռետորի. եւ Ներոն-կայսր ետ գլխատել սրով զնա եւ զՍիմոն վէմ ի Հռովմ քաղաքի» (էջ 374—383)։

№ 3369 ձեռագրում այս վերջաբանը դրված է Կղեմեսի կանոնախմբից հետո (էջ 17ա—21բ) և կարծես վերաբերում է և՛ առաջին և՛ երկրորդ առաքելական կանոնախմբերին։ №№ 648, 3562 ձեռագրերում չի պահվել վերջաբանի չառաւել եւ ուրախ լինէին... որ գայր ի վերայ առաքելոցն» հատվածը (էջ 54, տող 2—4)։

Վերջաբանի այն մասը, որը՛ վերաբերում է առաքյալների առաքելությանը, տարբեր երկրներ, № 659 ձեռագրում տարբեր է։ Այդ ցույց տալու համար զեմադեմ կնշենք երկու բնագրերի հաջորդականությունը.

Կանոնագիրք	№ 659 ձեռագիր	Կանոնագիրք	№ 659 ձեռագիր
ա	զ	ը	բ (?)
բ	դ	(չունի)	ը
գ	թ	թ	ժ
դ	զ	ժ	ժա
ե	ա	ժա	ժբ
զ	ե	ժբ	ժգ
է	է		

Հենց այն հանգամանքը, որ առաքելությունը՛ սկսվում է ոչ թե Հակոբ առաքյալի Երուսաղեմ և շրջակա երկրները կատարված ճանապարհորդությամբ, ինչպես ասորի բնագրում է և Կանոնագրքում, այլ Սիմոն առաքյալի Հռոմ և շրջակա երկրները գնալով, ցույց է տալիս, որ № 659 ձեռագրի գրիչ Մաղաքիան պետք է եղած լինի կաթոլիկ (հմմտ. նաև Կղեմեսի կանոնա-

խմբի և հոդվածի ծանոթագրության հետ), որովհետև № 659 ձեռագրի գրիչը նախապատվությունը տալիս է Հռոմին և ոչ թե Երուսաղեմին։ Բացի այդ, անհրաժեշտ է նշել ոչ միայն վերևում նշված հաջորդականության խախտումը, այլև բովանդակության տարբերությունը. օրինակ.

1. 59 էջի դ. հատվածում «ի Սիմոնէ Վիմէ»-ի փոխարեն № 659 ձեռագիրը ունի «ի Ղուկասէ աւետարանչէ» (էջ 25ա). իսկ վերջին «եւ եղեւ անդ մինչեւ ի ժամանակն յորում եկ նա ի Հռոմ վասն Սիմոնի կախարդի» մասը չունի։

2. Համտ. «ե. Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոցն Քրիստոսի Եփեսոս եւ ամենայն Ասիայ եւ ամենայն աշխարհն Կորընթացւոց եւ Բիւզանդիայ եւ ամենայն որ շուրջ ղնովաւ ի Յովհաննէ աւետարանչէ որ անկաւ զլանջաւքն տեառն եւ եկն Տիմոթէոս աշ⸗[կ]երան Պաւղոսի եւ յաջորդեցաւ փոխանակ նորա, շինեաց եկեղեցի յառաջնորդութեան իւրում եւ հաստատեաց ի նմա սեղան եւ կարգեաց քահանայս եւ պաշտաւնեայս» (№ 659, էջ 25 աբ.)։

3. Համտ. «բ. ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոցն Քրիստոսի Թեսաղոնիկէ եւ Լիւրիկիայ եւ ամենայն աշխարհն Լիւրեկացւոց եւ որ շուրջ ղնովաւ մինչեւ ցգետն մեծ որ որոշէ սահման ընդ բարբարոսսն ի Մաթէոսէ աւետարանչէ. նա շինեաց անդ եկեղեցի եւ կարգեաց քահանայս եւ պաշտաւնեայս» (№ 659, էջ 24բ)։

4. Կանոնագիրքը չունի № 659 ձեռագրի այս մասը. «ը. Ընկալաւ ձեռնադրութիւն քահանայութեան յառաքելոցն Քրիստոսի Երապաւլիս քաղաքն ի Փիլիպոսէ առաքելոյ եւ ի Բարգողիմէոսէ առաքելոյ Լիկոնիայ եւ ամենայն աշխարհն որ շուրջ զնովաւ, զի նա եղեւ անդ գլուխ եւ առաջնորդ եւ հրամանատար եւ քարոզ. շինեաց եկեղեցի եւ հաստատեաց ի նմա սեղան եւ կարգեաց քահանայս եւ պաշտաւնեայս» (№ 659, էջ 26ա)։

5. Կանոնագրքի Թ. հատվածի վերջից № 659 ձեռագիրը շարունակվում է. «Եւ չարչարեցաւ նա ի Սանատրկոյ յարքայէ Հայոց եւ կատարեցաւ ի Հայս եւ դադարեաց քարոզութիւնն առ ժամանակ մի եւ յարոյց Աստուած փոխանակ նոցա զսուրբն Գրիգոր, որոյ բազում չարչարանս կրեալ ի Տրդատայ արքայէն Հայոց, եւ ընկեցեալ ի գուբ եւ անդ լինեալ ամս երեքտասան, պահեալ ի զաւրութենէն Աստուծոյ եւ ապա ի վերուստ հասեալ պատուհաս ի վերայ թագաւորին եւ ամենայն իշխանացն, որոց մոլեգնեալ ի դիւացն տանջէին մինչև հրամանաւն Աստուծոյ երթեալ հանին զԳրիգորիոս ի Վիրապէն. եւ ածեալ զնա՝ ի նմանէ գտանէին զբժշկութիւն եւ զառնային յաստուածպաշտութիւն։ Եւ ապա առեալ տարան զսուրբն ի հայրապետութիւն Հայոց աշխարհին, որոյ ընկալեալ զձեռնադրութիւն հայրապետութեան եւ հասեալ ի Հայս՝ եդ հիմունս եկեղեցւոյ, հաստատեաց սեղան, ձեռնադ[ր]եաց քահանայս եւ կարգեաց պաշտաւնեայս» (էջ 26բ—27ա)։

Մի քանի ձեռագրերում՝ №№ 649, 650, 651, 2964, 3369 չի պահվել վերջաբանի վերջին մասը. «Եւ կատարեն զյիշատակս նոցա մեծաւ պատուով... Եւ զմխիթարիչն եւ զառաջնորդն ամենայնի զսուրբ հոգին» (էջ 65, տող 10, էջ 66, տող 8)։

[1] ձեռագրում առաքելական կանոնախումբը ընդօրինակված է երկու անգամ. նախ՝ ձեռագրի 21ա—36բ էջերում, այստեղ պահվել են առաջաբանը, Ա, Բ, ԼԳ, հոդվածները և վերջաբանը, իսկ երկրորդ անգամ, այլ ձեռագրով. 37ա—48բ էջերում, ուր պահվել է ԺԴ հոդվածից մինչև վերջաբանը, վերջից դարձյալ թերի։ Համեմատությունը կատարեցինք երկու ընդօրինակությունների հետ, փոխադարձաբար լրացնելով եղած թերին։

ԿՂԵՄԵՍԻ ԿԱՄ ԵՐԿՐՈՐԴ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 67: *№ № 657, 659, 3369 ձեռագրերում չի պահվել այս վերնագիրը:*

Ցանկ էջ 67—75, հուն., էջ 8—12: *Վերևում նշված ձեռագրերում չի պահվել ցանկը: Պիտրայի հունարեն հրատարակությունը ևս ունի ցանկ (էջ 8—1°), թեև այստեղ էլ հոդվածների վերնագրերը 85 են. ինչպես հայերենում, սակայն, թեթևակի համեմատությունն ցույց է տալիս, որ հայերեն ցանկը կազմված է հունարենից անկախ. մի երկու օրինակն էլ բավական է դրանում համոզվելու համար.*

α'. περὶ χειροτονιων επισκόπων.

β'. περὶ χειροτονιων πρεσβυτέρων καὶ διακονων.

γ'. περὶ ιερέως γαλα, ἢ μελι ἢ σικερα η οσπρια ἢ ζῶα τῳ θυσιαστηριῳ προσαγοντος.

δ'. περὶ οπωρων οικοι πεμπομενων *(էջ 8):*

ա. Եպիսկոպոսների ձեռնադրության մասին:

բ. Երեցների և սարկավագների ձեռնադրության մասին:

գ. Քահանայի մասին, որը զոհասեղան է մատուցում (բերում) կաթ կամ մեղր կամ ոգելից ըմպելիներ կամ ընդեղեն կամ անասուններ:

դ. Պտուղները տուն ուղարկելու մասին:

Բացառությամբ առաջին վերնագրի, մնացած հոդվածների վերնագրերը բոլորովին տարբեր են: Ի դեպ, մեր ձեռքի տակ գտնվող հունարեն բնագրի երկու այլ հրատարակություններ չունեն այս ցանկը (տես Σύνταγμα II, *էջ 1 և Լաուխերտի մոտ, էջ 7):*

Y ձեռագրում ցանկի ԽԶ հոդվածի վերնագիրը բաժանված է երկու մասի. «ԽԶ. Վասն որք անգոսնեն ղամուսնութիւն:

ԽԷ. Վասն գմսակերութիւն և որք գգինի ճաշակեն» (էջ 17բ):

Ցանկի ԽԶ վերնագրում (տես վերևում, էջ 71) մի անճշտություն կա: Ինչպես պարզվում է համապատասխան հոդվածի բովանդակությունից, բնագրի «ճաշակեն»-ի փոխարեն պետք է լինի «ոչ ճաշակեն»: Ոչ մի ձեռագիր նման ընթերցում չունի, այդ պատճառով այն թողեցինք այնպես, ինչպես ձեռագրերում է:

Երկրորդ վերնագիր, էջ 75: *Հունարենի վերնագիրը շատ համառոտ է և տարբեր հայերենից.* Κανόνες ἐκκλησιαστικοὶ τῶν ἀγίων ἀποστολων *(էջ 13), իսկ* Σύνταγμα*-ում* „Κανόνες τῶν ἁγίων καὶ πανσέπτων ἀποστόλων“, (II, *էջ 1): Իսկ ձեռագրերից երկուսի այս վերնագիրը տարբեր է եղածից «Դարձեալ երկրորդ կանոն առաքելականի ի ձեռն Կղեմայ» (№ 3369, էջ 10ա) և «Հրամանք առաքելոցն ի ձեռն Կղեմայ, առաքելոյ հեթանոսաց, կանոնք եկեղեցականաց» (№ № 659, էջ 29բ, 657, էջ 95ա):*

Հոդ. Բ. էջ 75: *№ 659 ձեռագրում այս հոդվածը այլ շարադասություն ունի. «Բ. Եթէ ի միոջէ եպիսկոպոսէ, սարկաւագք և այլ ժառանգաւորք» (էջ 29բ): Եթե այստեղ բայը ընկած չլիներ, ապա այն հունարենի տառացի թարգմանությունը կլիներ:*

Հոդ Դ, էջ 75 (հուն. հոդ. 3, էջ 13—14): *Լաուխերտի մոտ* μὴ ἐξὸν *բառերից սկսած գրված է առանձին հոդված: № 659 ձեռագրում շարադասությունը մի փոքր այլ է. «Գ. Եթէ ոք եպիսկոպոս կամ երէց* (վերջին բառն ավելացրել են ընդօրինակելուց հետո—*Վ. Հ.) արտաքոյ տեառն հրամանին ի պատարագ կամ ի սեղան մեղր կամ կաթն կամ փոխանակ գինւոյ այլ ինչ անպատեհ իրս, կամ հաւս կամ կենդանի ինչ կամ ունդս արտաքոյ հրամանին բերեալ մատուսցէ՝ լուծեալ լիցի ի քահանայութենէն: Եւ ի դէպ ժամանակի բաց ի նոր հասկաց, այսինքն՝ եղի կամ խաղող միայն, այլ ոչ այլ ինչ իշխել մատուցանել առ սեղանն, իսկ ձէթ յաշտանակն սուրբ և խունկ ի ժամու պատարագին» (էջ 29բ, հմմտ. № 657, էջ 95բ):*

Հոդ. Դ, էջ 75—76: *№ № 657, 659 ձեռագրերում այս հոդվածը միացված է նախորդին:*

Հոդ. Ե, էջ 76 (հուն. հոդ. 5, էջ 14)։ Հունարենի ἐπίσκοπος բառը հայերենում չի պահվել, թեև № 657 և 659 ձեռագրերն ունեն այն (էջ 95բ. 30ա)։ Այս կապակցությամբ Ն. Մելիք-Թանգյանը գրում է. «Կանոնները (Կղեմեսի—Վ. Հ.) գրուած կամ թարգմանուած են այն ժամանակ, երբ եպիսկոպոսական ամուսնութիւնը բոլորովին վերացած էր. հայոց մէջ կամ թե չէ վերջին արտագրողներն են հանել» («Հայոց եկեղեցական իրաւունքը», Ա. գիրք, էջ 86—87)։

№ 657 ձեռագրում մինչև Ե հոդվածը՝ Դ համարի տակ նշված է. «Դ. Յաղագս ոչ հանելոյ եպիսկոպոսի կամ երիցու զկին իւր» (էջ 95բ), իբր Ե հոդվածի վերնագիր, իսկ այստեղ դարձել է առանձին հոդված, բայց անիմաստ։ Իսկ № 3369 ձեռագրում բնագրի «զկին» բառի փոխարեն սխալմամբ գրել են «զկնի» (էջ 10բ)։

Հոդ. Ը, էջ 76—77 (հուն. հոդ. 8, էջ 14—15)։ Հունարենի „ἢ ἐκ τοῦ καταλόγου ἱερατικοῦ προσφορᾶς γενομένης, μὴ μεταλάβοι" հատվածի թարգմանությունը կանոնագրքում ստացել է «որ ժողովոց ոչ հաղորդեսցի» ձևը։ № № 657 (էջ 95բ), 659 (էջ 30ա) ձեռագրերում եղածն ավելի մոտ է հունարենին. «այլ ոք ի քահանայական կարգէն ժողովելոց ոչ հաղորդեսցի»։

Հոդ. Ժ, էջ 77։ № 659 ձեռագրում բովանդակությունը թեև նույնն է, բայց շարադասությամբ տարբերվում է. «Թ. Եթե ոք ոչ իցէ արժանի հաղորդութեան, եթե ի տան անգամ հաղորդակից լիցի նմա՝ և սա ի բաց որոշեսցի» (էջ 30բ)։

№ № 648, 3369 ձեռագրերում Ժ հոդված գրված է ԺԱ հոդվածի տեղը և ընդհակառակը։

Հոդ. ԺԱ, էջ 77։ Երկու ձեռագրերում տարբերությունը շարադասության մեջ է. «Ժ. Եթե ոք ընդ լուծելոյ ի քահանայութենէն այլ ոք ժառանգաւոր իբրև ընդ քահանայի աղաւթակից լիցի և նա ևս ի բաց լուծցի» (№ № 659, էջ 30բ, 657, էջ 95բ)։

Հոդ. ԺԲ, էջ 77 (հուն. հոդ. 12—13, էջ 15—16)։ Հայերենում հունարենի երկու հոդվածները միացրել են միմյանց, հավանաբար նկատի ունենալով, որ հուն. 13-րդ հոդվածը կազմում է 12-րդի շարունակությունը։ Լաուխերտի մոտ այս երկու հոդվածները ևս միացված են։ Կանոնագրքում չի պահվել հուն.-ի ἢ λαϊκὸς բառը։ «Թէպէտ եւ էր ընդունելի» (էջ 77, տող 12) բառերից սկսվում է հուն.-ի 13-րդ հոդվածը։ Մինչդեռ երկու այլ ձեռագրերում եղածն ավելի մոտ է հունարենին. «ԺԱ. Եթե ոք ժառանգաւոր կամ ժողովրդական ի բաց որոշեալ և յետոյ ընկալեալ և երթեալ յայլ քաղաք ընկալեալ եղև առանց ընծայական գրոց՝ ի բաց որոշեսցին որք ընկալանն և որ ընկալեալն եղև։ Իսկ եթե ընդ բանիւ որոշմամբ էր՝ առաւել ևս դիցի ի վերայ նորա որոշումն, որպէս ստոյ և պատրողի եկեղեցի Աստուծոյ» (№ № 659, էջ 30բ—31ա, 657, էջ 95բ—96ա)։

Հոդ. ԺԳ, էջ 77—78 (հուն. հոդ. 14, էջ 16)։ Կանոնագրքի ունեցածն ընդհանուր առմամբ ճիշտ է արտահայտում հունարենի միտքը, մասնավորապես հուն.-ի վերջին մասը՝ „τοῖς ἐκεῖσε λόγῳ τῆς (ա. Συν., II. L., չիք τῆς) εὐσεβείας συμβάλλεσθαι, καὶ τοῦτο δὲ οὐκ ἀφ' ἑαυτοῦ, ἀλλὰ κρίσει πολλῶν ἐπισκόπων καὶ παρακλήσει μεγίστῃ" կանոնագրքում խիստ համառոտ է՝ «որք անդն են... աղաչանաւք մեծաւք»։ Հուն.-ի այս հոդվածը համեմատաբար լավ է պահպանվել № № 659, 657 ձեռագրերում. «ԺԲ. Եպիսկոպոսի ումեք մի՛ եղիցի արժանաւոր թողուլ զիւր բնակութիւն եւ զայլոյ իշխանութիւն երթալ ունել. թէպէտ եւ ի բազմաց հարկաւորեալ լիցի, բայց եթե իրաւացի ինչ պատճառք հարկեցուցանեն զնա զայս առնել, որպէս զի աւելի աւգտութիւն ինչ կարել առնել նմա. այնոցիկ որ երթան ի հոգևոր բըս բարէպաշտութեան. եւ սակայն զայս ոչ յինքենէ, այլ մեծապէս աղաչանաւք» (էջ 31ա, էջ 96ա)։

Հոդ. ԺԴ, էջ 78 (հուն. հոդ. 15—16, էջ 16)։ Հայերենում հունարենի երկու հոդվածները միացրել են միմյանց, նկատի ունենալով, որ հուն.-ի 16-րդ հոդվածը հանդիսանում է 15-րդի շարունակությունը։ «Ապա եթէ եպիսկոպոս» բառերից (էջ 78, տող 11) սկսվում է հուն.-ի 16-րդ հոդվածը։

№ № 659, 657 ձեռագրերում այս հոդվածը համապատասխանում է կանոնագրքում եղածին, բայց ունեն առանձին բառերի թարգմանական տարբերություններ. հուն. „παροικία" բառը կանոնագրքի բնագրում հանդիպում ենք երկու անգամ «պանդխտութիւնն» և «պանդխտութեան» ձևով, իսկ այս ձեռագրերում՝ «բնակութիւն» ձևով. այդ պատճառով էլ, որպես բանասիրական հետաքրքրության առարկա, № 659 ձեռագրից բերում ենք այդ հոդվածը ամբողջությամբ. «ԺԳ. Եթե ոք երէց կամ սարկաւագ կամ բնաւ իսկ ի քահանայական կարգէ ի բաց ընկեցեալ զիւր բնակութիւնն, յայլ տեղիս երթիցէ եւ բոլորովին անտի փոխեալ որջեսցի յայլոյ բնակութիւն՝ առանց իւրոյ եպիսկոպոսին, զայնպիսին հրամայեմք ոչ եւս իշխել պաշտել զքահանայութիւնն, մանաւանդ կոչեցեալ զնա իւրոյ եպիսկոպոսին՝ դառնալ յիւր տեղի և ոչ լուաւ, իբրեւ զժողովրդական հաղորդեսցի ընդ նոսա

ուր չոգաւն։ Իսկ եթե եպիսկոպոս ուր է առ ոչինչ համարեսցի, զի ի վերայ որոշել նոցա պատուհաս եւ ընկալցի զնոսա ի վիճակ պաշտաման, ի բաց որեշեսցի եւ նա իբրեւ զվարդապետն անկարգութեամբ» (էջ 31ա, հմմ. № 657, էջ 96ա)։

Հոդ. ԺԵ, էջ 79, (հուն. հոդ. 17, էջ 16—17)։ *Բնագրի «յետ մկրտութեանն» համապատասխանում է հունարենի „μετὰ τὸ βάπτισμα“-ին, մինչդեռ № № 659, 657 ձեռագրերում այդ բառն աղճատվել և դարձել է «յերկմտութեանն» (էջ 31բ, էջ 96ա)։*

Հոդ. ԺԶ, էջ 79 (հուն. հոդ. 18, էջ 17)։ *Հունարենի „ἢ τῶν ἐπὶ σκηνῆς“ հատվածը հայերենում չի պահվել։* Ե *ձեռագրում այս հոդվածը գրված է Ի և ԻԱ հոդվածների միջև։*

Հոդ. ԺԷ, էջ 79։ *Հմմտ. № № 659, 657 ձեռագրերում եղածը. «ԺԶ. Որ երկուս քորս կանայս էառ կամ զքեռորդի, ոչ կարէ գալ ի վիճակ քահանայութեան» (էջ 32ա, էջ 96ա)։*

Հոդ. ԺԸ, էջ 79։ *Հմմտ. № № 659, 657 ձեռագրերում եղածը. «ԺԷ. Եթե միջնորդաւք ոք վիճակեսցի ի քահանայութիւն՝ ի բաց լուծեալ եղիցի» (էջ 32ա, էջ 96ա)։*

Հոդ. ԺԹ, էջ 79. *Հմմտ. Ն. № 659, 657 ձեռագրերում եղածը. «ԺԸ. Ներքինի թէ ի մարդկան բռնութենէ եղեւ կամ ի հալածանս կարեցան արականքն կամ ի բնէ նոյնպէս ծնեալ եղեւ եւ արժանի իցէ վարուց լաւաց՝ եղիցի եպիսկոպոս» (էջ 32ա, էջ 96ա)։*

Հոդ. Ի, էջ 79 (հուն. հոդ. 22, էջ 17)։ *Հմմտ. № № 659, 657 ձեռագրերում եղածը. «ԺԹ. Որ ոք զինքն կրճատեաց՝ ոչ եղիցի քահանայ, զի անձնասպան է եւ Աստուծոյ արարածոյն թշնամի» (էջ 32ա, էջ 96ա)։*

Հոդ. ԻԳ, էջ 80։ *№ 3369 ձեռագրում բացակայում է «զեբրիս ամս» հատվածը (էջ 11բ)։*

Հոդ. ԻԳ, էջ 80 (հուն. հոդ. 25, էջ 18)։ *Հուն.-ի վերջին հատվածը Լաուխերտի մոտ դրված է որպես առանձին հոդված, որը նաև ընդարձակ է՝* „Ὁμοίως δὲ οἱ λοιποὶ κληρικοὶ τῇ αὐτῇ αἱρέσει ὑποκείσθωσαν“. *Տարբեր է միայն № 659 ձեռագրում եղածի վերջին մասը՝ «նմանապէս եւ ամենայն վիճակեալք ի պաշտաւն ժառանգութեան» (էջ32բ), իսկ սրան համապատասխան կանոնագրքում եղածը № 657 ձեռագիրը չունի (էջ 96բ)։*

Հոդ. ԻԴ, էջ 80։ *№ 659 ձեռագրում շարադասությունը տարբեր է. «ԻԳ. Որք եկեալ են ի վիճակն չեւ եւս ամուսնացեալք՝ հրամայեմք ամուսնանալ զգրակարդացս միայն եւ զսաղմոսողսն» (էջ 32բ)։ № 3369 ձեռագրում այս հոդվածը վերջից շարունակվում է. «Սաղմոսասացս միան, ապա թէ չեն ամուսնանալ՝ լիցին եպիսկոպոս եւ կամ ժառանգաւոր» (էջ 11բ)։ Իսկ № 657 ձեռագրում չեն պահվել ԻԴ—ԽԷ հոդվածները։*

Հոդ. ԻԵ, էջ 81 (հուն. հոդ. 27, էջ 18)։ *Հուն.-ի* ἀδικήσαντας *(անարդար վերաբերվողներին) բառը թարգմանված է «զկռուողս»։*

№ 659 ձեռագրում սույն հոդվածն այսպես է. «ԻԴ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ թէ հարկանելով զհաւատացեալս մեղուցեալս կամ զանհաւատս ապիրատս, այսպէս կամեսցի երկեցուցանել, լուծանել զնոսա հրամայեմ, քանզի ոչ ուրուք զայս տէրն ուսոյց, այլ զնորին հակառակն, ինքն տանջեցաւ՝ այլ ոչ զոք եհար, թշնամանեցաւ եւ ոչ փոխարէն թշնամանեաց, չարչարեցաւ եւ ոչ սպառնացաւ» (էջ 32բ)։ Իսկ այս հոդվածի սկզբի «Զեպիսկոպոս եւ զերէց... լուծանել հրամայեմք» հատվածի փոխարեն № 3369 ձեռագիրը ունի «Եպիսկոպոս կամ քահանայ եւ կամ սարկաւագ հարկանօղսն կամ զանհաւատսն զկռւոս եւ ի ձեռս այսոցիկ կեցուցանել հրամայեցաք» (էջ 11բ—12ա)։

Հոդ. ԻԶ, էջ 81։ *Հմմտ. № 659 ձեռագրում եղածը «ԻԵ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ լուծաւ արդարապէս յաղագս յայտնի ըստգտանաց եւ իշխեսցեն յանդիմանել եւ մերձենալ ի նոյնպիսում, զոր երբեմն ընձեռեալ էր նմա ի սպասաւորութիւն պաշտաման, սա ամենեւին արտաքս հատեալ ընկեցեալ լիցի յեկեղեցւոյն» (էջ 33ա)։*

Հոդ. ԻԷ, էջ 82։ *Հմմտ. № 659 ձեռագրում եղածի սկիզբը. «ԻԶ. Եթե ոք եպիսկոպոս ի ձեռն ընչից այս պատուոյ հասանել կարաց...» (էջ 33ա)։*

Հոդ. ԻԸ, էջ 82։ *Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԻԷ. Եթե ոք եպիսկոպոս զինուորական իշխանաւք վարեսցեալ բռնութեամբ կալաւ զեկեղեցի՝ լուծցի եւ ի բաց որոշեսցի եւ ամենեքին որք հաղորդին ընդ նմա» (էջ 33ա)։ № 3369 ձեռագրում «բուռն» բառի փոխարեն սխալմամբ գրված է. «րեռն» (էջ 12ա). հմմտ. հունարենը՝* ἐγκρατής։

Հոդ. ԻԹ, էջ. 82—83։ *Ահա № 659 ձեռագրում եղածը. «ԻԸ. Եթե ոք երէց արհամարհեսցէ զիւր եպիսկոպոս եւ առանձինն ժողովս արասցէ եւ սեղան կանգնեսցէ, ոչ ինչ կարացեալ գտանել զեպիսկոպոսն ի բարէպաշտութեան եւ յարդարութեան ի բաց լուծցի, իբրեւ զիշխանութիւն սիրող, քանզի բռնաւոր է։ Եւ այլ վիճակեալք որ ընդ նոսա միաբանեսցին՝ այսոքիկ յետ միանգամ եւ երկիցս և երիցս եպիսկոպոսին աղաչելոյ եղիցի նզովեալ» (էջ 33բ. վերջին բառն ավելացրել են ուրիշները)։*

Հոդ. Լ, էջ 83: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԻԹ. Եթե երէց կամ սարկաւագ յիւր եպիսկոպոսէն ընդ բանիւ եղեւ որոշել զնա, ոչ եղիցի իրաւացի յայլմէ եպիսկոպոսէ ընդունել, այլ յայնմանէ որոշեաց զնա, բայց թե մեռանել դէպ լիցի՝ որոշեաց եպիսկոպոսն» (էջ 33բ)։

Հոդ. ԼԱ, 83 : Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «Լ. Ոչ զոք յաւտարաց եպիսկոպոսաց կամ երիցանց կամ սարկաւագաց առանց ընծայական թղթոյ արժանի առնել ընդունել, եւ թէպէտ եւ ունիցին թուղթ, սակայն քննիցին, զի թէ գացին քարոզք բարէպաշտութեան՝ ընկալեալք եղիցին. ապա եթե ոչ զպէտս նոցա տալով զի հաղորդութիւն մի՛ ընկալցին, քանզի բազում ինչ եւ խաբեութեամբ լինի» (էջ 33բ—34ա)։

Հոդ. ԼԲ, էջ 83—84: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը «ԼԱ. Զեպիսկոպոսունս գիտել պարտ է զգաւառին առաջին եւ համարել զնա իբրեւ զգլխաւոր եւ ոչ ինչ աւելի գործել առանց նորա գիտութեանն իրաւացի, եւ գաւառին որ ընդ ձեռամբ նորա. այլեւ ոչ նա առանց նոցա կամաց, այսինքն է եպիսկոպոսացն արասցէ ինչ, զի այսպէս եղիցի միակամութիւն և փառաւորեսցի Աստուած ի ձեռն Յիսուսի եւ Հոգւոյն սրբոյ» (էջ 34ա)։

Հոդ. ԼԳ, էջ 84: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԼԲ. Եպիսկոպոս մի՛ իշխեսցէ արտաքոյ իւրոյ սահմանաց ձեռնադրութիւնս առնել ի քաղաքս եւ ի գաւառս, որք ոչ են ընդ նորա իշխանութեամբ. իսկ եթե յանդգնեսցի արարեալ զայս առանց կամաց որ քաղաքաց եւ գիւղից եւ գաւառին իշխեսցէ՝ լուծեալ եղիցի» (էջ 34աբ)։

Հոդ. ԼԴ, էջ 84: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԼԳ. Եթե ոք ձեռնադրեալ եպիսկոպոս ոչ առցէ յանձն զպաշտաւնն եւ զհոգս ժողովրդեանն ընձեռեց[ել]ոյ նմա՝ որոշեալ եղիցի մինչեւ յանձն առցէ. նմանապէս կամ երէց կամ սարկաւագ։ Իսկ եթէ չոգաւ եւ ոչ ընկալան՝ չեղեւ ինքն պատճառ, այլ ժողովրդոյն չարութիւն, նա եպիսկոպոս եղիցի. բայց վիճակեալք քաղաքին որոշեսցին, զի այնպիսի անհնազանդ ժողովրդեան խրատիչք ոչ եղեն» (էջ 34բ)։

Հոդ. ԼԵ, էջ 84—85 (ՌուՏ. Ռոդ. 37, էջ 21): Հունարենի վերջին δεύτερον δὲ ὑπερβερεταίου δωδεκάτῃ հատվածի դիմաց հայերենը ունի «Եւ երկրորդն՝ յաշնան»։ ὑπερβερεταῖος ամիսը, համաձայն Ֆ. Գինցելի, մակեդոնական, եփեսական և մի քանի այլ վայրերի տոմարի վերջին ամիսն է և տևում է օգոստոսի 24-ից մինչև սեպտեմբերի 22-ը (տես F. Ginzel, Handbuch der mathematischen und technischen chronologie, Leipzig, 1914, III Band, S. 1, 19—20)։ Զոնարասը և Բալսամոնը իրենց մեկնություններում ὑπερβερεταῖος-ը նույնացնում են հոկտեմբերի հետ։ Բալսամոնը գրում է. „ὑπερβερεταῖος δὲ ὁ 'Οκτώβριος 'εστι μήν". Հմմտ. նաև Զոնարասի կարծիքը „ἤγουν τὸν 'Οκτώβριον· οὗτος γὰρ ὁ ὑπερβερεταῖος" (Σύνταγμα. II, էջ 51, 125)։ Նշանակում է ὑπερβερεταίου δωδεκάτῃ-ն պետք է թարգմանել «հոկտեմբերի 12-ին»։ Այդպես թարգմանել է Նիկոդիմը (տես Правила (κανόνες) православной церквы, т. 1, СПб, 1911, стр. 101)։ Տարին երկու ժողով լինելու մասին տես նաև Նիկիայի Ե և Անտիոքի Ի կանոններում և դրանց համապատասխան ծանոթագրություններում։

№ 659 ձեռագրում եղածը մի փոքր այլ է. «ԼԴ. Երկիցս ի տարւոջ ժողով լիցի եւ քննութիւնս արասցեն առ միմեանս կարգաց բարէպաշտութեան եւ զպատահեալ ընդդիմութիւնս եկեղեցականս լուծցեն, միանգամ ի չորրորդում շաբաթուն Պենտեկոստէին, իսկ երկրորդ անգամ ի հոռի ամսեան որ աւր ԺԷ» (էջ 34բ)։ Վերջին այս տվյալը հմմտ. Անտիոքի Ի կանոնի տվյալի հետ։ Արդյո՞ք «ի հոռի… աւր ԺԷ»-ն առաջ չի եկել «Ժ-րդ ի հոռոմի ամսոյ»-ից՝ սխալ կամ անուշադիր ընդօրինակելիս։

Հոդ. ԼԶ, էջ 85: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԼԵ. Ամենայն եկեղեցական իրաց եպիսկոպոսն հոգ տարցի եւ խնամակալ եղիցի իբրեւ առաջի աչաց Աստուծոյ, եւ մի՛ եղիցի նմա իրաւացի զողանալ ինչ յայնցանէ եւ կամ ազգականաց զԱստուծոյսն շնորհել. իսկ եթե աղքատք իցեն, տացէ ինչ, այլ ոչ պատճառաւ նոցա զեկեղեցականսն վաճառել» (էջ 35ա)։ № 3369 ձեռագրում «աւցտել»-ի փոխարեն սխալմամբ գրված է «օրհնել» (էջ 13ա)։

Հոդ. ԼԷ, էջ 85: № 659 ձեռագրում այս հոդվածի վերջին մասը այսպես է. «քանզի նա է որում հաւատացեալ է զժողովուրդն Տեառն եւ վասն ոգւոց նոցա բան պահանջեալ լինի» (էջ 35ա)։

Հոդ. ԼԸ, էջ 85—86 (ՌուՏ. Ռոդ. 40, էջ 21—22): Հունարենի „κυριακά" (տերունական) բառը հայերենում գրված է «եկեղեցւոյն» ձևով։ Ուզում է ասել եպիսկոպոսի անձնական ունեցածը և եկեղեցու ունեցածը պետք չէ շփոթել։ Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԼԶ. Եղիցի յայտնեալ եպիսկոպոսին իրք, եթե կայցէ իրք ինչ առանձինն, եւ եկեղեցականքն

յայտնի, զի իշխանութիւն կալցի եպիսկոպոսի վախճանելն իւրում, որո՛ց կամեսցի եւ ո՛ւմ կամեսցի թողուլ. եւ մի պատճառաւ եկեղեցական իրաց զրկեալ լինիցի յիւրոց եպիսկոպոսին, զի թերեւս կին եւ որդիս ունիցի առ ազգականս կամ ծառայս։ Քանզի իրաւացի է այս առաջի Աստուծոյ եւ մարդկան, որպէս զի մի՛ եկեղեցին վնասեսցի անգիտութեամբ եպիսկոպոսին իրաց։ Եւ մի՛ եպիսկոպոսն կամ ազգականք իւր պատճառաւ եկեղեցւոյն յիւրեանց իրացն զրկեալ եղիցին և կամ ի նեղութիւն ինչ արկանել իւրոց ազգականաց և մահ նորա հայհոյութիւն կրեսցէ» (էջ 35աբ)։ № 3369 ձեռագրում չի պահվել կանոնագրքի «Չկաս ինչ կրել... իւր պատճառանաւ ք եկեղեցւոյն» հատվածը (էջ 13ա)։

Հոդ. ԼԹ, էջ 86—87: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԼԸ. Հրամայեմք եպիսկոպոսին իշխանութիւն ունել եկեղեցական իրաց. քանզի թէ զպատուական ոգիս մարդկան հաւատալի է նոցա, որչափ եւս առաւել զապականելի իրս ի նոսա թողուլ. որպէս զի նորա իշխանութեամբ եւ խնամակալութեամբ ամենայն ծախեսցի կարաւտելոց ի ձեռն երիցանց եւ սարկաւագաց բաժանեալ հանդերձ Աստուծոյ երկիւղիւն եւ ամենայն զգուշութեամբ կցորդութիւն կալցի եւ ինքն թէպէտ ինչս ունիցի հարկաւորս վասն աւտարաց եղբարց ընդունելութեան, որպէս զի ոչ միով աւրինակաւ կարաւտութիւն լինել նոցա. քանզի աւրէնք Աստուծոյ հրամայեցին, որք սեղանոյն պաշտաւնեայքն են, ի սեղանոյն անտի վայելեն։ Քանզի և ոչ զինուորն յիւրոց թոշակացն զէն պատերազմի պատրաստէ» (էջ 35բ—36ա)։

Հոդ. Խ, էջ 87 (հուն. հոդ. 42, էջ 23): Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԼԹ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ թե տապեղուլանց եւ արբեցութեանց պատրաստեսցեն՝ կա՛մ դադարեսցեն յիրացն կա՛մ լուծցին» (էջ 36ա)։ Ինչպես այս, այնպես էլ մյուս հոդվածներում № 659 ձեռագրից մեջբերվածները մեկ անգամ ևս ցույց են տալիս, որ սրանք ավելի պարզեցված են։ Օրինակ հուն. „κύβοις" բառը, այստեղ հանդիպում ենք լատինացված ձևով «տապեղուլանց» tabul—տաբեղ=տախտակ։ Իսկ № 3369 ձեռագիրը չունի կանոնագրքի «քուէից» բառը (էջ 13բ)։

Հոդ. ԽԱ, էջ 87: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «Խ. Սարկաւագաց եւ կէսսարկաւագաց եւ գրակարդացո[ղ]ք և սաղմոսողոք, նմանապէս վարեալ կամ դադարեսցին կամ ի բաց որոշեսցին։ Նոյն աւրինակ եւ ժողովրդականն» (էջ 36ա)։ № 3369 ձեռագրում բնագրի «սաղմոսերգաց»-ի փոխարեն կարդում ենք «երգեցողաց» (էջ 13բ)։ a ձեռագրում այս հոդվածը, թերևս սխալմամբ, կրկնված է նաև 38բ—39ա էջերում։

Հոդ. ԽԲ, էջ 87. Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԽԱ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ թէ վաշխս պահանջեսցեն կամ տոկոսիս ի փոխառուացն՝ կա՛մ դադարեսցեն կա՛մ ի բաց լուծցին» (էջ 36բ)։

Հոդ. ԽԳ, էջ 87: Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ԽԲ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ եթե ընդ հերետոս, այսինքն ընդ թերահաւատս աղաւթակիցք միայն եղեալք՝ ի բաց որոշեսցին, ապա թէեւ զնոսա յորդորեսցին աղաւթս կատարել իբրեւ վիճակելոց՝ լուծցին ի քահանաութենէ» (էջ 36բ)։

b ձեռագրում այս հոդվածը դրված է սույն կանոնախմբի ԽԴ և ԽԵ հոդվածների միջև։

Հոդ. ԽԴ, էջ 87—88 (հուն. հոդ. 46, էջ 23): Հունարենը իրավամբ չունի «կամ սարկաւագ» բառերը։ Հմմտ. № 659 ձեռագրի սկզբի մասը, որը մի փոքր ընդարձակ է. «ԽԳ. Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ թե զհերետիկոսաց մկրտութիւնն ընկալցին կամ զպատարագ կամ զընծայ՝ լուծանել հրամայեմք» (էջ 36բ)։

Հոդ. ԽԵ, էջ 88: Ձ. 3369 ձեռագրում այս հոդվածը դրված է սույն կանոնախմբի ԽԸ և ԽԹ հոդվածների միջև։

Հոդ. ԽԶ, էջ 89: № 659 ձեռագրում հոդվածի վերջին մասն է տարբեր. «այլ հայհոյելով և բամբասելով զարարածս՝ կա՛մ ուղղեսցէ զինքն կա՛մ ի բաց լուծցի եւ յեկեղեցւոյ արտաքս ընկեսցի. նմանապէս եւ ժողովրդականն» (էջ 37ա)։ Ձ. 3369 ձեռագրում չի պահվել այս հոդվածի «մոռացեալ թէ ամենայն... արու եւ էգ» հատվածը։

Հոդ. ԽԸ, էջ 89 (հուն. հոդ. 53, էջ 26): Հայերենի «գինւոյ լուծցի» բառերի միջև հունարենը ունի „βδελυσσόμενος καὶ οὐ δι' ἄσκησιν„ հատվածը։

Հմմտ. № Ձ. 659, 657 ձեռագրերում եղածը. «ԽԷ. Եթե ոք եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ յաւուրս տաւնից ոչ ճաշակէ ի մսոյ եւ ի գինւոյ՝ ի բաց լուծցի, իբրեւ խաւարեալ խղճի մտաւք. եւ պատճառք գայթակղութեան բազմաց եղեալ» (էջ 37բ, էջ 96բ)։

Հոդ. Ծ, էջ 89 (հուն. հոդ, 55, էջ 27): Հայերենի «անիրաւաբար» բառը հունարենը չունի. մինչդեռ հունարենի մի այլ հոդվածում՝ 84 (հայերենը՝ ՀԸ) նշված է παρὰ τὸ δίκαιον

(անիրավարար)։ Թեև մի քանի ձեռագրերում «անիրաւարար»-ի փոխարեն հանդիպում ենք «իրաւարար» (№ № 648, էջ 157ա, 3369, էջ 14ա, 3562, էջ 254ա)։

Հոդ. ԾԲ, էջ 89 (հուՑ. հոդ. 57, էջ 27)։ *Հուն.-ի* „ἢ τὸν τὰς βάσεις πεπληγμένον χλευάσει" *հատվածի դիմաց Կանոնագրքում կարդում ենք «կամ զդէմսն փնասեալ այպանեսցէ», որը սակայն, տարբեր բան է։*

№ № 659, 657 ձեռագրերում տարբեր է հոդվածի երկրորդ մասը. «կամ զդէմոն ասել՝ այպանեսցէ եւ նշաւակեսցէ եւ պատրեսցէ՝ ի բաց որոշեսցի. Նմանապէս եւ ժողովրդականն» (էջ 37բ—38ա, էջ 96բ)։ № 3562 ձեռագրում բացակայում է «որոշեսցի Նմանապէս եւ ժողովրդականք» հատվածը (էջ 254ա)։ Իսկ № 3369 ձեռագրում այս հոդվածը սկսվում է այսպես. «Եպիսկոպոս կամ քահանայ եւ կամ սարկաւագ անփոյթ» և այլն (էջ 14բ)։

Հոդ. ԾԳ, էջ 89 (հուՑ. հոդ. 58, էջ 27)։ *Հուն.-ի վերջին* „ἐπιμένων δὲ τῇ ραθυμίᾳ" *հատվածը Կանոնագրքում թարգմանված է. «ապա եթէ յամառեսցի չածել ուղղութիւն» ձևով, որը լրիվ չի արտահայտում հունարենի միտքը։ Հմմտ. № № 659, 657 ձեռագրերում եղածը. «ՃԲ. Եպիսկոպոս կամ երէց անփոյթ առնելով զժառանգաւորսն խրատել եւ զժողովրդականսն առ ի բարէպաշտութիւն՝ ի բաց որոշեսցի. իսկ եթե ի նմին յուղղութեան կացցեն՝ լուծեալ լիցին» (էջ 38ա, էջ 96բ)։*

Հոդ. ԾԴ, էջ 90 (հուՑ. հոդ. 59, էջ 27)։ *Հունարենի* ἐπιμένων δὲ καθαιρείσθω *հատվածը բացակայում է հայերենում։ Վերջինս պետք է լինի «որոշեսցի իբրեւ» բառերի միջև։*

Հմմտ. № № 659, 657 ձեռագրերում եղածը. «ԵԹԵ ոք եպիսկոպոս կամ երէց կարաւտելոց ի պիտոյից ուրուք վիճակելոցն ոչ լցցէ զկարաւտութիւնն, ի բաց որոշեսցի, որպէս սպանաւղ եղեալ եղբաւր իւրոյ» (էջ 38ա, էջ 96բ)։ № 3369 ձեռագրում այս հոդվածը սկըսվում է այսպես. «ԵԹէ ոք եպիսկոպոս կամ երէց եւ կամ սարկաւագ ի ժառանգաւորաց» և այլն (էջ 14բ)։

Հոդ. ԾԵ, էջ 90 (հուՑ. հոդ. 60, էջ 27)։ *Հայերենը բառացի համապատասխանում է հունարենին, միայն վերջինիս* „καὶ τοῦ κλήρου" *հատվածը, որը պետք է լիներ «ժողովրդոց լուծցի» բառերի միջև, հայերենում չի պահվել։*

№ № 659, 657 ձեռագրերում այս հոդվածը բավական ընդարձակ է. «ԵԹԵ ոք զըստ (sic) *անուն վերագրէ անգ, այսինքն ծածուկդ կոչին իբրեւ զսուրբ եւ զուղիղ գրեն, համարձակ յեկեղեցւոյն ընթերցցե առ ի փնաս ժողովրդեանն՝ լուծեալ լուծցին» (էջ 38ա, էջ 96բ)։*

Հոդ. ԾԶ, էջ 90։ *Հմմտ. № № 659, 657 ձեռագրերում եղածը. «ԾԵ. ԵԹԵ ամբաստանութիւն եղիցի զհաւատացելոյ ումեքէ պոռնկութեան եւ կամ շնութեան կամ այլոյ ինչ անպատեհ եւ հրաժարական գործոյ եւ հանդիմանեալ գտցի ի ժառանգութիւն՝ վիճակի եկեղեցւոյ ի սպասաւորութեան ոչ լիցի արժանի յառաջ գալ» (էջ 38բ, էջ 96բ)։*

Հոդ. ԾԷ, էջ 90 (հուՑ. հոդ. 62, էջ 28)։ *Հունարենի* ἀρνήσηται *բառը հայերենում թարգմանված է. «կորուսցի»։ Հայերեն «կորուսցի» նշանակում է* կորցնի, *ծովի, մինչդեռ հունարենում ունենք* ἀρνήσηται, *այսինքն* մերժի, հրաժարվի, ուրանա. *Հենց այդպես է գրված № № 659, 657 ձեռագրերում, «ուրասցի զանուն Քրիստոսի» (էջ 38բ, էջ 97ա)։ Հունարենը չունի նաև «լուծցի և» բառերը։ Հոդվածի վերջում հունարենի մի հատվածը* „μετανοήσας δέ, ὡς λαϊκὸς δεχθήτω" *չի պահվել հայերենում։*

Հոդ. ԾԹ, էջ 91 (հուՑ. հոդ. 66, էջ 29)։ *Հայերենը բավական համառոտ է։ Այստեղ չի պահվել* πλὴν τοῦ ἑνὸς μόνου καθαιρείσθω· εἰ δὲ λαϊκὸς *հատվածը։*

Հոդ. Կ, էջ 91 (հուՑ. հոդ. 64, էջ 29)։ *Հունարենի* καὶ καθαιρείσθω καὶ ἀφοριζέσθω *հատվածը հայերենում արտահայտված է «լուծցի» բառով։*

Հոդ. ԿԲ, էջ 91։ *Հմմտ. № № 659, 657 ձեռագրերում եղածը. «ԵԹԷ ոք զկոյս անխաւս բռնաբարեալ կալցի՝ ի բաց որոշեսցի եւ մի՝ լիցի նմա իշխանութիւն այլ առնուլ. այլ զնոյն զայն ունել ընդ որ հաճեցաւ, թէպէտ եւ կարի տառապեալ իցէ» (էջ 39աբ, էջ 97ա)։*

Հոդ. ԿԵ, էջ 92, (հուՑ. հոդ. 70, էջ 29—30)։ *Կանոնագրքում չի պահվել* ἢ διάκονος ἢ εἰ δὲ λαϊκὸς ἀφοριζέσθω *հատվածները։*

Սկսած այս հոդվածից՝ կանոնախմբի շարունակությունը չի պահվել № 657 ձեռագրում։

Հոդ. ԿԶ, էջ 92 (հուՑ. հոդ. 71, էջ 30)։ *Հոդվածի վերջին «ճրագունս՝ լուծցի» բառերի միջև հունարենն ունի* „ἢ ἐν ταῖς ἑορταῖς αὐτῶν λύχνους ἅπτοι" *հատվածը։*

Հոդ. ԿԷ, էջ 92—93 (հուՑ. հոդ. 72—73, էջ 30)։ *Հունարենի 72-րդ և 73-րդ հոդվածներն հայերենում միացրել են միմյանց։ Հայերենի «անաւթով ոսկեղինաւ» հատվածից սկսվում է հուն.-ի 73-րդ հոդվածը։ Վերջինիս* „ἢ ὀθόνην μηδεὶς ἔτι εἰς οἰκείαν χρῆσιν σφετεριζέσθω"

(կամ վարագուրը, ոչ ոք իր տնային պետքի համար չսեփականացնե (չօգտագործե) հատվածի դիմաց հայերենն ունի «մի ոք յիւր պէտս դողացեալ». այստեղ միտքը խիստ համառոտ է։ Հայերեն հոդվածի երկրորդ մասը (հունարեն 73-րդ հոդվածը) № 659 ձեռագրում այսպես է. «Կամ թե անաւթ ինչ ոսկեղէն կամ արծաթեղէն, որ բերաւ յեկեղեցին եւ սրբեցաւ. թէ [ի] պէտս առ կամ դողացեալ թաքուսցէ, այս անաւրէնութիւն է, եթե ոք ըմբռնեսցի յայսպիսի իրս՝ պատուհասեսցի և ի բաց որոշեսցի» (էջ 40ա).

Հոդ. ԿԸ, էջ 93 (հուն. հոդ. 74, էջ 30—31)։ Այս հոդվածի վերջին մասը «որպէս գի մի՛ շահել ինչ թուեսցի ի փախուցելոյն» բոլոր ձեռագրերում, բացի begq ձեռագրերից, սխալմամբ անջատել և գրել են հաջորդ՝ ԿԹ հոդվածի սկզբի մասում։ Այդ ձևով միտքը թնում էր աղավաղված, ուստի այն ուղղեցինք համաձայն հունարենի և վերևում նշված ձեռագրերի։ Հունարենի επι τινι παρα αξιοπιστων ανθρωπων հատվածը հայերենում գտնում ենք այս ձևով. «առաջի հաւատարմաց ոմանց կամ հաւատացելոց»։ Մնացածը համապատասխանում է հունարենին։

№ 659 ձեռագրում այս հոդվածի սկզբի մասը հետևյալ կերպ է շարադրված. «Կէ. Եպիսկոպոս ոք եթե ամբաստանեալ լիցի վասն անպատեհ իրաց առաջի հաւատարիմ մարդոց կամ հաւատացելոց՝ կոչել արժան է զնա և հարկաւոր ի ձեռն այլոց եպիսկոպոսաց. եւ եթե եկեսցէ եւ խոստովանեսցի՝ յանդիմանութիւն նորա որոշեսցի ի պատուհասն իւր» և այլն (էջ 40բ)։ Տարբեր է նաև հոդվածի վերջին հատվածը. «Որպէս գի մի՛ թուեսցի ի շահել հալածելոցն» (էջ 40բ—41ա)։

№ № 648, 3562 ձեռագրերում «որպէս» բառի փոխարեն հանդիպում ենք «եպիսկոպոս» (էջ 158բ, էջ 255ա), որը սխալ է։

Հոդ. ԿԹ, էջ 94 Հմմտ. № 659 ձեռագրում եղածի սկզբի մասի հետ. «Ի վկայութիւն զեպիսկոպոսէ զհերետիկոս ոք, այսինքն զթեւրհաւատ ընդունել» (էջ 41ա)։

Հոդ. ՀԱ, էջ 94 (հուն. հոդ. 77, էջ 32)։ Հայերենի միայն վերջին մասն է մի փոքր շեղվում. հմմտ. „ου γὰρ λώβη σώματος αὐτὸν μιαίνει, ἀλλὰ ψυχῆς μολυσμος“.

Հոդ. ՀԲ, էջ 94։ Հմմտ. № 659 ձեռագրում եղածը. «ՀԱ. Խուլ և կոյր մի՛ եղիցին եպիսկոպոս ոչ իբրեւ պղծ եւ պղտեղի, այլ գի եւ եկեղեցական գործոյն խափանումն մի՛ եղիցի» (էջ 41բ)։

Հոդ. ՀԳ, էջ 95 (հուն. հոդ. 79, էջ 32)։ Հունարենի „ἀλλὰ μηδὲ τοῖς πιστοῖς συνευχέσθω“ հատվածը, որը պետք է լինեք «եղիցի իսկ» բառերի միջև, չի պահվել հայերենում։

Հոդ. ՀԵ, էջ 95 (հուն. հոդ. 81, էջ 32—33)։ Հունարենում հոդվածի սկզբին «եպիսկոպոս» բառի հետ նշված է նաև «կամ երեց» (ἐπίσκοπον ἢ πρεσβύτερον), որը հայերենը չունի։ Այնուհետև հունարենի εἰς δημοσίας διοικήσεις չի թարգմանված բառացի, այլ իմաստի տեսակետից թարգմանված է ճիշտ՝ «յերկրաւոր հոգս»։ Իսկ հայերենի «պիտոյիցն ապա» բառերի միջև հունարենն ունի ἢ πειθέσθω οὖν τοῦτο μὴ ποιεῖν հատվածը։

Հոդ. ՀԹ, էջ 96 (հուն. հոդ. 47, էջ 33)։ Միայն երրորդ «մկրտեսցէ» բառը (տող 12) հունարենում հանդիպում ենք ժխտական՝ μὴ βαπτίσῃ ձևով։

Այս հոդվածը չի պահվել № 659 ձեռագրում։

Հոդ. Ձ, էջ 96—97 (հուն. հոդ. 49, էջ 24)։ Հունարենի ἀλλὰ εἰς τρεῖς ἀνάρχους ἢ εἰς τρεῖς υἱοὺς ἢ εἰς τρεῖς παρακλήτους, καθαιρείσθω հատվածը թարգմանված է «այլ յերիս հարս և յերիս որդիս եւ յերիս հոգիս՝ անկցի ի քահանայութենէն» ձևով։ Հուն.-ի ἀνάρχους-ին համապատասխան դրված է «հարս», որպես «անսկիզբ» բառին նույնանիշ, նույնը և παρακλήτους-ին՝ «հոգիս», որպես «մխիթարիչ» բառին նույնանիշ։

Այս հոդվածը ևս չի պահվել № 659 ձեռագրում։

Հոդ. ՁԱ, էջ 97—98 (հուն. հոդ. 50, էջ 24—25)։ Հունարենում 50-րդ հոդվածը ընդգրկում է հայերեն սույն հոդվածի սկզբից մինչև «եւ Հոգւոյն սրբոյ» բառերը։ Այս մասում հունարենի πάντα τὰ ἔθνη-ի դիմաց հայերենում դրված է «զնոսա» բառը։ Մնացած մասը՝ սկսած «Բայց որ մկրտելոցն է»-ից մինչև ՁԱ հոդվածի վերջը գտնում ենք հունարենում Τίτλου λς′ καν. μθ′. վերնագրի տակ, որը դրված է հուն. 50 և 51-րդ կանոնների միջև որպես հավելվածի նման մի բան։ Վերջինս սկսվում է Διδασκέσθω μὲν ὁ βαπτιζόμενος և վերջանում ὡς ἀγνοοῦντες τὸ μυστήριον τῆς εὐσεβείας καθαιρείσθωσαν բառերով։ Այս ամբողջ հատվածը չի պահվել Σύνταγμα (II)-ում և Լամբերտի մոտ։

Հոդ. ՁԲ, էջ 98—99 (հուն. հոդ. 50, էջ 25—26)։ Այս հոդվածը Պիտրայի հունարեն հրատարակությամբ կազմում է Նախորդի շարունակությունը և այդտեղ նշված է τῶν αὐτῶν κανὼν ν′. Այս ամբողջ հատվածը չի պահվել Σύνταγμα (II)-ում և Լամբերտի մոտ։

Ն. Մելիք-Թանգյանը սխալվում է, երբ ՁԱ հոդվածի երկրորդ մասի և ՁԲ հոդվածի մասին գրում. «Չկան հունա-սլավոնականում» («Հայոց եկեղեցական իրավունքը», Ա գիրք, էջ 105). Ինչպես ցույց տվեցինք վերևում՝ այս երկու հոդվածներն էլ կան հունարենում և հայերեն թարգմանությունը միանգամայն համապատասխանում է վերջինիս։

Հոդ. ՁԳ, էջ 99։ Այս, ինչպես նաև հաջորդ երկու՝ ՁԴ, ՁԵ հոդվածները հունարենը չունի, ըստ երևույթին դրանք հետագայի ավելացումներ են, վերցված հավանաբար սույն գրքի Հավելվածի Բ բնագրի որևէ տարբերակից։ Մի քանի ձեռագրերում՝ befgq ՁԵ հոդվածից հետո գրված է. «Այս Չ գլուխս ոչ կա յայլ աւրինակ» և բերում է վեց հոդված։ Նույն վեց հոդվածները գտնում ենք նաև № 659 ձեռագրում. նախ անխորագիր և երկրորդ՝ ՁԲ հոդվածից հետո։ Ուշադիր համեմատությունը ցույց տվեց, որ այդ վեց հոդվածներից առաջինը համապատասխանում է կանոնագրքում եղած Կղեմեսի կանոնախմբի ՁԳ հոդվածին, իսկ երկրորդը՝ ՁԴ։ Մնացած չորս հոդվածները նոր բան են և բերում ենք ամբողջությամբ։ «Ձ. Եթէ աստճնորդ ոք իցէ՝ մի՛ իշխեսցէ առանց իւրոց պաշտաւնակցացն իրս ինչ առնել յեկեղեցւոջն, բայց կամաւք եւ միաբանութեամբ արասցէ զինչ կամին, զի մի՛ լիցի տրտմութիւն ի միջի իւրեանց։

Ձա. Եւ քահանայ որ կապէ (բնագրում կարդէ—Վ. Հ.) զոք տարապարտուց յանարժանս, ընկալցի պատիժ պատուհասի ըստ արժանի, բայց զոր կապեացն ընկալցի զկապանսն, որպէս թէ յարժանի։

Ձբ. Եթէ ամբարտաւանք եւ հպարտք եւ ոէղք եւ սնապարծ մի՛ մերձեսցին ի պաշտաւն քահանայութեան, վասն այնր թե ամենայն ամբարտաւան ի մէջ մարդկան՝ պիղծ է առաջի Աստուծոյ. եւ վասն նոցա է ասացեալ «Եթե հատուցից զհատուցումն ամբարտաւանից» (№ 659, էջ 43աբ, հմմտ. b էջ 41բ, e էջ 33բ, f էջ 58բ—59ա, g էջ 29բ, q էջ 25ա)։ befgq ձեռագրերի վեցերորդ հոդվածը այստեղ չենք նշում. այն տես հաջորդ ծանոթագրության մեջ։

Հոդ. ՁԵ, էջ 100 (հուՆ. հոդ. 85, էջ 34—36). № 659 ձեռագրում հոդվածը մի փոքր ընդարձակ է և միացված է վերևում նշված վեց հոդվածներից հինգերորդին (№ 659 ձեռագրի համարակալմամբ Ձբ-ին. տես վեր). «Այսոքիկ և յաղագս կանոնաց կարգեալ է հրամայեցաւ ձեզ առ ի մէնջ, երբ եպիսկոպոսաց, դուք կացեալք մնացեալք յայսոսիկ ապրեալք եղիջիք եւ խաղաղութիւն կալջիք, ապա եթ[է] տնհաւանեսջիք, տանջանաց մատնեսջիք և պատերազմ ընդ միմեանս հանապազորդ ընկալջիք զարժանաւոր պատուհաս տանջանաց յաղագս անհնազանդութեան կրել։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն» (էջ 43բ—44ա)։

Ինչպես վերևում արդեն նշել ենք, հայերեն ՁԵ հոդվածը հունարենը չունի, սակայն որպես 85-րդ հոդված հունարենն ունի բոլորովին այլ բան, թե՝ հոգևորականներին և աշխարհականներին «սուրբ գրքեր»-ից ինչ է հանձնարարվում կարդալ։ Վերջինս գտնում ենք befgq ձեռագրերում Կղեմեսի կանոններին ավելացված, վերևում նշված վեց հոդվածներից վերջինում, որը նպատակահարմար գտանք բերել այստեղ. «Եղիցի ձեզ ամենեցուն եկեղեցականաց եւ աշխարհականաց պաշտել գիրք սուրբք եւ Հին եւ Նոր կտակարանաց՝ Մովսէսի գիրք՝ Ծննդոց, Ելիցն, Ղեւտական, Թիւքն, Երկրորդ աւրէնք, Յեսու Նաւեա, Դատաւորքն, Հռութն, Թագաւորութեանցն Դ, Մնացորդացն գիր, երկու Եզրի բանք Ի, Ոբ Ա, Սաղմոսաց գիրք Ա, Սողոմոնի գիրք Ա, Եսայի, Երեմիայ, Եզեկիէլ, Դանիէլ, եւ արտաքուստ պատգամաւորեոցի առ ի յուսացուցանել զձեզ մանկունսն զուսման բազում զՍիրաք իմաստնոյ» (b, էջ 41բ—42ա, հմմտ. e, էջ 33բ. f, էջ 58ա, g, էջ 29ա, q, էջ 25ա)։

Այս հոդվածը կրում է խմբագրման հետքեր. դա երևում է մեջբերումը ուշադիր քննելիս և հունարենի հետ համեմատելիս։

Նոր կտակարանի վերաբերյալ հատվածը (էջ 35—36) չի պահվել befgq ձեռագրերում։ Այսպիսով, վերջիններում պահվել է Հին կտակարանին վերաբերող մասը միայն։ Սակայն հետաքրքիրն այն է, որ հայերենի այս մասը համարյա նույնությամբ անցել է «Հարանց հետևողաց» կանոնախմբի վերջին (Իէ) հոդվածում (տես էջ 112—113). ըստ երևույթին այդ խանդարումը հնից է գալիս մինչև Հովհաննես Օձնեցին, հմմտ. նաև Լավոդիկեի կանոնախմբի ԾԵ հոդվածը (տես վերևում, էջ 240—242)։

«ՀԱՐԱՆՑ ՀԵՏԵՒՈՂԱՑ» ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 101։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3362 ձեռագրերում վերնագիրը այսպես է. «Կանոնք զոր եդին սուրբ հարքն զկնի առաքելոցն գլուխք ԻԵ» (№ 650 ձեռագրում՝ Ի և Է, № 651, Ի և Ե), իսկ №№ 648, 3362 ձեռագրերը չունեն ԻԵ։ Սակայն № 3369 ձեռագրում հետևյալ վերնագիրն ենք կարդում. «Կանոնք սրբոց հարցն զոր եդին զկնի սրբոց առաքելոցն Քրիստոսի Աստուծոյն մերոյ» (էջ 28բ)։ Թեև վերևում նշված մի շարք ձեռագրերում վերնագրի վերջում նշված է հոդվածների ԻԵ կամ ԻԷ քանակը, իրականում այդ ձեռագրերում պահվել են ընդամենը 14 հոդված։ Նշանակում է այդտեղ կատարվել է հոդվածների մեխանիկական կրճատում։ Այդ մասին մենք իմանում ենք վերոնշյալ ձեռագրերի այս կանոնախմբի վերնագրի տակ գրված մի ծանուցումից, ուր ասված է. «Ցորոց զուգտակարն քաղեալ եդից հրամանաւ սուրբ հայրապետացս» №№ 649, էջ 25ա, 650, էջ 28բ, 651, էջ 18ա, 2964, էջ 35ա, 3369, էջ 28բ. հմմտ. №№ 648, էջ 6բ, 3362, էջ 275ա)։ Ինչպես տեսնում ենք այս կրճատումը կատարվել է նպատակահարմարության տեսակետից։

Ցանկ, էջ 101—103։ Վերևում նշված բոլոր ձեռագրերն էլ այս ցանկը չունեն։ Բ խմբին պատկանող մի քանի ձեռագրերում բացակայում է երեք հոդվածի վերնագիր, օրինակ. bdefgıqr ձեռագրերի ցանկում չեն պահվել Բ, Ե, Է հոդվածների վերնագրերը, թեև այդ հոդվածները բուն ձեռագրում գտնում ենք։ kmps ձեռագրերում ցանկի միայն Ե-Թ հոդվածների վերնագրերի հաջորդականությունը չի համապատասխանում Կանոնագրքում եղածին, այսպես.

Կանոնագիրք	kmps
Ե	Է
Զ	Թ
Է	Ե
Ը	Զ
Թ	Ը

Այնուհետև՝ ինչպես Կանոնագրքում։ Z ձեռագրում ԺԲ հոդվածի ցանկի համապատասխան վերնագիրը սխալմամբ բաժանել են երկու մասի. «Վասն պանծացեալ իրիցու որ սպանողի ողջ։ Վասն ապաշխարութիւն ոչ դնէ» (էջ 29բ). թեև վերջին մասը կարգահամար չունի։

Հոդ. Ա, էջ 103։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3362 ձեռագրերում չեն պահվել Ա, Բ, Գ հոդվածները. իսկ № 3369 ձեռագրում հոդվածներն ունեն հետևյալ հաջորդականությունը.

Կանոնագիրք	№ 3369 ձեռագիր	Կանոնագիրք	№ 3369 ձեռագիր
Ա	Բ	ԺԵ	ԺԷ
Բ,Գ	Դ	ԺԶ	ԺԳ
Գ	Ա	ԺԷ	ԺԳ
Ե	Գ	ԺԸ	ԺԵ
Զ	Ե	ԺԹ	ԺԸ
Է	Զ	Ի	Ի
Ը	Է	ԻԱ	ԺԹ
Թ	Ը	ԻԲ	ԻԳ
Ժ	Ժ	ԻԳ	ԻԱ
ԺԱ	ԺԱ	ԻԳ	ԻԳ
ԺԲ	ԺԲ	ԻԵ	ԻԲ
ԺԳ	Թ	ԻԶ	ԻԵ
ԺԳ	ԺԶ	ԻԷ	(չունի)

Հոդ. Բ, էջ 103: *Բ խմբի մի շարք ձեռագրերում Բ հոդվածը կցված է Գ հոդվածի շարունակությանը և այդ երկուսն էլ նշված են որպես Բ հոդված։ Նույն խմբի որոշ ձեռագրերում էլ, օրինակ՝* befgq, *Բ հոդվածը գրված է Գ-ի տեղը, իսկ Գ-ն՝ Բ-ի, որպես առանձին հոդվածներ։ № 3369 ձեռագրում Բ և Գ հոդվածները միացված են միմյանց և գրված Գ համարի տակ։*

Հոդ. Գ, էջ 104: kmps *ձեռագրերում այս հոդվածը վերջից շարունակվում է. «Մեղականութիւն և գիղին առացաւ կամ որոշէ եկեղեցի մահու, կամ մեռցին, որպէս տէրունական աւրէնքն հրամայեն» (էջ 34ա, 46ա, 38ա, 42ա)։ Այս մեջբերումը Բ հոդվածի վերջին մասն է, որը, գուցե, սխալմամբ այնտեղից փոխադրվել և միացվել է Գ հոդվածի վերջին։*

Հոդ. Ե, էջ 104։ abcdfghikloqt *ձեռագրերում այս հոդվածը գրված է Ը հոդվածի վերջում, իսկ* er *ձեռագրերում՝ Է հոդվածի վերջում, որպես շարունակություն։ Երբեմն նշված Ե համարի տակ, երբեմն առանց համարի։*

Հոդ. Զ, էջ 104—105։ acdhilort *ձեռագրերում այս հոդվածը գրված է Թ հոդվածի վերջում որպես շարունակություն։ Իսկ* abed *ձեռագրերում մի շարք հոդվածների հերթականությունը ուղղակի փոխված է, օրինակ* e *ձեռագրում Է հոդվածը գրված է Ե-ի տեղը, Զ-ն՝ Ը-ի, Թ-ն՝ Է-ի, Ժ-ն՝ Թ-ի և հակառակը,* g *ձեռագրում Զ հոդվածը գրված է Ը հոդվածի տեղը, Է-ն՝ Ե-ի, Թ-ն՝ Է և հակառակը։ Մոտավորապես նման բան նկատում ենք* ab *ձեռագրերում։*

Հոդ. Ը, էջ 105—106: *«Եկեղեցի այլ» բառերի միջև մի քանի ձեռագրերում գտնում ենք փոքրիկ հավելում. «Եկեղեցի, իսկ եթէ ի մահուանէ ապրեսցի այլ» № 648, էջ 7ա, հմմտ. №№ 649, էջ 25բ, 650, էջ 29ա, 651, էջ 19ա, 2964, էջ 36ա, 3369, էջ 29բ, 3562, էջ 276ա)։*

Հոդ. Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԴ, ԺԵ, էջ 106—108: *№№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում այս հոդվածները չեն պահվել։* g *ձեռագրերում ԺԱ, ԺԲ, ԺԳ հոդվածները միացված են միմյանց, իսկ* q *ձեռագրում միմյանց միացված են Ժ—ԺԱ հոդվածները։*

Հոդ. Ի, ԻԲ, ԻԴ, ԻԶ, ԻԷ, էջ 109—113: *№№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չեն պահվել այս հոդվածները։*

ՆԻԿԻԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 114: *Մի շարք ձեռագրերում, որոնք օգտագործված են համեմատությունների համար, նախքան վերնագիրը նշված է. «Դնի Դ», իսկ №№ 649 (էջ 27ա), 651 (էջ 20ա), 2964 (էջ 38ա), 3562 (էջ 277ա) ձեռագրերում՝ «Դ»: Եթե «Դ»-ն շփոթված չէ «Գ»-ի հետ, նշանակում է Հովհաննես Օձնեցու կազմած կանոնագրքում Նիկիայի ժողովի կանոնախումբը գրված է 4-րդ տեղում՝ Առաքելական, Կղեմեսի և Հարանց հետևողացից հետո:*

Այս վերնագիրը համեմատությունների համար չօգտագործված ձեռագրերում ունի տարբերակներ. օրինակ՝ «Կանոնք Նիկիայ գլուխք Ի» №№ 648 (էջ 8բ), 649 (էջ 27ա), 3562 (էջ 277ա), «Կանոնք Նիկիականք գլուխք Ի (ԺԹ՝ № 651, Խ՝ № 650)», 2964 (էջ 38ա), 650 (էջ 30բ), 651 (էջ 20ա): Երկու ձեռագրում առաջաբանի սկզբի տողը դարձրել են վերնագիր. «Սահմանք և կանոնք որ եղաւ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի ի մեծ ժողովն Նիկիայ» №№ 8459 (էջ 29բ), 9311 (էջ 27բ), իսկ № 3369 ձեռագրում կարդում ենք՝ «Կանոնք սրբոց հարցն որք եղին ի սուրբ կաթողիկէ եկեղեցոջն» (էջ 31բ): № 659 ձեռագիրը այս վերնագրի փոխարեն ունի ցանկի վերնագիրը. «Ցանգս կանոնաց Նիկիոյ է» (էջ 61բ):

Ցանկ, էջ 114—115: *Ցանկը և երկրորդ վերնագիրը №№ 648, 649, 656, 651, 2964, 3562, 8459, 9311 ձեռագրերը չունեն: Իսկ № 659 ձեռագիրը թեև ունի ցանկ, բայց այն չի վերաբերում միայն Նիկիայի ժողովի կանոնախմբին. վերջինիս անվան տակ ցանկում և այնուհետև ձեռագրում նշված են նաև Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի ժողովների կանոնախմբերը. ցանկում և թե բուն ձեռագրում բերված չեն վերևում նշված կանոնախմբերի բոլոր հոդվածները. օրինակ, Նիկիայի ժողովից չի բերված յոթ հոդված, Անկյուրիայից՝ 9, Նեոկեսարիայից՝ 7: Ահա այդ ցանկը.*

Ցանգս կանոնաց Նիկիոյ է

ա. Կտրողաց գերկուորիս:
բ. Այլադենաց:
գ. Մատաղաւրէից:
դ. Եպիսկոպոսաց:
ե. Կարգընկեցաց:
զ. Սրբոց եւ անսրբոց:
է. Քահանայից:
ը. Հրաժարողաց յաշխարհէս:
թ. Երախայից:
ժ. Եպիսկոպոսաց:
ժա. Քահանայից:
ժբ. Կարգընկեցաց:
ժգ. Սարկաւագաց:
ժդ. Սարկաւագաց:
ժե. Երիցանց:
ժզ. Անասնագիտաց:
ժէ. Կուսանաց:
ժը. Արամբից:
ժթ. Այրեաց:
ի. Կուսանաց:
իա. Գոռնըկաց:
իբ. Արգար գաւակաց:
իգ. Սպանողաց:
իդ. Դիւթողաց:
իե. Կախարդաց:
իզ. Բռնաւորաց:
իէ. Մանկանց եկեղեցւոյ:
իը. Ջոհոզաց:
իթ. Տանց հեթանոսաց:
լ. Խառնակերաց:
լա. Ջոհողաց:
լբ. Խառնակերաց:
լգ. Ի խաւսել աղջկանց:
լդ. Կնոջ երկու եղբարց:
լե. Ցանկացողաց:
լզ. Երկրորդ ամուսնացողաց:
լէ. Որ մինն կուսան իցէ և միւսն երկեակ:
լը. Երրորդ ամուսնացողաց:
լթ. Չորրորդից և հնգից:
խ. Կնաթողաց:
խա. Կնաթողաց:
խբ. Քահանայից:
խգ. Քահանայից:
խդ. Կարգի քահանայից:
խե. Հիւանդաց
խզ. Դողից (էջ 61բ—62ա):

Այս ցանկի հաջորդականությամբ էլ № 659 ձեռագրում դասավորված են համապատասխան հոդվածները։ Ցանկն ունի 46 հոդվածի վերնագիր, իսկ բուն ձեռագրում հոդվածները 48-ն են, երկու հոդված՝ ԼՁ և ԽԷ՝ համապատասխան վերնագիր ցանկում չունեն։

Թեև №№ 8459, 9311 ձեռագրերում չի պահվել վերոհիշյալ ցանկը, սակայն նույն ձեռագրերում Նիկիայի, Անկյուրիայի, Կեսարիայի և Նեոկեսարիայի ժողովի կանոնախմբերի հոդվածները դրված են Նիկիայի ժողովի անվան տակ, ինչպես № 659 ձեռագրում։ Այս հանգամանքը մեզ ենթադրել է տալիս, որ այդ երկու ձեռագրերը հավանաբար ծագել են № 659 ձեռագրից։ Առանձին հոդվածների մասին անհրաժեշտության դեպքում կխոսվի համապատասխան տեղում։ Սակայն, այստեղ, ցանկանում ենք նշել №№ 659, 8459, 9311 ձեռագրերում պահված այս նույն կանոնախմբի հոդվածների հաջորդականության մասին։ Եթե նկատի ունենանք Կանոնագրքի մեջ պահված Նիկիայի, Անկյուրիայի, Կեսարիայի և Նեոկեսարիայի հոդվածների հաջորդականությունը, ապա այս ձեռագրերում եղածը կունենա հետևյալ պատկերը.

	Կանոնագիրք	№ 659	№№ 8439, 9311
Նիկիա	Ա հոդված	Ա հոդված	Ա հոդված
	Բ "	Բ "	Բ "
	Գ "	Գ "	Գ "
	Դ "	Դ "	Դ "
	Ե "	Ե "	Ե "
	Զ "	(չունի)	(չունի)
	Է "	(չունի)	(չունի)
	Ը "	Զ հոդված	Զ հոդված
	Թ "	Է "	(չունի)
	Ժ "	Է "	Ը հոդված
	ԺԱ "	(չունի)	(չունի)
	ԺԲ "	ԺԱ հոդված	ԺԲ հոդված
	ԺԳ "	Ը "	Թ "
	ԺԴ "	Թ "	Ժ "
	(չունի)	Ժ "	(չունի)
	ԺԵ հոդված	(չունի)	ԺԱ հոդված
	ԺԶ "	ԺԲ հոդված	ԺԳ "
	ԺԷ "	ԺԴ "	ԺԴ "
	ԺԸ "	ԽԷ "	ԽԹ "
	ԺԹ "	(սունի)	(չունի)
	Ի "	"	"
Անկյուրիա	Ա, Բ "	ԻԶ հոդված	ԻԷ հոդված
	Դ "	ԻԷ "	ԻԸ "
	Գ "	ԻԸ "	ԻԹ "
	Ե, Զ "	(չունի)	(չունի)
	Է "	ԻԹ հոդված	Լ հոդված
	Ը "	Լ "	ԼԱ, ԼԲ "
	Թ "	ԼԱ "	ԼԲ "
	Ժ "	ԼԲ "	ԼԳ "
	ԺԱ "	ԺԴ "	ԺԵ "
	ԺԲ "	(չունի)	(չունի)
	ԺԳ "	"	"
	ԺԴ "	"	"
	ԺԵ "	ԺԵ հոդված	ԺԶ հոդված
	ԺԶ "	(չունի)	(չունի)
	ԺԷ "	ԺԶ հոդված	ԺԷ հոդված
	ԺԸ "	(չունի)	(չունի)
	ԺԹ "	"	"
	Ի "	ԺԷ հոդված	ԺԸ հոդված
Կեսարիա	Ա "	ԺԸ "	ԺԸ "
	Բ "	Ի "	ԻԱ "
	Դ "	ԻԱ "	ԻԲ "
	Դ "	ԻԲ "	ԻԳ "
	Ե "	ԻԴ "	ԻԴ "
	Զ "	ԺԹ "	Ի "
	Է "	ԻԴ "	ԻԵ "
	Ը "	ԻԵ "	ԻԶ "
	Թ "	ԼԴ "	ԼԳ "

1280—36

	Ժ հոդված	ԽԶ հոդված	Ծ հոդված
Նեոկեսարիա	Ա "	(չունի)	(չունի)
	Բ "	ԼԴ հոդված	ԼԵ հոդված
	Գ "	(չունի)	(չունի)
	Դ "	ԼԵ հոդված	ԼԶ հոդված
	Ե "	ԼԶ "	ԼԷ "
	Զ "	(չունի)	(չունի)
	Է "	ԼԷ հոդված	ԼԸ հոդված
	Ը "	ԼԸ "	ԼԹ "
	Թ "	ԼԹ "	Խ "
	Ժ "	Խ "	ԽԱ "
	ԺԱ "	ԽԱ "	ԽԲ "
	ԺԲ "	ԽԲ "	ԽԳ "
	ԺԳ "	ԽԳ "	ԽԴ "
	ԺԴ "	ԽԴ "	ԽԵ "
	ԺԵ "	ԽԴ "	ԽԶ "
	ԺԶ "	ԽԵ "	ԽԷ "
	ԺԷ "	ԽԶ "	ԽԸ "
	ԺԸ, ԺԹ, Ի "	(չունի)	(չունի)

(Այս համարակալման մեջ գրիչը սխալմամբ բաց է թողել ԺԹ, ԼԲ, ԼԴ համարները)։

Առաջաբան, էջ 115—116: *Հունարենը և №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերը առաջաբան չունեն։*

Հոդ. Ա, էջ 116—117 (Հուն. հոդ. 1, էջ 427): „Εἴ τις ἐν νόσῳ ὑπὸ ἰατρῶν ἐχειρουργήθη ἢ ὑπὸ βαρβάρων ἐξετμήθη, οὗτος μενέτω ἐν τῷ κλήρῳ· εἰ δέ τις ὑγιαίνων ἑαυτὸν ἐξέτεμεν, τοῦτον καὶ ἐν τῷ κλήρῳ ἐξεταζόμενον πεπαῦσθαι προσήκει, καὶ ἐκ τοῦ δεῦρο μηδένα τῶν τοιούτων χρῆναι προάγεσθαι· ὥσπερ δὲ τοῦτο πρόδηλον, ὅτι περὶ τῶν ἐπιτηδευόντων τὸ πρᾶγμα καὶ τολμώντων ἑαυτοὺς ἐκτέμνειν εἴρηται, οὕτως εἴ τινες ὑπὸ βαρβάρων ἢ δεσποτῶν εὐνουχίσθησαν, εὑρίσκοιντο δὲ ἄλλως ἄξιοι, τοὺς τοιούτους εἰς κλῆρον προσίεται ὁ κανών".

Հայերենն ընդհանուր առմամբ արտահայտում է հունարենի միտքը, բայց ավելի ընդարձակ է, ուր ավելացված են նաև պատժի տեսակները և չափերը։

Հոդ. Բ, էջ 117—118 (Հուն. հոդ. 2, էջ 428): „Ἐπειδὴ πολλὰ ἤτοι ὑπὸ ἀνάγκης ἢ ἄλλως ἐπειγομένων τῶν ἀνθρώπων ἐγένετο παρὰ τὸν κανόνα τὸν ἐκκλησιαστικόν, ὥστε ἀνθρώπους ἀπὸ ἐθνικοῦ βίου, ἄρτι προσελθόντας τῇ πίστει, καὶ ἐν ὀλίγῳ χρόνῳ κατηχηθέντας, εὐθὺς ἐπὶ τὸ πνευματικὸν λουτρὸν ἄγειν, καὶ ἅμα τῷ βαπτισθῆναι προάγειν εἰς ἐπισκοπὴν, ἢ εἰς (տ. L., չիք εἰς) πρεσβυτερεῖον (Σύν., II, πρεσβυτέριον) καλῶς ἔδοξεν ἔχειν τοῦ λοιποῦ μηδὲν τοιοῦτον γίνεσθαι. Καὶ γὰρ καὶ χρόνου δεῖ τῷ κατηχουμένῳ, καὶ μετὰ τὸ βάπτισμα δοκιμασίας πλείονος. σαφὲς γὰρ τὸ ἀποστολικὸν γράμμα τὸ λέγον. Μὴ δὲ (տ. Σύν., II, L., չիք δὲ) νεόφυτον, ἵνα μὴ τυφωθεὶς εἰς κρίμα ἐμπέσῃ καὶ παγίδα τοῦ διαβόλου. Εἰ δὲ προσιόντος (տ. Σύν., II, L., προϊόντος) τοῦ χρόνου ψυχικόν τι ἁμάρτημα εὑρεθείη (տ. L., εὑρεθῇ) περὶ τὸ πρόσωπον, καὶ ἐλέγχοιτο ὑπὸ δύο ἢ τριῶν μαρτύρων, πεπαύσθω ὁ τοιοῦτος τοῦ κλήρου· ὁ δὲ παρὰ ταῦτα ποιῶν, ὡς ὑπεναντία τῇ μεγάλῃ συνόδῳ θρασυνόμενος, αὐτὸς κινδυνεύσει περὶ τὸν κλῆρον".

Հայերենը շատ համառոտ է և եղածն էլ ընդհանուր նմանություն ունի հունարենի համապատասխան հոդվածի հետ։ Իսկ հունարեն հոդվածի վերջին ընդարձակ մասը՝ սկսած Εἰ δὲ προσιόντος τοῦ χρόνου *հատվածից մինչև հոդվածի վերջը Կանոնագրքում չի պահվել։*

№ 659 ձեռագրում «յայլ ազանդացն»-ի փոխարեն կարդում ենք «այլազենաց» (էջ 63ա), իսկ 8459, 9311-ում՝ «յայլազգաց» (էջ 31բ, էջ 29ա)։

Հոդ. Գ, էջ 118–119 (Հուն. հոդ. 3, էջ 428): *Հայերենը բոլորովին այլ բան է, հունարենն այլ։ Վերջինս հոգևորականներին արգելում է իրենց մոտ ուրիշ կանայք պահել, բացի արյունակից կանանցից՝ մայր, քույր, հորաքույր կամ մորաքույր։*

Հոդ. Դ, էջ 119 (Հուն. հոդ. 4, էջ 428—429): *Հուն.-ի միայն վերջին* τὸ δὲ κῦρος τῶν γινομένων δίδοσθαι καθ' ἑκάστην ἐπαρχίαν τῷ μητροπολίτῃ *հատվածի միտքը Կանոնագրքում պահված է համառոտ ձևով՝ «բայց զպատիւն եւ զշնորհն... կամելով՝ սուրբ ժողովոյն»։*

Հոդ. Ե, 119—120 (Հուն. հոդ. 5, էջ 429): „Περὶ τῶν ἀκοινωνήτων γινομένων, εἴτε τῶν ἐν κλήρῳ, εἴτε τῶν ἐν λαϊκῷ τάγματι τεταγμένων (տ. Σύν., II, L., չիք τε-

τεταγμένων) ὑπὸ τῶν καθ' ἑκάστην ἐπαρχίαν ἐπισκόπων κρατείτω ἡ γνώμη κατὰ τὸν κανόνα τὸν διαγορεύοντα, τοὺς ὑφ' ἑτέρων ἀποβληθέντας, ὑφ' ἑτέρων μὴ προσίεσθαι. Ἐξεταζέσθω δέ, μὴ μικροψυχίᾳ ἢ φιλονεικίᾳ ἤ τινι τοιαύτῃ ἀηδίᾳ τοῦ ἐπισκόπου ἀποσυνάγωγοι γεγένηνται· ἵνα οὖν τοῦτο τὴν πρέπουσαν ἐξέτασιν λαμβάνοι (տ. L., λαμβάνῃ), καλῶς ἔχειν ἔδοξεν ἑκάστου ἐνιαυτοῦ καθ' ἑκάστην ἐπαρχίαν δὶς τοῦ ἔτους συνόδους γίνεσθαι, ἵνα κοινῇ πάντων τῶν ἐπισκόπων τῆς ἐπαρχίας ἐπὶ τὸ αὐτὸ συναγομένων, τὰ τοιαῦτα ζητήματα ἐξετάζηται (տ. L., ἐξετάζοιτο), καὶ οὕτως οἱ ὁμολογουμένως προσκεκρουκότες τῷ ἐπισκόπῳ κατὰ λόγον ἀκοινώνητοι παρὰ πᾶσιν εἶναι, δόξωσι, μέχρις ἂν τῷ κοινῷ τῶν ἐπισκόπων δόξῃ τὴν φιλανθρωποτέραν ὑπὲρ αὐτῶν ἐκθέσθαι ψῆφον. Αἱ δὲ σύνοδοι γινέσθωσαν, μία μὲν πρὸ τῆς τεσσαρακοστῆς, ἵνα πάσης μικροψυχίας ἀναιρουμένης, τὸ δῶρον καθαρὸν προσφέρηται τῷ Θεῷ, δευτέρα δὲ περὶ τὸν τοῦ μετοπώρου καιρόν".

Հունարենի այս հոդվածը Կանոնագրքում մասամբ համառոտ և փոփոխված է ներկայանում։ Որ տարին երկու ժողով է լինելու, նշված է նաև Կղեմեսի կանոնախմբի ԼԵ և Անտիոքի ժողովի Ի հոդվածներում։ Սակայն, Կանոնագրքում նշված է տարին երեք ժողով։ Այսպես է սահմանում նաև Կոստանդին Բարձրբերդցին կանոնական իր թղթերից մեկում. «Հրաման է այս առաքելադիր որ ի տարոջն երիցս անգամ առաջնորդք եկեղեցոյ ժողով[ով] տեսանեն զկարգս եկեղեցոյ» (№ 3519, էջ 22բ, տես նաև Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 301)։

Տարին երեք ժողով հրավիրելը, որ Ն. Մելիք-Թանգյանը համարում է սխալ («Հայոց եկեղեցական իրաւունք», գիրք Ա, էջ 151), ղուցե տեղական պայմաններից ելնելու նպատակով է արված, որովհետև Կանոնագրքի համապատասխան հոդվածում նշվում է նաև ժողովների հրավիրման ժամանակը. «Մի յաշնան ժամու եւ մի զոր մատուռնն կոչեն եւ մի յառաջ քան զքառասնորդսն»։ Իսկ № 659 ձեռագրում պահվածը համապատասխանում է հունարենին. «Եթե ի տարւոջն երկիցս ժողով արասցեն՝ մի յաշունն ժամու, զոր մատրունս կոչեմք եւ մի յառաջ քան զքառասնորդսն» (էջ 64բ—65ա, հմմտ. 8459, էջ 33բ, 9311, էջ 31բ)։ Մինչդեռ մեզ թվում է Կանոնագրքի սկզբնական բնագրում եղել է «ի տարւոջն երկիցս ժողովս արասցեն՝ մի յաշնան ժամու, զոր մատուռնն կոչեն, եւ մի յառաջ քան զքառասնորդսն»։ «Երկիցս» բառը անուշադիր ընդօրինակելու հետևանքով «կ» տառը բաց են թողել և «երկիցս»-ը գրել «երիցս»։ Այս կատարվելուց հետո նախադասության հաջորդ մասում «մի յաշնան ժամու եւ մի զոր մատուռնն կոչեն...» պետք է հանդես գար ընդգծված՝ «եւ մի» հատվածը, որպեսզի նախադասությունը կարգավորեր. որովհետև չէր կարող «երիցս» հանդես գալուց հետո նախադասության շարունակությունը մնալ նույնը՝ «մի յաշնան ժամու, որ մատուռնն կոչեն եւ մի յառաջ քան զքառասնորդսն», այսինքն երկու անգամ, ուստի մինչև «զոր»-ը ավելացրել են «եւ մի» հատվածը, այսինքն «եւ մի զոր մատուռնն կոչեն». այն ինչ որ հանդիպում ենք Կանոնագրքում։ Քանի որ այդ անճշտությունն ունի նաև Կանոնագրքի հնագույն ընդօրինակությունը՝ 1098 թ., պետք է ընդունել որ Կոստանդին Բարձրբերդցու ձեռքի տակ եղել է նման մի Կանոնագիրք, որից էլ օգտվելով նա նշել է տարեկան երեք ժողով։

Հոդ. Զ, էջ 120—121 (Յուն. 6, էջ 429—430)։ *Կանոնագրքում միայն սկզբի հատվածը համառոտ է. հուն.-ի* Τὰ ἀρχαῖα ἔθη κρατείτω τὰ ἐν Αἰγύπτῳ, καὶ Λιβύῃ, καὶ Πενταπόλει *հատվածի դիմաց Կանոնագրքում կարդում ենք. «Նախնեաց սովորութիւն կացցէ»։*

Մի քանի ձեռագրերում սկզբի ընդարձակ հատվածը՝ «Նախնեաց սովորութիւն կացցէ... եւ ամենայնս այն յայտ լիցի» չի պահվել (№№ 648, էջ 9բ, 649 էջ 29ա, 650 էջ 32ա, 651 էջ 21բ, 2964 էջ 40բ, 3562 էջ 278բ)։ Կանոնագրքի վերջին փոքր մասի՝ «լինիցին, բազմաց ընտրութիւնն հաստատեսցի»-ի փոխարեն մի քանի ձեռագրեր ունեն «լինիցին բազմացն ընտրութեան հաստատեսցի բազմացն եւ նոքայ ամաչեսցեն» (№ 2964, էջ 40բ, հմմտ. №№ 650, էջ 32ա, 651 էջ 21բ, 649 էջ 29ա)։ Իսկ №№ 659, 8459, 9311 ձեռագրերը այս և Ի հոդվածները չեն պահել։

Հոդ. Է, էջ 121 (Յուն. հոդ. 7, էջ 430)։ *Հունարենում գրված է ոչ թե Երուսաղեմ, այլ վերջինիս նոր անունը* Αἰλία. *այսպես կոչված էր ի պատիվ Հռոմի կայսեր Էլիոս Անդրիանի։ Մի քանի ձեռագրերում՝ №№ 648, 649, 650, 651, 2964, 3562, չեն պահվել այս և Ը հոդվածները։*

Հոդ. Ը, էջ 121—123։ *№№ 659, 8459, 9311 ձեռագրերում սույն հոդվածը, որ նշված է որպես Զ հոդված, բավական փոփոխված և համառոտված, միմյանցից աննշան տարբերություններով, հետևյալ ձևն ունի. «Զ. Որք անուանին զինքն սուրբ երբեմն, եւ երբեմն ոչ*

մերձենալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի և ի կատարեալ խորհուրդն, այսինքն յաւրէնսն, վասն այնպիսեացն կամ եղեւ սուրբ ժողովոյն զի ջերմեռանդն սրտիւ ձեռնադրութեամբ ապաշխարութիւն ընկալցին եւ ըստ խոստովանութեան եւ ըստ վաստակոցն քահանայն ընտրութիւն արասցէ, մարդասիրութեամբ ի վերայ հայեսցի եւ որպէս իւր կամք են ապաշխարութիւն գիցէ եւ ի փսխածն այլ մի եւս դարձցի» (№ 659 էջ 65աբ, հմմտ. №№ 8439 էջ 34ա բ, 9311 էջ 31բ—32ա)։ № 3369 ձեռագրում էլ, այլ ձեռագրերի օրինակով, «Վասն այնոցիկ» բառերից բաժանված է առանձին հոդվածի, այսպիսով Ը հոդվածը դարձրել են երկու հոդված։

Հոդ. Թ, էջ 123 (հուն. հոդ. 9, էջ 431)։ „Εἴ τινες ἀνεξετάστως προσήχθησαν (տ., L., προηχθησαν) πρεσβύτεροι, ἢ ἀνακρινόμενοι ὡμολόγησαν τὰ ἁμαρτήματα (տ., L., չիք ἁμαρτήματα) ἡμαρτημένα (տ. Συν., II. չիք ἡμαρτημένα) αὐτοῖς, καὶ ὁμολογησάντων αὐτῶν, παρὰ κανόνα κινούμενοι οἱ ἄνθρωποι τοῖς τοιούτοις χεῖρα ἐπιτεθείκασιν, τούτους ὁ κανὼν οὐ προσίεται. Τὸ γὰρ ἀνεπίληπτον ἐκδικεῖ ἡ καθολικὴ ἐκκλησία".

Հայերենը թեև մի փոքր շեղվում է, բայց ընդհանուր առմամբ արտահայտում է հունարենի միտքը։

Հոդ. Ժ, էջ 123—124 (հուն. հոդ. 10, էջ 431)։ *Հայերենը մի փոքր ընդարձակ է, թեև արտահայտում է հունարենի միտքը։*

№ 650 ձեռագրում «Կամ եղեւ մեծ ժողովոյն՝ աւծումնն բարձցի ի նմանէն եւ կարգօքն ընդ պատուհասիւք» հատվածը չի պահվել։ Իսկ № 3369 ձեռագրում «բարշեցաւ. Ճշմարտութիւնն»-ի փոխարեն կարդում ենք. «Յարողեցաւ ճշմարտութիւնն» (էջ 33բ)։ № 659 ձեռագրում Ժ և Թ հոդվածները միացված են միմյանց և դրված է համարի տակ (էջ 65բ—66ա)։

Հոդ. ԺԱ, էջ 124, (հուն. հոդ. 11, էջ 431—432)։ *Հունարենի միայն վերջին* οἱ πιστοὶ καὶ ἑπτὰ ἔτη ὑποπεσοῦνται· δύο (տ. Συν., II, δύω) δὲ ἔτη χωρὶς προσφορᾶς κοινωνήσουσι τῷ λαῷ τῶν προσευχῶν *հատվածը հայերենում դուրս է ընկել և այս ամբողջն արտահայտված է «հաւասարեսցեն աղաւթիցն ժողովրդեանն» հատվածով։*

Հոդ. ԺԲ, էջ 124—126 (հուն. հոդ. 12. էջ 432)։ „Οἱ δὲ προσκληθέντες μὲν ὑπὸ τῆς χάριτος καὶ τὴν πρώτην ὁρμὴν ἐνδειξάμενοι, καὶ ἀποθέμενοι τὰς ζώνας, μετὰ δὲ ταῦτα ἐπὶ τὸν οἰκεῖον ἔμετον ἀναδραμόντες ὡς κύνες, ὡς τινὰς καὶ ἀργύρια προέσθαι, καὶ βενεφικίοις κατορθῶσαι τὸ ἀναστρατεύσασθαι, οὗτοι δέκα ἔτη ὑποπιπτέτωσαν, μετὰ τὸν τῆς τριετοῦς ἀκροάσεως χρόνον· ἐφ' ἅπασι δὲ τούτοις, προσήκει ἐξετάζειν τὴν προαίρεσιν καὶ τὸ εἶδος τῆς μετανοίας. Ὅσοι μὲν γὰρ καὶ (տ. Σύν., II, չիք καὶ) φόβῳ καὶ δάκρυσι καὶ ὑπομονῇ καὶ ἀγαθοεργίαις, τὴν ἐπιστροφὴν ἔργῳ καὶ οὐ σχήματι ἐπιδείκνυνται, οὗτοι πληρώσαντες τὸν χρόνον τὸν ὡρισμένον τῆς ἀκροάσεως, εἰκότως τῶν εὐχῶν κοινωνήσουσι, μετὰ τοῦ ἐξεῖναι τῷ ἐπισκόπῳ καὶ φιλανθρωπότερόν τι περὶ αὐτῶν βουλεύσασθαι· ὅσοι δὲ ἀδιαφόρως ἤνεγκαν, καὶ τὸ σχῆμα τοῦ εἰσιέναι εἰς τὴν ἐκκλησίαν ἀρκεῖν αὐτοῖς ἡγήσαντο πρὸς τὴν ἐπιστρέφειαν (տ. Συν., II, L., ἐπιστροφήν), ἐξ ἅπαντος πληρούτωσαν τὸν χρόνον".

Հայերենը ընդհանուր նմանություն ունի հունարենին, տեղ-տեղ էլ նկատում ենք ավելացումներ, օրինակ՝ հունարենի ὡς κύνες *(որպես շներ) թարգմանված է «ի շնութիւն». հետևելով այս թարգմանությանը՝ այնուհետև ավելացրել են դրա նման այլ բառեր՝ «ի պոռնկութիւն, ի գողութիւն, յագահութիւն, յոխակալութիւն» և այլն։*

Հոդ. ԺԳ, էջ 126, (հուն. հոդ. 13, էջ 432—433)։ *Հայերենը մի փոքր ընդարձակ է. ավելացված է ապաշխարության տևողությունը։*

Հոդ. ԺԴ, էջ 126—127, (հուն. հոդ. 14, էջ 433)։ *Հայերենը ընդարձակ է, քան հունարենը։ Հայերենի «մարդասիրութիւն ցուցցեն առ այնպիսիսն» հատվածից մինչև վերջ հուն.-ը չունի։*

Հոդ. ԺԵ, էջ 127—128 (հուն. հոդ. 15, էջ 433)։ „Διὰ τὸν πολὺν τάραχον καὶ τὰς στάσεις τὰς γινομένας ἔδοξε παντάπασι περιαιρεθῆναι τὴν συνήθειαν τὴν παρὰ τὸν κανόνα (տ. Συν., II, τὸν ἀποστολικὸν κανόνα) εὑρεθεῖσαν ἔν τισι μέρεσιν, ὥστε ἀπὸ πόλεως εἰς πόλιν μὴ μεταβαίνειν, μήτε ἐπίσκοπον, μήτε πρεσβύτερον, μήτε διάκονον. Εἰ δέ τις μετὰ τὸν τῆς ἁγίας καὶ μεγάλης συνόδου ὅρον, τοιούτῳ τινὶ ἐπιχειρήσειεν, ἢ ἐπιδοίη ἑαυτὸν πράγματι τοιούτῳ, ἀκυρωθήσεται ἐξάπαντος κατασκεύασμα, καὶ ἀποκατασταθήσεται τῇ ἐκκλησίᾳ ἐν (տ. L., չիք ἐν) ᾗ ὁ ἐπίσκοπος ἢ ὁ πρεσβύτερος ἐχειροτονήθη"

Հայերենում հունարենը ոչ թե թարգմանված է, այլ վերաշարադրված և ընդհանուր ձևով է արտահայտում վերջինիս միտքը։

№ 659 ձեռագրում այս հոդվածն ունի այլ տարբերակ Ժ համարի տակ. «Որք եպիսկոպոս լինին եւ գայլոյ վիճակ յափշտակել ջանան եւ որք երիցունք լինին եւ այլոյ քաղաքի եւ ժողովրդեան ցանկան յափշտակել, կամ եղեւ մեծ ժողովոյն, զի զայնպիսին զագարեցուսցեն յիւրաքանչիւր վիճակի։ Ապա եթե ի բռնութենէ ոք եւ կամ ի լեզուանութենէ եւ կամ կաշառաւք զգործն զայն յանգգնեսցի գործել, ընդդէմ եկեսցէ առաքելական կանոնաց, կամ եղեւ սուրբ ժողովոյն զի զայնպիսին ընկեսցեն ի բաց յաթոռոյն եւ ի կարգէ քահանայութեանն եւ ընաւ ի պաշտաւնէն իսկ ի բաց մերժել եւ այնուհետեւ եղիցի քեզ իբրեւ զմի յանզգամաց, զի որում տուեալն է՝ տացի եւ յաւելցի, եւ որ ոչն գիտիցէ ունել եւ զոր ունին՝ հանցէ ի նմանէ» (էջ 66բ—67ա)։ № 3369 ձեռագրում թեև ղանում ենք այս հոդվածը, սակայն, վերջինս ուրիշ տեղ է դրված՝ Կանոնագրքի ԺԹ և Ի հոդվածների միջև ԻԱ համարի տակ։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել. իսկ №№ 8459, 9311 ձեռագրերում չի պահվել «կամ եղեւ մեծ ժողովոյն... եկեսցէ առաքելական կանոնիս» հատվածը (էջ 36բ, էջ 34ա)։

Հունարեն բնագրի 16-րդ հոդվածը Կանոնագրքում չի պահվել, գուցե նրա համար, որ այս և նախորդ՝ ԺԵ հոդվածների բովանդակությունը համարյա նույնն է, դրա համար էլ այդ երկու հոդվածներից Կանոնագրքում պահվել է ԺԵ հոդվածը միայն։

Հոդ. ԺԶ, էջ 128 (հուն. հոդ. 17, էջ 434) „Ἐπειδὴ πολλοὶ ἐν τῷ κανόνι ἐξεταζόμενοι τὴν πλεονεξίαν καὶ τὴν αἰσχροκέρδειαν διώκοντες, ἐπελάθοντο τοῦ θείου γράμματος λέγοντος. Τὸ ἀργύριον αὐτοῦ οὐκ ἔδωκεν ἐπὶ τόκῳ· καὶ δανείζοντες ἑκατοστὰς ἀπαιτοῦσιν· ἐδικαίωσεν ἡ ἁγία καὶ μεγάλη σύνοδος, ὡς εἴ τις εὑρεθείη μετὰ τὸν ὅρον τοῦτον τόκους λαμβάνων ἐκ μεταχειρήσεως (տ. Σύν., II, L., μεταχειρίσεως), ἢ ἄλλως μετερχόμενος τὸ πρᾶγμα, ἢ ἡμιολίας ἀπαιτῶν, ἢ ὅλως ἕτερόν τι ἐπινοῶν αἰσχροῦ κέρδους ἕνεκα, καθαιρεθήσεται τοῦ κλήρου, καὶ ἀλλότριος τοῦ κανόνος ἔσται".

Հայերենը թեև բառացի թարգմանություն չէ, սակայն արտահայտում է հունարենի միտքը։ Հայերենում կան շեղումներ և լրացումներ։

Հոդ. ԺԷ, էջ 129 (հուն. հոդ. 18, էջ 434—435)։ „Ἦλθεν εἰς τὴν ἁγίαν καὶ μεγάλην σύνοδον, ὅτι ἔν τισι τόποις καὶ πόλεσιν, τοῖς πρεσβυτέροις τὴν εὐχαριστίαν οἱ διάκονοι διδόασιν, ὅπερ οὔτε ὁ κανὼν, οὔτε ἡ συνήθεια παρέδωκεν, τοὺς ἐξουσίαν μὴ ἔχοντας προσφέρειν, τοῖς προσφέρουσι διδόναι τὸ σῶμα τοῦ Χριστοῦ. Κἀκεῖνο δὲ ἐγνωρίσθη, ὅτι ἤδη τινὲς τῶν διακόνων καὶ πρὸ τῶν ἐπισκόπων τῆς εὐχαριστίας ἅπτονται. Ταῦτα οὖν πάντα (տ. L., μὲν οὖν ἅπαντα) περιῃρήσθω (տ. Σύν., II, περιῃρείσθω), καὶ ἐμμενέτωσαν οἱ διάκονοι τοῖς ἰδίοις μέτροις, εἰδότες ὅτι τοῦ μὲν ἐπισκόπου ὑπηρέται εἰσὶν, τῶν δὲ πρεσβυτέρων ἐλάττους τυγχάνουσι (տ. Σύν., II, չիք τυγχάνουσι). Λαμβανέτωσαν δὲ κατὰ τὴν τάξιν τὴν εὐχαριστίαν μετὰ τοὺς πρεσβυτέρους, ἢ τοῦ ἐπισκόπου διδόντος (տ. Σύν., II, μεταδιδόντος) αὐτοῖς, ἢ τοῦ πρεσβυτέρου. ἀλλὰ μηδὲ καθῆσθαι ἐν μέσῳ τῶν πρεσβυτέρων ἐξέστω τοῖς διακόνοις· παρὰ κανόνα γὰρ καὶ παρὰ τάξιν ἐστὶ τὸ γινόμενον. Εἰ δὲ τις μὴ θέλοι πειθαρχεῖν καὶ μετὰ τούτους τοὺς ὅρους, πεπαύσθω τῆς διακονίας".

Հայերենը բառացի չի թարգմանված հունարենից, այլ հունարենին համապատասխան վերաշարադրված է, կիսով չափ համառոտ, թեև հունարենի միտքն արտահայտում է բավական պարզ։

Հոդ. ԺԸ, էջ 129։ Այս հոդվածը հունարենը չունի և ինչքան հայտնի է գրականությունից՝ Նիկիայի ժողովում այդ հարցը քննության չի ենթարկվել։ Ըստ երևույթին այս հոդվածը հետագայի (թե՞ թարգմանիչի) ավելացում է։

Հոդ. ԺԹ, էջ 130 (հուն. հոդ. 19, էջ 435)։ Խոսքը Պողոս Սամոսատացու և նրա հետևորդների մասին է։ Հայերենում նկատելի են խմբագրման աննշան հետքեր, իսկ վերջին՝ սարկավագուհիներին վերաբերող մասը մի փոքր համառոտ է, քան հունարենը։ Ահա այդ մասը. „Ὡσαύτως δὲ καὶ περὶ τῶν διακονισσῶν, καὶ ὅλως περὶ τῶν ἐν τῷ κανόνι (տ. Σύν., II, ἐν τῷ κλήρῳ) ἐξεταζομένων ὁ αὐτὸς τύπος παραφυλαχθήσεται. Ἐμνήσθη μὲν (տ. Σύν., II, L., ἐμνήσθημεν) δὲ τῶν (տ. L., չիք τῶν) διακονισσῶν τῶν ἐν τῷ σχήματι ἐξετασθεισῶν, ἐπεὶ μηδὲ χειροθεσίαν τινὰ ἔχουσιν, ὥστε ἐξάπαντος ἐν τοῖς λαϊκοῖς αὐτὰς ἐξετάζεσθαι".

Ինչպես տեսնում ենք, հունարենում խոսքը սարկավագուհիների մասին է, իսկ հայերենում մի դեպքում «սարկաւագացն», մյուսում՝ «սարկաւագաց կանանցն»։ Երկու դեպքում էլ պետք է հասկանալ սարկավագուհիներ։

№№ 659, 8459, 9311 ձեռագրերում այս և Ի հոդվածները չեն պահվել։

Հոդ. Ի, էջ 131 (հուն. հոդ. 20, էջ 435)։ Ձեռագրում այս հոդվածը միացված է նախորդին։

Համահավաք բնագրի համար օգտագործած համարյա բոլոր ձեռագրերն էլ ունեն Կոստանդիանոսի ուղղերձը. Հավատամքը և Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկը:

Կոստանդիանոսի ուղերձը, էջ 131—132. *Կոստանդիանոսի ուղերձի երկու այլ տարբերակներ ևս մեզ հայտնի են. մեկը պահվել է Սոկրատի Եկեղեցական պատմության մեջ, մյուսը՝ մեր մատենադարանի №№ 1905, 1490 ձեռագրերում: Նպատակահարմար ենք գտնում վերևում հիշված երկու տարբերակներն ամբողջությամբ բերել այստեղ.*

1. «Զարաց և ամբարշտաց նմանել Արիոս, իրաւացի է զնոյն զնոցունց ունել անարգանս. որպէս զի և այսուհետև Պորփիւրիոս աստուածպաշտութեանն թշնամի՝ կարգս անիրաւս և անաւրէնս հակառակ կրաւնից և կանգնեալ գարժանն էգիտ զվարձ. և այսպիսի որպէս զի զնախատող ինքն զնոյն հետայն լինիլ ժամանակին. և առավել լնուլ չարափառութեամբ. այժմ հաճոյ թուեցաւ զԱրիոս և զնորուն համակամսն զՊորփիւրիանոսս կոչեցեալսն որոց յեղանակացն նմանին, զոյսոսիկ ունելով զյորջորջումն: Առ այս և եթ ինչ շարագրումն յԱրիոսէ կարգեալ գտանիցի. զայս հրոյ մատնեալ, զի մի ընդ վայր միայն նորա վարդապետութիւնն ապականիցի, այլ զի և ոչ յիշումն նորա ընաւին մնասցէ: Զնոյն պատմեմ և այժմ, եթէ ոք շարագրեալս ինչ յԱրիոսէ ունիցի համակարգութիւնս որպէս զի թագուցեալ ինչ և ոչ նոյն ժամայն մատուցանել և հրով կիզուլ և զայսպիսիս սպանանել մահու մնասուէ Քանզի առ ժամայն այլոցն ի սորա իսկ գլխայս կոցցէ պատիժնւ Եւ այսպիսի և ոչ միոյ թողութեան արժանաւորեսցի ամենեւիմբ» (Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն, հտ. Ա, Վաղարշապատ, 1897, էջ 27):

2. «Թուղթ Կոստանդիանոսի կայսերն առ ամենեսեան.

Ցաղթօղ Կոստանդիանոս մեծ և օգոստոս եպիսկոպոսացդ և ժողովրդոցդ.

Քանզի չար և ամբարիշտ մարդկանց հետևակ եղև Արիոսն, վասն այսորիկ արդար իսկ է, զի նախատանօք ամբարիշտն նախատիցի, որպէս Պորփիւրոս աստուածպաշտութեան թշնամին, որոյ զրազում զարշելի գիրս հանեալ էր ընդդէմ բարեպաշտ հաւատոյս մերոյ, եգիտ զիւրեան արժանի պատիժս. և իսկ զայնպիսի իւր ամբարշտութեան արժանի վարձս ընկալաւ, որ մինչև ցապագայ ժամանակս ոչ միայն պարսաւանօք և վատահամբաւիւք լնանեցեալ եղև, այլ և ամբարիշտ գրեանքն նորա բնաջինջ եղեն. Նմանապէս ևս այժմ հաճոյ թուեցաւ զԱրիոսն և զհետևօղսն նորին Պորփիւրիանոսս անուանակոչել. զի որոց վարուցն հետևօղք եղեն նոցին ևս մականուամբքն անուանեսցին. զարձեալ եթէ գործ ինչ գրեցեալ ի յԱրիոսէ գտանիցի, շուտով ի հուր արկանիցի. զի ոչ միայն զարշելի վարդապետութիւնն նորա արմատախիլ լինիցի, այլ և զի ոչ ոք յիշատակ գրոցն նորա մնասցէ, զայս ևս հրամայեմք, զի եթէ ոք զգիր ինչ ի յԱրիոսէ շարադրեալ պահեսցէ և զնա յառաջ բերեալ ի հուրն ոչ ձգեսցէ և եթէ յետոյ յայտնեսցի, այնպիսին ի վտանգի մահու լիցի, քանզի եթէ ոք ի յայնպիսի պատուիրազանցութեանն ըմբռնեսցի՝ առ ժամայն գլխապարտ եղիցի: Աստուած զձեզ պահեսցէ» (№ 1905, էջ 43ար, հմմտ. նաև № 1490, էջ 33ր):

Հավատամք, էջ 133: *Կանոնագրքում պահվել է Հավատամքի սկզբի տողը. «Հաւատամք ի մի Աստուած հայր ամենակալ» (էջ 149, տող 3, հմմտ. հունարենը. πιστεύομεν εἰς ἕνα Θεὸν πατέρα παντοκράτορα (էջ 436): Հավատամքը հայտնի բան է, ուստի մնացածը չենք բերում, սակայն կարևոր է նշել, որ մի քանի կանոնագիրք-ձեռագրերում (*b*, էջ 65ա,* d *էջ 46ա,* e, *էջ 51բ,* f *էջ 82բ,* g, *էջ 40բ,* q, *էջ 38բ) պահվել է Հավատամքի լրիվ բնագիրը: Ըստ երևույթին վերջինս հետագայի ավելացում է:*

Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկը, էջ 133—150: *Նիկիայի ժողովի մասնակիցների Կանոնագրքում եղած ցանկում չի նշված Կուրդուբե քաղաքի եպիսկոպոսի անունը Հոսիոս, որը Սարդիկեի ժողովում մեծ դեր խաղաց:*

Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում նշվում են ժողովի մի քանի գլխավոր մասնակիցների անունները. «Եւ ժողովեցան Բիտոն և Բիկենդ երիցունք ի Հռոմ քաղաքէ՝ ձեռնարկութեամբ սրբոյն Սեղբեստրոսի, Աղեքսանդրոս Աղեքսանդրի, Եւստաթիոս Անտիոքայ Մակարիոս Երուսաղէմի, Աղեքսանդրոս Կոստանդնուպօլսի եպիսկոպոսք» (Մ. Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, գիրք Բ, գլ. ՁԹ, էջ 239. հմմտ. Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 129): Նիկիայի ժողովի մասնակիցներից մի քանիսի անունների ցանկը մի փոքր ընդարձակ գտնում ենք նաև Սոկրատի Եկեղեցական պատմության հունարեն և լատիներեն բնագրերում: Այդ հատվածը հայ թարգմանիչ Փիլոն Տիրակացին զեղչել է. Ստորև բերում ենք այս հատվածը ըստ Ռոբերտ Հուսեի հրատարակության. "Ὅσιος ἐπίσκοπος Κορδούβης Ἱσπανίας οὕτως πιστεύω ὡς προγέγραπται. Ῥώμης Βίτων καὶ Βικεντῖνος πρεσβύτεροι· Αἰγύπτου Ἀλέξανδρος· Ἀντιοχείας τῆς μεγάλης

Εὐστάθιος· Ἱεροσολύμων Μακάριος· Ἁρποκρατίων Κυνῶν· καὶ τῶν λοιπῶν· ὧν εἰς πλήρες τὰ ὀνόματα κεῖται ἐν τῷ Συνοδικῷ Ἀθανασίου τοῦ Ἀλεξανδρείας ἐπισκόπου". (Socratis Scholastici Ecclesiastica historia, edidit Robertus Hussey, tomus I. Oxonii, 1853, p. 96):

Մեր օգտագործած ձեռագրերից միայն Γ-ը ունի «Բիտոն», համապատասխան հունարենին և Մ. Խորենացուն, բայց որովհետև այդ ընթերցումը կարող է հետագայի սրբագրություն լինել, ուստի այն թողեցինք տողատակ, բնագրում նշելով «Բիկտոր» համաձայն ձեռագրերի մեծ մասի ընթերցանության:

ABCFPUn *ձեռագրերում բնագրի «Սուրբ եպիսկոպոսն քաղաքին Կուադուբէ... ի Հռոմ ռադաբէ» (էջ 134, տող 5—7) հատվածի դիմաց, աջ կամ ձախ լուսանցքում, միևնույն ձեռացագրով և ուղղագրական աննշան տարբերություններով, ավելացված է «Ցարեմտեան եպիսկոպոս ոչ ոք եղեալ է ի թիւ անուանց, բայց յերիցանցն Հռովմայ» (A, էջ 60բ) հատվածը: Այդ նույն հատվածը* iKLMNOQRSTVXYZWê *ձեռագրերում գրված է բնագրի «Բիկտոր և Բնկենտ երիցունք ի Հռոմ քաղաքէ» տողին որպես շարունակություն. այսպես. «Բիկտոր և Բնկենտ երիցունք ի Հռովմ քաղաքէ: Ցարեմտեան եպիսկոպոս ոչ ոք եղեալ է ի թիւ անուանց, բայց երիցանց Հռովմայ» (ըստ I ձեռագրի, էջ 55բ):* Eabefgkmprst *ձեռագրերը չունեն այդ ավելացումը:* ôcdlhloq *ձեռագրերում չի պահվել կամ չի ընդօրինակվել Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկը, հետևապես մեզ ոչինչ հայտնի չէ ավելացված հատվածի մասին:* GHD *ձեռագրերում այդ հատվածը բնագրի այլ հատվածների հետ խառնիխուռն է գրված. բերում ենք ըստ* G *ձեռագրի. «Բիկտոր և Բեկէնտ երիցունք ի Հռովմ քաղաքէ յերիցանցն Հռովմա. Ցեղիպտացւոց յարեմտեան եպիսկոպոսք եղեալ են անուանք Աղեքսանդրոս» (էջ 16աբ),* J *ձեռագրում անկանոնությունը այլ ձևով է արտահայտվել, «Սուրբ եպիսկոպոսն քաղաքին Կուադուբէ այսպէս հաւատամ որպէս յառաջագոյն գրեալ է: Ցարեմտեան եպիսկոպոս ոչ ոք եղեալ է ի թիւ անուանց, բայց երիցանց Հռովմայ. Բիկտոր և Բեկենտ երիցունք ի Հռովմ քաղաքէ» (էջ 45ա), շարունակությունը ինչպես բնագրում: Վերջապես* U *ձեռագրում թեև Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկը չի պահվել, բայց մեզ հետաքրքրող հատվածը գտնում ենք այն ձևով, ինչ որ* J *ձեռագրում է, միայն վերջինիս «Բիկտոր և Բեկենտ երիցունք ի Հռովմ քաղաքէ» հատվածը չի պահվել այստեղ:*

Նիկիայի ժողովի մասնակիցների թիվը թեև ընդունված է 318, բայց Կանոնագրքում պահված է 212 անուն: Մասնակիցների թվի առթիվ մեջ ենք բերում Սոկրատի Եկեղեցական պատմության հրատարակիչ Մեսրոպ Տեր-Մովսիսյանի մի ծանոթագրությունը. «Այստեղ ունենք 318 թիւը, որ ունին նաև Խոր. և մեր միւս պատմագիրները, և շատ յոյն հեղինակներ, իսկ բնագ. (իմա հունարենը— Վ. Հ.) ունի. «եպիսկոպոսների թիւը 300-ից անց էր» (հմմտ. հունարենը ἐπισκόπων μὲν πλῆθος τριακοσίων ἀριθμὸν *նույն տեղում, էջ 38— Վ. Հ.) Եւսեբ. 250, Անտիոքի եպիսկոպոս Եւստաթիոսը 270, իսկ ընդհանուր կարծիքը համաձայն է 318 թւի հետ: Արաբացի հեղինակ Իբն-Ալի յիշում է, որ բոլոր ժողովուածների թիւը հաւասար էր 2408-ի, որոնցից Կոստանդինը ընտրեց 318 եպիսկոպոսներ» (էջ 17, ծանոթ. 1): Հմմտ.* Hefele, Conciliengeschichte, Erster Band, S. 257—258:

Կանոնագրքում եղած այս ցանկը որոշ տեղեր ունի շեղումներ № 1905 ձեռագրի համապատասխան ցանկից, իսկ մի տեղ էլ Կանոնագրքում ուղղակի խանգարված է, օրինակ, Պաղեստինի կողմից եկածների ցանկում, ընդօրինակությունների հետևանքով, դուրս է ընկել մի տեղի անուն և մի քանի եպիսկոպոսների վայրի անունը խանգարվել է, բացի դրանից այս մասում չի պահվել նաև 3 եպիսկոպոսների անուն: Այդ բանը ցույց տալու նպատակով համեմատության համար կբերենք № 1905 ձեռագրի ունեցածը.

«Ի գաւառէն Պաղեստինոյ.

Մակարիոս Երուսաղէմայ:
Գերմանոս Նէապօլսոյ:
Մարիոս Սէբաստիոյ:
Գայիանոս Կատարիսյ:
Եւսէբիոս Կեսարիոյ:
Սաբինոս Ասքալոնիոյ:
Ղունկինոս Նիկոպօլսոյ:
Պետրոս Իամնիոյ:
Մաքրինոս, որ է Մարինոս Էլեւթէրուպօլսոյ:
Մաքսիմոս Մաքսիմիանուպօլսոյ:
Պօղոս, որ էՊօղինոս Մաքսիմիանուպօլսոյ:
Ցունվարիոս Հիերիգունտինոյ:
Հէղիոգորոս Զաբուղօնիոյ:
Աէտիոս Լիւդդիոյ:
Սիլուանոս Ազոտիոյ:
Պատրուփիլոս Սքիւթոպօլսոյ:
Ասքղեպիոս Գազայու:
Պետրոս Անիլայու:
Անտիոքոս Գապիտոլիոյ» (էջ 31բ—32ա, տես նաև № 1490, էջ 25բ—26ա):

Մասնակիցների ցանկի այլ մասերում ևս կան տեղեր, ուր մասնակիցների անունները կանոնագրքում պակաս են նշված, օրինակ, Փյունիկացիների կողմից եկածների շարքում չեն նշված «Մարտինոս որ է Մարինոս Պալմիւրիոյ՝ Թալասիոս որ է Թաղոնիոս Աղաղիոյ» (էջ 32ա. տես նաև № 1490, 26ա)։ Իսկ № 1905 ձեռագրի ցանկում չի նշված կանոնագրքի ունեցածը «Պաւղինոս ի Ցաղմիրոսէ». կամ Պիսիգացիների կողմից եկածների ցանկում կանոնագրքում չեն նշված «Թէողոքոս Ուղիլիոյ», «Ուրանիոն, որ է Ուրանիոս Սէլկիոյ կամ Սուտէննէսի՝ Ապակամոս Լիսինիոյ» (№ 1903, էջ 34ա, տես նաև № 1490, էջ 27ա)։ Իսկ կանոնագրքի ունեցած «Գրամիւս յԾմոմնէ» նշումը չի պահվել №№ 1905 և 1490 ձեռագրերում։

Նման շեղումներ տես նաև Միջագետքից, Իսավրիայից և մի քանի այլ կողմերից եկածների ցանկերում։ Այդ տարբերությունները, ըստ երևույթին, պետք է բացատրել մասնակիցների ցանկերի տարբեր խմբագրությունների, օգտագործման փաստով։

ԱՆԿՅՈՒՐԻԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 151: *Համեմատությունների համար չօգտագործված մի քանի ձեռագրերում այս վերնագիրն ունի տարբերակներ, օրինակ. «Անկիւռեա կանոնին գլուխ ի» (№ № 648, էջ 12բ, 3562, էջ 282ա), «Անկիւրոնա կտնովք (№ 649՝ կանոնք) գլուխք ի» (№ № 649, էջ 32ա, 650, էջ 36ա, 651, էջ 24բ, 2964, էջ 45բ), «Կանոն Անկիւրիոյ, զոր եդին սուրբ հարքն» (№ 3369, էջ 40բ)։*

Ցանկ, էջ 151—152։ *Վերևում նշված ձեռագրերը ցանկ չունեն։ № 059 ձեռագրում եղած ցանկը, քանի որ տրված է այլ կանոնախմբերի ցանկերի հետ միասին, այստեղ չենք նշի, հետաքրքրվողները կարող են այն գտնել վերևում, էջ 561—562։ Մի այլ՝ № 657 ձեռագրում Կեսարիայի, Անկյուրիայի, Նեոկեսարիայի, Նիկիայի հաջորդականությամբ կազմված է այդ ժողովների որոշումներից վերցված 31 հոդվածների վերնագրերի ցանկ, յուրաքանչյուր կանոնախմբից վերցնելով լրիվ կամ մի քանի, նույնիսկ մեկ հոդվածի վերնագիր։ Ահա այդ ցանկը իր վերնագրով.*

«Նիկայ կանոնացն

ա. Վասն խոստանալոյ կուսութեան։
բ. Վասն ընդ արամբ շնալոյ։
գ. Վասն այրեաց մնացելոց։
դ. Վասն կուսանաց։
ե. Վասն կանանց պոռնկաց։
զ. Վասն պոռնկաց և սպանողաց։
է. Վասն ակամայ սպանողաց։
ը. Վասն դիւթից։
թ. Վասն չար կախարդաց։
ժ. Վասն երիցանց։
ժա. Վասն աշխարհականաց։
ժբ. Վասն բռնութեամբ զոհելոյ։
ժգ. Վասն ի տունս հեթանոսաց։
ժդ. Վասն խառնակեցան եւ կերան։
ժե. Վասն որ չհեռացան ի զոհելոյ։
ժզ. Վասն ուտելոյ զհեթանոսաց։
ժէ. Վասն աղջկան խօսելոյ։
ժը. Վասն կնոջ երկուց եղբարց։
ժթ. Վասն ցանկանալոյ կնոջ։
ի. Վասն երկրորդաց։
իա. Վասն միւսն կուս իցէ եւ միւսն ոչ։
իբ. Վասն երրորդացն։
իգ. Վասն չորրորդացն։
իդ. Վասն արձակելոյ զկին։
իե. Վասն ոչ վասն պոռնկութեան։
իզ. Վասն քահանայի կնոջ։
իէ. Վասն պղծութեան քահանայի։
իը. Վասն կարդի քահանայից։
իթ. Վասն որ ի նեղութիւն անկանին եւ մկրտին։
լ. Վասն գողոց մարդասպանաց։
լա. Վասն արուագիտացն» (էջ 100բ—100ա)։

Այս հաջորդականությամբ էլ ձեռագրում դասավորված են հոդվածները։ Առանձին հոդվածների մասին կխոսվի իր տեղում, սակայն, այստեղ ցանկանում ենք նշել № 657 ձեռագրում պահված Անկյուրիայի կանոնախմբի հոդվածների հաջորդականության մասին. եթե նկատի ունենանք Կանոնագրքի ներկա հրատարակության մեջ պահված Նիկիայի, Անկյուրիայի, Կեսարիայի և Նեոկեսարիայի կանոնախմբի հոդվածների հաջորդականությունը, ապա № 657 ձեռագրում եղածը կունենա հետևյալ պատկերը։

	Կանոնագիրք		№ 657	
Նիկիա	ԺԸ	հոդված	ԼԱ	հոդված
Անկյուրիա	Ա, Բ	»	Ժ	»
	Գ	»	ԺԱ	»
	Դ	»	ԺԲ	»
	Ե, Զ	»	(չունի)	

	Է	*հոդված*	*ԺԳ*	*հոդված*
	Ը	"	*ԺԳ*	"
	Թ	"	*ԺԵ*	"
	Ժ	"	*ԺԶ*	"
	ԺԱ—ԺԹ	"		(չունի)
	Ի	"	*Ա*	*հոդված*
Կեսարիա	*Ա*	"	*Բ*	"
	Բ	"	*Գ*	"
	Գ	"	*Ե*	"
	Դ	"	*Զ*	"
	Ե	"	*Է*	"
	Զ	"	*Գ*	"
	Է	"	*Ը*	"
	Ը	"	*Թ*	"
	Թ	"	*ԺԷ*	"
	Ժ	"	*Լ*	"
Նեոկեսարիա	*Ա*	"		(չունի)
	Բ	"	*ԺԸ*	*հոդված*
	Գ	"		(չունի)
	Գ	"	*ԺԹ*	*հոդված*
	Ե, Զ	"		(չունի)
	Է	"	*Ի*	*հոդված*
	Ը	"	*ԻԱ*	"
	Թ	"	*ԻԲ*	"
	Ժ	"	*ԻԳ*	"
	ԺԱ	"	*ԻԴ*	"
	ԺԲ	"	*ԻԵ*	"
	ԺԳ	"	*ԻԶ*	"
	ԺԳ	"	*ԻԷ*	"
	ԺԵ	"		(չունի)
	ԺԶ	"	*ԻԸ*	*հոդված*
	ԺԷ	"	*ԻԹ*	"
	ԺԸ, ԺԹ, Ի հոդված			(չունի)

Այսպիսով, Նիկիայի ժողովից վերցված է մեկ հոդված, Անկյուրիայից՝ 8, Կեսարիայից՝ 16, Նեոկեսարիայից՝ 12: Իհարկե այս բոլորը կապ չունի կանոնագրքի սկզբնական կառուցվածքի հետ և կատարվել է հետագայում, ուրիշների կողմից։

Երկրորդ վերնագիր *և առաջաբան,* էջ 152—153: *Այս չունեն № № 648, 649, 650, 651, 657, 659, 2964, 3369, 3562 ձեռագրերը։*

Հոդ. Ա, էջ 154 (հուն. հոդ. 1, էջ 441): Πρεσβυτέρους τοὺς ἐπιθύσαντας, εἶτα ἐπαναπαλαίσαντας (տ. Σύν., III, ἀναπαλαίσαντας), μήτε ἐκ μεθοδου τινὸς ἀλλ' ἐξ ἀληθείας, μήτε προκατασκευάσαντας καὶ ἐπιτηδεύσαντας καὶ πείσαντας, ἵνα δόξωσι μὲν βασάνοις ὑποβάλλεσθαι, ταύτας δὲ τῷ δοκεῖν καὶ τῷ σχήματι προσαχθῆναι· τούτους ἔδοξε τῆς μὲν τιμῆς τῆς κατὰ τὴν καθέδραν μετέχειν, προσφέρειν δὲ αὐτούς, ἢ ὁμιλεῖν, ἢ ὅλως λειτουργεῖν τι των ἱερατικῶν λειτουργιῶν μὴ ἐξεῖναι".

Հայերենը ոչ թե հունարենի թարգմանությունն է, այլ վերջինիս մոտի ճիշտ վերաշարադրումը։

Հոդ. Բ, էջ 154 (հուն. հոդ. 2, էջ 441—442): „Διακόνους ὁμοίως θύσαντας, μετὰ δὲ ταῦτα ἀναπαλαίσαντας, τὴν μὲν ἄλλην τιμὴν ἔχειν, πεπαῦσθαι δὲ αὐτοὺς πάσης τῆς ἱερᾶς (տ. L., ἱερατικῆς) λειτουργίας, τῆς τε τοῦ ἄρτον ἢ ποτήριον ἀναφέρειν, ἢ κηρύσσειν. Εἰ μέντοι τινὲς τῶν ἐπισκόπων τούτοις συνείδοιεν κάματόν τινα ἢ ταπείνωσιν πρᾳότητος, καὶ ἐθέλοιεν πλεῖόν τι διδόναι ἢ ἀφαιρεῖν, ἐπ' αὐτοῖς εἶναι τὴν ἐξουσίαν".

Այս հոդվածը ևս թարգմանություն չէ, այլ հունարենի մոտի վերաշարադրում է ճշտությամբ։

№ № 659, 657 ձեռագրերում այս հոդվածը միացված է նախորդին։

Հոդ. Գ, էջ 154—155 (հուն. հոդ. 3, էջ 442). „Τοὺς φεύγοντας καὶ συλληφθέντας, ἢ ὑπὸ οἰκείων παραδοθέντας, ἢ ἄλλως τὰ ὑπάρχοντα ἀφαιρεθέντας, ἢ ὑπομείναντας βασάνους, ἢ εἰς δεσμωτήριον ἐμβληθέντας, βοῶντάς τε ὅτι εἰσὶ χριστιανοί, καὶ περισχισθέντας, ἤτοι εἰς τὰς χεῖρας πρὸς βίαν ἐμβαλλόντων τῶν βιαζομένων, ἢ βρῶμά τι πρὸς ἀνάγκην δεξαμένους, ὁμολογοῦντας δὲ διόλου ὅτι εἰσὶ χριστιανοί, καὶ τὸ πένθος τοῦ συμβάντος ἀεὶ ἐπιδεικνυμένους τῇ πάσῃ καταστολῇ καὶ τῷ σχήματι, καὶ τῇ τοῦ βίου ταπεινότητι. τούτους, ὡς ἔξω ἁμαρτήματος ὄντας, τῆς κοινωνίας μὴ

κωλύεσθαι. Εἰ δὲ καὶ ἐκωλύθησαν ὑπό τινων (տ. L. τινος) περισσοτέρας ἀκριβείας ἕνεκεν ἢ καὶ τινων ἀγνοίᾳ, εὐθὺς προσδεχθῆναι. Τοῦτο δὲ ὁμοίως ἐπί τε τῶν ἐκ τοῦ κλήρου καὶ τῶν ἄλλων λαϊκῶν. Προσεξητάσθη δὲ κἀκεῖνο, εἰ δύνανται καὶ λαϊκοὶ τῇ αὐτῇ ἀνάγκῃ ὑποπεσόντες προσάγεσθαι (տ. Σύν. III. L.. προάγεσθαι) εἰς τάξιν. "Ἔδοξεν οὖν καὶ τούτους, ὡς μηδὲν ἡμαρτηκότας, εἰ καὶ ἡ προλαβοῦσα εὑρίσκοιτο ὀρθὴ τοῦ βίου πολιτεία, προχειρίζεσθαι".

Հայերենը հունարենի շատ համառոտ վերաշարադրումն է։ № 659 ձեռագրում բացակայում է «վասն... եկեղեցւոյ» հատվածը։ Իսկ մի քանի ձեռագրերում չի պահվել հոդվածի վերջին՝ «եւ մանաւանդ թէ առաջին... մեծ ժողովոյն» մասը (№ № 648, էջ 13ա, 649 էջ 32ա, 650 էջ 30ա, 651 էջ 25ա, 2964 էջ 46բ, 3369 էջ 41ա, 3562 էջ 282բ)։ Վերջին հատվածը՝ «կամ եղեւ մեծ ժողովոյն» № № 659, 657 ձեռագրերը չունեն (էջ 75ա, էջ 102ա)։

Հոդ. Դ, էջ 155 (հուն. հոդ. 4, էջ 443)։ „Περὶ τῶν πρὸς βίαν θυσάντων, ἐπὶ δὲ τούτοις καὶ τῶν δειπνησάντων εἰς τὰ εἴδωλα· ὅσοι μὲν ἀπαγόμενοι, καὶ σχήματι φαιδροτέρῳ ἀνῆλθον, καὶ ἐσθῆτι ἐχρήσαντο πολυτελεστέρᾳ, καὶ μετέσχον τοῦ παρασκευασθέντος δείπνου ἀδιαφόρως, ἔδοξεν ἐνιαυτὸν ἀκροᾶσθαι, ὑποπεσεῖν δὲ τρία ἔτη, εὐχῆς δὲ μόνης κοινωνῆσαι ἔτη δύο, καὶ τότε ἐλθεῖν ἐπὶ τὸ τέλειον".

Հայերենը հունարենի ճիշտ վերաշարադրումն է։ № № 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերում չեն պահվել Դ, Ե, Զ հոդվածները։ № 657 ձեռագիրը չունի միայն Դ հոդվածը։

Հոդ. Ե, էջ 156։ *№ 659 ձեռագրում չեն պահվել Ե և Զ կանոնները։*

Հոդ. Է, էջ 157—158 (հուն. հոդ. 7, էջ 444)։ *Հայերենը համապատասխանում է հունարենին, միայն ստորինը մի փոքր ընդարձակ է. օրինակ՝ հունարենը չունի հայերենում եղած մեջբերումը։*

Հոդ. Ը, 158—159 (հուն. հոդ. 8, էջ 444)։ *Հայերենը մի փոքր ընդարձակ է հունարենից, բայց վերջինիս միտքն արտահայտում է լրիվ։*

Հոդ. Թ, 159—160 (հուն. հոդ. 9, էջ 444)։ *Հայերենը բավական ընդարձակ է, համեմված Աստվածաշնչից վերցրած մեջբերումներով։*

Հոդ. Ժ, էջ 160—161։ *Այս հոդվածը հունարենը չունի։ Հոդվածի՝ «ուխտի սրբոյ եկեղեցւոյ» փոխարեն № 3369 ձեռագրում կարդում ենք. «առաջի խոզի սեղանոյ սրբոյ» (էջ 41բ)։ Այս պատահական սխա՞լ է, թե թերահավատ մարդու հեղինակ։*

Հոդ. ԺԱ, էջ 161—162 (հուն. հոդ. 10, էջ 445)։ *Հայերենը թեև ճիշտ է արտահայտում հունարենի միտքը, բայց ունի հատվածներ, որոնք հունարենում չենք գտնում, դա հատկապես վերաբերում է պատժի չափերին։ Այս հատվածները ցույց թարգմանիչի տեսակետն են արտահայտում կապված տեղի պայմանների կամ տեղերում արդեն հաստատված կարգի հետ։*

№ 657 ձեռագրում չեն պահվել ԺԱ—ԺԹ հոդվածները։

Հոդ. ԺԲ, էջ 162—163 (հուն. հոդ. 11, էջ 445)։ *Հայերենը միանգամայն ճիշտ է թարգմանված, միայն հունարենի վերջին* εἰ καὶ βίαν ὑπ' αὐτῶν πάθοιεν *հատվածը հայերենում գրված է «եւ թէ ի բռնութիւն ապաստան իցէ՝ մի՛ թողցեն» ձևով։*

№ № 648, 649, 650, 651, 659, 2964, 3369, 3562 ձեռագրերում չեն պահվել ԺԲ, ԺԳ, ԺԴ հոդվածները։

Հոդ. ԺԴ, էջ 163 (հուն. հոդ. 13, էջ 445)։ *Հայերենի սկզբի մասը մինչև «կամ թըղթով»՝ միանգամայն համապատասխանում է հունարենին, միայն «կամ բանիւք» բառերի դիմաց հունարենն ունի* ἐν ἑτέρᾳ παροικίᾳ, *իսկ հոդվածի մնացած մասը, սկսած «քանզի յանժամ»-ից մինչև հոդվածի վերջը, կապ չունի հունարեն բնագրի հետ և ավելացվել է հավանաբար թարգմանչի կողմից, որպես բացատրություն հունարեն* χωρεπίσκοπος *(քորեպիսկոպոս) բառի. բնագրի «զի քորեպիսկոպոսդ տեսուչ գաւառի ասի* ըստ Հոռոմին» *(ընդգծումը մերն է Վ. Հ.) բառերը հենց այդ են հաստատում։*

Հոդ. ԺԵ, էջ 163—164 (հուն. հոդ. 14, էջ 445)։ *Հայերենը համապատասխանում է հունարենին, միայն հունարենը չունի հայերենի «ընդունին կանոնքս զերկոսին» հատվածը։ Իսկ հունարենի վերջին* καὶ εἰ μὴ ὑπείκοιεν τῷ κανόνι *հատվածը հայերենը չունի։ Այդ հատվածը պետք է լիներ բնագրի «իցէ ոչ» բառերի միջև։ Հենց այսպես էլ պահվել է № 659 ձեռագրում «մսոտ իցէ եւ ստունգանեսցէ կանոնիս ոչ ընդունի» (էջ 69բ—70ա)։ Տարբեր է նաև* πεπαῦσθαι αὐτοὺς τῆς τάξεως *(թող իր աստիճանից զրկվի) հատվածի թարգմանությունը։*

Հոդ. ԺԶ, էջ 164 (հուն. հոդ. 15, էջ 446): *Հայերենը չունի հունարենի միայն վերջին՝* διὰ τὸ πολλάκις τὴν πρόσοδον τῶν πεπραμένων ἀποδεδωκέναι αὐτοῖς τούτοις πλείονα τὴν τιμὴν *մասը, մնացածը նույնն է։ №№ 648, 649, 650, 651, 659, 2964, 3369, 3562 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։*

Հոդ. ԺԷ, 164—165 (հուն. հոդ. 16, էջ 446): „Περὶ τῶν ἀλογευσαμένων ἢ καὶ ἀλογευομένων· ὅσοι πρὶν εἰκοσαετεῖς γενέσθαι, ἥμαρτον, πέντε καὶ δέκα ἔτεσιν ὑποπεσόντες, κοινωνίας τυγχανέτωσαν τῆς εἰς τὰς προσευχάς. Εἶτα ἐν τῇ κοινωνίᾳ διατελέσαντες ἔτη πέντε, τότε καὶ τῆς προσφορᾶς ἐφαπτέσθωσαν. Ἐξεταζέσθω δὲ αὐτῶν καὶ ὁ ἐν τῇ ὑποπτώσει βίος, καὶ οὕτως τυγχανέτωσαν τῆς φιλανθρωπίας. Εἰ δέ τινες κατακόρως ἐν τοῖς ἁμαρτήμασι γεγόνασι, τὴν μακρὰν ἐχέτωσαν ὑπόπτωσιν. Ὅσοι δὲ ὑπερβάντες τὴν ἡλικίαν ταύτην, καὶ γυναῖκας ἔχοντες περιπεπτώκασι τῷ ἁμαρτήματι, πέντε καὶ εἴκοσιν ἔτη ὑποπεσόντες, κοινωνίας τυγχανέτωσαν τῆς εἰς τὰς προσευχάς, εἶτα ἐκτελέσαντες πέντε ἔτη ἐν τῇ κοινωνίᾳ τῶν εὐχῶν, τυγχανέτωσαν τῆς προσφορᾶς. Εἰ δέ τινες καὶ γυναῖκας ἔχοντες, καὶ ὑπερβάντες τὸν πεντηκονταετῆ χρόνον ἥμαρτον, ἐπὶ τῇ ἐξόδῳ τοῦ βίου τυγχανέτωσαν τῆς κοινωνίας".

Հայերենը մի փոքր ընդարձակ է և զգալի շեղումներ ունի հունարենից, թեև վերջինիս միտքն ընդհանուր առմամբ ճիշտ է տրված հայերենում։

Հոդ. ԺԸ, էջ 165 (հուն. հոդ. 17, էջ 446): „Τοὺς ἀλογευσαμένους καὶ λεπροὺς ὄντας, ἤτοι λεπρώσαντας, τούτους προσέταξεν ἡ ἁγία σύνοδος, εἰς τοὺς χειμαζομένους εὔχεσθαι".

Հայերենն ավելի ընդարձակ է և պարզեցված, իսկ հուն.-ի վերջին մասը տարբեր է։ Հուն. τοὺς χειμαζομένους *բառի մասին Ն. Մելիք-Թանգյանը գրում է. «Ցունաց մեկնիչները զանազանակերպ են հասկանում գիւահար խօսքը. ոմանք ըմբռնում են իսկական մտքով, այսինքն այնպիսի անձինք, որոնք ողիներով լիքն են, այնպիսի հիւանդութիւն ունին, որ ներս թողնել եկեղեցին չի կարելի. ոմանք հասկանում են իբրև դրսի ունկնդիրներ, որոնք չնայելով անձրևին, քամուն, պիտի կանգնէին և աղօթէին» (Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա գիրք, էջ 189)։*

№№ 648, 649, 650, 651, 659, 2964, 3369, 3562 ձեռագրերում ԺԸ և ԺԹ հոդվածները չեն պահվել։

Հոդ. ԺԹ, էջ 166 (հուն. հոդ. 18, էջ 447): *Հայերենի «և կապել յեկեղեցւոյ», ինչպես նաև վերջին «զի ամենայն ոք գիտակ լինիցի» հատվածները հունարենը չունի. մնացածը համապատասխանում է վերջինիս։*

Հոդ. Ի, էջ 166—167 (հուն. հոդ. 19, էջ 447): *Հայերենը ընդարձակ է, որի սկզբի և վերջի մասերում է արտահայտված հունարենի միտքը. իսկ մնացած մասը հունարենը չունի։*

№ 657 ձեռագրում չի պահվել կանոնագրքում եղածի վերջին «այլ վասն... զի մի՛ ևս լիցին» հատվածը (էջ 101ա)։

Հունարենի հաջորդ՝ 20, 21, 22, 23, 24, 25-րդ հոդվածները Կանոնագրքի սույն կանոնախմբում բացակայում են, դրանք սովորաբար դրված են կեսարիայի կանոնախմբի հոդվածների շարքում (տես ներքևում, էջ 573—574)։

ԿԵՍԱՐԻԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 168: *Այս վերնագիրը № 659 ձեռագիրը չունի, բայց ձեռագրի բովանդակած նյութերի ցանկում Կեսարիայի ժողովի կանոնախումբը անվանված է «Ժ. Տասն պատգամքն» (էջ 1ր)։ № № 649, 650, 2964 ձեռագրերի ցանկի վերնագրում թեև նշված է «Գլուխք Ժ», իսկ № 651-ում՝ «Գլուխք Ի», բայց իրականում բերված են յոթ հոդվածներ, մինչդեռ № № 648, 3562 ձեռագրերում նշված է ուղղակի «Գլուխք Է», այնքան, որքան հոդված բերվում է բնագրում։ Սակայն № 3369 ձեռագրում ցանկի վերնագիրն այսպես է. «Կանոն Կեսարիայ զոր եդին սուրբ հարքն մեր» (էջ 43ա)։*

Ցանկ և առաջաբան, 168—169: *№ № 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերը չունեն ցանկը և առաջաբանը։ Առաջաբանը չունեն նաև № № 657, 659 ձեռագրերը, սակայն ցանկը, ինչպես արդեն նշել ենք վերևում (էջ 561—562) Կեսարիայի ժողովի կանոնախմբին անմիջապես չի նախորդում, այլ թեև լրիվ, մի քանի այլ կանոնախմբերի հոդվածների վերնագրերի հետ, գրված է Նիկիական ժողովի կանոնախմբի ցանկում։ Թե կանոնագրքում պահված այս կանոնախմբի հոդվածների վերնագրերի ցանկի և բուն հոդվածների հաջորդականությունը ինչքանով է համապատասխանում № № 657, 659 ձեռագրերի ունեցածներին, դարձյալ ցույց ենք տվել վերևում (էջ 569—570)։*

Հոդ. Ա, էջ 169 (Անկյուրիա, հուն. հոդ. 20, էջ 447): *Այս կանոնախմբի հունարեն բնագիր գոյություն չունի։ Եվ ընդհանրապես Կեսարիայի ժողովի կանոնագրքում գտնվող կանոնների ինքնության հարցը երկրայելի է, թեև այլ օրակարգով Կեսարիայում ժողով լինելու մասին կան տեղեկություններ, օրինակ, մինչև Գանգրայի ժողովը Կեսարիայի մի ժողովում նզովել են Սեբաստիայի եպիսկոպոս Եվստաթեոսին (տես «Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն», Ա, էջ 205—206, կարդա նաև Հեֆելեի* Conciliengeschichte, Erster Band, § 48, *էջ 442—443)։*

Վերևում նշեցինք (էջ 572), որ Անկյուրիայի ժողովի 20—25-րդ կանոնները չեն պահվել կանոնագրքի Անկյուրիայի կանոնախմբի բնագրում, այլ արտահայտվել են Կեսարիայի կանոնախմբի մի քանի կանոններում։

Կանոնագրքի Կեսարիայի ժողովի Ա կանոնը Անկյուրիայի ժողովի հունարեն բնագրի 20-րդ հոդվածն է, թեև հայերենը մի փոքր ընդարձակ է և զգալի տարբերություններ ունի վերջինիս նկատմամբ։ Հայերենի ներկա հոդվածը մեծ չափով խմբագրման է ենթարկվել։ Ահա հուն.-ը. „Ἐὰν τινος γυνὴ μοιχευθῇ, ἢ μοιχεύσῃ τις, ἐν ἑπτὰ ἔτεσιν δεῖ αὐτὸν τοῦ τελείου τυχεῖν, κατὰ τοὺς βαθμοὺς τοὺς προάγοντας“.

Հոդ. Բ, էջ 169—170: *Հունարենի բնագրում (Անկյուրիա) այս հոդվածը չենք գտնում, բայց քանի որ Կանոնագրքի Անկյուրիայի ժողովի ԺԲ (հուն. հոդ. 11-րդ) հոդվածը առևանգված աղջիկների մասին է, իսկ Կեսարիայի Ա հոդվածը (Անկյուրիայի հուն. հոդ. 20-րդ)՝ ամուսնացածների, կարելի է ենթադրել, որ սա էլ այս երկու հոդվածների շարունակությունն է, այստեղ խոսվում է նշանված աղջիկների մասին։*

№ 3369 ձեռագրում այս հոդվածը, հակառակ Կանոնագրքում եղածի, շարադրված է հոգնակի թվով, օրինակ «շնացան», «կոչեսցին» և այլն։

Հոդ. Գ, էջ 170 (Անկյուրիա, հուն. հոդ. 21 էջ 447): *Հայերենը հունարենի նկատմամբ ունի փոքրիկ շեղումներ. օրինակ, հայերենը սահմանում է երկասաներան պատիժ 5-ական տարով, իսկ հուն.-ը մեկ անգամից 10 տարի։*

Հոդվածի երկրորդ մասում № 659 ձեռագիրն ունի փոքր շեղում, ահա այն. «Բայց երկրորդս վասն մարդասիրութեան կամ եղև մեծ ժողովոյն Ժ ամ ընդ պատժաւք լինել ընդ

ունկնդիրսն, իսկ վասն պոռնկութեանն Ե ամ ևս ընդ ձեռամբ առ դրանն տրովք ողորմութեամբ սրբեսցի և հաղորդեսցի ուրինաց» (էջ 72ար)։

Հոդ. Դ, էջ 170 (Անկյուրիա, հուն. հոդ. 22, էջ 447)։ „Περὶ ἑκουσίων φόνων. ὑποπιπτέτωσαν μέν. τοῦ δὲ τελείου ἐν τῷ τέλει τοῦ βίου καταξιούσθωσαν".

Հունարենում խոսքը նախամտածված սպանության մասին է և հակառակ հայերենի՝ բավական սեղմ է։

Հոդ. Ե, էջ 170—171 (Անկյուրիա, հուն. հոդ. 23. էջ 448)։ *Հայերենն ընդարձակ է, օրինակ, վերջինիս «և ոչ գիտութեամբ... եւ ընկերաց» հատվածը հուն.-ը չունի, այդպես նաև վերջին «ընդ ապաշխարողս..._ հաղորդեսցի ուրինաց» հատվածը։ Սակայն, հուն.-ի միտքը ամբողջովին արտահայտված է հայերենում։*

Հոդ. Զ, էջ 171։ *Հունարենը չունի այս հոդվածը։ Վերջինս թերևս կարելի է Անկյուրիայի ժողովի հուն. բնագրի 20-րդ հոդվածի լրացում համարել (տես վերևում, էջ 573)։ Հունարենում խոսքը ամուսնացածների մասին է, իսկ հայերենում այրիների։ Մի քանի ձեռագրերում այս հոդվածը բերված է բավական համառոտ. «Զ. Ոյք այրիք մնացեալ իցեն յետ ամաց ինչ կամ բնաւ առն չիցէ լեալ և ի մեղս անկանիցին ի պոռնիկութիւն՝ Գ ամ ընդ ունկնդիրս եւ Բ ամ ընդ ապաշխարողս մտեալ յեկեղեցի և ելցեն։ Ապա թէ ի նոյն մեղս թաւալին՝ Է ամ ապաշխարեսցեն» (№ 648 էջ 15ա, հմմտ. №№ 649, էջ 35աբ, 650, էջ 39բ, 651, էջ 27բ, 2964, էջ 50բ, 3562, էջ 285)։ Իսկ № 3369 ձեռագրում «եւ դթով տնանկաց... եւ գյոյս բարեաց անդադար սփռեսցէ» հատվածը չի պահվել։*

Հոդ. Է, Ը, էջ 172—173 (Անկյուրիա, հուն. հոդ. 24, էջ 448)։ „Οἱ καταμαντευόμενοι καὶ ταῖς συνηθείαις τῶν ἐθνῶν ἐξακολουθοῦντες, ἢ εἰσάγοντές τινας εἰς τοὺς ἑαυτῶν οἴκους ἐπὶ ἀνευρέσει φαρμακειῶν, ἢ καὶ καθάρσει, ὑπὸ τὸν κανόνα πιπτέτωσαν τῆς πενταετίας κατὰ τοὺς βαθμοὺς ὡρισμένους· τρία ἔτη ὑποπτώσεως, καὶ δύο ἔτη εὐχῆς, χωρὶς προσφορᾶς".

Հայերենն ընդարձակ է և ունի շեղումներ, ըստ երևույթին հայերենը թարգմանություն չէ, այլ խմբագրված։ Իսկ Ը հոդվածը նախորդի շարունակությունն է, որ չենք գտնում Անկյուրիայի ժողովի հունարեն բնագրում։

Այս հոդվածները չեն պահվել №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում, իսկ № 3369 ձեռագրում դրանք թեև կան, բայց հոդվածների հաջորդականությունը տարբեր է, օրինակ. Կանոնագրքի ունեցած Է հոդվածը այստեղ գրված է Ը համարի տակ, Ը-ն՝ Թ-ի, Թ-ն՝ Ը-ի։

Հոդ. Թ., էջ 173—174 (Անկյուրիա, հուն. հոդ. 25, էջ 448)։ *Հայերենը մի փոքր ընդարձակ է, մասնավորապես «իսկ վասն» հատվածից հետո կան լրացումներ։ Իսկ հունարենի միտքն արտահայտված է հայերեն հոդվածի առաջին մասում։*

Հոդ. Ժ, էջ 174—176։ *Այս հոդվածը ևս չի պահվել հունարենում և №№ 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերում։ Ըստ էության սա կանոն չէ, այլ խրատ ողջախոհության, մարդասպանության և նման բաների մասին։*

ՆԵՈԿԵՍԱՐԻԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 177: *Համեմատությունների համար չօգտագործված ձեռագրերից մի քանիսում այս վերնագիրն ունի տարբերակներ, օրինակ, «Նիոյկեսարեա կանոնք գլուխք» (№ № 648, էջ 15բ, 3582, էջ 286ա), «Կանոն (№ 650՝ կանոնք) Նիոյկեսարոյ գլուխք (№ 2964՝ գլուխ) Ի» (№ № 650, էջ 39բ, 651, էջ 28ա, 2964, էջ 31ա), «Նեոկեսարեա կանոնմնին գլուխք Ի» (№ 649, էջ 35բ), «Կանոնք Նոյնոյկեսարիոյ զոր եդին սուրբ հարքն մեր» (№ 3369, էջ 44բ)։*

Ցանկ, էջ 177—178: *№ № 848, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերը չունեն ցանկը և երկրորդ վերնագիրը։ Իսկ երկու ձեռագիր՝ № № 659, 657 ունեն այդ ցանկը, սակայն այն միահյուսված է այլ կանոնախմբերի ցանկերի հետ (տես վերևում՝ № 659 ձեռագրի ցանկի համար, էջ 561—562, № 657 ձեռագրի ցանկի համար, էջ 569—570)։ № 659 ձեռագրի ցանկում նշված են 12 հոդվածների վերնագրեր, յոթ հոդվածների վերնագրեր չկան, իսկ երկու հոդվածի վերնագիրն էլ՝ ԺԴ, ԺԵ, դրված է ԺԴ վերնագրի տակ. նույնն էլ հանդիպում ենք 657 ձեռագրում, միայն թե այստեղ տարբեր է հոդվածների համարակալումը։ Օ ձեռագրում ցանկը ունի հետևյալ հաջորդականությունը.*

Կանոնագիրք	*Օ ձեռագիր*	*Կանոնագիրք*	*Օ ձեռագիր*
Ա	Ա	ԺԱ	Ը
Բ	Բ	ԺԲ	Թ
Գ	ԺԸ	ԺԳ	Ժ
Դ	ԺԹ	ԺԴ	ԺԱ
Ե	Ի	ԺԵ	ԺԲ
Զ	Գ	ԺԶ	ԺԳ
Է	Դ	ԺԷ	ԺԴ
Ը	Ե	ԺԸ	ԺԵ
Թ	Զ	ԺԹ	ԺԶ
Ժ	Է	Ի	ԺԷ

Սակայն բուն ձեռագրում, հոդվածների հաջորդականությունը համապատասխանում է կանոնագրքի ունեցածին և ոչ թե իր ցանկի հաջորդականությանը։

Առաջաբան, էջ 179: *№ № 659, 657 ձեռագրերը չունեն առաջաբան, իսկ մի շարք ձեռագրերում այն համառոտ է. «Այս կանոնք յետոյ եղան քան որ յԱնկիւռեայն, բայց քան զնիկիայն յառաջագոյն է. քանզի ժողովեալ ի Նիոյկեսարեան եպիսկոպոսք ԺԶ, վասն պոռնկական աղանդոյն, որ թոյլ տայրին քահանայից վասն պղծության գործոյ» (№ 646, էջ 15բ, հմմտ. նաև № № 649, էջ 35բ, 650, էջ 39բ, 651, էջ 28ա, 2964, էջ 51ա, 3369, էջ 44բ, 3562, էջ 285ա)։*

Հոդ. Ա, էջ 179 (հուն. հոդ. 1, էջ 451): *Հայերենը հուն.-ին համապատասխանում է, միայն տարբեր է սկիզբը։ Հուն.-ի* πρεσβύτερος ἐὰν γήμῃ, τῆς τάξεως αὐτὸν μετατίθεσθαι *(երեցը եթե ամուսնացած է թող վտարվի իր աստիճանից) հատվածի դիմաց կանոնագրքում կարդում ենք «Երէց այր եթէ ամուսնաւ իցէ՝ ընդունելի լիցի ի կարգս»։*

№ № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չի պահվել Ա, Բ, Գ հոդվածները։ Այս կանոնախումբը նշված ձեռագրերում սկսվում է կանոնագրքի Դ հոդվածով։ № № 659, 657 ձեռագրերում չեն պահվել Ա հոդվածը։ Իսկ № 3369 ձեռագրում թեև բոլոր հոդվածները կան, սակայն հոդվածների հաջորդականությունը տարբեր է.

Կանոնագիրք	№ 3369	Կանոնագիրք	№ 3369
Առաջաբան	Ա հոդված	ԺԱ հոդված	Թ հոդված
Ա հոդված	ԺԵ „	ԺԲ „	Թ, ԺԸ „
Բ „	ԺԶ „	ԺԳ „	Ժ „
Գ „	ԺԷ „	ԺԴ „	ԺԱ „
Դ „	Բ „	ԺԵ „	ԺԹ „
Ե „	Դ „	ԺԶ „	ԺԲ „
Զ „	Գ „	ԺԷ „	ԺԳ „
Է „	Ե „	ԺԸ „	ԺԳ „
Ը „	Զ „	ԺԹ „	Ի „
Թ „	Է „	Ի „	ԻԱ „
Ժ „	Ը „		

Հոդ. Բ, էջ 179—180 (հուն. հոդ. 2, էջ 451)։ „Γυνὴ εαν γημηται δύο ἀδελφοῖς, ἐξωθείσθω μέχρι θανατου, πλην εν τῷ θανατῳ ειπουσα, ὡς υγιανασα λύσει τον γαμον, δια την φιλανθρωπιαν (տ. Συν., III, L., δια την φιλανθρωπιαν ειποῦσα, ὡς ὑγιανασα λυσει τον γαμον) εξει τὴν μετανοιαν. Ἐαν δὲ τελευτησῃ ἡ γυνη ἐν τοιούτῳ γαμῳ οὖσα, ητοι ο ανηρ, δυσχερης τῳ μειναντι ἡ μετανοια"։

Հայերենը ընդհանուր առմամբ արտահայտում է հունարենի միտքը, թեև առավել ընդարձակ է։

Հոդ. Գ, էջ 180 (հուն. հոդ. 3, էջ 451)։ *Բացի «Թէ փութութեամբ ինչ իցեն» հատվածից, որը չի պահվել հունարենում, մնացածը բառացի համապատասխանում է վերջինիս։*

№ № 657, 659 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։

Հոդ. Դ. էջ 180—181 (հուն. հոդ. 4, էջ 452)։ *Բացի «սրտիւ անա շնացա ւ րստ Աւետարանին» հատվածից, որը հունարենը չունի, մնացածը բառացի համապատասխանում է վերջինիս։ № 3369 ձեռագրում չի պահվել «բայց գործոյն ի գլուխն չերթալն յայտ է թէ ի շնորհաց անտի պահեցաւ» հատվածը։*

Հոդ. Ե, էջ 181 (հուն. հոդ. 5, էջ 452)։ „Κατηχούμενος εαν εισερχομενος εἰς το κυριακον εν τη των κατηχουμενων ταξει στήκῃ, ουτος δὲ φανῇ αμαρτανων (տ. Συν., III, «իր φανῇ, αμαρτανη), εαν μὲν γονυ κλινων, ακροασθω μηκετι αμαρτανων. Ἐαν δὲ και ακροωμενος ετι αμαρτανη, ἐξωθείσθω"։

Հայերենը թարգմանություն չէ, այլ վերաշարադրված է և խմբագրված։ № 657 ձեռագրում Ե և Զ հոդվածները չեն պահվել։

Հոդ. Զ, էջ 181 (հուն. հոդ. 6, էջ 452)։ *Հայերենի վերջին «առ ի խոստովանութիւն ընդունելութեան մկրտութեանն» հատվածը հունարեն չունի. մնացածը բառացի համապատասխանում է վերջինիս։ № 659 ձեռագիրը Զ հոդվածը չունի։*

Հոդ. Է, էջ 181—182 (հուն. հոդ. 7, էջ 452)։ „Πρεσβύτερον εἰς γαμους διγαμουντων μη ἑστιασθαι, επει μετανοιαν αιτοῦντος του διγαμου, τις εσται ὁ πρεσβυτερος, ο δια της ἑστιασεως συγκατατιθέμενος τοῖς γαμοις"։

Հայերենն ընդարձակ է և ունի ավելի հատվածներ։

Հոդ. Ը—ԺԲ, էջ 182—184։ *Այս հինգ հոդվածները հունարենը չունի։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Ն. Մելիք-Թանգյանը. «Հայոց ձեռագրերում 8, 9, 10, 11, 12 կանոնները նոր են մուծված և խոսում են միևնույն նյութի մասին, կազմում են շարունակություն 7-րդ կանոնի։ Ներմուծողը կարդալով 7-րդ կանոնը, որը արգելում է քահանային երկակների ամուսնական խնջույքին երթալ, և չգտնելով եռապսակների ու քառապսակների համար շարունակաբար գրված կանոններ, քաղելով Բարսեղ Մեծի և այլոց կանոններից այդ մասին գրվածները՝ բերել 7-րդ կանոնի շարունակություն է կազմել։ Այս մուծված կանոնները չկան իսկականի մեջ» («Հայոց եկեղեցական իրաւունքը», գիրք Ա, էջ 201)։ Ն. Մելիք-Թանգյանի ենթադրությունը կարող է հավանական լինել. համենայն դեպս այստեղ նշենք այն կանոնախմբերը, որոնք ունեն նման հոդվածներ. օրինակ՝ Ը հոդվածը տես և համմտ. Գրիգոր Լուսավորիչի կանոնախմբի Ե հոդվածի, Ներսեսի և Ներշապուհի կանոնախմբի ԺԵ հոդվածի հետ, Թ-ն՝ Բարսեղի կանոնախմբի Դ հոդվածի հետ, ԺԱ-ն և ԺԲ-ն՝ Շահապիվանի ժողովի կանոնախմբի Դ և Ե հոդվածների հետ։*

№ 3369 ձեռագրում ԺԲ հոդվածը կրկնված է մեկ՝ 43ր էջում, Թ համարի տակ, մեկ էլ՝ 46ր էջում, ԺԸ համարի տակ։

Հոդ. ԺԳ, 184—185 (հուն. հոդ. 8, էջ 452)։ „Γυνη τινος μοιχευθεῖσα λαϊκοῦ οντος, ἐαν ἐλεγχθῇ φανερως, ο τοιοῦτος εις υπηρεσίαν ἐλθειν ου δυναται. Ἐαν δὲ και μετα την χειροτο-

-νίαν μοιχευθῇ, ὀφείλει ἀπολῦσαι αὐτήν. Ἐὰν δὲ συζῇ, οὐ δύναται ἔχεσθαι τῆς ἐγχειρισθείσης αὐτῷ ὑπηρεσίας".

Հայերենը ընդհանուր առմամբ ճիշտ է արտահայտում հունարենի միտքը, երբեմն տեղի տալով ազատ թարգմանության, երբեմն էլ բաց թողնելով կամ ավելացնելով առանձին հատվածներ. օրինակ՝ հունարեն λαϊκοῦ *(աշխարհականի) բառը թարգմանված է «պատրաստեալ են ի քահանայութիւն» ձևով։ Վերջինս նույնպես հասկացվում է աշխարհական իմաստով։ Հունարեն* Ἐὰν δὲ καὶ μετὰ τὴν χειροτονίαν μοιχευθῇ *հատվածը, որը պետք է գտնվեր «չնայցէ արձակեսցի» բառերի միջև, հայերենը չի պահել, իսկ վերջինիս «զի ոչ ընդունի զնա եկեղեցի եւ կանոն» հատվածը հունարենը չունի։*

Հոդ. ԺԴ, էջ 185 (հուն. հոդ. 9, էջ 452—453)։ *Հայերենը մի փոքր համառոտ է։ Հուն.-ի* ὅτι ἥμαρτε πρὸ τῆς χειροτονίας μὴ προσφερέτω, μένων ἐν τοῖς λοιποῖς διὰ τὴν ἄλλην σπουδήν. Τὰ γὰρ λοιπὰ ἁμαρτήματα ἔφασαν οἱ πολλοὶ καὶ τὴν χειροθεσίαν ἀφιέναι *հատվածը հայերենը չունի։*

№ 659 ձեռագրում այս և ԺԵ հոդվածները միացված են միմյանց և դրված են ԽԴ համարի տակ։

Հոդ. ԺԵ, էջ 185 (հուն. հոդ. 10, էջ 453)։ „Ὁμοίως καὶ διάκονος ἐὰν τῷ (տ. L., ἐὰν ἐν τῷ) αὐτῷ ἁμαρτήματι περιπέσῃ, τὴν τοῦ ὑπηρέτου τάξιν ἐχέτω". *Հայերենը ընդարձակ է և լրացված Աստվածաշնչից վերցրած ասույթով։ №№ 648, 649, 656, 651, 657, 2984, 3582 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։*

Հոդ. ԺԶ, էջ 186 (հուն. հոդ. 11, էջ 453)։ „Πρεσβύτερος πρὸ τῶν τριάκοντα ἐτῶν μὴ χειροτονείσθω, ἐὰν καὶ πάνυ ᾖ ὁ ἄνθρωπος ἄξιος, ἀλλὰ ἀποτηρείσθω. Ὁ γὰρ κύριος Ἰησοῦς Χριστὸς ἐν τῷ τριακοστῷ (տ. L., τριακοστα) ἔτει ἐφωτίσθη (տ. Σύν., III, ἐβαπτίσθη), καὶ ἤρξατο διδάσκειν".

Հայերենում ընդհանուր առմամբ հունարենի միտքը ճիշտ է արտահայտված, սակայն ընդարձակ է և խմբագրված։

№ 650 ձեռագրում այս հոդվածը, որը դրված է ԽԵ համարի տակ, սկսվում է վերնագրի հիշեցնող փոքրիկ հատվածով. «Վասն կարգի քահանայից» (էջ 82ա), այնուհետև՝ այնպես, ինչպես Կանոնագրքում։ Նույնը տես և 657 ձեռագրում (էջ 164ա), միայն այստեղ համարը նշված է ԻԸ։ Մի քանի ձեռագրերում այս հոդվածը խիստ համառոտ է. «ԺԶ. Կամ եղեւ մեծ ժողովյն երեսնամեա օծանիլ ի քահանայութիւն ըստ օրինակի Փրկչին մերոյ և Ը-ւ րեա մկրտել» (№ 648, էջ 17ա, հմմտ. №№ 649, էջ 37բ, 656, էջ 41բ, 651, էջ 29բ, 2964, էջ 53բ—54ա, 3369, էջ 46ա, 3562, էջ 288ա)։

Հոդ. ԺԷ, էջ 186, (հուն. հոդ. 12, էջ 453)։ „Ἐὰν νοσῶν τις φωτισθῇ, εἰς πρεσβύτερον (տ. Σύν., III, πρεσβυτέριον) ἄγεσθαι οὐ δύναται, οὐκ ἐκ προαιρέσεως γὰρ ἡ πίστις αὐτοῦ, ἀλλ' ἐξ ἀνάγκης· εἰ μὴ τάχα διὰ τὴν μετὰ ταῦτα αὐτοῦ σπουδὴν καὶ πίστιν, καὶ διὰ σπάνιν ἀνθρώπων".

Հայերենն ունի շեղումներ և ընդարձակ է։

№№ 649, 656, 651 ձեռագրերում ԺԷ և ԺԸ հոդվածները միացված են միմյանց։

Հոդ. ԺԸ, էջ 187 (հուն. հոդ. 13 էջ 453)։ *Հայերենը սկզբից մինչև «յաղագս տալ» բառերը միանգամայն համապատասխանում է հունարենին, իսկ հաջորդ «եւ ոչ բաժանել եկեղեցւոյն» հատվածից մինչև վերջ տարբեր է հունարենից։ Այս հատվածի փոխարեն հունարենն ունի.* οὐδὲ ποτήριον· ἐὰν δὲ ἀπῶσι, καὶ εἰς εὐχὴν κληθῇ μόνος δίδωσιν.

Բնագրի «եւ ոչ բաժանել»-ը ճիշտ չէ, պետք է լինի «եւ ոչ բաժակ», այսպես ունեն №№ 648, էջ 17ա, 649, էջ 38բ, 659, էջ 41բ, 651, էջ 30ա, 2964, էջ 54ա, 3562, էջ 288ա, ձեռագրերը։ №№ 657, 659 ձեռագրերը չունեն ԺԸ, ԺԹ, Ի հոդվածները։ Այս հոդվածում, ինչպես տեսնում ենք, քորեպիսկոպոսները, գյուղական քահանաներն ավելի ստորադաս են, քան քաղաքի երեցները և եպիսկոպոսները։ Աստիճանականության այս կարգը, որպես ավատական աստիճանականության արտացոլում հոգևոր իշխանության մեջ, արդյո՞ք կապ չունի Մովսես Խորենացու Պատմության այն տեղի հետ, ուր առավել մանրամասնությամբ խոսում է գյուղի և քաղաքի բնակիչների հարաբերության մասին. «Հրաման տայ՝ (Վաղարշ Ա—Վ. Հ.) և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ լինել առաւել քան զգեղջկաց և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս...» (Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. Թ, էջ 117—118)։

Հոդ. ԺԹ, էջ 187, (հուն. հոդ. 14, էջ 454)։ *Հայերենը բառացի նման է հունարենին, միայն չունի հունարենի վերջին* προσφέρουσι τιμώμενοι *բառերը, դրա փոխարեն ունի «կա-*

տարելոց էջ: № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում այս և Ի հոդվածները չեն պահվել։

Հոդ. Ի, էջ 187, (հուն. հոդ. 15, էջ 454). „Διάκονοι έπτά όφείλουσιν εἶναι κατά τὸν κανόνα, κἂν πανυ μεγαλη ε'η (տ. Σύν.. III, ‑η̄) ἡ πολις· πεισθεισῃ (տ. L.. πεισθήσῃ) δε ἀπὸ τῆς βίβλου των Πραξεων".

Հունարենի միտքը հայերենում տրված է ընդհանուր ձևով և ազատ թարգմանությամբ։

ԳԱՆԳՐԱՅԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 188: *Համեմատությունների համար չօգտագործված մի քանի ձեռագրերում այս վերնագիրը ունի տարբերակներ. օրինակ՝ «Գանգրական կանոնին գլուխ ԻԳ» (№ № 648, էջ 17ա, 3562, էջ 288ա), «Գանգրա կանոնքին գլուխ (№ 2964՝ գլուխք) ԻԳ (№ 2964՝ ԻԳ աւգնեա Ցիսուս)» (№ № 649, էջ 38ա, 2964, էջ 54բ), «Գանգրա կանոնք գլուխք ԻԳ (№ 650՝ ԻԴ աւգնա Ցիսուս)» (№№ 650, էջ 42ա, 651, էջ 30ա), «Կանոնք Գանգրացոց զոր եղին սուրբ հայրապետքն» (№ 3369, էջ 47ա):*

Ցանկ, էջ 188—189: *№ № 659, 657 ձեռագրերում սկզբում գրված է առաջաբանը, այնուհետև հոդվածների վերնագրերի ցանկը: Վերջինս № 659 ձեռագրում կազմված է այբբենական կարգով, դիմացը նշելով հոդվածների հաջորդական համարները: Ահա ցանկը.*

Ցանկ Գանգրայ կանոնաց

Ամուսնութեան	*ա*	*Հաւր և մաւր*	*ժէ*
Աղաբաց	*ժդ*	*Մսակերաց*	*բ*
Գողից	*ժ*	*Մարտիրոսաց*	*իբ*
Երիցանց	*դ, ը, իգ, իգ*	*Ուսուցչաց*	*է*
Եկեղեցւոյ	*թ, իե*	*Որդւոց*	*ժզ*
Եպիսկոպոսաց	*իդ*	*Պահոց*	*ժթ*
Մառայից	*գ*	*Պարսից*	*ժէ*
Կուսանաց	*ժա, ժբ*	*Տէրանց*	*ե*
Կնաթողաց	*ժդ*	*Տասնապատգամաց*	*իթ*
Կիրակէի	*ժը*	*Քառասնորդաց*	*ի, իա*
Հեղձուցիկ	*դ*	*Քահանայից*	*իէ, իը (էջ 98ա):*

Ցանկում 22 վերնագրերի տակ գրված է 29 հոդված, մինչդեռ Գանգրայի ժողովի որոշումները Կանոնագրքում գտնում ենք 24 հոդվածով: Այս ցանկը նոր է և կազմել է 659 ձեռագրի գրիչը, որը Գանգրայի ժողովի կանոնախմբին կցել է մի այլ բնագիր՝ «Կանոն Անտիոքացւոց», սրան համապատասխան՝ վերևում նշված ցանկում մուծված են այդ բնագրի հոդվածների վերնագրերը:

№ 657 ձեռագրում ես ցանկը և՛ Կանոնագրքի և՛ № 659 ձեռագրի ունեցածից տարբեր է. այն ևս նոր է կազմվել.

«ա. Վասն անգոսնելոյ զամուսնութիւն:
բ. Վասն որք պիղծ համարին զմիսն:
գ. Վասն հեղձուցելոյ և մեռելոտոյ:
դ. Վասն ծառայից:
ե. Վասն տերանց:
զ. Վասն որք խորշին յերիցուէ:
է. Վասն ուսուցանելոյ զօրէնս:
ը. Վասն երիցու ըստ կանոնաց եպիսկոպոսն:
թ. Վասն պտղոյ եկեղեցւոյ:
ժ. Վասն գողանալոյ զպտուղ եկեղեցւոյ:
ժա. Վասն զամուսնութիւն պիղծ համարին:
ժբ. Վասն զեր ի վերոյ տեսանելոյ զանձն:
ժգ. Վասն ագարս առնելոյ:
ժդ. Վասն կնոջ թողլոյ զայր իւր:
ժե. Վասն խրատելոյ զաւակսն:
ժզ. Վասն ոչ պատուելո զծնօղսն:
ժէ. Վասն կանանց որ փոքրեն զգլուխ:
ժը. Վասն կիրակոյ արհամարհելոյ:
ժթ. Վասն պահս քարոզելոյ վարդապետաց:
ի. Վասն քառասնորդաց պահոց:
իա. Վասն զատկ[ա]չաբաթոյն հինգշաբաթու:
իբ. Վասն ի ժողովս մարտիրոսաց:
իգ. Վասն սպասաւորելոյ սեղանոյն» (էջ 105բ):

Առաջաբան, էջ 190—192 (հուն. էջ 487—488): Թե՛ հունարեն և թե՛ հայերեն բնագրերում Գանգրայի ժողովի հոդվածներին, որպես առաջաբան, դրված է ժողովի ուղերձը՝ հասցեագրված հայ եպիսկոպոսներին: Այս ուղերձը մեզ հասել է երկու խմբագրությամբ. մեկը՝ կանոնագրքում (տես վերևում, էջ 190—192), մյուսը՝ Գետական Մատենադարանի մի քանի ձեռագրերում: Ահա վերջինս. «Այս կանոնք յետ Նիկիոյ ժողովոյն եղան եւ կարգեցան ի Գանգրա քաղաքի ի ԺԶ եպիսկոպոսաց: Վասն զի ժողովեցաւ սուրբ ժողով եպիսկոպոսաց յեկեղեցին Գանգրացւոց վասն ինչ պիտոյից եկեղեցւոյ եւ խնդրոյ վասն Եւստաթիացւոց հերձուածոյն, զի գտանէր իբրեւ բազում ինչ զիրս և կարգս որոշեալ էին ի նմանէն յիրաւի սահմանեցին դարձեալ եւ յայտ կամեցան առնել զնոսա ամենայն փութութեամբ, զի բարձցին իրքն որ չարաչար լինէին ի նմանէ, զի ի մեզադրութենէ նորա որ մեղադիր առնէր զամուսնութիւն եւ ասէր. «Ձի ոչ ոք եւս որ ընդ ամուսնութեամբ իցէ եւ յանցանիցէ՝ յոյս զաանի այնպիսոյն զառնալոյ եւ կենաց հասանելոյ»: Վասն այսպիսի իրաց բազում կանայք հեռացան յարանց իւրեանց եւ արք ի կանանց իւրեանց, և մինչդեռ ի նոյն իրս էին, չկարացին հանդուրժել վասն այսպիսի իրաց եւ շնացան: Այլ և այլ եւս մեծամեծս անարգէին զեկեղեցի եւ արհամարհեն զկարգս եկեղեցւոյ. եւ ոյք յեկեղեցւոջ անգ էին՝ եւ որոշեալ իւրեանց ժողովս առնէին եւ պաշտօն եւ վարդապետութիւն այլ իմն ընդդէմ կարգաց եկեղեցւոյ, նոր իմն ագանելիս ագանէին և ժողովէին զպտուղ եկեղեցւոյ եւ յանձինս իւրեանց ագանէին եւ անձանց զարդ առնէին. եւ ոյք ընդ նոսա էին պէսպէս եւ այլ ընդ այլոյ կերպարանս նկարէին. իբրեւ յայսպիսի ինչ ագանելիս յուսացեալ էին իբրեւ զքաւութիւն այսպիսի ինչ իրաւք ընգունիցին: Եւ յայսպիսի իրս ծառայք ի տերանց հեռացան եւ անարգեցին զտեարս իւրեանց եւ կանայք արտաքս քան զսովորութեան հանդերձ կարգի կանանց, զարանց զգեստ ագանէին եւ ասոի կարծէին արդարանալ. եւ այլ բազում ինչ առնէին, զհերս փոքրէին ի պատճառս աստուածպաշտութեան արտաքս քան զկարգ բնութեան կանանց, պահս ի կիւրակէի պահէին եւ զսուրբ զազատութեանն աւրն անգոսնէին, եւ զպահս որ ըստ կարգի եկեղեցւոյ սրբոյ կարգեալ էր եւ պահէին՝ նոքա անկոսնէին եւ անփոյթ առնէին իբրեւ ոչ ուղիղ եղեալ, եւ ոմանք ի նոցանէն ի միս ճաշակելոյ խորշէին եւ կասկածէին, եւ ի տունս յորում ամուսնութիւն կրէր՝ աղաւթս անգ ոչ կամէին առնել, եւ ուր լինէր աղօթք՝ զայնպիսիսն անգոսնէին եւ արհամարհէին, բազում անկամ առնել յիշատակ աշխարհականի ումեք, իբրեւ այն թէ պգծեալ յամուսնութենէ անտի էր՝ չմերձենաին եւ ոչ ճաշակէին. եւ յերիցանց որ ամուսնացեալ էին՝ ամբարհաւաճէին ի վերայ. եւ վերագոյն ինչ միտս սաանաին եւ պաշտօնն, որ ի նոցանէ պաշտէր չհպէին: Եւ ի տեղիս ուր մարտիւրոսք եղեալ էին՝ արհամարհէին, եւ որ ի մատուռնս ժողովէին եւ պաշտօն պաշտէին՝ մեղադիր առնէին: Եւ վասն մեծատանց, որ ոչ ամենայն իրօք յ[ը]նչից հեռանային՝ իբրեւ անյոյս համարէին Աստուծոյ: Եւ բազում այլ ինչ, զոր թուել ոք ոչ բաւեսցէ, քանզի ամենայն ոք ի նոցանէն հեռացան ի կարգաց Աստուծոյ եւ ելին արտաքս քան զկանոնս, ըստ իւրեանց մտաց իւրաքանչիւր իմն աւրէնս կարգեցին եւ ընկալան եւ ոչ կամօք ինչ հաւասար առնէին, այլ իւրաքանչիւր զինչ եւ ի միտս արկանէր՝ զայս յաւելոյր, եւ հաճոյ թուէր նոցին իբրեւ անթագաւոր խորհուրդս ինչ ընկալան վասն թշնամանաց եկեղեցւոյ եւ ֆասելոյ անձանց իւրեանց: Վասն այսպիսի իրաց հարկ եղեւ ժողովոյն» (№ 648, էջ 17ա—18բ. տես նաև № № 649, էջ 38ա—39ա, 650, էջ 42ա—43ա, 651, էջ 30ա—31ա, 2964, էջ 54ա—56ա, 3369, էջ 47ա—48ա, 3562, էջ 288ա—289բ):

Առաջաբանի սկզբի տողը միայն «Այս կանոնք յետ Նիկիոյ ժողովոյն եղան» կապ չունի վերջինիս հետ, այն ավելացրել է Օձնեցին, որպես ծանոթագրություն, որը չի պահվել № № 659, 657 ձեռագրերում:

Առաջաբանի երկու խմբագրություններից հունարենին անհամեմատ մոտ է վերոբերյալ բնագիրը:

Սակայն, վերևում նշված ձեռագրերի բնագրերում չեն պահվել Գանգրայի ժողովի մասնակիցների անունները և առաջաբանի հունարեն բնագրի վերջին մասը, սկսած καταψηφίσασθαι αὐτῶν, καὶ ὅρους ἐκθέσθαι, ἐκτὸς αὐτοὺς εἶναι τῆς ἐκκλησίας-ից մինչև առաջաբանի վերջը (էջ 488): Մինչդեռ կանոնագրքի համապատասխան հատվածում գտնում ենք ժողովականների անունները ոչ թե առաջաբանի սկզբում, ինչպես հունարեն բնագրում է, այլ վերջում: Ի գեպ Պիտրայի մոտ հունարենն ունի ժողովականների 14 անուն, Σὺν.-ում և Լաուխերտի մոտ 13, իսկ հայերենը՝ 15: Այսպիսով, Գանգրայի ժողովի որոշումների թարգմանությունից հետո, սկզբնական բնագրի վրայով հավանաբար օտար ձեռք է սահել, և այն խմբագրվել է, թեև առաջաբանի հայերեն թարգմանության երկու խմբագրություն-

ները միմյանց լրացնելով, ընդհանուր առմամբ, արտահայտում են ուղերձի հունարեն բնագրի միտքը, ինչպես ճիշտ նկատել է Լ. Խաչիկյանը («Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից (IV դար)» էջ 99)։

Երկրորդ վերնագիր. էջ 199· *Վերևում նշված ձեռագրերում այս վերնագիրը չի պահվել։*

Հոդ. Ա, էջ 192—193 (հունՑ. հոդ. էջ 489)։ *Հունարենը չունի «կ անդրանիկ» բառերը, իսկ հունարենի* καὶ τὴν καθεύδουσαν μετὰ τοῦ ἀνδρὸς αὐτῆς *(և իր ամուսնու հետ քնող (զուգավորվող) կնոջը) հատվածը հայերենում դրված է «կամ որ ոչ ննջէ ընդ առն իւրում» ձևով։ Հունարենի միտքն արտահայտված է, բայց մի փոքր այլ ձևով։ Ընդհանրապես հայերենը համապատասխանում է հունարենին։*

Որոշ ձեռագրերում այս հոդվածը մի փոքր ընդարձակ է. «Որք զամուսնութիւն մեղադրեն և անկոսնեն կամ որ ոչ ննջէ ընդ առն իւրում առանց կամաց առն, որպէս [թէ] ի հաւատս կացեալ իցէ կամ թէ այր [որ] ոչ ննջէ ընդ կնոջ եւ գարշ համարի զամուսնութիւն, իբրեւ թէ ոչ կարեն մտանել յարքայութիւնն, այնպիսիքն նզովեալ լիցին» (№ № 648, էջ 18բ, 649, էջ 39բ, 650, էջ 43ա, 651, էջ 31ա, 2964, էջ 56բ, 3369 էջ 48ա, 3562, էջ 289բ. հմմա. № № 659, էջ 98ա, բ, 657, էջ 106ա)։

Կանոնագրքի համեմատությամբ՝ հոդվածների հաջորդականությունը տարբեր է նաև 3369 ձեռագրում.

Կանոնագիրք		*№ 3369*		*Կանոնագիրք*		*№ 3369*	
Ա	*հոդված*	*Ա*	*հոդված*	*ԺԳ*	*հոդված*	*ԺԳ, ԺԸ*	*հոդված*
Բ	"	*Բ*	"	*ԺԳ*	"	*ԺԳ*	"
Գ	"	*Գ*	"	*ԺԵ*	"	*ԺԵ, ԺԹ*	"
Գ	"	*Գ*	"	*ԺԶ*	"	*ԺԶ, ԻԱ*	"
Ե	"	*Ե*	"	*ԺԷ*	"	*ԺԷ*	"
Զ	"	*Ը*	"	*ԺԸ*	"	*ԻԳ*	"
Է	"	*Ժ*	"	*ԺԹ*	"	*Ի*	"
Ը	"	*Զ*	"	*Ի*	"	*ԻԳ, ԻԵ*	"
Թ	"	*Է*	"	*ԻԱ*	"	*ԻԶ*	"
Ժ	"	*Թ*	"	*ԻԲ*	"	*ԻԷ*	"
ԺԱ	"	*ԺԱ*	"	*ԻԳ*	"	*ԻԲ*	"
ԺԲ	"	*ԺԲ*	"	*ԻԳ*	"	*ԻԸ*	"

Հոդ. Բ, էջ 193 (հունՑ. հոդ. 2, էջ 489)։ *Հայերենի միայն «առ Աստուած»-ը չենք գտնում հունարենում։ № № 659 657 ձեռագրերում սրա փոխարեն ունենք երկու հոդված. «Բ. Որք զմիսն պիղծ համարին ուտել, որպէս թէ որ ուտենն՝ դրկիցին ինչ յարքայութենէն, նզովեալ լիցին։ Գ. Որք ուտեն զմիս հեղձուցիկ եւ կամ զմեռելոտի եւ ոյք ուտեն զմիս զէնծոյ եւ արիւն խառն ընդ նմին, նզովեալ լիցին» (էջ 98բ, էջ 106ա)։ Մինչդեռ մի քանի ձեռագրերում այս հոդվածը մասամբ ընդարձակ է. «Բ. Որք ուտեն միս հեղձուցիկ կամ մեռելոտի, կամ զենածոյ եւ զարիւնն ընդ նմին, եւ կամ որք ուտեն միս առանց արեան եւ զոհելոյ եւ մեռելոտւոյ, եւ ամենայն երկիւղածութեամբ եւ հաւատովք և դատապարտեսցեն զայնպիսիսն վասն ուտելոյն, թէ որք ուտենն զրկին յարքայութենէն, նզովեալ լիցին» (№ № 648, էջ 18բ, հմմտ. նաև № № 649, էջ 39բ, 650, էջ 43բ, 651, էջ 31ա, 2964, էջ 56բ, 3369, էջ 48ա, 3562, էջ 289բ—290ա)։*

Հոդ. Գ, էջ 193 (հունՑ. հոդ. 3, էջ 489)։ *Հայերենի «իբրև իցեն տեարքն քրիստոնեայք և երկիւղածք» հատվածի դիմաց հունարենում կարդում ենք* τῷ ἑαυτοῦ δεσπότῃ ἐξυπηρετεῖσθαι *(իր տիրոջը ծառայել) բառերը։*

Այս հոդվածն ունի երկու խմբագրություն.

ա) № № 659, 657 ձեռագրերում, ուր Գ հոդվածը բաժանված է երկու մասի և ավելի ընդարձակ է՝ «Դ. Որ աստուածպաշտութեան կերպարանովք անհնազանդին տէրանց իւրոց իբրեւ այն թէ ծառայքն քրիստոնեայք եւ գտեարս արհամարհեն, նզովեսցին։ Ե. Եթէ տեարք քրիստոնեայք են, աղաւթականք, խոնարհք, մարդասէրք, հեզք, լուինք վասն Աստուծոյ եւ ծառայքն արհամարհեն, նզովեալ լիցին» (էջ 98բ—99ա, էջ 106ա)։

բ) Գ հոդվածի վերջին մասը ընդարձակ է մի քանի այլ ձեռագրերում. «Եւ երկիւղածք եւ խոնարհք, մարդասէրք եւ ծառայն արհամարհիցէ, նզովեալ լիցի» (№ 648, էջ 18բ, հմմտ.

Նաև №№ 649, էջ 39բ, 650, էջ 43բ, 651, էջ 31ա, 2964, էջ 56բ, 3369, էջ 48բ, 3362, էջ 290ա)։ Այս կերպարանափոխմանը հիմք է հանդիսացել հավանաբար մի երրորդ ձեռագիր, որը մեզ չի հասել կամ № 659 ձեռագիր խմբագրությունը. Թեև բոլոր դեպքերում էլ այս խմբագրությունները շատ են հեռացած հունարենից։

Հոդ. Դ, էջ 193 (հուն. հոդ. 4, էջ 489)։ *Հայերենն ունի փոքրիկ շեղում։ Հունարենի* διακρίνοιτο *բառը հայերենում դրված է «երկմտեն և խորշեն», Թերևս «և խորշեն»-ը ավելորդ է։ Իսկ* λειτουργήσαντος*-ը հայերենը չի պահել։ Ամբողջական առումով հայերենը ճիշտ է արտահայտում հունարենի միտքը։*

№ 649 ձեռագիրը սույն հոդվածը չունի։

Հոդ. Ե, էջ 194։ *№№ 659, 657 ձեռագրերում այս հոդվածը ընդարձակ է. «Է. Որք ուսուցանեն զաւրէնս և զկարգս տան Աստուծոյ եւ ոմանք արհամարհեն եւ անգոսնեն զժողովուրդն եւ զուսանելն, նզովեալ լիցին» (էջ 99ա, էջ 106ա)։*

Ինչպես այս, այնպես էլ Զ, Է հոդվածները №№ 648, 649, 650, 651, 2964, 3362 ձեռագրերը չունեն։

Հոդ. Զ, էջ 194։ *№№ 659, 657 ձեռագրերում այս հոդվածը վերաշարադրված է այսպես. «Ը. Թէ երէցն չիցէ ըստ կանոնաց եպիսկոպոսին եւ ժողովուրդն արհամարհիցէ զերէցն եւ արտաքոյ քան զեկեղեցին եւ քան զերէցն ժողովս առնիցեն եւ կամիցին զպէտս եկեղեցւոյ արտաքոյ վճարել, նզովեալ լիցին» (էջ 99ա, էջ 106ա)։*

Հոդ. Է, էջ 194 (հուն. հոդ. 7, էջ 490)։ *Հայերենի միայն «և չզործիցէ»-ն հունարենում չենք գտնում։ №№ 659, 657 ձեռագրերում այս հոդվածը համառոտ է և շեղվում է նաև հունարենից. «Թ. Որք զպտուղ եկեղեցւոյ արգելցեն եւ արտաքս քան զեկեղեցին տան առանց հրամանի երիցուն, այսպիսիքն նզովեալ լիցին» (էջ 99ա, էջ 106ա)։*

Հոդ. Ը, 194։ *Այս հոդվածը ևս ունի երկու խմբագրություն.*

ա) №№ 659, 657 ձեռագրերում եղածը. «Ժ. Որք զողանան ի պտղոյ եկեղեցւոյն առանց հրամանի եպիսկոպոսին եւ կամ որ կարգեալ իցէ ի տնտեսութեան եւ ոք առցէ իբրս եւ կամ այլում տացէ, եթէ ի կերակրոց եւ եթէ յայլմէ մտոց, եւ տալին եւ ընդունելին նզովեալ լիցի» (էջ 99ա, բ, էջ 106ա)։

բ) Մյուս ձեռագրերն ունեն. «Ը. Որ տացէ կամ առցէ զպտուղ եկեղեցւոյ կամ որք զողանան ի պտղոյ եկեղեցւոյն առանց հրամանի եպիսկոպոսին կամ որք կարգեալ են ի տնտեսութիւն, առցէ կամ այլում տացէ թէ ի կերակրոց կամ յայլ մտից, տալին եւ ընդունելինն, նզովեալ լիցին» (№ 648, էջ 19ա, համա. նաև №№ 649, էջ 39բ—40ա, 650, էջ 43բ, 651, էջ 31բ, 2964, էջ 57ա, 3369, էջ 48բ, 3362, էջ 290ա)։ Այս երկու խմբագրությունները էլ հունարենից բավական հեռացած են։

Հոդ. Թ, էջ 194։ *Մի քանի ձեռագրերում միայն վերջին մասն է ընդարձակ. «Եւ պարկեշտութեան կուսութեան որ ասէ. «Կուսանն զՏեառն հոգալ», այլ պիղծ համարի զամուսնութիւն, նզովեալ լիցին» (№ 651, էջ 31բ, համա. նաև №№ 649, էջ 40ա, 650, էջ 43բ, 3369, էջ 48բ, 3362, էջ 290ա—290բ), իսկ №№ 659, 657 ձեռագրերում այս հոդվածը ձևափոխված է. «ԺԱ. Որք կուսանան թէ պիղծ է ամուսնութիւն եւ ոչ վասն պարկեշտութեան եւ անսրաւսութեան (№ 657՝ անսրբութեան) բարւոյ ըստ առաքելոյ, որ ասէ թէ «Կուսան հոգայ զՏեառն, այլ որ պիղծ համարին զամուսնութիւն, նզովեալ լիցին» էջ 99բ, էջ 106ա)։*

Հոդ. Ժ, էջ 195 (հուն. հոդ. 10, էջ 490)։ *Հունարենը չունի միայն «զեր ի վերոյ են» և երկրորդ «և»-ը։*

Ահա №№ 659, 657 ձեռագրերի ունեցածը, «ԺԲ. Որք կուսանան վասն հաւատոյ (հուն.-ում՝ διὰ τὸν Κύριον*) եւ զանձինս զեր ի վերոյ ունին քան զամուսնացեալս, նզովեալ լիցին» (էջ 99բ, էջ 106բ)։*

Հոդ. ԺԱ, էջ 195 (հուն. հոդ. 11, էջ 490)։ *Հայերենի «հաւատարել և յանձն առնուլ»-ի դիմաց հունարենը ունի* κοινωνεῖν ταῖς κλήσεσι *(մասնակցություն ունենալ հրավերներին), իսկ հունարենի* διὰ τὸ ἐξευτελίζειν τὸ γινόμενον *(ցածր համարելով արվածը) հատվածը հայերենում դրված է «և արհամարհիցեն» ձևով։*

Այս հոդվածը №№ 659, 657 ձեռագրերում ունի ընդմիջարկություն, որը մի քանի այլ ձեռագրերում գտնում ենք հոդվածի վերջում. «ԺԳ. Որք ագապս առնեն հաւատով սրբութեամբ եւ կամ որք կատարեն զյիշատակս վկայից եւ կոչեն զեղբարս իւրեանց յագապսն կամ ի ժողովս վկայիցն, ըստ առաքելոյ, որ ասէ թէ. «Մի՛ թողուլ զժողովս միաբանութեան», որպէս սովոր են ոմանք եւ արհամարհէ ոք եւ ոչ երթան, նզովեալ լիցին» (էջ

59բ, էջ 100բ. հմմտ. №№ 648, էջ 19ա, 649, էջ 40ա. 650, էջ 44ա, 651, էջ 31բ, 2964, էջ 57բ, 3369, էջ 49ա, 3562. էջ 296բ)։

Հոդ. ԺԲ, էջ 195 (հուՆ. հոդ. 12, էջ 490): *Այս և հաջորդ մի քանի հոդվածներում հուն. στρατόν բառը թարգմանված է «պահս»։ «Պահ» իմաստով հունարենը ունի τῇ στρατείᾳ բառը՝ իմա՛ ժուժկալություն։ Հետևապես այս բնագրում στρατόν=պահս թարգմանությունը կամ անհաջող է, կամ դրա տակ պետք է հասկանալ «ճգնություն»։ Հունարեն բնագրի περιβόλαιον բառի դիմաց Լ. Խաչիկյանը դրել է «զարտուղն», փոխանակ «զտրտում» (տես «Փոքր Հայքի...», էջ 106) և տողատակ ավելացրել «կոպիտ վերարկու»։ Մեր ուսումնասիրած ձեռագրերից մեկը միայն՝ Ꝁ ունի «զարտում», բայց մենք չհամարձակվեցինք այդ բառը դնել Կանոնագրքում, որպես περιβόλαιον-ի իմաստն արտահայտող նորագյուտ մի բառ, քանի որ «զտրտում»-ը արտագրությունների հետևանքով շատ հեշտությամբ կարող էր դառնալ «զարտում», «ա» և «տ» տառերի շփոթման հետևանքով։ Հունարենում նշված բառը հայերենում ունենք ազատ թարգմանությամբ՝ «զտրտում և զտխուր հանդերձ», այսինքն սև վերարկու կամ թիկնոց իմաստով։*

Հունարենի վերջին καταψηφίσοιτο τῶν μετ' εὐλαβείας τοὺς βήρους φορούντων, καὶ τῇ ἄλλῃ κοινῇ καὶ ἐν συνηθείᾳ οὔσῃ ἐσθῆτι κεχρημένων *(ովքեր երկյուղածությամբ կրում են մետաքսյա զգեստ և գործածում են ընդհանուր և սովորական ընդունված զգեստը) հատվածը հայերենում արտահայտված է համառոտ՝ «ոյք ահիւ և երկիւղիւ... ագանին և զլսրովիցեն» հատվածով։*

Այս հոդվածն ընդհանուր առմամբ թարգմանված է ազատ։ ԺԲ և ԺԳ հոդվածները №№ 659, 657 ձեռագրերը չունեն։

Հոդ. ԺԳ, էջ 195 (հուՆ. հոդ. 13, էջ 491): *Հայերենի «կամ զկերպարան ինչ այնպիսի (իմա տղամարդու—Վ. Հ.) առացուէ» հատվածը հունարենում համառոտ է՝* ἀνδρεῖον ἀναλάβοι *(հագնում է տղամարդու ձևով)։*

Այս հոդվածը № 3369 ձեռագրում կրկնված է 49ա և 49բ էջերում, ԺԳ և ԺԸ համարների տակ։

Հոդ. ԺԴ, էջ 196 (հուՆ. հոդ. 14, էջ 491): *Հունարենի միտքը հայերենում արտահայտված է առաջին երկու տողում, մնացածը հուն.-ը չունի։*

Հոդ. ԺԵ, էջ 196. (հուՆ. հոդ. 15, էջ 491): *Հուն.-ը չունի «հարկանեն», «և սնդեանն մինչև ի կատարմանն հասակին» բառերը.*

Սակայն մի քանի ձեռագրերում այս հոդվածը այլ կերպ է շարադրված և հեռավոր նմանություն ունի հունարենի հետ. «ԺԵ. Հայր ոք կամ մայր եթէ ոչ խրատեսցեն զորդիս իւրեանց եւ զգաստերս իմաստութեամբ եւ երկիւղիւ Տեառն, այլ հաբեւթող առնիցէ կամ վասն սիրոյ կամ վասն ատելոյ, կամ գի ի հաւատին չկացեալ իցէ, որպէս առաքեալ ասէ, թէ «Մանկունս սնուցեալ իցէ եւ Նոքա անտես առնեն», այնպիսիքն նզովեալ լիցին» (№ 659, էջ 100ա, հմմտ. Նաև №№ 648, էջ 19բ, 649, էջ 40բ, 650, էջ 44բ, 651, էջ 32ա, 657, էջ 106բ, 2964, էջ 58ա, 3369, էջ 49բ, 3562, էջ 291ա)։

Հոդ. ԺԶ, էջ 196—197 (հուՆ. հոդ. 16, էջ 491): *Հայերենն ընդարձակ է. «և առաքինի ի կարգս Աստուծոյ», «և արհամարհիցէ և ոչ զարժանն», «մեծ և ահաւոր թուեսցի» հատվածները հուն.-ը չունի։*

Մինչդեռ № 659 և մյուս ձեռագրերում տարբերությունը շատ մեծ է. «ԺԶ. Թէ հաւրն վարժեալ իցէ եւ խրատեալ եւ Նոքա գհարսն ի պատուի չունին եւ ըստ հրամանի ծնաւղին ոչ գնան, եւ զարժանաւորն պատիւ ծնաւղացն ոչ հատուցէ եւ ծնաւղքն հաւատացեալք եւս են, Նզովեալ լիցին, բայց հարքն մի՛ զայրացուսցեն վայրապար զորդիս» էջ 160ա, հմմտ. Նաև №№ 648, էջ 19բ, 649, էջ 40բ, 650, էջ 44բ, 651, էջ 32ա, 657, էջ 106բ, 2964, էջ 58ա, բ, 3369, էջ 56ա, 3562, էջ 291ա)։

Հոդ. ԺԷ, էջ 197: *Այս հոդվածը № 659 ձեռագրում պահվել է այսպես. «ԺԷ. Կանայք որ փոքրեն զվարս գլխոյ իւրեանց, որպէս թէ ի հաւատս (հուն.* ἄστρατον *բառի փոխարեն) կայցեալ իցէ եւ այնու աւրինակաւ ազաւթական կամին լինել, անարգեաց Նա զկանոն առաքելական, որ ասէ. «կինմարդ մի՛ գերձցի եւ Նա ընդ ոտն եհար զհրաման», Նզովեալ լիցի» (էջ 100բ, հմմտ։ № 657, էջ 106բ)։ Մինչդեռ մի քանի այլ ձեռագրերում սկիզբը համապատասխանում է Կանոնագրքի ունեցածին, իսկ վերջին մասը ընդարձակ է. «իբրեւ թէ ոտն եհար եւ արհամարհեաց զհնազանդութիւնն եւ անարգեաց զկանոն առաքելական՝ եթէ «կինմարդ մի՛ գերծցի եւ Նա ընդ ոտն եհար զհրամանն», Նզովեալ լիցի» (№ 648, էջ*

19բ, հմմտ. նաև № № 649, էջ 40բ, 650, էջ 44բ, 651, էջ 32ա, 2964, էջ 58բ, 3369, էջ 50ա, 3562, էջ 291ա)։

Հոդ. ԺԸ, էջ 197 (հուն. հոդ. 18, էջ 491). Հայերենն ընդարձակ է, այստեղ ավելի է «և ի պահոց... մեծ ժողովն» հատվածը։ Սակայն № 659 և 648 ձեռագրերի խմբի նույն հոդվածը չափազանց ընդարձակ է. ահա վերջինս այդ ձեռագրերում. ա) «ԺԸ. Որք արհամարհեն եւ ընդոտնեն զհրամանս եւ զսահման Արարչին զկանոնս Նախնականս զկիրակէ, քանզի ի հանդիստ եւ յուրախութիւն վասն մարդասիրութեան իւրոյ տուեալ է որդւոց մարդկան, եւ նոքա ի պահս արկանեն եւ ի տրտմութիւն եւ ի գործ իբրեւ զայլ աւուրս, քանզի զվեց աւուրս զգործեալ զմեղսն՝ պահելով զպատուիրանսն եւ աղաւթիցն պարապելով ջնջեսցես ի բաց զմեղսն. ապա եթէ ի գործ արկցես ի պահս եւ ի տրամութիւն՝ ոչ գտցես հանգիստ յարքայութեանն Աստուծոյ, եւ մեծ ժողովն Նիկիայ նզովէ եւ արտաքս մերժէ» (№ № 659, էջ 100բ, 657, էջ 106բ—107ա)։ բ) «ԺԸ. Որք անարգեն եւ ընդոտնեն զհրամանս Արարչին զկանոն Նախնականս, քանզի ի հանգիստ եւ յուրախութիւն ետ վասն մարդասիրութեան իւրոյ որդւոց մարդկան զմեծ աւր կիւրակէի. եւ նոքա ի պահս արկանեն եւ ի տրտմութիւն եւ ի գործ, որպէս զայլ աւուրս, քանզի զայլ աւուրց զմեղս գործեալս պահելով զկիւրակէն եւ աղօթից պարապելով ջնջեսցին մեղքն։ Ապա թէ ի գործ արկցես ի պահս եւ ի տրտմութիւն՝ ոչ գտցես հանգիստ յարքայութեանն Աստուծոյ. եւ մեծ ժողովն նզովէ եւ արտաքս հանէ, զի են ոմանք որ յաւուր կիւրակէի ծունր դնեն եւ կամ յաւուրս Պենտէկոստէիցն. կամ եղեւ զի ամենապէս ամենայն իշխանութեան միաբան արժան է զկարգ, զոր ինչ եղ սուրբ ժողովն պահել, զի յոտն կալով մատուսցեն զաղօթս Տեառն ամենայնի» (№ 648, էջ 19բ,—20ա, հմմտ. նաև № № 649, էջ 40բ—41ա, 650, էջ 44բ—45ա, 651, էջ 32ա, բ, 2964, էջ 58բ, 3369, էջ 50ա, 3562, էջ 291ա, բ)։

Հոդ. ԺԹ, էջ 197—198 (հուն հոդ. 19, էջ 491—492). Հայերենը մի փոքր ընդարձակ է. «այսինքն է ցաւոց և վշտաց ամբարհաւաճեաց եւ», «և զկարդեալ», «և արհամարհեաց», «և խորհուրդք» հատվածները և բառերը հուն.-ը չունի, թեև ճիշտ է արտահայտում հունարենի միտքը։ Այս հոդվածը՝ մի քանի ձեռագրերում, այլ խմբագրություններ ունի՝ ա) «ԺԹ. Եթէ վարդապետ պահս քարոզեսցէ ժողովրդեանն եւ ոչ ոք իցէ հիւանդ եւ ախտաժէտ, այլ առողջ մարմնով եւ կատարեալ մտաւք, եւ ամբարտաւանել ընդ ոտն հարկանիցէ զպահսն եւ անարգիցէ զհրամանս քարոզին՝ նզովեսցէ զնոսա սուրբ ժողովն» (№ № 659, էջ 100բ—101ա, 657, էջ 107ա)։ բ) «ԺԹ. Եթէ վարդապետն պահս քարոզեսցէ ժողովրդեան եւ ոչ ոք իցէ հիւանդ, այլ առողջ մարմնով եւ կատարեալ հասակաւ, եւ ամբարտաւանեալ ընդ ոտն հարկանիցէ զպահսն եւ անարգեաց զհրաման քահանային իբրեւ կրեսցին ի նմա կատարեալ միտք եւ խորհուրդք՝ նզովեալ լիցի» (№ 648, էջ 20ա, հմմտ. նաև № № 649, էջ 41ա, 651, էջ 32բ, 2964, էջ 59ա, 3369, էջ 50ա, 3562, էջ 291բ)։

№ 650 ձեռագիրը չունի ԺԹ և Ի հոդվածները։

Հոդ. Ի, էջ 198։ Միայն № № 659, 657 ձեռագրերում այս հոդվածին նախորդում է մի ընդարձակ հատված. «Ի. Զոր ոչ մարդ ոք այլ Հոգին սուրբ բերանով մարգարէին, թէ «սրբեցէք պահս, քարոզեցէք պաղատանս եւ վայ կարդացէք անձանց»։ Եւ արդ եթէ ոք գացի ի մարդկանէ, որ զայս հրամանս ստունգանիցէ, քանզի ետ արարիչն Յիսուս Է աւր ուրախանալ ի փառս Աստուծոյ, եւ զայս Խ աւր եկեալ զայսչափ աւուրց զգործեալ զմեղսն ի բաց լուալ, զոր ասեն. «Լուացարուք, սրբեցարուք, ընկեցէք զչարիս ձեր յանձանց. ոչ եթէ ես կարաւտ ինչ եմ ձեր պահաւք կամ պիտոյ ինչ է ինձ, այլ զձեր զաւգուան խորհիմ, զի դուք նորափետուր զարդարիցիք յարքայութեան իմում»։ Արդ եթէ ոք ի մարդկանէ կատարեալ հասակաւ եւ ողջ մարմնով քրիստոնէ անուն ի վերայ եւ Խ աւր զպահսն ի գլուխ ոչ աարցի, նզովեալ լիցին ի սուրբ ժողովոյն» (№ 659, էջ 101ա, բ, 657, էջ 107ա)։

Այս ինչպես և ԻԱ, ԻԳ, ԻԴ հոդվածները հունարենը չունի, սրանք հավանաբար կազմվել և մուծվել են կանոնագրքում հետագայում։ № 649 ձեռագիրը ևս չունի ԻԱ, ԻԲ հոդվածները։

Հոդ. ԻԲ, էջ 198 (հուն. հոդ. 20, էջ 492)։ „Ει τις αἰτιῶτο υπερηφανω διαθεσει κεχρημένος, και βδελυσσομενος τας συναξεις των μαρτύρων, ή τας εν αυτοῖς γινομενας λειτουργίας, και τας μνήμας αυτῶν, αναθεμα εστω".

Այս հոդվածը հունարենում դրված է 20-րդ համարի տակ և դրանով էլ ավարտվում է հունարեն բնագիրը։ Հոդվածի հայերեն բնագիրը մասամբ ընդարձակ է և այլափոխված։

№ 659 և սրան հարող ձեռագրերում ԻԲ և ԻԳ հոդվածները միացված են նշված որ-

պես մի հոդված (№ № 659, էջ 101բ, 648, էջ 20բ, 650, էջ 45բ, 651, էջ 32բ, 657, 107ա, բ, 2964, էջ 59բ, 3369 էջ 50բ, 3562, էջ 292ա)։

Հոդ. ԻԴ, էջ 198: *Մի քանի ձեռագրեր մինչև հոդվածի սկսվելը ունեն վերնագիր՝ «Վասն սպասաւորաց եւ պաշտօնէից սրբոյ եկեղեցւոյ» (№ № 648, էջ 20բ, 650, էջ 45բ, 651, էջ 33ա, 2964, էջ 59բ, 3369 էջ 50բ, 3562, էջ 292ա), այնուհետև ԻԴ հոդվածը։*

Վերջաբան, էջ 199—201 (հուն. էջ 492): *Հունարենում՝ Պիտրայի և Հաուխերտի մոտ ինչպես և Σύνταγμα-ում վերջաբանը դրված է որպես 21-րդ հոդված։ Կանոնագրքում եղած վերջաբանը համապատասխանում է հունարենին, միայն թե հայերենում, սկսած 291-րդ էջի 5-րդ տողի «Զայս կանոնս» հատվածից մինչև վերջաբանի ավարտը հունարենում չկա, այդ, թերևս, հետագայի ավելացում է։ Հնարավոր է սակայն, որ հայերենի թարգմանության համար հիմք հանդիսացող հունարեն բնագիրն այս հատվածը ունեցել է։ № № 659, 657 ձեռագրերը չունեն վերջաբանի սկզբից մինչև 291-րդ էջի 5-րդ տողի «զի կատարեսցի» բառերը, իսկ այնուհետև ունեն վերջին փոքր մասը (էջ 102ա, բ, 107բ)։ Մյուս ձեռագրերն ունեն վերջաբանի ավելի փոքր մասը՝ 201-րդ էջի ութերորդ տողի «Քանզի են ոմանք» բառերից մինչև վերջ (№ № 648, էջ 20բ, 650, էջ 45բ, 651, էջ 33ա, 2964, էջ 69ա, 3369, էջ 51ա, 3562, էջ 292բ)։*

ԱՆՏԻՈՔԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 202: Մի քանի ձեռագրերում այս վերնագիրը չունի առանձին տարբերություն, սակայն տարբեր է նշված հոդվածների քանակը՝ ԻԳ (23) (№ № 648, էջ 20բ, 649, էջ 42ա, 650, էջ 46ա, 651, էջ 33ա, 2964, էջ 60ա, 3562, էջ 292բ)։

Ցանկ, էջ 202—204: Վերևում նշված, ինչպես նաև № 3369, ձեռագրերում չի պահվել ցանկը։ t ձեռագրում Ժ հոդվածի վերնագիրը ցանկում գրված է Ե և Զ հոդվածի վերնագրերի միջև։

Ի դեպ այս ցանկը t ձեռագրում մի փոքր խանգարված է. այդ նկատելով՝ ձեռագրի 103բ և 104ա էջերի միջև ամրացված փոքրիկ թղթի վրա գրիչը գրել է. «Այս գլխոյս (իմա Անտիոքի ժողովի հոդվածների ցանկը—Վ. Հ.) գհամար տանց գլխոցն լաւ որոնելով քննեա՛, զի ծուռն և սխալն բազում է»։

Երկրորդ վերնագիր, էջ 204: Վերևում նշված ձեռագրերը չունեն այս վերնագիրը։

Առաջաբան էջ 204 (հուն., էջ 455): Հունարենը (միայն Պիտրայի մոտ) ևս ունի առաջաբան, որը սակայն ընդարձակ է։ Հայերեն և հունարեն առաջաբանները բոլորովին տարբեր բնագրեր են։

Կանոնագրքում եղած այս առաջաբանը մի քանի ձեռագրերում վերջից շարունակվում է. «Վասն որոյ ժողովեալ յԱնդիոք եպիսկոպոսք ԼԱ յիշխանութենէ հովուաց Ասորւոց, ի Փիւնիկեցւոց, ի Նախնեաց, յԱրաբացւոց, ի Միջագետաց, ի Կիւլիկեցւոց, ի Սուրեցւոց սահմանեցին ԻԳ բան» (№ 648, էջ 21ա. տես նաև № № 649, էջ 42ա, 650, էջ 46ա, 651, էջ 33ա, 2964, էջ 60ա, 3562, էջ 292բ)։ № 3369 ձեռագրում այդ մասը նույնությամբ գտնում ենք, սակայն այստեղ վերոբերյալ հատվածի վերջին «ԻԳ բան» բառերի փոխարեն կարդում ենք. «Զայս մի մաս կանոնքս» (էջ 57բ). դրանով իսկ, հավանաբար, այս տողերի հեղինակը հասկացնել է տալիս, որ № 3369 ձեռագրում Անտիոքի ժողովի կանոնախումբը չի բերվում լրիվ, այլ որոշ հոդվածներ համառոտելով, որոշ հոդվածներ էլ բաց թողնելով։ Առաջաբանի՝ վերևում նշված շարունակությունը սերտ աղերս ունի առաջաբանի հունարեն բնագրի հետ. այստեղից էլ ենթադրում ենք, որ այս կանոնախմբի սկզբնական թարգմանության ժամանակ հոդվածների հետ թարգմանված է եղել նաև առաջաբանը, իսկ երբ Հովհաննես Օձնեցին կազմել է իր ժողովածուն, դուրս է նետել այդ առաջաբանը՝ փոխարեն մի համառոտը գրելով, որին և կցել է հոդվածները։ № 648-ի խմբին պատկանող ձեռագրերում եղած առաջաբանը, որ բերեցինք. վերևում, մեր կարծիքով բաղկացած է երկու մասից. նախ՝ Հովհաննես Օձնեցու գրածից, երկրորդ՝ հունարեն առաջաբանի հայ թարգմանությունից վերցված որոշ տեղեկություններից։

Հոդ. Ա, էջ 205—206 (հուն. հոդ. 1, էջ 456): Հայերենը հունարենի բառացի թարգմանությունն է, եթե նկատի չունենանք հետևյալ երեք փոքրիկ տարբերությունները. ա) հունարենը չունի հայերենի «եւ զառաքելոցն իբրեւ» հատվածը, բ) հայերենի «կապել» բառի փոխարեն հունարենն ունի πάσχα ἀκοινωνήτους (զատկի հաղորդություն չտալ)։ Այս հատվածը պետք է լիներ այսպես. «Վասն ամենասուրբ տաւնից փրկութեան զատկի հաղորդութիւն չտալ (կամ անմասն առնել հաղորդութեան) եւ մերժել յեկեղեցւոյ»։ գ) հայերենն ունի «եւ ընդ հրէայս կատարեսցէ զտաւնս», իսկ հունարենը՝ καὶ μετὰ τῶν Ἰουδαίων ἐπιτελεῖν τὸ πάσχα։ Զատիկը՝ τὸ πάσχα արտահայտված է «տաւն» բառով։

Մի քանի ձեռագրերում այս հոդվածը խիստ համառոտ է. «Ա. Ամենայն ոք որ եւ իցէ որ համարձակեսցի եւ լուծցէ զսահմանս սուրբ ժողովին Նիկիա որ յաղագս ամենասուրբ տօնից (№ 3369՝ տառից) փրկութեան՝ այսպիսին հատցի եւ որոշեսցի ի պաշտամանէն» (№ 648, էջ 21ա. տես նաև № № 649, էջ 42ա, 650, էջ 46ա, 051, էջ 33բ, 2964, էջ 60բ, 3369, էջ 57բ—58ա, 3562, էջ 292բ)։

Հոդ. Բ. էջ 206—207 (հուն. հոդ. 2, էջ 456—457): Բացառությամբ հետևյալ մի քանի շեղումների, մնացածը հունարենի բառացի թարգմանությունն է. հունարենը չունի «ընդ ոտն հարկանիցեն եւ հեռանայցեն» և «ի ժողով կամ յիշխանութիւն» հատվածները, իսկ հունարենի μή ἐξεῖναι δὲ κοινωνεῖν τοῖς ἀκοινωνήτοις (նույնպես պետք չէ թույլատրել հաղորդակցություն (շփում) ունենալ չհաղորդվածների հետ) հատվածի փոխարեն հայերենն ունի «իբրեւ ոչ իցէ նոցա մարթ հաւասարել այնոցիկ որ ագատեալ են ի կապանաց եկեղեցւոյ եւ որ ընդ եկեղեցեաւն իցեն»:

№ № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերը չունեն Բ, Գ, Դ, Ե հոդվածները:

Հոդ. Դ, էջ 207—208 (հուն. հոդ. 3, էջ 457): Հունարենը չունի «եւ զբնակութիւնն» բառերը, մնացածը հունարենի բառացի թարգմանությունն է:

Հոդ. Ե, էջ 209 (հուն. հոդ. 5, էջ 458): Հայերեն բնագրից եթե հանելու լինենք որոշ բառեր, որ, ըստ երեւույթին թարգմանիչն է ավելացրել հունարենի միտքը պարզ արտահայտելու համար, օրինակ, «զհրաման իբրեւ», «կամ ժողովեսցին», «եւ ընդդէմ եղեն եւ անարգեցին», «զբանս նորա յանձն առնուլ եւ», «եւ ի գաւրութենէ ուստեք», «եւ սանձարեկ առնել արժան է», ապա մնացածը բառացի համապատասխանում է հունարենին:

Հոդ. Զ, էջ 209—210 (հուն. հոդ. 6, էջ 458): Բացառությամբ մի երկու բառի, օրինակ՝ «եպիսկոպոսաց», «կամ պատուհասի», որ հունարենը չունի, իսկ «եւ ապաշխարիցէ առաջի նոցա» հատվածը, որ գրված է հունարենի ἀπαντήσας ἀπολογήσεται (ներկայացնելով արդարացում) բառերի փոխարեն, մնացածը բառացի հունարենի թարգմանությունն է:

Հոդ. Է, էջ 210 (հուն. հոդ. 7, էջ 458): „Μηδένα ἄνευ εἰρηνικῶν δέχεσθαι τῶν ξένων".

Ինչպես տեսնում ենք հայերենը մի փոքր ընդարձակ է: Հայերենը չունի τῶν ξένων (օտարականներից), իսկ հուն.-ը՝ «յեպիսկոպոսէն յեպիսկոպոս» բառերը:

Հոդ. Ը, էջ 210 (հուն. հոդ. 8, էջ 458—459): Հայերենում երկու հատված ավելի է՝ «կամ ի քաղաքի», «որպիսիս էր ապաստան համարձակիցին և տայցեն»: Հուն.-ի ἀνεπιλήπτους (անբասիր, անպարսավ)-ի դիմաց գրված է «ուծեալ»: № № 648, 649, 650, 651, 2964, 3564 ձեռագրերում չեն պահվել Ը և Թ հոդվածները:

Հոդ. Թ, էջ 210—211 (հուն. հոդ. 9, էջ 459): Հունարենի միտքը հայերենում լրիվ արտահայտված է, միայն թե մի երկու տեղ նախադասությունները ետևառաջություն ունեն: Հունարենի διὰ τὸ ἐν τῇ μητροπόλει πανταχόθεν συντρέχειν πάντας τοὺς τὰ πράγματα ἔχοντας հատվածի դիմաց, թեև ոչ բառացի, հայերենն ունի «և ամենայն ոք զինչ և պատասխանի կամի առնել, առ նա ընթանայ». և այնուհետև թվում է, թե ինչ գործերի համար պետք է գնալ՝ «թէ մուրհակ արքունի և իշխանաց, վասն իրաց եկեղեցւոյ և կարգաց հասարակաց»: Այս հատվածը հուն.-ը չունի:

Հոդ. Ժ, էջ 211—212 (հուն. հոդ. 10, էջ 459—460): Բացի հայերենի «զոր արժանի համարեսցի» հատվածից, որ հունարենը չունի և «մեծ» բառից, որը հունարենում արտահայտված է ἁγία (սուրբ) բառով, մնացածը բառացի համապատասխանում է հունարենին:

Մի քանի ձեռագրերում այս հոդվածը բավական համառոտ է. «Ժ. Որ ի գիւղս կամ ի գաւառս իցեն, այսինքն քորեպիսկոպոսք, արասցեն դպրակարդացս և կէսսարկաւագաց եւ կշտամբիչս եւ սմին իրաց շատ լիցին առ ի մերձեցուցանել եւ յառաջ ածել յայսպիսի աստիճան, այլ ոչ եւս երէց կամ սարգաւակ ածանել: Ապա թէ համարձակեսցի ոք՝ անկցի ի պատուէն զոր յառաջն ունէր» (№ 648, էջ 21ա, բ, հմմտ. № № 649, էջ 42բ, 650, էջ 46բ, 651, էջ 33բ, 2964, էջ 61ա, բ, 3562, էջ 293ա): № 3369 ձեռագրում «քորեպիսկոպոսք»-ի փոխարեն գրված է «եպիսկոպոսք» (էջ 60բ):

Հոդ. ԺԱ, էջ 212—213 (հուն. հոդ. 11, էջ 460): Հուն.-ը չունի հայերենի միայն «կամ սարկաւագ» բառերը, մնացածը համապատասխանում է միմյանց:

Հոդ. ԺԲ, էջ 213 (հուն. հոդ. 12, էջ 460): „Εἴ τις ὑπὸ τοῦ ἰδίου ἐπισκόπου καθαιρεθεὶς πρεσβύτερος, ἢ διάκονος ἢ καὶ ἐπίσκοπος ὑπὸ συνόδου, ἐνοχλῆσαι τολμήσειε τὰς βασιλέως ἀκοάς, δέον ἐπὶ μείζονα ἐπισκόπων σύνοδον τρέπεσθαι, καὶ ἃ νομίζει δίκαια ἔχειν, προσαναφέρειν πλείοσιν ἐπισκόποις, καὶ τὴν παρ᾽ (m. L., չիք παρ') αὐτῶν ἐξέτασίν τε καὶ ἐπίκρισιν ἐκδέχεσθαι· ὁ (m. L., ει) δὲ τούτων ὀλιγωρήσας, ἐνοχλήσειεν τῷ βασιλεῖ καὶ τοῦτον μηδὲ μιᾶς συγγνώμης ἀξιοῦσθαι, μηδὲ χώραν ἀπολογίας ἔχειν, μηδὲ ἐλπίδα μελλούσης (m. L., չիք μελλούσης) ἀποκαταστάσεως προσδοκᾶν".

Հայերենը ուղղակի թարգմանություն չէ, թեև ճիշտ է արտահայտում հուն.-ի միտքը: Հուն.-ի ἢ καὶ ἐπίσκοπος ὑπὸ συνόδου հատվածը Կանոնագիրքը չունի:

Հոդ. ԺԳ, էջ 213—214 (հուն. հոդ. 13, էջ 461): Բացի հայերենի «կամ համարձակեսցի» բառերից, որ հուն.-ը չունի, մնացածը համապատասխանում է հունարենին:

Հոդ. ԺԴ, էջ 214—215 (հուն. հոդ. 14, էջ 461): Մի քանի ձեռագրերում հոդվածը վերջից շարունակվում է. «անդի են եւ մայրաքաղաքաց եպիսկոպոսն յիւրում աթենին լուծցէ զկարծիս խարդախութեանն» (№ № 648, էջ 22բ, 649, էջ 43բ, 656, էջ 48բ, 631, էջ 34բ, 2964, էջ 63ա, 3369, էջ 59ա, 3562, էջ 294բ)։

Հոդ. ԺԵ, էջ 215 (հուն. հոդ. 15, էջ 461): Բացառությամբ հայերենի երկու հատվածների՝ «և չարախաւսիցի», «կամ իրաւ ոք իշխեսցէ առնել այնպիսւոյն», որ հունարենը չունի, մնացածը համապատասխանում է հունարենին։

Մի քանի ձեռագրերում բնագրի «այսպիսին մի» բառերի միջև գտնում ենք հետևյալ հատվածը. «արտաքս ընկեսցի, զի ոչ յերկիր եւ ոչ յաղբէ պիտանացու ըստ բանին տեառն եւ» (№ № 648, էջ 22բ, 649, էջ 43բ, 650, էջ 48բ, 651, էջ 34ո, 2964, էջ 63բ, 3369, էջ 59բ, 3562, էջ 294բ)։

Հոդ. ԺԶ, էջ 215—216 (հուն. հոդ. 16, էջ 462). Հայերենն ունի աննշան մի երկու շեղում. օրինակ՝ հունարենի τὸν θρόνον (գահ, աթոռ) բառը հայերենում դրված է «դասհմանն», կամ հուն. τελείας (կատարյալ)՝ հայերենում «բազում»։ Իսկ հոդվածի վերջին «կատարեալ ևս ժողով լիցի՝ իբրեւ չիցէ նա ընդդէմ մաւր քաղաքաց եպիսկոպոսին» մասը հունարենում այսպես է. τελείαν δε εκείνην εἶναι σύνοδον ᾗ συμπάρεστι καὶ ὁ τῆς μητροπόλεως (կատարյալ ժողով է այն, որին ուրիշների հետ մասնակցում է և մետրոպոլիտը)․ № № 648, 649, 656, 651, 2964, 3592 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։

Հոդ. ԺԸ, էջ 216—217 (հուն. հոդ. 18, էջ 462): Հունարենը չունի «և ոչ հեռանալ» հատվածը։ Հունարենի εἰς παροικίαν μὴ ἀπέλθοι εἰς ἣν ἐχειροτονήθη հատվածը դրված է «ի գաւառ ուրեք և յիշխանութիւն իւր չեղև երթալ» ձևով, իսկ վերջին ὃ ἂν ἡ τῆς ἐπαρχίας τελεία σύνοδος κρίνασα τὸ παριστάμενον ὁρίσῃ հատվածը՝ «մինչև իշխանութեանն կատարեալ ժողով ժողովեսցի իրաւունս առնել և ի վեր բառնալ զինչ արժանն իցէ որոշել, սահմանել, կարգել վասն նորա»։

Հոդ. ԺԹ, էջ 217—218 (հուն. հոդ. 19, էջ 462—463): Բացառությամբ հայերենի «ի տեղւոջ իւրում յոր տեղի ււծաւն», «որ արտաքոյ», «եւ անհաստատ», «ամենայն իմաստութեամբ եւ երկիւղածութեամբ» հատվածների, որ հունարենը չունի, մնացածը նույնությամբ գտնում է հունարենի հետ։

№ № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չեն պահվել ԺԹ, Ի, ԻԱ հոդվածները։ Ե ձեռագրում այս և հաջորդ հոդվածները միացված են միմյանց։

Հոդ. Ի, էջ 218—219 (հուն. հոդ. 20, էջ 463): Հայերենը հոդվածի միջին մասում մի փոքր շեղում ունի. այստեղ գրված է. «մին յերրորդ շաբաթու տաւնից Զատկին», մինչդեռ հունարենն ունի μὲν μετὰ τὴν τρίτην ἑβδομάδα τῆς ἑορτῆς τοῦ Πάσχα. Հայերենում չի պահվել «հետո» (μετά)։ Այնուհետև, հուն.-ի ὥστε τῇ τετάρτῃ ἑβδομάδι τῆς πεντηκοστῆς ἐπιτελεῖσθαι τὴν σύνοδον, ὑπομιμνήσκοντος τοὺς ἐπαρχιώτας τοῦ ἐν τῇ μητροπόλει հատվածի դիմաց հայերենն ունի «իբրև կատարիցի ի չորրորդումն շաբաթու Պենտակոստէին, ժողովին առ ի յիշատակել ժողովոյն զիրս իշխանութեաննն»։ Մի փոքր տարբեր է երկրորդ ժողովի ամսաթիվը։ Հայերենում նշված է «և զերկրորդ անգամ՝ ժողով լինել յելս հոկտեմբերի, որ է Ժ-րդ հոռոմի ամսոյ», իսկ հուն.-ում՝ τὴν δὲ δευτέραν σύνοδον γίνεσθαι ἰδοῖς Ὀκτωβρίοις, ἥτις ἐστὶ δεκάτη ὑπερβερεταίου. Հուն.-ում նշված է հոկտեմբերի 15-ը, որ է հյուպերբերետայի 10-ը, մինչդեռ հայերենում նշված է «յելս հոկտեմբերի, որ է Ժ-րդ հոռոմի ամսոյ»։

Տարին երկու ժողով լինելու մասին տե՛ս նաև Կղեմեսի ԼԵ և Նիկիայի Ե հոդվածները և համապատասխան ծանոթագրությունները (էջ 553, 563)։ Տարբեր է նաև վերջին մասը. հմմտ. ἄνευ τῶν πεπιστευμένων τὰς μητροπόλεις և «առանց կամաց և հաւանութեան որ իցէ մաւր քաղաքաց եպիսկոպոսն»։ Հունարենը չունի «և մերձեսցին», «և ճաշակել» «զանձինս իւրեանց» բառերը։ Մնացածը համապատասխանում է հունարենին։

Հոդ. ԻԱ. էջ 219 (հուն. հոդ. 21, էջ 463—464): Եթե նկատի չունենանք հայերենի «և ււծաւ», «կամակարել ուրեք յեկեղեցւոյ» հատվածները, որ հուն.-ը չունի, մնացածը համապատասխանում է հունարենին։

Հունարենի 22-րդ հոդվածը (էջ 464), որը վերաբերում է եպիսկոպոսներին, որոնց արգելում է օտար թեմում ձեռնադրություն կատարել, կանոնագրքում չի պահվել։

Հոդ. ԻԲ, էջ 219—220 (հուն. հոդ. 23. էջ 464): Մի քանի ձեռագրերում այս հոդվածի երկրորդ մասը տարբեր է և ընդարձակ՝ կանոնագրքի ունեցածից, ուստի այն բերում ենք ամբողջությամբ. «Ի. Եթէ եպիսկոպոսի չէ արժան զոք փոխանակ իւր նստուցանել, եթէ ահա մերձեալ իցէ ի մահ։ Եթէ այսպիսի ինչ լինիցի, անհաստատ լիցի հաստատու-

թիւնն այն, այլ պահել արժան է զդիրս եկեղեցւոյն եւ ոչ վրիպանաւ զինչսն ատտիճանել, բայց եթէ հանդերձ այլոց եպիսկոպոսօք եւ նոցին ընտրութեամբ յետ հանգստեան եպիսկոպոսին զարժանաւոր ընտրել առաջնորդեսցեն, զի մի յանդիտութենէ եւ անընտրողութենէ բարոյ եւ չարի տղէտ հովուին մտցէ ի հօտն ապականիչք գազանն վտարեսցէ զզաւինս աջակողմանն չարափառ հաւատով կամ զզտանելի գործով կամ աղանդախումբ մոլորութեամբ կախարդս արանց առ աչօք ցնորից թովչացն, դիւացն, գեղահատուացն, ձեռնածուացն, աճպարարացն, յուռթիցն, դիտացն, հմայիցն, հատահարցն, գրաբարացն, յորս եմուտ ուխտի մանկունս: Բանզի եւ լսեմք իսկ եթէ քահանայք ի կողմանս կողմանս լքեալ եւ անարգեալ զաստուածապատիւ իշխանութիւնն իւրեանց զիր առնելով եւ պահպանակս հմայկանս առ ի բժշկութիւնս պղծեն, զժողովուրդս իւրեանց զիւաց նվիրեն: Վասն այսորիկ պարտ է եպիսկոպոսացն ամենահաս մտաւորութեամբ զգուշանալ հաւասիս իւրեանց, զի ընդունիցին զանթառամ փառաց պսակն պահելով զժողովուրդս իւրեանց ի մեքենագործ խորամանկութեանց սատանայի, այս անցնեցաւ ամենայն եպիսկոպոսաց ի ձեռն սուրբ եւ մեծ ժողովոյն» (№ 3369, էջ 62ա, համտ. №№ 648, էջ 23ա, բ, 649, էջ 44—45ա, 650, էջ 49ա, բ, 651, էջ 35ա, բ, 2964, էջ 65ա, 3562, էջ 295ա, բ):

Հոդ. ԻԳ, էջ 220—221 (հուն. հոդ. 24, էջ 464—465). *Հայերենի «ընիկ սեպհականէ», «և տնհեա լինիցին» բառերը հուն.-ը չունի: Կան նաև շեղումներ, օրինակ հուն.* καλῶς*-ը թարգմանված է «արժան», մինչդեռ համար է «բարի» կամ «արդարացի» բառը: Հուն.-ի* καὶ ἀγαθῆς συνειδήσεως καὶ πίστεως τῆς εἰς τὸν πάντων ἔφορον καὶ κριτὴν Θ-ον *հատվածը հայերենում դրված է բավական համառոտ՝ «այց առնելով բարւոք և հաւատովք յԱստուած»: Հուն.-ի վերջին* τὰ μὲν τοι τῆς ἐκκλησίας αὐτῇ φυλάττεσθαι· καὶ μήτε τὴν ἐκκλησίαν ὑπομένειν (տ. Συν., III, ὑπομένειν τινὰ) ζημίαν, μήτε τὸν ἐπίσκοπον προφάσει τῆς ἐκκλησίας δημεύεσθαι, ἢ καὶ εἰς πράγματα ἐμπίπτειν τοὺς αὐτῷ διαφέροντας, μετὰ τοῦ καὶ αὐτὸν μετὰ θάνατον δυσφημίᾳ περιβάλλεσθαι *ընդարձակ հատվածը հայերենում գտնում ենք «կամեսցի և մի եպիսկոպոսն ի պատճառս եկեղեցւոյն . . . զարովեսցի և հայհոյեսցի» ձևով, ուր* τὰ μὲν τοι τῆς ἐκκλησίας . . . ὑπομένειν ζημίαν *հատվածը հայերենը չունի, իսկ մնացած մասը հայերենում համառոտ է:*

№№ 648, 649, 650, 651, 2964, 3502 ձեռագրերում ԻԳ, ԻԴ, ԻԵ հոդվածները չեն պահվել:

Հոդ. ԻԴ, էջ 221—223 (հուն. հոդ. էջ 25, էջ 465—466): *Եթե նկատի չունենանք հայերենի «եւ ի հանգիստ», «ձեռնամուխ առնէ զոր եւ կամի», «եւ ագահիցեն» հատվածները, ապա մնացածը համապատասխանում է հունարենին:*

Հոդ. ԻԵ, 223: *Այս հոդվածը հունարենը չունի, շատ հավանական է, որ այն ծագել է հենց պատմական որևէ հիշատակարանի հիման վրա և ներշնչում է հավատ այս կանոնախմբի հավաստիության նկատմամբ:*

ԼԱՎՈԴԻԿԵԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Ցանկ, էջ 224—228: NO *ձեռագրերում ցանկի ԽԱ և ԽԲ հոդվածների վերնագրերից առանձին բառեր հանելով՝ այդ երկու հոդվածի վերնագիրը միացրել են այսպես. «Վասն չհանելոյ շաբաթու պահոցն»։*

Առաջաբան, էջ 228, հուն., էջ 494: *№ 648 և սրան հարող ձեռագրերում առաջաբանն ունի շեղումներ, այդ ցույց տալու համար՝ այն կբերենք ամբողջությամբ. «Իսկ յետ այսորիկ գաւրանայ Աւստացոց (№ № 649, 651, 2964 ձեռագրերում՝ Նաւատացոց, իսկ № 3369 ձեռագրում՝ անհաւատացոց) հերձուածն, որ Նորբորդքն կոչին, որ բազմայեղ այլայլութիւնս զաւանէին ի լըկանս եկեղեցւոյ ժողովեալք Լաւոդիկիա Փռիւգացւոց եպիսկոպոսք Ի, որք ժողովեալք ի Պատկիանէս ի պէսպէս իշխանութենէ արիանոսաց ջնջումն առնել նոցա խեթմանց լուծումն, սահմանեցին կանոնս ԾԵ» (№ 648, էջ 24ա, հմմտ. նաև № № 649, էջ 45ա, 650, էջ 49բ, 651, էջ 36ա, 2964, էջ 66ա, 3369, էջ 63ա, 3562, էջ 296բ)։ Այս ձեռագրերում առաջաբանը բաժանված է երկու մասի և գրված է որպես Ա և Բ հոդվածներ. իսկ բնագրի Ա և Բ հոդվածները վերևում նշված ձեռագրերը չունեն, բացառությամբ № 3369-ի, ուր առաջաբանը գրված է որպես Ա, Բ հոդվածներ, իսկ բնագրի Ա, Բ, Գ, Դ հոդվածները՝ Ե, Զ, Գ, Դ համարների տակ։*

Հունարենը ևս ունի առաջաբան, բայց շատ համառոտ, որը, հավանաբար, առաջ է հանդիսացել այս կանոնախմբի Հովհաննես Օձնեցու գրած առաջաբանին։

Հունարենի առաջաբանը գտնում ենք Պիտրայի հրատարակությունում (էջ 494, ծանոթ 1), որ բերում ենք Դիոնեսիոս Կրտսերի լատիներեն համապատասխան վկայության հետ միասին. ‘Η ἁγία σύνοδος ἡ κατὰ Λαοδίκειαν τῆς Φρυγίας Καπατιανῆς, συγκροτηθεῖσα ἐκ διαφόρων ἐπαρχιῶν τῆς 'Ασιανῆς, ὅρους ἐξέθετο ἐκκλησιαστικοὺς ὡς (m. L., οὕς) ὑποτέτακται". „Sancta synodus guae apud Laodiceam Phrygiae Pacatianae (sic, rectins quam graece) canvenit ex diversis regionibus Asiae, definitiones, exposuit ecclesiasticas, quae subter annexae sunt"։ *Այս առաջաբանը գտնում ենք նաև Լաուխերտի մոտ (էջ 72)։ Հայերեն առաջաբանի «Ի Պաականիանէս»-ը Պիտրայի մոտ գրված է* Καπατιανῆς։ *Այս տեղանվան ուղղական հոլովաձևը ըստ Հեֆելեի* Πακατιανής *է* (Conciliengeschichte, Erster Band, *էջ 721, 723, հմմտ. նաև Դիոնեսիոս Կրտսերի տվյալը, տես Պիտրա, էջ 494, ծանոթ. 1, Լաուխերտ, էջ 72)։ Այստեղից էլ՝ հայերենի «Պատկանիանէս» ձևը։ Բացի դրանից՝ նույն առաջաբանի «յարիոնոսաց»-ի փոխարեն ձեռագրերի մեծ մասն ունեն «յարինիսաւ», բառն անհասկանալի է։ Հունարենում նշված է* ἐκ διαφόρων ἐπαρχιῶν τῆς 'Ασιανῆς *(ասիական տարբեր գավառներից (թեմերից)։ Մեզ թվում է հունարեն* τῆς 'Ασιανῆς *(ասիական) տեղանունն ընդօրինակությունների հետևանքով աղճատվելով հեռացել է իր սկզբնական իմաստից և հայերենում դարձել «յարինիսաւ» և ապա «յարիանոսաց»։*

Հոդ. Ա, էջ 229 (հուն. հոդ. 1, էջ 495): *Հունարենի վերջին* ἀποδίδοσθαι αὐτοῖς τὴν κοινωνίαν *հատվածը հայերենում թարգմանված է «համարձակել» բառով, Մնացածը համապատասխանում է հուն.-ին։ Հունարենի 1—19-րդ հոդվածները սկսվում են* περὶ τοῦ *որը հայերենի Է և Ը հոդվածներում է թարգմանված ճիշտ «վասն այնոցիկ», Մնացած դեպքերում թարգմանված է՝ «չէ մարթ», «ոչ է արժան» և նման ձևերով։*

Հոդ. Դ, էջ 229: *Նույն հոդվածը № 3369 ձեռագիրը չունի։*

Հոդ. Ե, էջ 229 (հուն. հոդ. 4, էջ 495): *Հունարենի* καὶ τὰς λεγομένας ἡμιολίας λαμβάνειν *(և այսպես ասած մեկուկես վերցնել) հատվածը հայերենում թարգմանված է ընդարձակ «ոչ ընաւ փոքր ինչ զտոկոսեաց մասն առնուլ» ձևով։*

Հոդ. Զ, էջ 229 (հուն. հոդ. 6, էջ 495)։ Հունարենի τοῖς αἱρετικοῖς բառը հայերենում թարգմանված է «այլազգւոյն և հերձուածողին» ձևով։ Այս կանոնախմբում, ինչպես հետո կտեսնենք, αἱρετικός-ին համազոր միշտ գրվում է «այլազգի» բառը։

Հոդ. Է, էջ 230 (հուն. հոդ. 7, էջ 496)։ Հայերենի «Նաւատացիք կամ»-ի միջև հուն.-ն ունի ἤτοι Φωτεινιανῶν բառերը, իսկ եզակի αἵρεσιν-ը գրված է հոգնակի ձևով՝ «հերձուածողս»։

Հոդ. Թ, էջ 231 (հուն. հոդ. 9, էջ 496)։ Հայերենում ավելացված է «և ընակս» հատվածը, մնացածը համապատասխանում հունարենին։

Այս հոդվածը չի պահվել № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում։

Հոդ. Ժ, էջ 231 (հուն. հոդ. 10, էջ 496)։ „Περὶ τοῦ μὴ δεῖν τοὺς τῆς ἐκκλησίας ἀδιαφόρως πρὸς γάμου κοινωνίαν συνάπτειν τὰ ἑαυτῶν παιδία αἱρετικοῖς“. Հայերենը մի փոքր ընդարձակ է և թարգմանված ազատ։

Հոդ. ԺԱ, էջ 231 (հուն. հոդ. 11, էջ 496)։ Հայերենի «ծերք» և «որպէս ի հրապարակի կամ ընաւին կնոջ մարդոյ» հատվածը հունարենում չենք գտնում։

Հոդ. ԺԳ, էջ 232, Այս և ԺԵ, ԺԶ հոդվածները չեն պահվել № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում։

Հոդ. ԺԸ, էջ 233 (հուն. հոդ. 18, էջ 497)։ Հայերենը չունի հուն.-ի περὶ τοῦ սկիզբը։ Հունարենի καὶ ἐν ταῖς ἐννάταις (9-րդ ժամին) հատվածը հայերենը չունի. այն պետք է լինի «ժամ և»-ի միջև։

№ 3369 ձեռագրում ԺԵ, ԺԶ, ԺԸ հոդվածները միացված են միմյանց և նշված ԻԸ համարի տակ։

Հոդ. ԺԹ, էջ 233—234 (հուն. հոդ. 19, էջ 497—499)։ Հունարենում չկա հայերենի «եւ որ յաշտիճանին, եւ ոչ եթէ կէսսարկաւագաց թէ սաղմոսողաց» հատվածը, մնացածը համապատասխանում է հունարենին։ Մինչդեռ մի քանի ձեռագրերում, այդ հատվածը այսպես է. «Եւ որ աշտիճանին և ոչ կէսսարկաւագաց և դրակարգացաց և սաղմոսողաց» № 648, էջ 24բ, հմմտ. նաև № № 649, էջ 46բ, 650, էջ 49բ, 651 էջ 37ա, 2964, էջ 67բ, 3562, էջ 297ա, բ, 3369, էջ 64ա։

Հոդ. Ի, էջ 234 (հուն. հոդ. 20. էջ 498)։ „Ὅτι οὐ δεῖ διάκονον ἔμπροσθεν πρεσβυτέρου καθέζεσθαι, ἀλλὰ μετὰ κελεύσεως τοῦ πρεσβυτέρου καθέζεσθαι. Ὁμοίως δὲ ἔχειν τιμὴν καὶ τοὺς διακόνους ὑπὸ τῶν ὑπηρετῶν, καὶ πάντων τῶν κληρικῶν“։ Թարգմանությունը բառացի չէ, թեև այստեղ հունարենի միտքն արտահայտված է պարզ։ Այս հոդվածից սկսած հուն. հոդվածները սկսվում են ὅτι οὐ δεῖ-ով, որը թարգմանված է «Չէ մարթ»։

Հոդ. ԻԱ, էջ 234 (հուն. հոդ. 21, էջ 498)։ „Ὅτι οὐ δεῖ ὑπηρέτας ἔχειν χώραν ἐν τῷ διακονικῷ, καὶ ἅπτεσθαι δεσποτικῶν (տ. Σύν., III, τῶν ἱερῶν փխ. δεσποτικῶν) σκευῶν“.

Հայերենն ընդարձակ է և վերջին «առ սրբել... մատչիցի» մասը հունարենը չունի։ Հունարենի ὑπηρέτην (հյուպերետ) բառը գործածվում է սպասավոր իմաստով։ Հենց այդպես է գործածել նաև Մ. Խորենացին իր Պատմության մեջ «ի ծերունւոյ քահանայէն Դանիէլէ, որ աշակերտ էր սրբոյն Գրիգորի և հիւպերէտ» (III, ԺԴ, հմմտ. Մ. Խորենացու Պատմության Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանությունը, Երևան, 1961, էջ 278)։ «Սպասաւոր» իմաստով է գործածված նաև Նիկիայի կանոնախմբի ԺԸ կանոնում՝ «և սարկաւագին իշխանութիւն լիցի... ի սպասու կալ եպիսկոպոսին» (հմմտ. հուն. καὶ ἐμμενέτωσαν οἱ διάκονοι . . . . τοῦ μὲν ἐπισκόπου ὑπηρέται εἰσὶν էջ 565-ում, տես նաև այդ հոդվածի Զոնարասի մեկնությունը՝ Σύνταγμα, II, 455 և հմմտ. Սարդիկեի կանոնախմբի Ժ, ԺԱ, ԺԳ, ԺԵ հոդվածները և այլն)։ Սակայն, Լավոդիկեի սույն հոդվածի իրենց մեկնությունների մեջ Զոնարասը և Բալսամոնը հյուպերետը նույնացնում են կիսասարկավագի հետ՝ Զոնարաս՝ ὑπηρέται λέγονται οἱ ὑποδιάκονοι, Բալսամոն՝ ὑπηρέται λέγονται οἱ ὑποδιάκονοι (Σύνταγμα, III, Ἀθήνησιν, 1853, էջ 190)։ Այդ պատճառով էլ այս և հետագայի մի քանի հոդվածներում ὁ ὑπηρέτης-ը թարգմանված է «կէսսարկաւագ»։

Հոդ. ԻԲ, էջ 234 (հուն. հոդ. 22. էջ 498)։ „Ὅτι οὐ δεῖ ὑπηρέτην ὠράριον φορεῖν, οὐδὲ τὰς θύρας ἐγκαταλιμπάνειν“։ Հայերենում հոդվածի վերջին «և ի դուռն պահելոյ... աղաւթից» մասն ընդարձակ է։ Մի քանի ձեռագրերում ամբողջ հոդվածը ընդարձակ է. «Չէ մարթ կէսսարկաւագին կտաւ դուսովք արկանել և այնպէս կարդալ կամ սաղմոսել և ի դուռն պահելոյ հեռանալ բնաւին և ոչ ի պատճառս աղաւթից» (№ № 650, էջ 50բ, 651, էջ 37ա, 2964, էջ 67բ, 3369, էջ 64բ)։

Հոդ. ԻԳ, էջ 234։ № № 650, 651, 2964 ձեռագրերն այս հոդվածը չունեն։

Հոդ. ԻԴ, էջ 234 (հուն. հոդ. 24. էջ 488): „Ὅτι οὐ δεῖ ἱερατικοὺς ἀπὸ πρεσβυτέρων ἕως διακόνων, καὶ ἑξῆς τῆς ἐκκλησιαστικῆς τάξεως ἕως ὑπηρετῶν ἢ ἀναγνωστῶν ἢ ψαλτῶν ἢ ἐπορκιστῶν ἢ θυρωρῶν, ἢ τοῦ τάγματος τῶν ἀσκητῶν, εἰς καπηλεῖον εἰσιέναι". *Հայերենը համառոտ է, ուր կոնկրետ թվարկված չէ հոգևոր պաշտոնյաների շարքը, իսկ հունարենը չունի. «և շռայլել... մտանել և ճաշակել» հատվածը։*

Հոդ. ԻԵ, էջ 234 (հուն. հոդ. 25, էջ 499): *Հունարենում չենք գտնում միայն «կամ գրակարդացի» բառերը։*

Հոդ. ԻԶ, էջ 235 (հուն. հոդ. 26. էջ 499): *Հայերենն ունի լրացումներ՝ «կշտամբել կամ», «կամ աստիճան ինչ», «չեն իշխան կշտամբել» հատվածները. Մնացածը համապատասխանում է հունարենին։*

Հոդ. ԻԸ, էջ 235 (հուն. հոդ. 28, էջ 499): *Հայերենը չունի հուն.-ի* ἐν τοῖς κυριακοῖς *(տիրոջ տաճարում) և* τὰς λεγομένας *(այսպես ասած) բառերը, իսկ հուն.-ը՝ «ճաշ» բառը։*

Հոդ. ԻԹ, էջ 235 (հուն. հոդ. 29, էջ 499): *Բնագրի «նզովեալ լիցի» բառերին հունարենում հաջորդում են* παρὰ Χριστῷ *բառերը, իսկ «բանադրուշել է»-ը հունարենում չենք գտնում։*

Այս և հաջորդ՝ Լ հոդվածները չեն պահվել №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում։

Հոդ. Լ, էջ 235—236 (հուն. հոդ. 30. էջ 499): „Ὅτι οὐ δεῖ ἱερατικοὺς ἢ κληρικοὺς ἢ ἀσκητὰς, ἐν βαλανείῳ μετὰ γυναικῶν ἀπολούεσθαι, μηδὲ πάντα χριστιανὸν, ἢ λαϊκόν. Αὕτη γὰρ πρώτη κατάγνωσις παρὰ τοῖς ἔθνεσιν". *Հայերենը թեև հունարենի ուղղակի թարգմանությունը չէ, բայց միտքը արտահայտում է բավական ճիշտ։*

Հոդ. ԼԱ, էջ 236 (հուն. հոդ. 31, էջ 499): „Ὅτι οὐ δεῖ πρὸς πάντας αἱρετικοὺς ἐπιγαμίας ποιεῖν, ἢ διδόναι υἱοὺς ἢ θυγατέρας· ἀλλὰ μᾶλλον λαμβάνειν, εἴγε ἐπαγγέλλοιντο χριστιανοὶ γίνεσθαι". *Հայերենում «այլազգիս»-ի հետ գրված է նաև «կամ առ հերձուածողս», որ հուն.-ը չունի։ Հունարենի* ἢ διδόναι υἱοὺς ἢ θυγατέρας ἀλλὰ μᾶλλον λαμβάνειν *հատվածը հայերենը չունի, իսկ հուն.-ի* εἴγε ἐπαγγέλλοιντο χριστιανοὶ γίνεσθαι *հատվածը թարգմանված է՝ «եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի»։ Ընդհանուր առմամբ հուն.-ի միտքը տրված է ճիշտ, թեև մի փոքր համառոտ։*

№ 3369 ձեռագրում ԻԸ և ԼԱ հոդվածները միացված են և գրված ԻԴ համար տակ։

Հոդ. ԼԲ, էջ 236 (հուն. հոդ. 32, էջ 500): *Հուն.-ում չենք գտնում հայերենի միայն «և բարկութիւն» բառը։ № 650 ձեռագիրը չունի այս հոդվածը, իսկ № 651, 2964 ձեռագրերում ԼԲ հոդվածը գրված է ԼԳ համարի տակ և ընդհակառակը։*

Հոդ. ԼԴ, էջ 236 (հուն. հոդ. 34, էջ 500): *Հուն.-ում «քրիստոնէի» բառին նախորդում է* πάντα *բառը։ Հուն.-ի ընդարձակ* τουτέστιν αἱρετικούς, ἢ αὐτοὺς πρὸς προειρημένους αἱρετικοὺς γενομένους *հատվածը հայերենում գրված է մեկ բառով՝ «այլազգեաց». մնացածը դուրս է ընկել։*

Այս և հաջորդ ԼԵ հոդվածները №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չեն պահվել։

Հոդ. ԼԵ, էջ 236—237 (հուն. հոդ. 35, էջ 500): *Հայերենի «ի տեղիս ուրեք» հատվածը հուն.-ում չենք հանդիպում, իսկ «ժողովս առնել» բառերին հուն.-ում հաջորդում է* ἅπερ ἀπηγόρευται. *Նման բան գտնում ենք նաև այլ տեղ՝ «եթող զՔրիստոս» բառերի միջև հունարենն ունի* κύριον ἡμῶν Ἰησοῦν, *որոնք չեն պահվել հայերենում։ Հայերենի «և յայսպիսի իրս համարձակեսցուք» հատվածի փոխարեն հուն.-ն ունի* καὶ εἰδωλολατρείᾳ προσῆλθεν.

Հոդ. ԼԶ, էջ 237 (հուն. հոդ. 36, էջ 500)· *Հունարենի* ἢ μαθηματικοὺς ἢ ἀστρολόγους *բառերը թարգմանված են «եւ դիւթս եւ վհուկս» (հմմտ. նաև Գրիգոր Մագիստրոսի Նամակը ասորիների կաթողիկոսին՝ Սմբատ Զարեհավանցու ուսուցչի մասին. «ուսեալ զչար մոլութիւն յումեմնէ պարսկական բժշկէ եւ յաստեղաբաշխէ մոգէ» (Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 153)։ Հունարենի* φυλακτήρια *բառը հայերենում արտահայտված է հոմանիշ երկու բառով «հմայեակս և պահպանս»։ Հունարենում չենք հանդիպում «որ ճշմարտութեամբ չեն պահպանք» բացատրականը։ Հունարենի վերջին* ἐκελεύσαμεν *բառը հայերենը չունի։ Հուն.-ի վերջին հատվածը, ուրեմն, կլինի այսպես. «արտաքս քան զեկեղեցի ընկենուլ հրամայեցաք»։*

Հոդ. ԼԷ, էջ 237 (հուն. հոդ. 37, էջ 500). *Հայերենում ավելացված է «նոցա կամ զնուէրս» ու վերջին «և մեղաց» բառերը, որ հուն.-ը չունի. մնացածը համապատասխան է։*

Հունարենի 38-րդ հոդվածը հասկանալի պատճառով տեղ չի գտել Կանոնագրքում Այս հոդվածում քննադատվում է հրյաների այն սովորությունը, ըստ որի բաղարջը նրանք պատրաստում էին անխմոր (այսինքն առանց թթխմորի, ἄζυμα), և որովհետև հայ եկեղեցում էլ այդպես էր, բնական է, որ այդ հոդվածով քննադատվում էր նաև հայ եկեղեցու ծիսական մի սկզբունքը, ուստի այն բաց են թողել և չեն թարգմանել։

Հոդ. ԼԸ, էջ 237 (հուն. հոդ. 39, էջ 501): *Հուն.-ի* καὶ κοινωνεῖν τῇ ἀθεότητι αὐτῶν *(և հաղորդակից լինել նրանց անաստվածությանը) հատվածը հայերենում գտնում ենք «որ առանց Աստուծոյ է» ձևով։*

Հոդ. ԼԹ, էջ 237—238 (հուն. հոդ. 40, էջ 501): *Հայերենի միայն «ուրեք կամ ի ժողովուրդ», «և ի հաւատս» բառերը հուն.-ը չունի։*

Հոդ. Խ, էջ 238 (հուն. հոդ. 42, էջ 501): „Ὅτι οὐ δεῖ ἱερατικὸν ἢ κληρικὸν ἄνευ κελεύσεως ἐπισκόπου ὁδεύειν“. *Հուն.-ի 41-րդ հոդվածը վերաբերում է քահանաներին և եկեղեցու ավելի ցածր սպասավորներին, որոնց արգելում է որևէ տեղ գնալ առանց կանոնական թղթի։ Հուն.-ի 42-րդ հոդվածը նույն բանն արգելում է առանց եպիսկոպոսի հրամանի։ Ըստ երևույթին թարգմանիչը դրանք նույնացրել է և հուն.-ի 41-րդ հոդվածը դուրս է գցել։* Σύνταγμα-*ում 42-րդ հոդվածը դրված է 41-րդ №-ի տակ և հակառակը։*

Հուն.-ի 43-րդ հոդվածը, որը վերաբերում է եկեղեցու ցածր սպասավորներին, հայերենում նույնպես չի պահվել։

Հոդ. ԽԱ, էջ 238 (հուն. հոդ. 44, էջ 501): *Հունարենում չենք գտնում հայերենի վերջին «բայց դնորակնիք յաւուր ատենի մերձ առ բեմն կացուցանել» մասը և «զլոկ» բառը. մնացածը համապատասխանում է հուն.-ին։*

Հոդ. ԽԲ, էջ 238 (հուն. հոդ. 45, էջ 501): *Հայերենը համապատասխանում է հունարենին, միայն թե առաջինի «առանց ուսուցանելոյ» բառերը հունարենում չենք գտնում։*

Հոդ. ԽԴ, էջ 239 (հուն. հոդ. 47, էջ 502): *Հայերենի «ուսանել զի» բառերի միջև հուն.-ն ունի* τὴν πίστιν, *(հավատը), «որոյ» բառի փոխարեն՝* θείας *(աստվածային), իսկ հուն.-ում չենք գտնում «և պատուիչ» բառերը։*

Այս հոդվածը չունեն №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերը։

Հոդ. ԽԵ, էջ 238 (հուն. հոդ. 48, էջ 502): *Հուն.-ի* μετόχους *(մասնակից) բառը հայերենում թարգմանված է «արժանաւորք», իսկ* τοῦ Χριστοῦ-*ն հայերենը չունի։*

Հոդ. ԽԶ, էջ 239 (հուն. հոդ. 49, էջ 502): *Հունարենի նախավերջին* κυριακῇ *բառին հաջորդում է* μόνον *(միայն) բառը, որ հայերենը չունի։*

Հոդ. ԽԷ, էջ 239 (հուն. հոդ. 50, էջ 502): *Հուն.-ը չունի հայերենի «մխիթարել զանձինս» բառերը միայն։*

Հոդ. ԾԱ, էջ 240 (հուն. հոդ. 54, էջ 502): *Հուն.-ի* ἱερατικοὺς-*ը փոխարինված է «քահանայից» բառով, այնուհետև հուն.-ը չունի «կամ երգս և այլ ցած ուտել» բառերը։*

Հոդ. ԾԴ, էջ 240 (հուն. հոդ. 56, էջ 503): *Հունարենում չենք հանդիպում «համարձակեալ լեցի երիցանց մտանել՝ նստել» հատվածին, իսկ հայերենի «դժուարոտ իցէ եպիսկոպոսն» բառերի միջև հուն.-ում գտնում ենք* ἢ ἀποδημοῖ *(կամ բացակա է) բառերը։*

Հունարենի 57-րդ հոդվածը, որը վերաբերում է գյուղերում և գյուղաքաղաքներում եպիսկոպոսներ հաստատելու կամ չհաստատելու հարցին, հայերենում չի պահվել։

Հոդ. ԾԵ, էջ 240—242 (հուն. հոդ. 59—60, էջ 503—504): *Հունարենի 59 և 60-րդ հոդվածները հայերենում միացված են մեկ հոդվածում։ Սկզբի մասը մինչև երկրորդ տողի «զՀին կտակարանս» բառերը 59-րդ հոդվածն է, որը հայերենում մի փոքր ընդարձակ է. ահա հուն.-ը։* „Ὅτι οὐ δεῖ ἰδιωτικοὺς ψαλμοὺς λέγεσθαι ἐν τῇ ἐκκλησίᾳ οὐδὲ ἀκανόνιστα βιβλία, ἀλλὰ μόνα τὰ κανονικὰ τῆς παλαιᾶς καὶ καινῆς (տ. L., τῆς καινῆς καὶ παλαιᾶς) διαθήκης»։

Հուն.-ի 60-րդ հոդվածն սկսվում է հայերենի սույն հոդվածի «Զինչ արժան է կարդալ» հատվածից։ Հայերենը համապատասխանում է հունարենին փոքրիկ տարբերություններով։

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Ծանկ, էջ 243—244: *№ 659 ձեռագրի ցանկը գրչի կողմից նոր է կազմված և փաստորեն երեսուն հոդվածների վերնագրերի փոխարեն այնտեղ գանում ենք 27 հոդվածների վերնագրեր, ընդ որում երկու վերնագիր վերաբերում է մեկից ավելի հոդվածների: Հոդվածների վերնագրերի դիմաց հայկական տառերով գրված են հոդվածների համարները: Ահա այդ ցանկը՝*

«Ցանգ կանոնաց Լուսաւորչին

Քահանայից Ա, Բ, Գ
Հնթանոսաց Դ
Երկեակի եւ կուսի Ե
Երկ[ր]որգաց ամուսնացելոց Զ
Ցանդէպ ուտողաց Է
Գաղտ պսակի Ը
Արեւանկաց Թ
Զիամոլաց Ժ
Իգացելոց ԺԱ
Թովչաց ԺԲ
Կուսանաց ԺԳ
Մանկանց առանց կնքոյ մեռանելոյ ԺԴ
Զգերեզմանս բացողաց ԺԵ
Զգիսն եղոպտելոյ ԺԶ
Կոծ ընողաց ԺԷ
Նշխարաց մարտիրոսի ԺԸ
Նկատողաց գխառնակուԹն անասնոց ԺԹ
Անապատաւորաց Ի
Արհամարհողաց գկուք (sic) *մեռելոյ ԻԱ.*
Խոստովանութիւն յայանողաց ԻԲ
Կնոջ արձակելոյ ԻԳ, ԻԴ
Արբեցողաց ԻԵ
Կաշառառուաց ԻԶ
Ջեռնածուաց ԻԷ
Կիրակէի ԻԸ
Վայրապար նզովողաց ԻԹ
Նուիրելոց կուսից Լ» (էջ 105 ա, բ):

Ինչպես դժվար չէ նկատել, այս վերնագրերը կազմված են հոդվածների հաջորդականության համապատասխան: Համեմատությունների համար չօգտագործված մյուս ձեռագրերը առաջին վերնագիր և ցանկ չունեն (տես №№ 648, էջ 31ա, 649, էջ 77բ, 650, էջ 86բ, 651, էջ 64բ—65ա, 2964, էջ 110բ, 3562, էջ 303ա):

Երկրորդ վերնագիր. էջ 245: *Այս վերնագրին մի փոքր հավելում ունեն երեք ձեռագրերի բնագրերը. «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի յաւելուած Նիկիական» (№ 659, էջ 105բ). «Կանոնք առաք[ելոյն] ի (№ 657* չունի *առաքելոյն ի) սրբոյն Գրիգորէ (№ 657՝ Գրիգորի) Պարթեւի Հայոց Լուսաւորչի եւ առաքելաշնորհ վկայի (№ 657՝ արհի) յաւելուած ի Նիկիական կանոնս (№ 657՝ գլուխք Լ)» (№ 8459; էջ 83բ, 657, էջ 135ա): «Յաւելուածն Նիկիական» և «Ցաւելումն ի Նիկիական կանոնս» բառերը հմմտ. Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի (Տփղիս, 1913, գիրք 2-րդ, գլ. Ղ, էջ 241) «սուղ ինչ գլուխս* յինքնէ ի կանոնս ժողովոյն յաւելուլ» *կամ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ի (Տփխիս, 1909, էջ 465—466) «ի նոյն լուսաւոր* կանոնս յաւելեալ» *(ընդգծումը մերն է—Վ. Հ.) հատվածների հետ:*

№ 657 ձեռագրում վերոհիշյալ վերնագրի տակ նշված են 83 հոդվածներ (էջ 135ա—146ա). Կանոնագրքում եղած Գրիգոր Լուսավորչի կանոնախմբի 30 հոդվածներից 17-ը՝ Ա, Բ, Գ, Ե, ԺԳ,—ԺԹ, ԻԲ—ԻԵ, ԻԸ, ԻԹ գանում ենք № 657 ձեռագրում, իսկ 13 հոդվածներ՝ Գ, Զ—ԺԲ, Ի, ԻԱ. ԻԶ, ԻԷ, Լ չեն պահվել այս ձեռագրում. մնացած 66 հոդվածները այլ բնագիր են և գրված են Գր. Լուսավորչի անվան տակ:

Հոդ. Դ, էջ 245: *Սույն հոդվածը ամենայն հավանականությամբ Անկյուրիայի ժողովի Ի հոդվածի համառոտումն է: Հետևապես այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե հեթանոսների տուն գնալուն, այլ նրանց տոներին մասնակցելուն: Այստեղից էլ բնագրի «ի տունս»*

պետք է ուղղել «ի տաւնս», ինչպես վարվեցինք Անկյուրիայի ժողովի վերոհիշյալ հոդվածի համապատասխան հատվածի հետ, քանի որ ձեռագրերի մի մասը տալիս էր «ի տաւնս»։ Այստեղ այդպես չվարվեցինք, որովհետև բոլոր ձեռագրերն ունեին «ի տունս» ընթերցումը։

Հոդ. ԺԳ. էջ 246։ № 651 ձեռագրում չի պահվել այս հոդվածը։

Հոդ. Լ, էջ 249։ Մի քանի ձեռագրերում Լ հոդվածը վերջից շարունակվում է. «Իսկ որ խոտորեսցի եւ յանցանիցէ զփրկական խորհրդովն՝ զամենայն ժամանակս կենաց իւրոց պարտի լալ այնպիսին եւ խոստովանել եւ ի ժամանակի ելից իւրոց յաշխարհէս արժանի լիցի սուրբ հաղորդութեանն» (№ 2964, էջ 112բ. տես նաև №№ 649, էջ 79ա, 650, էջ 86բ—87ա, 651, էջ 66ա)։ Իսկ № 659 ձեռագրում «մարդասիրեսցէ» բառին հաջորդում է մի այլ հատված, որը, սակայն, մեր կարծիքով, կապ չունի Լ հոդվածի հետ և հանդիսանում է գրչի բացատրությունը. ահա այդ հավելումը. «Եւ արդ, զայս ամենայն գրեցաք առ ի փորձելոյ զիւրաքանչիւր չափ ապաշխարութեան, զի մի՛ զոք կորուսցուք յայնպիսեաց անտի, այլ զարհուրեալք ի ծանր դատաստանէն և յահագին եւ ի մեծ հատուցման աւուրն տեառն մերոյ ընկալցուք զայնպիսիսն եւ աւղտեսցուք զնոսա հանդերձ ապաւթիւք եւ պատարագաւք եւ յափշտակեսցուք զնոսա յորոգայթից սատանայի. որպէսզի եւ զանձինս մերն արասցուք զերծուցանել յահագին տանջանացն Քրիստոսի Յիսուսի տէրամբ մերով, որում փառք յաւիտեանս. ամէն» (էջ 108ա)։ Այս հատվածը № 8459 ձեռագրում գրված է որպես ԼԱ հոդված (էջ 89բ—90ա)։

ՍԱՐԴԻԿԵԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր և ցանկ, էջ 250—252: *№№ 650 651, 3964 ձեռագրերում Սարդիկեի ժողովի կանոնախմբի վերնագիրը թեև այսպես է՝ «Սարդիկէ կանոնին գլուխք ԻԱ» բայց ընագրում չեն բերվում 21 հոդվածները, այլ նշվում են նրանցից միայն յոթը։ №№ 648, 3562 ձեռագրերում այս կանոնախմբի վերնագիրը համարյա նույնն է, ինչ որ վերևում նշվածը. «Սարդիկէ կանոն գլուխ», կամ № 649 ձեռագրինը՝ «Սարդիկէ կանոնին գլուխք Է». վերջին երեք ձեռագրերում ևս պահվել է միայն յոթ հոդված: Այս ձեռագրերից և ոչ մեկը չունի հոդվածների վերնագրերի ցանկը։ Իսկ № 3369 ձեռագիրն ունի «Գիր կանոնական Սարդիկեայ որք ժողովեցան» (էջ 51ա)։ Թեև այս ձեռագիրը նույնպես ցանկ չունի, բայց հոդվածների հաջորդականությունը համապատասխանում է Կանոնագրքի ունեցածին։*

Ցանկի և հոդվածների միջև միայն Ո *ձեռագրում պահվել է ընդարձակ առաջաբան, որ բերում ենք ամբողջությամբ. «Եղև այս ժողովս որ ի քաղաքն Սարդիկեա վասն Աթանասի Աղեքսանդրու հայրապետին եւ Պաւղոսի Խոստովանողի եւ նման նոցին խորհողաց ուղղափառաց, որք զժողովոյն խոստովանին Նիկիա կանոնեալ սահման։ Եւ զի ամենայն արեւելեան յաթոռոցն ուղղափառ հայրապետքն յարիանոսացն հալածեալք էին եւ ինքեանք արիանոսքն զաթոռս նոցա տիրեալ էին եւ ամենայն քրիստոնեայք բազում չարչարանս կրէին հրամանաւ Կոստաս յարեւելեան թագաւորի, որ էր աղանդոյս Արիոսի։ Եւ զի յարեւմտեան՝ Կոստանդինոս ուղղափառ թագաւորն, եղբայրն Կոստասա, հրաման եհան, զի յարեւմտեան եպիսկոպոսքն ժողովեսցին ի քաղաքն Սարդիկեա, նոյնպէս եւ առ եղբայրն իւր առ Կոստաս գրեաց, զի եւ նա հրամայեսցէ զԱթանաս ընդունել դարձեալ յառաջին աթոռն իւր եւ զժողովս առնել, որպէս զի տեսցեն վասն խնդրոյն, որ ի մէջ նոցա։ Եւ ժողովեցան ի քաղաքն Սարդիկեա յարեւմտից եպիսկոպոսք Ց եւ յարեւելից ՀԶ։ Եւ զի ոչ գային յարեւելեանքն ամենեքեան ի մոգովն պատճառեալ զպատճառս ինչ եւ որք եկին ասեն՝ «Ոչ է արժան գալ Աթանասի եւ Պաւղոսի ի ժողովս». եւ հաւանեալ վասն աղմկին՝ ոչ եկին ի ժողովս Աթանասու եւ Պաւղոսու։ Եւ եկեալ ի Փիլիպպուպաւլիս ժողովս յարեւելից յայտնապէս զխոստովանութիւն ոչ խոստովանէին Նիկիոյ, որ եւ թղթովք յայտ առնէին յարեւմտեան ժողովոյն որ ի Սարդիկեա, զԱննման կարծիսն հաւատոյն, իսկ յարեւմըտեանքն հաստատեցին զհաւատն որ ի Նիկիայ եւ ինքեանք զայս կանոն կարգեցին, գլուխս ԻԱ» (էջ 117ար)։*

Հոդ. Ա, էջ 252—253 (հուն. հոդ. 1, էջ 468): *Հայերենի «եպիսկոպոս ասաց» բառերի միջև հուն.-ն ունի քաղաքի անունը՝* πόλεως Κορδούβης. *իսկ հայրենի «ումեք իշխանութիւն» բառերի միջև հուն.-ն ունի* τῶν ἐπισκόπων *բառը. մնացածը համապատասխանում է հունարենին։*

Որոշ ձեռագրերում, պահվել են Սարդիկեի ժողովի միայն յոթ հոդվածները. դրանք կազմում են այս ժողովի կանոնական որոշումների համառոտ խմբագրությունը։ Ահա Ա հոդվածը. «Ոչ է պարտ եպիսկոպոսի իւրմէ վիճակէն յայլ վիճակ փոխել, զի այնպիսին յագահութենէ է տռչորեալ. քանզի ոչ երբեք ուրեք եպիսկոպոս կարացի գտանել, որ ի մեծ քաղաքէ ի նուաստագոյնսն փոխեցաւ» (№№ 648, էջ 26ա, 649, էջ 48ա, 650, էջ 52ա, 651, էջ 38ա, 2964, էջ 69բ, 3562, էջ 299ա)։

Հոդ. Բ, էջ 253—254 (հուն, հոդ. 2, էջ 469): *Հայերենի «արուեստս տանջելիս»-ի միջև հուն.-ն ունի* οὐ σεχτέατ ἄλλα *բառերը. մնացածը համապատասխանում է վերջինիս։*

Համառոտ խմբագրությունը այս է. «Բ. Վասն եպիսկոպոսի որ խաբէութեամբ թղթով փոխի վիճակէ ի վիճակ, սակաւ վարձկուք ապականէ զոմանս եւ յերեսաց ժողովրդոց

թուղթ ի մէջ բերէ. այնպիսին եւ ոչ ընդ աշխարհականին ի վաղճանին արժանի լիցի հաղորդութեանն» (№ № 648, էջ 26ա, 649, էջ 48ա, 650, էջ 52ա, բ, 651, էջ 38բ, 2964, էջ 70ա, 3562 էջ 299ա)։

Հոդ. Գ, էջ 254—255 (հուն. հոդ. 3, էջ 469—470)։ Հայերենի «Ծուլիոսի Հռոմայ» բառերի միջև հուն.-ն ունի τῷ ἐπισκόπῳ բառը, «են որպէս» բառերի միջև՝ ἀναπεσθῆναι τὸ θυσιαστήριον հատվածը. մնացածը համապատասխանում է հունարենին։

Համառոտ խմբագրությունը խիստ աուժել է իմաստից. «Գ. Մի՛ ոք եպիսկոպոս իւր գաւառ ներթիցէ, բայց թէ յեպիսկոպոսակցէ իւրմէ կոչեսցի, զի մի՛ փակեսցի դուռն» (№ № 648, էջ 26ա, 649, էջ 48ա, 650, էջ 52բ, 651, էջ 38բ, 2964, էջ 70ա, 3562, էջ 299ա)։

Հոդ. Դ, էջ 255 (հուն. հոդ. 4, էջ 470—471)։ Հայերենի «և հաճոյ» ու «զրով» բառերը հուն.-ը չունի։ № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։

Հոդ. Ե, էջ 255—257, (հուն. հոդ. 5, էջ 471—472)։ Հայերենի «Հռոմայ եպիսկոպոսն» բառերի միջև հուն.-ն ունի ἐκκλησίας բառը, մնացածը համապատասխան է միմյանց։ № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։

Հոդ. Զ, էջ 257—258 (հուն. հոդ. 6, էջ 472—473)։ Նախքան Զ հոդվածի սկսվելը Կանոնագրքի համահավաք բնագրի համար օգտագործված մի քանի՝ ABCKLMNOPQ ձեռագրերում գրված է «Նորին», իսկ E ձեռագրում՝ «Նոցին». սրանք վերաբերում են հոդվածի սկզբի Ὅσιος ἐπίσκοπος εἶπε սովորական զարձվածքին, որ այս հոդվածում չի բերվել և փոխարեն գրվել է «Նորին» կամ «Նոցին», այսինքն Զ հոդվածը ևս Հոսիոս եպիսկոպոսի ասածն է։ Հայերեն թարգմանությունը համապատասխանում է հունարենին, միայն թե հունարենի χρῆ πρότερον ἐκεῖνον τὸν ἐναπομείναντα ἐπίσκοπον հատվածը հայերենը չունի, այն պետք է գտնվեր «եպիսկոպոս որ» բառերի միջև. ինչպես նաև «և առնէին»-ի միջև հուն.-ն ունի πρότερον ετύγχανον γεγονότες հատվածը։

Հայերենի «բազմութեան թուովք ժողովուրդք և քաղաքք»-ի դիմաց հուն.-ն ունի ἐν πολλῷ ἀριθμῷ λαοῦ πόλις, այսինքն՝ բազմամարդ քաղաք։

Այս հոդվածը համառոտ խմբագրության մեջ տրված է այսպես. «Զ. Ոսիոս եպիսկոպոս [աս]աց. թէ դէպ լինիցի բազում եպիսկոպոսաց ի մի վայր ժողովել եւ մի եպիսկոպոսի մնալ անարէն ի տան, արժան է թղթով կոչել զնա եւ մնալ նմա։ Ապա թէ ոչ եկեսցէ, ձեռնարկեսցեն յոր ինչ ժողովեցանն։ Եւ ոչ է արժան եպիսկոպոս կարգել ի գեաւղ կամ ի զուղնաքեա քաղաքի ուր երիցունք բնական են. զի մի՛ արհամարհեսցի եպիսկոպոսին անունն եւ իշխանութիւնն» (№ № 648, էջ 26ա, 649, էջ 48ա, 650, էջ 52բ, 651, էջ 38բ, 2964, էջ 70ա, 3562, էջ 299ա)։

Հոդ. Է, էջ 258—260 (հուն. հոդ. 7, էջ 473—474). Հայերենում մի քանի տեղ նկատվում են շեղումներ, օրինակ, հուն. αἱ ἄδικοι բառի դիմաց գրված է «աշխարհական», παρὰ τοῦ ἀδελφοῦ՝ «եղբաւրակցէն», συνεπισκόπου՝ «և պաշտաւնակցէ եպիսկոպոսակցէ», իսկ «աշխարհականաց պատիւս» բառերի միջև հուն.-ն ունի ἢ ταῖς χήραις συναίρεσθαι καὶ ἐπικουρεῖν, ἀλλὰ κοσμικὰ հատվածը, որը դուրս է ընկել հայերեն բնագրից։ Մի երկու տեղ հուն.-ի εἰς τὸ στρατόπεδον թարգմանված է «ի պաղատն» (այսպես նաև այլ հոդվածներում), թեև հոդվածի սկզբում գրված է ճիշտ թարգմանությամբ՝ «ի բանակս» (=ճամբար)։ Հայերենի «յանապատ տեղի վասն» հատվածը հուն.-ը չունի, դրա փոխարեն այնտեղ կարդում ենք οἰκτοῦ δεομένους, «կամ անխտիր զատապարտեալ պահեսցի» հատվածի դիմաց հուն.-ն ունի εἰς περιορισμὸν ἢ νῆσον καταδικασθέντας և այլն։

Հոդ. Թ, էջ 261—262 (հուն. հոդ. 9, էջ 474—475)։ Հայերենի «Նոցա աւգնականութիւն» բառերի միջև հուն.-ն ունի ἀγαθήν. մնացածը համապատասխանում է հուն.-ին։

Հոդ. Ժ, էջ 262—263 (հուն. հոդ. 10, էջ 475—476)։ Եթե բացառենք որոշ շեղումներ, օրինակ, «դրակարգացի սպասաւորութիւն» բառերի միջև հուն.-ն ունի καὶ πρεσβυτέρου, «ընդունել թեթեւութեամբ» բառերի միջև՝ τολμηρῶς καί, իսկ հայերենի «եղև առաքեալ»-ի փոխարեն հուն.-ն ունի ἐγένετο διδάσκαλος և այլն, ապա հայերենը համապատասխանում է հունարենին։

Մի քանի ձեռագրերում սույն հոդվածի համառոտ խմբագրությունն այսպես է. «Ժ. Ոսիոս եպիսկոպոս ասաց. զի թէ ոք զմեծատուն կամ զսքոզիստիկոս ի հրապարակէ պաչեսցէ լինել եպիսկոպոս՝ ոչ յառաջ նախ կարգեսցի եթէ ոչ նախ սարկաւագի եւ դրակարգացի սպասաւորութիւն կատարեսցէ. զի թէ ընդ ամենայն աստիճան արժանաւոր կարծեսցի ի կամարն եպիսկոպոսութեան, յաստաջադիմութեան անցանել կարասցէ եւ յիւրա-

քանչիւր աշտիճանի յերկարանալ, զի փորձեսցի հաւատն եւ վարքն». (№ № 648, էջ 26ա, բ, 649, էջ 48ա, բ, 650, էջ 52բ. 651, էջ 38բ, 2964 էջ 70ա, բ. 3562. էջ 299բ)։

Հոդ. ԺԱ, էջ 263—265 (հուՆ. հոդ. 11. էջ 476—477)։ Հայերենում առկա են փոքրիկ եղումներ միայն, օրինակ՝ «առնելով որ» բառերի միջև հուՆ.-ն ունի αὐτόθι բառը. «Թեբահաւատելով որ» բառերի միջև՝ ἐκκλησίαν, իսկ «սովորութենէ» բառը դրված է πανουργία բառի դիմաց։ ՀուՆ.-ի մի հատվածը՝ Μέμνησθε δὲ ἐν τῷ προάγοντι χρόνῳ . . . ἀποκινοῖτο τῆς κοινωνίας կանոնագրքում մի փոքր խմբագրված է՝ «Բայց յիշել ի յառաջեալ ժամանակին...ի բաց շարժեսցին յաւրինաց անտի»։

Ահա և այս հոդվածի համառոտ խմբագրությունը. «ԺԱ. Ոչ է պարտ եպիսկոպոսի դոռոդութեան աղագաւ յիւր քաղաքէն յայլոյ քաղաք գնալ եւ յաճախ բեմասացութիւնս առնել եւ տգիտութեան աղագաւ քամահել դեպիսկոպոս տեղոյն. զի այնպիսին գնորա զաթոռն յինքն ջանա կորզել։ Արդ՝ հայրն մեր սահմանեաց, զի թէ ոք դուր ի Նորին քաղաքի եղեցի քան դերիս շաբաթս եւ ոչ հաղորդեսցի, ի բաց շարժեսցի ի հաղորդութենէ։ Զի թէ ի վերայ աշխարհականաց այդպէս հրամայեալ է, ապա ոչ է աւրէն եպիսկոպոսաց առանց ծանր հարկի ի բաց թողուլ դհօտն» (№ № 648, էջ 26բ, 649, էջ 48բ, 630. էջ 53ա, 651, էջ 38բ—39ա, 2964, էջ 70բ—71ա, 3562, էջ 299բ)։

Հոդ. ԺԲ, էջ 266 (հուՆ. հոդ. 13, էջ 478—479)։ Մի երկու շեղում էլ նկատվում է այս հոդվածում, օրինակ՝ «զարձեալ» բառի փոխարեն հուՆ.-ն ունի πάσιν, «եպիսկոպոսակցին» բառի փոխարեն՝ τῷ ἐπισκόπῳ, իսկ հոդվածի վերջին «զիմաստութիւն»-ը գրված է հուՆ.-ի ὁμόνοιαν (համամիտ, միաբան) բառի դիմաց։

Հոդ. ԺԴ. էջ 266—268 (հուՆ. հոդ. 14, էջ 479—480)։ Հայերենում դարձյալ առկա է մի-երկու փոքրիկ շեղում, օրինակ՝ հայերենի ունեցած «վաղվաղակի» ձևը համապատասխանում է Լաուսերտի τάχεως (արագ, շտապ, շուտ) և ոչ թէ Պիտրայի τοῦ τάχεως (խիստ, դաժան) ընթերցմանը. «ամենեքեան ասացին» բառերի միջև հուՆ.-ն ունի ἐπίσκοποι բառը, «բերել զի» բասերի միջև՝ ὀφείλει։ «Ընթասցի» բառին նախորդող «եպիսկոպոսն» բառը հուՆ.-ը չունի։

Հոդ. ԺԶ—ԺԷ, էջ 268—269 (հուՆ. հոդ. 16, 480—481). Կանոնագրքում եղածը համապատասխանում է հունարենին. բայց հայերենում որոշ իմաստով տուժել է հոդվածի ամբողջականությունը՝ բաժանված լինելով երկու մասի. սակայն ըստ էության հայերենը հունարենի համեմատությամբ ավելի ոչինչ չունի։ Հավանաբար Հովհաննես Օձնեցին, երբ կազմում էր Կանոնագիրքը, ԺԶ հոդվածը բաժանել է երկու մասի՝ մեկը քահանաների մասին, մյուսը՝ սարկավագների. դրան համապատասխան Սարդիկեի ժողովի հոդվածների վերնագրերի ցանկում դրել է երկու վերնագիր՝ «ԺԶ. Վասն երիցանց՝ ոչ լինել անհաղորդ գերիս կիւրակէս. ԺԷ. Վասն սարկաւագաց նոյնպէս»։ Այդ բանը տեղի է ունեցել այսպես. Սարգիկեի ժողովի հոդվածների մեծ մասը սկսվում է. «Ոսիոս եպիսկոպոս ասաց» արտահայտությամբ, և քանի որ հունարենում ԺԶ հոդվածի վերջին մասում նույնպես նշված է Ὅσιος ἐπίσκοπος εἶπεν, ուստի այդ հատվածից առանձնացրել են վերջին մասը և նշել որպես ԺԷ հոդված. երկրորդ՝ այդպես են վարվել, որպեսզի, հավանաբար, սարկավագների մասին եղած որոշումը ցայտուն երևա։

Հայերենում մի շեղում կա, «տեղիս» բառի փոխարեն հուՆ.-ում դրված է ἐκκλησίας բառը։ ԺԶ հոդվածի վերնագրում՝ նշված է «զերիս կիւրակէս», բուն հոդվածում այդպիսի բան չենք գտնում, բայց որովհետև հունարենում ասված է. Οὗτοι οἱ ὅροι, οἱ καὶ ἐπὶ τῶν ἐπισκόπων ὡρισμένοι, φυλαττέσθωσαν καὶ ἐπὶ τούτων τῶν προσώπων (այն սահմանումները, որոնք եպիսկոպոսների վերաբերյալ որոշվեցին, թող պահպանվեն և այս անձերի վերաբերյալ) և քանի որ ԺԱ, ԺԲ հոդվածներում եպիսկոպոսների համար նշվում է երեք կիրակի ժամանակամիջոցը, այստեղից էլ Հովհաննես Օձնեցին նշված հոդվածի վերնագրում գրում է. «զերիս կիւրակէս»։

Ե ձեռագրում ԺԷ հոդվածը գրված է ԺԸ-ի տեղը և ընդհակառակը. № 3369 ձեռագիրը չունի ԺԷ հոդվածը։

Հոդ. Ի, էջ 270—271 (հուՆ. հոդ. 19. էջ 482)։ Այս հոդվածը ևս համապատասխանում է հունարենին, միայն թե հունարենի τῆς ἐμῆς μετριότητος ἡ ἀπόφασις ἐστιν αὕτη (այս իմ համեստ (չափավոր) որոշումն է հատվածը Կանոնագրքում թարգմանված է. «Իմոյ Նուաստութեանս է այս դատաւճիռ»։ Ἀπόφασις թարգմանված է «դատավճիռ», ավելի ճիշտ է «որոշում» նշանակությունը։ Այնուհետև հուՆ.-ի μὴ βούλοιντο և μὴ ὑποδέχεσθαι բառերը հայերե-

նում գրված են «կամեցին» և «ընդունել» ձևով։ Թարգմանությունը սխալ չէ, միայն հունարենի նախադասության ժխտական կառուցվածքը հայերենում փոխարինված է դրական կառուցվածքով։

Ահա համառոտ խմբագրությունը. «Ի. Վասն պաշտելոյ զկարգն որ ի հերձուածս անդր Թիւրին եւ անդրէն դառնան, որք միանգամ ի վիճակէ եկեղեցական յառաջ մատեան յոմանց յեղբարց մերոց, եթէ կամեցան դառնալ անդրէն յորս եւ անուանեցան յեկեղեցիս՝ յայսմհետէ ընդունել։ Բայց Նուաւրիանոսի՝ ոչ է եպիսկոպոսի անուն՝ անձին պարտ է մոլմխնդրել, այլ եւ ոչ զՄովսէս եպիսկոպոսութեան արժանի գոլ կարծել։ Իսկ եթէ աշխարհական հաղորդութեան պահանջեսցեն՝ ոչ էր պարտ նոցա ուրանալ» (№ № 648, էջ 26բ, 649, էջ 48բ, 650, էջ 53ա, 651, էջ 39ա, 2964, էջ 71ա, 3562, էջ 300ա)։

Հոդ. ԻԱ, էջ 271—272 (հուն. հոդ. 20—21, էջ 482—483)։ Պիտրայի հրատարակության բնագրում գրված է երկու՝ 20 և 21-րդ հոդվածների տակ, այդպես է նաև Σύνταγμα-ում (III, էջ 280, 282), մինչդեռ Հեֆելեի և Լամբերտի հրատարակություններում հունարեն այս երկու հոդվածները նշված են իբրև մեկ՝ 20-րդ հոդված։ Պիտրայի հրատարակության 20-րդ հոդվածը սկսվում է հայերեն նույն հոդվածի սկզբից և վերջանում «Ամենքին պատասխանի արարին. Վայել է և հաճոյ են այսպիսի կամք (համտ. հուն. Ἅπαντες ἀπεκρίναντο· Πρέπει καὶ ἀρέσκει ἡμῖν ἡ παροῦσα γνώμη հատվածը)։ Հուն.-ի 21-րդ հոդվածն սկսվում է հայերենի «Եւ այս անտի եւ եթ, մանաւանդ ճանաչելի եղիցի եւ կատարեսցի» հատվածից (համա. հուն. καὶ τοῦτο δὲ ἐκεῖθεν ἄδηλον γνώριμον γενήσεται καὶ ἐλεγχθήσεται) և ավարտվում հայերեն 21-րդ հոդվածով՝ «Ամենքին ասացին. Սահմանեսցի այս»։ Հայերենի այս հոդվածում նկատվում են փոքրիկ շեղումներ հունարենից, օրինակ՝ «կամաց» բառի փոխարեն հուն.-ն ունի ἡ τῷ Θεῷ (հոդ. 20-րդ), κανόνιον (հոդ. 21-րդ) բառը հայերենում գրված է «յոահս» ձևով, «են տեսնելով»-ի միջև հուն.-ն ունի ἐπισκοπῶν և այլն։

Սակայն. այս կանոնախմբի հոդվածների հաջորդականությունը Լամբերտի մոտ գրված է ըստ լատիներեն բնագրի հաջորդականության, թեև հոդվածների սկզբում նշված են հունարենի կարգահամարները, օրինակ հունարենի 20-րդ հոդվածը լատիներենում գրված 11-րդ №-ի տակ, 10-րդը՝ 13-րդի, 11-րդը՝ 14-րդի (էջ 60—64) և այլն։

№ № 648, 649, 651, 2964, 3562 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 273: *Համեմատությունների համար չօգտագործված մի քանի ձեռագրերի ցանկերում և բուն ձեռագրերում նշված են 2 հոդված (№ № 648, էջ 26բ, 649, էջ 49բ, 3369, էջ 67ա, 3562, էջ 300ա), իսկ № № 650 (էջ 53ա), 651 (էջ 39ա), 2964 (էջ 71ա) ձեռագրերում՝ 3 հոդված, բայց բոլոր դեպքերում էլ այդ ձեռագրերում պահվել է երկու հոդված։*

Ցանկ և առաջաբան, էջ 273—274 (հուն. էջ 507—508): *Վերևում նշված և ոչ մի ձեռագրում չեն պահվել ցանկը և առաջաբանը։ Պիտրայի հրատարակության հունարեն բնագրում Կոստանդնուպոլսի ժողովի որոշումները պահվել են Թեոդոս մեծին ուղղված մի նամակին առընթեր (էջ 507)։*

Իհարկե, կանոնագրքում եղած այս կանոնախմբի առաջաբանը, որ գրել է Հովհաննես Օձնեցին, կապ չունի հուն.-ի հետ։ Հունարենում այնուհետև բերվում են ժողովի կանոնները, որոնք թվով յոթն են։ Կանոնագրքում պահվել են հունարենի 1—4-րդ կանոնները։ Թե ինչու կանոնագրքում չեն պահվել 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները, կամ արդյոք երբևէ այդ կանոնները հայերեն թարգմանվել, բայց կանոնագրքի մեջ չեն մտել՝ դժվար է հաստատ բան ասել։ Սակայն, ավելի ուշ, հավանաբար 18-րդ դարում, վերևում նշված նամակը և նրան առընթեր կանոնները և այլ նյութեր թարգմանվել են «Ի նուաստ Յակօբ դպրէ ի լեզուէն Յունաց եւ Լատինացւոց...» (№ 1490, էջ 35ա, նամակը և կանոնները տես 64բ—67բ էջերում)։ Իսկ Σύνταγμα*-ում բոլորովին այլ առաջաբան է, խիստ համառոտ և գրված է Զոնարասի և Բալսամոնի անունով։*

Հոդ. Ա, էջ 274: *Մի քանի ձեռագրերում այս հոդվածը շարադրված է այսպես. «Ա. Ոչ է պարտ<է>խոտել զհաւատսն, որ ի Նիկիայ, այլ նզովել զամենայն հերձուածողս եւ յայտնապէս զԵւնոմիանոսացն, այսինքն Աննմանիցն եւ զՍաբելիանոսացն, եւ զԱրիանոսացն, այսինքն Եւդոքսիանոսացն եւ զկեսարիանոսացն, այսինքն Հոգէմարտացն եւ զՄարկեղիանոսացն եւ զՓոտիանոսացն եւ զԱպողիանոսացն» (№ 648, էջ 26բ—27ա, համտ. նաև № № 649, էջ 49ա, 650, էջ 53ա, 651, էջ 39ա, 2964, էջ 71ա, 3562, էջ 300ա)։ № 3369 ձեռագրում հոդվածների հաջորդականությունն այլ է. կանոնագրքի Ա հոդվածը գրված է Գ համարի տակ, Բ-ն՝ Բ, Գ-ն՝ Դ (էջ 67ա)։*

Հոդ. Բ, էջ 274—276 (հուն. հոդ. 2—3, էջ 508—509): *Այս հոդվածը հունարենում գրված է երկու հոդվածների տակ՝ 2-րդ և 3-րդ։ 3-րդ հոդվածը հունարենում սկսվում է* Τὸν μὲν τοι Κωνσταντινουπόλεως ἐπίσκοπον*-ից (համա. հայ. թարգմանությունը. «Կոստանդնուպաւլսացւոյ եպիսկոպոսին»)։ Ի դեպ, այս հոդվածը 18-րդ դարում Հակոբ Դպրի կատարած հայ թարգմանության մեջ տրված է չորս հոդվածով՝ Բ, Գ, Գ, Ե (№ 1490, էջ 65բ—66ա)։*

Սույն հոդվածը չի պահվել № № 648, 649, 050, 651, 2964, 3562 ձեռագրերում։ Իսկ № 3369 ձեռագրի նույն հոդվածում չի պահվել «Իսկ որ յարեւելս եպիսկոպոսքն են... միայն կարգաւորութիւն է անաւրինել» հատվածը։

Հոդ. Գ, էջ 276 (հուն. հոդ. 4, էջ 509): *Այս հոդվածի առթիվ Ն. Մելիք-Թանգյանը գրում է. «Մեր ձեռագրերում... բոլորի մեջ Մաքսիմ շնականը (համտ. հուն.* Μαξίμου τοῦ κυνικοῦ*—Վ. Հ.) թարգմանված է Մաքսիմ* շինական*, շնական բառի միտքը չհասկանալուն համար» (ընդգծումը Ն. Մելիք-Թանգյանինն է.—Վ. Հ., տե՛ս «Հայոց եկեղեցական իրաւունքը», Ա գիրք, էջ 168)։ Իզուր է Մելիք-Թանգյանը կշտամբում թարգմանչին. այդ շփոթումը գալիս է ոչ թե թարգմանիչից, այլ հետագա դարերի գրիչներից, որոնք ընդօրինակել են կանոնագիրքը։ Եվ պատահական չէ, որ համեմատության համար մեր օգտագործած մի շարք ձեռագրեր ունեն ոչ թե «շինական», այլ «շնական»։ Ի դեպ կանոնագրքի տարբեր կանոնախմբերի թարգմանիչների հասցեին Մելիք-Թանգյանը նման անտեղի կշտամբանքների շատ է դիմում։*

ԵՓԵՍՈՍԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 277: Համեմատական բնագրի համար չօգտագործված մի քանի ձեռագրերում այս վերնագիրը նշված է տարբերակներով: Օրինակ. «Եփեսոսի սուրբ ժողովոյն կանոնքին գլուխ Զ» (№ № 650, էջ 55բ, 651, էջ 39ա, 2964, էջ 71բ), «Կանոնք Եփեսոսի գլուխ» № № 648, էջ 27ա, 3562, էջ 300ա), «Եփեսոսի ժողովոյն կանոնքին, գլուխք Բ» (№ 649, էջ 49ա), «Կանոնք սրբոց հարցն Եփեսոսի սուրբ ժողովոյն» (№ 3369, էջ 68ա): Նշված բոլոր ձեռագրերում էլ Եփեսոսի ժողովի վեց հոդվածներից պահվել է երկուսը՝ Բ և Գ: Իսկ № 659 ձեռագրում որպես վերնագիր թեև նշված է «Կանոնք սուրբ ժողովոյն Եփեսոսի որ ժողովեցան ի հոգւոյն սրբոյ երկերիւրքն եւ կարգեցին տասնք ԺԶ» (էջ 214բ), սակայն այդ վերնագրի ներքո բերած կանոնները Սեանոսս եպիսկոպոսի կանոնախումբն են (տես վերևում, էջ 469—474):

Ցանկ և առաջաբան, էջ 277—278: Վերևում նշված ձեռագրերից և ոչ մեկը չունի ցանկը և առաջաբանը: Պիտրայի մոտ հունարենում կա ընդարձակ առաջաբան (էջ 515), որը բոլորովին տարբեր է կանոնագրքի ունեցածից: Այս առաջաբանը նույնությամբ գտնում ենք Եփեսոսի ժողովի կանոնախմբի մի այլ՝ 18-րդ դարի թարգմանության մեջ (տես № 1490, էջ 296բ—297ա), միայն թե վերջինիս մեջ նշված են նաև Անտիոքի եպիսկոպոս Հովհաննեսի և նրա 34 կողմնակիցների անունները, որոնց չենք հանդիպում Պիտրայի հրատարակության բնագրում, Σύνταγμα-ում (II, էջ 192) և Լաուխերտի մոտ: Σύνταγμα-ում առաջաբանը ևս տարբեր է կանոնագրքում և Պիտրայի մոտ եղածից: Այս առաջաբաններից և ոչ մեկը չկա Լաուխերտի մոտ (տես էջ 87): Պիտրայի բերած առաջաբանի վերջին հատվածը՝ 'Επειδή δε εχρήν · · · καὶ ἀγάπη. ὅτι περ. Σύνταγμα-ում (II, էջ 192) գրված է որպես 1-ին հոդվածի սկզբի մաս. այդպես է նաև կանոնագրքում:

Հոդ. Ա, էջ 278—279 (հուն. հոդ. 1, էջ 515—516): Σύνταγμα-ում սույն հոդվածն սկսվում է „'Επειδὴ ἐχρῆν καὶ τοὺς ἀπολειφθέντας τῆς ἁγίας συνόδου · · · · · · ἁγιότητι καὶ ἀγάπῃ. ὅτι περ ձևով, ինչպես Պիտրայի բերած առաջաբանի վերջին հատվածը. այնուհետև՝ ինչպես Պիտրայի մոտ:

Հայերենում հոդվածի սկզբի մասը (ըստ Σύνταγμα-ի II, և ըստ Պիտրայի առաջաբանի վերջին մասը) խիստ համառոտ է: Հուն.-ի 'Επειδη δε εχρην και τους απολειφεντας της αγιας συνοδου · · · αγιοτητι και αγαπη, οτι περ հատվածի դիմաց հայերենն ունի «Բանզի պիտոյ էր · · · · · · ձերումդ սրբութեան, զի թէպէտ և»: Հայերենի «Հռոմայ եպիսկոպոսապետին» հատվածը հունարենում չենք գտնում: Ի դեպ այս հատվածը „Кормчая книга"-ում հայերենի նման ևս նշված է „Келестина епископа римского" (գլ. 12, թերթ 36):

Այս հոդվածը համեմատական բնագրի կազմման համար չօգտագործված վերևում նշված ձեռագրերը չունեն:

Հոդ. Բ, էջ 279—280 (հուն. հոդ. 2, էջ 516): Հուն.-ի τῇ ἀποστασίᾳ, τῆς ἀποστασίας բառերը հայերենում թարգմանված է «ի բացակայսն», «ի բացակայս»՝ հեռավոր, օտար իմաստով: № 648 և սրան հարող ձեռագրերում այս հոդվածը նույնն է ինչ որ Կանոնագրքինը, միայն թե առաջիններում «ոչ գտան ի»-ի փոխարեն կարդում ենք. «ոչ գնան ի»:

Հոդ. Գ, էջ 280 (հուն. հոդ. 3, էջ 516): „Εἰ δὲ τινες καὶ (ա. Συν., II, չիք καὶ) τῶν ἐν ἑκάστῃ πόλει ἢ χώρᾳ κληρικῶν, ὑπὸ Νεστορίου καὶ τῶν σὺν αὐτῷ ὄντων τῆς ἱερωσύνης ἐκωλύθησαν, διὰ τὸ ὀρθῶς φρονεῖν, ἐδικαιώσαμεν καὶ τούτους τὸν ἴδιον ἀπολαβεῖν βαθμόν· κοινῶς δὲ τοὺς τῇ ὀρθοδόξῳ καὶ τῇ (ա. L., չիք τῇ) οἰκουμενικῇ συνόδῳ συμφρονοῦντας κληρικούς, κελεύομεν τοῖς ἀποστατήσασιν ἢ ἀφισταμένοις ἐπισκόποις, μηδ' ὅλως ὑποκεῖσθαι κατὰ μηδένα τρόπον". Հայերենում հունարենի միտքն արտահայտված է ընդհանուր առմամբ ճիշտ, թեև ոչ բառացի թարգմանությամբ:

Հոդ. Դ. էջ 290 (հուն. հոդ. 4, էջ 517)։ *Այս հոդվածը համապատասխանում է հունարենին, միայն թե հայերենում նկատվում են աղճատման հետքեր, բայց ոչ թարգմանչի կողմից, այլ ընդօրինակողների. օրինակ՝ «կամ առանձին»-ը ենթադրել է տալիս, որ մինչև «ընդդէմ»-ը պետք է մի բառ էլ լինի, օրինակ. «կամ հրապարակաւ», այսինքն «կամ առանձին կամ հրապարակաւ»։ Վերջինս հուն.-ում գտնում ենք՝* ἢ κατ' ἰδίαν ἢ δημοσίᾳ։ *Հայերենը չունի նաև* τοῦ Νεστορίου *և* θεοικαιωται *(արդարացի)։*

Այս և մնացած հոդվածները № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերը չունեն, իսկ № 3369 ձեռագրում Գ հոդվածից հետո գրել են Սեանտոսի կանոնախմբում։

Հոդ. Զ, էջ 291 (հուն. հոդ. 6, էջ 517)։ *Հուն.-ի* τὰ περὶ ἑκάστου πεπραγμένα ἐν τῇ ἁγίᾳ συνόδῳ τῇ ἐν Ἐφέσῳ οἱῳδήποτε τρόπῳ παρασαλεύειν *հատվածը հայերենում գրված է «որ ինչ գրով ասացաւ... որով տարաղու և իցէ շարժել» ձևով, որն այնքան էլ հստակ չէ։ Ուզում է ասել՝ որևէ կերպ խախտել այն, ինչ նրանցից յուրաքանչյուրի մասին Եփեսոսի սուրբ ժողովը կարգադրություն է արել։*

Հայերեն թարգմանությունը ավարտվում է Զ հոդվածով։ Մովսես Խորենացին ևս հիշում է, որ թարգմանիչները վերադառնալով Հայաստան, Սահակ Պարթևին և Մաշտոցին «մատուցին զթուղթսն եւ զկանոնս ժողովոյն Եփեսոսի, վեց սահմանեալ կանոնաւ» («Պատմութիւն Հայոց», Գ, գլ. ԿԱ)։ Այսպիսով, Եփեսոսի ժողովի կանոնախումբը հենց սկզբից էլ մեր մատենագրության մեջ և ապա Կանոնագրքում մտել է վեց հոդվածով։

Հունարեն բնագրում այս վեց հոդվածին հաջորդում են երկու այլ բնագրեր, որոնք համարակալված են՝ 7-րդ և 8-րդ։ Դրանցից առաջինը՝ 7-րդը վերաբերում է Փիլադելփիայի Խարիսիոս քահանային և Նիկիայի ժողովի հանգանակին (տես Պիտրա, էջ 517—518), իսկ մյուսը՝ 8-րդը Կիպրոսի եպիսկոպոսների բողոքին Անտիոքի մետրոպոլիտի դեմ (նույն տեղում, էջ 518—519)։ Հունարեն բնագրում սրանից հետո ևս գտնում ենք մի երրորդ գրություն՝ նամակ, ուղղված Պամփյուլիայի ժողովին՝ Պամփյուլիայի եպիսկոպոսի վերաբերյալ (նույն տեղում, էջ 520)։ Այս երեքն էլ ունի Σύνταγμα-*ն, տես* II, *էջ 200—208։ Մինչդեռ Լաուխերտի մոտ հունարեն բնագիրն ավարտվում է 6 հոդվածով միայն (էջ 88)։*

Վերևում մեջ բերված հատվածում Խորենացին «զթուղթս» ասելով, հավանաբար ակնարկում է այս երեք գրությունները, որոնք թեև արժանացել են Եփեսոսի ժողովի ուշադրությանը, սակայն, իրականում չեն մտել ժողովի կանոնական որոշումների մեջ, այլ մնացել են սոսկ որոշումներ։

ԽԳ *ձեռագրերում վեց հոդվածներից հետո Եփեսոսի ժողովի կանոնախումբը շարունակվում է մի քանի այլ հոդվածներով, որոնք ունեն Կանոնագրքին հատուկ հոդվածների ընդհանուր և մասնավոր համարներ։ Ահա այդ շարունակությունը.*

«Է. ՌԼԳ. Քահանայ որ կուս իցէ կամ այրի եւ աշխարհի քահանայութիւն առնէ՝ նաեւ ժողովուրդքն եւ ընդունողքն նորա նզովեալ ե[ղիցին]։

Ը. ՌԼԴ. Քահանայ որ կին ունիցի եւ ի շնութիւն անկանիցի կամ յայլ վատթարութիւն եւ վկայութեամբ յայտնեսցի՝ լուծցի ի քահանայութենէն։ Ահա եթէ անագնութեամբ արասցէ՝ նզովեալ [եղիցի], նաև ժողովուրդն եւ ընդունողքն նորա եւ ի կենանս և ի մահ, ապայ եթէ ապաշխարութեամբ մաքրեսցի՝ ըստ կամաց եպիսկոպոսին հաղորդ[եսցի]։

Թ. ՌԼԵ. Որք ամուսնացեալք են ընդ հեթանոսաց եւ տացէ նոցա Աստուած ժամանակ ապաշխարութեան արտասուօք եւ ողորմութեամբ, որպէսզի ամենայն ինչս իւրեանց տացեն աղքատաց, ի տարոջն միանգամ հաղորդեսցին ուրինացն, ապա թէ ոչ գոյ տեղի եւ ղերծանի ի կապանացն անաւրէնութեան, գնեսցեն ծառայս եւ ազատեսցեն զանի եւ կաբասցեն եւ ապայ յետին թաւշակին արժանի լիցին։

Ժ. ՌԼԶ. Որք զժառանգս հեթանոսական առն ունի սնունդ այնպէս որպէս զոք զաւձն խնամարկեալ պաշաեսցէ ի ձեռն սովորութեան ամուսնացելոցն ի հեթանոսական ազգին, ուսան զանաստուածպաշտութիւնս նոցա, նոքա զթովչացս ապաշխարութիւնս ընկալցին՝ Գ ամ արտաքոյ ապաշխարեսցեն եւ Գ ամ ընդ ապաշխարողս եկցեն. եւ ապայ հաղորդեսցին ուրինացն Աստուծոյ։

*[ԺԱ. ՌԼԷ]. Քահանայ որ ուրհնէ զմթերս ըմպելեաց յորս անկանի մուկն կամ այլ զազանի սողուն, կամ ի հընձան, ապայ անիծեալ լինի քահանայն եւ անսուրբ իբրեւ զմուկ, ի կարգէն լուծցի եւ անհաղորդ կացցէ, զամս Գ արտաքոյ ազաւթեսցէ ջերմեռանդ ապաշխարութեամբ եւ ապա հաղորդեսցի ուրինացն Աստուծոյ» (Ե էջ 177բ—178ա համեմ. Զ ձեռագրի հետ, էջ 146ար)։

ԱԹԱՆԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր. Էջ 292: *Ընագիրը կազմելիս չօգտագործված մի քանի ձեռագրերում այս վերնագիրն ունի տարբերակներ, օրինակ՝ «Ցանկ կանոնին Աթանասի գլուխք Ղ» (№ № 648, էջ 32բ, 3562, էջ 307ա), «Կանոնք սրբոյն Աթանասին գլուխք ՋՋ» (№ 657, էջ 107բ), «Ցանգ Աթանասի» (№ 659, էջ 118բ), «Կանոնք սրբոյն Աթանասի» (№ № 8459, էջ 62ա, 9311, էջ 59ա)։ № № 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերն սույն վերնագիրը չունեն։*

Թեև «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմասցութիւնք» (Վենետիկ, 1899) ժողովածուում կան մի շարք հարց ու պատասխաններ (էջ 134—234, 347—477), սակայն դրանք այլ բաներ են։ Հունարենում այս կանոնները հայտնի են Տիմոթեոս Աղեքսանդրացու անունով։ Ընդհանուր այս վերնագրի տակ գրված է երկու վերնագիր ևս. առաջին. 'Αποκρίσεις κανονικαὶ Τιμοθέου τοῦ ἁγιωτάτου, ἐπισκόπου 'Αλεξανδρείας *(էջ 636—638. Աղեքսանդրացի ամենասուրբ եպիսկոպոս Տիմոթեոսի կանոնական պատասխանները), 37 հարց ու պատասխան հոդվածներով, որոնց սկզբի 14 հարցերին և պատասխաններին է համապատասխանում Կանոնագրքի ունեցածի սկզբի մասը, իսկ մնացածը միմյանցից տարբեր բաներ են. ապա երկրորդ վերնագիրը՝* Τοῦ αὐτοῦ Τιμοθέου ἕτερα διάφορα κεφάλαια *(էջ 638—643. Նույն Տիմոթեոսի ուրիշ, տարբեր գլուխները), 24 հարց ու պատասխան հոդվածներով, որ, բացառությամբ 23-րդ հոդվածի (էջ 643), չենք գտնում Կանոնագրքում։*

Ցանկ, էջ 282-298: *Այս ցանկը մի քանի ձեռագրերում ևս ունի տարբերակներ. օրինակ՝ № № 648, 3562 ձեռագրերում եղած ցանկը կազմել են հիմք ընդունելով Կանոնագրքի ունեցածը և ապա որոշ խմբագրական աշխատանք կատարել. № № 8459, 9311 ձեռագրերում այն կազմել են հետագայում՝ Կանոնագրքի ունեցածից անկախ. № 657 ձեռագրում եղածը նույնպես տարբեր է մյուսներից և կազմվել է առանձին. իսկ № 659 ձեռագրինը ոչ միայն տարբեր է մյուսներից, այլև այդտեղ հոդվածների վերնագրերը տրված են այբբենական կարգով, զիմացը նշելով հոդվածների համարները։ Որպեսզի այդ ցանկերի մասին ընթերցողը լրիվ գաղափար ունենա, բերենք ամբողջական ձևով № 648 ձեռագրի օրինակը.*

«ա. Վասն որք երախայութեան հաղորդեսցի։

բ. Վասն երախայի որ գիւահար է եւ մկրտել խնդրէ։

գ. Վասն այսահարի որ օրէնս խնդրէ։

դ. Վասն երեխայի որ հիւանդանա եւ ի մտաց թափել եւ մկրտել խնդրէ։

ե. Ցաղագս թէ յաւուր տօնի լիցի կին ընդ առն իւրոյ։

զ. Յաղագս թէ կին երեխա ի մկրտութեան աւուր լինի կանանցն կարգ։

է. Կինոջ որ ծնանի ի պատարագս սուրբ Զատկին։

ը. Յաղագս որ կոչեն զվիճակեալն ի զուգաւորելն, որոց խնամութիւն ի միջի կայ։

թ. Վասն որ հիւանդանա ի պահս սուրբ Զատկին։

ժ. Աշխարհ[ակա]ն որ յերազս լինի և խնդրել հաղորդել։

ժա. Վասն որ յիւր միտս չէ և սպանէ զինքն։

ժբ. Վասն ոչ մերձելոյ առն ի կին իւր աւուր շաբաթու և կիրակէի։

ժգ. Վասն առն որոյ կինն այսահար իցէ։

ժդ. Վասն որոշելոյ զԱրիոսն յորժամ պատարագն մատչի։

ժե. Վասն որք մտաբերեն միայն գործեն զմեղս։

ժզ. Վասն որք զազգական կին առնել։

ժէ. Վասն ոչ ամուսնացեն զհարազատաց որդիս։

ժը. Վասն ոչ առնել առն զքենին իւր կին։

ժթ. Վասն որք ի հեթանոսութեան զազգական իւր կին առեալ իցէ։
ի. Վասն կնոջ որոյ այրն խառնագնաց է։
իա. Վասն այր մարդոյն որ չիցէ ի գործ այրութեան։
իբ. Վասն երեխայի որ զկին թողեալ է և այլ արարեալ՝ մկրտել խնդրէ։
իգ. Վասն որոյ իւր կին հաշմեսցի և յորդորէ զայր իւր կին առնել։
իդ. Վասն որոյ կին պոռնկեսցի եւ ազաչեսցէ զայր իւր չթողուլ ի բաց։
իե. Վասն յանցաւորի որ մահու ցաւք հասանիցեն եւ հաղորդէ։
իզ. Վասն որ ընդ անասնոյ պղծի եւ կին խնդրէ առնել։
իէ. Վասն անասնոյ որ զմարդ սպանէ։
իը. Վասն կնոջ որ բռնադատիցի ամուսնանալն եւ յանձնասպան լինի։
իթ. Վասն որ եղբայր զեղբայր իւր ի փախուստ դնէ եւ դառնա սպանանէ։
իը. (sic) Վասն որ զծառայն իւր սպանանէ ի հարկանելն։
լա. Վասն որ ի գողութիւն սպանի։
լբ. Վասն քահանայի որ աւազակաց դիպեսցի եւ սպանցէ զոք։
լգ. Վասն յերախայութեան զեղբայր իւր սպանանէ մկրտել խնդրէ։
լդ. Վասն որք դիւահարի եւ սպանանէ զոք։
լե. Վասն որ զմահապարտ ոք սպանանէ։
լզ. Վասն որք անյուսութեամբ լան զմեռեալսն։

Վասն որ ի կենդանութեան ոչ կամէր մկրտել եւ ի ժամ մահուն կապեցաւ բերանն, միայն ակնարկէ եւ խնդրէ մկրտել։

լէ. Վասն երեխայից որ բաղմամեղ իցէ եւ խնդրէ մկրտութիւն, տա՞լ մկրտութիւն, թէ ոչ։

լը. Վասն որ ի կենդանութեան ոչ կամէր մկրտել եւ կապեցաւ լեզուն, միայն ակնարկէ եւ խնդրէ մկրտել։

լթ. Վասն մկրտելոյ զմանուկն։
խ. Վասն որ առ ստեամբ մեռանի մանուկն։
խա. Վասն զազանաբեկի։
խբ. Վասն քահանայի որ ի թողեալ կին դառնայ։
խգ. Վասն քահանայի ոչ թողուլ զկին իւր։
խդ. Վասն ակամայ սպանանելոյ։
խե. Վասն քահանայից որ բանադրէ զոք և վախճանի քահանայն։
խզ. Վասն քահանայի որ երդնու։
խէ. Վասն քահանայից ոչ է պարտ երդնուլ։
խը. Վասն քահանայի որն ակամայ երդնու։
խթ. Վասն որ ի սուտ քահանայէ մկրտի·
ծ. Վասն որ ի լուծեալ քահանայէ մկրտի։
ծա. Վասն ոչ առնել քահանայ զխեղն։
ծբ. Վասն քահանայի որ յետ ձեռնադրութեան ուբուկ լինի։
ծգ. Վասն քահանայի կնոջ որ ի դիւթս երթայ։
ծդ. Վասն երեխայ մեռանելոյ ի ծուլութենէ քահանայից։
ծե. Վասն առն որոյ կինն հիւանդանայ։
ծզ. Վասն առն որ զամուսին թողու եւ այլ կին առնէ։
ծէ. Վասն որ զկին թողու եւ այլ արար։
ծը. Վասն կնոջն որ յօտարէ բռնադատի։
ծթ. Վասն որ զկին թողու վասն ամլութեան։
կ. Վասն կնաթողի։
կա. Վասն պոռնկութեան կամ վասն այլ ինչ չարութենէ թողու զկին։
կբ. Վասն ոչ հաղորդել կնահանի։
կգ. Վասն կնոջն որ մեկնի յառնէ։
կդ. Վասն կնահանից եւ այլն։
կե. Վասն որ կուսութիւն խոստանայ պահել։
կզ. Վասն որ զայրի կին առնէ, արժան է քահանայութեան։
կէ. Վասն երկրորդ կին առցէ։
կը. Վասն որ զկնի մկրտութեան սուրբ եկաց։
կթ. Վասն քահանայի որ կին առնէ։

հ. Վասն քահանայ որ գիրքն կորէ։

հա. Վասն քահանայի որոյ ձեռամբ մահ գործի։

հբ. Վասն քահանայից որ յակամայ մահ գործէ այլոց։

հգ. Վասն քահանայի որ ի խրատելն զոք հարուածով մահ գործի։

հդ. Վասն կին քահանային որ դերի երթիցէ։

հե. Վասն ոչ ըմպել զպղծե[ա]լ գինի։

հզ. Վասն որք երդմունս դրեն։

հէ. Վասն որք ուլն կապեն՝ զարիւն արգելու։

հը. Վասն զեղահատաց։

հթ. Վասն չմկրտել զայսահարն մինչև սրբեսցի։

ձ. Վասն քրիստոնեա անուն է հաղորդս ոչ տալ։

ձա. Վասն դիւահարին որ ի վարս սուրբ իցէ, հաղորդ տալ։

ձբ. Վասն կին մոգի որ քրիստոնեա կամի լինել եւ մկրտութիւն խնդրէ։

ձգ. Վասն թէ ոք ի քրիստոնէից մոգ իցէ եւ կինն նորա օրէնս խնդրէ։

ձդ. Վասն կախարդաց որ պանիր տան ծամել։

ձե. Վասն ոք երախա զիպի բանակի կամ ի պատերազմի եւ ազաչէ զքահանայ մկրտել։

ձզ. Վասն յանդաւորի որ ցաւք մահու հասանի։

ձէ. Վասն որք յերեխայութեան եւ յետ մկրտութեան մահ հասանի։

ձը. Վասն որք զՔրիստոս ուրանա։

ձթ. Վասն անասնադիւաց։

ղ. Վասն երդման քահանայից» (№ № 648, էջ 32բ—34ա, համտ. ձեռ. № 3562, էջ 307ա—308բ, տես նաև ձեռ. № № 8459, էջ 62բ—67ա, 9311, էջ 59բ—64բ, 657 էջ 107բ—108բ)։

№ 659 ձեռագրի ունեցած ցանկը նույնպես անկախ է կազմված կանոնագրքի բնագրում եղածից։ Ահա այն.

«Ցանգ Աթանասի.

ե. Աւնակնոջ։
մ. Աշխարհականաց։
մբ. Այսահարաց։
մդ. Ամուսնացելոց։
մդ. Արիանոսաց։
իե. Անասնադիտաց։
իզ. Անասունն որ զմարդ սպանանէ։
իէ. Ակամայից։
ծէ. Ամուլից։
հ. Անդաստանից։
ձե. Ամպարըշտաց։
մա. Դահավիժաց։
լ. Գողոց։
խ. Գազանաբեկից։
բ, լդ, հթ. Դիւահարաց։
խե. Դատաստանի։
հէ, հը. Դիւահարաց։
ա. դ. իա. Երախայից։
դ. Երախա կնոջ։
իը. Եղբարց։
լբ. Երախայից սպանողաց։
լդ, լէ. Երախայից
խդ, խէ. Եր[զ]մնահարաց։
կդ, ձգ. Երախայից։
հգ. Երդմանց։
հզ. Թովչաց։
ծբ. Ժողովրդական։
ծթ. Խառնագնացից։
է, լը. Ծննդականաց։
իթ. Ծառայից։
կթ. Ծառայից քահանայից։
ծա, հբ. Կանանց քահանայից։
ծդ, ծը. Կնահանաց։
ծե, ծզ. Կնաթողաց։
կ. կբ. Կնահանաց։
կդ. Կուսանաց։
կէ. Կարգընկեցաց։
ձբ. Կարասից։
մդ. Հաբազատ եղբարց։
մէ. Հարազատ որդւոց։
մը. Հեթանոսաց։
իբ. Հաշմանդամոց։
հա. Հարկանողաց։
հդ. Հնձանաց։
դ. Մկրտելոց։
մե. Մեղանչողաց։
ծ. Միականից։
ձ, ձա. Մոգից։
ձգ. Ցանցաւորաց։
ծդ. Ուրուկաց։
հե. Ուլն կապողաց։
ի. Ջեղոքաց։
իդ. Պոռնիկ կնոջ։
ծթ. Պոռնկաց։

կա. Պատճառաւ հաւատոց մեկնողաց։
լգ, խգ. Սպանողաց։
լթ. Ստեամբ սպանողաց։
խր. Սուտ քահանայից։
թ. Վիճակելոց։
իգ. Վնասակարից։
կգ. Վանականաց։
ը. Տկարաց։
կե. Տղայոց առնակնաց։
լա, խա, խբ. Քահանայից։
լե. Քրիստոնէից։
խդ, խթ. Քահանայից։
կը. Քահանայից կրձատելոց։
ձդ. Քահանայից երդմանց» (էջ 118բ—119բ)։

Այստեղ ևս պակասում են Կանոնագրքի ԺԸ, ԾԻ հոդվածները և սրանց վերնագրերը։ Իսկ №№ 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերում չի պահվել այս կանոնախմբի ցանկը։

Երկրորդ վերնագիր, էջ 289։ *Վերևում նշված ձեռագրերում այս վերնագիրը ևս ունի տարբերակներ. «Հարցմունք պէսպէս եւ պատասխանիք Աթանասի Աղէքսանդրու եպիսկոպոսի. սորին կանոնիս գլուխք Ղ» (№№ 048, էջ 34ա, 3562, էջ 308բ, հմմտ. նաև №№ 649, էջ 51ա, 650, էջ 55բ, 651, էջ 41ա, 2964, էջ 74ա). «Կանոնք սրբոյն Աթանասի հարցումն եւ պատասխանիք» (№№ 8459, էջ 67ա, 9311, էջ 64բ). «Հարցմունք պէսպէս առ (№ 657՝ ասէ) երանելին սուրբ Աթանասն եպիսկոպոսապէտն Աղէկսանդրի եւ պատասխանիք նմին» (№№ 659, էջ 120ա, 657, էջ 108բ. «Հարցմունք պէսպէս եւ դան[ազ]ան պատասխանիք սրբոյն Աթանասի Աղէքսանդրացոյ եպիսկոպոսի է ասացեալ» (№ 3369, էջ 69բ)։*

Առաջաբան, էջ 289—290։ *Մի քանի ձեռագրերում առաջաբանը համառոտ է և զգալի շեղումներ ունի Կանոնագրքում եղածից. «Ի ժամանակին յայնմիկ երեեցաւ այր մի արիանոս Գորգոս անուն ի Կապողակիէ և հասեալ յԱղէքսանդր, շարժէր զքաղաքն ի վերայ Աթանասի, աւգնէին նմա եւ իշխանքն. զոր երանելին Աթանաս որոշեալ էր յեկեղեցւոյ, բայց մեծ մասն քաղաքին ընդդիմադարձ լինէին աղանդոյն։ Իսկ չարքն հալածական արարեալ զԱթանաս յաթոռոյն եւ հասեալ Գորգիանոս՝ի Սելեկիա ժողով արարեալ հաստատէր զաղանդն։ Իսկ Աթանաս գոչէր արտասուօք առ Աստուած հանդերձ սուրբ ճգնաւորօքն, որ էին ի ժամանակին, մինչեւ բառնայր Աստուած զԳորդիանոս ի կենաց։ Եւ ապա դարձաւ Աթանաս յԱղէքսանդրա եւ կարգէ կանոնս եկեղեցոյն գլուխս» (№ 648, էջ 34ա, բ, հմմտ. նաև №№ 649, էջ 51բ—52ա, 650, էջ 56ա, 651, էջ 41ա, 3369, էջ 69բ, 2964, էջ 74ա, բ, 3562, էջ 309ա)։ №№ 8459 (էջ 62աբ) և 9311 (էջ 59աբ) ձեռագրերում առաջաբանը, որը համառոտ է քան նախորդը և կազմված է, հավանաբար, Կանոնագրքում եղած համապատասխան առաջաբանից, գտնվում է ոչ թե ցանկից հետո, ինչպես Կանոնագրքում է, այլ ցանկից առաջ. ահա այդ առաջաբանը. «Երեւեցաւ այր անօրէն մի Գորգիանոս անունս Արիոս անուն։ Իսկ երանելին յորդարուի արտասուօք եւ աղօթիւք ընբերանէր եւ կանոնք կարգէր գլուխս ՂԱ»։ Իսկ №№ 659 և 657 ձեռագրերը առաջաբանը չեն պահել։*

Հոդ. Ա, էջ 290—291 (հուն. հոդ. 1, էջ 630)։ *Հունարենի Հարցի* ὡς ἐτῶν ἑπτά, ἢ ἄνθρωπος τέλειος *հատվածը հայերենում արտահայտված է միայն «կատարեալ իցէ» բառերով։*

Հոդ. Բ, էջ 291 (հուն. հոդ. 2, էջ 630) *Հայերեն Հարցի վերջին «գիւահարն» բառը հուն.-ը չունի։ Հունարեն Պատասխանի սկզբի* „Ἐὰν ὁ δαιμονιζόμενος μὴ καθαρισθῇ ἀπὸ τοῦ ἀκαθάρτου πνεύματος *հատվածը Կանոնագրքում այսպես է. «Եթէ ոչ սրբեսցի ի պիղծ այսոյն», ուր չի պահվել* δαιμονιζόμενος *(դիվահար) բառը։*

№ 659 և 057 ձեռագրերը չունեն Հարցի «պարտ է առնուլ, թէ ոչ» հատվածը։

Հոդ. Գ, էջ 291 (հուն. հոդ. 3, էջ 630)։ *Հուն. Հարցի* πιστός*-ի դիմաց հայերենն ունի «կնքաւոր». Թարգմանությունը բառացի չէ՝ «հաւատացյալ», այլ իմաստով նույնն է՝ «կնքված»։*

Հոդ. Դ, էջ 291—292 (հուն. հոդ. 4, էջ 630—631)։ *Տարբեր է միայն մի հատվածը, հուն.-ի* ἕως οὗ *(քանի դեռ է) բառերի դիմաց հայերենում կարդում ենք մի ընդարձակ հատված՝ «այլ գի եւ աղաչանքն եւս յերկար լինիցին մինչև յաւուրս էջ»։*

Հոդ. Ե, էջ 292 (հուն. հոդ. 5, էջ 631)։ *Հունարեն Հարցի* ἢ ἀνὴρ μετὰ γυναικός *հատվածը չի պահվել հայերենում, հավանաբար միտքը նախորդ նախադասության մեջ կրկնված լինելու պատճառով։ Այդ հատվածը հաջորդում է «ի գիշերին» բառին։ Իսկ հայերեն Հարցի «յաւուրն» և Պատասխանի «ասելով ի սովորութենէն ասէ» բասերը հունարենը չունի։*

Հոդ. Զ, էջ 292—293 (հուն. հոդ. 6, էջ 631)։ *Հունարեն Հարցի* ἵνα φωτισθῇ *(որպեսզի մկրտվի (բառացի լուսավորվի) բառերի դիմաց հայերենն ունի «լինել երախայ»։ Հայերեն Հարցի վերջին մասը համառոտ է, քան հունարենը, վերջինիս* καὶ ὑπερτίθεσθαι καὶ πόσον ὑπερθέσθαι *(և հետաձգել և ինչքան (ժամանակ) հետաձգել) հատվածը հայերենը չունի։*

Մի քանի ձեռագրերում այս հոդվածի սկզբի մասն ավելի պարզ է գրված. «Եթէ կին սրեխայ յորժամ կամիցի մկրտել» (№ 651, էջ 41բ, 2964, էջ 75ա, 3369, էջ 70ա)։

Ո ձեռագրում նախքան հոդվածը կարդում ենք. «ուր միտոն ոչ իցէ և երթիցէ դիւ-րովի» հատվածը (էջ 64ա), որը ԺԱ Հարցի սկիզբն է և այստեղ կրկնված է։ Հունարենի 7-րդ հոդվածը, որը վերաբերում է դաշտան ունեցող կանանց «սուրբ խորհրդին» մասնակցելուն, հայերենում չի պահվել, որովհետև նախորդ 6-րդ հոդվածում խոսվում է այդ մասին։

Հոդ. Է, էջ 293, (հուՆ. հոդ. 9. էջ 631): *Հունարեն Հարցի* τῆς ἀγρυπνίας καὶ τοῦ μὴ πίνειν οἶνον *հատվածը որը պետք է դանվեր «տալ վասն» բառերի միջև հայերենում չի պահ-վել։ Հունարեն Պատասխանում* ἀσθενεία *(թուլյ, ակար) բառը հայերենում գրված է «ի չար-չարանս», իսկ հունարենի* μεταλαβεῖν καθὼς βούλεται *(ընդունի ինչպես ուզում է) հատվածի փոխարեն հայերենում գրված են «սակաւիկ ինչ» բառերը։*

Հոդ. Ը, էջ 293 (հուՆ. հոդ. 10, էջ 632): *Հայերեն Հարցի «պահք» բառը հունարենը չունի։ Հարցի վերջին հատվածը հայերենում մի փոքր համառոտ է. հուն.-ի* ἢ ἀπολύει αὐτὸν ὁ κληρικὸς λαμβάνειν ὃ δύναται, ἢ καὶ ἔλαιον καὶ οἶνον, διὰ τὴν πολλὴν αὐτοῦ ἀσθένειαν *հատ-վածը հայերենում գրված է «թէ արձակեսցի ճաշակել . . . վասն հիւանդութեանն» ձևով։ Հայերենը շեղվում է հունարենից նաև Պատասխանում. նախ հուն.-ի* ὁ ἀσθενῶν *բառը հայերենում փոխարինված է «դայնպիսին»* (այսինքն հիվանդին, ուժասպառ մարդուն) *բա-ռով, իսկ հուն.-ի* τὸ γὰρ μεταλαμβάνειν ἔλαιον τὸν ἅπαξ ἐκτακέντα δίκαιόν ἐστιν *(որովհետև հյուծվածին ձեթ ընդունելն արդեն արդար է) հատվածը հայերենում փոխարինված է բո-լորովին այլ իմաստով՝ «բայց յետ Պենտակոստէին հատուսցէ», որը ոչ մի կապ չունի հուն.-ի հետ։*

Հոդ. Թ, էջ 294 (հուՆ. հոդ. 11, էջ 632): *Հայերեն Հարցում եղած «լպրշիցէ» բառը գրված է հուն.-ի* ἀκούσῃ *(լսի) բասի փոխարեն, իսկ հուն.-ի* ἀκολουθῆσαι *(հետևել) բառը հայերենում գրված է «աղաւթս առնել ի վերայ նորա» ձևով։*

№ № 8459, 9311 ձեռագրերում այս հոդվածի Հարցը ավելի պարզեցված է. «Թ. Եթէ կոչեսցէ ոք դնշանաւծն յամուսնութիւն եւ ինքն պղծուել է անօրէնութեամբ կամ ի քոր այն կնոջն մերձեցել է, որ իւր նշանած էր, պարտ է առնել, թէ ոչ» (էջ 69բ, էջ 67ա)։ Իսկ Պատասխանը նշված երկու ձեռագրերում էլ շատ համառոտ է. «Ոչ է պարտ առնել» (№ № 8459, էջ 69բ, 93111, էջ 67ա)։

Հոդ. Ժ, էջ 294—295 (հուՆ. հոդ. 12, էջ 632—633): *Հուն. Հարցի* ἐπιτρέψαι *(թույ-լատրել) բառը միայն հայերեն չունի։*

№ № 8459 և 9311 ձեռագրերում Հարցը գրված է այսպես. «Եթէ մարդ որ խաբէ սա-տանայ յերազս, պա՞րտ է հաղորդել յայն օրն, թէ ոչ։ Պատասխանի. Գ աւուրս սրբեսցէ զանձն եւ հաղորդեսցի, ապա թէ ոչ դադարէ փորձելն նա ոչ հաղորդի մինչեւ դադարի փորձութիւնն ի նմանէ» (№ № 8459, էջ 69բ—70ա, 9311, էջ67աբ)։ Իսկ № 649 ձեռագրում չի պահվել Պատասխանի «ապա թէ ոչ, եւ ոչ եւս դադարէ փորձիչն, յայնմ ժամանակի յորժամ պարտ է նմա հաղորդել» հատվածը (էջ 52բ)։

Հոդ. ԺԱ, էջ 295 (հուՆ. հոդ. 14, էջ 633): *Հայերեն Հարցի «և երթիցէ դիւրովի» բա-ռերը գրված են հուն.-ի* χειρισθῆται *(իր վրա ձեռք բարձրացնի)—ի փոխարեն։ Հայերենի «կամ այլ ինչ մահու մեռանի» հատվածը հունարենը չունի։ Հայերեն Պատասխանը ընդհանուր առմամբ համապատասխանում է հունարենին, միայն հայերենը չունի հուն.-ի* ὀλιγωρίας *(արհամարհանք) և* τὸν κληρικὸν *(հոգևորականը) բառերը։*

№ № 8459, 9311 ձեռագրերում և՛ Հարցը և՛ Պատասխանը ավելի պարզեցված են, և դա, իմիջիայլոց, վերաբերում է բազմաթիվ հոդվածների. «Հարցումն. Որ յիւր միտս ոչ իցէ եւ երթայ անդնի յորոգայթ կամ ի քար ի վայր կամ ի գետ կամ յայլ ցեղ ճ̣ւսս լինի նմա եւ մեռանի, պա՞րտ է ի վերայ նորա պատարագս մատուցանել, թէ ոչ։

Պատասխանի. Եթէ իւր կամաւն գնաց անգաւ յորոգայթն, եւ ինքն գիտէր որ ճ̣ւսս կու լինէր ի ճանապարհին, եւ այլք ասացին նմա եւ ոչ լուաւ նոցա, նա ոչ է պարտ նմա պատարագ մատուցանել։ Ապա թէ ակամայ եղեւ մահն, պարտ է մատուցանել պատա-րագ» (№ № 8459, էջ 70ա, բ, 9311, էջ 67բ—68ա)։

Հոդ. ԺԲ, էջ 295—296 (հուՆ. հոդ. 15, էջ 633): *Հայերեն Հարցի «յոյժ» և «կին» (առ-նել) բառերը հուն.-ը չունի, իսկ վերջին* ὀφείλει λαβεῖν ἑτέραν *(պետք է ուրիշին առնել) հատվածը հայերենում և՛ համառոտ է և՛ տարբեր։ Սրա դիմաց հայերենն ունի «աւրէն է»։*

Հուն. Պատասխանի վերջին καὶ περὶ τούτου τι ἀποκρίνεσθαι οὐκ ἔχω ἢ ἐφευρίσκω κατὰ δὲ πνευματικὴν ἀπόφασιν, οὐκ ὀφείλει *մասը հայերենը չունի։*

Ահա այս հոդվածը երկու այլ ձեռագրերի նյութերով. «Հարց. Եթէ կինն այսահարի յոյժ եւ ոչ ազատի եւ այրն նորա ոչ համբերէ կամի այլ կին առնուլ, օրէ՞ն է, թէ ոչ։

Պատասխանի. Եթէ օր քան զաւր ցաւն սաստկանայ՝ պարտ է արձակել, ապա եթէ ազատի, ոչ է պարտ թողուլ». (№ № 8459, էջ 70ր, 9311, էջ 68ա)։ № № 648, 3362 ձեռագրերում այս հոդվածը գրված է ԺԳ համարի տակ, իսկ ԺԳ-ն՝ ԺԲ-ի։

Հոդ. ԺԳ, էջ 296 (հուն. հոդ. 13, էջ 633)։ Հայերեն Հարցում «յաւուր շաբաթու և կիւրակէի» հատվածի դիմաց հուն.-ն ունի τῇ μερῶν τῆς ἑβδομάδος. հայերենում Հարցը գրված է կոնկրետ, իսկ հունարենում ընդհանուր՝ «շաբաթվա որ օրերը» ձևով։ Հունարենի τῇ μερῶν τῆς ἑβδομάδος հատվածի թարգմանությունը նույնությամբ գտնում ենք № № 659 և 657 ձեռագրերում (էջ 123ա, էջ 109ր)։

Ահա № № 8459, 9311 ձեռագրերի ունեցածը. «Հարց. Եթէ այր եւ կին ամուսնանան յաւուրս պահոց եւ կիրակէի եւ յայլ սուրբ յաւուրսն, զի՞նչ պարտ է առնել նոցա։

Պատասխանի. Ապա եթէ անխափան գործէ եւ զսուրբ աւուրսն ոչ պահէ, ոչ հաղորդի մինչև դառնա ի գործոյն, զղջայ եւ խոստովանի» (էջ 70ր—71ա, էջ 68ա, բ)։

Հոդ. ԺԴ, էջ 296—297 (հուն. հոդ. 9, էջ 632)։ „Ἐρώτησις θ΄. Εἰ ὀφείλει κληρικὸς εὔχεσθαι παρόντων Ἀρειανῶν, ἢ ἄλλων αἱρετικῶν, ἢ εἰ οὐδὲν αὐτὸν βλάπτει, ὁπόταν αὐτὸς ποιῇ τὴν εὐχήν, ἤγουν τὴν προσφοράν:

Ἀπόκρισις. Ἐν τῇ θείᾳ ἀναφορᾷ ὁ διάκονος προσφωνεῖ πρὸ τοῦ ἀσπασμοῦ· Οἱ ἀκοινώνητοι περιπατήσατε. Οὐκ ὀφείλουσιν οὖν παρεῖναι, εἰ μὴ ἂν ἐπαγγέλλωνται μετανοεῖν καὶ ἐκφεύγειν τὴν αἵρεσιν“.

Հայերենի և՛ Հարցը և՛ Պատասխանը խիստ համառոտ են.

№ 3369 ձեռագրում Պատասխանը շարունակվում է. «եւ ապա մատուցանէ զպատարագն» (էջ 71ր)։

Հոդ. ԺԱ, էջ 297։ Սկսած այս հոդվածից՝ հայերենում բոլորովին տարբեր հոդվածներ են նշված, որ նույնիսկ մոտավոր կերպով չենք գտնում հունարենում։ Իսկ թե հայերենի թարգմանության հուներեն բնագիրը ինչպիսի՛ն է եղել՝ չկարողացանք պարզել։ Այսուհետև կնշենք Ծանոթագրություններում օգտագործված ձեռագրերի տված տարբերությունները։

Հոդ. ԺԶ, էջ 297։ № 3369 ձեռագրում Պատասխանը ընդարձակ է. «Ոչ է պարտ եւ ընդոն այնպիսի չար եւ պիղծ մերձենալ ի սրբութիւնսն սրբոց» (էջ 72ա)։

Հոդ. ԺԷ, էջ 297։ № 3369 ձեռագրում Պատասխանը դարձյալ ընդարձակ է. «Ոչ է ընդոն եւ արժան, չեն միմեանց այր եւ կամ կին, այլ շնութիւն եւ պոռնկութիւն է» (էջ 72ա)։ bcfgq ձեռագրերում այս հոդվածը գրված է ԶԷ և ԶԸ հոդվածների միջև՝ ԶԸ համարի տակ։

Հոդ. ԺԸ, էջ 298։ № № 659, 657 ձեռագրերում չի պահվել այս հոդվածը. իսկ № № 8459, 9311 ձեռագրերում թեև նույնպես չի պահվել, բայց գրիչը ավելորդ չի համարել գրել. «Չ̄ց ԺԸ գրած է» (էջ 71ր, էջ 69ա)։ Հավանաբար գրիչն հարկ չի համարել այդ Հարցը ընդօրինակել, քանի որ նախորդ՝ ԺԶ, ԺԷ հոդվածները ևս վերաբերում են հարազատների ամուսնության խնդրին։ Ուստի ընդօրինակելով վերջին երկու հոդվածները, հաջորդ՝ ԺԸ-ը բաց է թողել։ Այս ցույց է տալիս, թե ինչպես մի շարք ձեռագրերում, որ չենք օգտագործել ո՛չ Կանոնագրքի համահավաք բնագիրը կազմելիս և ոչ էլ Ծանոթագրություններում, Կանոնագիրքը երբեմն քմահաճ կերպով խմբագրել են կամ «թեթևացրել» հոդվածներից։ № 3369 ձեռագրում Պատասխանը դարձյալ ընդարձակ է. «Ոչ է ընդոն եւ պարտ, զի կատարեալ գիջութիւն եւ չար պոռնկութիւն է» (էջ 72ա)։

Հոդ. ԻԱ, էջ 298—299։ Հմմտ. № № 8459 և 9311 ձեռագրերի ունեցածը. «Հարց. Եթէ մարդ որ այր ոչ է եւ կինն ելանէ եւ այլ այր առնէ, պա՞րտ է իրկաթող առնել զայն, եթէ խեղճ ունել եւ կամ թէ այրն չարձակէ զկինն եւ ասէ. «Զքեզ Աստուած ինձ է տուեալ, կաց եւ պաշտեա զիս», զի՞նչ է առնել նոցա, արձակե՞լ պարտ է, որ այլ չար չլինի, բայց ապաշխարել։ [Պատ.] Պարտ է եւ ապա օրէնս առնուլ» (էջ 72ա, էջ 69ր—70ա)։ № 3369 ձեռագիրը չի պահել «չարձակէ զկինն ի բաց եւ ասէ այսպէս, թէ ինձ» հատվածը։

Հոդ. ԻԲ, էջ 299։ № № 8459, 9311 ձեռագրերում այս հոդվածը նույնպես չի բերված, փոխարենը՝ գրիչը նշել է. «Գրած է ԻԲ» (էջ 70ա)։

Հոդ. ԻԳ, էջ 299—300։ Հմմտ. № № 8459, 9311 ձեռագրերում եղածը. «ԻԳ. Հարց. Եթէ կին ուրուք հաշմիցէ և ասէ ցայր իւր «Ոչ եմ ի կարգ կանանց, արա դու քեզ կին, որ զքո տուն ի շէն պահէ և ինձ օր զաւուր հաց տուր և ես ինձ աղօթք առնեմ մինչև յօր մահ-

*․ան իմոյ». և ասէ այրն. «Առնեմ զամենայն զոր ասես»: Զի՞նչ պարտ է առնել նոցա:
Պատ. Վնասակար է, ոչ է արժան այլ կին առնուլ, մինչև այն կինն մեռանի» (էջ 72ա, բ, էջ 70ա)։*

Հոդ. ԻԵ, էջ 300—301: *Բնագրի «Թէ յանցաւոր ոք է և յանդգնեալ» հատվածի փոխարեն № № 8459, 9311 ձեռագրերում կարդում ենք. «Եթէ ոք անզանի» (էջ 73ա, էջ 72ա)։ Իսկ № 651 ձեռագրում չի պահվել «յազգ մահու անկանել եւ աւրէնս խնդրէ» հատվածը։*

Հոդ. ԻԶ, էջ 301: *№ 3369 ձեռագրում Պատասխանն այսպես է. «Կինն իշխէ մեկնել այրէն, ոչ է պարտ այլ կին կամ այր առնել երկոքին» (էջ 73ա)։*

Հոդ. ԻԷ, էջ 301: *№ 651 ձեռագրում չի պահվել այս հոդվածը։ Իսկ № № 3369, 650 ձեռագրերում Պատասխանն ընդարձակ է. «Որպէս եւ օրէնքն ասեն՝ որ սպանանէ զմարդ, փախանակ նորա հեղցեն զարիւն նորա» (էջ 72ա, էջ 60բ)։*

Հոդ. ԻԹ, էջ 302: *№ № 8459, 9311 ձեռագրերում չի պահվել այս հոդվածի «իրրեւ վկայիցեն բաղումք, որ ականատես յեալ են այնմ ամենայնի» հատվածը։*

Հոդ. Լ, ԼԲ, էջ 303: *№ № 8459, 9311 ձեռագրերում այս երկու հոդվածները չեն ընդօրինակված, քանի որ գրչի կարծիքով վերջիններիս միտքն արտահայտված է ԻԹ հոդվածում. ուստի այս հոդվածների փոխարեն գրում է. «Լ. ԼԲ այս Բ տունս գրած է» (էջ 74բ, էջ 72բ)։*

Հոդ. ԼԱ, էջ 303: *Մի քանի ձեռագրերում Պատասխանն ընդարձակ է. «Քննել հաւաստեաւ. ըստ օրինացն եւ պատասխանի տալ զարժանն» (№ 648, էջ 38ա. տես նաև № № 649, էջ 55ա, 650, էջ 61ա, 651, էջ 45ա, 3369, էջ 73բ, 3562, էջ 313ա)։*

Հոդ. ԼԲ, էջ 303: *№ 659 ձեռագրում Պատասխանն այսպես է. «Ոչ է արժան կալ ի քահանայութեան, վասն զի ոչ է իշխանութիւն քահանայի սպանանել զոք՝ ոչ զմարդ եւ ոչ զանասուն» (էջ 127ա)։ Թվում է այս ավելի ճիշտ է։*

Հոդ. ԼԴ, էջ 304: *№ 8459 ձեռագրում գրիչն այս հոդվածը չընդօրինակելով նշում է. «ԼԴ գրած է» (էջ 74բ). հավանաբար նկատի ունի ԻԹ հոդվածը։ Իսկ № 9311 ձեռագրում այս հոդվածը նույնպես չի պահված, բայց ընդօրինակելով հաջորդ՝ ԼԴ հոդվածը, դիմացը նշում է երկու համար՝ ԼԴ և ԼԴ (էջ 73ա)։*

Հոդ. ԼԷ, էջ 305—306: *№ № 8459, 9311 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել, իսկ № 651 ձեռագրում ԼԷ—ԽԶ հոդվածները գրված են ոչ թե կանոնագրքի բնագրի հաջորդականությամբ, այլ վերջինիս Ծ և ԾԱ հոդվածների միջև։ № № 3369, 650 ձեռագրերում Պատասխանն ընդարձակ է. «Պարտ է տալ, թէ ի հակէ լինի, զի խոստովանող Քրիստոսի է» (էջ 74բ, էջ 62ա), իսկ № № 659, 657 ձեռագրերում Պատասխանը համառոտ է. «Մկրտել արժան է» (էջ 128ա, էջ 111բ)։*

Հոդ. ԼԸ, էջ 306: *Մի քանի ձեռագրերում Հարցը ընդարձակ է. «Թէ ոք յերախայից ընդ որում հանապազ ջանայք յիշեցուցանել զպատուիրանն Աստուծոյ եւ ոչ կամեցաւ գալ ի մկրտութիւն, եւ հասին նմա յանկարծօրէն ցաւք եւ կապեցաւ բերան նորա, ոչ զմեղս իւր խոստովանել կարաց և ոչ դհաւատն զաւանել ի սուրբ երրորդութիւնն, որպէս վայել էր, այլ միայն ակնարկեաց, թէ «Տուք ինձ կնիք». պարտ է տալ, թէ ոչ» (№ 648, էջ 38բ. տես նաև № № 649, էջ 56ա, բ, 650, էջ 62ա, բ, 651, էջ 46բ, 657, էջ 111բ, 659, էջ 127բ, 2964, էջ 31ա, բ, 3369, էջ 74բ, 3562, էջ 314ա)։ № № 8459, 9311 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։*

Հոդ. ԼԹ, էջ 306: *Հմմտ. «Հարց. Եթէ կին յորժամ ծնանի և մանուկն ի պատահմանէ մերձ ի մահ լինի ի նմին աւուր, պա՞րտ է մկրտել։*

Պատ. Յորժամ եւ հանդիպի, պարտ է մկրտել» (№ № 8459, էջ 76ա, 9311, էջ 74ա)։

Հոդ. Խ, էջ 307: *Հմմտ. «Հարց. Եթէ ի ծիծ տալ կնոջն զերախայն խեղդէ» (№ № 8459, էջ 76ա, 9311, էջ 74ա)։ № 659 ձեռագրում Պատասխանն այսպես է. «Ապաշխարել պարտ է, զոր հրամայաց Նիկիականն Ե ամ» (էջ 129ա)։ Նկատի է առնված Նիկիական Երկրորդ կանոնախմբի ԼԲ հոդվածը, ուր ասված է. «Որք զակամայ սպանութիւնս առնեն Ե ամ ապաշխարեսցեն» (№ 659, էջ 88բ)։*

Հոդ. ԽԲ, էջ 307—308: *№ № 8459 և 9311 ձեռագրերում չի պահվել այս հոդվածի «պաշտել զպաշտաւն քահանայութեան, և յետ ժամանակի անդրէն ի կին իւր դարձցի» հատվածը (էջ 76բ, էջ 74բ)։*

Հոդ. ԽԳ, էջ 308: *№ № 8459 և 9311 ձեռագրերում Պատասխանը համառոտ է. «Պարտ է ապաշխարել» (էջ 77ա, էջ 75բ)։*

Հոդ. ԽԵ, էջ 308—309: *Բնագրում Հարցի «յաղաւթից» բառի փոխարէն երկու ձեռագրեր ունեն «յեկեղեցոյ» բառը (№№ 8459, էջ 77ա, 9311, էջ 75բ)։ Պատասխանը երկու այլ ձեռագրերում շարունակվում է. «Արժան է ի ներքս ածել, որ կացցէ ի տեղոջ պաշտման նորա» (№ № 3369, էջ 75բ, 650, էջ 63ա) հմմտ. № № 659 և 657 ձեռագրերի ունեցածը (էջ 130ա, էջ 112ա)։*

Հոդ. ԽԶ, էջ 309: *Հմմտ. № № 8459 և 9311 ձեռագրերը. «ԵԹէ դատաստան ինչ լինիցի ընդ քահանայի եւ ընդ այլ ումեք ի մարդկանէ եւ յերդումն տան զքահանայն, վասն բազում ընչից եւ ոչ կարէ քահանայն զերծանիլ ի գրպարտողացն եւ ոչ ունի ինչք, որ վճարէ եւ ընդանիք քահանային ոչ առնուն յանձն զտուգանս տալ իբրեւ բռնազատեսցի քահանայն եւ երդնու արդար, պարտ է անխէղճ կալ ի քահանայութեանն, Թէ ոչ» (էջ 77բ, էջ 75բ—76ա)։ Կանոնագրքի բնագրի «բազում կարասւոյ, որ գրպարտեն» հատվածը № 3369 ձեռագրում, կարծես, աղճատված է. «բազում ի կարօտոյ զի որպէս զիցեն» (էջ 75բ)։*

Հոդ. ԽԷ, էջ 309—310: *Հմմտ. №№ 8459 և 9311 ձեռագրերի ունեցածը. «Հարց. ԵԹէ ոք ի քահանայից վկայ եւ միջնորդ իցէ մեծ իրաց, զի՞նչ եւ իցէ եւ դատախազն ոչ հաւատայ վկայութեան քահանային, այլ խեռ ունելով յերդումն տայ զքահանայն. պա՞րտ է քահանային երդնուլ զճշմարիտն եւ ոչ Թողուլ զրկանք լինել ի մէջ նոցա, Թէ ոչ, առնու յանձն զերդումն եւ մին զմէկ այլն զրկէ և խլէ զնորա ապրանքն» (էջ 77բ—78ա, էջ 76ա)։ Իսկ Պատասխանի վերջին մասը. «այլ եղիցին ձեր բանն . . . . այսինքն է ի սատանայէ» չի պահվել նշված ձեռագրերում։ Ե ձեռագրում Հարցի մեջ կրկնվել է սկզբի «ԵԹէ ոք ի քահանայից... բաժնից եւ զեաւղից» հատվածը։*

Հոդ. ԽԸ, էջ 310—311: *Հոդվածի փոխարէն № № 8459 և 9311 ձեռագրերում դրիչը նշել է. «ԽԸ գրած է» (էջ 78ա, էջ 76բ), նկատի է առել ԽԷ հոդվածը և ԽԸ-ն չի ընդօրինակել*

Հոդ. ԽԹ, էջ 311: *Բնագրի «Թէ ոք յանդուգն ի մարդկանէ» հատվածի փոխարէն № 3369 ձեռագրում պահվել է «ԵԹէ ոք յանդգնուԹիւն արասցէ աշխարհական ղոլով» (էջ 76ա)։*

Հոդ. Ծ, էջ 311—312: *Մի քանի ձեռագրերում Պատասխանը շարունակվում է. «ընկալնել արժան է եւ զվրէժխնդրութիւն գործոյն Աստուծոյ Թողուլ» (№ № 648, էջ 40ա, 650, էջ 64ա, բ, 3562, էջ 316ա)։*

Հոդ. ԾԲ, էջ 312: *№ № 659 և 657 ձեռագրերում չի պահվել այս հոդվածը։*

Հոդ. ԾԳ, էջ 312: *Բնագրի «առ հարկի եւ ապաշաւէ» հատվածի փոխարէն երկու ձեռագրերում կարդում ենք. «յահէ քահանայիցն եւ փոշիմանի» (№ № 8459, էջ 79բ 9311, էջ 77բ)։ Երեք ձեռագրերում Պատասխանը շարունակվում է. «Չէ արժան ունել վասն զի զինքն նուիրեաց զիւաց» (№ 648, էջ 40ա, տես նաև № № 3369, էջ 77բ, 3562, էջ 316ա)։*

Հոդ. ԾԵ, էջ 313: *Երկու ձեռագրերում Պատասխանը շարունակվում է. «Չէ արժան այլ կին առնել, զի եւ ոչ մեք ունիմք համարձակութիւն յաղագս այգորիկ հրաման տալ» (№ № 648, էջ 40ա, 3562, էջ 316բ)։ Այս և ԾԶ հոդվածները № № 8459 և 9311 ձեռագրերում գրիչը զուրս է նետել, նշելով «ԾԵ, ԾԶ գրած է» (էջ 80ա, էջ 78բ)։ Նույն բանը կրկնված է նաև ԾԸ և Կ հոդվածների նկատմամբ։*

Հոդ. ԿԲ, էջ 315—316: *Պատասխանը № 3369 ձեռագրում այսպես է. «Ոչ է պարտ եւ ընրոն ընգունելի» (էջ 77բ)։*

Հոդ. ԿԴ, էջ 316: *Երկու ձեռագրերում հոդվածն ընդարձակ է. «Հարց. ԵԹէ ոք ի պատճառս հաւատոց կամեսցի մեկնել յառնէ իւրմէ, կամ այր ի կնոջէ իւրմէ եւ անյաւժարն ի նոցանէ այլ առնիցէ կին կամ կինն՝ այր, զի՞նչ պարտ է առնել։ Պատասխանի. Ոչ է արժան մեկնել ի միմեանց եւ հաւատքն չեն ընդունելի» (№ 659, էջ 133բ. տես նաև № 657, էջ 113ա)։ № 3369 ձեռագրում ԿԳ հոդվածը գրված է ԿԴ հոդվածի տեղը և ընդհակառակը։*

Հոդ. ԿԵ, էջ 317 (ՌուԲ. Ռոդ. 23, էջ 643): „Πεῦσις κγ'. Τινες μονασαντες και κατολιγωρησαντες ὕστερον, ἐξῆλθον ἐκ των μοναστηριων ἑαυτων και εχειροτονήθησαν, εἶτα μετα την χειροτονιαν ἀποβαλλόμενοι τελείως το σχῆμα το μοναχικὸν. ἐδέξαντο γυναῖκας, ει δεον αὐτοὺς δεχεσθαι εις λειτουργιαν, η οὔ;

'Απόκρισις. "Αδεκτοι παντελως εισὶν εις λειτουργιαν' οἷα ση και ἀπὸ μοναχῶν οντες και μετα χειροτονιαν γαμῳ προσομιλήσαντες". *Հայերէնի Հարցը ընդհանուր ձևով է արտահայտում հունարէնի միտքը, իսկ Պատասխանները երկու բնագրում էլ բացասական են և տարբեր։*

Հոդ. ԿԷ, էջ 317—318: *Հմմտ. № № 8459 և 9311 ձեռագրերում եղածը. «Հարց. ԵԹէ ոք ի տղայութեանն կին առեալ է պսակաւ եւ օրինօք եւ կինն շուտով մեռաւ եւ դեռ զմիմեանս չեն տեսեալ վասն տղայութեանն եւ իբրեւ ի չափ հասակի եհաս կին մի այլ*

էառ, այնպիսին պարտ է դալ ի քահանայութեան կարդ, թէ ոչ» (էջ 81բ—82ա, էջ 80բ)։

Հոդ. ԿԸ, էջ 318։ Պատասխանը միևնույն ձեռագրերում այսպես է. «Արժան է» (№ № 8459, էջ 82ա, 9311, էջ 81ա), իսկ № № 659, 657 ձեռագրերում՝ «Եթե ի մեղացն ի բաց եկաց եւ արդարութեամբ գնաց, արժանի է քահանայութեան» (էջ 135ա, էջ 113բ)։

Հոդ. ՀԱ, էջ 319—320։ № № 8459 և 9311 ձեռագրերում այս հոդվածը գրիչը չընդօրինակելով ավելացրել է՝ «ՀԱ գրած է» (էջ 82բ, էջ 81բ)։

Հոդ. ՀԲ, էջ 320—321։ Համա. №№ 8459 և 9311 ձեռագրերում եղածը. «Հարց. Եթէ ոք ի քահանայից շինուածս առնէ և կամ այլ ցեղ բան եւ գործ և կամ քար գիպեսցի մարդոյ և կամ ի բարձր տեղաց անգանի եւ մեռանի, զի՞նչ պարտ է առնել, վասն կարգի քահանայութեանն։ Եւ եթէ ոմանք յաշխարհականաց նոյնպէս սպանումն գիպեսցի, որպէս պարտ է տալ ապաշխարութիւն» (էջ 82բ—83ա, էջ 81բ—82ա)։

Հոդ. ՀԴ, էջ 321։ № № 8459 և 9311 ձեռագրերում այս հոդվածը գրիչը չընդօրինակելով ավելացրել է. «ՀԴ գրած է» (էջ 83ա, էջ 82ա)։

Հոդ. ՀԵ, էջ 321—322։ Մի քանի ձեռագրերում Պատասխանն ընդարձակ է. «Թղճել պարտ է, և ի բաց հեղուլ քրիստոնէից, զի պիղծ է» (№ 648, էջ 42ա. տես նաև № № 650, էջ 67բ, 651, էջ 50բ, 2964, էջ 88ա, 3562, էջ 319ա)։ Նույն բանը № 3369 ձեռագրում պահվել է այսպես. «Թրղճել պարտ է և ի բաց հեղուլ ըմբոն է, զի պղծեալ է» (էջ 79ա)։ Մինչդեռ № 649 ձեռագիրն այս հոդվածը չունի ամբողջությամբ։

Հոդ. ՀԶ—ՀԹ, էջ 322—323։ Այս չորս հոդվածները № № 8459 և 9311 ձեռագրերում չընդօրինակելով ավելացրել է. «Գրած է այս Դ տունս» (էջ 83ա, էջ 82բ)։

Հոդ. ՀԷ, էջ 322։ Երկու ձեռագրերում Հարցը մի փոքր ընդարձակ է. «Որ ուլն ինչ արկանէ որ այնոցիկ որոց արիւնն հատանի և կամ այլ ինչ այնպիսի յաղագս արեան եւ այլ սնոտի բաշխումունք, արդար բժշկութիւն համարի՞լ պարտ է, թէ նենգութիւն եւ զի լինիցի ինչ բաս կարծեաց գործն» (№ № 648, էջ 42ա, բ, 3562, էջ 319բ)։

Հոդ. ՀԸ, էջ 322—323։ Մի քանի ձեռագրերում Հարցը մի փոքր ընդարձակ է. «Թէ ոք թովիչ է և կամ ձեռն ինչ որ ածէ յաչաղոյ եւ կամ այլ ցաւոց եւ դեղ հատանէ ջերման և ասէ. Բժշկութիւն լինի. եւ զգրարարսն եւ զայլ ամենայն նոյնպիսիս որ սոցին նման են սխալանս ի գայթակղութիւն տգիտաց ի կարգ եկեղեցոյ, ո՞րպէս պարտ է համարել զնոսա կամ որպիսի՞ պատուհասի արժանի համարել կամ թէ համարձակութիւն կալ թովչացն, զի բժշկեսցեն զօձահարսն, թէ ոչ» (№ 648, էջ 42բ. տես նաև № № 649, էջ 61ա, 650, էջ 68ա, 651, էջ 50բ, 2964, էջ 88ա, բ, 3369, էջ 79բ, 3562, էջ 319բ)։

Հոդ. ՁԱ—ՁԵ, էջ 324—326։ Այս հինգ հոդվածները գրիչը չընդօրինակելով ավելացրել է. «Գրած է այս Դ (պետք է լինի Ե—Վ. Հ.) տունս» (№ № 8459, էջ 83բ, 9311, էջ 82բ)։

Հոդ. ՁԲ, էջ 324։ Երկու ձեռագրերում այս հոդվածը համառոտ է. «Հարց. Եթե մոգի ուրուք կին կամեսցի քրիստոնեայ լինել և այրն չարգելցէ ի քրիստոնէութենէն եւ ի կնութենէ իւրմէ չարձակիցէ, պա՞րտ է տալ ի նոյն ամուսնութեան կնիք, թէ ոչ։ Պատ. Պարտ է մկրաել» (№ № 659, էջ 137բ—138ա, 657, էջ 114բ)։

Հոդ. ՁԴ, էջ 324—325։ Երկու ձեռագրերում Հարցը ունի որոշ շեղումներ. «Եթե ոք ի քրիստոնէից լինիցի մոգ եւ կին նորա յառաջին քրիստոնէութեանն հաստատուն կայցէ, պա՞րտ է կալ ի նոյն ամուսնութեանն կամ խեղճ ի՞նչ իցէ կնոջն ընդ մոգի առն կեալ, եթէ ոչ, կամ աւրէնս առնուլ, համարձակութիւն իցէ, թէ ոչ» (№ № 659, էջ 138ա, 657, էջ 114բ—115ա)։ Իսկ մի քանի ձեռագրերում Պատասխանն ավելի ընդարձակ է. «Ի սրբութիւնսն չէ իշխանութիւն ինչ մերձենալ, վասն զի նա եւ այրն իւր մի մարմին են, որպէս եւ Պաւղոս առաքեալն ասէ, թէ որ մերձենա ի պոռնիկն մի մարմին են եւ եղիցի երկոքին մի մարմին» (№ 651, էջ 51ա,բ, տես նաև № № 649, էջ 62ա, 2964, էջ 89ա, բ, 3369, էջ 80ա. համա. № № 659, էջ 138ա, 657, էջ 115ա)։

Հոդ. ՁԵ, էջ 325—326։ Մի քանի ձեռագրերում Պատասխանը շարունակվում է. «Արդ՝ ոչինչ թերութիւն համարել յաղագս եւղոյ օծմանն չքաւորութեան, զի ուր հոգին տեառն է, անդ ազատութիւն է եւ ինքն լնու զամենայն յամենայնի» (№ 648, էջ 43բ. տես նաև № № 649, էջ 62ա, 650, էջ 69բ, 651, էջ 51բ—52ա, 2964, էջ 90ա, 3369, էջ 80բ, 3562, էջ 321ա)։

Հոդ. ՁԷ—ՁԸ էջ 327—328։ Այս երկու հոդվածների միջև մի շարք ձեռագրերում տեղ է գտել երկու նոր հոդված, որոնք չենք գտնում Կանոնագրքի հնագույն և լավագույն ձեռագրերում։ Այդ հոդվածներն են. «ՁԸ. Հարց. Որ զՔրիստոս ուրասցի եւ յանցանիցէ զփրկական խորհրդովն, զի՞նչ պարտ է առնել։ Պատ. Զամենայն ժամանակս կենաց իւրոց պարտի

լալ եւ ապաշխարել եւ ի ժամանակի ելից իւրոց յաշխարհէս արժանի լիցի սուրբ խորհրդոյն հաւատով Աստուծոյ մարդասիրութեանն։ ՁԹ. Հարց. Թէ որ յանասնագիտաց զսահմանեալ ապաշխարհութիւնն կատարեաց եւ դառնայ ի զուգակիցն իւր, իսկ նա հարկաւորեալ ոչ առնու յանձն, խե՛ղճ համարել զիրսն. եւ սա բողոքիցէ չտանել վտանգիցն. զի՞նչ հրաման տացեմք։ Պատ. Պարտ է կարէկից լինել իւրում վշտագնեալ անդամոյն. վասն զի ապաշխարութեամբ եւ հաղորդութեամբ սրբեցաւ. ապա թէ ոչ հաւանեսցի եւ յաղագս երկեղածութեան առնէ զայն, իշխանութիւն լիցի ի վերայ կամաց իւրոց անայր մնալոյ, եւ սա թէ ոչ ունիցի ժոյժ ինքն զիտասցէ, զի ինքն զինչ կամիցի արասցէ» (№ 648. էջ 43բ—44ա. տես նաև №№ 649, էջ 62բ—63ա, 650. էջ 70ա, 651, էջ 52ա, 2964, էջ 90բ—91ա. 3369, էջ 81ա, բ, 3562, էջ 32(բ)։ Վերևում բերված երկու հոդվածը նույնությամբ գտնում ենք նաև Կանոնագրքի մի քանի ձեռագրերում ևս՝ ê (էջ 110ա, բ), b (էջ 87բ—88ա), ǝ (էջ 68ո). f (էջ 105ա,բ), g (էջ 62ա), h (էջ 64բ), o (էջ 71բ), q (էջ 30բ—51ա) l (էջ 69ա,բ)։ Այս հոդվածների մասին f ձեռագրի 105ա էջի աջ լուսանցքում, գրիչը, թե մեկ ուրիշ, թողել է իր տարակուսանքը. «Այս Գ գլուխս (պետք է լինի Բ—Վ. Հ.) ոչ ցանկն կայ եւ ոչ Ղարասու ի կանոնքն» (իմա՝ Ղարասույում ընդօրինակված կամ ավելի ճիշտ Ղարասույում գտնվող կանոնագրքում—Վ. Հ.)։ Այդ պատճառով էլ վերոհիշյալ ձեռագրերի մի մասում Աթանասի կանոնախմբի հոդվածների թիվը հասնում է 90-ի, իսկ մի այլ մասում՝ 91-ի։

Հոդ. ՁԸ, էջ 327—328։ Այս հոդվածը չի պահվել №№ 8459 և 9311 ձեռագրերում և ոչ մի նշում էլ չկա այդ մասին, ինչպես երբեմն հանդիպում ենք։ Սակայն դրա փոխարեն ընդօրինակված է երկու հոդված. առաջինն այն է, ինչ վերևում նշեցինք՝ «Եթէ որ զՔրիստոս ուրասցի» և այլն, իսկ երկրորդը՝ նոր է և չունեն վերևում նշված ձեռագրերը. «ՁԹ. Հարց. Վասն զի ահա ոմանք ձեռնարկեցին կարգեալ յինքեանց զասացեալ ծածուկսն եւ մակախ առնել զայս Աստուածաշունչ գիրս յաղագս որոց հաւատացաք, որպէս աւանդեցին հարքն, որք ի սկզբանէ ականատեսք եւ սպասաւորք եղեն բանին։ Կամ եղեւ ինձ զառ ի սեփհական եղբարց եւ ուսեալ ի վերուստ արտապատմել զկանոնեալ եւ զաւանդեալ աստուածային գիրս, զիւրաքանչիւր որ պատմեցաւ եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն») (№№ 8459, էջ 85ա, 9311, էջ 83բ—84ա)։ Վերջինս հոդված չէ, այլ հավանաբար գրչի մտորումները։

№ 657 ձեռագրում այս հոդվածի հարցը, որը չունեն մյուս ձեռագրերը, պահվել է այսպես. «Պա՞րտ է քահանային երդնուլ, թէ ոչ» (էջ 115բ), այնուհետև հետևում է նույն պատասխանը, ինչ գտնում ենք կանոնագրքում։

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 329: *Համեմատական բնագիրը կազմելիս չօգտագործված ձեռագրերից երեքում ցանկի վերնագիրը փոխարինում է սույն վերնագրին՝ №№ 648, 3562 ձեռագրերը ունեն. «Ցանկ կանոնք Բարսեղի առ Ակալիքոս գլուխք Ծ» (էջ 44ա, էջ 322ա). իսկ № 659-ը՝ «Ցանգ Բարսղի երկրորդ» (էջ 185ա)։ Մնացած ձեռագրերը՝ №№ 649, 650, 651, 2964, 3369 այս վերնագիրը չունեն։*

Ցանկ, էջ 329—334: *№№ 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերը ցանկ չունեն։ №№ 648, 3562 ձեռագրերում եղած ցանկը համապատասխանում է կանոնագրքի ունեցածին միայն հետևյալ շեղումներով. ա) ԼԶ, ԼԷ վերնագրի փոխարեն ունեն մեկ վերնագիր «ԼԶ. Վասն մոնոզանացն» (№№ 648, էջ 44բ, 3562, էջ 322բ)։ բ) ԽԸ հոդվածի վերնագիրը գրված է ԽԷ հոդվածի վերնագրի տեղը և հակառակը։ գ) Ծ հոդվածի վերնագրի փոխարեն ունեն. «ԽԹ. Վասն ոչ յիշել զմեղս յանցաւորին» (№№ 648, էջ 45ա, 3562, էջ 322բ)։ դ) ԾԱ հոդվածի վերնագրի՝ 334 էջի 1-ին և 2-րդ տողերը չունեն։ Մնացածը նույնն է ինչ որ կանոնագրքինը։ №№ 648 և 3562 ձեռագրերում եթե ցանկում նշված է 49 հոդվածի վերնագիր տայս ձեռագրում բերված է 40 հոդված, նշանակում է Բարսեղի կանոնախումբն այս ձեռագրերում բերված են թերի։*

№ 659 ձեռագրում եղած ցանկը տարբեր է կանոնագրքի ունեցածից, այն կազմել է ձեռագրի գրիչը. ահա այդ ցանկը.

ա. Սպանութեան։
բ. Ակամայ մեղաց։
գ. Դեղատուաց։
դ. Երդման։
ե. Երկրորդ ամուսնութեան։
զ. Գատերազմաց։
է. Վաշխից։
ը. Կուսանաց։
թ. Դաւաճուռբաց։
ժ. Երիցանց անպատեհ ամուսնութեան։
ժա. Որ յառաջ ապականեցան քան զամուսնութիւնն։
ժբ. Յափշտակողաց։
ժգ. Մեկնելոյ արանց ի կանանց։
ժդ. Ծնաւղաց արհամարհելոյ։
ժե. Ծառայից եւ աղախնեաց արհամարհելոյ զտեարս։
ժզ. Այրեաց։
ժէ. Ինքնակամութեան։
ժը. Խիստ հարուածոց մահու։
ժթ. Հեթանոսաց պոռնկութեան։
ի. Կանանց որ թողին զարս իւրեանց։

իա. Կնաթողաց։
իբ. Ակամայ պոռնկութեան։
իգ. Ուխտաւորաց։
իդ. Երդման։
իե. Կախարդաց։
իզ. Արուագիտաց։
իէ. Ընդ եղբաւր պոռնըկելոյ։
իը. Ընդ ազգայի[ն] պոռնըկելոյ։
իթ. Որք զհարսանիսն զողանան։
լ. Որք շրթամբք պղծին։
լա. Որք ընդ քուրս պղծին։
լբ. Համաւրէն զամենայն մեղուցեալս կանոնելոյ։
լգ. Ողջ էց[է] մարմնով։
լդ. Սխալողի յանդիմանութեան։
լե. Դիտակաց մեղաց ուրուք։
լզ. Թշնամանողաց։
լէ. Դատարկաբանից։
լը. Երդման։
լթ. Թողացելոյ զյանցանս ուրուք։
խ. Թողլոյ զմեղս ուրուք։
խա. Ցածողաց աւելորդաւք։
խբ. Բարկացողաց։
խգ. Թշնամանողաց (էջ 185ա, բ)։

Բարսեղի կանոնախմբի ցանկում նշված են 43 հոդվածների վերնագրեր։ Վերջիններս երբ համեմատում ենք ձեռագրում եղած հոդվածների հետ, ապա նկատում ենք, որ ԻԳ հոդվածը ցանկում չունի համապատասխան վերնագիր, իսկ ցանկում նշված ԻԳ վերնագիրը, հոդվածների շարքում, չունի համապատասխանը։ Այսպիսով ցանկի ԻԳ վերնագիրը և ԻԳ հոդվածը միմյանց չեն համապատասխանում։ Ցանկի ԼԳ վերնագիրը հոդվածների շարքում չունի իր հոդվածը։ Այս ձեռագրում պակասում են կանոնագրքի ունեցած 11 հոդվածները։

Երկրորդ վերնագիր, էջ 334։ *Վերոհիշյալ ձեռագրերում այս ես ունի տարբերակներ. օրինակ՝ №№ 648, 3562 ձեռագրերում հանդիպում ենք «Կանոնք սրբոյն Բարսեղի» ձևով, №№ 649, 650, 651, 2964 ձեռագրերում՝ «Գիր կանոնական մեծի և գիտնականի երանելոյն Բարսեղի եպիսկոպոսի Կեսարացւոյ գլուխք Ծ», № 3369 ձեռագրում՝ «Գիր կանոնական մեծի և գիտնականի երանելոյն սրբոյ հօրն մերոյ եօթնալոյս Բարսեղի հայրապետին եպիսկոպոս Կեսարիոյ» (էջ 81բ), իսկ № 639 ձեռագրում «Գիր կանոնական մեծի և գիտնաւոր Բարսղի եպիսկոպոսի առ սուրբն Փիլիքս Յիկոնացոց եպիսկոպոս, գլուխք ԽԳ» (էջ 86ա)։*

Հոդ. Ա—Բ, էջ 334—336 (հունԾ. հոդ. 1, էջ 576—579)։ *Պիտրայի մոտ հուն.-ի առաջին հոդվածին նախորդում է մի փոքրիկ ներածական (սկիզբ.* Ἀνοήτῳ, φησίν, ἐπερωτήσαντι, σοφία λογισθήσεται· *վերջ.* καὶ τὰ συγγενῆ ὧν ἐδιδάχθημεν, παρ᾽ ἑαυτῶν ἐπιλογίσασθαι.), *որը չի պահվել կանոնագրքում։*

Հունարենի այս հոդվածը բավական ընդարձակ է։ Հոդվածի սկզբի մասը, որը վերաբերում է կատարների մկրտության խորհրդին, հայերենում չի պահվել։ Իսկ մնացած մասից խիստ համառոտ վերաշարադրել են Բարսեղ Կեսարացու կանոնախմբի Ա և Բ հոդվածները։ Այնպես որ այստեղ թարգմանության մասին խոսք լինել չի կարող։

Ա հոդվածի «Արտաքսեալքն յեկեղեցւոյ՝ ամենայն՝ հերձուածողք ասին» հատվածում ճերձվածող *բառը, ըստ երևույթին, խմբագրողը երկու տարբեր առումով է գործածել. նախ՝ հերձվածող ասելով հասկանում է ընդհանուր առմամբ և՛ աղանդավորներին, և՛ եկեղեցու ներսում հանդես եկող պառակտողներին, երկրորդ՝ հերձվածող անվան տակ հասկանում է աղանդավորներին, որոնց անունները թվում է ներքևում։*

№ 639 ձեռագրում այս հոդվածի սկզբի մի փոքրիկ հատվածը՝ «Եւ որչափ պատուհասք արտաքսեալքն յեկեղեցւոյ ամենեքեան հերձուածողք ասին, այլ զկէսն հերձուածողս կոչեցին», միացրել են Բ հոդվածին և այդ երկուսը միասին դրել ցանկի և երկրորդ վերնագրի միջև որպես ներածական (էջ 185բ—186ա)։ Այստեղ որպես Ա հոդված դրված է կանոնագրքի Գ հոդվածը։ Մնացած ձեռագրերում՝ №№ 648, 649, և սրանց հարող, հոդվածը սկսվում է այսպես. «Արտաքսեալքն յեկեղեցւոյ ոչ ամենայն»։ Երկու ձեռագրերում «քահանայութեանն» բառի փոխարեն կարդում ենք «զահ երիցութեանն» (№№ 648, էջ 43ա, 3562, էջ 323ա)։

Հոդ. Գ, էջ 336, (հունԾ. հոդ. 2, էջ 379)։ „Ἡ φθείρασα κατ᾽ ἐπιτήδευσιν, φόνου δίκην ὑπέχει· ἀκριβολογία δὲ ἐκμεμορφωμένου καὶ ἀνεξεικονίστου παρ᾽ ἡμῖν οὐκ ἔστιν· ἐνταῦθα γὰρ ἐκδικεῖται οὐ μόνον τὸ γεννηθησόμενον, ἀλλὰ καὶ αὐτὴ ἡ ἑαυτῇ ἐπιβουλεύσασα· διότι ὡς ἐπὶ τὸ πολὺ ἐναποθνήσκουσι ταῖς τοιαύταις ἐπιχειρήσεσιν αἱ γυναῖκες. Πρόσεστι δὲ τούτῳ καὶ ἡ φθορὰ τοῦ ἐμβρύου, ἕτερος φόνος κατά γε τὴν ἐπίνοιαν τῶν ταῦτα τολμώντων. Δεῖ μέντοι μὴ μέχρι τῆς ἐξόδου παρατείνειν αὐτῶν τὴν ἐξομολόγησιν, ἀλλὰ δέχεσθαι μὲν τὸ μέτρον τῶν δέκα ἐτῶν· ὁρίζειν δὲ μὴ χρόνῳ, ἀλλὰ τρόπῳ τῆς μετανοίας τὴν θεραπείαν".

Հայերենում հոդվածի սկիզբը խախտված է. հուն.-ի Ἡ φθείρασα κατ᾽ ἐπιτήδευσιν, φόνου δίκην ὑπέχει *հատվածի դիմաց հայերենում կարդում ենք. «եթէ ոք ապականեսցէ զէգ յանկարծաւրէն», որը սխալ է։ Հոդվածի մնացած մասը վերաշարադրմամբ ընդհանուր ձևով է արտահայտում հուն.-ի միտքը։*

№ 639 ձեռագրում վերևի մեջբերված հատվածն այսպես է. «Եթե ոք սպանանէ զոք յանկարծաւրէն մահապարտութեան դատաստան ընկալցի» (էջ 186ա)։

Հունարենի 3-րդ հոդվածը, որը վերաբերում է պոռնկացող սարկավագների խնդրին (էջ 579—580) կանոնագրքում չի պահվել։

Հոդ. Դ, էջ 337—339 (հունԾ. հոդ. 4, էջ 580)։ „Περὶ τριγάμων καὶ πολυγάμων τὸν αὐτὸν ὥρισαν κανόνα, ὃν καὶ ἐπὶ τῶν διγάμων ἀναλόγως· ἐνιαυτὸν μὲν γὰρ ἐπὶ τῶν διγάμων, ἄλλοι δὲ δύο ἔτη, τοὺς δὲ τριγάμους ἐν τρισὶ καὶ τέτρασι πολλάκις ἔτεσιν ἀφορίζουσιν. Ὀνομάζουσι δὲ τὸ τοιοῦτον οὐκ ἔτι γάμον, ἀλλὰ πολυγαμίαν, μᾶλλον δὲ πορνείαν κεκολασμένην· διὸ καὶ ὁ Κύριος τῇ Σαμαρείτιδι πέντε ἄνδρας διαμειψάσῃ· ὃν νῦν, φησίν, ἔχεις οὐκ ἔστι σου ἀνήρ· ὡς οὐκέτι ἀξίων

ὥστε τῶν ὑποπεπτωκότων τοῦ μέτρου τῆς δυνάμεως τῷ τοῦ ἀνδρὸς ἢ τῆς γυναικὸς καλεῖσθαι προσαρτήματι. Συνήθειαν δὲ κατελάβομεν ἐπὶ τῶν τοιούτων πενταετίας ἀφορισμόν, οὐκ ἀπὸ κανόνων, ἀλλ᾽ ἀπὸ τῆς τῶν προειληφότων ἀκολουθίας. Δεῖ δὲ μὴ πάντα αὐτοὺς ἀπείργειν τῆς ἐκκλησίας, ἀλλ᾽ ἀκροάσεως αὐτοὺς ἀξιοῦν ἐν δύο που ἔτεσιν ἢ τρισί, καὶ μετὰ ταῦτα ἐπιτρέπειν συστήκειν μέν, τῆς δὲ κοινωνίας τοῦ ἀγαθοῦ ἀπέχεσθαι, καὶ οὕτως ἐπιδειξαμένους καρπόν τινα μετανοίας ἀποκαθιστᾶν τῷ τόπῳ τῆς κοινωνίας“.

Հուն.-ի այս հոդվածը ընդարձակ է քան հայերենը, որը վերաշարադրված է որոշ կրճատումներով, իսկ պատժի չափերը տարբեր են։

№ 650 ձեռագրում այս հոդվածը միացված է նախորդին՝ Գ-ին, իսկ № 650 ձեռագրում Գ. Դ, Ե հոդվածներն են միմյանց միացված։

Հունարենի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածները, որոնք վերաբերում են հերետիկոսներին, կույսերին, արվագետներին և անասնապիղծներին, Կանոնագրքում չեն պահվել։

Հոդ. Ե, էջ 338—341 (հուն. հոդ. 8—9, էջ 581—583)։ Հայերենի այս հոդվածում միացված են հուն.-ի 8—9-րդ հոդվածները։ Սակայն այս հոդվածը թարգմանություն չէ, այլ վերաշարադրում, ուր բնագրից ընդարձակ հատվածներ դուրս են գցված և նոր օրինակներով համեմված։ Երբ կարդում ես հունարենը, զգում ես որ դա նամակ է, մինչդեռ այդ տոնը հայերենում չի զգացվում, որովհետև այդպիսի տեղերը հայերենից հանված են և այստեղ շարադրանքն իրավաբանական բնորոշումների բնույթ ունի, օրինակ՝ հուն.-ի սկիզբը՝ «Դրդված ժամանակ իր կնոջ կյանքի վրա կացին գործադրողը սպանող է։ Բայց լավ (արդարացի) և արժանավոր է քո բարեմտությունը, որ հիշեցրեց ինձ ասել ավելի ընդարձակ, որովհետև զգալի տարբերություն կա կամայության (կամա սպանության) և ակամայության (ակամա սպանության) միջև» հայերենում չենք գտնում։ Հուն.-ի 9-րդ հոդվածն հայերենում սկսվում է «Եւ վճիռն Տեառն հատեալ է ի վերայ նորա» հատվածից։ Հուն.-ի երկու հոդվածի միայն էլ հայերենում ընդհանուր առմամբ ճիշտ է արտահայտված։

Այս հոդվածը № 650 ձեռագրում բաժանված է երկու մասի, առանձին համարներով. երկրորդ հոդվածը սկսվում է «իսկ ոմանք զեղս խառնեալս»-ից (էջ 188ա)։ № 3369 ձեռագրում «ակամայութիւն» բառի փոխարեն հանդիպում ենք «ըկամաւորութիւն» (էջ 88բ)։

Հոդ. Զ, էջ 341 (հուն. հոդ. 10, էջ 583—584։ Հունարենում քանի որ այս հոդվածը վերաբերում է ոմն Սեվերիոսի քահանա ձեռնադրվելու մասնավոր դեպքին, շարադրված է մանրամասն։ Այդ մանրամասնությունները Կանոնագրքում չեն պահվել։ Այստեղ լրիվ և ճշտությամբ բերված է կանոնական որոշումը միայն։

Հունարենի 11-րդ հոդվածում խոսվում է ակամա (ոչ դիտավորյալ) սպանություն կատարողի մասին և բերում է զանազան օրինակներ։ Այս հոդվածը, ըստ երևույթին, Ե հոդվածի կրկնությունն է, ուստի Կանոնագրքում չի պահվել։

Հոդ. Թ, էջ 341—342 (հուն. հոդ. 14, էջ 585)։ „Ὁ τόκους λαμβάνων ἐὰν καταδέξηται τὸ ἄδικον κέρδος εἰς πτωχοὺς ἀναλῶσαι, καὶ τοῦ λοιποῦ τοῦ νοσήματος τῆς φιλοχρηματίας ἀπαλλαγῆναι, δεκτός ἐστιν εἰς ἱερωσύνην“. Միայն վերջին մասն է տարբեր, օրինակ, հուն.-ի φιλοχρηματίας բառը հայերենում գտնում ենք «քրիստոսասէր» թարգմանությամբ։ Բանն այն է, որ հունարեն բնագրի φιλοχρήματος բառը նշանակում է շահասեր, դրամասեր, ընչաքաղց, ագահ, սակայն, ըստ երևույթին հայերենի թարգմանության հիմք հանդիսացող հունարեն բնագիրն ունեցել է ոչ թե φιλοχρηματίας, ինչպես Պիտրայի մոտ է, այլ φιλόχρηστος, որը նշանակում է բարի. բարեսեր, բարեգործ, պատվասեր, բայց որը հայ թարգմանչի կողմից, հավանաբար շփոթմամբ, թարգմանվել է «քրիստոսասէր» (իբր φιλόχριστος), հետևապես «քրիստոսասէր» բառի փոխարեն պետք է լիներ φιλόχρηστος (բարի կամ բարեսեր և կամ բարեգործ) բառի սեռական հոլովը։ Ի դեպ, նման մի շփոթում էլ կատարել է Սոկրատի Եկեղեցական պատմության թարգմանիչ Փիլոն Տիրակացին. τοῦ χρηστοῦ բառը (տե՛ս Socratis Scholastici ecclesiastica historia, tamus I, p., 124. „Ἀλλὰ μεταξὺ τοῦ χρηστοῦ σίτου εἴωθε καὶ ζιζάνια φύεσθαι“) թարգմանելով Քրիստոսի, փոխանակ՝ բարի (տես «Սոկրատայ Սքոլաստիկոս եկեղեցական պատմութիւն», հ. Ա, էջ 68, «Այլ ի մէջ ցորենոյն Քրիստոսի սովորութիւն է որոման բուսանին»)։ Այս վերջին շփոթը մատնացույց է արել Սոկրատի հրատարակիչ Մ. Տեր-Մովսիսյանը։

Հուն.-ը չունի «մերձեցին առ մեզ» հատվածը, իսկ վերջին «Կանոնք եկեղեցւոյ» հատվածի փոխարեն հուն.-ն ունի εἰς ἱερωσύνην։ Մնացածը համապատասխանում է հունարենին։

Հունարենի 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածները մասնավոր դեպքերի կապակցությամբ տրված հարցումների պատասխան նամակներ են, օրինակ՝ 15-րդ հոդվածը վերաբերում է ս. գրքի մեկնությանը: 16-րդ հոդվածում Բարսեղը խորհուրդ է տալիս ուշադիր վերաբերվել սուրբ գրքին, որտեղ հարցի պարզաբանումը կգտնվի անմիջապես: 17-րդ հոդվածից մինչև 50-րդը Գիսրայի մոտ գրված է առանձին վերնագրի ներքո τῷ αὐτῷ περὶ κανόνων ἐπιστολή, *որին հետևում է 17-րդ հոդվածը՝ Բիանորոս քահանային վերաբերող հարցման պատասխանը. Ինչպես տեսնում ենք այս երեք հոդված կոչվածներն էլ կանոնական գրություններ չեն, այլ մասնավոր դեպքերի մասին եղած հարցերի պատասխաններ, որոնք, իրավամբ, չեն թարգմանվել և կամ, ավելի ճիշտ, չեն մտել Կանոնագրքի համապատասխան բնագրում:*

Հոդ. Ժ, էջ 342—343 (հուն. հոդ. 18, 586—588): *Հայերենը խիստ համառոտ է. «եղին առ Աստուածս-ից հետո հունարենի մի ընդարձակ* οἱ μὲν πατέρες ἡμῶν . . . . τὴν δυνατὴν ἐξευρεῖν ἀπὸ τοῦ ἀκολούθου *հատվածը հայերենը չունի: Բանն այդպես է մի այլ ավելի ընդարձակ հատվածի նկատմամբ՝* Μέγα μὲν ἁμάρτημα-*ից մինչև* γυναῖκες ἀκολάστοις ἑαυτὴν ἐπιδοῦναι *հատվածը:* „Ὥσπερ οὖν τὴν ἀλλοτρίαν-*ից մինչև վերջ հայերենը դարձյալ չունի: Իսկ հայերենի սկզբի «և զգաստութեամբ և համեստութեամբ գնալ» հատվածը հունարենը չունի:*

Հուն.-ի 19-րդ հոդվածը վերաբերում է կուսակրոններին. այն Կանոնագրքում չի պահվել:

Հոդ. ԺԱ. էջ 343 (հուն. հոդ. 20, էջ 588): „Ὅσαι γυναῖκες ἐν αἱρέσει οὖσαι παρθενίαν ὡμολόγησαν, εἶτα μετὰ ταῦτα γάμον ἀνθείλοντο, οὐχ ἡγοῦμαι χρῆναι καταδικάζεσθαι ταύτας· ὅσα γὰρ ὁ νόμος λαλεῖ, τοῖς ἐν τῷ νόμῳ λαλεῖ· αἱ δὲ μήπω ὑπελθοῦσαι τὸν ζυγὸν τοῦ Χριστοῦ, οὐδὲ τὴν νομοθεσίαν ἐπιγινώσκουσι τοῦ δεσπότου· ὥστε δεκταί εἰσι τῇ ἐκκλησίᾳ μετὰ πάντων, καὶ τὴν ἐπὶ τούτοις ἄφεσιν ἔχουσαι ἐκ τῆς πίστεως τῆς εἰς Χριστόν. Καὶ καθόλου, τὰ ἐν τῷ κατηχουμένῳ βίῳ γενόμενα, εἰς εὐθύνας οὐκ ἄγεται· τούτους δὲ δῆλον ὅτι ἄνευ βαπτίσματος ἡ ἐκκλησία οὐ παραδέχεται, ὥστε ἀναγκαιότατον ἐπὶ τούτοις τὰ πρεσβεῖα τῆς γενέσεως".

Այս հոդվածը եթե հուն.-ի 20-րդ հոդվածն է, ապա այն շատ է հեռացել իր նախնական իմաստից և համառոտ է:

Հուն.-ի 21-րդ հոդվածը, որը վերաբերում է ամուսնացած մարդու պոռնկությանը, Կանոնագիրքը չունի:

Հոդ. ԺԲ, էջ 343—344 (հուն. հոդ. 22, էջ 589): *Այստեղ հուն.-ի միտքը բավական ճիշտ է արտահայտված, թեև մի քիչ համառոտ է:*

№ 649 ձեռագրում բացակայում է՝ «Իսկ երկրորդ անգամ մերձեցուցանել զնոսա ի սելութիւն» հատվածը (էջ 66բ): Իսկ № 659 ձեռագրում այս հոդվածը միացված է նախորդին և գրված Թ համարի տակ:

Հունարենի 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ հոդվածները, որոնք վերաբերում են քույրերի կամ երկու եղբայրների հետ ամուսնանալուն, այրիների ամուսնանալուն, պսակից առաջ, կամ առանց պսակի կենակցողներին, Կանոնագրքում չեն պահվել:

Հոդ. ԺԳ, էջ 344—345 (հուն. հոդ. 27, էջ 590): „Περὶ τοῦ πρεσβυτέρου τοῦ κατὰ ἄγνοιαν ἀθέσμῳ γάμῳ περιπαρέντος, ὥρισα ἃ ἐχρῆν, καθέδρας μὲν μετέχειν, τῶν δὲ λοιπῶν ἐνεργειῶν ἀπέχεσθαι· ἀρκετὸν γὰρ τῷ τοιούτῳ ἡ συγγνώμη. Εὐλογεῖν δὲ ἕτερον, τὸν τὰ οἰκεῖα θεραπεύειν ὀφείλοντα τραύματα, ἀνακόλουθον· εὐλογία γάρ, ἁγιασμοῦ μετάδοσίς ἐστιν· ὁ δὲ τοῦτο μὴ ἔχων διὰ τὸ ἐκ τῆς ἀγνοίας παράπτωμα, πῶς ἑτέρῳ μεταδώσει; Μήτε τοίνυν δημοσίᾳ, μήτε ἰδίᾳ εὐλογείτω, μήτε τὸ σῶμα τοῦ Χριστοῦ καταναμέτω ἑτέροις, μήτε τι ἄλλο λειτουργείτω, ἀλλὰ ἀρκούμενος τῇ προεδρίᾳ, προσκλαιέτω τῷ Κυρίῳ, συγχωρηθῆναι αὐτῷ τὸ ἐκ τῆς ἀγνοίας ἀνόμημα".

Հայերենը բառացի թարգմանություն չէ, թեև վերաշարադրմամբ ընդհանուր ձևով է արտահայտում հունարենի միտքը:

Հոդ. ԺԴ, էջ 345—346: *Այս հոդվածը հունարենում չի պահվել. իսկ հունարենի 28-րդ և 29-րդ հոդվածները, որոնք վերաբերում են խոզի մսից հրաժարվելուն և առաջնորդների երդմանը, չեն պահվել Կանոնագրքում:*

№ 3369 ձեռագրում չի պահվել «յաղագս յառաջաղոյն պակասութեանն» հատվածից մինչև Հովհաննես Օձնեցու կանոնախումբը ներառյալ՝ էջ 535:

Հոդ. ԺԵ, էջ 346 (հուն. հոդ. 30, էջ 591): „Περὶ τῶν ἁρπαζόντων κανόνα μὲν παλαιὸν οὐκ ἔχομεν, ἰδίαν δὲ γνώμην ἐποιησάμεθα, τρία ἔτη καὶ αὐτοὺς καὶ τοὺς συναρπάζοντας αὐτοῖς ἔξω τῶν εὐχῶν γίνεσθαι. Τὸ δὲ μὴ βιαίως γινόμενον, ἀνεύθυνόν ἐστι, ὅταν μὴ φθορὰ ᾖ, μηδὲ κλο-

τῇ γινομένῃ τοῦ πράγματος. ἀντεξουσία δὲ ἡ χήρα, καὶ ἐπ' αὐτῇ τὸ ἀκολουθῆσαι, ὥστε τῶν σχημάτων ἡμῖν οὐ φροντιστέον„.

Հայերենի միայն երկրորդ մասն է հուն.-ից շեղվում. Τὸ δὲ μὴ βιαίως γινόμενον-*ից մինչև վերջ հատվածի դիմաց հայերենն ունի «ոչ գողութիւն . . . ·չուն կոչի»։*

Հոդ. ԺԶ, էջ 346: *№ 659 ձեռագրում այս և նախորդ հոդվածները միացված են և գրված ԺԸ համարի տակ:*

Հոդ. ԺԷ, 347 (հուն. հոդ. 32, էջ 591): *Հայերենը համառոտ է, օրինակ՝ հայերենում ասվում է թե «մեղանչեն», բայց ինչո՞ւ, իսկ հուն.-ն ասում է «սպանության հանցանքով»* (οἱ τὴν πρὸς θάνατον ἁμαρτίαν) *կամ հուն.-ի* τῆς κοινωνίας δὲ τῶν λαϊκῶν οὐκ ἐξείρονται *(բայց չզրկվեն աշխարհականների հետ հաղորդակից լինելուց) հատվածը գրված է «ժողովրդեան... իշխեսցեն բաշխել» ոչ ճիշտ ձևով:*

Հոդ. ԺԸ, էջ 347 (հուն. հոդ. 33—34, էջ 592): *Հուն.-ի 33—34-րդ հոդվածները հայերենում միացրել են այս հոդվածում: «Իսկ դշնացող կանայսն» հատվածից սկսվում է 34-րդ հոդվածը: Հայերենի «մանաւանդ եթէ անուանիք իցեն և յառաջագոյն» հատվածը հուն.-ը չունի:*

Հոդ. ԺԹ, էջ 347 (հուն. հոդ. 35, էջ 592): „Ἐπὶ δὲ τοῦ καταλειφθέντος ἀνδρὸς ὑπὸ τῆς γυναικός, τὴν αἰτίαν χρὴ σκοπεῖν τῆς ἐγκαταλείψεως· κἂν φανῇ ἀλόγως ἀναχωρήσασα, ὁ μὲν συγγνώμης ἐστὶν ἄξιος, ἡ δὲ ἐπιτιμίου· ἡ δὲ συγγνώμη τούτῳ πρὸς τὸ κοινωνεῖν τῇ ἐκκλησίᾳ δοθήσεται".

Հայերենը թարգմանություն չէ, այլ համառոտ վերաշարադրում, թեև հունարենի միտքն արտահայտում է:

Հունարենի 36—37-րդ հոդվածները, որոնք վերաբերում են զինվորների մահից հետո նրանց կանանց ամուսնության և պոռնկությամբ զբաղվող ամուսնացած մարդկանց, Կանոնագրքում չեն պահվել:

Հոդ. Ի, էջ 347—348 (հուն. հոդ. 38—39, էջ 592): *Հուն.-ի 38—39-րդ հոդվածները Կանոնագրքում միացրել են Ի հոդվածում: 39-րդ հոդվածն սկսվում է «զի որ կեայ ընդ շնացողի» հատվածից:*

№№ 651, 2964 ձեռագրերում «զներեամ» բառը գտնում ենք «զերկեամ» ձևով (էջ 57ա, էջ 98ա):

Հոդ. ԻԱ, էջ 348 (հուն. հոդ. 40 էջ 592): *Միայն հոդվածի վերջին մասն է շեղվում. հայերենի «և ոչ ես հաստատուն լինի... ի վերայ նորա» հատվածի դիմաց հուն.-ը բոլորովին այլ բան ունի՝* ἐγήματο, ὥστε ἐκεῖνο μὲν πορνεία, τοῦτο δὲ γάμος· αἱ γὰρ συνθῆκαι τῶν ὑπεξουσίων οὐδὲν ἔχουσι βέβαιον".

Հոդ. ԻԲ, էջ 348 (հուն. հոդ. 41, էջ 593): *Տարբերությունը վերաբերում է վերջին* Ἐὰν δὲ ἀποθάνῃ... μόνον ἐν Κυρίῳ *հատվածին, որը բերված է Պողոս առաքյալի առ Կորնթացիս առաջին նամակի Է—39 հատվածից (հմմտ. նաև նույնի առ Հռոմ Է—2), մինչդեռ հայերենում բերվածը՝ նույնի առ Հռոմայեցիս նամակի Է—3 հատվածն է:*

Հոդ. ԻԳ, էջ 348—349 (հուն. հոդ. 42, էջ 593): *Կանոնագրքում չի պահվել հուն.-ի* οὔτε οὖν πατρὸς ζῶντος, οὔτε δεσπότου οἱ συνιόντες ἀνεύθυνοι εἰσιν, ὡς ἐὰν ἐπινεύσωσιν οἱ κύριοι τὴν συνοίκησιν *հատվածը, մնացածը նույնն է:*

Հոդ. ԻԴ, էջ 349 (հուն. հոդ. 43, էջ 593): *Տարբեր է միայն վերջին* εἴτε ἦρξε τῆς πληγῆς, εἴτε ἠμύνατο *մասը, սրա փոխարեն հայերենը ունի «այնպիսւոյն վրէժխնդրութիւն եղիցի»:*

Հոդ. ԻԵ, էջ 349 (հուն. հոդ. 44—45, էջ 593): *Հուն.-ի 44—45-րդ հոդվածները Կանոնագրքում միավորել են ԻԵ հոդվածում: Հուն.-ի 45-րդ հոդվածը սկսվում է «Որոյ միանգամ զանուն Քրիստոսի» հատվածից: 44-րդ հոդվածի վերջին՝* ὁ δὲ μετὰ τὴν πίστιν ἕλλην πάλιν τῇ ἱεροσυλίᾳ προσιὼν ἐπὶ τὸν ἔμετον ὑποστρέφει· ἡμεῖς οὖν τῆς διακόνου τὸ σῶμα, ὡς καθιερωμένον, οὐκ ἐπιτρέπομεν ἐν χρήσει εἶναι σαρκικῇ. *մասը Կանոնագիրքը չունի: Իսկ հուն.-ի մի այլ՝* δεκτή ἐστιν εἰς μετάνοιαν *հատվածը հայերենում գրված է «անընդունելի է եկեղեցւոյ»: Միայն ՐԼ և № 656 ձեռագրերը բնագրի «անընդունելի է» բառի փոխարեն ունեն «ընդունելի է» (№ 650, էջ 75բ): Հետաքրքիրն այն է, որ մեր բոլոր ձեռագրերը* ἡ διάκονος *(սարկավագուհի)-ի փոխարեն ունեն «սարկաւագաց»:*

Հուն.-ի 47-րդ հոդվածը, որը վերաբերում է էնկրատիտների, սակկոֆորների և ապոտակտիտների կրկին կնքելուն, Կանոնագրքում չի պահվել:

Հող. ԻԷ. էջ 350, (հուՆ. հող. 48, էջ 594)։ „Ἡ δὲ ἐγκαταλειφθεῖσα παρὰ τοῦ ἀνδρὸς, κατὰ τὴν ἐμὴν γνώμην, μένειν ὀφείλει. Εἰ γὰρ ὁ Κύριος εἶπεν, ὅτι ἐὰν τις καταλίπῃ γυναῖκα ἐκτὸς λόγου πορνείας, ποιεῖ αὐτὴν μοιχᾶσθαι, ἐκ τοῦ μοιχαλίδα αὐτὴν ὀνομάσαι, ἀπέκλεισεν αὐτὴν τῆς πρὸς ἕτερον κοινωνίας. Πῶς γὰρ δύναται ὁ μὲν ἀνὴρ ὑπεύθυνος εἶναι, ὡς μοιχείας αἴτιος, ἡ δὲ γυνὴ ἀνέγκλητος εἶναι, ἡ μοιχαλὶς παρὰ Κυρίου διὰ τὴν πρὸς ἕτερον ἄνδρα κοινωνίαν προσαγορευθεῖσα“.

Հայերենը համառոտ և ընդհանուր ձևով է արտահայտում հուն.-ի միտքը։ Հայերենը փոփոխված ունի հուն.-ի ἐκ τοῦ μοιχαλίδα αὐτὴν ὀνομάσαι հատվածից մինչև վերջ (հմմտ. «իսկ կինն եթէ պահեսցէ զանձն իւր... զի ոչ միաւորեցաւ ընդ առն այլում»)։

Հող. ԻԸ. էջ 350 (հուՆ. հող. 49, էջ 594)։ Հայերենը համապատասխանում է հունարենին, միայն առաջինում, որպես բացատրություն, որը հուն.-ը չունի, ավելացված է «քանզի ոչ ի կամաց եղև, այլ ակամայ»։

Հուն.-ում գտնվող մի շարք հոդվածներ՝ 50-րդից մինչև 59-րդը, որոնք վերաբերում են երրորդ անգամ ամուսնության, կամա և ակամա սպանություններին և այլն, կանոնագրքում չեն պահվել, որովհետև այս հոդվածներում նշված հարցերն այս կամ այն չափով արծարծվել են նախորդ հոդվածներում, օրինակ՝ 50-րդ հոդվածը՝ 4-րդում, 52-րդը՝ 33-րդում, 54, 56, 57-րդը՝ 8-րդում։

Հող. ԻԹ. էջ 350—351 (հուՆ. հող. 60, էջ 596)։ Տարբեր է τὸν χρόνον τοῦ ἐπὶ τῆς μοιχείας ἁμαρτήματος ἐν τῇ οἰκονομίᾳ τῆς καθ' ἑαυτὴν ζωῆς πληρώσει հատվածը, որի փոխարեն հայերենն ունի «զամենայն... ապաշխարեսցեն»։

Կանոնագրքում չեն պահվել հուն.-ի 61-րդ և 63-րդ հոդվածները, որոնք վերաբերում են գողության և անասնապղծության։

Հող. Լ. էջ 351 (հուՆ. հող. 64, էջ 597)։ „Ὁ ἐπίορκος ἐν δέκα ἔτεσιν ἀκοινώνητος ἔσται. δυσὶν ἔτεσι προσκλαίων, τρισὶν ἀκροώμενος, τέσσαρσιν ὑποπίπτων, ἐνιαυτὸν συνεστὼς μόνον, καὶ τότε τῆς κοινωνίας ἀξιούμενος“.

Կանոնագրքում տարբեր են նշված պատժի չափերը։

Հոր. ԼԱ, էջ 351 (հուՆ. հող. 65, էջ 597)։ „Ὁ γοητείαν ἢ φαρμακείαν ἐξαγορεύων, τὸν τοῦ φονέως χρόνον ἐξομολογήσεται, οὕτως οἰκονομούμενος, ὡς ὁ ἐν ἐκείνῳ τῷ ἁμαρτήματι ἑαυτὸν ἐλέγξας“. Հայերենը բավական հեռացած է հունարենից։

Այս հոդվածը մի փոքր ուրիշ ձևով է շարադրված մի քանի այլ ձեռագրերում. «Եթէ ոք ի կախարդաց կամ ի դեղատուաց եկեալ խոստովանեսցին, նոյնպէս որք սահմանեցին եւ ի վերայ նոցա, դի անձամբք իւրեանց խոստովանեցան» № 659, էջ 194բ—195ա, հմմտ. №№ 648, էջ 50ա, 649, էջ 69ա, 659, էջ 76բ, 651, էջ 58ա, 2964, էջ 99բ, 3562, էջ 328բ)։

Հող. ԼԲ, էջ 351 (հուՆ. հող. 62, էջ 597)։ Միակ տարբերությունն այն է, որ հայերենի «որ անցուցանիցէ» բառը դրված է հուն. ἐπιδεικνύμενος (որ ցուցանիցէ, այսինքն՝ ցույց տվողը) բառի փոխարեն։ Թեև ոչ մի ձեռագիր չի պահել «որ ցուցանիցէ» ձևը, սակայն այս հոդվածը մի այլ կանոնախմբում՝ դարձյալ վերագրված Բարսեղ Կեսարացուն երկու ձեռագրերում պահվել է հունարենին համապատասխան՝ «որ ցուցանիցէ» ձևը (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, էջ 116, ձեռագիր)։ Վերջին ընթերցումը հնագույն և լավագույնն է, թէ՝ պատահական զուգադիպություն, դժվարանում ենք ասել։

Հուն.-ի 66-րդ հոդվածը, որը վերաբերում է գերեզման բացողներին և կողոպտողներին, կանոնագրքում չի պահվել։

Հող. ԼԳ. էջ 352 (հուՆ. հող. 67, էջ 597)։ „Ἀδελφομιξία τὸν τοῦ φονέως χρόνον ἐξομολογήσεται“.

Հայերենն ազատ է շարադրված, թեև հուն.-ի միտքն արտահայտում է ճիշտ։

Հող. ԼԴ, էջ 352 (հուՆ. հող. 68, էջ 597)։ „Ἡ τῆς ἀπειρημένης συγγενείας εἰς γάμον ἀνθρώπων σύστασις, εἰ φωραθείη, ὡς ἐν ἁμαρτήμασιν ἀνθρώπων γινομένη, τὰ τῶν μοιχῶν ἐπιτίμια δέξεται“.

Հունարենը հայերենում վերաշարադրված է համառոտ և տրված է հիմնական միտքը,

Հող. ԼԵ, էջ 352 (հուՆ. հող. 69, էջ 597)։ Հոդվածի երկրորդ մասն հայերենում համառոտ է (հմմտ. հուն. ἐνιαυτὸν ἀργήσας-ից մինչև վերջ. հայ.«դատարկ մի արդելեալ...» և այլն)։

Հող. ԼԶ, էջ 352 (հուՆ. հող. 70, էջ 597)։ „Διάκονος ἐν χείλεσι μιανθεὶς, καὶ μέχρι τούτου ἡμαρτηκέναι ὁμολογήσας, τῆς λειτουργίας ἐπισχεθήσεται· τοῦ δὲ μετέχειν τῶν ἁγιασμάτων, μετὰ τῶν διακόνων, ἀξιωθήσεται· τὸ αὐτὸ δὲ καὶ πρεσβύτερος. Εἰ δέ τι πλέον τούτου φωραθείη τις ἡμαρτηκὼς, ἐν οἵῳ ἂν ᾖ βαθμῷ, καθαιρεθήσεται“.

Հայերենը թարգմանություն չէ, այլ վերաշարադրված է և համառոտված. իսկ հուն.-ի τῆς λειτουργίας... τῶν ἀγγελικῶν *հատվածը հայերենում չի պահվել։*

Հուն.-ի 71-րդ հոդվածը, որը վերաբերում է 70-րդ հոդվածում նշված հանցանքի մեղսակիցներին և 72-րդ հոդվածը՝ ով անձնատուր է լինում կախարդության, Կանոնագրքում չեն պահվել։

Հոդ. ԼԷ, էջ 352—353 (հուն. հոդ. 73, էջ 598): *Հայերենը չունի հունարենի միայն վերջին* πίστει τῆς τοῦ Θεοῦ φιλανθρωπίας *մասը։*

№ 659 ձեռագիրը այս հոդվածը չունի, իսկ մի քանի այլ ձեռագրերում բոլորովին ուրիշ բան է. «Ալ. Զմոնողանաց զարանց ոչ յուսաք, բայց միայն այնոցիկ որ իւրեանց կամաւ եառուն զանձինս ի կարգ մոնողութեան, որք ի ձեռն լռութեան համարեցան հրաժարել յամուսնութենէ, սակայն և ի նոսա պարտ և արժան է յառաջագոյն եկեղեցն ի կարգս հարցանել և քննել զայժմ ևկեալսն և առնուլ ի նոցանէ խոստովանութիւն չլինել նոցա Վարմնասէր և ոչ յանդգնութեան վարս վարել։ Իսկ ապա թէ վրիպումն ինչ լինիցի ումեք անկանել յարատ պոռնկութեան, արժան է զայնպիսին խրատել և ի կարգ ուղղութեան ածել։ Զի այր որ ընդ կնոջ միաւորեալ բնակէ և ոչ շատասցի իւրով ամուսնոյն և անկանիցի ի պոռնկութիւն, զայնպիսին ընդ պոռնիկս համարեսցուք եւ առաւել յաճախեսցուք ի վերայ նորա զպատուհաս. քանզի եւ կանոնս այսպէս ունիմք ի վերայ յանցանաց աշխարհականացն սաստկապէս (ի վերայ... սաստկապէս հատվածը № 651 ձեռագիրը չունի) *եւ ի վերայ շնացելոց նմա ինչ եւ առողջացին ի հաւատս ապաշխարութեան» № № 648, էջ 50բ, 619, էջ 70ա, 650, էջ 77ա, 651, էջ 58բ, 2964, էջ 100աբ, 3562, էջ 329ա)։ Այս հոդվածն ուղղագրական աննշան տարբերություններով գտնում ենք* hlo *ձեռագրերում։*

Հունարենի 74-րդ հոդվածը, որը վերաբերում է ապաշխարության, կանոնագիրքը չունի։

Հոդ. ԼԸ, էջ 353—354 (հուն. հոդ. 75, 76. 79, էջ 598—599): *Ընդհանուր առմամբ այստեղ ճիշտ են արտահայտված հուն.-ի 75, 76 և 79-րդ հոդվածների մտքերը, թեև Կանոնագրքում կան առանձին հատվածների և բառերի բացթողումներ և ավելացումներ։*

Հուն.-ի 77, 78, 80. 81-րդ և 82-րդ հոդվածները, որոնք վերաբերում են կնաթողներին, տարբեր ժամանակներում երկու քույր հետ ամուսնացողներին, բազմամուսնությամբ զբաղվողներին, հավատուրացներին և երդմնազանցներին, Կանոնագրքում չեն պահվել։

Հոդ. ԼԹ, էջ 354—355 (հուն. հոդ. 83, էջ 600): *Հայերենում չի պահվել* ἢ εἰσάγοντες τινας εἰς τοὺς ἑαυτῶν οἴκους ἐπὶ ἀνευρέσει φαρμακειῶν καὶ καθάρσει, ὑπὸ τὸν κανόνα πιπτέτωσαν τῆς ἑξαετίας *հատվածը, իսկ հունարենում բացակայում են «և զարձցին և խոստովան եղիցին» և «հեռացեալք յեկեղեցւոյ» հատվածները։*

№ 659 ձեռագրում այս հոդվածը չի պահվել։

Հոդ. Խ—ԾԱ, էջ 355—358. *Այս հոդվածները հունարենը չունի, սրան հակառակ հունարենն ունի բոլորովին այլ նյութեր՝ 84-րդ հոդվածից մինչև 86-րդ հոդվածը և 88-րդից մինչև 92-րդ հոդվածները (էջ 600—601, 605—612) մասամբ խրատական բնույթի և ուղղված տարբեր մարդկանց. օրինակ՝ 84-րդ և 85-րդ հոդվածները վերաբերում են նրանց, որոնք չեն մտածում իրենց հոգու փրկության մասին, 86-րդ հոդվածում հեղինակը բացատրում է, թե ինչու քրիստոնյաները ամեն կենդանու միս չեն ուտում, 88-րդ հոդվածում գրում է ոմն Գրիգորի քահանայի՝ կնոջից բաժանվելու մասին, 91-րդ և 92-րդ հոդվածներում մանրամասն խոսում է եկեղեցու կյանքում դեր խաղացած ավանդությունների մասին և այլն, և այլն։*

№ 648 ձեռագրում չի պահվել Խ հոդվածից մինչև ԾԱ հոդվածը։ № 3562 ձեռագրում Խ և ԽԱ, իսկ № 651 ձեռագրում՝ ԽԳ և ԽԴ հոդվածները միացված են միմյանց։

ԽԴ հոդվածի առաջին տողը խախտված է, մեզ թվում է թերևս պետք է կարդալ այսպես՝ «Եթէ որ յեղբաւրէ ըստ կարի հրամայեալ՝ թշնամանէ կամ ընդդէմ կայ»։

Հոդ. ԾԱ, էջ 358—362 (հուն. հոդ. 87, էջ 602—605): *Այս հոդվածը մի քանի ձեռագրերում ունի ավելի համառոտ վերնագիր. «Դարձեալ սրբոյն Բարսեղի, վասն ամենեին հեռանալոյ (№ 651՝ հեռանալու) յազգաին կին առնելոյ» (№ № 650, էջ 79ա, 649, էջ 71բ, 651, էջ 60բ, 2964, էջ 103ա), իսկ № 3562 ձեռագրում չի պահվել ոչ վերնագիրը և ոչ էլ այս հոդվածը։* kmps *ձեռագրերում այս հոդվածը չի գրված որպես ԾԱ հոդված այլ առանձին կանոնախումբ, այդ պատճառով էլ ցանկից առաջ ունի վերնագիր. «Գիր կանոնական վասն չամուսնանալոյ առ ընտանիս», սրանից հետո հոդվածի բովանդակության վերնագիր ցանկում. «Վասն չամուսնանալոյ առ ընտանիս». սրա և բուն հոդվածի միջև երրորդ վերնա-*

գիրը. «Գիր կանոնական սրբոյն Բարսղի առ քահանայ մեծ Թէոդորոս Ցանտիոքիա վասն ամենևին հեռանալոյ և զազգային չառնել, Ա բան»: Վերջինիս՝ արդեն, հաջորդում է բուն հոդվածը:

Ն. Ակինյանը 1949 թ. «Հանդէս Ամսօրեայ»-ում (№ № 4—12) գրում է, թե «Տակաւին չէ գտնուած կանոնաց ինքնակաց օրինակ մը, արտաքոյ կանոնագրոց» (էջ 86): Այս խոսքերը վերաբերում են Շահապիվանի կանոնախմբին: Սակայն, այժմ, կարելի է ասել, որ կանոնագրքի ունեցածից դուրս ու անկախ գտնվել է Բարսեղ Կեսարացու այն նամակի հայերեն թարգմանության մի օրինակը, որը 373 թ. ուղղված էր Տարսոնի եպիսկոպոս Դիոդորին և որը հանդիսանում է Կանոնագրքում տեղ գտած Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ԾԱ հոդվածը: Այս բնագիրը, ինչպես հիմա է պարզվում իր ինքնուրույն գոյությունը պահպանել է կանոնագրքից (8-րդ դարի սկիզբը) շատ առաջ. հետագայում Հովհաննես Օձնեցին խիստ համառոտելով օգտագործել է այն կանոնագիրքը կազմելիս: Այդ բնագիրը գտնվում է մեր Մատենադարանի № 659 ձեռագրի 198ա—204 էջերում. ահա այդ նամակը.

«Բարսղի եպիսկոպոսի Դեոդորայ երիցու Անտիոքու.

Եհաս առ մեզ գիր որ ովերագիր ունէր Դիոդորա, իսկ որ զկնի այսորիկն զայր այլում ումեմն վայելուչ էր բանն առաւել քան թէ Դիոդորայն, քանզի թուի ինձ ոմն ի գըժընդակ արուեստականացն ընդ քոյոյ զիմաւքդ մտեալ և այնպէս զինքն կամեցեալ հաւատոյ արժանի առնել լսաւղացն. որ իբրև հարցեալ եղև յումեմնէ, թէ պարտ և արժան իցէ նմա կին առնել, զկնոջն իւրոյ իբրև վախճանեցաւ քոյրն. ոչ սոսկացաւ. զողացաւ ի հարցմանէն, այլ յոյժ խնդութեամբ ընկալաւ զլուրն և զգէջ ցանկութիւնն կարի քաջ մեծապէս ցանկութեամբ ընդ նմա գործեաց: Արդ՝ եթե էր առ իս գիրն, իսկ զնորա առաջէի քեզ և շատ և բաւական լինէիր անձին աւգնել և ճշմարտութեանն: Եւ վասն զի որ ետն և դարձեալ եհան իբրև գյաղթութեան իմն նշանակ զմէնջ գնայր կրէր, որբ իսկ գրան անդ արգելար իբրև զգրով ունել զքոյ իշխանութիւն. թողացուցանել զայն գործել: Արդ՝ գրեցի բազ թուղթ զի երկոքումք ձեռաւք եղիցի զալ մեզ յանաւրէն բանն յայն և մի մի ինչ թողուլ զաւրութիւն. զի մի՛ ունիցի բան որով կարիցէ ժյաս գործել որ պատահին նմա:

Եւ նախ առաջին, որ բուն իսկ մեծ է ի վերայ այսպիսի իրաց սովորութիւն, որ ի բազում ժամանակաց հետէ այժմ առ մեզ կրի, զոր առաջի է գնել, որ զաւրինաց ունի զաւրութիւն, վասն ի սուրբ արանց զկրաւնս մեզ աւանդել. և զայս զոր ասեմս այսպիսի իմն եթե ոք ախտիւ պղծութեան յաղթեալ երբեք անկցի յերկուց բնոց յանկրաւնս˚ խառնակութիւն, ոչ ամուսնութիւն վարկանել զայս և ոչ բնաւ ամենեւին յեկեղեցւոյ միաբնութիւն արժան է ընդունել յառաջ մինչև (հետագայում ուղղված է՝ մինչ չև—Վ. Հ.) քակեալ է զնոսա ի միմեանց: Բայց սակայն, զի թէպէտ ոչ զոյր ասել շատ և բաւական էր չարութիւնս առ չարին պահպանութիւն, վասն զի որ զթուղթն գրեաց անարդ և խոտան ձեռնարկութեամբ, զայսքան անհնարին չար փորձեցաւ ի վարս զնացից մերոց ածել մուծանել, հարկ է և մեզ որչափ և խորհրդոց ածեալ է, աւգնականութիւն մատուցանել և ոչ տալ թոյլ. և սակայն առ յոյժ առաքինիսն՝ մեծ և ի վեր քան զբան էառ իւրաքանչիւր ումեք յօրում ըմբռնեալն ոք է ի հաւատս, գրեալ ի Ղևտականին՝ զքոյր կին ի վերայ քեռ իւրոյ մի՛ առջիր. հակառակ միմիեանց մերկանալ զամաւթ խայտառականաց նորա առ նովաւ, մինչ կենդանի է քոյր. և արդ յայտ յայսմանէ ասէ, զի թողացուսցէ առնուլ իբրև վախճանեսցի: Եւ արդ առ այս նախ առաջին զայն ասեմ, զի զոր ինչ միանգամ առ աւրէնքն ասեմ այնոցիկ ասեն, որ ընդ աւրինաւքն են, ապա եթէ ոչ այս այսպէս է հարկ է և ընդ թլփատութեանն և ընդ շաբաթուն ընդ խտրութեամբ կերակրոցն անկանել մեզ. քանզի ոչ եթէ զուցուք ինչ որ ըստ կամաց հեշտութեան մերոյ ընդ լծով ծառայութեան աւրինաց զանձինս արկանեմք և եթէ երեւեցի ինձ (հետագայում ուղղված է՝ ինչ) ծանր աւրինացն եղելոյ յայնժամ ասյա առ Քրիստոսի ազատութիւնն փախուցեալ անկանիցիմք: Հարցեալ եղեաք եթե գրեալ է առնուլ զքոյր (զքույրաջ լուսանցքում) կին ի վերայ քեռ իւրոյ. ասասցուք, որ մեզ զգոյշ և հաստատուն և ճշմարիտ է, թե ոչ գրեալ է իսկ յայնմանէ որ զկնի զայ բանիս, զոր ոչն է ճառեցեալ այնուջանալ հաւանեցուցանել, այնորիկ է որ աւրէնս գնէ, ոչ եթէ որ զաւրինացն բանս ասէ, ապա եթէ ոչ այսպէս է, զոյ հնար ամենայն ումեք որ կամի համարձակ յանդըղնել, և մինչդեռ կենդանի կայ քոյրն առնուլ զմիւս եւս քոյր կին. քանզի նոյն այս իմաստ և ի վերայ նորա յարմարեալ պատկանի, քանզի գրեալ է, ասէ, եթէ ոչ առցես հակառակ նախանձաւոր միմիեանց, իսկ ապա թէ այդպէս է, որ ոչ հեռի հակառակութեամբն ոչ արգել առնուլ. բայց որ ջատագով նախատիս անհեռ և աննախանձ զոլ ասէ, զբաբս քեռց առ

միմիեանս. ի բաց բարձելոյ այսուհետև պատճառին, վասն որոյ հրաժարեցոյցն զերկոցունցն առ միմեանս զընկերութիւնն: Զի՞նչ է որ արգելուն առնուլ զքոյր կանայս, այլ ոչ զրեալ զայդ ասասցուք, այլ և ոչ զայն որ որոշեալ և մեկնեալ է, բայց միտք բանից որ զհետ դայ, նոյնպէս երկոցունց զաներկիւղ անխտրութիւն մատուցանէ, բայց թէ պարտ և արժան է, յաս սակաւ մի յետոյս աւրէնսդրութեանն անգրէն զառնալ և թափէր ի բամբասանաց, քանզի երևեցաւ ոչ զամենայն աւրինաց մեզաց ի ներքս փակել աւրէնսդրիս, այլ առանձինն հրաժարեցոյց զԵգիպտացոցն, ուստի համբարձեալ գնայ Իսրաէլ ի վերայ Քանանացւոցն, առ որ փոխեցաւն, քանզի ունի այսպէս բանս ըստ գնացից երկրին Եգիպտացւոց՝ մի գնասջիք, յորում բնակեալն էիր դու ի նմա, մի՛ առնիջիք. և ըստ գնացից երկրին Քանանացւոց յոր ես տարայց զձեզ անդր ոչ առնիջիք և աւրինաւք նոցա ոչ վարեսջիք, իսկ ապա ուրեմն ի զեպ եղիւ, զի ազգ մեզանացս այսոցիկ, ոչ գտանէր յազգն յայնոսիկ յայնժամ, վասն որոյ և ոչ պահպանութեան պէաք և աւրէնսդրին վասն մեզանացս այսոցիկ շատ և բաւական համարեալ անուսումնական սովորութեան բարուցն վարժեալ առ զարշ պղծութեան որովայնս. բայց զի առ զմեծն հրաժարեցուցեալ, զփոքրն լռեա եկեալ եկաց, զի թուէր բազում մարմնաւորացն երկուս քոյրս միանգամայն կանայս առնել՝ է փնաս առնել իրացս աւրինակ հայրապետին, բայց մեզ զինչ պարտ և արժան է գործել զգրեալսն ասել, թէ զլռեցեալն առաւել խուզել և հետազաւտել: Արդ՝ աստէն իսկ ոչ սյարա և արժան է ընդ միում բոցի խառնակել հաւր և որդւոյ, յաւրէնս յայսոսիկ ոչ է գրեալ, բայց ի մարգարէին ամբաստանութիւն հասեալ է, քանզի որդի աւէ և հայր<աւէ>առ մի բոզ մտանէին: Բայց բանի և այլ ազգ պիղծ ախտից զորս զիւաց վարդապետանոց եզիտ, իսկ աստուածային գիրք լռեալ կացին զպարկեշտն սուրբ զրոց զազիր և քարշ անուանակոչութեամբք ախտեղել ոչ կամեցեալ, այլ ընդհանուր ի մի վայր բովանդակիչ անուամբք զաղտեղութիւնս նոցա բամբասեաց, որպէս ինքն առաքեալն Պաւղոս ասէ. «Պոռնկութիւն և ամենայն աղտեղութիւն մի՛ անուանեսցի ի ձեզ, որպէս և վայել է սրբոց»: Աղտեղութեանն անուամբ զարուացն զանճառագործութիւնս և զիգացն ի մի ի վայր ածեալ փակեաց. իսկ ապա ուրեմն ոչ ամենայն իրաւք լռեալ կալ աներկիւղ մատուցանէ ցանկասիրացն: Բայց ես և ոչ լռեալ կալ ասեմ զմասն զայս և կարի քաջ ի բաց հրաժարեցուցեալ աւրէնսդրին, քանզի ոչն մտցես առ ամենայն ընտանիս մարմնոյ քո (քո ձայն լուսանցքում). մերկանալ զամաւթ խայտառակութեան իւրեանց և ոչ ես ի մի վայր ածեալ փակէ զազգ ընտանութեանն, քանզի զինչ այլ ինչ ընտանեգոյն լիցի ուրուք քան զիւր կին, զի ոչ ասեն երկու, այլ մի մարմին: Իսկ ապա ուրեմն ի ձեւն կնոջն քոյրն առնն ընտանութիւն շրջեալ փոխեցաւ, զի որպէս զմայր կնոջն ոչ առնէ և ոչ զդուստր կնոջն, այսպէս և ոչ զքոյր կնոջն, վասն որոյ և ոչ զքոյր իւր և այս անգրէն զարձեալ նոյն աւրինակ և ոչ կնոջն արժան է ընդ ընտանիս առնն յամուսնութիւն գալ և քանզի հասարակ է ի վերայ երկոցունց ազգականութեանն իրաւունք: Բայց ես ամենեցուն, որք յաղագս ամուսնութեան խորհին բողոքեմ, թէ անցանէ ձև աշխարհիս այսորիկ. և ժամանակս կարճեալ է, զի որ ունիցին կանայս, իբրև ոչ ունիցին: Ապա թէ ինձ բերեալ ընթեռնուցու, որք զայն որ աճիցէքն ասէ և բազմացարուք, ծաղր առնեմ զայնու, որ զժամանակս աւրէնսդրութեանն ոչ գիտաց որոշել՝ պոռնկութեան սփոփանք երկրորդ ամուսնութիւնն է, ոչ եթէ պաշար անյագ գիջութիւն, թէ ոչ կարեն արգելուլ զանձինս ի պոռնկութենէ ամուսնասցին, բայց նոքա աւաղիք և ի բնութիւնն ոչ հային, որոց աչք ողւոցն րժոտեալ են ախտիւ անարգ պղծութեանն, զայն որ ի վաղընջուցն հետէ որոշեալ է և մեկնել զանուանս ըստ ազգ լինելն: Արդ յորմէ ազգակցութենէ զծնեալսն անուանեցին զնոսա միմեանց, թէ քեռորդիս անուանեսցին, քանզի երկոքին անուանք նոցա ի դէպ և ի ճահեն, վասն շփոթեալ խառնակութեանն. մի՛ առնէր այր զուզմաւրաքոյրն, մաւրու մատաղ մանկանցն և մի՛ զայն որ ի տեղ մաւր զմանկունսն զրգել և սնուցանել պարտի, զսա լինել անհաշտ և անհամբոյր քինու և նախանձու, քանզի միայն ազգ մաւրուաց և քան զմահ անգր ես վարէ զթշնամութիւնն և մանաւանդ զի որք այլ ազգ ինչ են, թշնամիք են միմեանց, ընդ մեռեալսն հաշտութիւն բերեն այնուհետև. իսկ մորուոյ յետ մահուանն թշնամութեան սկիզբն առնեն: Եւ զլուխ ճառելոցս երա աւրինաւք դիմեալ է ոք յամուսնութիւն բացեալ կայ առաջի ամենայն աշխարհ. ապա րև ախտաւոր է ումեք փոյթ ամուսնութեանն. վասն այսորիկ ես տաւել արգելլի է, զի ուսցի ամենայն ոք զանձն իւր սրբութեամբ ստանալ մի՛ յախտս. ցանկութեան շատ ասել յարձակել և յիբրգ այլ չափ կզթոյն արգել զիս, բայց աղաւթիւք խնդրեմ, զի խրատս մեր հզաւրագոյն քան զախտ գտանիցի կամ ոչ գալ հասանել ի մեր վարս ցաւն այն, այլ յոր վայրս համարձակեալ զործեցաւ ի նմին տեղիս կալ մնայց:

Այս բնագրում չեղատառ նշված են այն հատվածները, որոնք մտել են Կանոնագրքի Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ԾԱ հոդվածում։

Հայերենին հակառակ հունարենի վերնագրում նշված է. τοῦ αὐτοῦ πρὸς Διόδωρον ἐπίσκοπον Ταρσοῦ περὶ τοῦ δύο ἀδελφὰς ἀγομένου εἰς γάμον.

Այստեղ Դիոդորը նշվում է Տարսոնի եպիսկոպոս, իսկ հայերենում՝ Անտիոքի մեծ քահանա։ Կանոնագրքում եղած սկզբի մի քանի տողը վերաշարադրված է վերևում բերված բնագրի միջին մասից, մնացածը նույնությամբ բերված է հատվածաբար։ Հայերենը միանգամայն համապատասխանում է հունարենին։

Նորահայտ այս բնագրի նշանակությունը շատ մեծ է։ Այն նախ և առաջ օգնում է մեզ պարզելու, թե Հովհաննես Օձնեցին կանոնագիրքը կազմելիս ինչպես է օգտագործել իր ձեռքի տակ գտնված նյութերը։

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Ցանկ, էջ 363—367: *Սահակ Պարթևի կանոնախումբը Կանոնագրքում կազմված է կանոնական առանձին շրջաբերական նամակներից, որոնք ունեն հետևյալ հաջորդականություն և ենթավերնագրերը։*

1. Յաղագս քորեպիսկոպոսաց թէ ո՛րպէս պարտ է զկանոնական կարգն հաստատուն պահել յեկեղեցիս (բաժանված է 12 հոդվածի)։

2. Կարգ քահանայից առ ժողովրդականս եւ նոցին ժողովրդականաց հնազանդութիւն եւ կարգ ուղղութեան առ քահանայս (բաժանված է 23 հոդվածի)։

3. Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշման վանաց (բաժանված է 9 հոդվածի)։

4. Թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս սորայ եկեղեցւոյ (բաժանված է 5 հոդվածի)։

5. Թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց պահել զզանձս եկեղեցւոյ կամ որոց որպէս մատակարարել (բաժանված է 6 հոդվածի)։

Ընդամենը 55 հոդված է հինգ ենթավերնագրերի տակ։ Երբեմն պատահում է, որ այդ ձեռագրերում այս ենթախմբերի հաջորդականությունը տարբեր է, օրինակ՝ № 639 ձեռագրում տարբեր է ոչ միայն վերևում նշված հաջորդականությունը, այլև ձեռագրի տարբեր տեղերում, միջանկյալ նյութերից հետո, իրարից հեռու, գտնվում են կանոնական այս թղթերի տարբեր ենթախմբերը։ Եթե հետևելու լինենք Կանոնագրքում այս ենթախմբերի հաջորդականությանը, ապա № 659 ձեռագրի և Սոփերքի Բ հատորում եղածը կունենան հետևյալ հերթականությունը.

Կանոնագիրք	*№ 659 ձեռ.*	*Սոփերք Բ հատ.*
1	(չունի)	*2 (էջ 80—87)*
2	*4 (էջ 255ա—261բ)*	*3 (էջ 88—99)*
3	*3 (էջ 227բ—233բ, ընդարձակ հատված չի պահվել, այնուհետև առանձին վերնագրի տակ գրված է Կանոնագրքի ԽԱ—ԽԴ հոդվածները՝ էջ 261բ—263բ)։*	*4 (էջ 100—116)*
4	*1 (էջ 216բ—221բ)*	*1 (էջ 71—79)*
5	*2 (էջ 221բ—227ա)*	*5 (էջ 117—126)*
(չունի)	(չունի)	*6 (Գիր աւանդութեան, էջ 127—134)*

Ինչպես որ այս ենթախմբերի հաջորդական կարգը փոփոխական է, № 659 ձեռագրում էլ ենթախմբերի վերնագրերը հաճախ նշված են տարբեր, որ ցույց կտանք իր տեղում, եղած նյութերն էլ բաժանված չեն հոդվածների (հմմտ. նաև №№ 649, 650, 651, 2964 ձեռագրերը). որոշ հոդվածներ բառի բուն իմաստով հոդվածներ չեն, այլ ներածական, օրինակ՝ ԺԳ հոդվածը և այլն։ Այս բոլորը ցույց են տալիս, որ դրանք տարբեր առիթներով գրված կանոնական առանձին թղթեր են, որոնք բաժանվել են հոդվածների հետագայում, ամենայն հավականությամբ Կանոնագրքի մեջ մտնելու ժամանակ։ Կանոնագրքի բնագրի կազմման համար օգտագործված ձեռագրերից չորսի ցանկում հոդվածների վերնագրերը թեև, ըստ էության, չեն տարբերվում եղածից, սակայն բոլոր այդ վերնագրերը գրված են ոչ թե հոդվածների սկզբում, ինչպես Կանոնագրքում է, այլ Սահակ Պարթևի կանոնախմբի տար-

րեր ենթախմբերի սկզբում. օրինակ՝ km ձեռագրերի ցանկում նշված են Ա—ԼԵ հոդվածների վերնագրերը, իսկ հետո գրված են համապատասխան հոդվածները՝ Ա—ԼԵ, ապա հաջորդ ենթախմբի հոդվածների ցանկը՝ ԼԶ—ԽԴ, սրան համապատասխան հոդվածները. նորից ցանկ՝ ԽԵ—ԽԹ, և ապա սրան համապատասխան հոդվածներ. ի վերջո էլի ցանկ՝ Ծ—ԾԵ, և սրա համապատասխան հոդվածները: ps ձեռագրերում ցանկը կազմված է ճիշտ այդ ձևով, միայն այն տարբերությամբ, որ այս երկու ձեռագրերում ցանկի վերնագրերի համարակալումը վերևում նշվածի նման չէ, այլ ամեն անգամ սկսվում է սկզբից. այսպես՝ Ա—ԼԵ, Ա—Թ, Ա—Ե, Ա—Զ: Ի միջի այլոց k ձեռագրում հոդվածների ցանկում եղած վերնագրերը թեև Կանոնագրքի ունեցածի համեմատությամբ երբեմն գրվում են ետ ու առաջ, բայց հոդվածների հերթականությունը նույնն է, ինչ Կանոնագրքում:

Ձեռագրերի ցանկում նշված «ԽԹ. Վասն եպիսկոպոսաց և վարդապետաց» վերնագիրը հոդվածների շարքում համապատասխան հոդված չունի, սակայն ուշադիր քննությունը ցույց տվեց, որ ԽԸ հոդվածի երկրորդ մասը՝ «Հրեշտակական վարուց»-ից մինչև նույն հոդվածի վերջը, պետք է լինի առանձին հոդված՝ համապատասխան ցանկի ԽԹ վերնագրին: Ըստ երևույթին՝ ընդօրինակությունների ժամանակ ինչ-ինչ պատճառով հոդվածի համարը՝ ԽԹ դուրս է ընկել և հոդվածը միացվել նախորդ՝ ԽԸ հոդվածին և այդ ձևով մնացել մինչև այժմ: Նկատի ունենալով այս հանգամանքը, հոդվածների շարքում ԽԸ հոդվածից անջատեցինք վերջինիս կցված մասը և դրեցինք առանձին՝ ԾԿԸ—ԽԹ համարի տակ: Ըստ այնմ էլ ԽԹ հոդվածին հաջորդող մի քանի հոդվածների համարները նույնպես փոխեցինք մեկով, որով հոդվածների համարակալումը համապատասխանեց ցանկում եղածին: Իսկ «Վասն սրոյ աղաչեմ եւ վկայութիւն դնեմ» հատվածից, որը ձեռագրերում գրված է ԾԶ—ԾԵ համարի տակ, համարակալումը հանեցինք, որովհետև չէր համապատասխանում ցանկի վերնագրին. այն շատ ավելի նման է վերջաբանի, քան թե հոդվածի: №№ 649, 650, 651, 2964 ձեռագրերը ցանկ չունեն: n ձեռագրում ԾԱ հոդվածի վերնագիրը ցանկում այսպես է. «Վասն եպիսկոպոսի թէ որպէս պարտ է լինել տեսուչ եկեղեցւոյ»: Այնուհետև ընդգծված բառերի վերևում ավելացրել են. «Գահել զի նշս»:

Հոդ. Ա, էջ 368: Հոդվածի սկզբում հեղինակը գրում է. «Վերագոյն ճառեցաւ ի մէնջ»: Այս առթիվ Մ. Աբեղյանը գրում է. «Իսկ վերևում բան չկա ասված» (տես Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 116, ծանոթ. 1): «Ինչպես երևում է—ավելացնում է Մ. Աբեղյանը,—այս խմբագրությունը (իմա Կանոնագիրք Հայոց, Արսեն Ղլտճյան, Թիֆլիս, 1914—Վ. Հ.) թերի է» (նույն տեղում): Նախորդ ծանոթագրության մեջ նշեցինք, որ Սահակ Պարթևի կանոնախումբը (ըստ Կանոնագրքի) բաղկացած է հինգ ենթախմբերից, որոնք տարբեր գրություններ են և տարբեր ժողովածուներում ունեն տարբեր հերթականություն: Այստեղից էլ «Վերագոյն ճառեցաւ ի մէնջ»-ի բովանդակությունը պետք է փնտրել Սահակ Պարթևի կանոնախմբերի մյուս ենթախմբերում. օրինակ՝ Ն. Ակինյանը կարծում է, որ Կանոնագրքի Սահակ Պարթևի առաջին ենթախմբին՝ «Յաղագս քորեպիսկոպոսաց թէ որպէս պարտ է զկանոնական կարգն հաստատուն պահել յեկեղեցիս», նախորդել է Կանոնագրքի չորրորդ՝ «Թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս սրբոյ եկեղեցւոյ» ենթախումբը և վերջինիցս վերցնելով «տեսուչ... զի սրբոց եւ նախանձաւորաց աւրինաց և հմուտ եղելոց վարդապետութեան արժանաւոր է տալ զայնպիսի պատիւ, որք զժողովուրդն բավական լիցին խրատել...» (տե՛ս Հանդէս Ամսօրեայ. 1946, № 1—12, էջ 52) հատվածը, ենթադրում է, որ «Վերագոյն ճառեցւ ի մէնջ» ասելով հեղինակը նկատի ունի այս հատվածը: Ն. Ակինյանը ճիշտ է այնքանով, որ Կանոնագրքում եղած Սահակ Պարթևի չորրորդ ենթախումբը պետք է գրված լինի առաջին տեղում, ինչպես նշվում է Սոփերքում: Մեր կարծիքով Սահակ Պարթևը «Վերագոյն ճառեցաւ ի մէնջ»-ով նկատի ունի չորրորդ ենթախմբի ոչ թե այս կամ այն ասույթը, ինչպես փորձում է ցույց տալ Ն. Ակինյանը, այլ ամբողջ չորրորդ ենթախումբը, որովհետև այս ենթախմբի ԽԹ հոդվածում ևս հանդիպում ենք նման բնորոշման, ինչպես Ն. Ակինյանի նշածն է: Ի դեպ Սահակ Պարթևի ենթախմբերի վերնագրերի ուշադիր քննությունը նույնպես բերում է տրամաբանական այդ եզրակացության: Մի քանի ձեռագրերում «Վերագոյն ճառեցաւ ի մէնջ որոց» հատվածի «ի մէնջ որոց»-ի միջև գտնում ենք միջանկյալ նախադասություն. «Վերագոյն ճառեցաւ ի մէնջ եւ ընտրել կացուցանել յաթոռ քորեպիսկոպոսութեան զայնոսիկ որոց» այնուհետև ինչպես բնագրում է (№ № 649, էջ 86բ, 650, էջ 96ա, 651, էջ 74բ, 2964, էջ 123բ): № 659 ձեռագիրը չունի Ա—ԺԲ հոդվածները:

Հոդ. Ը, էջ 371: 371-րդ էջի 11-րդ տողի «Աստուծոյ զի» բառերի միջև մի քանի ձեռագրերում գտնում ենք ընդարձակ հատված. «զարդարուն ճշմարիտ հաւատովք եւ գործովք առաքինութեան ցանկալի ամենեցուն եւ պատուական որպէս եւ վայել է իսկ պաշտօնէից Աստուծոյ» (№ № 649, էջ 88ա, 650, էջ 97բ, 651, էջ 75բ, 2964, էջ 125ա)։

Ներբավերճագիր, էջ 375: № 659 ձեռագրում ԺԳ—ԼԵ հոդվածների ենթախումբը հաջորդում է Շահապիվանի ժողովի կանոնախմբին, հետևյալ ուշագրավ վերնագրով. «Կանոնական թուղթ վարդապետացն Հայոց, կարգ քահանայից առ ժողովրդականսն և նոցին առ ժողովրդականացն հնազանդութիւն և կարդ ուղղութեան առ քահանայս» (էջ 255ա)։ Այս ենթախմբի վերնագիրը հենց այդպես է դրված նաև նույն ձեռագրի բովանդակած նյութերի ցանկում. «Ցանգ վարդապետացն Հայոց» (էջ 1ր)։ Քանի որ № 659 ձեռագրում այս ենթախումբը հաջորդում է Շահապիվանի ժողովի կանոնախմբին մի կողմից և վերնագրում էլ նշված է «Կանոնական թուղթ վարդապետացն Հայոց» մյուս կողմից, կարող է ստեղծել սխալ այն տպավորությունը, որ Սահակ Պարթևի կանոնախմբի այս ենթախումբը մինչև այժմ թյուրիմացաբար է վերագրվել Սահակ Պարթևին և նրա իսկական հեղինակը Շահապիվանի ժողովի մասնակից վարդապետներն են եղել։ Սակայն այս երկու բնագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն չէր կարող ժողովի մասնակիցների անունից գրվել, այլ անհատ մարդու անունից միայն։ Թե ինչպես է վերնագրում տեղ գտել նշված թյուրիմացությունը, դժվար է հաստատ բան ասել ,սակայն հաստատ կարելի է նշել, որ նման թյուրիմացությունը եզակի չէ, օրինակ՝ № №8459, 9311 ձեռագրերում Հարանցն հետեողաց կանոնախումբը վերնագրված է Կղեմեսի անվամբ. «Սահմանք եւ կանոնք, զոր եղին առաքեալքն ի ձեռն Կղեմայի» (էջ 3ա, էջ 2ա), կամ № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում Սահակ Ձորոփորեցու կանոնախումբը դրված է Մովսես Քերթողահոր անունով։

Մի քան այլ ձեռագրերում այս ենթախումբն ունի «Կանոն սրբոյն Սահակայ Հայոց կաթուղիկոսի ի լրումն հաւատոյ ամենայն աշխարհիս Հայոց մեծաց, գլուխք ԺԹ» (№ 2964, էջ 127ա, հմմտ. նաև № № 649, էջ 89բ, 650, էջ 99ա, 651, էջ 77ա)։

Հոդ. ԺԳ, էջ 375 376: Մի քանի ձեռագրերում հոդվածի սկիզբն այսպես է. «Եղբարց սիրելեաց երիցանց և վանականաց եւ ճամաւրէն ժողովրդականաց որպէս ամբաստանութիւն եղեւ» և այլն (№ 659, էջ 255ա, տես նաև № № 649, էջ 89բ, 650, էջ 99ա, 651,էջ 77ա, 2964, էջ 127ա)։ Ընդգծված հատվածը բացակայում է Կանոնագրքում։

Հոդ. ԺԴ, էջ 377: Այս հոդվածի վերջին մասը մի քանի ձեռագրերում ընդարձակ է, համեմված Աստվածաշնչից վերցրած մեջբերումներով, օրինակ՝ «քահանայից, լուայք ի մարգարէէն... անձանձրոյթ հոգ տանել» հատվածը ներքոհիշյալ ձեռագրերում այսպես է «Քահանայից որպէս լուաք ի մարգարէից, որպէս Եզեկիէլ գոչէ հոգով սրբով եւ ասէ, թէ ով հովիւ տարապարտ արօտ, որ թողի զխաշինս իմ յաջ բազուկ քո և յաջ ակն քո, այլ զի մի՛ լուիցուք զնորին պատուհասն, այլ օրինակ ճշմարիտ կացուցէք զանձինս ձեր ժողովրդականացդ ամենայն պարկեշտութեամբ աղօթից եւ պահոց, անձանձրոյթ հոգ տանել եւ ի մի առնուլ զասացեալսն ի Մաղաքիաէ, թէ շրթունք քահանային գիտութեան զգուշասցին, զի աւրէնք հարցանին ի բերանո քահանային, քանզի հրեշտակ է հզաւրի Աստուծոյ» (№ 649, էջ 90ա, բ, տես նաև № № 650, էջ 100ա, 651, էջ 78ա, բ, 2964, էջ 128ա)։

Հոդ. ԻԹ, էջ 380: Հոդվածի վերջին մասը № 659 ձեռագրում մի փոքր ընդարձակ է. «...Ի կարգէն իւրմէ ղադարեալ լիցի ժողովրդեանն և միասին եկեղեցւոյ իշխան մի՛ լիցի եւ ընկերք իւր ընդ նմա հաղորդել մի՛ իշխեսցեն եւ ժողովրդականքն զայնպիսիսն» (էջ 258ա) ընդգծված մասը Կանոնագիրքը չունի։

Հոդ. ԻԳ, էջ 380: № 651 ձեռագիրն այս հոդվածը չունի։ Իսկ № 659 ձեռագրում չի պահպանվել սկզբի «տղէտ երէցեղբարք ժողովուրդ մի՛ իշխեսցեն ունել» հատվածը։

Հոդ. ԻԴ, էջ 380—381: № № 651 և 2964 ձեռագրերում չի պահպանվել հոդվածի սկզբից մինչև «յառաջ մի՛ իշխեսցեն առնել» հատվածը։ ԻԴ հոդվածի մնացած մի փոքր մասը կցված է ԻԲ հոդվածին։

Հոդ. ԻԸ, էջ 382—383: № 2964 ձեռագիրը չունի հոդվածի սկզբի «ապա եթէ լսեմ» բառերը։

Հոդ. ԼԶ, էջ 386—391: Այս հոդվածին նախորդող վերնագրից մինչև Սահակի կանոնախմբի վերջը (421 էջ) չի պահպանվել № № 649, 650, 651, 2964 ձեռագրերում։ Սակայն հետաքրքիր է այս ենթախմբի № 659 ձեռագրում ունեցած վերնադիրը. «Սահմանադրութիւն կարգաց ընկալեալ ի նահատակէն տեառնէ Գրիգորէ թարգմանեցաւ ի ձեռն Եզնակայ, հրամանաւ երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց եւ նորին աթոռակցաց, թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշումն վանաց» (էջ 227բ., հմմտ. Արել Միխիթարյան, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, էջ 25—31)։ Հմմտ. ԽԴ հոդվածի և համապատասխան ծանոթագրու-

թյան հետ։ Աբել Մխիթարյանը այս ենթախումբը նշում է Գրիգոր Լուսավորչի անունով։

Այս հոդվածում կան տեղեր, որոնք № 659 ձեռագրում համառոտ են, տեղեր էլ կան, որ ընդհարձակ են. այդ բանը ցույց կտանք համապատասխան հատվածները բերելով, օրինակ. 1. 388-րդ էջի 5—6 տողերի «եւ զնա իսկապէս... ի Քրիստոս հաւատացելոց» հատվածը № 659 ձեռագրում այսպես է. «և զհաւատն զնա իսկապէս խոստովանիմք ասել մայր եկեղեցւոյ ի Քրիստոս հաւատացելոց» (էջ 288բ)։ 2. 390-րդ էջի 8-րդ տողից «Տեսե՞ր զճշմարիտ հիմն եկեղեցւոյ» հատվածից մինչև 391-րդ էջի 1-ին տողի «եկեղեցին» բառը № 659 ձեռագրում գրված է այսպես. «վասն որոյ փրկիչն տէր ասաց խնդալ զառաքեալս, թէ խնդացէք զի անուանք ձեր գրեալ են ի դպրութիւն կենաց տեսեր զճշմարիտ հիմն եկեղեցւոյ» (էջ 230ա)։

Հոդ. ԼԹ, էջ 395—390: *№ 659 ձեռագրում չի պահվել այս հոդվածի «այլ միևնոյն..... և ոմն փոքր» հատվածը (էջ 233ա)։*

Հոդ. Խ, էջ 397—399: *№ 659 ձեռագրում պահվել է այս հոդվածի սկզբի մի փոքր մասը, իսկ «Տաւն սրբոյն Յովհաննու Մկրտչի եւ վկայի» հատվածից մինչև հոդվածի վերջը՝ «յայնր մտեալ հիւրքն և աւրհնեսցեն» հատվածը չի պահվել № 659 ձեռագրում. սրան հաջորդում է Շահապիվանի ժողովի կանոնախումբը, վերջինիս էլ՝ Սահակ Պարթևի կանոնախմբի Բ ենթախումբը։*

Հոդ. ԽԱ, էջ 399—400: *№ 659 ձեռագրում ԽԱ—ԽԴ հոդվածները գրված են առանձին վերնագրի տակ. «Կանոն Լուսաւորչին» (էջ 261բ), որոնք այստեղ նշված են որպես մեկ կանոնական թուղթ առանց հոդվածների բաժանելու։ Նույնը տես C ձեռագրում, (էջ 114ա)։ Այստեղ սկզբում այս կանոնախումբը գրված է այնպես, ինչպես A-ում, բայց հետո ԽԱ հոդվածի սկզբից, տողամեջ, կարմիր թանաքով գրիչն ավելացրել է՝ «Կանոն Լուսաւորչին», նույն թանաքով և ձեռագրով էջի ներքևի լուսանցքում ավելացնելով՝ «յօրինակէ դրեցի»։ Թերևս սա նշանակում է այլ օրինակից է գրել, որի մեջ այս մի քանի հոդվածը վերնագրված է Գրիգոր Լուսավորչի անունով, ինչպես և № 659 ձեռագրում։ Աբել Մխիթարյանի հրատարակության բնագրում ևս այս ենթախումբը բերված է «Կանոնք Ս. Գրիգորի Պարթևի» (էջ 31—32) անունով և դրված է վերջինիս կանոնախմբերի շարքում. դա մեզ ենթադրել է տալիս, որ հրատարակիչը հավանաբար օգտվել է մեր Մատենադարանի № 659 կամ C ձեռագրերից։*

Հոդ. ԽԳ, էջ 400—402: *Բնագրի «ի վեր կիւրակէքն ամենայն... և Վարդավառն» հատվածը № 659 ձեռագրում շարադրված է այսպես. «Եւ ի վեր կիրակէ այն ամենայն յիսներրեկին և տաւն սրբոյ Պենդակոստէին յորում հոգին սուրբ առաքելոցն շնորհեաց լեզուս և տաւն սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին և Վարդեվարն» (էջ 262ա) ձևով։*

Հոդ. ԽԴ, էջ 402—403: *Սրա սկզբի մասը հիշատակարանն է և կարող է հնության կնիք ունենալ, բայց հաջորդ մեծ մասը՝ «Արդ՝ եթէ ոք» (էջ 402 տող 8) հատվածից մինչև հոդվածի վերջը ավելացվել է ուրիշի, հավանաբար Հով. Օձնեցու կողմից։ Հենց այդ մասն է, որ կարող է այս կամ այն չափով իրավաբանական հոդվածի (որոշում է հանցանքը և պատիժը) տպավորություն թողնել։ Նկատի ունենալով, որ Սահակ Պարթևի կանոնախմբի Գ ենթախումբը № 659 ձեռագրում ունի երկու վերնագիր (տես ԼԶ և ԽԱ հոդվածների ծանոթագրությունը), իսկ այդ ենթախումբն էլ ավարտվում է թարգմանության մասին եղած վերոհիշյալ հիշատակարանով (տես ԽԴ հոդվածը), կարող ենք ենթադրել, որ միայն այս ենթախումբը՝ ԼԶ—ԽԴ հոդվածները. սակայն ոչ այս ծավալով, այլ համառոտ, եղել է հունարեն, Գրիգոր Լուսավորչի անվամբ, որը հետագայում՝ Ե դարում թարգմանվել է հայերենի։ Թարգմանելուց հետո Սահակ Պարթևը լրացրել է և ճոխացրել դրանք և որպես կանոնական շրջաբերական ուղարկել տեղերը։ Ի դեպ Սահակ Պարթևի կանոնների վավերականությունը հայագիտության մեջ կասկածի է ենթարկվել (տես Հ. Գաթրճեան, Սրբազան պատարագամատոյցք Հայոց, Վիեննա, 1897, էջ 141, ծանոթ. 103. էջ 231, ծանոթ. 38, էջ 323, 733. Ն. Ակինեան, Ս. Սահակի վերագրուած կանոնները, Հանդէս Ամսօրեայ, 1946, № 1—12, էջ 48—70, 1947, № 1, էջ 1—25)։*

Հոդ. ԽԵ, էջ 403: *Այս հոդվածը № 659 ձեռագրում սկսվում է այսպես. «Այցելեու հասարակաց հայր վիճակեալս եպիսկոպոսն» (էջ 216բ)։ Գ ձեռագրում «Թէ որպէս պարտ է եպիսկոպոսաց ունել զընտանիս սրբոյ եկեղեցւոյ» ենթախումբը սխալմամբ կրկնված է (էջ 114բ—115բ), թեև թերի, համեմատության համար օգտագործեցինք 115բ—117բ էջերում գրվածը միայն։ Հմմտ. Ե, էջ 191ա—195ա։*

Հոդ. ԽԹ, էջ 409—410: *№ 659 ձեռագրում դուրս է ընկել սույն հոդվածի «պարտի բերել յինքեան եպիսկոպոսն եւ ամենայն վարդապետք, ուր ոչ ազգականութիւն եւ ոչ ակնառութիւն է եւ» հատվածը, (էջ 220ա)։*

(Հոդ. ԾԵ) էջ 420—421։ № 659 ձեռագրում չի պահվել սույն հոդվածի «աղքատք խնամեալք, տնանկք յապահովացեալք» հատվածը (էջ 227ա)։

ՇԱՀԱՊԻՎԱՆԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Ցանկ, էջ 422—423: № 659 ձեռագրում, հակառակ Կանոնագրքում եղածի, սկզբում գրված է առաջաբանը, ապա՝ ցանկը. ահա այն.

«Ցանկ կանոնաց վարդապետաց Հայոց.

ա. Եպիսկոպոսացն
բ. Երիցանցն
գ. Գոռնըկացն
դ. Կնաթողացն
ե. Ամուրեացն
զ. Աղգականաց, որ յանէ եղանի-
ցենն
է. Բռնութեամբ առեանկացն.
ը. Կախարդացն
թ. Հարցկաց և դիւթիցն
ժ. [Դ]իւթիցն

ժա. Կծողաց մեռելոյն
ժբ. Որդի որ զկին հաւր ունիցին
ժգ. Ազգական կնոջն
ժդ. Եպիսկոպոսաց և երիցանցն
ժե. Պաշտաւնէից և ուխտի մանկանցն
ժզ. Եպիսկոպոսի և վանաց երիցու
ժէ. Նշխարացն մարտիրոսացն
ժը. Վարդապետի և աշակերտին
ժթ. Մծղնէիցն
ի. Մծղնէից» (էջ 236բ)։

Այս ցանկը կազմված է Կանոնագրքում եղածից անկախ, ձեռագրի գրչի կողմից: № № 648 և 3562 ձեռագրերում Շահապիվանի ժողովի կանոնախումբը ընդօրինակել են երկու անգամ՝ № 648, 28ա—31ա (կնչենք որպես առաջին ընդօրինակություն) և 132ա—193ա (կնչենք որպես երկրորդ ընդօրինակություն) էջերում, № 3562, 301բ—305ա (կնչենք որպես առաջին ընդօրինակություն) և 440բ—451ա (կնչենք որպես երկրորդ ընդօրինակություն) էջերում: Վերջին չորս բնագրերից միայն № 3562 ձեռագրի երկրորդ ընդօրինակության մեջ է պահվել ցանկը, մնացածները չունեն այն: Այս վերջինս նույնն է ինչ որ Կանոնագրքում եղածը, միայն ցանկի երեք հոդվածների վերնագրերում նկատում ենք աննշան շեղում. «ժբ. Վասն որ ընդ մաւրու շնայ: ժդ. Վասն որ տանտիկին ունի ի տան: ի. Վասն եպիսկոպոսի որ գիտէ զայն»:

Բացի սրանից, ցանկում բոլոր հոդվածների վերնագրերի սկզբում հանդիպում ենք «Վասն» բառին, օրինակ՝ գ. Վասն շնացողաց, և այլն:

Առաջաբան, էջ 424—429: Կանոնագրքում, Շահապիվանի ժողովի կանոնախմբի ցանկից հետո, կա միջանկյալ մի հատված. «Եղեալ միաբանութեամբ աւագ Հայոց յետ Ներսէսի վախճանելոյն սրբոյն Սահակայ կարգեցան կանոնքս այսոքիկ»: Արդարացի կերպով այդ հատվածը վաղուց արդեն վերագրել են Հովհ. Օձնեցու գրչին: Այդ հատվածին այնուհետև հաջորդում է ընդարձակ վերնագիր: Վերջինս № № 648 և 3562 ձեռագրերի առաջին ընդօրինակության մեջ տարբեր է. «Կանոնք զոր եդին հայրապետք Հայոց ի Շահապիվանի ի բանակետղ թագաւորաց Հայոց» (էջ 28ա, էջ 301բ): № 659 ձեռագրում առաջաբանին նախորդում է «Նախադրութիւն» վերնագիրը, իսկ մնացած ձեռագրերի համապատասխան վերնագրերը նույնն են, ինչ որ Կանոնագրքինը:

Առաջաբանում նշվում է, թե ե՛րբ, ի՛նչ նկատառումներով է գումարվել Շահապիվանի ժողովը: Որոշ ուսումնասիրողներ այդ առաջաբանի զգալի մասը համարում են ուշ ժամանակներում կատարված ընդմիջարկություն (տե՛ս Ա. Ղլտճյան, Կանոնդիրք Հայոց, էջ 58. հմմտ. Ն. Ակինյան, Հանդէս Ամսօրեայ, 1949, № 4—12, էջ 98):

№ 659 ձեռագրում առաջաբանն ունի բավականին ընդարձակ հատված, որ չունի Կանոնգիրքը. և որովհետև դա չափազանց կարևոր է, ուստի պատկերացումն ամբողջական դարձնելու համար այդ առաջաբանը կբերենք լրիվ.

«նախադրութիւն. Պարտ և պատշաճ է նաւավարին հոգալ զիրս նաւին և զշաւիղս ծովուն նկատել և ըստ հողմոյն աջողութեան գնալով ի վերայ մկանաց ծովուն. նոյնպէս և դաւրավարին յամենայն ժամ զզաւրսն տեսանելով և ի հանգիսի անցանել զայրընտիր, զձիընտիր, զգէն զանձամբ ե ապա սպառազէն զերիվարաւն ակն ունել ճակատուն յաղթող գտանել և առնուլ զպսակն ի թագաւորէն. ապա առաւելապէս արժան է վարդապետաց եկեղեցւոյ հովուաց և առաջնորդաց, արդարութեամբ և ստոյգ պտուիրանին Աստուծոյ կենդանւոյ յամենայն ժամ յաւրէնսն տեառն խորհել ի տուէ և ի գիշերի և զմանկունս եկեղեցւոյ նորափետուր զարդարել ի տէր։

Յետ փոխելոյն յերկրէս վարդապետացն հարցն արդարոց ե ճշմարիտ աւրէնսդիր առաջնորդացն մանաւանդ սրբոյ քահանային Սահակայ Հայոց կաթողիկոսի և հոգիկից, հոգէկիր ճշմարիտ վարդապետին Մեսրովբայ, որ լուսաւորեաց զերկիր Հայոց, ի փոխել նոցա յերկրէն (ուրիշներ ուղղել են յերկրէս—Վ. Հ.) լինէր եղծումն և բայքայումն կարգաց և աւրինաց սրբոյ եկեղեցւոյ, որպէս տեսանէր յառաջագոյն ի տեսլեան քահանայապետն Սահակ և կամ ևս յառաջ մեծն Գրիգորիոս։ Եւ բազմանային, որք յաճախէին ի գործս պղծութեան և յետս ընդդէմ գնացից ի ցամաքել սիրոյն բազմանայր անաւրէնութիւնն. և ոչ ոք էր, որ քաղէր զորոմն և կտրէր զդաղձն վնասակար, քանզի արմատացեալ էր սեղն և տարածէր աւր ըստ աւրէ և լինէր յաճախումն մծղնէից, ինահանէից, պոռնկաց, անձնակամաց, գողոց, և ամենայն չարագործաց յաշխարհին Հայոց ի մէջ տանն Թորգոմայ։ Եւ լինէր սուգ և տրտմութիւն, որ էին ի ժամանակին վարդապետք, եպիսկոպոսք, երիցունք և. ոյք ունէին զուխտ սուրբ պաշտամեայք Քրիստոսի և մանկունք եկեղեցւոյ սրբոյ, այլև յուխտէ քահանայիցն ոչ գնային ըստ սրբութեան ճանապարհին և մանաւանդ զի ոչ էր ի ժամանակին յայնմիկ իշխանութիւն ի ձեռն նախանձայոյզ ազգին Մամիկոնէից. զի հնազանդեալ էին համարձակելոց Պարսկային թագաւորութեանն։ Զի թէպէտ և հեծէին և մռընչէին ի նմանութիւն կորեանց առիւծոյ Վարդանն Մամիկոնեան ազգաւ իւրով հանդերձ եղբարբք. այլ կային իբրև ի զառագզի արգելեալք և ակն ունէին վերին աւգնականութեանն։ Քանզի չարահնար ազգն Պարսից ի կասկածանս կային և յերկիւղի և տային զիշխանութիւնն ի ձեռս նոցա։ Ապա աւր աւուր բղխէ զբան և գիշեր գիշերի ցուցանէ զգործսն արդարութեան, բան առ բան հասանէր մարդ ի մարդոյ, հնչիւն լինէր յիւրաքանչիւր լսելիս։ Եւ գային ժողովէին ի հրամանէ միաբանութեան յեղեալ կլտն ի Շահապիվանի բանակետղ թագաւորացն Հայոց ի ժամս նորաբեր տաւնին. և լինէր այս ի ԻՋ ամի թագաւորութեանն Յազկերտի Պարսից արքայի, և Վասակայ Սիւնոյ մարզպանին Հայոց, և Վահանայ Ամատունոյ հազարապետի, և Վրուայ Խոռխոռունւոյ մաղխ[ա]զի։ Եւ գային ժողովէին եպիսկոպոսք Ի և երիցունք բազումք, սարկաւագք և նախանձայոյզ պաշտաւնեայք Քրիստոսի և համաւրէն ուխտք եկեղեցւոյ, իշխանք, գաւառապետք, գաւառակալք, պետք, բռնաւորք, զաւրագլուխ հարիւրաւորք, ազատք, կուսակալք կողմանց կողմանց մեծ աշխարհին Հայոց, նախարարք ամենայն առաջի Վասակայ մարզպանի և Վահանայ հազարապետի և Վրուայ մաղխ[ա]զի և առաջի գլխաւոր եպիսկոպոսաց Ղազա, Տաճատա, Արտակա, Գադա, Եփրեմի և այլոց բազմաց երիցանց գլխաւորաց՝ Յովսեբայ (ուղղված ուրիշների կողմից Յովսեփայ—Վ. Հ.), Յովհաննայ, Մեղտայ, Երեմիայի, Ասպուրակայ, Դանիէլի, Ղեւոնդի սրբոյ, Եղիշէի դրան երիցու և այլոց սրբասէր քահանայից, որք էին նախանձախնդիր աւրինացն առաջի աւագ նախարարացն՝ քաջին և կորովոյն Վարդանայ Մամկոնենւոյ և Արշա[ւ]րայ (գրիչն ուղղել է Արշաւրայ—Վ. Հ.) Կամսարականի և Մանաճիհ[ր]ի Ռշտունւոյ սպարապետին Հայոց, Զըկա Դիմաքսենի և այլոց նախարարաց։ Որք միաբանեալք էին և հաւանեալք արդար աւրինաց և քրիստոսական պաշտաման և միաբան բարբառէին այսպէս, եթէ «Ջեղեալ զկարգն սրբոյն Գրիգորի և զՆերսէսի և զՍահակայ և զՄաշգոցի դուք այդրէն հաստատեցէք և այլ ևս լաւ որպէս ձեր կամք են և մեք ախորժելով յանձին ունիմք, զի կարգք եկեղեցւոյ թուլացան և մարդիկ յանաւրէնութիւն դարձան։ Արդ՝ որ աւրէնք Աստուծոյ հաճոյ են ի եկեղեցւոյ, դուք զայն կարգեցէք և մեք հնազանդիմք. և եթէ ոք հաստատուն ոչ պահէ զկարգս աւրինացն եպիսկոպոս կամ երէց կամ ազատ կամ շինական՝ պատուհասեսցի և տուգանս տացէ»։ Եւ զայս ասացեալ քահանայապետիցն եթէ «Առաքելականն և Նիկիականն հաստատեալ կացցէ, որպէս և էն իսկ և մեք հնազանդ եմք, բայց որ ինչ պիտոյ է ի լրութիւնս ի նոյն կանոնս և մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ հաստատեսցի»։ Ապա կարգեցին և եդին այսպէս» (№ 659, էջ 233բ—236ա. Հմմտ. Աբէլ Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, էջ 57—60)։

Առաջաբանի մի այլ խմբագրության գտնում ենք մի քանի ուրիշ ձեռագրերում ևս. «Յետ փոխելոյ յերկրէս վարդապետացն Հայոց հարցն առաջնոց արդարոց եւ ճշմարիտ առաջնորդաց և մանաւանդ սրբոյ քահանայապետին երանելոյն Իսահակայ Հայոց կաթողիկոսի եւ հոգէլից, հոգէկիր, ճշմարտասէր վարդապետին Մեսրովպայ, որ լուսաւորեաց երկիրս Հայոց վարդապետու-

թեամբ իւրով. ի փոխելն նոցա յերկրէս առ արարիչն եւ տէր, լինէր եղծումն եւ քակտումն եւ քայքայումն կարգաց եւ օրինաց սրբոյ եկեղեցոյ։ Ապա օր աւուր բխէր բան առ բան եւ գիշերոյ առ գիշեր ցուցանէր զգործս արդարութեան բան առ բան հասանէր մարդ ի մարդոյ հնչումն լինէր յիւրաքանչիւր լսելիս։ Եւ գային հասանէին ժողովեալք ի հրամանէ միաբանութեանցն յեղեալ կլտն ի Շահապիվանի բանակետղ թագաւորացն Հայոց ի ժամամայ (sic) նորաբեր տօնին։ Եւ գային ժողովէին եպիսկոպոսք խ և երիցունք բազումք եւ սարկաւագունք եւ նախանձաւորք պաշտօնեայք Քրիստոսի եւ համօրէն ուխտ սրբոյ եկեղեցոյ եւ իշխանք՝ ամենայն գաւառատեարք, պետք եւ բռնաւորք եւ ազատք կողմանց կողմանց աշխարհիս Հայոց առաջի գլխաւոր եպիսկոպոսաց՝ Ղօղայ, Տաճատու, Արտակայ, Գաղայ, Եփրեմայ եւ այլոց բազմաց եւ իրիցանց գլխաւորաց՝ Յովսեփու, Յոհանայ, Մէղիտայ, Երեմիայի, Ասպուրակեայ, Դանիելի, տեառն Ղեւոնդի, տեառն Եղիշայի և այլոց բազմաց սրբասէր քահանայից, որք էին նախանձախնդիր օրինացն սրբութեան եկեղեցոյ Աստուծոյ։ Ժողովեալ առաջի աւագ նախարարացն քաջին եւ կոռվոյն սրբոյն Վարդանայ Մամգոնենի եւ ամենայն իշխանացն Հայոց եւ ազատաց բազմաց եւ միայնխորհուրդ միաբան բարբառէին այսպէս, եթէ «Ջեղեալ կարգսն սրբոյն Գրիգորի եւ զՆերսեսի եւ զՍահակայ եւ զՄաշտոցի զուք անդրէն հաստատեցէք, եւ այլ եւս զլաւն որպէս եւ ձեռ կամք են. եւ մեք ախորժիւք եւ յօժարութեամբ յանձին ունիմք կատարել, քանզի կարգք եկեղեցոյ թուլացան եւ մարդիկք յանօրէնութիւն հատան եւ թողին զպատուիրանս տեառն։ Արդ օրէնք որ Աստուծոյ հաճոյ են եւ եկեղեցոյ նորա իշխանութիւն, դուք զայն կարգեցէք եւ մեք հնազանդիմք եւ հաստատուն պահեմք. եթէ ոք հաստատուն ոչ պահիցէ զկարգ օրինացն կամ եպիսկոպոս կամ էրէց կամ սարկաւագ կամ ազատ կամ շինական՝ պատուհաս կրեսցէ եւ տուգանս տացցէ»։ Եւ զայս ասացեալ միաբան քահանայապետիցն եւ քահանայիցն եթէ «Առաքելական կանոնն եւ Նիկիականն հաստատուն կացցէ եւ մեք հնազանդեալ եմք, բայց որ ինչ պիտոյ է ի նոսա ի լրութիւն եւ մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ եւ կողմանցս արեւելեացս՝ հաստատեսցուք»։ Ապայ կարգեցին եւ եդին այսպէս» (№ 2964, էջ 132բ—134ա. Հմմտ. նաև № № 649, էջ 94աբ, 650, էջ 103բ—104բ, 651, էջ 82բ—83ա։ Հմմտ. Ալիշան, Հայապատում, էջ 159—160. Այրարատ, էջ 519)։

Առաջաբանի մի երրորդ խմբագրություն պահվել է № № 648 և 3562 ձեռագրերի առաջին ընդօրինակության բնագրում. «Ի Ժ և Ձ ամի թագաւորութեան Յազկերտի Պարսից արքայի, յաւուրս սրբոյն Վարդանա ժողովեցան Խ եպիսկոպոսք յաղագս եղծանելոյ ոմանց զկարգս եկեղեցւոյ ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի եւ սրբոյն Սահակայ. եւ սահմանեցին գլուխս Ի» (№ № 648, էջ 28ա, բ, 3562, էջ 301բ)։

Առաջին և երկրորդ խմբագրությունների մեջ հիշված մի շարք անձնանունները, ինչպես ճիշտ նկատել է Ն. Ակինյանը (Հանդէս Ամսօրեայ, 1949, № 4—12, էջ 90—91), հետագայի մուծում են և կապ չունեն առաջաբանի սկզբնական բնագրի հետ։ Ներսես Ակինյանի կարծիքով առաջաբանը սկզբնապես պետք է լիներ այսպես. «Պարտ եւ պատշաճ է նաւավարին հոգալ զարուեստագործութենէ նաւին եւ վչաւիղս ծովուն նկատել եւ ըստ հողմոյն աջողութեան գնալ ի վերայ մկանանց ծովուն, նոյնպէս եւ զաւրավարին ղզաւրսն ի հանդիսի անցուցանել զայընտիր (sic) եւ զձիընտիր, զէն զարամբ եւ ասպարազէն զերիվարաւ եւ ակն ունել ի ճակատուն յաղթող գտանել եւ առնուլ պսակ եւ պատիւ ի թագաւորէն։ Ապա առաւել արժան եւ իրաւ է վարդապետաց սրբոյ եկեղեցւոյ աւրինաց արդարութեան <պատկառ կալ> և զմանկունս եկեղեցւոյ նորափետուր զարդարել ի Տէր։

Յետ փոխելոյ յերկրէ վարդապետացն հարցն արդարոց՝ Սահակայ... եւ Մաշտոցի... գային ժողովէին ի հրամանէ միաբանելոցն յեղեալ կէտն ի Շահապիվանս, ի բանակետղն թագաւորացն Հայոց, ի ժամանակի ամանորաբեր տաւնին։ Եւ լինէր այս ի Ձ ամի թագաւորութեան Յազկերտի Պարսից արքայի եւ Վասակայ Սիւնւոյ մարզպանութեան Հայոց եւ Վահանայ Ամատունւոյ հազարապետութեան եւ Վրռայ Խորխոռունւոյ մաղխազութեան։ Եւ ժողովէին համօրէն ուխտ սրբոյ եկեղեցւոյ եւ իշխանք ամենայն... կողմանց կողմանց, աւագք նախարարք աշխարհիս Հայոց... <Աւագ նախարարք> միաբան ասէին այսպէս... Աւրէնք, որ Աստուծոյ հաճոյ են եւ եկեղեցւոյ նորա ի շինութիւն, դուք զայն կարգեցէք եւ մեք հնազանդիմք եւ հաստատուն պահեմք. եւ եթէ ոք հաստատուն ոչ պահեսցէ զկարգ աւրինացն, աղատ կամ շինական, պատուհաս կրեսցէ եւ տուգանս տացէ։

Եւ զայս ասացեալ միաբան քահանայապետիցն, եթէ Առաքելական եւ Նիկիական կանոնք հաստատուն կացցեն եւ մեք հնազանդեալ եմք. բայց որ ինչ պիտոյ է ի լրութիւն ի նոյն կանոնս, մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ եւ կողմանցս արեւելեայց, <որպէս եւ ձեր կամք են. եւ մեք կամօք եւ ախորժելով յանձն առնումք։ ...Եւ եթէ ոք հաստատուն ոչ պահեսցէ զկարգս

օրինաց՝ կամ եպիսկոպոս կամ երէց պատուհաս կրեսցէ եւ տուգանս տացէ>։ Ապա կարգեցին եւ եդին այսպէս» (Հանդէս Ամսօրեայ, 1949 թ., N 4—12, էջ 102—103)։

№ 659 ձեռագրում մինչև Ա հոդվածը գտնում ենք վերնագիր. «Սահմանք եւ կանոնք զոր եդին վարդապետք Հայոց ի նոյն լրութիւն Առաքելական եւ Նիկիական կանոնաց հաստատութեան» (էջ 236բ)։

Հոդ. Ա, էջ 429—430: *№ 659 ձեռագիրն այս հոդվածն ունի աննշան շեղումներով. օրինակ՝ «ի տուէ եւ ի գիշերի եւ զպատուիրանս», «եւ ոչ յաճեակ» հատվածները ձեռագրում բացակայում են, իսկ մի քանի բառեր էլ փոխարինված են այլ բառերով, օրինակ՝* վատքարութեան *փխ.* ի վատրար գործս. զվիճակ *փխ.* զրաժին, ի սուրբ արոռն *փխ.* եկեղեցւոյն, զարտուղի *փխ.* ըստ արդուղի. մատուցեն *փխ.* վատ ուսումն ուսցին *(էջ 237ա)։ Մի քանի ձեռագրում էլ «զր պարտ է նմա... զնոյն վատ ուսումն ուսցին» հատվածը բացակայում է (№ № 649, 650, 651, 2964)։ № № 648 և 3562 ձեռագրերի առաջին ընդօրինակությունում Շահապիվանի ժողովի կանոնախումբը գտնում ենք համառոտ ձևով, այդ համառոտումը կատարվել է հետագայում։ Վերջիններիս տարբերությունը ցույց տալու համար այստեղ, Կանոնագրքի հոդվածներին զուգահեռ կբերենք այդ բնագրերը։ «Ա. Եթէ եպիսկոպոս որ գացի ի պղծութեան կամ կամի պոռնկութեան կամ զինչ եւ իցէ ի վատթար գործս եւ զառաքելական պատուին անարգեսցէ եւ վկայութեամբ յայտ եկեսցէ, անկցի յաթոռոյն եւ զքահանայութիւնն մի՛ պաշտեսցէ, ՌՄ դրամ տուգանս տացէ սուրբ աթոռոյն» (№ № 648, էջ 28բ, 3562 էջ 301բ)։*

Հոդ. Բ, էջ 430—432: *Համա. «Բ. Եթէ քահանայ ի նոյն յանցանս գտանի եւ վկայիւք իրքն յայտ եկեսցեն՝ 3 դրամ տուգանս տացէ եւ ինքն լուծցի եւ ի դպրաց կարգի կացցէ. ապա թէ ոչ դարձցի՝ և՛ւ ի դպրաց կարգէն ելցէ, և՛ւ զկնի ծանր ապաշխարութեան տեսանելով եպիսկոպոսին ի դպրաց կարգի կացուսցէ. Եւ թէ կին ուէ իցէ քահանայ կամ սարկաւագ՝ 3 դրամ տուգանս տայցեն եւ ինքեան ընդ պաշտօնեայս մի՛ խառնեսցին, այլ ի կարգի զինուորաց ի բաժին և ի հարկ արքունի [կացցեն]։ Եւ թէ դուստր քահանային պոռնկեսցի՝ եկեղեցւոյ բաժնին մի՛ իշխեսցէ և ի քահանայական տանէն ի բաց ելցէ գնելով ծանր ապաշխարութիւն, սոյնպէս թէ որդի քահանայի արւասցէ՝ պատուհաս կրեսցէ։ Եւ աղախին պոռնիկ ի տան քահանայի մի՛ կացցէ» (№ № 648, էջ 28բ, 3562, էջ 301բ—302ա)։ Թեև № 659 ձեռագրում այս հոդվածը համառոտված չէ և բավական մոտ է Կանոնագրքի բնագրին, բայց ունակ որոշ շեղումներ ունենալով կարող է պատմաբաններին և բանասերներին հետաքրքրության առարկա դառնալ, ուստի բերում ենք այդ հոդվածն ամբողջությամբ. «Բ. Երէց որ գտցի ի պղծութիւն կամ ի պոռնկութիւն կամ յայլ վատթարութիւն, եւ վկայութեամբ իրքն ի մէջ եկին, զերիցութիւնն մի՛ պաշտեսցէ, 3 դրամ տուգանեսցի յաղքատս եւ նա ի դպրաց կարգի կացցէ։ Ապա եթէ ի դպրութեան ի նոյն պղծութիւն գտցի՝ ի կարգէն ելցէ եւ ի դպրութենէն կենաց, մինչև ի կարգ ուղղութեան եկեսցէ ապաշխարութեամբ. եւ տեսեալ եպիսկոպոսին զճանապարհս նորա՝ ի դպրաց կարգ մտցէ։ Երիցու եւ սարկաւագի կանոն այդ կացցէ։ Զի եկեղեցի եւ սուրբ սեղանն, մանաւանդ տէրունական խորհուրդն զանարատս ընդունի. զի մի՛ բարկութիւնն Աստուծոյ զարթիցէ ի վերայ երկրի ի ձեռն առաջնորդի։ Եթէ կնաւ երէց գտցի ի պղծութեան և կամ յայլ գործս, և ստուգեսցի վկայիւք, քահանայութիւնն լուծցի եւ յեկեղեցւոյ բաժնէ հեռասցի, 3 դրամ տուգանս տացէ, զայն ի կարաւտեալս տացեն։ Թէ՛ երէց թէ՛ սարկաւագ կանոն այդ լիցի։ Եւ նոքա ի զինուորաց կարգի կացցեն ի բաժնի և ի հարկ արքունի և ընդ պաշտաւնեայս մի՛ խառնեսցին։ Ապա եթէ կին երիցուն կամ սարկաւագին ի շնութեան գտցին՝ ընտրոյ տեարք նոցա լիցին, կա՛մ զեկեղեցին ընտրեսցեն եւ զքահանայութիւնն, կա՛մ զկինն։ Եթէ զքահանայութիւնն՝ զկինն ի բաց թողցէ եւ ապաշխարութիւն խիստ ի վերայ դիցեն։ Ապա թէ դուստր քահանայի գտցի ի պոռնկութեան՝ եկեղեցւոյ բաժնի մի՛ իշխեսցէ եւ խիստ ապաշխարութիւն դիցեն եւ պատուհաս։ Եւ որդւոյ երիցու նոյն լիցի։ Եթէ երէցն մեռցի՝ կինն առն չիշխէ լինել, նոյնպէս երէցն։ Եւ աղախին պոռնիկ ի քահանային տան մի՛ լիցի, զի սրբութիւն տեղի է» (էջ 237ա—238բ)։*

Հոդ. Գ, էջ 432—435: *№ 659 ձեռագրում այս հոդվածը նույնն է Կանոնագրքի բնագրի հետ, բացառությամբ մի քանի բառերի, որ չունի № 659 ձեռագրի բնագիրը. օրինակ՝ 432-րդ էջի 11-րդ տողը՝ «որ սրբութեամբ զուգին», 433-րդ էջի 1-ին տող «զփառաւորութիւն», 2-րդ տող «առ ոտնհար», «զոր աստուած ետ», 7-րդ և 434-րդ էջի 1-ին տողերի «բաշխեսցեն», 435-րդ էջի 2—3-րդ տողերի «ուռ... ի գլուխ դիցի»։ 433-րդ էջի 9—10-րդ տողերի «Մ դրամ կարաւտելոց»-ի փոխարեն № 659 ձեռագիրը ունի «Մ գրամ յեկեղեցի Մ գրամ կարոտելոց» (էջ 239ա)։*

№ № 648 և 3562 ձեռագրերում այս հոդվածը պահվել է այսպես. «Գ. Եթէ ոք կին ունի եւ պոռնկի, թէ շինական է՝ գան արքցէ, Ճ դրամ տուգան եւ ամ մի ապաշխարեսցէ եւ ապա խառնեսցի յընկերս, ապա թէ ազատ է՝ զան չմարթի հարկանել, բայց Մ դրամ յեկեղեցի և Մ յաղքա-

տրս տացէ եւ Ի ամ ապաշխարեսցէ եւ հաղորդեսցի։ Ապա եթէ ոք յառաջ քան զամուսնութիւնն ընդ աւտարի կամ ընդ իւր խօսած պոռնկի, ընդ անարգանացն տուգան տացէ, զինչ արկցեն հայր եւ մայր կուսին, որպէս Մովսէս հրամայէ յօրէնսն տեառն։ Եթէ կամեսցի զնոյն աղջիկ կին առնուլ՝ առաջի ի ձեռն ապաշխարութեան սրբեսցին, մի՛ իբրեւ զկուսոնաց պսակ աւրհնեսցեն, այլ իբրեւ զերկրին ու տեառնագրեսցեն լոկ։ Ապա թէ աղջկանն կամօք լեալ է պոռնկութիւնն, տուգանին (sic) *հայր եւ մայր աղջկանն մի՛ իշխեսցեն, այլ Ճ դրամ այրն եւ Ծ դրամ աղջիկն տուգանք տացեն յեկեղեցի եւ յաղքատս։ Ապա թէ մինն կուսան է եւ միւսն պոռնիկ՝ կուսանին պսակ եւ պոռնկին ու վասն յաղթութեան թշնամոյն» (էջ 28բ—29ա, էջ 302ա, բ)։*

Այս հոդվածը, ըստ Ն. Ակինյանի, սկզբնապես պետք է եղած լիներ այսպես. «Եթէ ոք կին ունիցի եւ պոռնկեսցի... տուգանս տացեն յեկեղեցի եւ ի կարօտեալս բաշխեսցեն... Եթէ ազատ է՝ Մ դրամ տուգանս տացէ եւ Ի ամս ապաշխարեսցէ. եթէ շինական է՝ դան յոլով արբցէ, Ճ դրամ տուգանս տացէ եւ տարի մի ապաշխարեսցէ, ապա խառնեսցի։ Եթէ այր եւ եթէ կին կանոն այդ կացցէ» (ՀԱ, 1949, № 4—12, էջ 116)։

Հոդ. Դ, էջ 435—436: *Հմմտ. «Եթէ ոք զկին թողցէ զորդոց մայր առանց բանի պոռնկութեան կամ կախարդութեան կամ թէ արատ ինչ ի մարմինն իցէ եւ ինքն այլում ակն իցէ եդեալ՝ ղատաստան այս լիցի. զորդիս եւ զստացուածս, զհող եւ զջուր եւ զամենայն ինչ հաւասար բաժանեսցեն. եւ կինն թէ այր կամեսցի ածել ի տանն, ածցէ։ Եւ այրն կնաթող է ամ ապաշխարեսցէ եւ թէ ազատ է՝ Յ դրամ տուգանս տացէ. ապա թէ շինական է՝ գանալից լիցի եւ Ճ դրամ տացէ։ Ապա թէ տարի մի ի վերայ չիցէ անցեալ, եւ կին ոք յանդուգն լինել կնահանին՝ կալցին զկինն եւ Ի գողենոց տացեն եւ տարի մի աղասցէ, զի պատճառ գտաւ զառաջին կինն թողլոյ. ապա թէ աղատ է եւ չերթա ի գողիսն՝ Ճ դրամ տուգանս տացէ» (№ № 648, էջ 29ա, 3562, էջ 302բ)։*

Հոդ. Ե, էջ 436—438: *Այս հոդվածը մի քանի ձեռագրերում այսպես է. «Ե. Եթէ ոք կին արար եւ նա ամուլ դիպեցաւ եւ արձակեաց այրն, զոր ինչ կինն բերեալ է՝ զայն տարցի. և եթէ քան զամլութիւնն այլ ինչ արատ չկայցէ, տուգանս տացէ վասն անարգանացն, ազատն՝ ՌՄ դրամ, շինականն՝ Ռ։ Եւ թէ ամ մի չիցէ անցեալ ի վերայ եւ այլ ոք կին լինիցի նմա, այնպէս արասցէն որպէս վերագոյնն ասացաք։ Ապա թէ յառաջագոյն այրն եւ կինն ընդ միմեանս պոռնկեալ իցեն՝ այրն Ճ դրամ տուգանս տացէ եւ Գ ամ արտաքոյ դրանն եւ ամ մի ի ներքս մտցէ եւ ելցէ եւ ապա հաղորդեսցի. որ զամուլ եւ զորդոց մայր թողու, ապաշխարութիւնն այդ է» (№ 648, էջ 29ա, բ, հմմտ. № № 649, էջ 97բ, 650, էջ 107բ, 651, էջ 86բ, 2964, էջ 137ա, բ, 3562, էջ 302բ—303ա)։*

Հոդ. Զ, էջ 438: *Հմմտ. նաև «Զ. Եթէ կին յառնէ ելանիցէ, կալցին եւ անդրէն դարձուսցեն. եւ թէ այրն պոռնիկ է կամ հանկանակող եւ արբեցող զանիւ խրատեսցեն եւ առ իրեարս դարձուցէն» (№ 648, էջ 29բ, հմմտ. նաև № № 649, էջ 97բ, 650, էջ 107բ, 651, էջ 86բ, 2964, էջ 137բ, 3562, էջ 303ա)։*

Հոդ. Է, էջ 439—440: *Հոդվածի սկիզբը № 659 ձեռագրում այսպես է. «Է. Որ բռնութեամբ եւ անիրաւութեամբ առեւանգեն» (էջ 241բ), այնուհետև ինչպես Կանոնագրքի բնագրում։ Մինչդեռ մի քանի ձեռագրերում այս հոդվածը համառոտված է. «Որք առեւանկ (№ № 648, 3562 ձեռագրում՝ անկ և առ, էջ 29բ, էջ 303ա) արասցեն, անդրէն առ հայրն եւ մայրն դարձուսցեն զկինն և տուգան տացէ ընդ անարգանացն, ազատն՝ Ռ դրամ, շինականն՝ Շ (№ № 648, էջ 29բ, 3562, էջ 303ա՝ Ռ, № 659, էջ 241բ՝ Ռ), և սուտ փեսային օգնականքն Ճ տացեն յեկեղեցի եւ յաղքատս։ Ապա թէ ապականեաց սուտ փեսան զկինն՝ Ճ դրամ անարգանացն տացէ եւ Գ ամ ապաշխարեսցէ եւ քահանայն որ պսակեսցէն՝ լուծցի եւ պսակն անվաւեր լիցի։ Ապա թէ եամ լիցի աղջկանն կամ ծնօղացն եւ ի հաւանութիւն գան՝ պսակ մի՛ դիցեն, բայց միայն ու* (շարունակությունը № № 648, 3562 ձեռագրերը չունեն) *տեառնագրեալ դիցի ի գլուխն։ Ապա թէ կուսանք կացեալ են ըստ օրինին՝ աւրհնեսցի. եթէ ազատ, եթէ շինական կանոն այդ կացցէ» (№ 2964, էջ 137բ, հմմտ. նաև № № 648, էջ 29բ, 649, էջ 97բ—98ա, 650, էջ 107բ—108ա, 651, էջ 86բ, 3562, էջ 303ա)։*

Հոդ. Ը, էջ 440: *Հմմտ. «Ը. Եթէ ոք ի կախարդութեան գացի կամ յուրացութեան եւ կամ յայլ ի չար գործս եւ ի զղջումն եւ յապաշխարութիւն ոչ եկեսցէն ըստ դրոց հրամանի՝ քարկոծ լիցին։ Ապա եթէ խոստովանեսցի՝ մինչև ցմահ իւր ապաշխարեսցէ, ԺԲ ամ ընդ ունկնդիրս եւ մտեալ յեկեղեցի ելցէ ընդ ապաշխարողսն մի՛ լոկ ի քառասներորդսն, այլ յամենայն ժամ, եւ քննեալ հետքն ի ձեռն ողորմութեանն բաղում ինչ ծախել ի կարաւտեալս, վասն փրկութեան անձինն իւրոյ, չերմ արտասուաւք զյետին թաւշակն առցէ» (№ 659, էջ 242բ)։ Մինչդեռ մի քանի ձեռագրերում այս հոդվածը խիստ համառոտ է. «Ը. Եթէ ոք ի կախարդութեան գտցի և ոչ խոս-*

տովանեսցի՝ քարկոծեսցի րոտ զրոց. ապա թէ խոստովանի՝ ԺԲ ամ առ դրանն ապաշխարեսցէ» (№ № 648, էջ 29բ, 3562, էջ 303ա, բ), № 2964 ձեռագիրը «եւցէ եւ» (Կանոնագիրք էջ 440 տող 11) բառերի միջև ունի մի փոքր հատված. «միմեայն ի քառասներորդն այլ» (էջ 138ա)։

Հոդ. Թ, էջ 441—442: *Հմմտ. «Թ. Ույք ի հարցուկս երթան կամ ի դիւթս՝ ազատն Մ դրամ տացէ եւ շինականն՝ զանիւ հանդերձ Ճ, եւ ապաշխարել Գ ամք, ապա հաղորդեսցին։ Ապա թէ եպիսկոպոս կամ երէց երթան ի հարցուկս եւ Բ կամ Գ վկայիւք յայտնեսցին իրք՝ եպիսկոպոս Ռ դրամ, երէցն Շ տացեն, եւ ինքեանք ի կարգէն լուծցին։ Ապա թէ ի հարեզայից կամ ուխտաւորաց գտցի ոք՝ զաշխարհականայն տացէ դատաստան» (№ № 648, էջ 30ա, 3562, էջ 303բ)։ Կանոնագրքի 441-րդ էջի 2-րդ տողի «ԺԵ կրկին» հատվածը մի քանի ձեռագրերում գտնում ենք. «է րիր» (№ № 649, էջ 98ա, 651, էջ 87բ, 2964, էջ 138ա), իսկ № 650 ձեռագրում. «է բերս» ձևով (էջ 108ա)։ Ն. Ակինյանի կարծիքով այս հոդվածը սկզբնապես պետք է եղած լիներ այսպես. «Որք ի հարցուկս երթան, տուգանս տացեն եթէ ազատ է՝ Մ դրամ, եթէ շինական՝ գան արբցէ ԺԵ կրկին, Ճ դրամ տուգանս տացէ յեկեղեցի եւ կարօտելոց բաշխեսցեն, Գ ամս ապաշխարեալ՝ հաղորդեսցի։ Ապա եթէ եպիսկոպոս կամ երեց իցէ, եպիսկոպոսն յեպիսկոպոսութենէն եւ երէցն յերիցութենէն լուծցի։ Ռ դրամ եպիսկոպոսն տուգանս տացէ, Շ՝ երէցն։ Ապա թէ ի կարգէ պաշտօնէիցն իցէ կամ որդի երիցուն իցէ, զպատուհաս, զտուգանս եւ զապաշխարութիւն զաշխարհականացն կրեսցէ եւ ի կարգէ պաշտօնէիցն ի բաց կացցէ։ Եթէ այր եւ եթէ կին կանոն այդ կացցէ» (Հանդէս Ամսօրեայ, 1949, № 4—12, էջ 121—122)։*

Հոդ. Ժ, էջ 442: *Հմմտ. «Ժ. Որ ի դիւթութեան գտցին՝ ԺԵ կրկին գան արբցեն, խանձեսցեն, մրեսցեն, ոսկերս արկցեն եւ յաւրկանոց տարցեն եւ Բ ամս աղասցէ գողեացն, եւ այլ զինչ տան գործել։ Թէ ազատ է եւ ի գողենոց չերթայ՝ Լ դրամ ի գողիսն տացէ և ինքն Բ ամս յիւր եկեղեցւոյն ապաշխարեսցէ եւ հաղորդեսցի եւ այլ մի մեղիցէ» (№ 659, էջ 243բ)։ Այս հոդվածի մի այլ տարբերակը տես նաև № № 648 և 3562 ձեռագրերում. «Ժ. Իսկ որ լոկ դիւթեն եւ ոչ կախարդեն՝ գան արբցեն, խանձեսցին, մրեսցին եւ զԲ ամ գողեացն աղասցէ. ապա թէ ազատ է՝ Շ դրամ տացէ եւ Բ ամ ապաշխարեսցէ» (էջ 30ա, էջ 303բ)։*

Հոդ. ԺԱ, էջ 443—444: *Հմմտ. «ԺԱ. Եթէ ոք կոծ դիցէ մեռելոյ անյուսաբար, նզովեալ լիցին դնել ի[ն]քն եւ կոծողքն, Շ դրամ տուգանս տացեն, եւ շինականն՝ Ծ, եւ տարի մի յեկեղեցի մի՛ մտցեն եւ մեռելոյն ընդանիքն պատարագ մի՛ արասցեն, զի ինքեանք ընդ բանիւ են։ Բայց երիցունքն եւ պաշտօնեայքն յիւրեանց անձանց արասցեն պատարագ հանգուցելոյն։ Ապա թէ մեռեալն պատուիրեաց կոծ դնել, զտուգանն կրկին տացեն եւ պատարագ մի՛ մատուցեն եւ յիշատակ մի՛ արասցեն» (№ № 648, էջ 30ա, 3562, էջ 303բ—304ա)։*

Հոդ. ԺԲ, էջ 444—446: *Այս հոդվածը № 648 ձեռագրում խիստ է համառոտված. «ԺԲ. Որ զկին հօր իւրոյ ունի, նզովեալ լիցի, Է ամ ընդ ունկնդիրս եւ Գ ամ ընդ ձեռամբ կացցէ եւ Ճ դրամ տուգանս տացէ» (էջ 30ա, հմմտ. № 3562, էջ 304ա)։*

Հոդ. ԺԳ, էջ 446—450: *Այս հոդվածը չունեն № № 648 և 3562 ձեռագրերի առաջին ընդօրինակությունները, մինչդեռ նույն ձեռագրերի երկրորդ ընդօրինակությունների մեջ այն պահվել է, միայն թե կցված է նախորդ՝ ԺԲ հոդվածին (№ № 648, էջ 188ա, 3562, էջ 446ա)։ Իսկ մի քանի ձեռագրեր «աղտախանս մարմնոյ»-ի (Կանոնագիրք, էջ 446, տող 5) փոխարեն ունեն «աղտահանս արգանդի մարմնոյ» (№ 659, էջ 245ա, 649, էջ 100ա, 650, էջ 108ա, 651, էջ 89ա, 2964, էջ 140բ)։ Ակինյանի կարծիքով, որը մեզ հավանական է թվում, «ԺԲ և ԺԳ կանոնները... Նախնարար հավանօրէն մէկ կանոն կը կազմէին։ Խմբագրողը ընդլայնած է զայն կրկնութիւններով և Աստուածաշնչէն հանած այլ և այլ վկայութիւններով»։ Եվ նա փորձում է վերականգնել այդ հոդվածները այսպես. «Եթէ ոք զկին հօր իւրոյ ունիցի, ի սուրբ եկեղեցի նա մի՛ մտցէ. ապաշխարեսցէ Է ամ ընդ ունկնդիրս, Գ ամս ընդ ձեռամբ, Ծ դրամ աղքատաց, Ծ յեկեղեցի տուգանս տացէ։ Եթէ հայր զորդւոյ կին ունիցի կամ եղբայր զեղբօր, նոյն պատուհաս եւ տուգանք կացցեն։ Զեերմ հարազատի եւ զազգականի զկին ոք մի՛ իշխեսցէ ունել ի կնութեան եւ կամ շնալ։ Եւ եթէ կնոյն կամօք իցէ խառնակութիւնն՝ պատուհաս եւ տուգանս զնոյն կրեսցէ։ Զկինն յուրկանոց տացեն, Ժ տարի աղասցէ գողեացն. ապա եթէ ազատ է եւ ի գողիս չերթայ՝ Յ դրամ տացէ նոցա։ Զքոյր կամ զքեռորդի կամ զեղբօրորդի կամ զհօրաքոյր կամ զայլ ոք յազգի անդ իւրում մինչև ի չորրորդ զարմ կին ոք մի՛ իշխեսցէ առնել։ Եկեղեցի զապաշխարութիւն նոցա ոչ ընդունի մինչև մեկնեսցին ի միմեանց։ Որ ի խորհրդին էին եւ որ զպսակն օրհնեաց՝ տուգանս տացեն եւ յաղքատս բաշխեսցեն Շ դրամ եպիսկոպոսն, Մ՝ երէցն և Մ՝ որ զպսակն օրհնեաց։ Թէ ազատ է, թէ շինական՝ կանոնք այդ կացցեն» (Հանդէս Ամսօրեայ, 1949 թ., № 4—12, էջ 123)։*

Հոդ. ԺԴ, էջ 450։ *Հմմտ. «ԺԵ. Եպիսկոպոս կամ քահանայ կամ սարկաւագ կամ ո եւ իցէ*

յուխտէ եւ տանդիկին անուն ունիցի ըստ սովորութեան մծղնէից՝ ի կարգէն լուծցի» (№ Ձ. 648, Լջ 30ա, 3562, էջ 304ա)։

Հոդ. ԺԵ, էջ 450—454: № № 648 և 3562 ձեռագրերում այս հոդվածը չի ընդօրինակվել։ Իսկ №: 659 ձեռագիրը թեև ունի այն, բայց նկատում ենք խմբագրման որոշ հետքեր, ուստի հոդվածը բերում ենք ամբողջությամբ. «ԺԵ. Զի եթէ ոք ի պաշտաւնէից և յուխտէ մանկանց ի հաւատս կայցէ, կամ մնակեաց կամ գին, եւ է զսրբութիւն կամ զկուսութիւն պահել եւ կենացն յաւիտէնից հասնել ընդ ընկերս կացցէ, ընդ ճշմարիտս եւ ի միմեանց շինեսցին սիրովն Քրիստոսի. զի եղբայր յեղբաւրէ աւգնի որպէս քաղաք ամուր եւ թէ աստուած բնակեցու <ցու>ցանէ զմիակրաւնս ի տան աստուծոյ. եւ թէ «Երկու կամ երեք ժողովեալ են յանուն իմ, անդ ես եմ». և դարձեալ «Ուր երկու եւ երեք խնդրեսցեն միաբանութեամբ ի հաւրէ իմմէ՝ տացի նոցա» և «Յայսմ ծանիցեն թէ իմ էք, յորժամ զմիմեանս սիրիցէք»։ Մի՛ լիցի սովորութիւն մի մի լինել. ապա թէ զիա՞րդ կարեն զիտել զկարգս հաւատոյն կամ զյանցուածս իւրոյ իմասցի կամ զհնազանդութիւն եւ զսէր առ ընկերս։ Այնպէս եւ գազանք են ի լերինս թէ ոչ ոք մերձանայ խաղաղկան։ Այլ հաւատ ճշմարիտ այս է, հնազանդութիւն առ ընկերս և սէր առ միմեանս և առ Քրիստոս, ի մէջ մարդկան յինել աւրինակ բարի եւ մի՛ ոք նախանկար, զի շահել ի միմեանց եւ նախանձել ի գործս բարիս տեսցեն և փառաւորեսցեն զհայր յերկինս «և զանարգ և զգայթակղոտ եղբայր ի ձևոն հոգևոր խրատու պատուական համարեալ բերան Աստուծոյ կոչեսցի»։ «Եկաք, որդիք իմ, և լուարուք և զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ», «ծանուցանեմք, լուարուք և ուսարուք [որ] Տեառն հաճոյ է և զկեանս յաւիտենից ձեզ առթէ», «լռեցոյ զլեզու ի չարութենէ» «լուր, լեզու չար հաստատեալ է ի մարմնի», «լոյծ զխճիռն անիրաւութեան», «դիր դուռն ամուր շրթանց և պահապան բերանոյ», «և մի՛ խոտորեսցես ի բանս զարս». «Զարծաթ ի վարձու ոչ տալ, տոկոսեաւք ոչ պահանջել». «Զգրաւ պարտապանի դարձուցանել». «Որդիք մարդկան մինչև յե՞րր խստասիրտք». առ նեղասրտի ով ոմիցի ժոյժ։ Յարենէ, ի հեղձուցելոյ, ի շնութենէ, ի պոռնկութենէ, ի գողութենէ, յագահութենէ, ի ստու երդմանէ, ի բանասարկութենէ, յարբեցութենէ, յորկորստութենէ յանձնկամութենէ, ի կամակորութենէ, ի սիգութենէ, ի վիսութենէ. մի՛ հպարտ, մի՛ չարակամ, մի՛ ամբարտաւան, մի՛ խաղերգոց, մի՛ յերգս լկտեաց, մի՛ ի հտպանս, մի՛ վայրապար ի ծաղր, մի՛ յահուր, մի՛ զրկող, մի՛ տրտնջող, մի՛ յանդուգն, մի՛ ատեցող, մի՛ շատախաւս, մի՛ խաւսիր զումեքէ, որ քեզ չար թուի՝ այլում մի՛ առներ, մի՛ ցանկացող, մի՛ քնէած, մի՛ կամակոր յուսմանէ՝ զի մի ի չարիս անկիցիս, մի՛ հեղղալ յաղաւթս, մի՛ ատել զաղքատս՝ զի յաւուր չարի փրկէ զնա աէր, մի՛ ատել զպահս և զճգնութիւնս՝ որ զհուր շիշուցանէ և զառիւծս սանձէ, ընդ Աստուծոյ բանս ի կիր արկանէ, որպէս Մովսէս և այլ որ ինչ գործք են, սիրել զտէր յամենայն սրտէ և զպատուիրանս նորա պահել ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն ունել՝ հեզ խոնարհ և յամենայն ժամ դողալ և երկիւղիւ կալ և լսել բանից նորա, զոր ասէն՝ «յո՞ւմ բնակեցայց եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս և որք դողան ի բանից իմոց», «խնդրէ խաղաղութիւն և երթ զհետ նորա». յուսոյն ակն ունել և մի՛ վայրապար ի սուգ և ի տրտմութիւն ընկղմել, այլ բարիս գործել մի՛ ձանձրանար՝ մարդ կատարեալ և յերկրի հրեշտակ երևեալ։ Որ միայնակեաց կամի լինել և կուսան և զհաբեղայութիւն յանձն առնուլ զկանոնդ զայդ կալցի, ամենայն ոյք ի հաւատս կացցէ» (էջ 247բ—249բ)։

Հոդ. ԺԶ, էջ 455—459: № 659 ձեռագրի այս հոդվածում ևս նկատելի են խմբագրման հետքեր. «ԺԶ. [Ո]ր էպիսկոպոս կամ վանաց երէց կամ անապատասէր կա՛մ սաղարութեան ցանկանայ կա՛մ գաւառի կա՛մ գիւղից, լուիցէ զինչ ասէ. «Մեծութիւն թէ գայցէ մի՛ յաւժարեսցիս» տաղանդ առեր յԱստուծոյ, ի վարձու շահել պարտի, գուցէ տոկոսեաւք պահանջէ. հովիւ հաւտի պատրաստ։ Բայց որ գլխաւոր եպիսկոպոսն է աշխարհին՝ առանց նորա կամացն եպիսկոպոսք մի՛ լիցին։ Եւ վանաց երէց կամ անապատաւոր առանց գաւառին եպիսկոպոսին չիշխէ լինել։ Եպիսկոպոս ոք կամ երէց կամ ազատ կամ շինական վասն առաջնորդս կարգելոյ եւ հովիւս պատրաստելոյ եկեղեցւոյ և աւրինադիրս, զի ծանիցեն հեթանոսք, թէ մարդիկ են նոքա, եւ վասն այնորիկ կաշառ առցեն կամ աչառիցեն եւ ոչ զճշմարիտն ընտրիցեն, թէ կարի յանարգաց ոք է եւ յարհամարհելոց եւ միայն նախանձաւոր սրբութեանն եւ աւրինացն է, յառաջ կալցին. Լուր զինչ ասէ. «Զյիմարս եւ զանտոհմս աշխարհիս ընտրեաց Աստուած». եւ յարուցանէ զաղքատն յաղբեւաց նստուցանէ ընդ իշխանս, զի յամաւթ արասցէ զամբարտաւանս եւ զհզաւրս, քանզի «Մարդ ի դէմս հայի (վերջին բառն ավելացրել են ուրիշներ աջ լուսանցքում—Վ. Հ.), իսկ Աստուած՝ ի սիրտ[ս]»։ Եւ սոքա կաշառաւք եւ աչառութեամբ զանարգեալս մեղաւք եւ զպղծեալս աւրինացն ըստ բանին Պաւղոսի. «Եկեղեցւոյ դատաւորս կացուցանէք տալիք արծաթոյն անիծեալ լիցին, որպէս խաչահանութքն, որ կաշառ ետուն պահապանացն, ընդ Սիմովնի կախարդի, որ ընչիւք կամէր ստանալ յառաքելոցն զշնորհս հոգւոյն սրբոյ։ Եւ առնելիք կաշա—

ուին նզովեոցին ի տեառնէ. եւ կաշառն զոր առին՝ ընդ Յուդային համարեսցին, զոր վասն տեառն մատնութեանն ա՛ռ և երկպատիկ դարձուսցեն անդրէն։ Տալիքն չիշխեն առնել, այլ ի կարաւտեալս տացեն։ Եպիսկոպոսն կամ երէցն, որ վասն այսր կաշառ առնու կամ դինչ եւ է իրաց ըստ գրեցելոյն, թէ «Կաշառ կուրացուցանէ զմիտս իշխանաց» եւ դարձեալ. «Կաշառ ի վերայ իրաւանց մի՛ առցես», յամենայն ժողովոյս նզովեսցի եւ յիշխանութենէն մերժեսցի եւ ի քահանայութենէն. եւ կաշառն, զոր առին ընդ Գեեզի բորոտի դաւաճանն համարեսցի եւ անէծք մարգարէին ի վերայ եղիցի, զի ի ձեռաց դիտին խնդրեսցի արիւն զաւրացն, այլ զարժանաւորն կացին։ Լուարուք մարգարէին. «Ձեռք իւրեանց յանաւրէնութեան եւ աջ նոցա լի է կաշառաւք, տուր նոցա ըստ գործոց նոցա»։ Թէ հիմն եւ գլուխ հաստատուն՝ ապա միջինք ոչ ի վերայ աւազոյ, կառավար արքեայ՝ կառք ընդ որպէս ընթանան, նաւավար ի քուն՝ նաւ երազ ծովածուփ, խաշնարած յոյլ՝ խաշինք զվնասուղ խոտ ճարակեն, զի թէ առաջնորդ աւրինացն ճշմարիտք՝ ապա կարգեալքն ընդ նոքաւք առաւելապէս, մէ խարխախ անշարժ՝ շինած ոչ գետավէժ, եթէ հովիւ քաջ՝ հաւտք ոչ գազանակուր, եթէ դէտ զգոյշ եւ արթուն՝ ապա զաւրքն ի խաղաղութեան։ Քանզի դուք վարդապետք, դէտք ժողովրդեանն եւ աւրինակ աշխարհի, ի ձեզ հայեցեալ ուսումն ձեր յառաջ բերին զգոյշ» (էջ 249բ—251բ)։ Իսկ №№ 648 և 3562 ձեռագրերում այս հոդվածը չափազանց խիստ է համառոտված. «ԺԶ. Որ զանարժան ոք կաշառօք ձեռնադրէ, կաշառ[առ]ուն ընդ Յուդայի եւ ընդ Գեհեզէ, եւ կաշառատուն ընդ հրէիցն որ զարծաթն պահապանացն ետուն և ընդ Սիմոնի կախարդի. եւ ձեռնադրեալն եւ ձեռնադրողն ի կարգէն լուծցին» (էջ 30ա, բ, էջ 304ա)։

Հոդ. ԺԷ, էջ 459—460: Կանոնագրքի «Չյիշատակս մարտիրոսաց եւ զժողովս առանց եպիսկոպոսին հրամանի մի՛ որ իշխեսցէ առնել» հատվածը № 659 ձեռագրում հանդիպում ենք այսպես. «եւ զժողովս եպիսկոպոսաց յեպիսկոպոսէն հրաման առնուլ մի՛ իշխեսցէ առնել» (էջ 251բ), մնացածը նույնն է։ Այս հոդվածի սկզբի մասը նույնությամբ գտնում ենք №№ 648 և 3562 ձեռագրերի առաջին ընդօրինակության մեջ միայն վերջին մասը՝ «դնել։ Եթէ ոք սեղան կամիցի կանգնել... հասցէ փոխանակ բարեխաւսութեանն» (էջ 459, տող 11—12-ից մինչև էջ 460, տող 3) հատվածից չի պահվել։ Իսկ նույն ձեռագրերի երկրորդ ընդօրինակության մեջ այս հոդվածը թեև պահվել է նույնությամբ, սակայն «եթէ ոք սեղան կամիցի» (էջ 459, տող 12) բառերից մինչև վերջ դրված է որպես առանձին հոդված, ԺԸ համարի տակ (№№ 648, էջ 191, 3562, էջ 449բ)։

Հոդ. ԺԸ, էջ 460—461: Բացառությամբ Կանոնագրքում եղած «կամ կապեալ բանիւ վարդապետութեան» հատվածի, որը չունի № 659 ձեռագիրը, մնացածները համապատասխանում են միմյանց։ Իսկ №№ 548 և 3562 ձեռագրերում այս հոդվածը վերաշարադրված է համառոտ և դրված է վերջում՝ ԻԱ համարի տակ։ «ԻԱ. Վարդապետի ուրուք եթէ զաշակերտ կամ զժողովրդական կամ զքահանայ նզովեալ իցէ կամ բանադրեալ եւ կապեալ բանիւ վարդապետութեամբ, այլ ոք մի՛ իշխեսցէ լուծանել, բայց եթէ աշակերտն յապաշխարութիւն գայցէ և նա բարեխօսութիւն արասցէ հնազանդեցուցանելով ընդ բուն վարդապետաւն, զի զարժանի է (sic) աւրհնութեանն միաբան աւրհնել եւ զոչ արժանիսն միաբան ըմբերանել եւ պատուհասել, զի կատարեսցի բան տեառն թէ «Յայսմ ծանիցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք եթէ միաբան կայցէք» (էջ 31ա, էջ 304բ—305ա)։

Հոդ. ԺԹ, էջ 461—462: № 659 ձեռագրի բնագիրը ևս համապատասխանում է Կանոնագրքի այս հոդվածին, միայն երկու տարբերությամբ. նախ՝ № 659 ձեռագիրը չունի Սաղմոսի ԽԸ—13, 21 մեջբերումը. երկրորդ՝ բնագրի «եւ մանկունքն որ չև իցեն գիտացեալ զպղծութիւնն» հատվածը № 659 ձեռագրում գտնում ենք «եւ մանկունքն, որ չգիտեն զպղծութիւնն ճաշակել զանաւրէնութիւնն» (էջ 253ա) ձևով։ Հմմտ. նաև №№ 648 և 3562 ձեռագրերի ունեցած հետ. «ԺԹ. Եթէ ոք ի մծղնէութեան գտցի ի քահանայից, ի սարկաւագաց կամ ի հարեզայից՝ ի ճակատն աղուեսդրոշմ դիցեն եւ ի տեղի ճգնաւորաց ապաշխարեսցէն։ Ապա թէ անդ ի նոյնն գտցին՝ զերկոսին չիլսն կտրեսցեն եւ ի զողենոց տաչեն» (էջ 30բ, էջ 305ա):

Հոդ. Ի, էջ 462—466. Այս հոդվածը № 659 ձեռագրում գտնում ենք զգալիորեն խմբագրված. «Ի. Որ յուրուք ժողովրդեանէ մծղնէ գացի եւ երէցքն դիտեն եւ ոչ յայտնեն եպիսկոպոսին, եթէ յայտնի լիցին, թէ դիտէր երէցն զգործս նոցա եւ ոչ բողոքեաց եպիսկոպոսին, զպատուհասն զոր եդին կանոնքս կրեսցեն, զի այլ երէց եւ վանական ոչ իցէ ի տեղի նոցա ընդ նա հայեցեալ ճշմարիտ հովուեսցէ ժողովրդեան իւրոյ։ Ապա թէ երէցն ասիցէ ցեպիսկոպոսն եւ յայտ առնէ, եւ եպիսկոպոսն կարասի առնու եւ ծածկէ կամ աչառի, եւ յայտ լինի թէ արդարեւ եհաս յականջս նորա, բողոքէր ի ցանցն (sic դուցե յանձն) եւ նա արհամարհեաց զպատուիրանն Աստուծոյ եւ կորուսելոցն խնդիր չարար եւ չեղեւ նախանձախնդիր Աստուծոյ իւրոյ։ Ապա թէ եպիսկոպոսն չանացաւ, երիցունքն եւ այլ մարդիկն վկայեսցեն զաշխատութենէ նորա եւ զմծղնեայն

յայտ արար յիշխանութեան ուրուք, եւ իշխանն, որ էր աշխարհին եւ կամ գեղջ ուրուք, եւ կամիցի պղծութեանն թիկունք լինել եւ զմծղնեայսն թագուցանել կամ վասն կարասւոյ կամ վասն ակնառութեան եւ ծառայութեան եւ ոչ ընտրեաց զՔրիստոս սիրել եւ զպատուիրանսն եւ վրէժխնդիր աւրինացն՝ այնպիսին նզովեալ լիցին եւ յեկեղեցւոյ հեռասցի մինչեւ տացէ զպղծագործսն ի ձեռն եպիսկոպոսին։ Եթէ ի նախար[ար]ին զտանիցին պղծութիւնքն կամ կին նորա կամ դուստր կամ որդի կամ ինքն իսկ գլխովին, եւ ոչ զընտանիսն տացէ ի ձեռս եպիսկոպոսին, եւ ոչ ինքն դարձցի ի սրբութիւն, ի բուռն ապստամբ կամի լինել, ամենայն տամբն իւրով եւ ծննդովք եւ կենաւք նզովեալ լիցին, եւ ի հրապարակ մի՛ իշխեսցէ գալ եւ ընկերք եւ աշխարհք մի հնազանդեսցին նմա մինչեւ ինքն ի սրբութիւն եկեսցէ։ Ապա եթէ ինքն ոչ իցէ ի պղծութեանն՝ զընտանիսն ի ձեռս տացէ դխաւոր եպիսկոպոսին։ Ապա թէ յոստանդիւնքն (sic) *զտանիցին պղծութիւնքն եւ ինքն եւս ընդ ընտանիսն ի պղծութիւն գտցի՝ կալցին միաբան պղծագործքն ընտանեաւքն հանդերձ եւ ի հրապարակ ածցեն առաջի գլխաւոր եպիսկոպոսին եւ առաջի մեծամեծ իշխանաց եւ միաբան վրէժխնդիր լինիցին աւրինացն Աստուծոյ։ Զի տեսեալ այլոցն սրբութեամբ եւ երկիւղիւ պաշտեսցեն զարարիչն արարածոց. զի ողջ եւ կատարեալ լիցին կարգք աստուածպաշտութեան վրէժխնդրութեամբ աւրինացն եւ յարգանաւք սրբոցն. զի նոյնպէս եւ հատուցմանց բարեբարին Աստուծոյ ակնկալցուք, արդեամբք ժառանգեսցուք զպարգեւս նորա. ամէն» (էջ 253ա—254բ)։ Անա նաև Ճ Ձ՝ 648 և 3552 ձեռագրերի նույն հոդվածի համառոտ խմբագրությունը. «ՃԻ. Թէ յուրուք ժողովրդեան մծղնա գտցի եւ երիցունքն գիտասցեն եւ ոչ յայտնեսցեն եպիսկոպոսին՝ մծղնայքն ըստ հրամանի կանոնաց դատեսցին, եւ երիցունքն ի կեան. իւրեանց մի՛ պաշտեսցեն զքահանայութիւնն։ Ապա թէ երէցն վկայիւք եպիսկոպոսին ասաց եւ նա ծածկեաց վասն կաշառոց, երէցն անպարտ եղիցի եւ եպիսկոպոսն լուծցի։ Ապա թէ եպիսկոպոսն չանաց վրէժխնդիր լինել եւ իշխան որ վասն արծաթոյ թիկունք եղեւ անօրինացն՝ նզովեալ լիցի ի կեանս եւ ի մահ, եւ յեկեղեցւոյ սրբոյ ի բաց կացցէ, մինչեւ տացէ զպղծագործսն ի ձեռս եպիսկոպոսին։ Ապա թէ ինքն աւագն կամ ընգանիք նորա գտանիցին ի գործն, թէ ինքն ապստամբէ եւ ի բուռն ապստամբ կա, նզովեալ լիցի եւ ամենայն հաւատացեալք ի բաց լիցին ի նմանէ, եւ թէ այլ որ գտցի ի գործն՝ զնոյն արասցեն» (էջ 30բ—31ա, էջ 304բ)։*

T *ձեռագրում բնագրի «կործանեսցի յաթոռոյն» (էջ 463, տող 8—9) հատվածի դիմաց, 204բ էջի ձախ լուսանցքում ավելացված է. «որ ծածկեն զշնացողսն». Նույն կերպ են վարվել նաև* S *(էջ 201բ—202ա) և* U *(էջ 105բ) ձեռագրերում. այսպիսով, ըստ այդ ձեռագրերի, բնագրի նշված հատվածը պետք է կարդալ. «Կործանեսցի յաթոռոյն որ ծածկեն զշնացողսն», իսկ այնուհետև՝ ինչպես բնագրում։*

Մատենադարանի մի քանի ձեռագրերում Շահապիվանի ժողովի Ի կանոնին հաջորդում է վերջաբան։ Այն մեզ հասել է երեք խմբագրությամբ.

1. «Եւ եդեալ միաբան քահանայապետից և քահանայից և ամենայն հաւատացելոց զկարգս զայս եւ զկանոնս եւ ընթերցեալ առաջի ամենայն զաւրացն եւ զաւրագլխացն եւ հաճէին հաւանութեամբ ամենայն աշխարհն Հայոց, ասելով միաբան զաւրացն եւ զաւրագլխացն, իշխանաց եւ նախարարաց, առատաց եւ շինականաց, թէ այո՛, այո՛, կարգ եւ աւրէն այդ կացցէ, ինչ որ վասն մեր աւգտի է եւ [ի] փրկութիւն ոգոց մերոց, իշխանութիւն եկեղեցւոյ Աստուծոյ եւ մեզ առաջնորդ եւ առիթ ի կեանսն յաւիտենից. ամէն» (№ 659, էջ 254բ, հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1949 թ., № 4—12, էջ 170)։

2. «Եդեալ միաբանութեամբ քահանայից եւ քահանայապետիցն եւ ամենայն հաւատացելոցն զկարգս զայս եւ զկանոնս եւ մատուցեալ առաջի մեծամեծ իշխանացն եւ աւագ նախարարացն եւ ընթեռձեալ առաջի ամենեցուն, հաճէին հաւանութեամբ, ասելով միաբան զօրացն եւ զօրագլխացն եւ շինականացն թէ այո՛, այո՛, կարգք եւ օրէնք այդ կացցեն ինչ որ վասն մեր օգտի է ի փրկութիւն հոգոց եւ մարմնոց մերոց, իշխանութիւն եկեղեցոյ եւ առիթ փրկութեան մերոյ ի կեանս յաւիտենից։ Կանոնք զոր եդին վարդապետք Հայոց ի Շահապիվանի ի բանակեւող թագաւորաց Հայոց ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր. ամէն եղիցի, եղիցի» (Ճ № 2964, էջ 149բ—150ա, 649, էջ 107բ, 650, էջ 117ա)։

3. «Եւ եդեալ միաբանութեամբ քահանայապետից եւ քահանայից ամենայն հաւատացելոց զկարգս զայս եւ զկանոնս եւ մատուցեալ առաջի մեծամեծ իշխանացն եւ աւագ նախարարացն ընթերձեալ առաջի ամենեցուն, հաճէին հաւանութեամբ ամենայն աշխարհս Հայոց, ասելով միաբան զօրացն եւ զօրագլխացն եւ իշխանացն. Այո՛յ, այո՛յ, կարգ եւ կանոն այդ կացցեն ինչ որ վասն մեր օգտի է ի փրկութիւն եկեղեցոյ Աստուծոյ եւ առաջնորդ եւ առիթ կեանսն յաւիտենից» (e *էջ 159բ, հմմտ. նաև* b *էջ 210ա,* g *էջ 141բ,* f *էջ 239ա,* q *էջ 127ա)։*

Կանոնագրքի համահավաք բնագրի կազմման համար օգտագործված 48 ձեռագրերից միայն վերջին հինգ ձեռագրերն են, որ պահել են սույն վերջաբանը։

ՍԵՎԱՆՏՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 467: *Համեմատությունների համար չօգտագործված №№ 648, 649, 650, 651, 659, 2964, 3562 ձեռագրերում այս վերնագիրը չի պահվել։*

Ցանկ, էջ 467—468: *Վերևում նշվածներից միայն № 659 ձեռագրում է պահվել ցանկը, որը նույնպես նոր է կազմվել, ընդ որում, եթե Կանոնագրքի բնագրում 14 հոդվածների համար ցանկում նշված են 14 վերնագրեր, ապա այստեղ՝ 16։ Այդ առաջ է եկել նրանից, որ Գ հոդվածը բնագրում բաժանված է երեք առանձին հոդվածների, սրան համապատասխան էլ ցանկում տեղ են գտել 16 հոդվածների վերնագրեր։ Ահա այդ ցանկը.*

«Ցանկ սուրբ ժողովոյն Նիկեայոյն.

ա. Արիւնահեղաց։
բ. Անասնապղծից։
գ. Ազգապղծից։
դ. Որ զեղբաւր կին պղծէ։
ե. Ծնալոյ ընդ քեռ։
զ. Այր կամ կին որ Ծ ամեան լցէ եւ կին առնէ։
է. Որ ընդ կնքաւորս պղծի։
ը. Երիտասարդ որ մեղիցէ։
թ. Առնակնոջ չնացելոյ։
ժ. Որք ի հաւատս կացցեն։
ժա. Ընդ իւր խաւսեալ յաւսեցելոյ։
ժբ. Ջխաւսեալ յաւսեցելոյ։
ժգ. Նրէց որ չնայ եւ գողանայ։
ժդ. |Ո|ր կին ամուսնութեան։
ժե. Հաւատաուորաց։
ժզ. |Կ|նաթողաց» (էջ 214բ)։

Երկրորդ վերնագիր, էջ 468։ *Մի քանի ձեռագրերում այս վերնագիրը սխալ է հասցեագրըրված. օրինակ՝ №№ 659 և 3369 ձեռագրերում. «Կանոնք սուրբ ժողովոյն Նիկեայ, որ ժողովեցան ի հոգւոյն սրբոյ երկերիւրքն եւ կարգեցին տունք ԺՁ» (էջ 214բ), «Կանոնք սուրբ Հարցն Նիկեայի» (էջ 68ա)։ Այսպիսով, Սեվանտոսի կանոնախումբը նշված է Նիկեայի ժողովի անվան տակ։ Մի քանի ձեռագրերում՝ №№ 648, 649, 651, 2964, 3562 այս կանոնախումբը, գտնվելով Նիկեայի ժողովի կանոններից հետո, վերնագրում ունի «Նորին», «Նոցա», «Նոցին» բառերը, որ նշանակում է, թե այս կանոնախումբը (իմա Սեվանտոսի) Նիկեայի ժողովի մի այլ որոշման հոդվածներն են։ Ահա այդ վերնագրերը. «Դարձեալ նորին (№№ 649, 2964 նոցին, № 651 նոցա) այլ կանոնք գլուխք (№№ 651, 2964 գլուխ) ԺՁ» (№№ 649, էջ 49բ, 651, էջ 39բ, 2964, էջ 72ա), «Դարձեալ նորին կանոնք» (№№ 648, էջ 27ա, 2562, էջ 300բ)։ Սակայն № 650 ձեռագրում այս կանոնախումբը գտնվելով Կոստանդնուպոլսի ժողովի կանոններից հետո՝ վերնագրում ունի «նոցա» բառը, որը ցույց է տալիս, որ այս կանոնախումբը Կոստանդնուպոլսի ժողովի մի այլ որոշման հոդվածներն են։ Ահա այդ վերնագիրը. «Դարձեալ նոցա այլ կանոնք գլուխք ԺՁ» (էջ 54ա)։*

Բնագրի փոքրիկ առաջաբանը չունեն վերոնշյալ ձեռագրերը։

Հոդ. Ա, էջ 469—471: *Սույն հոդվածը սկզբից մինչև «զոր Աստուած անէծ եւ նզովեաց» (էջ 470, տող 12) հատվածը Ն. Ակինյանը, այս կանոնախմբի իր հրատարակության բնագրում, գրել է որպես առաջաբան (տե՛ս Հանդէս Ամսօրեայ, 1949 թ., № 4—12, էջ 74—76)։ Իսկ մի շարք ձեռագրերում այդ մասը՝ «Որպէս ասէ տէրն»-ից մինչև «Այլ ի գրոց, ի մեղաց զոր» հատվածը (էջ 470, տող 12) բացակայում է (№№ 648 (էջ 27ա), 649 (էջ 49բ), 650, (էջ 54ա), 651, (էջ 39բ), 659, (էջ 214բ), 2964, (էջ 72ա), 3562, (էջ 300բ)։ Հիշված ձեռագրերում որպես Ա հոդված նշված է առաջաբանի վերջին մասը. «Աստուած անէծ եւ նզովեաց... եւ յաւուր մտհուան իւրոյ խառնեսցի»։ № 3369 ձեռագրում առաջին վերնագրից հետո դրված են Նիկեայի ժողովի Ա և Բ հոդվածները. այնուհետև բացակայում են Գ—Ջ հոդվածները, իսկ Ա և Բ հոդ-*

վածների որպես շարունակություն կցված է Սեանտոսի անունով մեզ հասած կանոններըւ Վերջինիս Ա հոդվածը նույն ձևով, ինչ որ նշեցինք վերևում, մի քանի ձեռագրերի նման, դրված է որպես Գ հոդվածւ Ն. Ակինյանը կարծում է, որ Ա հոդվածը պետք է սկսված լինի այսպես. «Ա. Այր արիմահեղ ապաշխարեսցէ...» (Հանդէս Ամսօրեայ, 1949 թ., № 4—12, էջ 76, ծանոթ. 13)ւ

Հոդ. Բ, էջ 471: Մի քանի ձեռագրերում այս հոդվածի սկզբի «Որ երեսնամեայ է եւ» հատվածի փոխարեն նշված է «Որք» կամ «որ» (տես № № 648, էջ 27բ, 649, էջ 49բ, 650, էջ 54ա, 651, էջ 40ա, 659, էջ 215ա, 2964, էջ 72բ, 3369, էջ 68բ, 3562, էջ 300բ), իսկ «սաէջ»-ի փոխարեն՝ «յաւրինացն քարոզէր ի Մովսիսէ» (տես նույն ձեռագրերը, բացառությամբ № № 648-ի, 2964-ի և 3562-ի)ւ Ն. Ակինյանը կարծում է, որ Բ հոդվածը պետք է սկսված լինի այսպես. «Եթէ այր ոք կամ կին...» (տես նույն տեղում, էջ 76, ծանոթ. 16)· fq ձեռագրում այս հոդվածը դրված է որպես նախավերջին, իսկ Բ հոդվածի փոխարեն դրված է «Բ. Անասնապղծի» (էջ 240ա, էջ 127բ), մինչդեռ նույն ձեռագրի 241բ էջում գրիչը դարձյալ դրում է. «Այս երկու տունս Բ և ԺԲ (իմա Կանոնագրքում եղած Բ և ԺԳ) ի յաւրինակն չկայր, յայլ աւրինակ գտա եւ գրեցի»ւ be ձեռագրերում Բ հոդվածի տեղը գրված է. «Բ. Հոս պիտի անասնապղծի», իսկ նույն հոդվածը դրված է կանոնախմբի նախավերջին հոդվածի տեղըւ

Հոդ. Գ, էջ 471—472ւ Ինչպես նշեցինք վերևում, այս հոդվածը մի քանի ձեռագրերում բաժանված է երեք առանձին մասերի. ահա դրանք. «Գ. Որ կին առնէ զմայր կամ զդուստր, ի հուր այրեցէք զնոսա. անիծեալք ենւ

Դ. Որ առնէ զկին եղբօրն իւրոյ՝ պիղծ է, զի մի են նոքա՝ որ առնէ զհօրեղբօր, որ առնէ զորանչ, որ առնէ զքենի, որ առնէ զթոռն, որ առնէ զհաւրն կինն, այսպիսիքն նզովեալ եղիցինւ

Ե. Որ շնա ընդ քեռ իւրում նզովեալ լիցի, որոշեցէք զնոսա եւ անշատեսցին ի մեղաց, եւ ապաշխարութիւն նոցա ԺԵ ամ դրանն արտաքոյ, Ե ամ՝ ընդ ապաշխարողս, եւ Գ ամ աւրէնս մի՛ առցեն» (№ 648, էջ 27բ. Հմմտ. նաև № № 649, էջ 49բ, 650, էջ 54ա, 651, էջ 40ա, 659, էջ 215ա, 2964, էջ 72բ, 3369, էջ 68բ, 3562, էջ 300բ)ւ

Հոդ. Դ, էջ 472: Որոշ ձեռագրերում այս հոդվածը խմբագրված է այսպես. «Զ. Այր Ծ ամեան եթէ կին առնիցէ. նզովեալ են երկոքեանն, ամենեքեան կարդացէք նոցա աղճատեալս եւ յեկեղեցի մի մտցեն» (№ 648, էջ 27բ, Հմմտ. նաև № № 649, էջ 50ա, 650, էջ 54բ, 651, էջ 40ա, 2964, էջ 72բ, 3369, էջ 68բ, 3562, էջ 300բ)ւ

Հոդ. Զ, էջ 472: Թեթև խմբագրման հետք նկատվում է նաև այստեղ. «Ը. Երիտասարդ եթէ մեղանչէ՝ կին նորա աւրէնս մի առցէ մինչև նախ ապաշխարեսցէ» (է 648, էջ 27բ, Հմմտ. նաև նախորդ ծանոթագրությունում նշված ձեռագրերը)ւ

Հոդ. Է, էջ 472: Մասամբ խմբագրված է նաև այս հոդվածը. «Թ. Առնակին եթէ շնայցէ՝ Ժ ամ դրան արտաքոյ ապաշխարեսցէ և Ե՝ ի ներքս, և Դ ամ աւրէնս մի առցէւ Ապա թէ գաղտ իցէ ապաշխարութիւնն՝ դրաց արտաքոյ ապաշխարեսցէ մինչեւ կատարեսցի ԺԵ ամն» (№ 648, էջ 27բ, Հմմտ. նաև վերևի ծանոթագրությունում նշված ձեռագրերը)ւ № 651 ձեռագրում Զ և Է հոդվածները միացված են միմյանց և դրված Թ համարի տակւ

Հոդ. Ը, էջ 473: Վերևում նշված ձեռագրերը «ամիսս երկու»-ի փոխարեն ունեն «ամիսս երիս» (№ 648, էջ 27բ, և մյուս ձեռագրերը)ւ

Հոդ. Թ, էջ 473: Այս հոդվածը № 659 ձեռագրում բաժանել են երկու առանձին մասերի՝ ա. «Յաւուրս Նոյի եղեւ ցրհեղեղն, վասն այնոցիկ որ յաւսան դստերսն Կայենի». այս մասը կցված է Ը հոդվածին, իսկ մնացած մասը դրված է որպես առանձին հոդվածւ «Գայլ» բառի փոխարեն մի քանի ձեռագրեր ունեն «գող» (№ № 648, էջ 28ա, 649, էջ 50ա, 650, էջ 55ա, 651, էջ 40բ, 659, էջ 216ա, 2964, էջ 73ա, 3369, էջ 69ա, 3562, էջ 301ա), որը, կարծեք, ավելի ճիշտ էւ

Հոդ. ԺԴ, էջ 474: Այս հոդվածը բավական փոփոխված է. «ԺԶ. Եթէ ոք դկին իւր հանցէ առանց բանի պոռնկութեան, ինքն տա նմա շնալ, ապա թէ թողցէ և ապաշխարեսցէ՝ ապաշխարութիւն նորա Ը ամ առ դրանն արտաքոյ, Զ՝ ընդ ապաշխարողս եկցէ, եւ Զ ամ օրէնս մի առցէ. այս փոխանակ երկոցունց ընդ իւր եւ ընդ կնոջ (այստեղից № 659 ձեռագիրը չունի Վ. Հ.) իւրոյւ Ապա թէ անապաշխար մնասցեն՝ մի՛ թաղէք զնոսա, զի այնպիսիքն զարքայութիւն աստուծոյ ոչ ժառանգեն» (№ 648, էջ 28ա, Հմմտ. նաև № № 649, էջ 50բ, 650, էջ 55ա, 651, էջ 40բ, 659, էջ 216բ, 2964, էջ 73բ, 3369, էջ 69ա, 3562, էջ 301բ)ւ

ՆԵՐՍԵՍԻ ԵՎ ՆԵՐՇԱՊՈՒՀԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 475: *Այս վերնագիրը չունեն № № 649, 650, 651, 2964 ձեռագրերը, իսկ № № 648, 3562 ձեռագրերը ունեն հետևյալ վերնագիրը. «Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից» (էջ 54ա, էջ 334ա)։ ռ ձեռագրում վերնագրի գիմաց, հետագայում (ԺԹ դար), մեկն ավելացրել է. «Ներսէս Բ Աշտարակեցի եւ Դունայ Բ ժողով» (էջ 188ա)։*

Ցանկ, էջ 475—478: *№ № 649, 650, 651, 2964 ձեռագրերը չունեն ցանկ, իսկ № № 648, 3562 ձեռագրերը թեև այն ունեն, բայց նկատվում է, որ վերաշարադրված է Կանոնագրքի ունեցած ցանկից, երբեմն ցույց տալով ինքնուրույնության հետքեր։ № № 648 և 3562 ձեռագրերի սույն ցանկում նշված է 30 հոդվածի վերնագիր. այդ նրանից է, որ ինչպես այս, այնպես էլ վերևում նշված ձեռագրում այս կանոնախումբը ունի 30 հոդված. 31—37-րդ հոդվածները ինչ-ինչ պատճառներով չեն պահվել։ Ահա այդ ցանկը.*

«ա. Վասն յեկեղեցի տանել ղսեղանն և ոչ ի տանս իրեցութեան։
բ. Վասն չառնուլ գինս քահանայը պատարագին։
գ. Վասն ոչ վաճառել կամ վարձս դնել։
դ. Երկկանանց ոչ ուտել զշնորհ եկեղեցոյ։
ե. Վասն շաբաթու եւ կիրակէի պատարագ մատուցանել։
զ. Վասն բաժակին սուրբ պատարագին։
է. Վասն քահանայից որ պատարագ մատուցանեն։
ը. Վասն հանձի (sic) եկեղեցոյն ոչ տալ ի հարսանիս։
թ. Վասն ոչ առնել մկրտութիւն ի տունս յաշխարհականաց։
ժ. Վասն որ ըստ կոչման լինել նախագահ։
ժա. Վասն առանց քահանայի ոչ է պարտ առն ժամ։
ժբ. Վասն դպրի չհագանել հանդերձ զինուորական։
ժգ. Զշնորհս եկեղեցոյ մասնաւորել եկեղեցոյ՝ ըստ իւրաքանչիւր կարգի։
ժդ. Սպաս եւ պատարագիչն աւագ երիցուն եղիցի։
ժե. Զառնել ի տունս մկրտութիւն։
ժզ Կանանց չտալ մօտ առ քահանայսն ի մկրտել։
ժէ. Սարկաւագունք մի արցեն մկրտութիւն։
ժը. Ոչ առնուլ հաս ապաշխարողացն։
ժթ. Ոչ յայտնել զբանս խոստովանութեան։
ի. Գերեզման յեկեղեցիս մաւտ ոչ առնել։
իա. Քահանայ վաշխ ոչ առնուլ։
իբ. Յագապս մասունս ոչ առնուլ։
իգ. Ոչ երթալ ի պատարագ յորժամ ոչ կայ։
իդ. Տղայոց հարսանիս։
իե. Զկուսանս այրեաց ոչ տալ։
իզ. Զառչառ ոչ ձեռնադրել։
իէ. Զ[պ]ոռտանս ոչ աւրհնել։
իը. Ոչ առնուլ զկենդանին նուիրեալ։
իթ. Զառաջաւորս ոչ լուծանել։
լ. Ծրագալուծին շաբաթու թան եւ գինի մի՛ ճաշակեսցեն» (էջ 54ա, բ, էջ 334ա, բ)։

Երկրորդ վերնագիր, էջ 478: *Կանոնագրքի ունեցածին նման է № № 648 և 3562 ձեռագրերինը, որոնք չունեն միայն «տունս Լէ»։ Իսկ մյուսները ունեն «Դարձեալ եւ այս կանոնք յաւուրս*

Ներսէսի մեծի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի գլուխ Լ» ձևով (№ № 649, էջ 80բ, 650, էջ 88բ, 651, էջ 67ա, 2964, էջ 114ա)։ Այս հավանաբար ավելացրել է Հ. Օձնեցին որպես առաջաբան և վերնագիր։

Հոդ. Ա, էջ 478: *Ծանոթագրություններում օգտագործված՝ արդեն հայտնի ձեռագրերում այս կանոնախմբի հոդվածները թեև տարբերություն չունեն Կանոնագրքում եղածից, սակայն եղած նյութը այս ձեռագրերի Ա—Ը հոդվածներում բաժանված է տարբեր սահմաններ ունեցող հոդվածների. օրինակ՝ Ա հոդվածը սկսվում է այնպես, ինչպես Կանոնագրքում կա, բայց վերջանում է Բ հոդվածի սկզբի ընդարձակ հատվածով. «Այլ ի նոյն ինքն... եւ ժլատութեամբ թշնամանել զսրբութիւնսն»։ Վերջինս դրված է որպես շարունակություն Ա հոդվածի (տես № № 648, էջ 55ա, 649, 80բ, 650, էջ 88բ, 651, էջ 67բ, 2964, էջ 114բ, 3562, էջ 335ա)։*

Հոդ. Բ, էջ 478—479: *Վերոհիշյալ ձեռագրերում այս հոդվածի միայն վերջին՝ «Խափանեցին քահանայքն... վասն սուրբ պատարագին» մասն է դրված որպես Բ հոդված (№ № 648, էջ 55ա, 649, էջ 80բ, 650, էջ 88բ, 651, էջ 67բ, 2964, էջ 114բ, 3562, էջ 335ա)։*

Հոդ. Գ, էջ 479։ *Նշված ձեռագրերում Գ հոդվածի տակ դրված է ինչպես այս, այնպես էլ հաջորդ Դ հոդվածի մեծ մասը՝ սկզբից մինչև «եւ զրկեցան ինքեանք յաւրհնութենէն Աստուծոյ» հատվածը (տես № № 648, էջ 55ա, բ, 3562, էջ 335ա, բ)։ Այս նույն ձեռագրերում, որտեղից սկսվում է հոդվածը, «կէսք» բառից առաջ դրված է «Դ», այսպես՝ «...դահեկանաց իւրեանց Դ կէսք վաճառեցին...» (տես նույն էջերը)։ Նշված «Դ»-ն չորրորդ հոդվածի համարն է, բայց այն հաշվի չեն առել որպես կարգահամար։*

Հոդ. Ե, էջ 480: *Այս հոդվածը ձեռագրերի մի մասում սկսվում է Դ հոդվածի վերջից մնացած մի հատվածով. «Կարդեցաք եւ հաստատեցաք* (Կանոնագրքի բնագրում՝ *սահմանեցաք— Վ. Հ.), զի յայսմհետէ հրաժարեսցեն քահանայք եւ ժողովրդականք յայդպիսի անառակ եւ մահաբեր սովորութենէ»։ Այնուհետև սրան կցված է Կանոնագրքում եղած Ե հոդվածն ամբողջությամբ, և այդ բոլորը դրված է Դ համարի տակ (տես № № 648, էջ 55բ, 3562, էջ 335բ), իսկ № № 649, 650, 651, 2964 ձեռագրերում Դ և Ե հոդվածները միացված են միմյանց և դրված են Դ համարի տակ։*

Հոդ. Զ, էջ 480—481: *Այս հոդվածը նշված ձեռագրերում բաժանված է երեք մասի, որից երկու մասը դրված է տարբեր համարների տակ, որպես առանձին հոդվածներ, իսկ երրորդ մասը մուծված է Կանոնագրքի ունեցած Է հոդվածում, այսպես՝ ա. մաս «Քահանայք զշաբաթու... եւ աւետարանաւ կարգաւորաքարս» որպէս առանձին հոդված, նշված է Ե կամ Զ համարների տակ. բ. մաս «Եւ զբաժակսն հաղորդութեանն... եւ տանջեսցին* (Կանոնագրքի բնագրում *և տուժեսցին—Վ. Հ.) յաստուծոյ», որպես առանձին հոդված, նշված է Զ կամ Է համարների տակ (№ № 648, էջ 55բ—56ա, 649, էջ 81բ, 650, էջ 89բ, 651, էջ 68ա, 2964, էջ 115բ, 3562, էջ 335բ—336ա)։ գ. մասի վերաբերյալ տես հաջորդ ծանոթագրության մեջ։*

Հոդ. Է, էջ 481: *Զ հոդվածի մնացած՝ երրորդ մասը՝ «Քահանայք (այս բառը Կանոնագրքի բնագիրը չունի—Վ. Հ.) պատրաստեսցեն կատարել զսուրբ խորհուրդն... ամենայն զգուշութեամբ», նշված ձեռագրերում դրված է որպես սկիզբ Է հոդվածի։ Այնուհետև Է հոդվածը ամբողջությամբ և Ը հոդվածի սկզբի մասը «Եւ զկտակարանս եւ զմարգարէս... եւ հանդերձ բովանդակ սրբոյ սեղանոյն», միասին նշված են որպես Է կամ Ը հոդված (№ № 648, էջ 56ա, 649, էջ 81բ—82ա, 650, էջ 89բ, 651, էջ 68ա, 2964, էջ 115բ—116ա, 3562, էջ 336ա)։*

Հոդ. Ը, էջ 481—482: *Այս հոդվածի մնացած մասը՝ «եւ զեկեղեցւոյ վարագոյր (վերջին բառը Կանոնագրքի բնագիրը չունի—Վ. Հ.) առագաստիկ փեսայի... թէ քահանայ է՝ լուծցի, թէ դպիր՝ որոշեսցի» դրված է որպէս Ը կամ Թ հոդված (№ № 648, էջ 56ա, 649, էջ 82ա, 650, էջ 90ա, 651, էջ 68ա, 2964, էջ 116ա, 3562, էջ 336ա)։*

Հոդ. Ժ, էջ 482: *Այս հոդվածը թեթև կերպով խմբագրված է. «Ժ. Ամենևին քահանայք գահասիրութեամբ մի՛ հակառակեսցեն ընդ միմեանս, զի զոր շնորհն Աստուծոյ ընտրեաց նախ ի քահանայութիւն, նա՛յ է նախաթոռ յեկեղեցւոյ եւ ի տան» (№ № 648, էջ 56բ, 649, էջ 82ա, 650, էջ 90ա, բ, 651, էջ 68բ, 2964, էջ 116բ, 3562, էջ 336բ)։*

Հոդ. ԺԳ, էջ 483—484: *Ներքոհիշյալ ձեռագրերում այս հոդվածի վերջին հատվածը այսպես է. «եւ ոչ ժողովրդականքն առ քահանայսն ունել զնոցա պաշտաւնն» (№ № 648, էջ 57ա, 649, էջ 82բ, 650, էջ 91ա, 651, էջ 69ա, 2964, էջ 117ա, 3562, էջ 336բ)։ «Պաշտամն» բառը Կանոնագրքի բնագրում գրված է ԺԴ հոդվածի սկզբում, այսպես. «ԺԴ. Պաշտամն եւ պատարագիք եւ սպասք...» և այլն։*

Հոդ. ԺԹ, էջ 486: *Վերը նշված ձեռագրերում «ապաշխարութեան ապաշխարողացն»-ի փո-*

խարեն գտնում ենք միայն «զխոստովանողացն» ձևով (№ 648, էջ 57բ, հմմտ. նաև № № 649, էջ 83բ, 650, էջ 91բ, 651, էջ 69բ, 2964, էջ 118ա, 3562, էջ 337բ)։

Հոդ. ԻՆ, էջ 487: *Նշված ձեռագրերում այս հոդվածն այսպես է. «Ոչ է պարտ զկուսանս այրեաց տալ» (№ № 648, էջ 58ա, 649, էջ 84ա, 650, էջ 92ա, 651, էջ 70ա, 2964, էջ 119ա, 3562, էջ 338ա)։*

Հոդ. ԻԷ—ԻԸ, էջ 487—488: *Վերոնշյալ ձեռագրերում ԻԷ հոդվածը վերջանում է այսպես. «զսուրբ պատարագն սրբենէցեն»։ Կանոնագիրք-ձեռագրերում վերջինիս շարունակություն կազմող «զարշառս եւ զոչխարս» բառերը իրավամբ տեղափոխեցինք ԻԸ հոդվածի սկզբում, այսպես. «Եւ զարշառս եւ զոչխարս քահանայք ի տունս իւրեանց կենդանի մի իշխեսցեն առ-նուլ», իսկ այնուհետև՝ ինչպես բնագրում (№ № 648, էջ 58ա, 649, էջ 84ա, 650, էջ 92բ, 651, էջ 70ա, 2964, էջ 119ա, 3562, էջ 338ա)։*

Հոդ. ԼԱ—ԼԷ, էջ 489—490: *Նշված ձեռագրերում, ինչպես արդեն ասել ենք վերևում, չեն ընդօրինակվել այս յոթը հոդվածները։*

ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 491: *№ 659 ձեռագրում պահվել է այլ վերնագիր. «Յոհաննու Մանդակունոյ ի խրատս եկեղեցւոյ համառօտ բանք» (էջ 263ր)։ Վերջինս ցույց է տալիս, որ այս վերնագրի տակ շարադրված նյութերը եկեղեցական հարցերին վերաբերող խրատներ են և բերված են համառոտ։ Ամենայն հավանականությամբ № 659 ձեռագրի գրիչ Մաղաքիան այս վերցրել է ոչ թե անմիջապես Կանոնագրքի համապատասխան բնագրից, այլ Կանոնագրքից անկախ գոյություն ունեցող մի այլ բնագրից։*

Ցանկ, էջ 491—492: *Ցանկի և բուն կանոնների հաջորդականության մեջ գտնում ենք որոշ անկանոնություն։ Եթե հետևելու լինենք ցանկի հաջորդականությանը, ապա կանոնները կունենան հետևյալ կարգը.*

Ցանկի Ա վերնագրին համապատասխանում է Ա հոդվածը։

Բ	»	»	*Գ, Ե*	»
Գ	»	»	*Դ*	»
Դ	»	»	*Է*	»
Ե	»	»	*Ը*	»
Զ	»	»	*Թ*	»
Է	»	»	*Ջ*	»
Ը	»	»	*Ժ*	»
Թ	»	»	*ԺԱ*	»

Այսպիսով, ցանկում չի նշված Բ հոդվածի վերնագիրը, սակայն Բ հոդվածը պետք է լինի ոչ թե առանձին, որը, մեր կարծիքով, հետագա ընդօրինակությունների սխալի արդյունք է, այլ Ա հոդվածի շարունակությունը։ Այդ երևում է Ա հոդվածի ցանկի վերնագրից, ինչպես նաև Ա և Բ հոդվածների բովանդակությունից։ Այնուհետև Բ հոդվածի ցանկի վերնագիրն արտահայտում է ոչ միայն Գ հոդվածի, այլև Ե հոդվածի բովանդակությունը։ Նշանակում է այստեղ գործ ունենք միևնույն հոդվածի կրկնության հետ։ Վերջապես՝ համարյա բոլոր ձեռագրերում (բացառությամբ յոթ ձեռագրի) Ժ և ԺԱ հոդվածները միացված են և գրված մեկ հոդվածի՝ Ժ-ի տակ, սակայն ցանկում այդ հոդվածն ունի երկու առանձին վերնագիր։ «Ը. Դեւք առանց հրամանի Աստուծոյ ոչ իշխեն մտանել ի մարդ» և «Թ. Դիւահարի չհաղորդել մինչեւ սրբեսցի»։ Ի դեպ՝ Ո ձեռագրի գրիչն ավելի վաղ նկատել է այս անկանոնությունը և ձեռագրի 277բ էջի ներքևի լուսանցքում ավելացրել է. «Ցանկս տարակոյս է, զգոյշ լեր եւ մի՛ մեղադրեր, զի յաւրինակն այսպէս գտաք»։

Այս շեղումները ցույց են տալիս, որ ժամանակի ընթացքում, Հովհաննես Օձնեցու Կանոնագրքի կազմվելուց հետո, ընդօրինակությունների միջոցով տեղի են ունեցել որոշ խանգարումներ։

Այս ցանկը չի պահպանվել № 659 ձեռագրում։

Առաջաբան, էջ 492: *Այս առաջաբանը մեզ ծանոթ ձեռագրերից ունի միայն № 659 ձեռագիրը երկու տեղ, նախ՝ Հովհ. Մանդակունու կանոնախմբում, ինչպես Կանոնագրքում է, երկրորդ՝ Հովհ. Օձնեցու կանոնախմբի ԼԲ հոդվածին առընթեր (ձեռագրում այդ հոդվածը համարակալված է ԺԸ)։ Վերջինս որոշ շեղումներ ունի Կանոնագրքի ունեցածից. «Զմեծ եւ զսուրբ եւ զմարդասէր եւ զբարերար տեառնէ պարտիմք գոհանալ, որ արար զմեզ բանաւորս եւ հոգեւորս եւ ետ մեզ ճանաչել զանուն իւր սուրբ եւ ասէ. Ես ընդ ձեզ եմ յաւիտեանս ժամանակաց» (էջ 273ա)։*

Հոդ. Ա, Բ, էջ 492—493: *Հովհ. Օձնեցու «Սակս ժողովոց ի Հայս» աշխատության Մատենադարանի № 500 ձեռագրի պահված օրինակում, թվելով Մանազկերտի ժողովում վերահաս-*

տատված կանոնները, վերջում դրված է. «Եւ զկանոնս սրբոյն Սահակայ եւ Յոհաննու Մանդակունոյ վերստին հաստատեցին» (էջ 274բ)։ Նույն բանը երևում է Օձնեցու «Սակս ժողովոց ի Հայս» աշխատության «Գիրք Թղթոց»-ի օրինակից։ Մեջբերելով Հովհ. Մանդակունու մի շարք հոդվածները, որոնք քննվել են Մանազկերտի ժողովում, Հովհաննես Օձնեցին այնուհետև ավելացնում է. «Այս աւանդ կացցէ ի վիճակիս մերում եւ այս մատենագիր եղիցի ամենայն Հաւաստանեայց, որք ընդ ձեռամբ մերով ճաւանեալ կան ի պահեստի։ Ահաւասիկ ես Յովհաննէս Հայոց կաթուղիկոս գրեցի իմով ձեռամբ դայս կանոնս, հաստատութեամբ սուրբ հաւատոյ...» (էջ 232, տես և հմմտ. № 3076, էջ 119ա, բ, ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

Հովհ. Օձնեցու կանոնախմբի մի օրինակը, որը պահված է Մատենադարանի № 659 ձեռագրում (էջ 263բ—267ա), բաժանված չէ առանձին հոդվածների։ Կանոնագրքում եղած Ա և Բ հոդվածները չեն տարբերվում № 659 ձեռագրի համապատասխան հոդվածներից։ Մինչդեռ նույն ձեռագրում պահվող՝ Հովհաննես Օձնեցու կանոնախմբի մի այլ տարբերակի (էջ 267ա—273բ) վերջին հոդվածը Հովհան. Մանդակունու Ա և Բ հոդվածներն են. այդ մասը բերում ենք ամբողջությամբ. «ԺԹ. Կանոնք միաշաբաթուն ոչ հրամայեցին պահել և յայտնի է, զի շաբաթն ապր երեկունն ապաշխարողաց ոչ քարոզին մի դէմս ըստ Մովսիսի աւրինադիր հրամանին. եւ այս՝ զի կարապետ է Թաղաւորին յառաջընթաց, ընդ առաջ ելանէ ճրագաւք եւ մոմեղինովք կիւրակէին յաղագս կանոնական կարդաւորութեանն, այլ վասն սրբոյ կիւրակէին պահելոյ ոչ կանոնք հրամայեն պահել եւ ոչ վարդապետք, եւ ոչ մեք հրամայեմք. այլ նզովեմք եւ անէծս ի վերայ դնեմք որ[պէս?] առաջինքն որ ի Նիկիայ սուրբ հարքն, այլ և ոչ ծնդրադրութիւն առնելս» (էջ 273ա, բ)։ Համեմատությունը ցույց տվեց, որ այս մեջբերումը համապատասխանում է ոչ թե Հովհաննես Օձնեցու ԼԱ հոդվածին, այլ, Հովհան Մանդակունու կանոնախմբի Ա և Բ հոդվածներին և վերցված է, ամենայն հավանականությամբ, Հովհաննես Օձնեցու «Սակս ժողովոց ի Հայս» աշխատության որևէ տարբերակից, թեև նման տարբերակ մեր Մատենադարանի ձեռագրերում չգտանք։ Մատենադարանի № 948 ձեռագրի տարբեր մասերում, տարբեր վերնագրերով, պահվել են Հովհան Մանդակունու կանոնախմբի երկու ընդարձակ հատվածներ. բերում ենք դրանք լրիվ.

«Կանոնք ճկեղեցւոյ սուրբ ժողովոյն.

Ոչ հրամայեմք ի շաբաթու կամ ի կիւրակէի պահել եւ յայտ աստի է, զի շաբաթն որ ապաշխարողացն ոչ քարոզի, քանզի նախ յառաջին հրամանէն պատուէր. եւ զարձեալ, զի կարապետ է, ընդ առաջ ելանել մեծի կիւրակէին ճրագօք, ոչ հրամայեցին պահել կանոնք եւ ոչ վարդապետք, այլ նզովս արկին պահողացն ՅԺԸ եպիսկոպոսք որ ի սուրբ ժողովն։

Այլ յաւուր կիրակէի եւ զատկէն մինչև ցպենդեկոստե ծունր ոչ հրամաեցին դնել յաղաւթս կալն եւ ոչ պահել։ Ապա եթե ասիցե ոք ի պաս քառասնորդացն եթե ձեթ ծառոյ բերե եւ ձուկն ջրոյ և գինի որթոյ, ով անհեդեդ սզաարանք, այն իսկ են Նեստորի աղանդն անիծելոյն. քանզի մեծ մարգարէն Մովսէս՝ զձուկն միս ասաց, եւ առաքեալ վկաեաց՝ քանզի մարմին է, եւ Բարսեղ Կեսարացի՝ զազան ասաց զձուկն եւ անյիշելին Նեստոր՝ ջուր։ Արդ՝ ո՞րպես է նա ջուր, զի կենդանի է ամենևին, մի՞թէ իցէ ինչ պակաս արդեաւք կամ մարմնով կամ թռչելով։ Գիրք ասեն զսկեզտոն երեք գլխեան եւ զհիտրայն (կարդա զհիդրայն) եւս չար քան զնա, բայց սակայն զիւրեանց որգիսն ոչ ուտեն, այլ ձուկն ուտէ եւ մարդ եւս ուտէ։ Այլ եւ կան հաւք ջրայինքն եւ բնաւ ոչ ոք է, որ առանց ջրոյ սնանի։ Գիրք զձուկն կենդանի ասէ եւ զեղ եւ զձեթ մի ասէ. Եսայի ասէ. «Փայտ իւղոյ». եւ Դաւիթ ասէ. «Ծերութիւն իմ ի ձէթ պարարտութեան». եւ աւետարան ասէ՝ «Տուք մեզ յիւղոյդ ձերմէ», զի ահա յայտ է եթե իւղ եւ ձեթ մի է։ Եւ Ադամ ոչ եթե պանիր եկեր եւ եղ ի դրախտեն, այլ պտուղ ծառոյ։ Այլ վասն գինոյ ասեն գիրք. «Զարբեցողն չար քան զդիւահարս»։ Եւ առաքեալ ասէ. «Մի արբենայք գինով, յորում զեղխութիւն է». զի եթէ Նոյի հրամաեաց ըմպել գինի վասն տրտմութեանն, այլ ոչ ի դեղխեալ, զի մինչեւ ցնոյ ոչ էր գինի, այլ խաղող միայն։ Ապա Նոյի հրամայեց ըմպել վասն տրտմութեանն, նոյնպէս եւ մեզ տուեալ է յուրախութիւն, այլ ոչ ի զեղխութիւն, այլ կերակուր յորժամ ուտեմք ի ՝նմին կամք, այլ յորժամ արբենամք՝ զանվաելուչն խաւսիմք, զոր մարգարէն Եղկելիս ասէ զայնոսիկ եթէ. «Վա՜յ որ յառնէլն ընդ առաւատն եւ զհետ երթան ցքոյն»։ Եթէ մոլորեցան եւ դանդաղեցին վասն գինւոյ, քահանայքն եւ մարգարեքն նաև յառաջ ուխտաւորքն Սամուել եւ Սամսովն եւ որդիքն Յունադաբա միս ուտէին, բայց գինի եւ իւղ ոչ ըմպէին։ Գիրք ասեն եթէ հացիւղի եւ մեղրիւղի եւ ամբրաւիւղի մի են, եւ պանիր, ձուկն, ձէթ եւ գինի մի են։ Եւ եթէ ասէ՝ եթէ ձու Ի աւր կենդան լինի, այլ եւ ի կենդանի անասնոցն, եւ եթե Ի աւր կերակուր չլինի՝ մեռանի։

Ջրորեքշաբաթ եւ զուրբաթ պարտ է պահել, բայց ի գործոց պարապեցուցանել մեզ են, նոյնպէս եւ զմարտիրոսաց յիշատակս թէ ի նոսա դիպեսցեն փոխել պարտ է ի հինգշաբաթն եւ

ոչ պարտի յուրրաթու կատարել, եթէ զմեծ աւր ուրբաթու եկեղեցի ընդ պահաւք հրամայէ արկանել յորում գիրք զկենդանարար խաչելութիւնն պատմեն, որ եւ զմարդիկ ի ծառաութենէ մեղաց փրկեաց. արդ զնա պահել հրամաեցին եւ զայլ ուրբաթսն որ ի զատկէն մինչ ի Պենդեկոս[տ]ն ուտել» (էջ 56ա—57ա)։

«Յովհաննու Մանդակունայ ասացեալ.

Դեւք առանց հրամանի Աստուծոյ ի մարդ ոչ կարեն մտանել. եւ յայտ ի Սաւուղա է, զի աւէին [ծ]առայքն Սաւուղա. Ահա այս չար ի տեառնէ խեղդէ զքեզ։ Եւ վասն Յովբա Աստուած ետ հրաման, զի ասէ Տէր ցսատանա. Ահա մատնեմ զնա քեզ։ Եւ յերամակն խոզից ոչ կարացին մտանել դեւքն։ Ապա զի՞ արդ իշխեն մտանել ի մարդ առանց հրամանի Աստուծոյ։ Բայց ասեն գիրք. Որ անմեղն է եւ առաքինին՝ անգի իսկ ի յովմանց պատիժս խնդրէ և զոմանս խրատէ, բայց աւրէնս ոչ է պարտ առնուլ մինչեւ սրբեսցի։ Ապա թէ ի նմին վախճանի ընդ մարտիրոսսն պսակի, զոր առաքեալ ասէ. «Մատնել զայնպիսին ի սատակումն մարմնոյն, զի ոգին ապրեսցի». (էջ 29ա)։

Վերևում բերված առաջին հատվածը, որոշ շեղումներով, համապատասխանում է Հովհան Մանդակունու կանոնախմբի Ա, Բ, Դ, Դ, Ը հոդվածներին, որոնք երբեմն ավելի ընդարձակ են. օրինակ՝ № 948 ձեռագրի բնագիրը չունի Դ հոդվածի «Բայց զոր»-ից (էջ 496, տող 6) սկսած մինչև նույն հոդվածի վերջը և այլն։ Իսկ երկրորդ հատվածն աննշան տարբերությամբ ծածկում է Ժ և ԺԱ հոդվածները։

Ինչպես դժվար չէ նկատել, վերը բերված հատվածները բաժանված չեն առանձին հոդվածների (ինչպես № 659 ձեռագրում է), այլ թողնում են այլ և այլ առիթներով, զանազան ժամանակներում դրված, կանոնական տարբեր գրությունների տպավորություն (այդ հատվածների վերնագրերը ավելացված են հետագայում, ընդօրինակությունների ժամանակ)։ Կանոնական այս գրությունների առանձին գոյությունը և վերջիններիս հոդվածների բաժանված չլինելը կարծել է տալիս, որ սրանք մինչև Կանոնագրքի մեջ մուծվելը, և դրանից էլ հետո, գոյություն են ունեցել որպես անկախ բնագրեր, ինչպես Բարսեղ Կեսարացու կանոնախմբի վերջին՝ ՁԱ հոդվածը (տես վերևում, էջ 620—621)։ Իսկ ինչ վերաբերում է Հովհան Մանդակունու կանոնախմբի Ե, Զ, Է հոդվածներին, որոնք չեն պահվել № 948 ձեռագրի վերոհիշյալ բնագրերում, ըստ երևույթին սրանք ևս Հովհան Մանդակունու մի այլ կանոնական գրությունից վերցված նյութեր են, որոնք, սակայն, առանձին, Կանոնագրքից անկախ, մեզ չեն հասել, թեև է հոդվածը գտնում ենք սույն աշխատության երկրորդ հատորում զետեղված՝ Հովհան Մանդակունու մի այլ կանոնախմբի մեջ։ Նույն բովանդակություն ունեցող Գ և Ե հոդվածների կրկնությունը Կանոնագրքի Հովհան Մանդակունու կանոնախմբում, հավանաբար, պետք է բացատրել Մանդակունու կանոնական տարբեր գրություններից օգտվելու փաստով։

Հովհան Մանդակունու Կանոնախմբի Դ, Է, Ը, Թ հոդվածները որոշ շեղումներով հանդիպում են «Գիրք թղթոց»-ում (էջ 231—232). սկիզբ. «Ո՜վ անհեթեթ ղղայարան», հմմտ. Կանոնագիրք, էջ 493, տող 12. վերջ. «Յիսուսի ծնունդն էր այսպէս», հմմտ. նույն տեղում, էջ 499 տող 3)։ «Գիրք թղթոց»-ում պահված հատվածների մեջ կան այնպիսիններ, որոնք մոտ են Կանոնագրքի՝ Հովհան Մանդակունու կանոնախմբի հոդվածներին, սակայն կան նաև այնպիսիներ, որոնք մոտ են № 948 ձեռագրի բնագրին։ «Գիրք թղթոց»-ը ևս № 948 ձեռագրի նման չունի Դ հոդվածի «Բայց զոր»-ից (էջ 496, տող 6) սկսած մինչև հոդվածի վերջը։ Մեր նշած հատվածը մուտք է գործել «Գիրք թղթոց»-ում Հովհան. Օձնեցու «Սակս ժողովոց ի Հայս» աշխատության միջոցով, որպես մեջբերում։

Հոդ. Զ, Ը, էջ 497, 498: № 659 ձեռագրում պահված Զ և Ը հոդվածների ոչ այնքան մեծ տարբերությունները ցույց տալու համար կբերենք այդ երկու հոդվածները. «Ի Պենտակոստէից մինչև զվարդեվառն մին շաբաթն ուտի, երկուն պահի։ Վարդեվառն տաւն առաքելոցն է և մատրունք ըստ հնումն, ի նորումն նաւակատիք սուրբ եկեղեցւոյ եւ մարտիրոսաց յիշատակ» էջ 266ա, բ)։ «Ը. Եւ որք ի չորեքշաբաթու և յուրբաթու մարտիրոսաց յիշատակ առնեն՝ մեղք են, զի եթէ ի կարգի էր. ապա ի զատկին ուրբաթն աւր պարտ էր առնել մատաղ, զի Քրիստոս աստուած արարիչն երկնի եւ երկրի յուրբաթուն խաչեցաւ եւ ընթերցուածք եւ Սաղմոս եւ Աւետարան այն աւր շատ են. եւ այն աւր ամենայն մարդիկ ազատեցան ի ծառայութենէ մեղաց եւ դրախտն այն աւր բացաւ ի ձեռն աւազակին եւ զմարդիկ ի ծառայութենէ այն աւր զերծոյց Քրիստոս, բայց կարգք եկեղեցւոյ զայն ուրբաթ պահել հրա[մա]յեն եւ փոխանակ նորա ուտել զայլ ուրբաթսն մինչեւ ցՊենտակոստէն» (էջ 266բ—267ա)։ Իսկ Կանոնագրքում պահված Ժ և ԺԱ հոդվածները № 659 ձեռագրում չեն պահվել. այստեղ Հովհան Մանդակունու կանոնախումբը ավարտվում է Կանոնագրքում պահված Թ հոդվածով։

ԱԲՐԱՀԱՄ ՄԱՄԻԿՈՆԵԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Հոդ. Ա, էջ 501—502: *Այս հոդվածը որպես առանձին նամակ, ուղղված Աղվանից Վաչագան թագավորին, գտնում ենք «Մովսէսի Կաղանկատուացւոյ պատմութիւն Աղուանից աշխարհի» (Թիֆլիս, 1912) աշխատության մեջ, որպես Ա հատորի 25-րդ գլուխ՝ «Երանելւոյն Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի առ Վաչական Աղուանից արքայ թուղթ սակս ննջեցելոց» խորագրով (էջ 96—97)։ Մեզ թվում է, որ այս նամակը Կանոնագրքի մեջ մտել է Մովսես Կաղանկատվացու Պատմությունից անկախ։ Իսկ հաջորդ Բ և Գ հոդվածները, որ այլուր չգտանք, ըստ էության Ա հոդվածի նման առանձին նամակներ են և չեն մտել Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ, բայց մտել են Կանոնագրքում։*

ՍԱՀԱԿ ՁՈՐՈՓՈՐԵՑՈՒ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 506: *Մի քանի ձեռագրերում այս կանոնախումբը սխալմամբ վերագրված է Մովսես Քերթողահորը և վերնագրում էլ վերջինիս անունն է գրված. «Կանոնք Մովսէսի Քերթողահօրն բան (№ № 648, 3562 ձեռագրերում՝ քան) հարցողաց, գլուխք ԺԵ» (№ 649, էջ 113բ. տես նաև № № 648, էջ 52բ, 650, էջ 123ա, 651, էջ 103բ, 2964, էջ 157ա, 3562, էջ 332ա)։*

Ցանկ և երկրորդ վերնագիր, *էջ 506—507։ Վերևում նշված ձեռագրերը այս ցանկը և երկրորդ վերնագիրը չունեն։ Ձեռագրերի մեծ մասը երկրորդ վերնագրում ունի «քաղաքայ», թեև սխալ հոլովաձևով, փոխեցինք փոքրաթիվ ձեռագրերի ունեցածով՝ «քաղաքաց», բայց սա էլ միտքը հասկանալի չի դարձնում։ Մեզ թվում է «Սիւնականի քաղաքաց» բառերի միջև եղել է մի բառ, օրինակ, «ի Միջագետաց», որը և ընկել է։*

Հոդ. Ա, էջ 508: *Հարցը աննշան շեղում ունի նշված ձեռագրերում. «Թէ պար[տ] իցէ եպիսկոպոսին մինչ յեկեղեցւոջ անդ իւրում իցէ և գործ եպիսկոպոսութեան իցէ առ նմա երկաբ արկանել յանձն իւր և այնու վարել զտեսչութիւն» (№ 649, էջ 113բ—114ա. տես նաև № № 648, էջ 52բ, 650, էջ 123ա, 651, էջ 103բ—104ա, 2964, էջ 157աբ, 3562, էջ 332ա)։*

Հոդ. Ե, Զ, էջ 509: *Կանոնագրքում նշված Ե հոդվածն այս ձեռագրերում գրված է Զ-ի տեղը և ընդհակառակը։*

Հոդ. Է, էջ 509—510: *Այս հոդվածի Հարցը և Պատասխանը մի քանի ձեռագրերում փոքր ինչ շեղվում են Կանոնագրքի ունեցածից «Հրց. Թէ պա՞րտ է որ ոք կրօնաւորեցաւ յանապատի և ուրկանայ կամ բորոտի, ի նմին յարամնալ ի կրօնաւորութեան յանապատի, թէ ի հիւանդանոցս երթալ։*

Պատասխանի. Ոչ է պարտ թողուլ ղտեղին եւ ի հիւանդանոցս երթալ, այլ ի նմին մըշտընջենաւորիլ կրօնաւորութեամբ յանապատին, բայց եթէ առ ի չընդունելեացն հարկ լինիցի փախչել» (№ 2964, էջ 158աբ. տես նաև № № 648, էջ 53ա, 649, էջ 114բ, 650, էջ 123բ, 651, էջ 104բ, 3562, էջ 332բ—333ա)։ № 650 ձեռագրում այնուհետև այս կանոնախմբից չի ընդօրինակվել և բնագիրը մնում է թերի։

Հոդ. ԺԵ, էջ 513: *Պատասխանի վերջին «Այս ասպարէսք են նահատակաց... որ է ըստ ախտից մերոց» հատվածի փոխարեն № № 649, 651, 2964 ձեռագրերն ունեն «սուրբ հարցն և հաճոյ Աստուծոյ փրկողին արարածոց» (էջ 116ա, 106ա, 159բ), իսկ № № 648, 3562 ձեռագրերը չունեն «Այս ասպարէսք են նահատակաց» և «Ի սուրբ հոգւոյն որ և մեզ... որ է ըստ ախտից մերոց» հատվածները (էջ 54ա, էջ 333բ)։*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ ԿԱՆԱՆԱԽՈՒՄԲ

Առաջին վերնագիր, էջ 514: *Ծանոթագրություններում օգտագործված՝ մեզ հայտնի ձեռագրերը չունեն այս վերնագիրը. միայն № 659 ձեռագիրը ունի «Ցանգ Յովհաննու Մանդակունւոյ» (էջ 267ա), չփոթված վերնագիրը, որի վերջին բառի վրա ուրիշներ գիծ են քաշել և ուղղել «Իմաստասիրի Օձնեցւոյ»։*

Ցանկ, էջ 514—516: *Այս ցանկը պահվել է միայն № 659 ձեռագրում։ Այն տարբեր է Կանոնագրքի ունեցածից և նոր է կազմված. ահա այդ ցանկը.*

«ա. Եպիսկոպոսաց, երիցանց, սարկաւագաց արբեցութեան։
բ. Աշխարհականաց արբեցութեան։
գ. Ոչ դնելոյ պսակ ի շաբաթու եւ ի կիւրակէի։
դ. Վաղիւն պսակելոց։
ե. Ոչ դնելոյ պսակ յաւուրս պենտակոստէից։
զ. Ոչ է պարտ ի սուրբ քառասներորդն ի շաբաթ և ի կիւրակէ պատարագ չմատուցանել։
է. Պահոց իւրաքանչիւր։
ը. Վասն հացի պատարագի։
թ. Վասն իւղոյն աւծութեան։
ժ. Վասն մկրտութեան ծիթոյն։
ժա. Վասն հիւանդաց ծիթոյն։
ժբ. Վասն չառնելոյ սեղան փայտեայ։
ժգ. Աւազան աւրհնելոյ։
ժդ. Մկրտութիւն առնելոյ։
ժե. Պսակ առնելոյ։
ժզ. Երկրորդ ամուսնութեան։
ժէ. Աւուրն շաբաթոյ երեկոյին։
ժը. Կիւրակէի։
ժթ. Ջարադանդ մծղնէից։
«ի. Քառասնորդացն պահոց» (էջ 267ա, բ)։

Երկրորդ վերնագիր, էջ 516: *№ 659 ձեռագրում ցանկից հետո եղած վերնագիրը սերտ աղերս ունի «Յովհաննու իմաստասիրի Աւձեցւոյ մատենագրութիւնք» (Վենետիկ, 1953)-ի մեջ պահված «Պատմութիւն վասն իւր ըստ առաջնումն կենցաղին ուսումնասիրութեան...»-ի վերնագրի (էջ 1) հետ։ Ահա ձեռագրի պահած վերնագիրը. «Երանելւոյն տեառն Յովհաննու Հայոց կաթողիկոսի յառաջին կենցաղն եւ գալ նորա յաթոռ քահանայապետութեան եւ բազմապատիկ եւ զանազան կարգս եկեղեցւոյ հաստատեալ տու[ն]ս Ի» (էջ 267բ)։ Իսկ մի քանի ձեռագրերում գրված է. «նոյն կանոնք գլուխք ԺԸ» (№ № 648, էջ 63բ, 649, էջ 110բ, 650, էջ 120ա, 651, էջ 100բ, 2964, էջ 153բ, 3562, էջ 343բ, № № 649, 650, 651, 2964 ձեռագրերում ԺԸ-ի փոխարեն ԺԹ)։ Նշված ձեռագրերում «նորին կանոնք»-ին նախորդում է «Երանելւոյն Յոհաննու Իմաստասիրի» գրվածքը, որը այլ բան չէ, եթե ոչ «Յովհաննու իմաստասիրի Աւնեցւոյ մատենագրութիւնք»-ի առաջին բնագրի զանազան հատվածների քաղագրություն (տե՛ս § գ, էջ 5, § դ, էջ 8, § ե, էջ 9)։ Դրա համար էլ հիշյալ ձեռաղրերում սրանից հետո դրված է. «նորին»՝ Հով. Օձնեցու*

Հոդ. Ա, Բ, էջ 516—517: *Բացառությամբ № 659 ձեռագրի, մյուս ձեռագրերը չունեն Ա և Բ հոդվածները, իսկ վերջինիս ունեցածն առանձին շեղումներ չունի Կանոնագրքի ունեցածից, միակ տարբերությունն այն է, որ № 659 ձեռագիրը չունի «Մի՛ իշխեսցէ պաշտել զկարգն» կամ «մատչելի ի կարգն իւր եւ ի հաղորդութիւն»-ի փոխարեն ունի «մերձանալ ի կարգս իւր եւ հաղորդ լինել» (էջ 268ա)։*

Հոդ. Է, էջ 518—519: № 659 ձեռագրում այս հոդվածը միացված է նախորդի հետ և նշված՝ Զ համարի տակ (էջ 269ա, բ)։

Հոդ. Ը, էջ 519: № 651 ձեռագիրը չունի այս հոդվածի վերջին՝ «և մեզ ի նմին... նորաձև ինչ» մասը։

Հոդ. Թ, էջ 519—520: Բնագրի «եւ իւրաքանչիւրոց եպիսկոպոսացն միանգամ ի Զատկին հինգշաբթի աւր» (տող 12—13) հատվածի «եպիսկոպոսացն միանգամ» բառերի միջև պետք է լինի բայը, օրինակ՝ «բաշխել», որը և ոչ մի ձեռագիր չունի, այլապես միտքն պարզ չէ։ Մի քանի ձեռագրերում այս հոդվածը ենթարկվել է թեթև խմբագրման, տե՛ս և հմմտ. հետևյալ հատվածը. «...գիւղն անուշահոտութեան, հայրապետին աւրհնել միանգամ ի զատկի հինգշաբթին օր, որպէս եւ հրամայեալն է. եւ իւրաքանչիւր եպիսկոպոսացն եւ քահանայիցն ի նմանէ ընդունել...» (№ 648, էջ 64բ. հմմտ. № № 649, էջ 112ա, 651, էջ 101բ, 2964, էջ 155ա, 3562, էջ 344բ)։ Իսկ № 650 ձեռագրում չի պահվել «եւ յայլ ի պէտս աւծման... աւրհնել քահանայն» (էջ 121բ) վերջին հատվածը։

Հոդ. ԺԴ, էջ 521: № № 650, 651 ձեռագրերում չի պահվել այս հոդվածի վերջին մասը. «եւ ապա տանել... եւ մկրտել»։

Հոդ. ԺԷ, էջ 523: եզ ձեռագրերում այս հոդվածը դրված է ԺԸ հոդվածի տեղը և ընդհակառակը։

Հոդ. ԺԸ—ԼԲ, էջ 523—535: № № 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չեն ընդօրինակված ԺԸ—ԻԶ, ԻԸ, Լ և ԼԲ հոդվածները, իսկ № 659 ձեռագրում՝ ԺԹ—ԼԱ հոդվածները։

Հոդ. ԻԴ, էջ 527—530: ա ձեռագրում բնագրի «պատճառին» բառի վրա հատուկ նշանով աջ լուսանցքում կարմիր թանաքով դրված է. «զաւրհնեցէք մանկունք զտէրն ասէ», (էջ 190ա)։

Հոդ. ԻԹ, էջ 533: Մի քանի ձեռագրերում այս հոդվածի վերջին «աւանդիչս» բառի փոխարեն գտնում ենք «հարսն մեր» (№ № 648, էջ 66ա, 649, էջ 113բ, 650, էջ 122բ, 651, էջ 103բ, 2964, էջ 157ա, 3562, էջ 346ա)։

Հոդ. ԼԲ, էջ 534—535: № 659 ձեռագրում այս հոդվածի վերջում, որպես շարունակություն, կցված է. «զմեծ եւ զսուրբ եւ զմարդասէր եւ զբարեբար տեառնէ պարտիմք գոհանալ, որ արար զմեզ բանաւորս եւ հոգեւորս եւ ետ մեզ ճանաչել զանուն իւր սուրբ եւ ասէ. «Ես ընդ ձեզ եմ յաւիտեանս ժամանակաւ» (էջ 273ա)։ Սակայն այս մեջբերումը կապ չունի Հովհան Օձնեցու կանոնախմբի հետ և պատկանում է Հովհան Մանդակունու գրչին (տե՛ս և հմմտ. վերևում, էջ 492, 535)։ Եվ պատահական չէ, որ № 659 ձեռագրում այս մեջբերմանը հաջորդում են Հովհան Մանդակունու կանոնախմբի Ա և Բ հոդվածները, որոնք ձեռագրում գրված են որպես Հովհան Օձնեցու կանոնախմբի ԺԹ հոդված։ Քանի որ № 659 ձեռագրում Հովհան Օձնեցու կանոնախմբին նախորդում և հաջորդում են Հովհան Մանդակունու գրվածքները, այդ պատճառով էլ այստեղ Հովհան Օձնեցու կանոնախումբը ներկայացված է Մանդակունու անունով։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԲԵԿՈՐՆԵՐ

Կանոնագրքի ունեցած կանոնախմբերի հաջորդականությամբ Հավելվածում հրատարակում ենք մեր Մատենադարանի երկու ձեռագրերի պահպանակների և չորս պատառիկների նկարագրությունը և սրանց բովանդակած բնագրերը ամբողջական ձևով։ Կետադրությունը պահպանված է նույնությամբ, բաց են արված համառոտումները։ Այդ նյութերի գրության ժամանակը որոշված է մոտավորապես, ելնելով նրանց հնագրական տվյալներից։

Ա. № 4201 ձեռագրի պահպանակ[1]. 2 թերթ. մեկը ձեռագրի սկզբում, մյուսը՝ վերջում, երկուսն էլ մագաղաթ։ Առաջին թերթի մեծությունն է 25×20,5, երկրորդինը՝ 26×18. գիր՝ միջին մեսրոպյան խոշոր երկաթագիր. երկսյուն։ Առաջին թերթում 20 տող, երկրորդում՝ 18, վերջինս վնասված է՝ պահպանակը ձեռագրի չափսին դարձնելու նպատակով վերևի լուսանցքի հետ երկու տող կտրված է։ Պահվել է վերջաբանի կարգահամարը՝ ԼԳ։ Ժամանակը՝ IX—X դարեր։

Պահպանակը բովանդակում է Առաքելական (Ա) կանոնախմբի ԼԳ հոդվածի ընգարձակ հատվածից (հմմտ. Կանոնագրքի 48-րդ էջի 8-րդ տողի «յայտնել զառականս մերձաւորի արեան իւրոյ») մինչև վերջաբանի սկզբի ընդարձակ մասը (հմմտ. Կանոնագրքի 52-րդ էջի 11-րդ տողը «իսկ իբրև լուան դայս ամենայն որդիք քահանայիցն»)։

Բ. Պատառիկ № 347. թերթ 4. մագաղաթ. մեծություն՝ 17×11,8. գիր՝ միջին մեսրոպյան մանր երկաթագիր. միասյուն. տողեր՝ 30։ Պատառիկի 1ա, 2ա և 3բ էջերում մելանը թափված է, գիրը մաշված, աջ և ձախ եզրերը սևացած, համարյա անընթեռնելի, բայց գրչի (գրելու հարմարանքի) ճնշման հետևանքով տառերի հետքերը նկատելի են. մագաղաթյա թերթերը կուչ են եկած, եզրերից տեղ-տեղ պատռված։ Այդ պայմաններում 1ա էջը կարդացվեց մասնակի կերպով, իսկ 3բ էջը չկարողացանք կարդալ։ Պահվել են հոդվածների մի քանի մասնավոր կարգահամարներ. ժամանակ՝ XI—XII դարեր։

Պատառիկը բովանդակում է Կղեմեսի կանոնախմբի ԽԸ—ԽՋ, ԾԲ-ից (սկիզբը չի պահվել) մինչև ԾԸ (վերջից չի պահվել)[2] հոդվածները, ԿԹ հոդվածի վերջից մինչև ՀԸ հոդվածը, ՁԳ հոդվածից[3] մինչև ՁԴ և երեք այլ հոդվածներ, որոնք չենք գտնում Կանոնագրքի ձեռագրերի մեծ մասում, բայց հանդիպում ենք Կանոնագրքի մի քանի օրինակներում՝ befgq և 659 ձեռագրում։ Միայն վերջին ձեռագրում է պահվել պատառիկում նշված ՁԴ հոդվածի «այսոքիկ է յաղագս կանոնաց» հատվածից մինչև վերջ։ Պատառիկի չորրորդ թերթը հարց ու պատասխան է, որը Կանոնագրքի այս հատորի կանոնախմբերին չի պատկանում, այդ պատճառով էլ այստեղ չենք հրատարակում։

Գ. № 2151 ձեռագրի[4] պահպանակ. 4 թերթ, երկուսը ձեռագրի սկզբում, երկուսը՝ վերջում, չորսն էլ մագաղաթ. մեծություն՝ 17,5×12,5. գիր՝ միջին մեսրոպյան երկաթագիր. միասյուն. տողեր՝ 20. վերջին երկու թերթը վնասված՝ պահպանակը ձեռագրի չափսին դարձնելու նպատակով վերևի լուսանցքի հետ երկու տող կտրված է։ Վերջին պահպանակի առաջին թերթի մեջտեղում հենց սկզբից եղել է ծակ, 3 սմ տրամագծով. 4 թերթերն էլ մի փոքր դեղնած են, իսկ առաջին թերթի ներքևի մասը կեղտոտված. պահվել է միայն IV հոդվածի կարգահամարը՝ Դ. ժամանակ՝ X դար։

---

1 Ձեռագիրը 1492 թ. ընդօրինակություն է (էջ 364բ)։

2 Բնագրում հոդվածների կարգահամարները Կանոնագրքի ունեցածից մեկով ավել է՝ ԾԴ հոդվածը պատառիկում նշված է ԾԴ և այլն։

3 Կանոնագրքի ՀԸ (պատառիկի ՀԹ) հոդվածին պատառիկում հաջորդում է Ձ, որը Կանոնագրքի ունեցած Կղեմեսի կանոնախմբի ՁԳ հոդվածն է։ Այսպիսով պատառիկում չեն պահվել թվով 4 հոդված՝ ՀԹ—ՁԲ։

4 Ձեռագիրը 1587 թ. ընդօրինակություն է (էջ 174ա)։

Պատառիկը բովանդակում է Բարսեղ Կեսարացու կանոնախմբի հոդվածների ցանկը՝ սկըզբից վնասված, իսկ վերջից թերթ է ընկած, ապա Գ, Դ, Ե, Ժ հոդվածները սկզբից և վերջից պակասավոր, Հունարենի 15, 16, և 47-րդ հոդվածները, որոնք չեն մտել Կանոնագրքի Բարսեղ Կեսարացու կանոնախմբում. վերջից թերի մի հատված, հավանաբար նրա մի այլ նամակից, որի մասին առայժմ ոչինչ չենք կարող ասել։

Դ. Պատառիկ № 1216. թերթ՝ 1. մագաղաթ. մեծություն՝ 15×11,5. գիր՝ միջին մեսրոպյան երկաթագիր. միասյուն. տողեր՝ 17. ընագիրը շատ է վնասված՝ մագաղաթի մեջտեղում 3 սմ տրամագծով ծակ կա. բացի կազմին ամրացված կողմից՝ մնացած եզրերը մաշված են և սևացած. ժամանակ X—XI դարեր։

Պատառիկը բովանդակում է Սահակ Պարթևի կանոնախմբի ԽԴ հոդվածի «ժառանգութեան յարքայութեանն Քրիստոսի եւ աստուծոյ» (էջ 402, տող 10) հատվածից մինչև ԽԶ հոդվածի «զտոհմային գայգականաց պէսպէս» (էջ 405, տող 13) հատվածը։

Ե. Պատառիկ № 608. թերթեր՝ 4. մագաղաթ. մեծություն՝ 23,5×17. գիր՝ միջին մեսրոպյան երկաթագիր. տողեր՝ 26, միասյուն։ Այս պատառիկը ժամանակին եղել է մեր Մատենադարանի № 4979 ձեռագրի պահպանակը[1]։ Այդ պատճառով վերջինս ձեռագրի չափսին դարձնելու նպատակով վերևի լուսանցքի հետ կտրել են նաև 1—2 տողեր. պատառիկի եզրերը մաշված են և կեղտոտված։ Պահվել են հոդվածների մասնավոր կարգահամարներ, բայց և նկատելի են նաև ընդհանուր համարներ, թեև դրանք ավելացվել են հետագայում։ Ժամանակ՝ IX—X դարեր։

Պատառիկը բովանդակում է Շահապիվանի ժողովի կանոնախմբի ԺԶ հոդվածի «Նստուցանեն վասն կորուսիչ արծաթոյն» (էջ 456, տող 10) հատվածից մինչև Ի հոդվածը և ապա Ներսեսի և Ներշապուհ եպիսկոպոսի կանոնախմբի ցանկից (էջ 475, տող 1) մինչև ԺԳ հոդվածի «ի սուրբ եկեղեցին հատուցեն ամենայն յաւժարութեամբ» (էջ 483, տող 8) հատվածը։

Զ. Պատառիկ № 1735, թերթ՝ 1, մագաղաթ. մեծություն՝ 15,6×12 և 10. թերթի վերևի մասը լայն է, քան ներքևինը. գիր՝ միջին մեսրոպյան երկաթագիր. միասյուն. տողեր՝ 20. ընագիրը շատ է վնասված, բացի կազմին ամրացված կողմից մնացած եզրերը մաշված են, մելանը շատ հաճախ թափված. ընթերցեցինք գրչի (գրելու հարմարանքի) ճնշման հետևանքով առաջ եկած տառերի հետքերին հետևելով. ժամանակ՝ X—XI դարեր։

Պատառիկը բովանդակում է Հովհաննես Օձնեցու կանոնախմբի Ը հոդվածից մինչև Ժ հոդվածը, ապա ԺԳ հոդվածից մինչև ԺԶ-ի «պարտ է ըստ առաջին կարգին» (էջ 522, տող 7) հատվածը։

---

[1] Այս տեղեկությունը մեզ հաղորդեց Մատենադարանի ձեռագրատան աշխատակից ընկ. Թ. Եղանյանը։

Ա.

ԱՌԱՋԻՆ ՊԱՀՊԱՆԱԿ

1ա

յայտնել զառականս
մերձաւորի արեան իւրոյ.
զառականս դստեր քո մի
յայտնես[ց]ես. զառակ
անս քեռ քո թէ առ ի ի(sic) հա
ւրէ իցէ կամ առ ի մաւրէ
[մի] յայտնեսցես, զա
ռականս կնոջ հաւր քո
մի յայտնեսցես, զառ
ականս հաւրաքեռ քո մի
յայտնեսցես, զառակ
ականս հաւրաքեռ քո մի
յայտնեսցես պղծելով
ընդ նոսա, նոյնպէս
եւ յերկրորդումն կար
[գ]եաց աւրէնսդիրն մով
սէս յանէծսն եւ ասէ.
անիծեալ լիցի որ ննջի
ցէ ընդ կնոջ հաւր իւրոյ
զի յայտնեաց զաներւ
ոյթս հաւր իւրոյ. անի
ծեալ որ ննջիցէ ընդ քեռ
իւրում. որ առ ի հաւրէ
իցէ կամ առ ի մաւրէ. եւ
ասասցէ ամենայն ժողով.
ուրդն եղիցի եղիցի,
նոյնպէս սահմանեալ
առաքելական կանոնացս.
մարդ ոք մարդ առ ամեն
այն ընտանութիւն մար
մնոյ իւրոյ մի մերձես
ցի. կամ շնութեամբ.
կամ ամուսնութեամբ
մինչև ի չորրորդ զա
րմն չունի իշխանութ
իւն առնել:
ԼԳ Եւ արդ զայս ամենայն
զոր ինչ կարգեցին եւ եդ
ին առաքեալքն. ոչ եթէ
անձանց իւրեանց միայն

1բ

կարգեցին. այլ եւ այ
նոցիկ որ եւ զկնի իւրե
անց լինելոց իցեն. քանզի
կասկա[ածէին թ]է պատրաս
տեալ են գայլք զգենուլ
զգեստ զառանց. եւ առ
նել կոտորած ի մէջ հաւտ
ից քրիստոսի. քանզի ոչ եթէ
նոցա պէտք ինչ էին կարգ
աց եւ աւրինաց. որ ինքե
անք իսկ էին աւրէնսդիրք.
զի խրատեալ եւ վարժեալք
էին ի ճշմարիտ վարդապ
ետէն. եւ մխիթարիչ
հոգին սուրբ բնակէր ի նո
սա. զի զոր սւրինակ ետ
կարգել նոցա հոգին սու
րբ. զկարգս եւ զաւրէնս
զայսոսիկ առաւել եւս
առաջնորդեսցէ նոցա
ըստ կամաց իւրոց
որք ընկալան ի տեառնէ զ[աւրու
թիւն եւ իշխանութիւն
զիարդ մարթ էր եթէ [յայ]

լ իմիքի դնիցի նոցա [աւր]
էնս. նաեւ սպաւղոս եւ [տի]
մոթեոս շրջեին ի կ[ողմ]
անս կեսարացւոց եւ կի[լ]
իկեցւոց. զսոյն իսկ
զայս աւրէնս պատուիրե
ին. զառաքելոցն միմ[ե]
անց. եւ որք եին ընդ ձե
ռամբ առաքելոցն աշ[խա]
րհականքն ամենայն.
քարոզեին եւ աւանդեին
յամենայն եկեղեցիս.
Այդ աշակերտք տեառն յետ
դնելոյ զկարգ աւրինաց,
այսոցիկ, ոչ դադարե
ին ի քարոզելոյ զավետար
անն ///

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀՊԱՆԱԿ

1ա

զոր ւսւներ տէր ի ձեռս
նոցա. քանզի բազում ժ
ողովուրդք ժողովեին
հանապազ առ նոսա.
եւ նա[ւ]տացին ի քրիստոս
որպէս եւ երեք հազարքն.
զնոյն հետոց եկեալ աս
են ցպետրոս. զինչ գո
րծեսցուք արք եղբարք.
ասէ պետրոս. ապաշաւ
[եցարուք] եւ մկրտեցարուք
յանուն տեառն յիսուսի. եւ յայլ
ոց քաղաքաց քաղաքաց գա
ին առ նոսա եւ լսեին եւ
ընդունեին զբանս նոցա.
նաեւ նիկոդեմոս եւ գամ
աղիել գլխաւորք ժողով
րդեան. գային առ առ ///
[վարդ]ապետութեանն. այդ եւ
յուռա եւ դեւի. եւ փեռի
եւ յովսէփ, եւ յուստոս
ուրիք անանիա, եւ կայ
իափայ, եւ ալեքսանդր
ոսի քահանայիցն. գաին
նոքա ի գիշերի, եւ խոս
տովան լինեին ի քրիստոս թե որ
դի աստուծոյ է. այդ երկնչէին
ի ժողովրդենէն յայտն
ել զխորհուրդս իւրեանց
որ առ աշակերտսն. զի
մի կշտամբեսցին ի հրե
իցն եւ ի քահանայապետիցն.
եւ ընկալեալ զնոսա առա
քելոցն սիրով, զաւկտա
կար խրատն ի մէջ առեալ
ասեին ցնոսա, մի վասն ///

Ա գլ առաքելական

1բ

/// կորուսան
էք զյաւիտենականսն
ձեր որ առաջի աստուածոյ է, զու
ցէ պահանօիցիք ընդ հա
րսն ձեր զվրէժ արեանն
քրիստոսի. զոր ընկալան ի վեր
այ անձանց եւ որդւոց իւ
րեանց. զի չե ոնդունե
[լի] առաջի աստուծոյ, որպէս եւ
ասաց իսկ վենարարն. ե
թե որ խոստովանեսցի
զիս առաջի մարդկան,
խոստովանեցից եւ ես
զնա առաջի հաւր իմոյ
որ յերկինս է. եւ եթե ոչ
խոստովանեսցի զիս ա
ռաջի մարդկան, ուրա
ցայց եւ ես զնա առաջի հ
աւր իմոյ որ յերկինս է.
/// եր
կրպագութ[իւն դարձ]
եալ երթեալ հաղորդել
ընդ սպանողս որդւոյն
նորա. զիարդ ակն ունի
իցիք ընդունելի լինել [հաւ]
աւոցն ձե[ր]ոց ընդ

ճշմարիտսն, մինչ
դեռ [չ]էք մեկնեալ եւ հեռ
ացեալ յայնցանէ, որք
ստութեամբ իւրեանց
դատապարտեցին զանձ
ինս իւրեանց. այդ ար
ժան է ձեզ խոստովան

ել յայտնապէս. իբ[րեւ]
զայնոսիկ որք հաւատա
ցինն ի Քրիստոս, քարոզութե
ամբ զոր քարոզեմք մեք
իսկ իբրեւ լուան որդիք
քահանայիցն զա[յս] ամենայն
////

Բ

1ա

նգնութեան. այլ իբրեւ պիղծ վարկանելով [այ]
նոսիկ հեռասցի. ոչ յիշելով ///
ինչ բարի է յոյժ. եւ թե առու եւ էգ արար ///
զմարդն այդ հայհոյելով եւ ///
/// կամ ուղղեսցէ զի ոք ///
լուծցի. եւ յեկեղեցւոյ արտաքս ընկեսցի
նմանապէս եւ ժողովր ///
եպիսկոպոս կամ երէց զդարձ ///
/// ի բաց մերժեսցէ լուծցի
/// տրտմեցուցանէ զՔրիստոս ///
///
ապաշխար ///
/// եթե ոք եպիսկոպ ///
/// ՄԱ եթե ոք ժառ ///

1բ

կամ զկաղ կամ զկոյր կամ զդէմս վնասել այ
պանեսցէ եւ [ն]չաւակեսցէ եւ պատրեսցէ [ի]
բաց որոշեսցի. նմանապէս եւ ժողովրդականն:
ՄԴ Եպիսկոպոս կամ երեց անփոյթ առնելով ըզ
ժառանգաւորսն խրատել եւ զժողովրդակա[նս?]
նոսա ի բարեպաշտութիւն ի բաց որոշես
ցի. իսկ եթե ի նմին յուղութեան կացցեն լու
ծեալ լիցին: ՄԵ Եթե ոք եպիսկոպոս կամ եր
էց կարաւտելոց ի պիտոյից ուրուք վիճակելոցն
ոչ լցցէ զկարաւտութիւնն. ի բաց որոշեսցի.
որպէս սպանող եղեալ եղբաւր իւրոյ.
ՄԶ Եթե ոք զըստ անուն վերագրեալ գրէ անդ.
[ա]յսինքն ծածուկք կոչին. իբրեւ զսուրբ եւ
զուղիղ գրեն. համարձակ յեկեղեցւոջ ըն
թերցցի առ վնաս ժողովրդեանն լուծե
ալ լուծցին. ՄԷ Եթե ամբաստանութիւն
եղիցի զհաւատացելոյ ումեքէ. պոռնկու
թեան եւ կամ շնութեան. կամ այլոյ ինչ ան
պատեհ եւ հրաժարական գործոյ եւ յանդի

մանեալ զացի. ի ժառանգութիւն վիճակի
եկեղեցւոյ սպասաւորութիւն ոչ լիցի արժանի
յառաջ գալ: ԾԸ Եթէ ոք ի վիճակելոց. այս
ինքն երէց կամ սարկաւագ. վասն երկիւղի
մարդկան. հրեի կամ հեթանոսի կամ հերետ
իկոսի որ է թիւրահաւատ ուրասցի եթէ զանուն
քրիստոսի. ի բաց լուծցի եւ ի բաց որոշեսցի. իսկ զան
ուն ժառանգաւորեանն լուծեալ լիցի. ԾԹ
Եթէ ոք եպիսկոպոս կամ երեց կամ սարկաւագ
կամ բնաւ ի քահանայական կարգէ կերիցէ միս
արեամբ շնչոյ իւրոյ. կամ զազանաբեկ կամ ///

2ա

զի ի բերենոյ երկուց եւ երից /// [հաս]
տատեսցի ամենայն բան. ՀԱ Ոչ է պարտ եպիսկո
պոսի ումէք եղբաւր կամ որդւոյ կամ ///
/// շնորհել պատիւ եպիսկոպոսութեան
ձեռնադրել որպէս եւ ինքն կամի ձեռնադր
ել [քան]զի ժառանգ /// եպիսկոսլութեան
/// առնելիս չէ իրաւացի զայս ///
շնորհել մարդկային /// ցանկութեան
եւ ոչ զքրիստոսի եկեղեցին ընդ ժառանգութեամբ
դնել իսկ եթէ արասցէ ոք զայս ձեռնադրու
թիւն /// եղիցի եւ ինքն. ի բաց որոշեսցի.
այսինքն արտաքոյ եկեղեցւոյ եղիցի. ՀԲ Եթէ
ոք ակամբ վնասեալ կամ վիրաւորեալ անդամաւք.
եւ արժանի է եպիսկոպոսութեան եղիցի
քանզի ոչ խեղութիւն մարմնոյ հրամայէ
լինել. այղ պղծութիւն հոգւոյ. ՀԳ Խուլ եւ
կոյր մի եղիցի եպիսկոպոս. ոչ իբրեւ զպիղծ
եւ զաղտեղի. այղ զի եւ եկեղեցական դաս
ւյն խափանումն մի եղիցի. ՀԴ Եթէ ոք դեւ
ունի քահանայ մի եղիցի. իսկ եթէ սրբեսցի
ընդունելոյ եղիցի. եւ եթէ իցէ արժանի լիցի. ՀԵ
Ի հեթանոսաց եկեալք ի մկրտութիւն. եւ վատ
թարազոյն վարուց. ոչ է իրաւացի վաղվաղա
կի յեպիսկոպոսութիւն յառաջ ածել ///
մի պատահէ որոյ զփորձ ինչ չեւ էցուցե ///
/// լինել վարդապետ. բայց եթէ ///
///շնորհի այս եղիցի. ՀԶ Ասացաք եթէ ոչ է
պարտ եպիսկոպոսի արկանել զինքն յաշխարհ
հական ինչ հոգս մի վարել /// եկ
եղեցական պիտոյից ապա թե ոչ ///

2բ

ել զպատիւ. քանզի կարէ երկուց տերանց

ծառայել ըստ տէրունակ[ա]ն հրամանին. ՀԷ
Զծառայս ի ժառանգութիւն եկեղեցւոյ հատ
ուցանել առանց կամաց տերանց ոչ հրամայ
եմք առ ի տրտմեցուցանել զստացողսն.
քանզի այս տանց կործանումն գործ է. իսկ
եթէ երբեք արժանի երեւեսցի ծառայ առ
ձեռնադրութեան աստիճան. որպէս եւ մեր
Ոնեսիմոս երեւեցաւ. եւ թողացուսցեն
տեարքն. եւ ազատեսցեն եւ ի տանէն իւրե
անց ի բաց առաքեսցեն եղիցի. ՀԸ Եպիսկո
պոս կամ երէց կամ սարկաւագ, զինուորակ
ան իրաց պարապեալ. եւ զերկոսին առնել կամե
ցեալ. զհռովմայեցւոցն ունել զիշխանու
թիւն եւ զքահանայութիւն. ի բաց լուծանել
ի քահանայութենէն արժան է. զի կայսեր
կայսեր եւ աստուծոյ աստուծոյ: ՀԹ Որ ոք թշնամանեսցէ
զթագաւոր կամ զիշխան անիրաւութեամբ
տանջանս եւ տոյժս կրեսցէ. եթէ ժառանգ
աւոր իցէ լուծեալ լիցի իսկ եթէ ժողվըր
դական. արտաքոյ որոշեսցի. Ձ Եպիսկոպոս
ոք եթէ իցէ գաւառաց բազմաց. եւ ունիցի
իշխանութիւն ընդ ձեռամբ իւրով մի իշխ
եսցէ յայլոյ իշխանութեանց առնուլ եւ զմի
ոյ եկեղեցին զարդարեալ զի աշառութեամբ
վարեցաւ. եւ անձին իւրում ի դատապար
տութիւն. այնպիսին թէ չհաւանեսցի
դառնալ յիրացն ի բաց լուծցի. եւ զայն զոր
ոյ է առն եւ շինեաց զայլոյ եկեղեցին. մի
կոչեսցեն զանուն նորա իւրեանց վարդա

3ա

պետ. ՁԱ Եպիսկոպոսք եթէ լինիցին գլխաւ
որք եւ հրամանատարք ի վերայ երիցանց եկեղե
ցւոյ. որք են ի գեաւղս եւ յագարակս. զի եր
եւեսցին գլուխ եւ առաջնորդ ամենեցուն.
եւ ի ձեռն նորա խնդրեսցին ամենեքին. քան
զի եւ սամուէլ այնպես շրջէր, տեղւոջէ ի տե
ղի եւ ոչ ինչ առնոյր ի տանէ պաշտաւնեից
յնչից նոցա. եւ ոչ տրտմեցուցանէր զնոսա
այլ այց առնէր եւ կարգէր եւ հրաման տայր.
ՁԲ Եթէ առաջնորդ ոք իցէ մի իշխեսցէ առանց
իւրոց պաշտաւնակցաց իրս ինչ առնել յեկե
ղեցւոյ. բայց կամաւք եւ միաբանութեամբ
արասցէ զինչ կամին. զի մի լիցի տրտմու
թիւն ի միջի իւրեանց. ՁԳ Եւ քահանայ որ կա
պէ զոք տարապարտուց յանարժանս. ընկաւ

ցի պատիժ պատուհասի ըստ արժանի. բայց
զոր կապեացն ընկալցի զկապանսն որպէս թէ
յարժանի. ԶԴ Եթէ ամբարտաւանք. եւ հպարտք.
եւ սեզք. եւ սնապարծք. մի մերձեսցին ի պաշ
տաւն քահանայութեան. վասն այնր թէ ամե
նայն ամբարտաւան ի մէջ մարդկան պիղծ է
առաջի աստուծոյ. եւ վասն նոցա է ասացեալ եթէ հատ
ուցից զհատուցումն ամբարտաւանից այսոք
իկ եւ յաղագս կանոնաց կարգեալ է. հրամայե
ցաւ ձեզ առ ի մէնջ. իբր եպիսկոպոսաց դուք
կացեալք մնացեալք յայսոսիկ. պարեալք եղ
իջիք եւ խաղաղութիւն կալջիք. ապա թէ ան
հաւանեսջիք, տանջանաց մատնեսջիք [եւ?]
պատերազմ ընդ միմեանս հանապազոր[դ ընկ]
ալջիք զարժանաւոր պատուհաս տանջ[անաց]

Գ

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀՊԱՆԱԿ

1ա

///

Գ. Վասն որ զէգ սպանանէ հարուածովք.
Դ. Վասն երկրորդ ամուսնութեան.
Ե. Վասն ակամայ մահուանց.
Զ. Վասն կամաւոր մահուանց.
Է. Վասն որք երդմ[ամբ] ձեռնադրիլ.
Ը. Դարձեալ վասն երրորդ ամուսնութեան.
Թ. Վասն որ ի պատերազմունս մահ գործին.
Ժ. Վասն որք ի վաշխսն յահախեն.
ԺԱ. Վասն որ զկուսութիւն խոստանան պահել եւ ստիցեն.
ԺԲ. Վասն հաւատաւորաց պոռնկացելոց.
ԺԳ. Վասն որք յափշտակութենէ ունիցին կանայս.
ԺԴ. Վասն երիցանց որ յանարժան ամուսնութիւն անկան.
ԺԵ. Վասն որ նախ ապականեաց ապա ամուսնացաւ նմա.
ԺԶ. Վասն առ յափշտակողսն կարգադրութիւն.
ԺԷ. Վասն որ յառնէ հրաժարէ եւ ընդ այդում զուգի.
ԺԸ. Վասն կղերիկոսաց մեղուցելոց.
ԺԹ. Վասն կնոջ որ ի հանապարհի ծնանի.
Ի. Վասն Երկիւղած կանանց որ ի շնութեան ըմռնին.
ԻԱ. Վասն կնոջ որ յառնէ բաժանի.

1բ

[ԻԲ]. Վասն աղջկան որ առանց հաւր եւ մաւր ///
[ԻԳ]. Վասն որ աղախին առանց կամաց տեառնն ամուսնանայ.
[ԻԴ]. Վասն այրեաց կարգադրութիւն.

[ԻԵ]. Որք առանց կամաց իշխաւղացն ամուսնանան.
[ԻԶ]. Վասն որ խիստ հարկանէ զընկեր իւր.
[ԻԷ]. Վասն սարկաւագի որ ընդ հեթանոսի պոռնկի.
[ԻԸ]. Վասն խառնազնաց քրիստոնէից.
[ԻԹ]. Վասն կնոջ որ զայր թողու եւ այդում հետեւի, դարձեալ յառաջին այրն դառնայ.
[Լ]. Վասն կնոջ որ յառնէ թողեալ կարգադրութիւն.
[ԼԱ]. Վասն որ առ հարկի ապականութիւնք գործին.
[ԼԲ]. Որ զկուսութիւն խոստացին պահել եւ ստեցին.
[ԼԳ]. Վասն որք երդմնախորք գտանին.
[ԼԴ]. Վասն կախարդաց խստացելոց.
[ԼԵ]. Վասն արուագիտաց.
[ԼԶ]. Վասն որ ընդ եղբաւր պոռնկի.
[ԼԷ]. Վասն որ զազգային ապականէ.
[ԼԸ]. Վասն գրակարդացի զոր նմա խաւսեալ ապականէ.
[ԼԹ]. Նմանապէս եւ սարկաւագաց որք շրթամբք մեղանչեն.
[Խ]. Վասն որ զփրկական խորհրդովն յանցանեն.
[ԽԱ]. Վասն զկողմնակ քոյր իւր ապականիցէ.
///

ԱՌԱՋԻՆ ՊԱՀՊԱՆԱԿ

1ա

րանաւք ի վերայ հասանել քննութեամբ
եղելոցն եւ ի մէջ ածել զկինն եւ տեսան
ել զսաղմն թէ նկարեալ իցէ այնպիսիոյն
երկրորդ մահ համարեալ լիցի պարտ է
այնպիսոյն ցաւր մահուան իւրոյ կալ ի
խոստովանութեան. բայց սահմանելի է
ի վերայ այնպիսոյն կարճել զժամանակ[ն]
քանզի սահմանադրութիւն ոչ եթէ ժամա
նակին յոլովութիւն է կատարեալ ապաշ
խարութիւն, այլ բարուցն ուղղութիւն ի
զղջումն եկելոց.
Դ. Իսկ երրորդ ամուսնութեան աւրէնք ոչ դոյն
վասն զի աւրինացն չհրամայեցաւ ինչ այս
պիսի, այլ որպէս արտաքոյ ինչ ընկեցեալ
յեկեղեցւոյ տեսանեմք. եւ դարձեալ
հրապարակագոյժ առնել չէ բարւոք որպէս
հանոյ թուեցաւ ո[մանց աս]ել թէ լաւ է այս
քան զպոռնկութիւն [բայ]ց ոմանք եւ վասն
Դ ամուսնութեան /// [անգ]ամ սահ
մանեցին անով[անելով այնու]հետեւ ոչ

1բ

շնութիւն այդ բազում ամուսնութիւն.
մանաւանդ ըստ աւրինացն պոռնկութեանն
իսկ զտանջանս ընդունել. վասն որոյ
տէրն իսկ սամարացւոյն ճառեալ ասէր թէ
Ե այր փոխեալ է քո եւ զոր այժմդ ունիս
չէ քո այր եւ այդպիսեացս ոչ եթէ կանո
նաւ ինչ դնել ապաշխարութիւն այդ ըստ
կամաց սովորութեան. բայց սլար[տ] է զայն
պիսին ոչ աւտարացուցանել յեկեղեցւոյ.
այդ լոկ արժանաւորք լիցին ի պաշտաման
արտաքոյ եկեղեցւոյ եւ ի հաղորդութենէն
հեռի եղիցին. եւ այսպէս ցուցցեն զպտուղ
ապաշխարութեան յանձինս իւրեանց.
յետ ԺԵ ամաց կացցեն ի տեղւոջ հաղորդութեան.
[Ա]կամայութիւն ասի որ ամենեւին հեռի իսկ
է որք ոչն կամին գործել զայնպիսիսն.
այսինքն թէ ուրուք յանկարծաւրէն քար
ձգեալ լինի ի ծառ եւ պատահիցի մարդոյ. եւ
կամ դա[րձեալ գպ]տուղն շարժեալ ի վայր
/// [յանկա]րծաւրէն պատահիցէ ///

2ա

/// [եբ]րայական լեզուին զոր եւ մեք աստ մերում
փոխադրեցաք. եւ զի մի հարեւանցի ինչ
դատարկ զտեղեաւս անցցուք որ բազում
անգամ ի բազում մարդկան եղեւ խնդրու
մն տեղւոյդ այդորիկ. թէ որպէս թռչուն
երկնից եւ ձկունք ծովու եւ որ ինչ յաշխ
արհի եղեալ է նորին ծննդեան վիճակի
հասին. սակայն իւրաքանչիւր նոքա ի
ջրոց ոմանք աւդաղուղակք. եւ կէսք ի ջո
ւս խայտալով սնանին եւ աճեն. եւ ոմա
նք ի ձկանց հակառակ միմեանց գտանին
եւ սակայն զամենայն ինչ հնազանդ
եցոյց աստուած մարդկան. զթռչունս երկնից.
եւ զձկունս ծովու. այդ եւ զամենայնի
որ շրջին ընդ շաւիղս ծովու քանզի ոչ է
թէ ամենայն ձկունքն որ ի ծովսն են մի
ազգ ինչ են. որպէս կէտքն մեծամեծք. եւ
փաղէնէսքն. եւ որ լծակիցքն կոչին. եւ
դդփինքն. եւ փոկն. եւ զոր ջրաձիսն կոչին.
եւ շնաձուկնն. եւ սղոցն. եւ քսիփ. եւ ///

2բ

ծովային եզն անուանեն. ապա եթէ կամիս յաւելից
Ոնգ կաղեփէ եւ գիշատեսակն. եւ զոստակորի
նա որ խեցեմորթքն անուանեն. եւ այս ա
մնայն ազգք ձկանց ոչ միեւնոյն են.
Եւ սակայն ամենայն ընդ շաւիղս ծովու
գնան որպէս նեեմսւն ասորի որ զաւրաւոր
տեառն իւրոյ թագաւորին ասորւոց. եւ արդ
դու միտ եդեալ հաեւց հաւա՚տեաւ յաստուած
ային գիրս եւ ի նոցանէ գտանես զլուծումն
խնդրոյդ.
Կուսանաց որոց միանգամ խոստացեալ իցէ
զվարս իւրեանց քրիստոսի նուիրել. եւ զզաստու
թեամբ եւ համեստութեամբ գնալ. եւ ա
պա դարձեալ անկանիցին ի մարմնաւորա
կան ախտս. եւ անարգիցեն զդաշինսն
զոր եդին առ աստուած. եւ արդ եթէ այրութիւն
նուազագոյն գտանի քան զկուսութիւն.
ապա ուրեմն յայտ է թէ եւ մեղանչել կու
սին առաւել չար է քան զայրոյն եւ արդ
տեսցուք զգրեալն տիմոթեայ ի պաւղոսէ ///

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՀՊԱՆԱԿ

2ա

[մկր]տութիւնն. այդ մեր բանս զաւրացի քան
զամենեցուն. վասն զի այն զոր նոքայն
խորհին ի մարկիոնի չոր շառաւեղէն
բուսաւ եւ ի նորին չար աւանդութենէն
ուսան զայս. եւ սոքա վասն այնորիկ
զարշելի եւ պիղծ զամուսնութիւն հա
մարին. Եւ ի գինւոյ ի բաց հրաժարեալ
մեկնին. եւ զարարածս աստուծոյ խոտան եւ
պիղծ համարին. վասն այդորիկ ոչ ընդու
նիմ զնոսա յեկեղեցի աստուծոյ ընդ մեզ թէ ոչ
մկրտին ի մեր մկրտութիւնս. եւ զայն ինչ
յառաջ բերցեն մեզ եւ ասասցեն թէ
մեք ի հայր եւ յորդի եւ ի հոգին սուրբ
մկրտիմք. զի թէ մկրտիս ընդէր այդպէս
չար արարիչ զաստուած դնես արարածոց. զի
զոր չար դնես զիարդ հաւատամ թէ ի նա
մկրտիս. որպէս մարկիոնացիքն եւ այդ
ներիտիկոսքն. եւ եթէ այս հանոյ է
ձեզ ժողովեցին եւս բազում եպիսկո ///

Չբ

///
[կա]նոնս եւ արասցեն սահմանադրութիւն
զի այնպէս եւ որ հարցանէն անխտանգէ
լի եղիցին եւ որ զպատասխանին առնէ ար
ժանի հաւատարմութեան զտցի.
Բազումք են վկան դիւաց որ աներեւոյթ
լլկեն զմարդիկ. կամ որ սրտմտութեամբ
եւ րարկութեամբ. կամ նախանձու եւ
ոխութեամբ. կամ նենգութեամբ եւ
խորամանկութեամբ. կամ ագահութե
ամբ եւ զաւշաքաղութեամբ. կամ բամ
բասաւղութեամբ եւ չարախաւսութեամբ.
կամ արբեցութեամբ եւ որկորստութեամբ.
կամ գողութեամբ եւ պոռնկութեամբ.
կամ ստախաւսութեամբ եւ երդմամբ. եւ
կամ այդ ինչ այսպիսեաւք լլկել դեւք զբ
մարդիկ եւ ի նոսին բունել եւ բնակել
են աներեւոյթ եւ հանապազորդ ան
ակնածելի տան կատարել զչարաչար
կամս իւրեանց. եւ այնպէս հանապազ ///

Դ.

1ա

///
ութեան յարքայութեանն քրիստոսի եւ ///
կատարեսցէն ընգալցին զաւրհնութ /// [հաղ]
որդելով պարգեւաց անվախճան [հ]անգս ///
ն գրիգորի: եւ հաւր մերոյ սահսկայ ///
ճշմարիտ ուղափառութեամբ. որք ի /// [աւ]
ուրն են պսակելոց յամենաքաւ ///
ելի սլայծառութ մշտնջենաւ ///
տենից:. ամէն: նորին սրբոյն ///
է եպիս /// [ունե]լ զընտանիս սրբո ///
այցելու հ /// հայր է եպիսկոպոս ///
որիկ իսկ առ /// ութեան պարսի խ ///
եալ նմա հաւա /// եւ անաչառութ ///
սուրբ եկեղեցւոյ տեսուչս եւ առաջնորդ ///
/// ից կացուցանել որք անուանին քորե ///
[հմ]ուտ եղելոց վարդապետութեան ///
սի պատիւ որ զժողովուրդն բա ///
/// զմեղաւորսն եւ զմոլորեալս ///

1բ.

/// եղբարք յորչորչէին ///
եւ այլ բազմութիւն աշակերտացն յոլ ///
արեցին սպասաւհարկութիւնս եւ վիշտ ///
/// րեցին զուն գործեալ ոգտով չափ եւ ///
թեան ոչ զոք ի նոցանէ անուանեաց:
/// հայհոյիչ եւ հալածիչ եւ թշնամանող զին ///
անաւք ընտրութեան է ինձ ասէ նա կ ///
/// ի հեթանոսաց եւ թագաւորաց եւ որդւ ///
/// ոչ է ակնառուք /// եթե ///
իցէք. Արդ որով ///
/// ոչ կարէ աշակ ///
պէս զմի ոք ի ս ///
րանաց ասէ սիրողս եւ զկատարողս. /// հմա ///
թե որ սիրէ զհայր կամ զմայր ///
/// քանզի ոչ է ինձ արժանի ///
/// ի վայր կործանեալ ընդ ///
/// տոհմսյին ազգականաւք պէսպ ///

Ե

1ա

///
նստուցանեն. վասն կորուսիչ արծաթին. տալիք կաշառին
ս.նիծեալ լիցին, որպէս խաչահանուանքն որ ետուն կաշառս
սպահապանացն. եւ ընդ սիմովնի կախարդի որ արծաթով եւ ըն
չիւք կամէր ստանալ յառաքելոցն զշնորհս սուրբ հոգւոյն.
եւ առնելիք կաշառին նզովեալ լիցին ի տեառնէ. եւ կարասին զոր ա
ռին ընդ յուդայի կաշառին եղիցի զոր վասն տեառն մատնութեանն
առ. եւ երկպատիկ դարձուսցեն անդրէն. տալիքն չիշխեն առ
նուլ որպէս խաչահանուանքն. այդ ի կարաստեայս բաշխեսցեն.
եւ եպիսկոպոս կամ երէց որ վասն այսր իրաց կաշառս առցեն
եւ կամ զինչ եւ իցէ իրաց ըստ գրելոյն թե կաշառ կուրացուցա
նէ զսիրտս իշխանաց. եւ դարձեալ թե կաշառ ի վերա իրաւանց
մի առցես. եւ ճշմարտութիւնն ի ձեռն արծաթոյ քարշեցաւ
յամենայն ժողովոյս նզովեալ լիցին. եւ յիշխանութենէն
եւ ի քահանայութենէն ի բաց մերժեսցին. զոր կաշառն առ
ին ընդ գեհեզի բորոտի համարեսցի. անեծք մարգարէին
ի վերա նորա եղիցին. քանզի ի ձեռաց դիտին խնդրելոց է
զարիւն զաւրացն. այդ զարժանաւորս խնդրեալ գտցեն.
լաւարուք մարգարէին զինչ ասէ. ձեռք նոցա յանաւրէնութեան
են եւ աջ նոցա լի է կաշառովք. տուր նոցա ըստ գործս նոցա.
զի թե հիմնն եւ գլուխն հաստատուն է. ապա միջինքն ոչ ի վ
երա աւազոյ. կառավար արբեալ. կառքն ընդ որպէտ ընթանան.
նաւավար ի քուն. նաւն երագ ծովածուփ. խաշնարած յոյլ.
խաշինքն զվնասու խոտ հարակին. զի թե առաջնորդք աւրին

սցն հաստատուն եւ ճշմարիտք. ապա եւ կարգեալն ընդ նոքաւք.
ոչ սայթաքեալք. եւ թէ հարիսխն անշարժ շինուածն ոչ
գետավէժ. եթէ հովիւն քաջ. հատն ոչ գազանակուր եթէ

1բ

///
[ղ]ի.տ ժողովրդեան. աւրինակ աշխարհի ընդ ձեզ հայեցե
ալ զուսումն ձեր յառուշ բերեն. ապա զգոյշ:
ժէ: Եթէ ոք նշխարս մարտիրոսի կամիցի դնել. առանց եպիսկ
ոպոսի գաւառին մի դնիցէ. զյիշատակս մարտիրոսաց
եւ զժողովս. առանց եպիսկոպոսին հրամանի մի ոք իշխես
ցէ առնել. եւ թէ ոք ի սուրբ տեղեացն մարտիրոսս բերցէ առ
եպիսկոպոսն բերցէ. վկայութեամբք եւ թղթովք եպիսկոպո
սացն ուստի եբերն. եւ իւրեանց եպիսկոպոսին հրամանաւ
դիցէ ուր արժան է դնել. եթէ ոք սեղան կամիցի կանգնել
[տէ]րունական խորհրդին. առանց եպիսկոպոսին մի իշխես
ցէ ոք կանգնել. բայց ի նշխարացն յանուն զոր բերին մեծ
ապէս տաւնախմբեսցեն, յամենայն տարւոջ յաւր բերելոյ
եւ պատուոյ եւ սրբութեան զգոյշ. զի մի ի ցասումն միտ
եալ սուրբ նզնաւորացն որ վասն քրիստոսին չարչարեցան ցասումն աշ
խարհի հասցէ փոխանակ բարեխաւսութեան:
[ժ]Ը Եթէ վարդապետի ուրուք զաշակերտ կամ զժողովրդական
կամ զքահանայ նզովեալ իցէ. կամ բանադրեալ. կամ կապ
եալ բանիւ վարդապետութեան. այդ տեղւոյ վարդապետ կամ
եպիսկոպոս կամ երէց մի իշխեսցէ աւրհնել կամ լուծանել.
բայց եթէ հաւատովք եւ ի սէր հոգեւոր յուղղութիւն եկեսցէ.
ապա խաղաղասէր վարդապետն բարեսէր խրատու [զ?]բարեխաւ
սութիւն արասցէ հնազանդել ընդ բուն վարդապետաւն.
վասն զի մի տէր է ամենեցուն մի հաւատք մի մկրտութիւն մի
պատուիրանք եւ միոյ յուսոյ ակն ունիմք. պարտ է զնոյն մի
աբանութիւն պահել յամենայն եկեղեցիս. զարժանաւորս
աւրհնութեան միաբան աւրհնել. եւ զանարժանսն միաբան ըմբերանել.

2ա

///
[հաս]տատուն լինիցի եւ հաւատարիմ. ըստ տէրունական բարբառ
ոյն թէ յայսմ գիտասցեն զձեզ թէ ի[մ] աշակերտք էք յոր
ժամ միաբանիցէք եւ զմիմեանս սիրիցէք:.
ժԹ Եթէ ոք ի մծղնէութեան գտցի երէց կամ սարկաւագ կամ ՇԿԴ
ի ն[...]ղայից. ի քահանայութենէն լուծցի. աղուեսդրոշմ
ի ճակատն դիցի. եւ ի տեղիս նզնաւորաց յապաշխարութիւն
տացեն. ապա թէ դարձեալ ի նմին գտցի. զջիղսն զերկու
սին կտրեսցեն. եւ ի զողենոց տացեն զի մարդ ի պատուի էր
եւ ոչ իմացաւ. ապա եթէ արք կանամբք եւ որդովք գտցին
շաղանդին. զարանց եւ զկանացն եւ զիրազէտ մանգանցն
զջիղսն կտրեսցեն. աղուեսդրոշմ ի ճակատն դիցեն եւ ի

գ.ղէնոցն տացեն յապաշխարութիւն. եւ մանգունքն որ
-նւ իցեն գիտացեալ զպղծութիւնն. կալցին եւ տացին ի
ձեռս սուրբ պաշտաւնայից աստուծոյ որ սնուցեն եւ ուսուցեն զն
նոսա ի հաւատս ճշմարիտս եւ յերկիւղ տեառն:
Ի Եթե ոք ի ժողո[վ]րդոց չարագործ գտցի. եւ երիցունքն զի ՇԿԵ
տեն եւ ոչ յայտնեն եպիսկոպոսին եւ յորժամ քննին լինի
եւ ի վերա հասանիցեն եւ ճշմարիա է. եւ գիտէր էրեցն աւ
ուրք եւ ամսաւք եւ ժամանակաւք յառաջ զգործս նոցա եւ
ոչ բողոքեաց եպիսկոպոսին. զմծղնեիցն պատուհաս զոր
եղին կանոնքս կրեսցեն, եւ երիցունքն զերիցութիւնն
մի իշխեսցեն պաշտել ի կեանս իւրեանց. ապա թե երէցն
ասիցէ զեպիսկոպոսն եւ վկայութեամբ յայտ առնիցէ. եւ եպի
սկոպոսն կամ կարասի առնուցու եւ ծածկիցէ կամ աչառեսցէ.
եւ վկայութեամբ յայտ եկեսցէ. թե արդարեւ էհաս բողոք երիցա
նցն յականջս նորա եւ նա արհամարհեաց զպատուիրանս աստուծոյ.

ԺԹ ՀԱՅՈՑՆ

2բ

///
[աւի]նացն աստուծոյ. անկեալ կործանեսցի յաթոռոյն. եւ երէցն ան
պարտ եղիցի. ապա եթե եպիսկոպոսն ջանաց եւ վրէժխն
դիր եղեւ եւ երիցունքն եւ այդ մարդիկն վկայեսցեն զաշխ
ատութենէ եպիսկոպոսին եւ զչարագործն յայտ արար ի
չխանութեան ուրուք. եւ իշխանն որ էր յաշխարհին. եւ
զեաղջ ուրուք աւագ. նախարար տէր գաւառին կամի պղծու
թեանն թիկունք լինել եւ զշնացողսն դաւել եւ թաքուցանել
կամ վասն կորուսիչ արծաթոյ. կամ վասն ակնառութեան
եւ ծառայութեան. եւ ոչ ընտրեսցէ զքրիստոս սիրել եւ զպատու
իրանս նորա. եւ վրէժխնդիր աւրինացն տեառն եւ հոգւոյ եւ մա
րմնոյ լինել. եղիցի նզովեալ այնպիսին. եւ յեկեղեցւոյ
սուրբ ի բաց որոշեսցի. մինչեւ տացէ զպղծագործսն ի ձե
ռս եպիսկոպոսին. եթե ի նախարարի տան գտցին պղծութ
իւնքն կամ կին նորա կամ դուստր կամ որդի. կամ ինքն իսկ
պլխավին. եւ ոչ զըտանիսն ի ձեռս տացէ եպիսկոպոսացն
եւ ոչ ինքն ի սրբութիւն դարձցի. բռնապաստան կամիցի լին
ել. ամենայն տամբ իւրով եւ ծննդովք եւ կենաւք նզովեալ լիցի,
ի հրապարակ մի իշխեսցէ գալ. ընկերք եւ աշխարհ ամենայն
մի հաղորդեսցին ընդ նմա. մինչեւ թե ինքն իցէ ի պղծու
թեանն ի սրբութիւն եկեսցէ. ապա թե ինքն ոչ իցէ ի պղծու
թեանն. զընտանիսն եւ զծառայսն ի ձեռս տացէ եպիսկոպո
սին գլխատրի ի կշտամբութիւն. ապա թե յոստայնանկի
ի տան գտցի պղծութիւնն. կամ ինքն եւ ընտանիքն որպէս ա
սացաք. զընտանիսն պատուհասեսցեն ըստ աւրինին զոր եդ
աք. ապա թե ինքն եւս ընդ ընտանիսն ի մծղնէութեան գտցի
կացին միաբան պղծագործ ընտանեաւքն հանդերձ եւ ի հրա

3ա

///
[մե.ծ]ամեծ իշխանացն /// [վրէժխնդ]
իր լիցին աւրինաց աստուծոյ. զի տես[եալ այլո]ցն սրբութեամբ եւ երկիւ
ղիւ պաշտեսցեն զարարիչն ամենեցուն. զի ողջ եւ կատար
եալ լիցին կարգք աստուածպաշտութեանն. վրէժխնդրութեամբ
աւրինաց եւ յարգանաւք սրբոց. զի գտցուք ճշմարիտ ծա
ռայք աստուծոյ. բանիւք եւ արդեամբք. զի նոյնպէս հատուցման
կ լարեացն ի բարերարէն աստուծոյ ակն կալեալք ժառանգեսցուք զ
պարգեւս նորա զանվախճան յաւիտեանս յաւիտենից ամէն:
Կանոնք Ներսեսի հայոց կաթողիկոսի եւ Ներշապհոյ մամիկոնենից եպիս.
Ա. Վասն յեկեղեցի տանել զսեղանս: Բ: Զաւռնուլ զինս զպատարագ երիցունք:
Գ Զդնել վաշխ զշնո[ր]հ եկեղեցւոյ: Դ Ոչ վաճառել կամ վարձանս տալ:
Ե Երկկանանց ոչ ունել զշնո[ր]հ եկ: Զ: շաբաթու կիւրակէի պատարագ մա:
Է Զանմատոցն չխառնել ի բաժակ: Ը Զսպաս եկեղեցւո չտալ ի հարսանիս:
Թ Կանանց ոչ տալ մկրտել: Ժ Քահանայից նախագահ ոչ լինել:
ԺԱ Յեկեղեցի ոչ առնել ժամ առանց քահանաի: ԺԲ Դպրի չագանել զինուոր
ի հանդերձ: ԺԳ Զշնորհ եկեղեցւոյ մասնաւորել:
ԺԴ Սպաս եւ պատարագիք աւագ երիցուն: ԺԵ Ի տուն ոչ մկրտել:
ԺԶ Կանանց չկալ մաւտ ի մկրտելն: ԺԷ Սարկաւագի ոչ մկրտել:
ԺԸ Զառնուլ հաս յապաշխարողաց: ԺԹ: Զյայտնել զխոստովանութ[իւն]:
Ի Մաւտ յեկեղեցի գերեզման չառնել: ԻԱ Զառնուլ վաշխ քահանայի:
ԻԲ Ժագապս մասունս չառնուլ: ԻԳ Զերթալ ի պատարագ որ ի ժամ չկա:
ԻԴ Տղայոց հարսանիս ոչ առնել: ԻԵ Զկոյս այրեաց ոչ տալ:
ԻԶ Զարշառ ոչ ձեռնադրել: ԻԷ Զպուտանս ոչ աւրհնել:
ԻԸ Զառնուլ զկենդանի նուիրեալ ողջ: ԻԹ Զառաջաւորսն ոչ
լուծանել: Լ Ճրագլուցին ցերեկն աւրէնս ոչ տալ:
ԼԱ Ժողովրդականաց հրաման ոչ տալ քահանական կարգի:
ԼԲ Քահանայի ոչ առնուլ աղախինս արծաթագին:

Ներսիսին

3բ

///
յամենայն ամսեա[ն] ///
Այս կանոնք եղան յաւուրս Ներսեսի կաթողիկոսի եւ մերշապհոյ
մամիկոնենից եպիսկոպոսի. գլուխք Լէ
Ա Ոչ է պարտ բաժանել զժողովուրդ վասն պտղոց եւ մտից եկ
եղեցւոյ. յորմէ համարձակեցան բաժանել զպատարագս
անառակութեամբ ըստ տունս յանդգնել բաժանել լրջաբար եւ
զհաց սեղանոց ի տունս իւրեանց, ոչ թողացուցեալ զժող
ովրդականսն տանել յեկեղեցի զի աւրհնեսցին:
Այլ ի նոյն ինքն ի սուրբ եկեղեցւոջն վասն նորին կոիւս եւ խռ
ցոտմունս ընդ միմեանս. զոր մեք իսկ տեսաք. զոր պար
տ էր անիւ եւ դողութեամբ կատարել զխորհուրդ սրբոյ պատար

ագին. եւ ոչ ոռվայնամոլութեամբ եւ ժլատութեամբ թշնամանել
զարբութիւնս. խափանեցին քահանայքն եւ զպատարագս
որ բաժանեն դպրաց զի առցեն ի նոցանէ գինս վասն սուրբ պատարագ[ին]
Գ [ՇԿ]Ը Եդին ոմանք եւ վաշխս վասն դահեկանաց իւրեանց:
Դ[ՇԿ]Թ Կէսք վաճառեցին ընկերաց իւրանց որպէս ծառայս եւ
ոմք եռուն վարձանս կանանց իւրեանց ամբարշտեալք
ամենեւին վասահացեալք ի բռնութիւն անարժանութեամբ անձ.
անց մեղաւն. եւ ժողովրդականք այնպիսի պատճառաւ բաժ
նոր կերեալ առանց աւրհնութեան զհաց պատարագին. եւ
ոչ կամեցան տանել զքահանայս եւ զպաշտաւնեայս ի տուն
եւ զմատուցողս պատարագին. այղ զերկականայս եւ զանդ
պիրս այսպիսի անարժանաւք. հաճոյ թուեցաւ նոցա առնել
զտուն իւր[եան]ց թերակատար յաւրհնութենէ քահանայից:
անմիտ ագահութեամբ զրկեալ զպաշտաւնեայս սեղանոյն ի
հացէ ուխտին. եւ զրկեցան իւքեանք յաւրհնութենէն աստուծոյ:

4ա

///
[մահա]բեր այսպիսի սովորութենէ:
Ե Երկկանայք թե եւ զրակարղացք իցեն եւ պաշտաւնեայք
ընդ զինուորս կացցեն. վասն ուխտազանցութեանն
եւ ի մտից եկեղեցւոյ եւ ոչ միում մասին արժանի լիցին.
զի չէ պարտ ապաշխարողաց աւրհնաց առաջնորդութիւն
առնել. պտուղս եւ զուխտս պահանջել ընդ քահանայս
նոյնպէս եւ տգէտք մի իշխեսցեն <մի իշխեսցեն> մտից
եկեղեցւոյ. զի անիրաւ է վասն անուսմնութեանն ընդ
զինուորս կացցեն. եւ զհայրենի հող եւ ջուր կալցին եւ
յարքունիս հարկս տացեն. եւ զորդիս ի դպրոց ուսցին:
Զ Քահանայք զշաբաթու եւ զկիւրակէի պատարագ մի իշխես ՇՀ[Ա]
ցեն խափանել. որպէս եւ տեսաք ի բազում տեղիս. այղ մատ
ուսցեն անսխալ սաղմոսիւք եւ մարգարէիւք եւ առաքել
ովք եւ աւետարանաւ կարգաւորաբար. եւ զբաժակ սուրբ հաղ
որդութեանն մի իշխեսցեն խափանել քահանայքն պա
տճառանաւք չքաւորութեան. որպէս ապստամբեցին
ժողովուրդք ի բազում տեղիս արարեալ բազմաց անխնա
մող հոգւոց իւրեանց. այղ մի եւս լիցի զի մի գուցէ պար
տաւորեալք պատուհասեսցին եւ տուժեսցին. աստուծոյ պատրաս
տեսցեն կատարել զսուրբ խորհուրդն անխափան հարկաւոր
որպէս. ամենայն զգուշութեամբ:
Է Եւ ի սրբոյ բաժակէն երկիւղիւ տացեն ժողովրդականացն ՇՀԲ
ոչ թերացուցանել նոցա զսրբութիւնն եւ զանմատոյ
ցն չխառնել. զի մի դատապարտեսցին. եւ ի պատարա
գի կիւրակէի եւ ի տաւնից մի իշխեսցեն ծուղանալ.
մնալ ի տունս իւրեանց. այղ եւ յամենայն պաշտամանց

Ի [ՆԵՐ]ՍԻՍԻՆ

4բ

///
լիցէ թե դպիր:
Ը Եւ զկտակարանս եւ զմարզարէս եւ զառաքեալս եւ զաւետար
ան[ս] բովանդակ ստացի սրբոյ եկեղեցւոյ ի պտղոց եւ ի մտից.
Եւ հանդերձս բովանդակ սրբոյ սեղանւոյն. եւ զեկեղեցւոյ
առազաստ տանց փեսայից եւ հարսանց զոր այդ մի իշխես
ցեն առնել. զոր թե գտցի ոք արարեալ թե քահանա իցէ լու
ծցի թե դպիր նզովեսցի:
Թ ՇՀԴ Լուաք յուր ծանրագոյն հասեալ ի վերա թե քահանայք ի տեղ
իս տեղիս ինքեանք մկրտութիւն չառնեն բայց ջուր իմն
սորինեն են տան զմանզամարդսն հրամայեալ նոցին իսկ.
ի նոցին տունսն մկրտել զմանզունքս իւրեանց. վասն
որոյ պատուհասեցան աներեւոյթ տանջանաւք. եւ այժմ
թե գտցի ոք արարեալ ի նմին վնասու. ի բաց որոշեալ լիցի
ամենայն տամբ իւրով ի քահանայական ժառանգութէնէն:
Ժ [Շ]ՀԵ Քահանայք զահասիրութեամբ մի հակառակեսցին ընդ միմեա
նս, զի զոր շնորհն աստուծոյ ընտրեաց նախ ի քահանայութիւն
նա է նախաթոռ յեկեղեցւոջ:
ԺԱ[Շ]ՀԶ Դպիր պաշտաման յեկեղեցւոջ առանց քահանայի մի իշխ
ժԲ եսցեն կալ. Եւ մի զձեւ զինուորաց հանդերձի ունել
Եւ ի կարգի պաշտաւնէից կալ. այդ ընդ զինուորս կաց
ցեն. այդ զձեւ եկեղեցականաց ունել իւրոյ կարգին
վայել է ըստ քահանայական աւրինի:
ԺԳ[Շ]ՀԸ Եւ ժողովրդականք մի հրապուրեսցին ի նոցանէ ի բաժան
ումն սրբոյ եկեղեցւոյ զի պատճառ խռովութեան բերէ.
այդ զպտուղս եւ զմուտս ժողովրդականք միաբանութեամբ
ի սուրբ եկեղեցին հատուսցեն ամենայն յաւժարութեամբ
///

Զ

1ա

արժան է ///
սուրբ սեղան ///
խոնարհել քրիստոնէից ///
սուրբ լուսաւորիչն յաւրինակ ///
ման ետ պահել իւրոց վիճակին. ///
նս տաւնել. եւ ըստ կարգի դե ///
ականել զեկեղեցւոյն շնորհն. ///
մնալ. եւ ոչ թողուլ ի բաց. եւ չառնե[լ] ///
Թ Պարտ է զսուրբ միւռոնն հայրապետին ///
/// հինգշաբաթոջն. եւ քահանայիցն
ածանել նովաւ զխաչս եւ զսեղանս. ե ///
[մ]կրտեալսն մատուցանել միայն յորդեգ ///
յետ մկրտութեանն լինի. եւ յայդ պէ ///
[խա]ռնեսցեն զնա. եւ մի քահանայքն յանդգ ///

ժ Պարտ է զմկրտութեան ձէթն քահանային ///
միոջէ ընդ մկրտելն ըստ բաւական ի ժ ///
եւ նոյնժամայն առ մկրտեալսն մերձե ///
/// ն սպառել. եւ մի իշխել զաւրհ ///
բազում անգամ աւրհնել. եւ միայն ///

1բ

///
/// յայդ ///
/// ուր /// իցին. այդ ///
/// եալ ի նմին իսկ յեկեղեցւոջ ///
/// մերձ մկրտատուն արասցե
/// ձեռնադրութիւն եւ զաւծումն
/// խոստովանեալն առ դուրս մկրտ
/// [ա]սյա տանել ի ներքս ուր աւազանն է ե
/// պսակելն հանդերձեալ են. քահանա
/// եւ ի վերա նոցա կատարել զկարգ
/// ինաց քրիստոնէից եւ անդր ի սրբութեան
/// զի ի միում տեղւոջ վայել է լինել. պսակ
/// պսակն: իսկ եթե ոչ այսպէս արասցէ այդ
/// կամակարութեամբն եւ ծուլութեամբն անարգե
/// եւ զկարգ ամուսնութեանն. քահանայն
/// պարտ է վերստին պսակել ըստ աւրինի քր
/// ս առաքեալ պատուիրի. թե ամենայնի
/// եշտութեամբ եղիցի:
/// [պա]րտ է ըստ առաջին կարգին մ ///
///

ՑԱՆԿԵՐ

Ա—Բ

ԿԱՆՈՆԱԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՏՈՂԵՐ

Այս ցանկում նշել ենք Կանոնագրքի ներկա հատորի 15 կանոնախմբերի ունեցած ոչ միայն համառոտ կամ ընդարձակ առաջաբանների ու բոլոր հոդվածների սկզբնատողերը, այլև վերջիններիս տողատակի տարբերությունները։ Դրանք կրում են կլոր փակագծերում շեղատառ տ նշումը, այսինքն տարբերակ։ Միևնույն սկզբնատողի, հատկապես առաջին և մասամբ երկրորդ բառերը կարող են ունենալ մեկից ավելի տարբերակ. դրանք բոլորն էլ այբբենական կարգով նշված են։ Իսկ եթե տ-ն գրված է տողի մեջ որևէ բառի մոտ և կլոր փակագծում ավելացված է մի բառ, դա նշանակում է, որ սկզբնատողի տվյալ բառը ունի տարբերակ։ Աթանաս Աղեքսանդրացու և Սահակ Ձորոփորեցու կանոնախմբերը հարց և պատասխան են։ Սրանցից վերցրել ենք «Հարցումն»-ի սկզբնատողը՝ չնշելով «Հարցումն» բառը։ Սկզբնատողերի դիմաց նշված են կանոնախմբերի անունները և հոդվածների մասնավոր համարները՝ համառոտագրություններով, օրինակ՝ Գանգ. Ա, այսինքն Գանգրայի ժողովի կանոնախմբի Ա հոդված։ Այստեղ այբբենական կարգով տալիս ենք այդ համառոտագրությունը՝

Աբր.—Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոս
Աթ.—Աթանաս
Անկ.—Անկիւրիա
Անտ.—Անտիոք
Առ.—Առաքելական
Բարս.—Բարսեղ Կեսարացի
Գանգ.—Գանգրա
Գրիգ.—Գրիգոր Լուսավորիչ
Եփես.—Եփեսոս
Լաւոդ.—Լաւոդիկէ
Կես.—Կեսարիա
Կղեմ.—Կղեմէս
Կոստ.—Կ. Պոլիս
Հար.—Հարանց հետեւողաց
Մանդ.—Յովհան Մանդակունի
Ներս. և Ներ.—Ներսէս և Ներշապուհ
Նէոկես.—Նէոկեսարիա
Նիկ.—Նիկիա
Շահ.—Շահապիվան
Սահ.—Սահակ Պարթև
Սահ. վեր.—Սահակ վերջնոյ
Սարդ.—Սարդիկէ
Սեւան.—Սեւանտոս
Օձ.—Յովհաննէս Աւձնեցի

Ա.

ԿԱՆՈՆԱԽՄԲԵՐԻ ԱՌԱՋԱԲԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՏՈՂԵՐ

Այս կանոնք եղան յաւուրս Ներսէսի	*Ներս. և Ներ.*
Այս կանոնք յետ Նիկիայ ժողովոյն եղաւ	*Գանգ.*
Այս կանոնք յետոյ եղան քան որ յԱնկիւրիայն	*Նէոկես.*
Այս կանոնք նախ են քան որ կարգեցան	*Անկ.*
Զի յետ բազում ժամանակաց անցանելոյ (տ.)	*Անտ.*
Զմեծ եւ զանքաւ, զբարեբար եւ զմարդասէր	*Մանգ.*
Ի (տ. չիք ի) ժամանակին յայնմիկ երեւեցաւ ա·ր մի	*Աթ.*
Իսկ յաւուրս փոքու Թէոդոսի, այր (տ. այլ) վիշապագլուխ	*Եփես.*
Իսկ յետ դնելոյ զկանոնս եւ կարգելոյ (տ.)	*Գանգ.*
Կանոնք եւ սահմանք որ եղան ի սուրբ (տ.)	*Նիկ.*
Մեծ եւ անքաւ, բարեբար եւ մարդասէր (տ.)	*Մանգ.*
Յետ (տ. եւ) այսորիկ զաւրանայր Աւստացւոց Հերձուածն	*Լաւոդ.*
Յետ բազում ժամանակաց անցանելոյ գարձեալ	*Անտ.*
Յետ ոչ բազում աւուրց Թագաւորելոյ	*Կոստ.*
Որք ժողովեալ ի Կեսարիայ եպիսկոպոսք քսան	*Կես.*
Պարտ եւ պատշաճ է Նաւավարին Հոգալ	*Շահ.*
Սահմանք եւ կանոնք հաւատացելոց որպէս եղան (տ.)	*Նիկ.*
Սահմանք եւ կանոնք որ եղան ի սուրբ	*Նիկ.*
Սեւանտոս եպիսկոպոս որ էք յԱստուծոյ	*Սեւան.*
Վարդապետութիւն առաքելոցն զկնի վերանալոյն	*Առ.*

Բ

ԿԱՆՈՆԱԽՄԲԵՐԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՏՈՂԵՐ

Ազապն որ մասնականաւ է . . . Սահ. ԽԱ
Ազապս մասունս մի՛ բարձցեն (տ.) . . . Ներս. և Ներ. ԻԲ
Ակամայութիւն ասի որ ամենեւին . . . Բարս. Ե
Աղջիկ ոք թէ արտաքոյ կամաց հաւր (տ.) . . . Բարս. Ի
Ամաչեսցեն արդ որք յանդգնեցան (տ.) . . . Սահ. ԼԹ
Ամենայն եկեղեցական երացն (տ. ի բաց) . . . Կղեմ. ԼՁ
Ամենայն հերձուածողք ասին, այլ (տ.) . . . Բարս. Ա
Ամենայն ոք ով եւ համարձակեսցին . . . Անտ. Ա
Այդ յուխտի անդ իցեն երիցունք (տ.) . . . Անկ. ԺԵ
Այետիոս եպիսկոպոս ասաց (տ. եպիսկոպոսաց) . . . Սարդ. ԺՁ
Այլ եւ յաւր կիւրակէի . . . Մանդ. Գ
Այլ ի (տ. չիք ի) նոյն ինքն ի (տ. չիք ի) սուրբ . . . Ներս. և Ներ. Բ
Այլ ձիարոյծք եւ վաճառականք (տ.) . . . Ներս. և Ներ. ԼԵ
Այլ ոմանք ձիարոյծք եւ վաճառականք . . . Ներս. և Ներ. ԼԵ
Այլ որ զկին իւր թողու (տ.) . . . Գրիգ. ԻԴ
Այլ որ քորեպիսկոպոսքն են . . . Նէոկես. ԺԹ
Այլ պահելոյ եւ լուծանելոյ (տ.) . . . Օձ. Է
Այլ վասն երգման (տ.) . . . Աթ. ՁԸ
Այլ վասն կիւրակէի պահելոյ . . . Մանդ. Բ
Այլ վասն չորրորդին եւ հինգերորդին . . . Նէոկես. Ժ
Այլ վասն պահելոյ եւ լուծանելոյ . . . Օձ. Է
Այս իմն առաւել հակէ (տ.) . . . Բարս. ԾԱ
Այս սահմանադրութիւն կարգաց գրեցաւ (տ. կարգեցաւ) . . . Սահ. ԽԴ
Այր յիսնամեան եթէ կին արասցէ . . . Սեւան. Դ
Այր որ զկին իւր թողու (տ. արձակէ) . . . Գրիգ. ԻԴ
Այրս քորեպիսկոպոսքն են (տ.) . . . Նէոկես. ԺԹ
Այցելու եւ հասարակաց հայր է . . . Սահ. ԽԵ
Անաստապիղծ կամ որ պղծեն . . . Հար. Բ
Անխիղճ պարտ է համարել (տ.) . . . Սահ. վեր. ԺԳ
Աշխարհական ոք (տ. չիք ոք) զնոյն առնելով . . . Օձ. Բ
Ապա ի Պենտակոստէէն մինչեւ ցվարդավառն (տ.) . . . Մանդ. Ձ
Ապա եթէ ղաւշաքաղութեամբ յածիցի . . . Սահ. ԺԱ
Ապա եթէ (տ. չիք ոչէ) լսեմ՝ եթէ ոք . . . Սահ. ԻԸ
Ապա եթէ ոք յիշխանաց . . . Սահ. Ծ
Առաւել հակէ մարդ եթէ գայցէ (տ.) . . . Բարս. ԾԱ
Առաքելական պատուոյ եղեր արժանի . . . Սահ. ԾԴ
Առաքելական պարտուց եղեր արժանի (տ.) . . . Սահ. ԾԴ
Առնակին թէ մեռցի եւ այրն այլ . . . Սեւան. ԺԲ
Առնակին թէ շնասցի՝ Ժ ամ արտաքոյ . . . Սեւան. Է
Ասացաք եթէ (տ. չիք եթէ) ոչ է պարտ . . . Կղեմ. ՀԵ
Ասէ կին ծնանիցի ի պահս (տ.) . . . Աթ. Է
Ասխոս եպիսկոպոս ասաց (տ.) . . . Սարդ. Ը–ԺԵ, ԺԷ–ԺԸ, Ի

1280—43

Արդ՝ ամաչեսցեն որք յանդգնեսցան … Սահ. ԼԹ
Արդ՝ արժանաւոր է եւ զառաջին … Սահ. ԼԸ
Արդ՝ բարձէ՛ք այսուհետեւ ի ձեղէ (տ. ի ձեզնէ այսուհետեւ) … Սահ. ԺԴ
Արդ՝ եթէ փոքրն չատէ ասացաք (տ.) … Սահ. ԼԵ
Արդ՝ զամենայն զայս (տ. զայս ամենայն) անիւ … Սահ. Թ
Արդ՝ զզուշութեամբ պահեսցի ի միջի … Սահ. ԽԸ
Արդ՝ դպատուիրեալս ձեզ առ ի մէնջ … Ներս. և Ներ. ԼԵ
Արդ՝ թէպէտ (տ. եթէ) եւ փոքր ի չատէ ասացաք … Սահ. ԼԵ
Արդ՝ հաճոյ թուեցաւ այժմ որք ի սկզբանէ … Բարս. Բ
Արդ՝ մի՛ (տ. չիք մի՛) ոք զայսպիսի (տ.) … Սահ. ԽԶ
Արդ՝ պարտ է մեզ զհաստուցումն … Սահ. Խ
Արդ սահմանադրութիւն կարգաց գրեցաւ (տ.) … Սահ. ԽԴ
Արժան է դիչերապաչտաւն (տ. դիչերապաչտմուն) առնել … Օձ. ԺԸ
Արժան է զառաւաւտինսն՝ ամենեցուն … Օձ. ԻԲ
Արժան է զհացն անխմոր (տ. խմոր) … Օձ. Ը
Արժան է զհիւանդացն ձէթ քահանային … Օձ. ԺԱ
Արժան է ի դիչերին, յորժամ ժողովին … Օձ. ԻԱ
Արժան է ի սուրբ քառասներորդս … Օձ. Զ
Արժան է Ցայտնութեան աւուր … Օձ. Լ
Արժան է յերեկորինս եւ յառաւաւտինս … Օձ. ԺԹ
Արժան է չաբաթն աւր երիկունն … Օձ. ԺԵ
Արժան է՝ ոյք (տ. որք) ի հիւանդութեան … Լաւոդ. ԽԴ
Արժան է՝ ոյք (տ. որք) մկրտին՝ նախ … Լաւոդ, ԽԴ
Արժան է՝ որ (տ. որք) մկրտին, յետ … Լաւոդ. ԽԵ
Արժան է ուրոյն յետ (տ. յետ ուրոյն) թարգմանութեանն … Լաւոդ. ԺԹ
Արիանոսաց մերձ կալով (տ. մերձանալով) … Աթ. ԺԳ
Արիոս եպիսկոպոս ասաց (տ.) … Սարդ. Գ, Ե
Արուապղծութեան բազում կերպարանս ասացին … Հառ. Ը
Արտաքսեալքն յեկեղեցւոյ՝ ամենայն հերձուածողք … Բարս. Ա
Արք այրիք մնացեալ իցեն յետ ամաց (տ) … Կես. Զ
Արք արտաքոյ քան զիւրեանց կարգաւորութիւն (տ.) … Կես. Բ
Արք զամուսնութիւն մեղադրեն եւ անգոսնեն (տ.) … Դանդ. Ա
Աւղէնտիոս եպիսկոպոս ասաց (տ.) … Սարդ. Դ, ԻԱ
Աւթէնդիոս եպիսկոպոս ասաց (տ.) … Սարդ. Դ
Աւտէնդիոս եպիսկոպոս ասաց (տ.) … Սարդ. ԺԹ
Աւր չաբաթուն եղիցի տաւն (տ.) … Առ. Ե
Աւուրս Նոյի եղեւ ջրհեղեղն (տ.) … Սեւան. Թ
Աւր չորեքչաբաթու ի պահս եղիցի (տ.) … Առ. Գ

Բայց ամենայն միրգք ի տունս (տ.) … Կղեմ. Դ
Բայց այլ ամենայն միրգք (տ. իրք) ի տունս … Կղեմ. Դ
Բայց աւրէնս ոչ է պարտ առնուլ … Մանդ. ԺԱ
Բայց եթէ կին ուրուք հաչմեսցի (տ.) … Աթ. ԻԳ
Բայց եթէ յանցաւոր ոք է (տ.) … Աթ. ԻԵ
Բայց եթէ ոք զկին իւր զամուսին (տ.) … Աթ. ԾԶ
Բայց եթէ ոք զկին իւր եթող (տ.) … Աթ. ԾԵ, ԾԸ
Բայց եթէ ոք ի ժողովրդականաց (տ.) … Աթ. ԾԳ
Բայց եթէ ոք ի կանանց (տ.) … Աթ. ԾԳ
Բայց եթէ ոք ի կնահանէից այլ (տ.) … Աթ. Կ
Բայց եթէ ոք ի կնահանէից ասէ (տ.) … Աթ. ԿԲ
Բայց եթէ ոք ի կնահանէից յերկար (տ.) … Աթ. ԿԴ
Բայց եթէ ոք ի կուսութեան (տ.) … Աթ. ԿԶ
Բայց եթէ ոք (տ. չիք ոք) ի (տ. չիք ի) յեղբարց (տ.) … Աթ. ԾԱ
Բայց եթէ ոք ի տղայութենէ իւրմէ (տ.) … Աթ. ԿԵ
Բայց եթէ ոք կին (տ. կին ոք) ի պատճառս (տ.) … Աթ. ԿԳ

Բայց եթէ ոք (տ. չիք ոք) յեղբարց (տ.) . . . Աթ. ԾԱ
Բայց եթէ ոք յետ ձեռնադրութեան (տ.) . . . Աթ. ԾԲ
Բայց եթէ ոք վասն ամլութեան (տ.) . . . Աթ. ԾԹ
Բայց եթէ ոք վասն պոռնկութեան (տ.) . . . Աթ. ԿԱ
Բայց եթէ ուրուք ի քահանայից յաղաւթից (տ.) . . . Աթ. ԽԵ
Բայց եթէ ուրուք կին աւրկանա (տ.) . . . Աթ. ԾԷ
